ՀՈՎՍԵՓ ԱՎԱԳ
ՔԱՀԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՎԱՏԻ ՈՒ ՀՈՒՅՍԻ ՊՍԱԿԸ

(Քարոզների ընտրանի)

ՍԲ. ԷՋՄԻԱԾԻՆ

2021

ՆՎԻՐՎՈՒՄ Է 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՄԱՐՏՈՒՄ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԵՎ ՀԱՎԱՏԻ ՀԱՄԱՐ ՆԱՀԱՏԱԿՎԱԾ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՈՒ ՀԱՋԱՐԱՎՈՐ ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ԱՆՄԱՀ ՀԻՇԱՏԱԿԻՆ

«Սերը հավատի ու հույսի պսակն է, և ըստ առաքյալի՝ օրենքի լրումը, որովհետև սիրո պատվիրանից են կախված ամբողջ օրենքն ու մարգարեները: Ուստի հավատն ասես արմատ է, հույսը՝ ոստ, իսկ սերը՝ պտուղ»:

«Ամեն մեծագործ շինվածք երկար ժամանակի ընթացքում կարող է անհետանալ, բայց բարի անունը բնավ չի կորչում: Նախընտրելի է մեռնել բարի անվամբ, քան ապրել վատ համբավով: Ով աշխարհում բարի համբավ է թողնում, նա մահվանից հետո էլ է կենդանի մնում, իսկ վատահամբավը կենդանվույն մեռած է, եթե նույնիսկ երկար տարիներ ապրի»

Պողոս Պատրիարք Աղրիանուպոլսեցի (1763-1853)

«Առաքինություն» գրվածքից

«ՀԱՎԱՏԻ ՈՒ ՀՈՒՅՍԻ ՊՍԱԿԸ»

ՀՈՎՍԵՓ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

Գրքի կողքի ձևավորումը՝ Մաշտոց Չոպանյանի

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ն.Ս.Օ.Տ.Տ.

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Հրամանաւ Տեառն Յովնանու Արքեպիսկոպոսի

Առաջնորդին Միացեալ Նահանգաց

Արեւմտեան Թեմի

ՍՐՏԻ ԽՕՍՔ

Վերստին պատրաստ է եւ ընթերցողներուն կ’ուղղուի մեր Սուրբ եկեղեցւոյ նուիրեալ սպասաւորներէն՝ Արժ. Տ. Յովսէփ Աւագ Քահանայ Յակոբեանի քարոզներու նոր ժողովածուն՝ ***«Հաւատի ու յոյսի պսակը»*** խորագրով։ Տէր Յովսէփը այն նախանձնախնդիր հոգեւորականներէն է, որու հոգեշունչ քարոզները, սնած ըլլալով կեանքի իրական պատկերներէն, ազդու ներգործութիւն կ’ունենան ընթերցողներու վրայ։ Եւ այս անգամ Տէր Յովսէփի ժողովածուն սնունդ առած է Արցախեան զոյամարտէն, եւ նուիրուած է 2020 թուականի պատերազմի՝ ***«վասն հայրենեաց, վասն հաւատքի»*** նահատակուած հոգեւորականներուն եւ զինուորներուն։ Սքանչելի մտայղացում մը, քանզի իւրաքանչիւր հայորդի պարտի խոնարհիլ Արցախեան հերոս նահատակներու յիշատակին առջև, քանզի մեր նահատակ զինուորները կեանք զոհաբերեցին, որպէսզի շարունակենք ապրիլ ճշմարիտ հաւատով ու հայրենասիրութեամբ, ու նաեւ պատգամներ առնելով իրենց նահատակութենէն։

Կատարելութեան հասնելու, հաւատքով բուժուելու, համբերութեան, ազնուութեան եւ բազում այլ քրիստոնէավայել առաքինութիւններու մասին է Տէր Յովսէփի քարոզներու հիմնական թեման։ Իսկապէս հոգեւոր հաց են այս քարոզները հաւատացեալ ընթերցողի համար, որպէսզի կարող ըլլայ կեանքն ապրելու Աստուծոյ պատգամներով պարուրուած, որպէսզի գործնապէս աջակից ըլլայ բարեկամին ու աջակից՝ նահատակներու ընտանեաց։

Թող Տէր Յովսէփի քարոզներու այս ժողովածուն ամոքիչ ուժ ունենայ արցախեան զոյամարտի վէրքերուն, եւ թող մեր նահատակ հերոսները երկինքէն շարունակեն իրենց կեանքի ուղին։

Յովնան Արք. Տէրտէրեան

Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի
Արեւմտեան Թեմի

Յուլիս, 2021

ՆԱԽԱԲԱՆ

Քարոզներիս Ընտրանին անվանել եմ ***«ՀԱՎԱՏԻ ՈՒ ՀՈՒՅՍԻ ՊՍԱԿԸ»***, այն նվիրելով 2020 թվականի Արցախյան գոյամարտում Հայրենիքի և Հավատի համար նահատակված մեր հերոս հոգևորականների ու զինվորների հիշատակին, հերոսներ, ովքեր հավատով զենքը ձեռքներին կռիվ գնացին թշնամու դեմ և հույսի պսակով զարդարվեցին ու անմահացան:

Մովսես Խորենացի մեր Պատմահայրն ասում է. ***«Թեպետ մենք փոքր ածու ենք և թվով շատ սահմանափակ ու զորությամբ թույլ և շատ անգամ օտար թագավորությունների կողմից նվաճված, բայց և այնպես մեր աշխարհում էլ գրելու և հիշատակելու արժանի շատ սխրագործություններ են կատարվում»:***

ԱՅՈ՛, ՓՈՔՐ ԵՆՔ, ԲԱՅՑ ՄԵԶ ՀԱՅ ԵՆ ԱՍՈՒՄ

«Քաջերի սահմանը նրանց զենքն է,
որքան կտրի՝ այնքան էլ կտիրի»:
«Քաջերի սերունդները քաջեր են»
Մովսես Խորենացի

Երջանկահիշատակ Վազգեն Վեհափառը հայ ժողովրդի մասին այսպես է արտահայտվում.

«Հա՛յ ժողովուրդ, դու ածած ու պայծառակերպված ես Քրիստոսի հարության և իջման շնորհներով, ու դարերի ընթացքին ապրել ես և անմահացել արիության բազում գործերով: Եվ ինչպես անցյալի փառքի օրերին, այսօր էլ գտնվում ես նույն արիության գործերի իրականացման լուսավոր ճանապարհի վրա:

Հա՛յ ժողովուրդ, ուրեմն ճանաչի՛ր զքեզ և հավաքական գիտակցված միասնությամբ, իրապես մեկ ու անբաժան, սիրով եղբայրացած ի Հայաստան և ի Սփյուռս աշխարհի, հավատարիմ մնա քո նախնիների սուրբ հավատքին, քո կյանքի ուխտին և մեր օրերի քո նոր վերածննդին ու քո առաքելությանը»:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Իմ հայրենի ժողովրդի ընթերցանությանն եմ հանձնում իմ նոր ***ՔԱՐՈԶՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻՆ*** որն անվանել եմ ***«Հաատի ու հույսի պսակը»:*** Այն բաղկացած է 80 քարոզներից և նվիրված է 2020-ի Արցախյան գոյամարտում Հայրենիքի ու Հավատի համար նահատակված հոգևորականների և զինվորների անմահ հիշատակին: Փա՛ռք ու պատիվ նրանց:

Իմ աղոթքն է, որ Աստված երկար քաջառողջ տարիների կյանք պարգևի Ազգիս Վեհափառ Հայրապետին՝ Ն.Ս.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որպեսզի շարունակի անձնվիրաբար կատարել իր հոգևոր առաքելությունը:

Իմ սերն ու շնորհակալությունն եմ հայտնում Առաջնորդարանի աշխատակիցներ՝ Հայկ Մադոյանին և Մաշտոց Չոպանյանին, այս քարոզագրքի արևելահայերենի ուղղագրության ստուգման և կազմի պատրաստության համար:

Քարոզագրքիս լույս ընծայման նպատակն է ինչ որ չափով հագեցնել մեր ժողովրդի հոգու ծարավը: Եթե մի կաթիլ իսկ հաջողվեմ այս առաքելության մեջ, դա կլինի իմ ամենամեծ վարձատրությունը: Աղոթեցեք ինձ համար:

Սիրով՝

Հովսեփ Ավագ Քահանա Հակոբյան

Սեպտեմբեր, 2021
Բրբենկ, Կալիֆորնիա, ԱՄՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Գաղտնիք չէ, որ 2020 թվականը հանդիսացավ մարդկության ամենից ողբերգական տարիներից մեկը, որը համավարակի հետևանքով խլեց միլիոնավոր անձանց կյանքեր։ Սակայն այն մեզ՝ հայերիս համար, հանդիսացավ առավել ողբերգական՝ Արցախյան վերջին պատերազմի ցավալի հետևանքների պատճառով։

Հազարավոր Հայ հերոսներ ***«Վասն Հայրենեաց եւ վասն Հաւատոյ»*** կարգախոսով նահատակվեցին, իրենց արյան գնով փրկելով մեր Հայրենիքն անհամեմատ ավելի մեծ արհավիրքից։

Մեր հերոս Նահատակների զոհողությունը մենք ազգովի դեռ պիտի արժևորենք և նրանց մատուցած անուրանալի զոհողության դիմաց մեր գործուն խոնարհումը բերենք. դա մեր ապագայի հրամայականն է։ Մինչդեռ այսօր գնահատանքի գեղեցիկ և խորհրդանշական դրսևորումներից մեկն արդեն իսկ առկա է։ Այն հանդիսանում է Տ. Հովսեփ Ա. Քհն. Հակոբյանի ***«Հավատի ու Հույսի Պսակը»*** խորագիրը կրող քարոզների ընտրանին։

Որքան հուսադրող է, երբ Հայց. Առաքելական Եկեղեցու վաստակաշատ սպասավորը Հայ Զինվորների անմահ հիշատակը պանծացնում է աստվածային Լույս պարունակող պատգամներով, որոնք հույսի և արթնության կոչ են հղում բոլորիս՝ գիտակցելու, որ նահատակությունը կամ մարտիրոսությունը, ոչ այլ ինչ է, եթե ոչ անձի հավատի ու հույսի գերագույն պսակը, որին, պատմության ընթացքում, արժանացել են շատ քչերը։ Այս անգերազանցելի պսակին արժանանալու համար՝ հավատի ամրություն և հույսի հարատևություն է հարկավոր։

Այո՛, չեն կորչել մեր նահատակները, չեն անէացել՝ ինչպես կարծում են որոշ անձինք, ընդհակառակը՝ արժանացել են անմահության և երանավետ կյանքի պսակին, որի անխախտ ու անսասան երաշխիքը մեր Տիրոջ և Փրկ-

չի՝ Հիսուս Քրիստոսի, աստվածապես Հարությունն է ու հավիտենության խոստումը։

Քրիստոնեական խոր գիտակցություն է պետք ըմբռնելու այս աստվածային ճըշմարտությունը, և անձնվեր սեր է անհրաժեշտ ծառայելու մեկս մյուսին, մանավանդ նրանց, որոնց անմիջական հարազատները՝ զավակները, եղբայրներն ու հայրերը նահատակվել են Արցախյան մեր գոյամարտում, այն հույսով ու հավատով, որ ապահով ձեռքերում, մեր բոլոր օգնող ձեռքերում են թողնում իրենց զավակներին, քույրերին, կանանց և մայրերին։

Այս սրբազան պարտականությունը կատարելու համար՝ ***«անհրաժեշտ է, որ մեր միջից հանենք՝ նախանձի, փառասիրության, գոռոզամտության, անհամեստության և այլ բացասական երևույթները, որպեսզի հոգով մաքրվենք ու այդ մաքրությունը հնարավորություն ընձեռի մեր հոգևոր ուժի հզորացմանը»։***

Այսու, մեկ անգամ ևս ցանկանում եմ իմ խորին շնորհակալությունը հայտնել արժանապատիվ Տ. Հովսեփ Ա. Քհն. Հակոբյանին, ում՝ շուրջ երկու տասնյակի հասնող քարոզգրքերը, քաջալերում և ուղղորդում են հազարավոր հայորդիների դեպի մեր ***«Հավատի ու Հույսի Պսակը»***՝ դեպի մեր Տերն ու Փրկիչը։

Հիշենք, որ այս պսակը կարող ենք ձեռք բերել Քրիստոնեական սիրո շնորհիվ միայն, քանզի՝ **«Սերը համբերող է, քաղցրաբարո է. սերը չի նախանձում, չի ամբարտավանանում, չի գոռոզանում, անվայել վարմունք չի ունենում, իրենը չի փնտրում, բարկությամբ չի գրգռվում, չար բան չի խորհում, անիրավության վրա չի ուրախանում, այլ ուրախանում է ճշմար-տության վրա. ամեն բանի դիմանում է, ամեն բանի հավատում է, մշտապես հույս է տածում, ամեն բանի համբերում։ Սերը երբեք չի անհետանում...»** *(Ա. Կորնթ. 13:4-8)*։

Խոնարհաբար՝

Հայկ Մադոյան
07-19-2021

ՀԱՎԱՏ ԵՎ ՀՈԳԻ

«Որտեղ հավատ չկա, այնտեղ հոգի չկա, իսկ որտեղ հոգի չկա, այնտեղ կենդանություն գոյություն չունի, ապա ուրեմն բոլոր անհավատները մեռած են և նրանց մեջ հոգի չկա»

Ընդհանրական Քրիստոնեական
Վարդապետներ

Այս խոսքը ես վերցրել եմ Ընդհանրական Քրիստոնեական Վարդապետներից. շատ խորիմաստ մտքեր են, մտքե՛ր, որոնք մեզ մտածել են տալիս հավատի, նրա արտահայտությունների, հոգու, անհավատության ու նրանից բխող հոգեկան վիճակների մասին։

Եվ բնականաբար հարցեր են առաջանում, թե՝ *«Ի՞նչ է հավատը, կա՞ն անձեր, որոնք չեն հավատում, չհավատացողը հոգի ունի՞, եթե չունի՝ կյանք կա՞, թե՞ ոչ, իսկ եթե անհավատները հոգի չունեն՝ կենդանի՞ են, թե՞՝ մեռած և այլ նմանատիպ հարցեր»։*

ա. *«Ի՞նչ է հավատը»* հարցմանը Պողոս Առաքյալը Եբրայեցիներին ուղղած իր թղթում ասում է. *«Ի՞նչ է հավատը, եթե ոչ՝ հուսացված բաների հաստատումը և ապացույցն այն բաների, որոնք չեն երևում» (Եբր.11:1)։* Եթե հավատը հուսացված բաների հաստատումն է և ապացույցը այն բաների, որոնք չեն երևում, ուրեմն այնտեղ, ուր հավատ չկա, չտեսնված բաները կարող ենք հոգով հասկանալ։ Այնպես, ինչպես պիտի ասեր Քրիստոս Սամարացի կնոջը. *«Կգա ժամանակը, և արդեն իսկ եկել է, երբ ճշմարիտ երկրպագուները կերկրպագեն Հորը ոգով և ճշմարտությամբ, քանի որ Հայրն էլ իրեն այդպիսի երկրպագուներ է ուզում։ Հոգի է Աստված, և նրա երկրպագուները պետք է հոգով և ճշմարտությամբ երկրպագեն» (Հովհ. 4:23-24)։* Ուրեմն ըստ Հիսուսի Աստված հոգի է և միայն կարելի է հոգով Նրան պաշտել։ Ծննդոց գրքում կարդում ենք. *«Տեր Աստված մարդուն ստեղծեց հողից,*

նրա դեմքին կենդանության շունչ փչեց, և մարդն եղավ կենդանի էակ» (Ծնն. 2:7): Այդ կենդանության շունչը՝ Աստված իբրև հոգի դրեց մարդու մեջ։

բ. Մեր կապը Աստծու հետ հոգով կապված լինելու վիճակն է, ըստ այնմ այնտեղ ուր որ վստահություն չկա, հավատ չկա, նշանակում է հոգի չկա, իսկ մեզ կենդանի պահողը մեր հոգին է, հոգին, որը մարդուց է դուրս գալիս և հոգի է դառնում։ Դրա համար էլ այնտեղ ուր հոգի չկա, այնտեղ կյանք գոյություն չունի։ Եթե կյանք գոյություն չունի նշանակում է այն մեռած է։ Երբեմն վատ մարդկանց մասին այսպիսի ժխտական արտահայտությունների ենք հանդիպում՝ *«Այս մարդու մեջ հոգին մեռած է»* կամ *«Այս ինչքան անհավատ մարդ է»։*

գ. Ուստի անհավատները մեռած են, թեև կարող են ֆիզիկապես ապրել, բայց հոգեպես մեռած են։ Եվ որովհետև մեռած են, ուրեմն նրանց մեջ բնական է, որ հոգի չկա, այն հոգին, որով Աստծուն կարող են ճանաչել, այն հոգին, որն Աստծու հետ կապի մեջ պիտի լինի և այն հոգին, որն Աստծու հետ սիրո կապի մեջ է։

Իմ կարծիքով անհավատ մարդիկ չկան, բայց կան մարդիկ, որոնք դառնում են նյութի գերի, կարելի է ասել դառնում են դրամի երկրպագու և նրանց համար հավատը դառնում է պարզապես ցույց տալու միջոց։ Եվ բնական է գերի դառնալով դրամին, նյութին, ունեցվածքին, հարստության, մեռնում է Աստծու տված կենդանության շունչը՝ հոգին, իսկ ում մեջ խամրում է հոգին, նա դառնում է կենդանի ու կորցնում է մարդկային բոլոր շնորհները և առավելությունները, որոնք նա ստացել էր Ամենաբարձրյալից։ Այդպիսիների համար ժողովուրդը ասում է. *«Նա իր հոգին ծախել է սատանային»։*

Այս պատմությունը հոգին ծախելու մասին է.

«Այնպես պատահեց, որ մի անգամ ոմանք պանդոկում գինի էին խմում և հարբած խոսում էին միմյանց հետ զանազան բաներից։ Հետո զրույց բացվեց, թե այս աշ-

խարհից հեռանալուց հետո ի՞նչ է լինելու: Այդ ժամանակ նրանցից մեկն ասաց.

Քահանաները սնոտի կերպով մեզ ծաղրում են, երբ ասում են, թե հոգիներն այս կյանքից հետո կենդանի են մնում:

Այս լսելով՝ ամենքն էլ ծիծաղեցին: Եվ ահա ուժեղ ու մեծահասակ մի մարդ, գալով նրանց մոտ նստեց և հրամայելով գինի բերել, սկսեց ըմպել ու հարցրեց, թե միմյանց հետ ի՞նչ են խոսում: Առաջինը պատասխան տվեց.

Մարդկանց հոգիների մասին էինք զրուցում, եթե մեկը կամենար իմ հոգին գնել, նրան էժան կվաճառեի և ինչ որ առնեի, հոժարությամբ ամենքի փոխարեն գինու գինը կվճարեի:

Եվ բոլորը նրա անմիտ խոսքի վրա ծաղրում էին, հյուրն ասաց.

Ես այդպիսի վաճառող եմ փնտրում և հոժարությամբ կգնեմ: Ասա՛, ի՞նչ գնով ես վաճառում այն:

Իսկ նա, բերանը բացելով, պատասխանեց.

Այսքան:

Եվ անմիջապես գինը որոշեցին, ու հոգիների գնորդը գումարը տվեց: Եվ երբ բոլորն ուրախությամբ գինի էին խմում, նա, որ իր հոգին էր վաճառել, չէր էլ մտածում այդ մասին: Իսկ երբ երեկո եղավ վաճառականն ասաց, ժամանակն է, որ ամեն մարդ իր տունը գնա, բայց մինչև գնալը, նախ դատաստան արեք: Եթե մեկը ձի գնի և այն բերանին սանձ ունենա, մի՞թե սանձը նրանը չի լինի, որ ձին գնել է:

Ամենքն էլ միաբերան պատասխան տվեցին.

Այդպես է:

Եվ ահա հոգեվաճառ թշվառականն ահից սկսեց դողալ: Իսկ վաճառականը, նրան առնելով, բոլորի աչքի առաջ վեր բարձրացրեց և հոգով ու մարմնով իր հետ դժոխք տարավ, որովհետև մարդու կերպարանքով սատանան էր. քանզի մարդու հոգին էլ ուրիշ, ով կգնի, եթե ոչ

նա, ով մշտապես փնտրում է, որպեսզի մարդու հոգին կորստյան մատնի»:

Նա ով իսկականից և անկեղծորեն հավատում է Աստծու զորությանը, հոգևոր ուժի միջոցով սերտ, անխզելի և հզոր կապ է ստեղծում երկրի ու երկնքի մեջ՝ իրեն դարձնելով այդ շղթայի բազմահազար հուսալի օղակներից մեկը: Եվ հակառակը՝ անհավատի մոտ այդ կապը խզված է ու նա ապրում է որպես սովորական մի մարդ, իր ամենօրյա հոգսերով, անլուծելի խնդիրներով և դժվարություններով, որը վերջին հաշվով կարող է բերել անհաջողությունների ու դժբախտությունների:

Մեր հոգու մաքրության համար անհրաժեշտ է, որ մեր միջից հանենք՝ *նախանձի, փառասիրության, գոռոզամտության, անհամեստության և այլ բացասական երևույթները,* որպեսզի հոգով մաքրվենք ու այդ մաքրությունը հնարավորություն ընձեռի մեր հոգևոր ուժի հզորացմանը:

Գերագույն Արարիչը, ստեղծելով մարդուն և կանխատեսելով նրան սպառնացող անընդհատ աճող բացասական գործոնների ազդեցությունը, նրան զինել է մի հզոր ու անպարտելի զենքով՝ հոգով: Նա բոլորիս մարմնի մեջ տեղադրել է այդ Աստվածային մասնիկը և մենք պարտավոր ենք իմանալ ո՛չ միայն, թե ինչպե՞ս պահպանենք մեր հոգու մաքրությունը, որպես Աստծու Գերագույն Պարգևը, այլև թե ինչպե՞ս ու ի՞նչ ձևով հզորացնենք մեր հոգու ուժը, որպեսզի դիմակայենք առաջացող դժվարություններին:

Մաքրենք մեր հոգիները աղոթքով, որպեսզի բացվեն մեր հոգու աչքերը: Մի օր, ուզենք կամ չուզենք պատասխան ենք տալու մեր երկրային կյանքի համար: Չըզրկենք մեզ երկրային բարիքները վայելելուց, բայց չմոռանանք դրանց Ստեղծողին: Այս ձևով մեր հոգիները փրկած կլինենք հավիտենական կրակների մեջ այրվելուց:

Աղոթքով սնենք մեր հոգին: Հոգևոր սննդի ստացման որակն ու քանակը կախված է միմիայն մեզանից, թե

ինչքանո՞վ մենք անկեղծ, անկողմնակալ, անմիջական ու խոր հավատով ենք դիմում Արարչին։

«Անհավատ մի՛ եղիր, այլ՝ հավատացյալ» (Հովհ. 20:27), Հիսուսի խրատն էր ուղղված Թովմաս առաքյալին և նրա միջոցով՝ բոլորիս։ Աստծու հետ կապը կարող ենք հաստատուն պահել, միմիայն հավատով, սիրով ու աղոթքով։ Փորձենք այն մնայուն կամրջի վերածել։ Ամեն։

ՀՈՒՅՍՈՎ ԱՊՐԻՐ

«Թող օրհնյալ լինի այն մարդը, որ հույսը Տիրոջ վրա կդնի, որ Տերը նրա հույսը կդառնա»
(Երեմ. 17:7)

«Ի՞նչ է հույսը», «Ո՞ւմ վրա կարող ենք մեր հույսը դնել» և վերջապես՝ *«Մեր կյանքի համար ինչքանո՞վ է կարևոր հույս ունենալը»:* Սրանք հարցեր են, որոնք յուրաքանչյուրիս էլ հետաքրքրում են և փորձում ենք գտնել դրանց պատասխանները:

«Եթե պատահի, որ մեկին ինչ-որ բան հարցնես, նախ մտածիր, որ խոսքդ նրան չվերաբերի, որովհետև չես կարող նրանից ճիշտ պատասխան ստանալ քո տարակուսանքները ցրելու համար.,- ասում է Պողոս Պատրիարք Ադրիանուպոլսեցին,- *յուրաքանչյուր ոք իր շահի մասին ավելի է մտածում, քան ուրիշների: Ուստի խոսքերդ թյուր կողմը շրջելով՝ անհնարին դժվարություններով հուսաբեկ կանի քեզ: Հարցրու նրան, ում որևէ կերպ չի վերաբերում այն, ինչի մասին հարցնում ես, որպեսզի ճիշտ պատասխան ստանաս: Հուսահատությունն առաջ է գալիս Աստծու գթության մասին չիմանալուց. որովհետև հուսահատն Աստծուն ներող ու ողորմած չի ճանաչում, կամ Աստծու ողորմությունն իր հանցանքից պակաս է համարում…» («Խրատի Թանգարան»):*

Աշխարհը թողնողը մտնում է կյանքի բոլորովին մի նոր ասպարեզ, որը անշուշտ ամբողջությամբ անծանոթ չէ մեզ համար, սակայն ունենում է շատ կողմեր, որոնք մեր կամքից անկախ այսպիսի հարցեր են առաջացնում. *«Ի՞նչ անել կամ ինչպե՞ս ապրել»:*

Այս հարցին պատասխանում է Սուրբ Անտոն Մեծը. *«Հույսդ մի՛դիր քո արդարության վրա, ճշմարտապես գոջա քո անցյալ մեղքերի համար, սանձիր լեզուդ, սիրտդ և որովայնդ: Բոլոր գործերից առավել լավը, որը կարող է կատարել մարդը, դա իր մեղքերն են՝ Աստծու և իր ծերերի*

առաջ խոստովանելը, ինքն իրեն դատելը ու մինչև վերջին շունչը պատրաստ լինելը հանդիպելու ամեն մի փորձության»:

Հույսը չպետք է շփոթել այն պարզ ցանկության հետ, որը կարող ենք ունենալ մեր կյանքի այս կամ այն պայմաններում, այն ժամանակավոր մի զգացում է մեր մեջ, որը մեզ միշտ կապում է Աստծուն, ո՛չ միայն նեղությունների, ո՛չ միայն վտանգների ու դժվարությունների, այլ ամեն տեսակի երևույթների ընթացքին:

Հույսը այն գերբնական առաքինությունն է մեր մեջ, որը մեզ մղում է Աստծուց մի բարիք ակնկալելու և սպասելու: Հետևաբար հույսը իրեն հենակետ ունի Նրան և իբրև նպատակակետ՝ բարին: Հույսը հավատի վրա հիմնված մի առաքինություն է, որի միակ պատասխանը տվողը՝ Աստված Ինքն է:

Պողոս Առաքյալը շարունակելով իր խոսքը Կորնթացիներին ուղղած առաջին թղթով, նորադարձ քրիստոնյաներին կոչ էր անում օժտվել այս երեք շնորհներով՝ հավատով, հույսով ու սիրով, որովհետև սրանք իրար միացած պիտի ստեղծեին չտեսնված այնպիսի մի ուժ, որը պիտի կարողանար քայքայել նույնիսկ Հռոմեական հզոր կայսրությունը, նրա փոխարեն մի նոր Թագավորության՝ Աստծու Հավիտենական Թագավորության հիմքերը դնելու համար:

Սա հետաքրքիր պատմություն է հուսահատության մասին:

«Շատ տարիներ առաջ սատանան որոշում է գլուխ գովել և ի ցույց դնել իր զինանոցի բոլոր զենքերը: Նա դրանք զգուշորեն տեղադրում է ապակե ցուցափեղկում և ամրացնում դրանց վրա պիտակներ՝ նշելով, թե որը ի՞նչ է և ի՞նչ արժե:

Ի՞նչ հավաքածու էր դա: Այստեղ էր գտնվում և՛ ՆԱԽԱՆՁԻ ոսկե դանակը, և՛ ՉԱՐՈՒԹՅԱՆ մուրճը, և՛ ԺԼԱՏՈՒԹՅԱՆ թակարդը: Փայտիկների վրա գեղեցիկ

ձևով շարված էին նաև ՎԱԽԻ, ԳՈՌՈԶՈՒԹՅԱՆ և ԱՏԵԼՈՒԹՅԱՆ բոլոր զենքերը: Դրանք բոլորը դրված էին գեղեցիկ բարձերի վրա և հիացնում էին Դժոխքի բոլոր այցելուներին: Իսկ ամենահեռու դարակի վրա դրված էր փոքրիկ, ուշադրություն չգրավող և բավականաչափ մաշված փայտե մի սեպ, որի վրա ամրացված էր «ՀՈՒՍԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ» պիտակը: Ի զարմանս մյուսների՝ նրա արժեքը ավելի բարձր էր, քան մնացած զենքերի արժեքը բոլորը միասին վերցրած: Այն հարցին, թե ինչո՞ւ է Սատանան այդ զենքը մնացածից ավել գնահատում, նա պատասխանում է.

«Սա միակ զենքն է իմ զինանոցում, որի վրա ես կարող եմ հույս դնել, եթե մնացած զենքերը իրենց չարդարացնեն»:

Նա քնքշորեն շոյում է փայտե սեպը և շարունակում.

«Եթե ինձ հաջողվի այն մտցնել մարդու գլխի մեջ, նա կբացի դռները մնացած բոլոր զենքերի առաջ»:

Այնպես որ, երբե՛ք մի հուսահատվեք, քանզի ձեր ճանապարհին ինչ-որ տեղ միշտ մի լուսավոր կետ կա, որ դառնալու է ձեր կյանքի մասը: Հուսահատությունը՝ ինքնասպանություն է:

Հետաքրքիր մի հարց է ծնվում մեր մտքում, *«Իսկ ո՞ւմ վրա կարող ենք հույս դնել»:*

Սաղմոսերգուն հստակորեն պատասխանում է այս հարցին.

«Սակայն իմ հոգին հնազանդ կմնա Աստծուն, քանզի նրանի՛ց է իմ համբերությունը: Նա է Աստվածն իմ ու փրկիչն իմ, ապավենն իմ՝ որ չսասանվեմ: Աստծուց է զորությունն ու փառքն իմ. Աստված է օգնականն իմ: Եվ Աստծու վրա է հույսն իմ: Ձեր հույսը դրե՛ք նրա վրա, ժողովուրդների ողջ բազմություններ, բացե՛ք նրա առջև սրտերը ձեր. քանզի Աստված օգնականն է մեր հավիտյանս հավիտենից» (Սաղմ. 61:6-9):

Մի այլ պատմություն.

«Հույսը վառում է բոլոր մարված մոմերը (առակ).

Չորս մոմեր այրվում էին դանդաղ: Լռություն էր և լսվում էր նրանց զրույցը:

Առաջինն ասում է,- Ես խաղաղությունն եմ, մարդիկ չեն հասցնում ինձ պահել, կհանգչեմ,- ասում և թուլացնում է կրակը ու հանգչում:

Երկրորդն ասում է,- Ես հավատն եմ, ավելորդ եմ, մարդիկ չեն ուզում իմանալ իմ մասին, իմաստ չունի վառված մնալ: Երբ ավարտում է խոսքը, փչում է թույլ զեփյուռը և հանգցնում նրան:

Երրորդ մոմը արտահայտվում է տխուր,- Ես սերն եմ: Էլ ուժ չունեմ, մարդիկ չեն հավատում իմ կարևորությանը. մոռանում են նույնիսկ իրենց սիրելիներին,- ասաս և անմիջապես հանգչում է:

Այդ պահին ներս է մտնում մի երեխա և տեսնում երեք մոմերը հանգած: Ի՞նչ է սա, դուք պետք է մինչև վերջ վառվեք,-ասում ու սկսում է լացել:

Այդ ժամանակ խոսում է չորրորդ մոմը, - Քանի դեռ ես կրակ ունեմ, կվառենք մյուս մոմերը: Ես հույսն եմ: Եվ փայլող աչքերով երեխան հույսի մոմով վառում է մյուսները»:

«Հույս մի՛ դրեք անիրավության վրա, հափշտակություն մի՛ ցանկանաք, եթե հարստությունն առվի պես իսկ հոսի, թող ձեր սրտերը չցանկանան» (Սաղմ. 61:11):

Երբեք մարդու վրա հույս մի՛ դրեք, քանի որ նա փոփոխական է: *«Այսպես է ասում Տերը. «Թող անիծյալ լինի այն մարդը, որ իր հույսը կդնի մարդու վրա՝ ապավինելով նրա մարմնին ու բազկին» (Երեմ. 17:5):* Ձեր հույսը դրեք Աստծու վրա, որովետև Աստված երեկ նույնն էր, այսօր նույնն է և հավիտյանս նույնը պիտի մնա, չի փոխվելու: *«Բայց թող օրհնյալ լինի այն մարդը, որ հույսը Տիրոջ վրա կդնի, որ Տերը նրա հույսը կդառնա» (Երեմ. 17:8,)*- ասում է Երեմիա մարգարեն: Հիշեք Հիսուսի կյանքի վեր-

ջին օրերը, երբ Ծաղկազարդին ժողովուրդը ուրախությամբ ու ցնծությամբ դիմավորում էր Օծյալ Թագավորին, Նրա ոտքերի տակ փռելով զգեստներ, ձիթենու և արմավենու ճյուղեր, առաջնորդելով Նրան դեպի տաճար: Իսկ մեկ շաբաթ անց, Հիսուսին օրհնաբանող այդ նույն մարդիկ գոռում էին *«Խաչ հանե՛ք դրան, խաչ հանե՛ք»:* Այս է մարդը, *«այսօր այսպես է, վաղը մի այլ կերպ»:*

«Հույսը երբե՛ք չի ամաչեցնում, որովհետև Աստծու սերը սփռված է մեր սրտերում Սուրբ Հոգու միջոցով, որ տրվեց մեզ» (Հռոմ. 5:5),- ասում է Պողոս առաքյալը Հռոմայեցիներին ուղղած իր թղթում:

Ուրեմն, եկե՛ք շահենք այն կյանքը, որը Նա մեզ ժառանգ թողեց: Ճշմարիտ կյանքը Քրիստոսն է, որին ունենալու համար մեր կյանքի օրերը պիտի լցնենք իրար հանդեպ ունեցած հույսով, հավատով, ու սիրով: Ամեն:

ՄԱՐԴՈՒ ԿՈՉՈՒՄԸ

Աստված ասաց. *«Մարդ ստեղծենք մեր կերպարանքով ու նմանությամբ, նա թող իշխի ծովի ձկների, երկնքի թռչունների, ողջ երկրի անասունների և երկրի վրա սողացող բոլոր սողունների վրա»: «Եվ Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով, Աստծու պատկերով ստեղծեց նրան, արու և էգ ստեղծեց նրանց» (Ծննդոց 1:26-27):*

Պարզ է, որ մարդու ծնունդը աստվածային է: Հիշենք Աստծու խոսքը, երբ ամեն օր մի բան էր ստեղծում. *«Աստված տեսավ, որ լավ է: Աստված օրհնեց… թող լինեն»*: Ուրեմն Աստծու ստեղծածները բարի էին, իսկ մարդը վեր էր դրանցից, քանի որ՝ *«Տեր Աստված մարդուն ստեղծեց երկրի հողից, նրա դեմքին կենդանության շունչ փչեց և մարդն եղավ կենդանի էակ» (Ծննդոց 2:7):* Աստված մարդուն օժտեց խելքով, կամքով, խղճով ու Իր Հոգին փչեց նրա մեջ: Մարդը սրանցով է տարբերվում կենդանիներից:

Նշանակում է՝

ա. Այս աշխարհում մարդ լինելը՝ մեծ շնորհք է·

բ. Իբրև մարդ ապրելը՝ քաջություն պահանջող պայքա՛ր է.

գ. Իսկ մարդ մնալը և մարդ մեռնելը՝ հաղթանակ:

Ուստի, բոլորս մարդ ենք այնքան ժամանակ, որքան գիտակից ենք մեր կոչմանը և տերն ենք մեր արժանապատվության:

Աստված մարդու փրկությունը այնքան կարևորեց ու արժևորեց, որ նրա համար չխնայեց նույնիսկ Իր Միածին Որդուն և ամեն ինչ արեց, որ նրան կրկին անգամ բարձրացնի ու բազմեցնի Իր Աջ կողմում:

Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանցը այսպես է բնութագրում *«Մարդու կոչումը աշխարհիս վրա».*

«*Կյանքը կազմված է փոքր բաներից, բայց առանց այդ փոքր բաների լավ կատարման լավագույն մեծը չի*

ստեղծվել… Կառապա՞ն եք, կարող եք բարի, ազնիվ ու արդար կառապան լինել: Կոշկակա՞ր եք, կարող եք երեսի քրտինքով վաստակած, մաքուր հաց ուտել և կերցնել ձեր զավակներին:

Ծնո՞ղ եք: Ի՞նչ թանկագին բան է զավակը, խելոք մանչուկը, սիրունիկ աղջիկը: Արտաքուստ ինչքան փոքր բաներ են մայրական պարտավորությունները՝ սնունդ տալ, լողացնել երեխային, մաքրել և լվանալ նրա փաթույթները, հագնելիքը, քնեցնել ժամանակին և այլ բազմաթիվ այսպիսի մանր բաներ: Բայց այս մանր բաներից է կախված մսի այդ գնդից մտածող և զգացող, բանական և բարոյական էակ ստեղծելը» («Դեպի Լույս և Կյանք», «Մարդու կոչումը աշխարհիս վրա», էջ 112): Դժբախտաբար կան անհատներ, որոնք Աստծու տված այս վեհ կոչումը խեղաթյուրում են ու ապրում կենդանու կյանքով: Բնական է, որ այսպիսիները ոչ միայն որևէ արժեք չեն ներկայացնում իրենց Ստեղծողի՝ Աստծու, այլ նույնիսկ իրենց իսկ նմանների մոտ:

«ՄՐՋՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՓԻՂԸ

Սողոմոն թագավորը մի փիղ ուներ: Այնքան հսկա էր, որ ամեն ինչ քարուքանդ էր անում, բայց քանի որ թագավորի սիրած փիղն էր, անպատիժ էր մնում: Նամանավանդ մեծ վնաս էր հասցնում մրջյուններին. պառկում էր և մի պալատ մրջյուն ջնջում, կնճիթով քաշում էր ու երկինք փչում;

Ստիպված մրջյունները գնում են Սողոմոն թագավորի մոտ ու ասում.

Իմաստուն թագավորն ապրած կենա, քո փիղը մեր տներն ավերում ու մեր ցեղը ջնջում է, արգելի՛ր.

Ի՞նչ,- գոռում է թագավորը,- մրջյուններն ովքե՞ր են, որ նրանց համար իմ փղի առաջ արգելք դնեմ:

Երկրորդ, երրորդ անգամ գնում են գանգատվելու, սակայն թագավորը դարձյալ լռում է: Եվ տեր թագա-

վորից հույսները կտրած՝ մրջյունները որոշում են մեծ ժողովի հավաքվել: Գալիս են աշխարհի բոլոր մրջյունները՝ մեծ ու փոքր, առողջ ու տկար, թույլ ու ուժեղ, անգետ ու գիտուն: Գալիս են, խելք խելքի տալիս ու փղին հաղթելու հնարը գտնում: Մրջնավարի լուռ՝ գործի են անցնում ու փղին վայել գերեզման փորում: Ծանր փնչոց ու խուլ ոտնաձայներ են գալիս՝ մրջյունները ձայները կըտրում են: Դո՛փ, դո՛փ. դո՛փ - Փիղը գալիս էր ավերելու: Ու մեկ էլ թըմփ … հսկան փոսն է ընկնում, ոտքերը տնկում ու այդպես էլ մնում:

Օրերը անցնում են, փիղը չկար: Թագավորը ծառաներին ուղարկում է փնտրելու: Այստեղ փիղ, այնտեղ փիղ, փիղը՝ չկար: Մրջյունների մոտից ծանր ժանտահոտ էր գալիս. Գնում են, տեսնում փիղը սատկել է: Ծառաները այս մասին հայտնում են Սողոմոն իմաստունին:

Մեր թագավորը շատ ապրի, մրջյունները թակարդ են սարքել, փիղն ընկել է մեջը՝ սատկել:

Սողոմոն իմաստունը ողբում է իր փղի մահը, ափսոսում, բայց և մտածում է իրենից հետո եկողների մասին ու ասում.

Թշնամիդ թեկուզ մրջյուն էլ լինի՝ մի՛ արհամարհիր»:

Հիանալի և Սողոմոն իմաստունին վայել մտածում:

Նշանավոր ռուս գրող Դոստոևսկին ասում է. *«Մարդ լինել մարդկանց մեջ և միշտ մարդ մնալ բոլոր դժբախտությունների մեջ. չհուսալքվել ու չընկճվել. ա՛յս է ահա կյանքը, ա՛յս է նրա նպատակը»:*

Ուրախ ենք վկայելու, որ կան իրապես մարդ կոչումը արժևորողներ, որոնք Աստծուն իրենց ծառայությամբ, սիրով ու նվիրումով և արդար ու բարի գործերով, արժանանում են ամենավեհ տիտղոսին. Աստված արժեվորում է նրանց: Այո՛, գլխավորը Աստծու գնահատականն ու արժևորումն է, սակայն մարդիկ էլ իրենց բարի խոսքն են ասում, այսպիսի արտահայտությամբ. *«ՄԵԾԱՏԱՌՈՎ*

ՄԱՐԴ էր»: Չմոռանանք, որ միայն Աստծու անունն է գրվում մեծատառով: Կնշանակի այդ մարդը իր բարի, արդար և քրիստոնեավայել կյանքով վաստակել է այդ պատվավոր՝ *ՄԱՐԴ* կոչվելու իրավունքը: Փորձենք նման-վել. *ՄԱՐԴ ԼԻՆԵՆՔ ՈՒ ՄԱՐԴ ՄՆԱՆՔ,* նույնիսկ եթե հեռացել ենք այս երկրավոր կյանքից: Ամեն:

ԱՍՏԾՈՒ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

«Այստեղ տաճարից մեծ մեկը կա»
(Մատթ. 12:6)

Այս խոսքերով Հիսուս Ինքնիրեն ներկայացնում է մեզ: Այդքան էլ սովորական մի բան չէր ներկայացնել Ինքնիրեն և կամ հիշեցնել Իր մասին: Նա հաճախ ներկայանում էր իբրև խոնարհ ու համեստ մեկը, սակայն, երբ առիթը լինում էր, չէր վախենում, այլ Ինքն իր մասին վկայություն էր տալիս:

Այս անգամ էլ նույնն է պատահում: Երբ շաբաթ օրով Հիսուս անցնում էր ցորենի արտերի միջով, առաքյալները սոված լինելով՝ քաղում և ուտում են ցորենի հասկերը: Ահա այս երևույթն էր, որ բարկացրել էր օրենքի պահապաններին՝ փարիսեցիներին, քանի որ Հիսուսի աշակերտները անում էին մի բան, որը ըստ հրեական օրենքի արգելված էր անել շաբաթ օրով:

Որպեսզի հնարավոր լինի ավելի լավ հասկանալ, թե Հիսուս ի՞նչ պայմաններում այս խոսքը արտասանեց, մեջ եմ բերում Մատթէոսի Ավետարանի 12-րդ գլխի 1-6 համարներն ամբողջությամբ.

«Հիսուս, շաբաթ օրով, անցավ արտերի միջով. նրա աշակերտները քաղցած էին և սկսեցին հասկ պոկել և ուտել: Փարիսեցիները երբ այս տեսան, Հիսուսին ասացին. «Ահա քո աշակերտները անում են մի բան, որ շաբաթ օրն անել օրինավոր չէ»: Եվ նա նրանց ասաց. «Դուք չե՞ք կարդացել, թե ինչ արեց Դավիթը, երբ քաղց զգաց նա և նրանք, որ նրա հետ էին: Թե ինչպես մտավ Աստծու տունը և կերավ առաջավորության հացը, որն ուտել օրենք չէր ո՛չ նրա և ո՛չ էլ նրա հետ եղողների համար: Կամ թե Օրենքում չե՞ք կարդացել, որ շաբաթ օրերը տաճարում քահանաները պղծում են շաբաթը և անմեղ են: Բայց ասում եմ ձեզ, որ այստեղ տաճարից մեծ մեկը կա» (Մատթ. 12:1-6):

Ահա այս պահը և փարիսեցիների առարկությունը մեզ այսօր մտածելու առիթ են տալիս: *«Ի՞նչ էր Աստծու Մարդեղացման նպատակը: Ի՞նչ կարիք կար, որ Հիսուս աշխարհ գար իբրև Մարդ, երբ արդեն իսկ աշխարհում աստվածային օրենքներ գոյություն ունեին և մարդկությունը դրանք կատարում էր»:*

Իրապես, ինչո՞ւ: Այս հարցին պատասխան տալուց առաջ, եկեք տեսնենք, թե ի՞նչ վիճակ էր տիրում աշխարհում սրանից երկու հազար տարի առաջ: Օրենքը այնքան էր նյութականացել, որ մարդկանց վզին լուծ էր դարձել, նույնիսկ այնպիսի մի բարձրության էր հասել, որ նրանք սկսել էին օրենքը երկրպագել Աստծու փոխարեն: Ահա Հիսուսի աշխարհ գալու նպատակներից մեկը: Երբ նա ասում է. *«Այստեղ Տաճարից մեծ մեկը կա»,* ուզում է շեշտել Իր աստվածային ներկայությունը, այսինքն այս ձևով օրենքից այն կողմ մարդու արժեքը ավելի վեր է դասում: Մարդը արժևորվում է Աստծու ներկայությամբ, որովհետև օրենքները դրվում են մարդկանց գործածության համար և ո՛չ թե մարդը դառնում է օրենքի գերի: Բոլորս էլ լավ գիտենք, թե օրենքը մի միջոց է մարդու համար և ո՛չ թե նպատակ: Սակայն օրենքը միայն բավարար չէ: Աստծու պարգևած շնորհքն է հիմնականը, որը մեզ դարձնում է Աստծու որդիներ և ո՛չ թե օրենքի ծառաներ:

Քրիստոնեական վարդապետության մեջ շեշտված է Աստծու Որդի լինելու գաղափարը, որովհետև Պողոս Առաքյալը հիշեցնում է, թե՝ *«Ծառա չենք, այլ՝ որդի»:* Ծառան և որդին տարբեր հասկացություններ են: *«Որդին ժառանգակիցն է» (Հռոմ· 8:15-17),*- ասում է Պողոս Առաքյալը և մենք երբ Սուրբ Ավազանից սուրբ մկրտությամբ վերըստին ենք ծնվում, դառնում ենք Քրիստոսին ժառանգակից:

Ահա, այս պարզ նպատակով, ամեն նոր օրը մեզ համար դառնում է սկիզբ և ոչ թե վերջ, առիթ՝ Աստծու շնորհքը ըմբռնելու և ընդունելու: Քրիստոնեական Վար-

դապետության խտացումն է՝ Աստծու լուսավոր որդիներ դառնալը, ժառանգությունից մաս և բաժին ունենալը ու հավիտենական կյանքը ընդունելը, որոնք կարող ենք ունենալ միայն Հիսուսին հավատալով և գործնապես դրանք ապրելով այս աշխարհում: Ահա թե ինչո՞ւ Քրիստոս մարդացավ, որպեսզի մեզ մեր մեղքերից սրբի և հավիտենական կյանքին արժանի դարձնի:

Մովսես մարգարեի օրենքը Հիսուսի բերած շնորհքով և ճշմարտությամբ վերջացավ, որովհետև մինչև Հովհաննես Մկրտչի ժամանակ էր այդ: Իսկ մարգարեության և օրենքի վերջակետը հանդիսացավ Ինքը՝ մեր Տերը և մեզ բոլորիս այդ շնորհների ճանապարհով դարձրեց Հայր Աստծու որդեգիրները:

Այս պատմությունը կարծում եմ հետաքրքիր է.

«ԿՈՐՅՐԱԾ ՊԱՀԵՐԸ

«Մի հողագործ լսում է, որ իրենց երկրի թագավորը հանդիպելու է ժողովրդի հետ՝ մարդկանց ցանկությունները լսելու և օգնելու համար ու այդ նպատակով շտապում է քաղաք՝ նրան տեսնելու և իր խնդրանքները ներկայացնելու: Երեկոյան մտնում է մի հյուրանոց, գարեջուր պատվիրում ու նստում մի սեղանի մոտ: Այդ պահին ներս է մտնում մաշված, պատառոտված հագուստներով մի աղքատ մարդ, որը գալիս ու նստում է հողագործի մոտ և հարցնում.

Տեսնում եմ, որ այս քաղաքից չեք, ի՞նչ գործով եք եկել այստեղ:

Երազանքներիցս մեկը թագավորին հանդիպելն է ու իմ խնդրանքները նրան ներկայացնելը,- պատասխանում է հողագործը;

Աղքատ մարդն ասում է.

Ես կարող եմ քեզ օգնել, որ թագավորին տեսնես:

Այդ ժամանակ հյուրանոց են մտնում մեծահարուստ մի քանի մարդիկ ու նստում նրանցից քիչ հեռու:

Հողագործը մտածում է, որ այս անվանի մարդիկ ավելի շուտ կարող են օգնել իրեն, քան այս աղքատ մարդը, գնում է, զարեջուր հյուրասիրում ու միանում նրանց:

Հաջորդ օրը, երբ թագավորն իր շքախմբով անցնում էր քաղաքի պողոտայով, հողագործը զարմանում է ու ափսոսում, բայց ժողովրդի բազմության պատճառով չի կարողանում մոտենալ նրան: Թագավորն այն մարդն էր, որը նախորդ օրը աղքատի զգեստներով նստած էր իր կողքին…» (Հովհաննես Մանուկյան, «Առակներ» Երևան, էջ 13):

Դժբախտաբար մեր կյանքի ընթացքում մենք էլ շատ անգամ կորցնում ենք այն պահը, երբ Հիսուս աղքատի հագուստներով, Իր խոնարհությամբ ու պարզությամբ մեր կողքին լինելով հանդերձ, հեռանում է մեզանից, քանի որ մենք ընտրում ենք հարուստի զգեստներով քողարկված սատանային: Ուշադի՛ր եղեք ու մի՛ կորցրեք այդ կարևոր պահը:

Ի՞նչ է փոխվել այսօր: Նույնիսկ կարելի է ասել՝ ո՛չ մի բան: Միայն դարերն են գլորվել ու աշխարհը զարգացում է ապրել: Այսօր, ներկա դարում մեր ուսերի վրա դրված քաղցր պարտականությունն է, եթե երբեմն դժվար էլ լինի, ճանաչել ճշմարիտ Աստծուն, ինչպես նաև մեր անձը, թե ո՞վ ենք մենք: Մենք մեզ նայելով հոգևոր հայելու մեջ, տեսնենք ու հասկանանք, որ մենք ծառաներ չենք, այլ՝ Աստծու որդիներ. որով պիտի աշխատենք, տքնենք, չարչարվենք, որպեսզի արժանի դառնանք Նրա որդիները դառնալու: Սա մարդուն տրված մի մեծ իշխանություն է, որովհետև նա Աստծու համար արժեքավոր մեկն է, կարելի է ասել Նրա ձեռագործն է, որի վրա Աստված աշխատել է, դեռևս աշխատում է ու պիտի աշխատի, ինչքան էլ մարդիկ փորձեն հեռանալ լույսից, արդարությունից ու ճշմարտությունից, մեկ է դրանք հավասարապես պիտի տարածվեն արդարների ու մեղավորների վրա, քանի դեռ աշխարհը գոյություն ունի:

Եկե՛ք փորձենք հասկանալ, թե՝ *«Այստեղ Տաճարից մեծ մեկը կա»,* խոսքով ի՞նչ է ուզում հասկացնել մեզ մեր Տերը. այսինքն օրենքը պահելով չէ որ պիտի տիրանանք Աստծու հավիտենական ժառանգության, այլ՝ Նրա շնորհները առիթ պիտի դառնան: Մնում է, որ մենք կարողանանք արժանի դառնալ այդ շնորհներին, որոնք Աստված մշտապես անձրևի պես տեղացնում է մեր վրա: Աստծու լույսը կարևոր է, հետևենք նրան և դառնանք Լույսի որդիներ *(Թես· 5:5):* Երկրային կյանքը սկիզբն է հավիտենական կյանքին տիրանալու համար և մենք այստեղից պիտի աշխատենք ու փառավորենք Տիրոջը: Ամեն:

ԱՊՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿԸ

«Մեր անուն Յիսուս, սիրով քով ճմլեա,
սիրտ իմ քարեղէն»
«Մեր քո անունը Հիսուս է, քո սիրով ճմլիր,
իմ քարեղեն սիրտը»
(Սուրբ Ներսես Շնորհալի)

Այս խոսքերը 12-րդ դարի մեր հրաշալի Կաթողիկոսներից Սբ. Ներսես Շնորհալու *«Առավոտ Լուսո»* երգի բառերից է:

Կյանքում կարող ենք հանդիպել մոլորված, հուսահատված ու դժգոհ, մարդկանցից հեռու ապրել ցանկացող, բարեկամությունից հոգնած, ընկերներից խաբված, աշխատանքում ձախորդ և հոգեպես ցնցված մարդկանց, որոնք աննպատակ ապրում են: Կարծես թե նրանք ապրում են միայն պարզապես ապրելու համար:

Սակայն անշուշտ կյանքն ունի իր նպատակը: *«Ո՞րն է այն»:*

Մարդիկ կամ Միություններ, կրոնական թե աշխարհիկ, կյանքում տեսնում են տարբեր նպատակներ: Ըստ ոմանց մաքուր և արդար ապրելը կյանքի գերագույն նպատակն է, ուրիշների կարծիքով՝ գլխավորը և ամենակարևորը հոգեկան մաքրությունն է Աստծուն հասնելու համար:

Քրիստոնեությունը աստվածային ճշմարտություններին հավատացողների համար ստեղծել է ընտանեկան կյանքի ամենակատարյալը: Դա Աստծու ընտանիքն է, այսինքն՝ Եկեղեցին: Ինչո՞ւ կատարյալ, որովհետև ընտանեկան կյանքը վիրավոր է՝ նախանձի, ամուսնալուծումների և ծերության պատճառով ու մահվան անխուսափելիությամբ: Մինչդեռ Աստծու ընտանիքի անդամ դառնալ նշանակում է Քրիստոսին ժառանգակից լինել, ինչպես վկայում է Սուրբ Մկրտության Խորհրդի ընթացքում արտասանվող բանաձևը. *«Այս անունով Աստծու ծառան, (խոսքը երախայի (չմկրտվածի) մասին է) եկել է երախայությունից Մկըրտության համար, մկրտվում է Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով: Գնվելով Քրիստոսի*

արյունով մեղքի ծառայությունից, ընդունում է Երկնավոր Հոր որդեգրությունը, լինելու Քրիստոսի ժառանգակիցը և Սուրբ Հոգու Տաճարը» (Մաշտոց):

Աստծու ընտանիքին անդամ դառնալը ամենամեծ ու ամենաբարձր պատիվն է: Որով, մարդիկ երբ որ ձեզ ատեն, բարեկամներն ու ձեր սիրելիները ձեզանից հեռանան և գործընկերները ծաղրեն ձեզ, հիշեցեք, թե դուք ո՞ր ընտանիքին եք մաս կազմում...: Այդ զգացումը բավական է, որ դուք ձեզ ուժեղ և ապահով զգաք:

Այս սուրբ ընտանիքը, սակայն ունի իր ներքին օրենքները, այնպես, ինչպես ամեն ընտանիք ունի, որոնցով կառավարվում է և ավելի հեշտ է դառնում կյանքը: Աստծու ընտանիքի օրենքները սակայն խտացված են մի կանոնում, որը ինքնին իսկ մարդկային կյանքի նպատակն է: Այդ *«Օրենքը»* կրում է Աստծու անունը՝ *ՄԵՐ:*

Աստված Ինքը սիրո աղբյուր լինելով, ուզում է, որ մենք այս կյանքում սիրել սովորենք: Նրա հայրական ամենախոր ցանկությունն է, որ մենք սիրենք մեր նմաններին, այսինքն՝ պահենք Ավետարանի ոսկե օրենքը. *«Այն ամենը, ինչ կկամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես և դուք արեք նրանց» (Մատթ. 7:12),* որովհետև ուրիշին սիրելը՝ այնքան էլ հեշտ բան չի, երբ մարդը եսասեր է: Մենակության մեջ չենք կարող մարդ սիրել, այլ պետք է շրջապատված լինենք նույնիսկ երբեմն բարկություն պատճառող, զանազան թերություններ ունեցող, վտանգավոր ու ո՛չ ուսյալ մարդկանցով: Այդպիսի ժամանակ է երևում մարդու սերը իր նմանների նկատմամբ: Մեր ունեցած սիրո աստիճանով պիտի գնահատվենք: Մեր մահից հետո Աստված երբեք մեզ չպիտի հարցնի թե դրամատան մեջ ինչքա՞ն դրամ ունենք, ո՛չ էլ պիտի հարցնի մեր անձնական նախասիրությունների մասին, այլ՝ թե ինչպիսի՞ վերաբերմունք ցույց տվեցինք մարդկանց, մանավանդ երբ նրանք կարիքի, դժբախտության ու նեղության մեջ էին: Սիրո ամենամեծ արտայայտությունը ուրիշին ժամանակ տրամադրելն է:

Հետաքրքիր մի զրույց տեղի ունեցավ իմ և երեսնամյա մի երիտասարդի միջև, որ գիշեր ցերեկ վազքի մեջ էր: Իմ հարցը այն էր, թե՝ *«Ի՞նչ է իր կյանքի նպատակը, ինչո՞ւ է այդքան վազում կամ ո՞ւր և ինչի՞ է ուզում հասնել»*

Նրա պատասխանը կարծես այս դարի բոլոր երիտասարդների մտածումն էր. «*Տե՛ր Հայր, քանի ուժս տեղն է, վազում եմ, որպեսզի հարստանամ, այսօր այս երկրի մեջ նյութն է իշխում: Եթե դրամ ունենամ, ուրեմն ինձ բանի տեղ կդնեն: Այս երկրում եթե դրամ չունես, ուրեմն մարդ չես»:* Նրա պատասխանից անշուշտ ես տխրեցի, վստահ եմ, որ դուք էլ ուրախ չեք, որ մեր երիտասարդները այսպիսի նպատակ ունեն:

Ակամայից հիշեցի իմ երիտասարդության տարիները, երբ փոքր տարիքից սկսեցի վազել, հավաքել ու կուտակել. ուղիղ տասնչորս տարի, սակայն երբ ժամանակը հասավ, ես սկսեցի հավաքածս բաժանել: *«Ի՞նչ էր հավաքածս, դրա՞մ, հարստությո՞ւն, ունեցվա՞ծք»:* Ո՛չ, քավ լիցի: Բաժանածս տասնչորս տարի հավաքած ու կուտակած իմ հավատը և սերն էր, որոնք անշահախնդիր կերպով քառասունվեց տարիներ շարունակ իբրև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ներկայացուցիչ բաժանեցի ու բաժանում եմ իմ ժողովրդի բոլոր զավակներին թե՛ Հայրենիքում և թե՛ վերջին քսանհինգ տարիները հեռավոր Հյուսիսային Ամերիկայում: Առաքինություններ, որոնք ո՛չ մեկը չկարողացավ խլել ինձանից, որովհետև դրանք նյութական ու տեսանելի չէին, այլ հոգեկան հարստություններ էին: Նույնիսկ, երբ իմ ընտանիքի հետ տեղի ունեցավ մի տխուր դեպք ու մենք կարելի է ասել ամբողջությամբ կորցրեցինք մեր տարիների հավաքած նյութական ունեցվածքը, սակայն փառք Աստծու, ես պահեցի իմ հավասարակշռությունը, որովհետև հոգեպես հարուստ էի. հավատս ու սերս ուժեղ էին: Աստված օգնեց, որպեսզի ես ավելի ուժ առնեմ, չհուսահատվեմ և շարունակեմ իմ կյանքը: Շնորհակալ եմ Քեզանից Տեր Աստված ու փառք եմ տալիս, որ ձեռքդ մեկնեցիր ու ինձ ավելի Քեզ մոտեցրիր: Նյութական ունեցվածքս տարիների ընթացքում տղայիս հետ ձեռք-ձեռքի տված նորից ետ բերեցինք, սակայն եթե կորցնեի հավատս ու սերս, երբե՛ք էլ ոտքի չէի կարող կանգնել: Հիմա պարզ է չէ՞, թե ինչո՞ւ տխրեցի երիտասարդի պատասխանից: Նրա կյանքի նպատակը ժամանակավոր էր, իսկ եթե կորցներ հավաքած միլիոնները, ինչպե՞ս պիտի կարողանար դիմանալ, ի՞նչ ուժով, որը չուներ: Վստահ չեմ, որ կդիմանար, ինքնասպանները

ճիշտ այդպիսի հոգեկան վիճակում են լինում, երբ կորցնում են տարիներով հավաքած ու չվայելած տեսանելին՝ նյութական ունեցվածքը: Ինչո՞ւ, որովհետև նրանց կյանքի նպատակը դրամն է եղել: Հիշում եք չէ, թե ինչ պատասխան տվեց ինձ երիտասարդը. *«Այս երկրում եթե դրամ չունես, ուրեմն մարդ չես»:* Ցավալի է: Սիրելի երիտասարդ, քեզ պատասխանելով, ասեմ, որ դրամը պետք է լինի ո՛չ թե նպատակ, այլ իբրև միջոց, հարստությամբ լավ ու բարի գործեր կատարելու համար: Երանի իմ ձայնը լսելի լինի բոլոր երիտասարդների մոտ:

Տեսնենք, թե երջանկահիշատակ Վազգեն Վեհափառը ի՞նչ է ասում այս մասին.

«Առանց անկեղծության ամեն բան կձախողի: Ու չկարծվի թե այնքան հեշտ բան է ինքնիրեն ճանաչելու անկեղծությունը ունենալ այդ հնարավորությունը, պետք է ասեմ այդ հոգեկան ուժը, կախում ունի մեծ չափով մարդու ստացած դաստիարակությունից:... Մակերեսային մի դաստիարակություն, արտաքին փայլ ունեցող մի դաստիարակություն տանում է դեպի ինքնակեղծում ու ցամաքեցնում ինքնիրեն ճիշտ ճանաչելու անկեղծության աղբյուրները... Մի ազգ չի՛ ապրում միայն իր նյութական բարիքներով, չի ապրում միայն իր մտքի և զգացումի արտահայտություններով, ինչպես են արվեստներն ու գրականությունը, չի՛ ապրում միայն հանճարեղ անհատների գործերով, այլ ապրում է նաև պատվի և արժանապատվության զգացումներով, իր «մենք»-ի գիտակցությամբ և զոհաբերության ոգով, իր ազատ և հպարտ ապրելու կամքով, մի խոսքով իր բարոյական նկարագրով»:

Իբրև Աստծու պատկերով ստեղծված, սակայն մեղավոր ու անցավոր մարդիկ, ինչպէ՞ս կարող ենք հաղթահարել կյանքի դժվարին կողմերը՝ իր բոլոր երեսներով: Հարց է:

Կարծում եմ այս պատմությունը որոշ չափով կարող է լուսաբանել մեզ:

«Պարսից Պերոզ Շահը չափազանց թույլ և տկար մի մարդ լինելով ինքնիրեն երբեք երջանիկ չէր զգում: Մի օր իր խորհրդատուին հարցնում է. «Ինչպե՞ս կարող եմ ճշմարտությունը գտնել և ո՞վ կարող է իմ ցավը մեղմացնել ասա ինձ ու ես այն փորագրել կտամ ոսկու վրա, միշտ աչքիս առջև պահելու համար»:

Խորհրդատուն, որը կյանք տեսած մի ծերունի էր,

հուշում է Շահին, որ պատրաստել տա մի ոսկե մատանի քաղաքի խելացի ու անվանի ոսկերիչներից՝ վարպետ Սարգսին: Շահը անմիջապես կանչել է տալիս ոսկերիչին և հանձնարարում, որ նա պատրաստի ոսկու վրա աշխարհի ամենագեղեցիկ մատանին. «Սակայն,- ասում է Շահը,- ինձ համար մատանուց ավելի կարևորը նրա վրա գրված այն կարճ ու իմաստուն խոսքն է, որը թե՛ պիտի ուրախացնի ինձ, երբ տխուր եմ և թե՛ պիտի լացացնի, երբ ուրախ եմ»: «Ա՜խ քեզ տարօրինակ ցանկություն,- կասեր մեզանից ամեն մեկը:»

Նույնը մտածեց նաև ոսկերիչ Սարգիսը և տխրեց Շահի հրամանից, բայց հրամանը հրաման էր և հնարավոր չէր չկատարել:

Նա ամուսնացած էր և ուներ երկու անուշիկ զավակներ:

Տուն գալով, ոսկերիչը առաջին հերթին երկու օրում պատրաստում է մատանին, սակայն նրա մտահոգությունը մատանու վրա գրվելիք իմաստուն խոսքն էր: Եղբ չկար: Լացելու աստիճան տխուր ու մտածմունքի մեջ էին ինքն ու կինը: Նրա ութը և տասը տարեկան զավակները երբ տեսնում են, որ իրենց հայրը լալիս է, մոտենում են նրան, գրկում ու համբուրում և պարզ միամտությամբ հարցնում. «Հայրիկ, ինչո՞ւ ես լալիս»: Հայրը գրկում, համբուրում է նրանց ու բացատրում իր վիճակը, խնդրելով, որ նրանք միայն աղոթեն իր համար: Փոքրիկները իրար երես են նայում: Մի պահ լռություն է տիրում ու հանկարծ տասը տարեկան տղան իր անմեղ զառնուկի պես աչքերով նայում է հորն ու ասում. «Մի՛ նեղվիր հայրիկ, այս էլ կանցնի»:

Ոսկերիչը ուժեղ ցնցում է ապրում, նրա շրթունքները սկսում են շարժվել: Նա լուռ աղոթում էր. «Գտա՛, Աստված խոսեց մեր անմեղ զավակի բերանով: Այս էլ կանցնի»: Եվ անմիջապես մատանու վրա գրում է այս խոսքը:

Շահը շատ բարկացած ու ջղային վիճակ ուներ: Մատանին իրապես հրաշալի էր: Կարդալով նրա վրա գրված խոսքը, նա միանգամից ժպտում է ու ասում. «Ուրեմն ինչո՞ւ տխրեմ ու սիրտս ցավեցնեմ մի ներության համար, որը ժամանակավոր է և պիտի անցնի»: Այս խոսքերը ասելուց հետո նա բավական խոշոր գումարով վարձատրում է ոսկերիչին, որն իր անմեղ զավակի բերանով մեծ ճշմարտության դուռն էր բացել, մի ճշմարտություն, որը կյանքի բոլոր փորձառությունների մեջ խորապես բարերար ազդեցություն ունի. «Այս էլ կանցնի»:

Այս պատմությունը մեզ դաս է տալիս, հասկացնելով, թե ինչ էլ լինենք՝ շահ, թագավոր, նախագահ, լավ պաշտոն ու

հարստություն ունեցող, մի խոսքով ամեն բան, որով հնարավոր կլիներ *«վայելելու այս աշխարհը և ուտել, խմելով անց կացնելու այս կյանքը»,* ինչպես շատ անգամ ասում են կյանքի նպատակ չունեցող որոշ մարդիկ, սակայն մեկ է մեր ժամանակը հասնելու է: Մտածենք միայն, թե ի՞նչ ենք թողնելու: Բայց մտածելու պետքը չկա, Աստված մեզ արդեն իսկ ուղեցույց է և ցույց է տալիս Իր սիրո ճանապարհը:

Մնում է, որ մենք Աստծու սերը ունենանք միմյանց նկատմամբ ու այն թողնենք իբրև հավիտենական հիշատակ մեր սիրելիների սրտում:

«Ընտանեկան խնդիրներ ունեցող մի հայր ասում է, թե չի հասկանում, թե իր կինն ու զավակները ի՞նչ են ուզում իրենից, երբ ամեն ձևով բավարարել է նրանց՝ դրամ, տուն, մեքենա, ուսում, շրջապտույտներ, հաճույք ու ամեն բարիք: Ծանոթ լինելով նրա հաճախակի բացակայություններին, գործի բերումով կամ անձնական հաճույքի, նրան պատասխանեցի.

- «Կինդ ու զավակներդ քեզ են ուզում: Նրանք քո աչքերիդ, ականջներիդ, իրենց հանդեպ հետաքրքրությանց և ի վերջո քո տրամադրելիք ժամանակիդ կարիքը ունեն, որի միջոցով իրենց նկատմամբ քո ունեցած սերը պիտի տեսնեն»:

Ուրեմն, հիմա՛ է մեր սերը արտահայտելու ժամանակը: Հիմա՛ պետք է որոշում տանք, որովհետև ժամանակը մեզ չի պատկանում և վաղը ուշ կլինի, քանի որ չգիտենք, թե ապրելու ինչքան ժամանակ ունենք: Հիմա՛ է ժամանակը իրար սիրելու, հիվանդին այցելելու, կարիքավորներին օգնելու, բանտարկյալներին տեսության գնալու, որովհետև ամեն ինչ կարող է միանգամից փոխվել. Մարդիկ մեռնում են, մանուկները մեծանում են և երբեք էլ ապահովություն չունենք՝ սպասելու վաղվան:

Հիմա պա՞րզ է, չէ, թե ի՞նչ է կյանքի նպատակը: *«Միայն ու միայն Մեր»:*

Ահա այդ սերը, Աստծու միջոցով տալիս է մեզ Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին ու Մայր Աթոռ Սուրբ էջմիածինը: Ինչքան շուտ մոտենաք նրան, այնքան սերը ավելի խոր և օրհնությունը շատ կլինի: Ուրեմն շտապեցե՛ք, մոլորյալներ և մանավանդ ճշմարիտ հավատից հեռացածներ, Հայ Եկեղեցին իր գիրկը բացած ձեզ է սպասում, որպեսզի ձեր հոգսը, նեղությունները և դժվարությունները թեթևացնի ու ձեզ տա հոգու և մտքի խաղաղություն ու հանգստություն: Ամեն:

ԱՐԹՈ՛ՒՆ ԿԱՑԷՔ

«Բայց այն էլ իմացե՛ք, եթե տանտերը գիտենար, թե ո՞ր ժամին գող կգա, թույլ չէր տա, որ իր տունը կտրեն: Դուք էլ պատրա՛ստ եղեք, որովհետև այն ժամին, երբ չէք սպասի, կգա մարդու Որդին»
(Ղուկաս 12:39-40)

Ո՞վ է այն անձը, որ քնած ժամանակդ կամ գործով տանից հեռու եղած պահիդ կքանդի տանդ դռներն ու պատուհանները և կկողոպտի ինչ որ ունես: Գողը նա է, որ իր գործում մասնագիտացել է: Նրա համար կարևոր չէ, թե ինչքան վնաս կհասցնի հանգիստ և խաղաղ ապրողներին: Նա ձրիակեր է, աննկարագիր, ծույլ է և օրենքը խախտող:

Դժվար է գողություն արած ժամանակ նրան ձերբակալել: Հաճախ ոստիկանությունը շաբաթներով, ամիսներով ու նույնիսկ տարիներով աշխատում է գտնել, վնասազերծել և արժանի պատիժը տալ նրան: Երանի թե այս գողը իր ճարպկությունը և ինչո՞ւ չէ իր շնորհները օգտագործեր ճակատի քրտինքով դրամ վաստակելու մեջ, պատկերացրեք նրա հաջողությունը:

Գող միայն չի կարելի համարել նրանց, որոնք տներն են կողոպտում: Գող է, նաև այն գործավորը, որը բավարար աշխատավարձ ստանալով հանդերձ, խաբում է իր գործատիրոջը և չի ուզում աշխատել: Գող է նաև այն գործատերը, որը շահագործում է իր գործավորին: Քիչ է վճարում, որն անընդունելի է հավատ ու խիղճ ունեցող մարդու համար: Դժբախտաբար փաստ է, որ դրամին գերի մարդու մեջ խիղճը մեռնում է: Այս դեպքում և գործատերը և գործավորը քրիստոնյային վայել ճանապարհի վրա չեն:

Պողոս Առաքյալը Փիլիպպեցիներին ուղղած իր նամակում ասում է. *«Գիտեմ զրկանքով ապրել, գիտեմ առատության մեջ լինել: Ամեն ինչում, բոլոր պայմանների տակ, սովորել եմ թե՛ կուշտ լինել, թե՛ քաղցած մնալ, թե՛ առատության մեջ լինել, թե՛ զրկանք կրել: Ամեն ինչին կարող եմ նրա շնորհիվ,*

ով ինձ զորացրեց» (Փիլիպ. 4:12-13):

Պողոս առաքյալը ասում է. *«Թույլ մի՛ տուր, որ չարը հաղթի քեզ, այլ բարիո՛վ հաղթիր չարին» (Հռոմ 12:21):*

«Արթո՛ւն կացեք այաուհետև, ամեն ժամ աղո՛թք արեք, որպեսզի կարողանաք զերծ մնալ այն ամենից, որ լինելու է, և արժանի լինեք կանգնելու մարդու Որդու առաջ» (Ղուկ. 21:36):

Երբ սխալ գործ անողը կամ գողը բռնվում է, ստանում է իր արժանի պատիժը, գնում է բանտ կամ դրամական տուգանք է վճարում: Բայց եթե Աստծու դատաստանի առաջ կանգնելով չենք կարողանալու արդարանալ, մեր ստանալիք բաժինը պիտի լինի հավիտենական տանջանք ե տառապանք: Ուրեմն ի՞նչ պիտի անենք: Արթուն մնանք և հսկե՞նք, որովհետե չգիտենք թե գողը ե՞րբ պիտի գա և կամ ե՞րբ պիտի փակենք մեր աչքերը ու ամեն բան այստեղ թողնելով պիտի անցնենք մյուս կյանքի՞ն:

«Բայց այն էլ իմացե՛ք, եթե տանտերը գիտենար, թե որ ժամին գող կգա, թույլ չէր տա, որ իր տունը կտրեն: Դուք էլ պատրաստ եղեք, որովհետե այն ժամին, երբ չեք սպասի, կգա Մարդու Որդին» (Ղուկ. 39-40):

Ի՞նչ պետք է անել: Ապրել ուղի՞ղ, աատվածահաճո կյա՞նք, ապրել օրը օրին համոզված լինելով, որ մի ժամ հետո կամ ամենաուշը վաղվա օրը կարող է մեզ համար վերջի՞նը լինել: Նստենք ու մտածե՞նք, թե ապրենք կյանքը ամբողջական նվիրումով, առանց ուրիշի ունեցածի վրա աչք ունենալու, առանց նախանձելու, բամբասելու և չարախոսության: Այն մարդիկ, որոնք ուղիղ ճանապարհով ու անարդար կերպով չեն վաստակում, այլ՝ զանազան խարդախ և անազնիվ միջոցներով են փորձում հափշտակել իրենց հացը, այդպիսիները ոչ մի բանի առաջ չեն կանգնում, եթե պետք լինի, մարդ էլ կարող են սպանել: Կարծո՞ւմ եք գողացված դրամը կարելի է վայելել: Ես ասում եմ՝ *«ո՛չ»* երիցս՝ ո՛չ: Աստված կա, որ նայում է մեզ և մի օր պատիժը պիտի հասնի: Գողացված դրամի համար մեր ժողովուրդը մի խոսք ունի. *«Քամու բերածը, քամին էլ*

կտանի»: Այո՛, պետք է ապրել հ չդժգոհել, լավատես լինել, այլ ապրել իբրև լույսի որդիներ՝ ատելով խավարը, փառք տալ Աստծուն, հեռու մնալով այն ամենից, ինչ որ փչացնում է մարդու հոգին ու մարմինը:

Հունական կյանքից առնված այս պատմությունը ուսանելի է.

«Կոստան անունով մի կայսր իր եղբորն սպանում է և տիրանում գահին: Բայց կյանքում ո՛չ մի բոպե խաղաղություն չի ունենում: Գիշեր ու ցերեկ եղբոր ուրվականը հայածում է նրան և չարչարում: Ուր որ գնում է, իր սպանած եղբորն է տեսնում, որը մի բաժակ արյուն ձեռքում բռնած երկարում է իր ոճրագործ եղբորն ու ասում. «Խմի՛ր, անկուշտ, եղբայրական արյունս խմի՛ր»: Աշխարհում էլ տեղ չի մնում, որ կայսրը պտույտի դուրս չգա, որպեսզի խաղաղություն ունենա, սակայն չի կարողանում գտնել իր խղճի հանգստությունը և այսպես չարչարվելով, տանջվելով ու տառապելով մեռնում է»:

Մարդու խիղճը իր ամենամեծ դատավորն է:

Ուրեմն, ինչ որ Հիսուս շեշտում է արթուն մնալու մասին, այն է, որ գողը երբեք չի հայտարարում, թե քաղաքի ո՞ր մասում գտնվող տները պիտի կողոպտի: Միայն ու միայն ինքը գիտի օրն ու ժամը և տեղը: Այլապես, տանտերը և ոստիկանությունը անհրաժեշտ քայլերը պիտի առնեին նրա գողության գործը ձախողեցնելու համար:

«...Սիրեցե՛ք ճշմարտությունը, այս է այն գանձը թանկագին, որը սրբում է ձեր սիրտը ե տիրում ձեր բոյոր խորհուրդներին ու սրտի շարժումներին և կյանքին, այս է այն վրձինը, որով ամենաճարտար նկարիչը միշտ պիտի նորոգի ձեզ, պիտի հաստատի իր գույները ձեր վրա, և պիտի հորինի ձեզ հարմար ու վայելուչ իրեն:... Սիրեցե՛ք փրկությունը, Աստծու խոստումները, գրկեցե՛ք Քրիստոսին մեզ սիրելու համար, Նրա չարչարանքներին, Նրա վերքերին... ինչքա՛ն պիտի ազնվանաք, բարձրանաք ու պիտի կատարելագործվեք» (Խորեն Քահանա Տաղլյան

«Ընտիր քարոզներ-Հավաքածո» Անթիլիաս, Լիբանան, 1955, էջ 74):

Այլ խոսքով, Հիսուս մարդու ուշադրությունը հրավիրում է մշտապես պատրաստ լինելու վրա: Ո՞վ գիտի ժամն ու տեղը Նրա վերադարձի՝ ո՛չ ոք, ո՛չ երկնքի հրեշտակները և ո՛չ էլ Մարդու Որդին: Որոշումը մնում է Հոր Աստծու մոտ: Նա գիտի, թե աշխարհի վրա սատանայի իշխանությունը երբ վերջ պիտի գտնի և ուր պիտի հաստատվի Աստծու Թագավորությունը. *«Բայց այդ օրվա ու ժամվա մասին ո՛չ ոք չգիտէ, ո՛չ երկնքի հրեշտակները և ո՛չ էլ Որդին, այլ՝ միայն Հայրը» (Մատթ. 24:36):*

Հիսուս ցույց է տալիս մեզ այդ ճշմարիտ ճանապարհը. *«Արթո՛ւն կացեք»* ասում է Նա, այսինքն մեր բարի ու արդար կյանքով և քրիստոնյային վայել գործերով պատրաստ լինենք արժանի դառնալու Երկնքի Արքայությանը: Եկե՛ք աղոթենք և խնդրենք աստվածային ուժ ու կարողություն այս նպատակին հասնելու համար: Ամեն:

ՊԱՏՐԱՍՏ ԼԻՆԵԼՈՒ ՈԳԻՆ

«Ով որ քեզնից բո բաճկոնը բոնի է վերցնում, նրան մի՛ արգելիր, որ վերցնի շապիկդ էլ»
(Ղուկ. 6:29)

Ավետարանի պատգամներից մեկն է սա, որ հաճախ դժվարության է մատնում այն անձանց, որոնք իրենց ճակատի արդար վաստակով որոշ չափով բարեկեցիկ մի կյանքի կամ գոհացուցիչ մի վիճակի են հասել: Նրանք կարող են հավասարության մասին լավ ճառեր խոսել, սակայն իրենց հետ հավասարվելու ուրիշների ձգտումները կդատապարտեն իբրև ոտնձգություններ իրենց անձնական իրավունքների դեմ: Հիսուս ասում է.

«Ով որ քեզնից բո բաճկոնը բոնի է վերցնում, նրան մի՛ արգելիր, որ վերցնի շապիկդ էլ»:

«Ինչո՞ւ պիտի տամ այն, ինչ որ դժվարությամբ եմ շահել, ինքն էլ թող աշխատի ինձ նման և իր կեանքը շահի, թող սովորեն, թե ինչքան դժվարությամբ ենք տեղ հասել, ի՞նչ պարտավորություն ունեմ շահս իր հետ կիսելու, երբ նա ո՛չ մի վաստակ չունի այդ աշխատանքում» և այլն: Այսպիսի արտահայտություններ շատ կարելի է լսել, հատկապես օգնության դիմումների միջոցին, երբ անգործ ու չքավոր մարդիկ հույսները դնելով դրամ ունեցող մարդկանց վրա, ծեծում են նրանց դռները՝ օգնություն ստանալու ակնկալիքով: Մյուսներից տարբեր լինելու ձգտումը գրեթե բոլոր մարդիկ էլ ունեն: Պարահանդեսի ընթացքին իր հագած հագուստը մյուսներից ավելի գրավիչ ու վայելուչ տեսնելու ցանկությունը, առավելապես կանանց մոտ, որոշ գաղափար է տալիս մեզ միշտ ամենալավը լինելու մարդու ձգտման մասին: Նայեցեք նույնիսկ զինվորական համազգեստ հագած մարդկանց: Թեև նրանք նույն գույնի ու ձևի զգեստներ են հագնում, բայց և այնպես յուրաքանչյուրը ցանկություն ունի մյուսներից տարբեր գեղեցկությամբ երևալու, մի տեսակ ինքնիրեն ցույց տալու ներկա

հասարակության: Պարախմբերի ելույթների ընթացքում էլ հաճախ սա պարզ երևում է: Եվ ի՞նչ է կյանքը, եթե ոչ մի տոնահանդես, ուր ամեն մարդ ցանկանում է ներկայանալ իբրև ամենաանթերի դերակատարը, ինքնիրեն դնելով ամենաարթուն ծաղրածուի տեղը:

Հիսուս Իր միտքը արտահայտում է առակի միջոցով, որի մեջ ակնարկություն ենք տեսնում ո՛չ միայն Աստծու աչքին մարդկանց հավասարութեան մասին, այլ այն, որ Նա է մեր ամբողջ ունեցվածքի, հարստության, կյանքի ու նույնիսկ իրավունքների տերը...:

Ավետարանում սա ծանոթ է *«Մշակների առակ»* անունով, ուր շեշտվում է, թե բոլոր մարդիկ ապաշխարությամբ հավասարապես կարող են երկնային թագավորության արժանի դառնալ: Հիսուս տարբերություն չի դնում հրեայի, հեթանոսի, արվի և էգի միջև, ցույց տալով, թե նրանք բոլորն էլ Աստծու զավակներն են: Աստված որ հողատերն է պատմված առակում, առավոտ շուտ տեսնում է հրապարակում կանգնած անգործ մշակների ու նրանց ուղարկում է իր արտը աշխատելու: Ժամը իննի մոտ դարձյալ դուրս գալով, տեսնում է այլ մշակների, որոնց նույնպես ուղարկում է իր արտը աշխատելու: Կեսօրվա մոտ տեսնում է ուրիշ մշակներ, նրանց էլ է ուղարկում իր արտը խոստանալով նրանց վճարել օրվա վերջավորության: Երեկոյան ժամը հինգի մոտերը նույն նպատակով մի երրորդ խումբ էլ է ուղարկում նույն տեղը: Ի վերջո, օրվա ավարտին բոլորը գալիս են իրենց վարձը ստանալու: Արտի տերը բոլորին էլ համահավասար բաժիններ է տալիս: Այն ժամանակ առավոտ շուտ և կեսօրին եկողները բողոքում են տիրոջը եղած անարդարության համար, ասելով, որ իրենք ամբողջ օրվա հոգնությունը կրեցին, կիզիչ արևի տակ աշխատեցին, մինչ երեկոյան դեմ եկողները միայն մի ժամ աշխատելով, նույն վարձը ստացան: Ինչ որ բնական և արդարացի մի պահանջ է, ամեն մեկս էլ իբրև գործավոր, կարող էինք զար-

մացած ու վրդովված նույն հարցը տալ: Տերը հետաքրքիր ձևով է պատասխանում այս բողոքողներից մեկին. *«Միթե իրավունք չունե՞մ իմ ունեցածի հետ վարվելու, ինչպես կամենում եմ: Կամ թե՝ նախանձո՞ւմ են, որ ես առատաձեռն եմ» (Մատթ. 20:15):* Մենք իբրև մարդիկ երբեմն հպարտանում ենք մեր աշխատանքի վաստակով, առանց հասկանալու, որ մեր շահն ու վաստակը, մեր ունեցվածքն ու հարստությունը Աստծուն ենք պարտական:

Հաջողությո՞ւն ես ունենում՝ Աստծուն ես պարտական: Շատ դրա՞մ ես շահում՝ դարձյալ Նրան ես պարտական աշխատած եկամուտիդ համար: Այս գիտակցությունը Աստծու նկատմամբ իբրև երախտագիտություն ունենալով, որևէ անհատ իրեն թույլ չպիտի տա անարգելու իր նմանին ու զրկելու նրան: Եթե աշխատածդ պարտական ես Աստծուն, ուրեմն պետք է, որ քեզ տրված հնարավորությունից բաժին հանես նրան, որին այդ չի տրված: Մի՛ մոռացիր, որ մեկի հաջողությունը մի ուրիշի ձախորդությունն է և փոխադարձաբար: Պողոս առաքյալը Եբրայեցիներին ուղղած իր թղթում ասում է. *«Մի՛ մոռացեք բարեգործությունը և ձեր ունեցած բարիքներին միմյանց մասնակից դարձնելը, քանզի այդպիսի պատարագներն են հաճելի Աստծուն» (Եբր. 13:16):* Հիսուս կրկնում է Օսեե մարգարեի խոսքը. *«Քանզի ողորմություն եմ ցանկանում և ո՛չ թե զոհաբերում» (Օսեե 6:6):* Ինչքա՛ն էլ հարստություն ունենաք, պետք է գիտակցեք, որ այն ստացել եք Աստծուց ե նրա հետ պիտի վարվեք իմաստությամբ: Չպիտի՞ նեղանայիք, եթե ձեր հարստությունը կորցնեիք, մի բան, որը նրա հետ ճիշտ չվարվելու պատճառով է առաջ գալիս: Նման մի մեծ սխալ գործած կլինեք, եթե այն ամբողջությամբ պահեք միայն ձեզ համար: Սա էլ նրա հետ սխալ վարվելու մի այլ ձև է: Ագահությունը նման է կավե մի գանձանակի, որը պիտի կոտրես, որպեսզի տիրանաս միջի գումարին: Որոշ հարուստների մահից հետո նրանց ունեցվածքի բաժանումը կարելի է այս պատկերին նմա-

նեցնել, երբ իրենց չվայելածը ուրիշները հաճույքով սպառում են: Ժողովուրդը մի լավ խոսք ունի. *«Չուտողի մալը (այսինքն՝ ունեցվածքը) ուտողին հալալ է»: «Եթե աշխարհիկ հարստությունը գործածելու մեջ հավատարիմ չեղաք, ճշմարիտ հարստությունը ո՞վ պիտի վստահի ձեզ»:* Հիսուսի պատգամը, թե՝ *«Ով որ քեզնից քո բաճկոնդ բռնի է վերցնում, նրան մի՛ արգելիր, որ վերցնի շապիկդ էլ»* չպետք է բառացի հասկանանք: Այլ խոսքով մեր Տերը շեշտում է պատրաստակամության ոգին, երբ դրա կարիք կա ուզո՞ւմ ես օգնել: Պատրա՞ստ ես ընդառաջելու, երբ քո օգնության կարիքը ունենան, թե՝ ինքդ քո մեջ ամփոփված, փորձում ես ներքին ալեկոծությունդ խաղաղեցնել: Հակոբոս առաքյալը կարիքի դիմաց մի միջոց լինելու ձևի մասին հստակ բացատրում է, հասկացնելով, թե ո՞րն է քրիստոնեական ձևը. *«Եթե մի եղբայր կամ քույր մերկ լինեն կամ օրվա ուտելիքի կարոտ, և ձեզնից մեկը նրանց ասի՝ «գնացեք խաղաղությամբ, տաքացեք և հագեցեք», և դուք նրանց չտաք մարմնին անհրաժեշտ բաները, ի՞նչ օգուտ է» (Հակ. 2:15)* Ահա, թե ինչպես Առաքյալը *«Քրիստոնեական»* կոչվածը սխալ է համարում և փնտրում է քրիստոնյայի մեջ օգնելու պատրաստակամության ոգին:

Այս պատմությունը հետաքրքիր է.

«Ամերիկայի սկզբնական տարիներին, երբ դեռևս ժողովրդարության մասին խոսք անգամ լինել չէր կարող, մի սևամորթ ստրուկի տանում են շուկա վաճառելու:

Խեղճ սևամորթը հուզմունքով սպասում էր, թե ո՞վ պիտի լինի իր նոր տերը:

Մի հարուստ երիտասարդ խղճալով, նրան գնելու համար մեծ գումար է վճարում և ասում ստրուկին. «Միրելիս, քեզ գնեցի մեկ նպատակով, որ այս րոպեից սկսած ազատ լինես և ո՛չ մեկից կախում չունենաս: Գնա՛ և մի նոր կյանք սկսիր: Եթե պատահի, որ ներություն ունենաս արի ինձ մոտ՝ ահա իմ հասցեն:

Սևամորթը, որն առաջին անգամ էր բարեսիրտ մի տեր

տեսնում, աչքերը լցվում են երախտագիտության արցունքներով, իսկույն ընկնում է իր բարերարի ոտքերն ու լացելով՝ ասում.

Տեր, նախընտրելի է ինձ համար քո ստրուկը լինել, քան թե քեզանից հեռու ապրել ազատ ու ապերջանիկ»:

Ահա խնդրեմ ձեզ հրաշալի մի օրինակ, որտեղ հարուստ երիտասարդը պատրաստակամության ոգի է հանդես բերում օգնելու կարիքավորին, այս դեպքում՝ ստրուկ սևամորթին: Հիսուսի շեշտը սրա մասին էր, պատրաստ լինել միշտ օգնելու, երբ դրա կարիքը զգացվի:

Աստվածային պատվիրանը մեր ունեցածը հափշտակելու նպատակ չունի, այլ նա փորձում է մարդկանց մեջ ստեղծել ու զորացնել աստվածահաճո գործերի համար պատրաստ մի հոգի ու մի բարի սիրտ: Ամեն:

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ՍՐԲԵՐԸ

«Իմ մեջ մաքուր սիրտ հաստատի՛ր, Աստվա՛ծ
և արդար հոգի նորոգիր իմ որովայնում»
(Սաղմ. 50:12)

Աստված Իր սրբության մեջ է, որ հայտնվում է մարդկանց և միայն սուրբ ու արդար կյանք կատարելով է, որ մարդ կարող է գնալ դեպի Աստված ու միանալ Նրան:

Դժվար է բացատրել *«սրբություն»* բառը, սակայն մարդու հոգին առանց սպասելու որևէ բացատրության, ճանաչում ու ապրում է սրբությունը:

Բնական է, որ կան զանազան կարծիքներ և մոտեցումներ սրբության հարցի վերաբերյալ: Ահա դրանցից մի քանիսը:

«Քչերը կարող են սրբանալ և ես նրանցից չեմ»:

«Այս մարդը չի՛ խմում, չի՛ ծխում, չի՛ հայհոյում, կատարյալ սուրբ է»:

«Ես ո՞ւր, սուրբը ո՞ւր...»

Ոմանք էլ կան, որոնք սրբության գաղափարին արհամարհանքով են նայում և բարի, սակավախոս, անվնաս մի մարդ տեսնելով, հաճախ ասում են. *«Ի՞նչ է, սո՞ւրբ եղար»:*

Երջանկահիշատակ Գարեգին Ա. Կաթողիկոսը սրբերի մասին այսպես է արտահայտվում.

«Բնականորեն, որոշ անձերի մեջ սրբության ներկայությունը, Աստծու հետ հաղորդությունը այնքան շեշտված և ճառագայթուն նկարագիր ու տարողություն կարող է ունենալ, որ Եկեղեցին դրանց հատուկ հարգանքի է արժանացնում որպես ներշնչման աղբյուր, որպես բարեխոս առ Աստված: Ահա սրանք են, որ տոնելի սրբեր են նկատվում և հատուկ օրեր ու արարողություններ են սահմանվում, շարականներ հորինվում, նրանց միջից որոշակի և ուժգնորեն արտահայտվող սրբությունը փառաբանելու ու նրան հավատացյալների կյանքում ձգտման ներ-

շնչումի վերածելու նպատակով: Պատկերավոր բացատրությամբ կարող ենք ասել, թե՝ պարզ մարդիկ, որոնք սրբության վիճակ են ապրում իրենք իրենց մեջ, նմանվում են մոմերի. եկեղեցու կողմից հոչակված և տոնված սրբերը նմանվում են փարոսների...» («Սուրբերը և մենք», Նյու Յորք, 1993, «Ի՞նչ է Սրբությունը», էջ, 51-52):

«Ովքե՞ր են Սրբերը»: Այս հարցի պատասխանը տալիս է անցյալ դարի մեր նշանավոր Պատրիարքներից՝ երջանկահիշատակ Շնորհք Արքեպս. Գալուստյանը.

«Սրբերի համար կյանքի դրական կամ ժխտական երևույթները մեծ կարևորություն չունեին, նրանց համար հիմնական մտածումը այն էր, որ իրենց կյանքում տիրապետող լինեին հավատքի գործերը, այսինքն՝ «Ինչ որ ճշմարտությամբ է, ինչ որ պարկեշտությամբ, ինչ որ՝ արդարությամբ, ինչ որ՝ սրբությամբ, ինչ որ՝ սիրով, ինչ որ՝ բարի համբավով, ինչ որ՝ առաքինությամբ, ինչ որ՝ գովությամբ» (Փիլ. 4:8):

«Նրանք հասել էին այնպիսի մի վիճակի, ուր այլևս սովորել էին գոհանալ իրենց ունեցածով և Պողոս Առաքյալի նման կարող էին ասել. «Գիտեմ զրկանքով ապրել, գիտեմ առատության մեջ լինել», այսինքն ուզում էին ասել. «Ամեն ինչում, բոլոր պայմանների տակ, սովորել եմ թե՝ կուշտ լինել, թե՛ քաղցած մնալ, թե՛ առատության մեջ լինել, թե՛ զրկանք կրել: Ամեն ինչի կարող եմ նրա՛ շնորհիվ, ով ինձ զորացրեց» (Փիլ. 4:12-13), («Հայազգի Սուրբեր», էջ 13):

Այս խոսքերով սրբերը գալիս են հաստատելու, թե՝ կյանքի պայմանները չեն ազդում առողջ հիմքով դրված հավատի վրա, որովհետև այդ հավատը հաստատված է Քրիստոսի Վեմի վրա, որը նույնն է երեկ, այսօր և նույնն է՝ հավիտյան:

«Ի՞նչ էր սրբերի տարբերությունը պարզ սովորական անհատ մարդկանցից, ինչո՞վ էին նրանք առավել նրանցից, ի՞նչ առաքինություններով ու դրական կողմերով էին նրանք առանձնանում»:

Սրբերը տարբերվում էին մարդկանցից ոչ թե պարզ, վերացական առաքինություններ ունենալու պատճառով, այլ դրանք իրական կյանքում գործի վերածելու ճանապարհով, ինչպես օրինակ՝ «*կրոնասիրությունը, քաջությունը, բարեպաշտությունը իրենց նմանների նկատմամբ ծառայելու տրամադրությունը, բայց բոլորից ավելի Աստծու ու մարդկանց սերը*»:

Սրբությունը մի ասպարեզ է, որը բաց է բոլորի առաջ, հատկապես հավատավոր քրիստոնյաների համար անխտիր:

Ուրեմն բոլորս էլ կարող ենք մեր սրբակենցաղ կեանքով, մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ պատգամներին հետևելով, դառնալ մեկ-մեկ Սրբեր, սակայն գնահատողը միայն Աստված է:

Այս բոլորը իմանալուց հետո, կարող ենք ևս մի հարց տալ, թե՝ «*Ուրեմն, Սրբերը ի՞նչ են թելադրում մեզ, ինչպիսի՞ քրիստոնեավայել կյանք պիտի ունենանք, որպեսզի արժանանանք Աստծու գնահատանքին և օրհնության*»:

Պատասխանը կրկին կարող ենք գտնել երջանկահիշատակ Շնորհք Պատրիարք Գալուստյանի մոտ.

«*Սրբերը առանց տատանվելու թելադրում են մեզ, իրենց կյանքով ու խոսքով, որ միշտ և անսայթաք Աստծու ու Արդարության կողմը կանգնենք, հակառակ ամեն բանի և ի գին ամեն զոհողության: Միշտ ձգտենք Սրբության ու քաջության:*

Միշտ պատրաստ լինենք փոքր, աշխարհիկ, գռեհիկ ու ժամանակավոր բաները զոհել, մեծագույն, հոգևոր, ազնիվ ու հավիտենական բարիքների համար: Եվս մի բան. մեզ տրված այս երկրավոր կյանքը այնպիսի ձևով գործածենք, այնպես արժևորենք, որ շահենք ու ժառանգենք ի վերջո հավիտենական երանական կյանքը, ինչպես սրբերը արեցին. «Որք զչարան պարտեցին, նեղությանցն համբերեցին, լուսեղեն եւ երկնային անթառամ պսակացն արժանի եղեն», այսինքն՝ «Չարերին պարտության մատնեցին, նեղություններին համբերեցին և արժանի եղան լուսեղեն ու անթառամ պսակներին» («Հայազգի

Սուրբեր», էջ 17):

Սրբերը ամեն բանից առաջ և ամեն ինչից առավել եղել են կռապաշտության, ուրացումի և անտարբերության հակառակորդները: «*Հաստվածներիդ չենք պաշտի և քո կանգնեցրած ոսկի արձանիդ երկրպագություն չենք անի»:* Երեք մանուկների՝ Սեդրակի, Միսակի և Աբեթնագովի այս համարձակ արտահայտությունը բոլոր դարերում եղել է Սրբերի նշանաբանը: Ինչո՞ւ, որովհետև՝ *«Մենք երկնքում մեր Աստվածը ունենք և Նրան ենք պաշտում»,*- հայտարարում էին նրանք: Հատկապես Հայազգի Սրբերը, իրենց հոգու և սրտի կապը անխզելի պահեցին կենդանի Աստծու հետ ու արժանացան հավերժական կյանքին, երկնային արքայությանը, ժողովրդի հարգանքին ու սիրույն:

Երբեմն ժխտական ու անհավատ մարդիկ կան, որոնք չեն ուզում ընդունել, թե այս անիրավ աշխարհում կարելի է լավ մարդ ու լավ հայ դաստիարակել և արհամարհանքով են մոտենում նրանց, որոնք փորձում են հնարավորության սահմաններում զբաղվել իրենց երեխաներով ու նրանց ցույց տալ Աստծու ճշմարիտ ճանապարհը: Արհամարհանքով մոտեցող մարդկանց խոսքն է. *«Ի՞նչ է այս անիրավ ու անսուրբ աշխարհում, սո՞ւրբ եք ուզում մեծացնել»:* Նրանք չեն կարողանում հասկանալ, որ Աստծու առաջ ոչ մի անկարելի բան չկա:

Այսօր էլ սրբերը խոսում են մեզ հետ իրենց կյանքով, պայքարով ու արյունով և պատգամում են մեզ. *«Նմանվեցե՛ք մեզ, հետևեցեք մեզ ու մի՛ խզեք ձեր կապը մեր Երկնավոր Հոր, մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի և միխիթարար ու զորացուցիչ Սուրբ Հոգու հետ»:*

Սրբերը անթիվ անհամար են ըստ Հայտնության գրքի հաստատման.

«Եվ դրանից հետո տեսա մի մեծ բազմություն,- որին թիվ չկար,- բոլոր հեթանոսներից և բոլոր ազգերից, բոլոր լեզուներից և բոլոր ժողովուրդներից, որոնք կանգնած էին աթոռի առաջ և Գառան առաջ՝ իրենց վրա սպիտակ զգեստներ զցած և

արմավենու ճյուղեր իրենց ձեռքերին:...

...Ո՛չ քաղց են զգալու, ո՛չ էլ ծարավելու են. և նրանց չի վնասելու ո՛չ արեգակը, ո՛չ էլ տոթը: Եվ Գառը, որ իր աթոռի մեջտեղում է, պիտի հովվի նրանց ու պիտի առաջնորդի նրանց դեպի կյանքի աղբյուրը կենդանի ջրի, քանզի Աստված նրանց աչքերից սրբեց ամեն արտասուք» (Հայտ. 7:9,16):

Մյուս կողմից Սրբերը գալիս են կյանքի բոլոր ասպարեզներից, խոնարհագույնից մինչև բարձրագույնը, կաթողիկոսներից մինչև պարզ հոգևորականը, թագավորից մինչև պետական բոլոր պաշտոնյաները: Նրանք իրենց կյանքով ու խոսքով, թելադրում են մեզ, որ միշտ ու անսայթաք կանգնենք Աստծու և Արդարության կողմը, հակառակ ամեն բանի ու ի գին ամեն զոհողության: Միշտ ձգտենք Սրբության ու քաջության և պատրաստ լինենք աշխարհիկ ու ժամանակավոր փոքր բաները զոհել, մեծագույն, ազնիվ ու հավիտենական բարիքների համար: Մի խոսքով, մեզ տրված այս երկրավոր կյանքը այնպես գործածենք և այնպես արժևորենք, որ ի վերջո շահենք ու ժառանգենք հավիտենական երկնային կյանքը, ինչպես Սրբերը արեցին:

Չմոռանանք, որ *«Սուրբ»* բառը, ոչ միայն գործածվում է Աստծու և Սուրբ Երրորդության յուրաքանչյուր դեմքի, հրեշտակների, այլև բոլոր քրիստոնյաների համար անխտիր: Սրբության ասպարեզը ո՛չ միայն բաց է ամենքի առաջ, այլ աստվածային հրահանգ կա այս մասին. *«Սուրբ եղեք, որովհետև ես սուրբ եմ»,- ասում է Աստված (Ղևտ. 11:45): «Եղե՛ք կատարյալ ինչպես ձեր Երկնավոր Հայրը կատարյալ է»,-* պատգամում է Հիսուս:

Սրբերը մեզ համար արդար, մաքուր և հավատով ապրելու սքանչելի օրինակ են: Եկե՛ք հետևենք ու նմանվենք նրանց: Ամեն:

ՀՈԳՈՒ ԱՉՔԵՐԸ

«Աչքեր ունեք և չե՞ք տեսնում,
ականջներ ունեք և չե՞ք լսում»
(Մարկ. 8:18)

Այս խոսքը ես վերցրել եմ Մարկոսի Ավետարանի 8-րդ գլխի 18-րդ համարից:

«Եվ աշակերտները մոռացան հաց վերցնել. սակայն միայն մեկ նկանակ ունեին իրենց նավակի մեջ... Հիսուս իմացավ նրանց խորհուրդը և նրանց ասաց. «Թերահավատնե՛ր, ինչո՞ւ եք ձեր սրտերում խորհում, թե հաց չունեք. դեռ չե՞ք հասկանում և չե՞ք հիշում. ապշությո՞ւնն է ձեր մտքերը պատել: Աչքեր ունեք և չե՞ք տեսնում, ականջներ ունեք և չե՞ք լսում» (Մարկ. 8:14-15, 17-18):

Մի՞թե կույր են մարդկանց աչքերը, որ չեն տեսնում, մի՞թե խուլ են նրանք, որ չեն լսում: Եթե այդպես չլիներ, նրանք երբեք չպիտի բողոքեին՝ խնդրանքներ ներկայացնելով Աստծուն, որպեսզի Նա լայն բացի Իր ողորմության դռները:

Հետաքրքիր է այս պատմությունը.

«Հուլիանոս Մորիս եպիսկոպոսն ի ծնե կույր էր: Հուլիանոս անհավատ կայսրը, որը նոր հավատի, այսինքն՝ քրիստոնության կատաղի հակառակորդ էր, ուզում էր կայսրության մեջ վերահաստատել կռապաշտությունը և հրամայում է, որ ծերունի կույրը ձերբակալվի ու պալատ բերվի:

Մորի՛ս, ի ծնե կույր ես,- ասում է կայսրը,- երբե՛ք հույս չունենաս, որ Աստված պիտի լուսավորի քո աչքերը և այս գեղեցիկ աշխարհը պիտի տեսնես:

Աստված լավ կանի որ աչքերիս լույսը չբացի,- ասում է եպիսկոպոսը համարձակ կերպով,- որովհետև այդ ձևով ինձ պիտի ազատի ձեզ նման մի անաստված ապստամբ տեսնելու մեծ ցավից»:

Երբ առաքյալները Երուսաղեմում հանդիպեցին ի ծնե կույրին, Հիսուսին հարցրեցին. *«Ռաբբի՛, մեղքը ո՞ւմն է, որ կույր է ծնվել, սրա՞նն է, թե՞ հորն ու մորը» (Հովհ. 9:2): Հիսուս պատասխանեց. «Ո՛չ դրա մեղքն է և ո՛չ էլ իր հոր ու մոր, այլ՝ որպեսզի դրա վրա Աստծու գործերը հայտնի լինեն: Եվ քանի դեռ ցերեկ է, ես պետք է կատարեմ գործերը նրա, ով ինձ ուղարկեց. կգա գիշերը, երբ ոչ ոք չի կարող գործել: Քանի դեռ աշխարհում եմ, աշխարհի լույսն եմ» (Հովհ. 9:2-6):*

Այս խոսքերից հետո Նա թքում է գետնին և թքից կավ պատրաստելով՝ քսում այն կույրի աչքերի վրա ու ասում նրան. *«Գնա՛ լվացվիր Սիլոամի ավազանի մեջ»:* Եվ կույրը լվացվելով սկսում է տեսնել: Քրիստոս այս հրաշքով միայն կույրի աչքերը չբացեց, այլ նրան տվեց նաև հավատի լույսը, որը հոգու և մտքի մեծագույն զարդարանքն է:

Մի՛ եղեք թերահավատ, քանի որ առանց հավատի մեր կյանքն աննպատակ պիտի դառնա: Հավատն է, որ մեզ անմիջականորեն և ուղղակիորեն կապում է Աստծու հետ, ուժ տալիս, զորացնում, որպեսզի շարունակենք մեր կյանքը:

Կուրությունը մեծ դժբախտություն է, քանի որ կույրը չի կարող տեսնել Աստծու ստեղծած բոլոր բարիքները: Սակայն ավելի մեծ դժբախտություն է հավատի կուրությունը, քանի որ նրանից տառապողը զրկված է աստվածային լույսից և չի կարող տարբերել չարը բարուց: 5-րդ դարի մեր թարգմանիչ վարդապետներից Եզնիկ Կողբացին ասել է. *«Լավ է կույր աչք, քան կույր մտք»*, այսինքն՝ *«Ավելի լավ է, որ մարդ ֆիզիկապես կույր լինի, քան մտքով»:*

Մեր Տերը ասում է. *«Դատաստանի համար եկա այս աշխարհը, որպեսզի, ովքեր չեն տեսնում, տեսնեն և ովքեր տեսնում են, կուրանան» (Հովհ. 9:39):*

Փարիսեցիները այս լսելով նրան հարցնում են. *«Մի՞թե մենք էլ կույր ենք» (Հովհ. 9:40):*

Հիսուս պատասխանում է. *«Եթե կույր լինեիք, դուք մեղք չէիք ունենա, բայց հիմա ասում եք, թե՝ տեսնում ենք. և ձեր մեղքը ձեր մեջ հաստատ է մնում» (Հովհ. 9:41):*

Այսպիսիների մեղքն այն է, որ հակառակ նրան, որ իրենց ֆիզիկական աչքերով տեսնում են սխալը, բայց խղճով ուրանում են: Նրանք այս վիճակին են հասել, որովհետև ապրել են՝ անտեսելով Աստծու բարիքները և միշտ մեղքի մեջ են եղել:

Ամեն օր տեսնում ու լսում ենք թե՛ հեռուստացույցով և թե՛ այլ հաղորդումներից զարմանահրաշ ու նույնիսկ անհավատալի դեպքեր, ուրախ թե տխուր, գիտակցաբար կամ անգիտակից կերպով գործված, *«կամա թե ակամա»,* ինչպես ասվում է *«մեղա»-ի* մեջ, որոնք գալիս են ապացուցելու Հիսուսի այս խոսքերը: Հարց է ծագում, թե արդյո՞ք մարդիկ դիտմամբ չեն տեսնում ու լսում Աստծու ճշմարտությունները, մաքրությունն ու արդարությունը, թե՞՝ իրապես հոգով կուրացել են:

Բնական է, որ մեր Տիրոջ այս արտահայտությունը մարմնական աչքերի ու ականջների մասին չէ, այլ հոգու կուրության մասին է, որն ավելի վատ ազդեցություն կարող է թողնել որևէ անհատ մարդու կյանքի վրա: *«Հոգի առավել է, քան զմարմին«,-* ասում է Հիսուս, այսինքն՝ հոգին ավելի կարևոր է, քան ֆիզիկական մարմինը, որը, Աստծու կամքի ու հրամանի համաձայն, ենթակա է ոչնչացման: Չենք կարող միայն ապրել պարզապես ապրելու համար, պիտի ապրենք ապրեցնելու համար: Առանց ժողովրդի մասնակցության և համագործակցության չկա պայծառ Եկեղեցի: Ուրեմն, Քրիստոսի խոսքը. թե՝ *«Աչքեր ունեք և չե՞ք տեսնում, ականջներ ունեք և չե՞ք լսում»,* ուզում է մեզ հասկացնել, որ ամենօրյա մեր աղոթքով կարողանանք տեսնել Հարուցյալ Հիսուսին և զգանք Նրա ներկայությունը մեր կյանքում: Ամեն:

ԱՍՏԾՈՒ ՇՆՈՐՀԸ

«Բայց Աստծո շնորհով եմ, ինչ որ եմ, և իմ մեջ եղած նրա շնորհները իզուր չանցան, այլ նրանցից բոլորից ավելի աշխատեցի, բայց ոչ թե ես, այլ Աստծո շնորհը, որ ինձ հետ էր»

(Ա. Կորնթ. 15.10)

Պողոս Առաքյալի Կորնթացիներին ուղղած առաջին նամակի 15-րդ գլխի 10-րդ համարից է այս խոսքը, ուր նա շեշտում է, թե իր մեջ եղած բոլոր շնորհները Աստծու կողմից են և ինքը դրանց շնորհիվ է, որ աշխատում է, քարոզում ու օգնում մարդկանց:

Մի պահ մենք մեզ եկեք հարց տանք, թե՝ *«Ո՞րն է Աստծու շնորհը և կամ որո՞նք են Նրա շնորհները»:*

Աստվածաշնչից բերենք մի քանի վկայություններ մարդուն տրված Աստծու շնորհների և գործադրության մասին.

«Իմ Աստվածը թող այնպես անի, որ շնորհ գտնեք այդ մարդու մոտ» (Ծննդոց 43:13):

«Եվ ինչի՞ց պիտի իմացվի, թե ես ու քո ժողովուրդն, իրոք, քո շնորհին ենք արժանացել: Եթե դու մեզ հետ գնաս, ես ու քո ժողովուրդը կփառավորվենք շատ ավելի, քան երկրի վրա եղած բոլոր ազգերը»: Տերն Ասաց Մովսեսին. «Այդ քո ասածն էլ կկատարեմ, որովհետև դու իմ շնորհին ես արժանացել, և քեզ ավելի եմ ճանաչում քան մնացած բոլորին» (Ելից 33:16-17):

«Զարմանում եմ, որ այսպես շուտ լքում եք նրան, ով Քրիստոսի շնորհով կանչեց ձեզ և դառնում եք դեպի ուրիշ ավետարան» (Գաղ. 1:6):

«Նախասահմանեց մեզ որդեգրության Հիսուս Քրիստոսի միջոցով, ըստ իր կամքի հաճության…: Նրանով է, որ ունենք փրկություն, նրա արյան միջոցով՝ մեղքերի թողություն, ըստ իր շնորհի մեծության չափի…» (Եփես. 1:5,7):

«Եվ բոլոր շնորհների Աստվածը,- որ ձեզ կոչեց իր հավիտենական փառքին Քրիստոս Հիսուսի միջոցով, որին մի փոքր ժամանակ չարչարակից պիտի լինեք,- թող վերականգնի, զորացնի, հաստատահիմն դարձնի ձեզ» (Ա. Պետրոս 5.10):

Երջանկահիշատակ Գարեգին Ա. Կաթողիկոսն ասում է.

«Հաստատապես, հավատի մեջ կա շնորհի բաղադրատարր: Սակայն այդ շնորհը որոշ մարդկանց առանձնաշնորհը չէ, տրված է բոլորին, բայց կան նաև մարդիկ, որոնք ընկալունակ չեն այդ շնորհին կամ ուրիշներից պակաս ընկալունակ են: Կյանքի հանգամանքներից կախված՝ այդ շնորհը դրսևորվում է մեծ կամ փոքր չափով. հավանաբար որոշ մարդիկ հնարավորություն չեն տալիս, որ այն արմատներ նետի իրենց հոգում, թողնում են, որ խամրի…:

Խոսելով շնորհի մասին՝ ես չէի ցանկանա այն համեմատել տաղանդի հետ, որը քչերի առանձնաշնորհն է: Ասացի, որ հավատը տրվում է յուրաքանչյուրին, և մեզ տրված են համընդհանուր շատ շնորհներ, որոնք մեր մարդկային էության մաս են կազմում, ինչպես տեսողությունը, լսողությունը կամ շնչառությունը… Հավատը մեր կյանքի զարդը չէ ինչպես տաղանդը, այն ավելի շուտ կտավ է, որի վրա գույները դրսևորվում են իրենք իրենց: Այն տրվում է բոլոր տղամարդկանց և կանանց, որովհետև համարվում է մարդկային բնության տարր: …Յուրաքանչյուր մարդ ի ծնե ստանում է հավատի այդ շնորհը…»:

Այս պատմությունը կոչվում է *«Հրաշագործ ճգնավորը»,* որը կարծում եմ հետաքրքիր է և կապված է Աստծուց տրված մեր շնորհների հետ.

«Հայրը, իր հետ վերցնելով անչափահաս տղային, գնում է Անտոնյան լեռները աբբա Միսիանոսի մոտ՝ նրանից օրհնություն ստանալու: Այնպես է պատահում, որ ճանապարհին տղան հիվանդանում է և մահանում, սա-

կայն նրա հայրը չի խռովվում ու հավատով մեռածին տանում է աբբայի մոտ: Մտնելով սրբի խուցը՝ հայրը ծունկի է գալիս նրա առաջ և իր մահացած որդուն այնպիսի դիրքով է դնում աբբայի ոտքերի մոտ, որ կարծես նրանից օրհնություն ու աղոթք էր խնդրում:

Այն բանից հետո, երբ աբբան ավարտում է աղոթքը և օրհնում նրանց, հայրը դուրս է գալիս՝ տղային թողնելով մեռած վիճակում աբբայի ոտքերի մոտ: Ծերը չի նկատում, որ տղան մահացած է և կարծելով, որ նա սպասում է օրհնության, ասում է նրան· «Վեր կաց, մանուկ և գնա այստեղից»: Եվ մահացածն իսկույն հարություն է առնում ու հետևում իր հորը: Այդ ժամանակ հայրը տեսնելով իր որդուն կենդանի, նրա հետ վերադառնում է աբբայի մոտ և խոնարհվելով՝ շնորհակալություն է հայտնում նրան իր որդուն կենդանացնելու համար: Աբբան իմանալով, որ հարություն է տվել մեռած տղային, խիստ տխրում է, որովհետև նա խուսափում էր հրաշագործ լինելու փառքից և արգելում է նրան որևէ մեկին պատմել այդ մասին մինչև իր՝ աբբայի մահը:

Ճգնավորը հետևում էր Տիրոջ օրինակին: Երբ Հիսուս բուժում էր կույրին, բորոտին, կաղին և մեռածներին, պատվիրում էր, որ ոչ մեկին չասեն այդ մասին»:

Պողոս Առաքյալը Կորնթացիներին գրած իր առաջին թղթի 12-րդ գլխի 6-11 համարներում խոսում է շնորհների մասին. *«Թեև կան շնորհների զանազանություններ, բայց պարգևող Հոգին նույնն է… Մեկին Հոգուց տրված է իմաստության խոսք, մյուսին՝ գիտության խոսք՝ նույն Հոգուց, մյուսին՝ հավատ՝ նույն Հոգով, մյուսին՝ բժշկումների շնորհ՝ նույն Հոգով… մյուսին՝ տեսակ-տեսակ լեզուներով խոսելու շնորհ, մյուսին՝ լեզուների թարգմանության շնորհ: Բայց այս ամենը միևնույն Հոգին է առաջացնում և բաժանում յուրաքանչյուրին՝ ինչպես որ կամենում է» (Ա. Կորնթ. 12:6-11):*

Գիտակցենք, որ մեզ տրված շնորհները Աստծուց են և, երբ մենք օգտագործելով դրանք հասնենք հաջողությունների, փորձենք չվարակվել հպարտության մահացու մեղքից, ինչպես այս պատմության հրաշագործ ճգնավորը ու ամեն բան կատարենք համեստորեն, խոնարհությամբ ո՛չ թե մեր փառքի, *«ես»-ի*, անվան, հեղինակության, այլ՝ Աստծու փառքի համար։ Ամեն։

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ

«Ճշմարտությունը երկրից բուսավ,
արդարությունը երկնքից երևաց»
(Սաղմ. 84:12)

Այս խոսքը ես վերցրել եմ Սաղմոսաց գրքի 84-րդ գլխի 12 համարից։

Երկու կարևոր մտածումներ կան Սաղմոսերգուի մտքում՝ ճշմարտություն և արդարություն։

ա. *«Ճշմարտությունը երկրից բուսավ»։ «Ի՞նչ ճըշմարտության մասին է խոսում Սաղմոսերգուն, մարդկային՞, երկրայի՞ն, թե՞՝ երկնային»։*

Ճշմարտությունը երկրից բուսավ, այն ճշմարտությունը, որով Տերը խոստացել էր, սերմնահատիկի նման թաքնված էր հողի տակ, ժամանակը հասավ, երբ այդ ճշմարտությունը սերմնահատիկի պես աճեց, այս պարագային Հիսուսի միջոցով։

Ուրեմն, ճշմարտությունը հենց Ինքը մեր Տերը՝ Հիսուս Քրիստոսն էր։ Իսկ մինչ Հիսուսի գալը երկրի վրա ճշմարտություն կա՞ր։ Իհարկե կար։ Բայց նրա հիմքը շատ թույլ էր, փոփոխական, կապված մարդկանց քմահաճույքից, երբ իրենց հարմար էր, կարող էին նույնիսկ բռնի ուժով ճշմարտությունը խեղաթյուրել հոգուտ իրենց *«ես»-ի։* Այդպիսին էր Պիղատոսը, երբ Հիսուսին հարցրեց՝ *«Թե որ այդպես է, ուրեմն դու թագավո՞ր ես»։* Հիսուս նրան պատասխանեց. *«Դու ես ասում, որ ես թագավոր եմ, բայց ես դրա համար իսկ ծնվել եմ և դրա համար իսկ եկել եմ աշխարհ, որպեսզի ճշմարտության համար վկայեմ։ Ամեն մարդ, որ ճշմարտությունից է, իմ ձայնը լսում է»։* Պիղատոսը Նրան հարցրեց. *«Ի՞նչ է ճշմարտությունը»,* սակայն չսպասեց Հիսուսի պատասխանին և իր դատավճիռը կայացրեց։ Հիսուսին հանդիպելով նա հասկացավ, բայց քաջությունը չունեցավ այն ստանալու։ Այս էր մարդկային ճշմարտությունը։ *«Ես եմ Ճանապարհը և ճշմարտությու-*

նը և Կյանքը»,- պատգամում է Հիսուս (Հովհ.14:6), քանի որ Ինքն էր հոգեկան ու իմացական այն լույսը, որի միջոցով միայն կարող ենք հասկանալ կյանքի իմաստը և տիեզերքի գաղտնիքները: Նրա ճշմարտությունը հավիտենական է և անփոփոխ, այն մի ուժ է, որն ազատագրում է մարդուն իր մեղքերից ու մոլություններից: Նա հիմնովին փոխում է մարդու մտածելակերպը; *«Նա կամենում է, որ բոլոր մարդիկ փրկվեն և հասնեն ճշմարտության գիտությանը» (Ա. Տիմ.2:4),*- ասում է Պողոս Առաքյալը:

Ճշմարտությունը գտնելը բավական չէ, կարևորը այն պահելն է:

բ. *«Արդարությունը երկնքից երևաց»:* Այո՛, պետք է ասենք, որ Աստծու արդարությունն է, որ երկնքից երևաց, այսինքն, միայն Աստծու կողմից տրված արդարությունն է ճշմարիտ արդարությունը, մարդկային արդարությունը հիմք չունի և փոփոխական է: Աստծու արդարությունը ուրիշ բան չի, եթե ոչ Նրա պատրաստած փրկության ծրագիրը, որը մարդկանց արդարացնելն էր, այդ էլ երկնքից պիտի երևար: Որով Աստծու նախախնամությամբ և Նրա կողմից տրված արդարությունը իր լրումը պիտի գտներ Հիսուս Քրիստոսի միջոցով:

«Երանի նրանց, որ քաղցն ու ծարավն ունեն արդարության, որովհետև նրանք պիտի հագենան» (Մատթ. 5:6),- ասում է Հիսուս:

Մի կտոր հացն ու մի բաժակ ջուրը որոշ չափով կկշտացնեն մարդու ստամոքսը, բայց ոչ հոգին: Հոգին կշտացնելու համար անհրաժեշտ է արդարությունը: Աստված առատաձեռն է, միայն պետք է խնդրել Նրանից:

Ըստ մեր Տիրոջ արդարությունը երկնքի բանալին է: Նա ասում է. *«Եթե ձեր արդարությունը ավելի չլինի, քան օրենսգետներինը և փարիսեցիները, երկնքի արքայությունը չեք մտնի» (Մատթ. 5:20):* Երկնքի արքայությունը հոգու վերջնական կայանն ու վիճակն է, ուր կյանքը հավիտենական երջանկություն և երանություն է:

Այս պատմությունը շատ ուսանելի է.

«Երկինք տանող ճանապարհը.

Տրոլեյբուսն ընթանում էր իր սովորական երթուղով: Մարդիկ բարձրանում, իջնում էին: Երբ արդեն վերջին կանգառներին էին հասնում՝ վագոնում երկու կին էին մնացել ու աղքատիկ հագնված մի փոքրիկ տղա՝ խոշոր ու շատ թախծոտ աչքերով: Կանանցից մեկը նախավերջին կանգառում իջավ: Տոմսավաճառը ձայնեց նրան՝ կարծելով, թե տղան նրա հետ էր.

Տիկին, Դուք մոռացա՞ք ձեր երեխային:

Ո՞ւմ, սրա՞ն: Այսպիսի անխնամ երեխան չի կարող իմ որդին լինել,- արհամարհանքով պատասխանեց նա:

Դու ո՞ւմն ես, փոքրիկ: Կորե՞լ ես,- հոգատարությամբ հարցրեց տոմսավաճառը:

Ե՞ս: Ես ոչ ոքինը չեմ: Մենակ եմ երթևեկում:

Երեխաները չեն կարող ոչ ոքինը չլինել: Որտե՞ղ է մայրիկդ: Մոլորվե՞լ ես:

Մայրիկս Երկինք է գնացել: Ես էլ եմ ուզում այնտեղ գնալ: Մորաքույր, չգիտե՞ք, թե որ տրոլեյբուսն է Երկինք գնում:

Այդպիսի երթուղի չկա, փոքրիկս: Եվ այնտեղ հասնելն էլ հեշտ չէ:

Բայց ես այնքա՜ն եմ ուզում մայրիկիս տեսնել… Մի՞թե Երկինք տանող ոչ մի երթուղի չկա:

Մյուս կինը, որ ավելի երիտասարդ էր, մոտեցավ տղային, գրկեց ու քնքշորեն կրծքին սեղմեց:

Անունդ ի՞նչ է, տղաս:

Անունս Միտյա է, բայց ինձ այժմ 57 են անվանում: Մանկատանն եմ ապրում: Այնտեղ շատ երեխաներ կան և նրանցից ոչ ոք մայրիկ չունի: Դաստիարակչուհին չի կարողանում բոլորին հիշել և այդ պատճառով էլ համարներով է կոչում:

Դժվա՞ր է քեզ համար, փոքրիկ:

Ինձ ոչ ոք չի սիրում: Մայրիկս միշտ համբուրում էր ինձ, քնելուց առաջ հեքիաթ էր կարդում, օրորոցային երգում: Նաև աղոթում էինք միասին: Այնպես եմ ուզում մայրիկիս տեսնել: Նա գնաց ու այլևս չվերադարձավ: Մորաքույր, իսկ դու Երկնքում եղե՞լ ես:

Դեռ ոչ, անուշիկս: Բայց գիտեմ, թե ինչպես կարելի է այնտեղ գնալ: Միայնակ ճանապարհը չես գտնի: Ուզո՞ւմ ես քեզ իմ տուն տանեմ: Մենք միասին կապրենք ու Քրիստոսին կսպասենք: Նա կարող է մեզ Երկինք տանել, որտեղ այժմ մայրիկդ է ապրում:

Տղայի աչքերը հույսով փայլեցին: Նա սեղմվեց բարի կնոջն, ինչպես ժամանակին իր մայրիկին, իսկ նա քնքշությամբ շոյում էր նրա գլուխն ու մեղմորեն ժպտում:

Վերջին կանգառում իջան: Տոմսավաճառն ու վարորդը երկար նայում էին նրանց ետևից: Այնուհետև նրանցից մեկն ասաց.

Մեր երթուղու վրա «Երկինք» կանգառը նշված չէ: Բայց ինձ թվում է, որ այն կա այս գծում»:

Աշխարհն ավելի քան երբևէ ունի Քրիստոսի, Նրա փրկության և սիրո կարիքը: Շատ մարդիկ դատարկություն են նկատում իրենց շուրջը և ներսում: Մյուսներն ապրում են անհանգստության և անապահովության մեջ՝ անհուսալիության ու հակամարտությունների պատճառով: Մեզ բոլորիս հարկավոր են բավարար պատասխաններ՝ մեր գոյաբանական հարցերին: Քրիստոսի մեջ և միայն Նրա մեջ է հնարավոր գտնել իրական խաղաղություն ու մարդկային յուրաքանչյուր ձգտման իրականացում: Հիսուս ճանաչում է մարդու սիրտը, ինչպես ոչ ոք: Հետևաբար կարող է բուժել այն, տալով նրան կյանք ու մխիթարություն:

Նա Իր գալուստով և Իր վարդապետությամբ շեշտել էր արդարության կարևորությունը. *«Նախ խնդրեցե՛ք Աստծու արքայությունը և նրա արդարությունը, և այդ բոլորը Աստված ձեզ ավելիով կտա» (Մատթ. 6:33):*

Նա իբրև Արդարության Արեգակ և Ճշմարտության Լույս, իջավ երկնքից ու մարդկանց ցույց տվեց դրանց ճանապարհը՝ Իր օրինակով։

Ուրեմն, եկեք չմերժենք Հիսուսին և մեր բարիքի ու հաջողությանց համար հետևենք Նրա արդարությանն ու ճշմարտությանը և Սաղմոսերգուի հետ աղոթենք ու խնդրենք. *«Առաքի՛ր Տե՛ր, քո լույսն ու ճշմարտությունը, որ ինձ առաջնորդեն և հասցնեն քո սուրբ լեռն ու օթևանը։ Ես կմոտենամ Աստծու սեղանին…» (Սաղմ. 42:3-4)։* Ամեն։

ՏԻՐՈՋ ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆԸ

«Յո՛ւյց տուր մեզ քո ողորմությունը, Տե՛ր,
և քո փրկությունը շնորհի՛ր մեզ»
(Սաղմ. 84:8)

Սաղմոսաց գրքի 84-րդ գլխի համարից եմ վերցրել այս խոսքը։

Կարդալով այս խոսքը կարող ենք այն երկու մասի բաժանել.

ա. *«Ինչպե՞ս կարող է Աստված մեզ ցույց տալ Իր ողորմությունը, ի՞նչ ճանապարհով և ո՞ւմ միջոցով»։*

բ. *«Եվ Քո փրկությունը շնորհիր մեզ»։*

Աստված միշտ էլ ողորմած է եղել մարդկանց նկատմամբ։

Սբ. Հովհան Ոսկեբերան Հայրապետն ասում է. *«Մի՞թե Նա, որ քեզ արժանացնում է շնորհների, չի՞ կարող նույնը անել և՛ կարիքավորների համար և՛ բավարարել նրանց պակասությունները։ Բայց նա թողնում է նրանց աղքատության մեջ այն բանի համար, որպեսզի նրանք արժանանան մեծ պարգևների՝ համբերությամբ այդ բոլորը կրելու համար և դու էլ ողորմություն տալով, ձեռք բերես անվեհերություն»։*

Պետք է զգուշանալ, որ ողորմությունը սխալ ճանապարհով չտրվի։ Երբ դու ողորմություն ես տալիս աղքատին, բայց մշակին զրկում ես իր վարձից, ճիշտ չես վճարում գնած ապրանքիդ արժեքը, լրիվ չես հատուցում պարտատիրոջ պարտքը. երբ դու, մեկին օգնելով, մյուսին վնասում ես, երբ մեկին տալիս ես, մյուսից խլում, մի ձեռքով կառուցածդ մյուսով քանդում ես. *«Չե՞ս իմանում,- ասում է երանելի Օգոստինոսը,- որ քո այդպիսի անհամեմատաշխ վարմունքի վրա ոմանք խնդում են, ոմանք՝ ողբում։ Մի երկուսը գոհանում են, բայց մեծ մասը հայհոյում և Աստված արդյոք ո՞ւմ ավելի պետք է լսի…»։*

Սակայն, որպեսզի քո տված ողորմությունը պտուղներ տա, պետք է այսպես վարվես ու դատավոր չլինես.

1. Չպետք է քննես, թե այսինչ մուրացկանը ճշմարի՞տ աղքատ է, թե՞՝ սուտ, որովհետև թեպետ մեկը, աղքատ ձևանալով, իրավունք չունի ողորմություն ստանալու, բայց դու չպետք է զրկես քեզ ողորմածության պտուղներից, երբ այդպիսի մեկին ողորմություն ես տալիս, ձեռքդ է սխալվում, ոչ թե սիրտդ: Քրիստոս քո սրտի մեջ լավ է տեսնում, ինչ որ տվիր նրան…:

2. Տված ողորմությունդ, արած բարերարությունդ պետք է լինի ի փառս Աստծու և ո՛չ թե ի փառս մարդկանց…:

բ. *«Եվ Քո փրկությունը շնորհիր մեզ»:* Հարց է առաջանում, թե՝ *«Աստված ինչպե՞ս պիտի փրկի ու Իր փրկության շնորհը պարգևի մեզ»* և կամ *«Միայն ողորմություն տալով կարո՞ղ ենք Տիրոջ փրկությանը արժանանալ»:*

«Ողորմությունը փետրավոր և ոսկեթև է. աղքատներին բաժանելիս՝ ոսկեղեն թևերով երկինք է սլանում»,- ասում է Սբ. Հովհան Ոսկեբերան Հայրապետը և շարունակում է. *«Փառավորիր Տիրոջը այն բանի համար, որ Նա քո փրկության համար թույլ է տվել այդ մարդուն ապրել աղքատության մեջ, որպեսզի դու դրանով կարողանաս գտնել քեզ համար միջոց, թե՛ մեղքերդ սրբելու և թե՛ բարի կերպով օգտագործելու Տիրոջից քեզ վստահված բարիքները և վաստակել այն գովքը, որ վեր է ամեն խոսքերից և մտքից…»:* Պողոս Պատրիարք Ադրիանուպոլսեցին շարունակում է. *«…Ողորմությունը մեղքերը քավում ու Աստծու ցասումը մեղմացնում է, սակայն պահանջում է ունենալ կատարյալ զղջում ու խոստովանություն, ինչպես նաև աղոթք ու պահեցողություն: Որովհետև Աստված ոչ միայն ողորմած է, այլև արդար…» («Խրատի Թանգարան»)*

Այս պատմությունը ողորմության և փրկության արժանանալու լավագույն օրինակն է.

«Ալեքսանդրիայում Պատրիարքն էր Հովհաննեսը, որին չքավորների հանդեպ ունեցած իր սիրո համար Ողորմած էին անվանում: Ամեն բան տալով, որպեսզի թեթևացնի չքավորների վիճակը, ինքը մնում էր ծայր աստիճան աղքատության մեջ: Հասարակ հագուստը, փոքր ննջարանը՝ մաշված ծածկոցով, որը գործված էր կոպիտ թելից, կազմում էին նրա ողջ ունեցվածքը: Անվանի քաղաքացիներից մեկը Ալեքսանդրիայից նրան մի ծածկոց է նվիրում, որն արժեր 36 արծաթ և նրա հանդեպ ունեցած սիրուց խնդրում է, որ այն անպայման օգտագործի իր կարիքների համար: Սուրբը այդ գիշեր օգտագործում է նոր ծածկոցը, բայց միտքը 36 արծաթի կողմն էր, որը ծախսվել էր դրա վրա, երբ քանի՞ մարդ կարելի էր կերակրել այդ գումարով: Այս միտքն ամբողջ գիշեր նրան հանգիստ չէր տալիս: Վաղ առավոտյան, երբ լույսը բացվում է, նա իսկույն մեկին ուղարկում է, որ վաճառեն ծածկոցը: Վերցնելով գումարը իր սովորության համեմատ այն բաժանում է աղքատներին: Քաղաքացին, տեսնելով իր ծածկոցը շուկայում, նորից է գնում այն ու նվիրում սրբին՝ նույն խնդրանքով: Բայց հոգատար հովիվն այս անգամ էլ չի ուզում փորձել այն և մինչև երեկո վաճառում է ծածկոցը, գումարը նորից բաժանելով աղքատներին, որպեսզի գիշերը հանգիստ քնի: Համառ քաղաքացին երրորդ անգամ է բերում նույն ծածկոցը: Սբ. Հովհաննեսը ասում է. «Ես միշտ կվաճառեմ այն ապրանքը, որն ինձ պետք չի, տեսնենք թե մեզանից ո՞ր մեկն առաջինը կդադարեցնի անել իրենը» (Հոգեշահ գրքերից):

Այսպես էին վարվում մեր պատմության ընթացքին թե՛ որոշ թագավորներ և թե՛ Հայրապետներ, ինչպես օրինակ՝ Աշոտ 3-րդ թագավորը, որը Ողորմած անունն էր վաստակել, Սբ. Ներսես Շնորհալի Հայրապետը, մեր ազգի

ցավերի ու վշտի Կաթողիկոս Խրիմյան Հայրիկը, և շատ ու շատ այլ անձինք:

Փորձենք ողորմած լինել, այն ո՛չ թե պարտականություն համարենք, այլ մեր սրտից բխած սիրո արտահայտություն մեր նմանի նկատմամբ, որն այսօր կարիքավոր է, աղքատ է, սոված է, մերկ է և ուրախ չէ: Ո՞վ գիտի այդ մուրացկանը ի՞նչ անցյալ է ունեցել, ինչպիսի՞ մարդ է եղել և ո՞ւր է հասել: Հիշենք, որ մեզանից ամեն մեկն էլ կարող է կյանքի շրջադարձային բերումով հայտնվել այդ մուրացկանի ու կարիքավորի վիճակին:

Սուրբ Հովհան Մանդակունի Հայրապետի խրատն այս է. *«Արդ՝ չսպասենք վերջին օրվան, չլինենք ագահ, աղքատներին կարոտ չթողնենք, Քրիստոսին չտրտմեցնենք, այլ՝ որբերին կերակրենք, այրիներին խնամենք, պանդուխտներին հավաքենք, սոված՝ներին կերակրենք և Քրիստոսին մխիթարենք: Երկրի վրա առատատուր մխիթարություն սերմանենք և երկնքի մեջ ողորմություն հընձենք, երկնային խորանները բարձրանանք ու մեծապայծառ խնդությամբ անսպառ ուրախությունը վայելենք մեր Տիրոջ՝ Հիսուսի հետ»:* Ամեն:

ԱՍՏԾՈՒ ԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆԸ

«Ահա՛ վասիկ մենք թողեցինք ամեն բան և եկանք քո հետևից, արդ, մենք ի՞նչ կունենանք»
(Մատթ. 19:27)

Մատթէոսի Ավետարանի 19-րդ գլխի 16-22 համարներում մի հարուստ երիտասարդի հարցին, թե՝ *«Բարի Վարդապետ, ի՞նչ բարիք գործեմ, որ հավիտենական կյանքն ունենամ» (Մատթ.19:16),* Հիսուս նախ նրան հորդորում է պահել տասնաբանյա պատվիրանները, իսկ երբ տեղեկանում է, որ նա մանկությունից արդեն պահել է, ասում է. *«Եթե կամենում ես կատարյալ լինել, գնա վաճառիր քո ունեցվածքը ու տուր աղքատներին, և երկնքում գանձեր կունենաս, և դու արի իմ հետևից» (Մատթ.19:21):* Ավետարանը ասում է, թե երիտասարդը տխուր հեռացավ, քանի որ շատ հարստություն ուներ:

Հիսուս խրատելով Իր աշակերտներին ասում է. *«Ավելի հեշտ է պարանը ասեղի ծակով մտնի, քան թե հարուստը՝ Աստծու արքայությունը»:* «*Իսկ ո՞վ կկարողանա փրկվել»* նրանց զարմացական հարցին, Նա պատասխանում է. *«Մարդկանց համար այդ անկարելի է, բայց Աստծու համար ամեն ինչ կարելի է» (Մատթ.19:26):* Պետրոս Առաքյալը ի պատասխան Հիսուսի այս խոսքերի հետաքրքիր մի հարց է տալիս. *«Ահա՛ վասիկ մենք թողեցինք ամեն բան և եկանք քո հետևից. արդ, մենք ի՞նչ կունենանք»:*

Այն ժամանակ Հիսուսի աշակերտներին հետաքրքրում էր այս հարցը, որն այժմ անշուշտ, վստահ եմ հետաքրքրում է նաև մեզ:

Կան հարցեր, որոնք մարդկանց հետաքրքրում են ներկայի, միևնույն ժամանակ՝ ապագայի համար: Համոզված եմ, որ այս պահին այս հարցը որևէ հավատացյալի կարող է հետաքրքրել հետևյալ տեսանկյունից. *«Ահա այժմ*

մենք եկել ենք Եկեղեցի, թողել մեր գործերը, հոգսերն ու մեր բոլոր հետաքրքրությունները, հաճույքներն ու վայելքները, արդ, մենք ի՞նչ կունենանք ու ի՞նչ կ'ստանանք»: Հետաքրքիր հարց է: Այս հարցին կարող ենք պատասխանել մի այլ հարցադրումով.

Գիտե՞ք արդյոք, թե ինչպես է դարձի եկել քրիստոնյա սրբերից մեկը: Նա տեսել է խաչյալ Քրիստոսի պատկերը, որի վրա գրված էր. *«Ահա թե ես ինչ եմ արել քեզ համար, իսկ դու ի՞նչ ես անում ինձ համար»:* Մենք Աստծուն ուղղված բազում հարցեր, խնդրանքներ, Նրանից ակնկալիքներ ունենք, բայց ամեն անգամ, երբ տեսնում ենք խաչված Քրիստոսի պատկերը, Նրա թվացյալ լռության միջից Աստված Ինքն է տխուր թախիծով մեզ հարցնում. *«Ահա թե ես ինչ եմ արել ձեզ համար, տանջվել, չարչարվել ու ապա խաչվել եմ ձեր մեղքերի, ձեր փրկության ու ձեր կյանքի երջանկության և խաղաղության համար, իսկ դուք ի՞նչ եք անում ինձ համար»:*

Իրոք, ի՞նչ ենք անում մենք: Երբեմն գալիս ենք Եկեղեցի, որին շատ անգամներ մատների արանքով ենք նայում և դժգոհում ենք, երբ մի փոքր երկար ենք մնում ու կանգնում Սուրբ Պատարագի արարողությանը, մեր մըտքում ասում ենք, թե ե՞րբ պիտի վերջանա, որ վերադառնանք մեր տները և մեր հոգսերին; Երբեմն մեզ թվում է, թե կանգնելուց մեր մեջքերը ցավում են, ոտքերը հոգնում ու քահանայի երկար քարոզից՝ մեր մտքերը սկսում են ցրվել: Բայց ի՞նչ եք կարծում, մի՞թե թվացյալ երկար արարողությունն է այս բոլորի պատճառը: Իհարկե ոչ: Վերցնենք մի քանի օրինակներ. եթե Հայրենի երգիչ-երգչուհիները, համերգ տան որևէ մի թատրոնում, ուր հազարից ավելի մարդիկ կարող են տեղավորվել, ի գնահատանք մեր մշակութասեր ժողովրդի, դրանք լեփ լեցուն են ու նրանք մի քամի ժամ առանց հոգնելու լսում են նրանց կամ վերցնենք մեր երիտասարդ-երիտասարդուհիներից շատերին, որոնք ամբողջ գիշեր անցկացնում են զվարճանքի վայրերում

անընդհատ շարժման մեջ և… չեն հոգնում: Ուրեմն, եզրակացությունն այն է, թե Եկեղեցում մեր դժգոհության ու ձանձրույթի պատճառը ոչ թե երկար կանգնելուց մեր ցավեցնող մեջքն է կամ հոգնած ոտքերը և կամ գրաբարյան անհասկանալի լեզուն, այլ՝ հավատի թուլությունը;

Մեր սրտերը կորցրել են իրենց ջերմությունը, սիրո կամ հույզի ո՛չ մի թրթիռ, միայն հոգսեր, վշտեր, մտահոգություններ, ավելի շատ տխրություն, քան՝ ուրախություն, թախիծ, քան՝ երջանկություն: Լինում են պահեր, երբ մեր սիրտը դառնում է տխրության բաժակ և այդ ըն--պեներին, ինքներս էլ չգիտենք, թե ինչո՞ւ, մեր աչքերից արցունքներ են հոսում ու մեր սիրտը կարծես ահա ուր որ է դուրս պիտի թռչի մեր կրծքավանդակից և բացականչի. *«Ազատեցե՛ք ինձ, ազատեցե՛ք ինձ հոգսերի և վշտերի այս ճնշող բեռից, ի՞նչ եք խեղդում ինձ, ինչո՞ւ եք ինքներդ փորձում սպանել ձեր սիրտը»:* Այս աշխարհում հանգստություն և ուրախություն չկա, դրանք կարող ենք գտնել միմիայն Աստծու մոտ:

Սակայն ո՞ւմ ենք ասում սա: Չէ՞ որ դուք ինքներդ էլ ձեր կյանքի փորձով համոզվել եք, որ այդպես է: Ահա երեկ վշտերն էին կրծոտում մեր սրտերը, այսօր մտահոգություններն են տանջահար անում, իսկ վաղը ծանրաբեռնված ենք լինելու ապագայի հոգսերով: Բայց խաչված Քրիստոսը տարածել է Իր ձեռքերը և դրանք այսպես տարածված էին ո՛չ միայն խաչի վրա, երբ նա մեռած էր, այլև հիմա՝ Նրա Հարություն առնելուց հետո էլ: Հիսուս կարոտա՛ծ հոր պես, արցունքի՛ հասնող սիրով, Իր ձեռքերը տարածել է՝ մեզ Իր գիրկն առնելու համար:

Տեսե՞լ եք, թե ինչպես է հայրը երեխայի հետ խաղալիս բացում ձեռքերը. երեխան վազում, ընկնում է հոր գիրկը, փարվում նրա պարանոցին: Իսկ դուք ի՞նչ եք կանգնել, ի՞նչ եք սառել ու մնացել, չէ՞ որ Աստված Իր ձեռքերը բացել է մեզ՝ գրկելու համար:

Երբ մեր գլուխը ցավում է, փորձում ենք որևէ դեղ խմել, երբ ավելի լուրջ ցավեր ենք ունենում, շտապում ենք բժշկի մոտ, բայց մի՞թե սրանցից ավելի լրջորեն չպե՞տք է մտածենք մեր սրտի ու հոգու խաղաղության մասին: Իսկ մեր հոգին հիվանդ է և ինքներս չենք գիտակցում դա: Մենք մեզ արդար ենք համարում, մինչդեռ մեղքերի մեջ կորած ենք: *«Ի՞նչ եմ արել, ո՛չ մարդ եմ սպանել, ո՛չ էլ շնություն գործել»,* հաճախ արդարանում են շատերը: Լավ է, որ չես սպանում, բայց ավելի լավ է, երբ մտքով չես սպանում:

Լավ է, որ սիրում ես եղբորդ, ավելի լավ է, երբ հարգում ես հարևանիդ, բայց սրանից է՛լ ավելի լավ է, երբ սիրում ես… թշնամուդ: *«Սիրեցե՛ք ձեր թշնամիներին, ձեզ ատողներին բարություն արե՛ք, օրհնեցե՛ք ձեզ անիծողներին, ձեզ նեղողների համար աղոթեցե՛ք» (Ղուկ. 6:27-28):* Սրանք իմ խոսքերը չեն, այլ մեր Տիրոջ: Ինչքան մարդ սրտով ու հոգով պատրաստ մեկը պիտի լինի, որ կատարի Հիսուսի այս հրաշալի պատվիրանը: Ո՛վ կարող է մեզ սրտի և հոգու խաղաղություն տալ, եթե ո՛չ՝ միայն Աստված: Բայց մենք Աստծուն գցել ենք ամենավերջին տեղը և Նրանից վերև բազմեցրել մեր սեփական հոգսերն ու ցանկությունները, այսպես մտածելով, թե՝ *«Աստված չի փախչի, թող սպասի, մի օր կաղոթենք Իրեն կամ ժամանակը գա, կխնդրենք Իրենից ինչ որ մեզ պետք է»* և այլն:

Մի պահ եկեք սրանից հետո փոխենք իրերի հերթականությունը, մեզ համար մեր սրտերում առաջին տեղում բազմեցնենք Աստծուն և Նրան հանձնենք մեր բոլոր հոգսերն ու մտահոգությունները՝ հավատալով, որ Աստված ըստ Իր խոսքի օգնելու է մեզ ամեն ինչում, և յուրաքանչյուր խնդրի համար ի՛ր ժամանակին ելք է ցույց տալու ու մեր բոլոր գործերն անենք առաջին հերթին ո՛չ թե մարդկանց, այլ Աստծու փառքի համար: Ահա այս է քայլը դեպի Աստված և երեխաների վազքը դեպի իրենց մխիթարող, սիրող ու գուրգուրող, իր ձեռքերը լայն բացած Հոր գիրկը: Ամեն:

ԴՈՒ ԵՍ ՔՐԻՍՏՈՍԸ ԿԵՆԴԱՆԻ ԱՍՏԾՈՒ ՈՐԴԻՆ

Յուրաքանչյուր հայ քրիստոնյա, իր պապերի հավատի ու դավանության մեջ հաստատուն մնալու, երջանիկ ու բախտավոր լինելու ու հաջողության հասնելու համար, համոզված պետք է լինի նրա ճշմարտության:

Մի օր, երբ Հիսուս Իր աշակերտների հետ գտնվում էր Փիլիպպյան Կեսարիայի կողմերում, նրանց փորձելու համար հարցնում է, թե՝ *«Մարդիկ իմ մասին ի՞նչ են ասում, ո՞վ է մարդու Որդին» (Մատթ. 16:13):* Աշակերտները շփոթվում են իրենց Վարդապետի այս հարցից: Նրանց մտքում դեռևս հստակ չէր այս հասկացողությունը, թե մարդիկ ինչքանո՞վ կարող էին գիտակցել Քրիստոսի ինքնության, Նրան չշփոթելով Հովհաննես Մկրտչի և Եղիա կամ Երեմիա մարգարեների հետ: Հիսուս նաև ուզում էր հասկանալ, թե աշակերտները իրենք ի՞նչ են մտածում Իր ինքնության մասին և նրանց միտքը ստուգելու համար շարունակում է Իր հարցը՝ *«Իսկ դուք իմ մասին ի՞նչ եք ասում, ո՞վ եմ ես» (Մատթ. 16:13):*

Ի զարմանս շատերի, Պետրոս Առաքյալի կողմից Նա ստանում է համոզիչ մի պատասխան, որը գալիս էր անշուշտ Աստծու կողմից նրա ներքին համոզման ներշնչումից. *«Դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստծու Որդին» (Մատթ. 16:16):* Հիսուս լսելով այս պատասխանը, բացականչում է. *«Երանի՜ է քեզ, Սիմո՛ն, Հովնանի որդի, որովհետև մարմինը և արյունը չէ, որ հայտնեց քեզ, այլ՝ իմ Հայրը, որ երկնքում է» (Մատթ. 16:17):*

Մեր Տիրոջ նույն հարցը այսօր ուղղված է մեզ բոլորիս, թե ի՞նչ է մեր կարծիքը Նրա մասին, ո՞վ է Նա: Ինչպես տեսաք, Նրա աշակերտներից Պետրոսը, որը բոլորից համարձակն էր, հասկացել էր իր Վարդապետի ինքնությունը, որը նրան հայտնվել էր երկնքից: Առանց այդ հայտնության, մարդկային մտածելակերպով հնարավոր չէր հասկանալ մեծ Վարդապետի ով լինելը: Նույն մտածու-

մով էլ, այսօր մարդկությունը չի ուզում ճանաչել Փրկչի ինքնությունը ու կասկածանքով է մոտենում մեկնաբանելու, թե ո՞վ է Նա:

«Եթե մեկը կամենում է հետևել ինձ, թող ուրանա իր անձը, վերցնի իր խաչը և գա իմ հետևից. որովհետև, ով կամենա իր անձը փրկել, այն կկորցնի, և ով ինձ համար իր անձը կորցնի, կգտնի այն» (Մատթ. 16:24-25):

Ինչպես որ Պետրոս Առաքյալը հասկացավ ու հաստատեց իր մեծ Վարդապետի ով լինելը, այնպես էլ մենք բոլորս, պարտավոր ենք ճանաչել այս իրականությունը, գիտակցական հավատով ի լուր աշխարհին հայտարարելով, թե Նա է ճշմարիտ Աստծու Որդին, որը մեր մեղքերի համար երկնային փառքն ու երանելի կյանքը փոխակերպեց խոնարհության, ընտրեց աշխարհ իջնելու և մարդ լինելու մեծ պարտականությունը՝ Իր անձը զոհաբերելով:

Իբրև մարդ, եթե մոտենանք այս իրողությանը, մեր մտածելակերպով դժվար պիտի լինի թափանցել, հասկանալ և ըմբռնել մեր Փրկչի զոհողության դրդապատճառն ու շարժառիթը: Սակայն հոգեպես, երբ գիտակցում ենք, որ մեղավոր ենք. այն ժամանակ է, որ կարող ենք արժևորել ու չափել Նրա զոհողությունը և մեր ներսում հրավիրել Հիսուսի ներկայությունը, այնտեղից դուրս հանելով կասկածամտություններն ու սխալ մտածումները:

Ապրում ենք այնպիսի ժամանակներում, ուր թերահավատությունն ու սխալ դատողությունները, լինեն դրանք հոգևոր թե աշխարհիկ, ամբողջությամբ ներգրավել են մարդկային ներաշխարհը, որոնք ավերներ են գործում մեր կյանքում և իրենցից հետո թողնում են դըժբախտացնող հետևանքներ: Հայր ու որդի, մայր ու աղջիկ, հարս ու սկեսուր և այլ հարազատներ, բարե-կամներ ու ընկերներ դժբախտաբար գտնվում են իրար նկատմամբ վատ տրամադրության և սխալ հասկացողության մի հոգեվիճակում, որի պատճառով էլ ծայր են առնում զանազան

տեսակի թշնամական տրամադրու-թյուններ, նախանձ և ատելություն:

Ավետարանում, կարդում ենք աշխարհի վախճանի մասին, թե ինչեր պիտի պատահեն, երբ մարդկային կյանքը իր վերջակետին հասնի. *«Ինչ օգուտ կունենա մարդ, եթե այս ամբողջ աշխարհը շահի, բայց իր անձը կործանի: Կամ՝ մարդ իր անձի փոխարեն՝ ի՞նչ փրկանք պիտի տա. քանի որ մարդու Որդին գալու է իր Հոր փառքով՝ իր հրեշտակների հետ միասին, և այն ժամանակ յուրաքանչյուրին կհատուցի ըստ իր գործերի» (Մատթ. 16:26-28):*

Ահա Հիսուսի զգուշացումը մեզ բոլորիս երկու հազար տարիներ առաջ: Այսօր, այս բոլոր իրադարձությունները՝ պատերազմները, դժբախտությունները, երկրաշարժերը, զանազան հիվանդությունները, որոնք պատահում են, արդեն իսկ իմաստավորում են այս խոսքերը և դրանց ճշմարտացիության լավագույն ապացույցն են: Երանի թե մարդկությունը սթափվի այս սխալ հոգեբանության ու հասկացողության մեջ լինելուց և ընդունի Հիսուս Քրիստոսի հոգու խաղաղությունն ու երջանկությունը: Ամեն:

ԾՆՈՂԻՆ ՍԻՐԵԼԸ ՄԵԾ ՊԱՏԻՎ Է ԶԱՎԱԿԻ ՀԱՄԱՐ

«Պատուեա զհայր քո եւ զմայր քո»
«Պատվիր քո հորն ու քո մորը»
(Ելք, 20:12)

Ի՞նչ է իր մեջ բովանդակում այս պատվիրանը և ի՞նչ կարևոր մի պատգամ կարող ենք քաղել սրանից։

Աստծու կողմից հատուկ մի պատվեր չկա ուղղված ծնողներին, որպեսզի սիրեն իրենց զավակներին, պարզ է, որ ամեն ծնող էլ սիրում է իր զավակին և փոխադարձաբար, զավակներն էլ պետք է սիրեն իրենց ծնողներին, բայց Աստված լավ իմանալով որդիների անհնազանդության և անհավատարմության աստիճանը, այս պատվիրանն է տվել նրանց իբրև պարտականություն, պատվելու, հարգելու ու սիրելու իրենց ծնողներին, երբ նրանք կենդանի են. *«Պատվիր քո հորն ու մորը, որպեսզի բարիք գտնես, երկար ապրես բարեբեր այն երկրի վրա, որ Տեր Աստված տալու է քեզ» (Ելք, 20:12)։*

Պողոս Առաքյալը Եփեսոսում գտնվող բոլոր հոգեվոր զավակներին է ուղղում իր խոսքը. *«Որդինե՛ր, հնազանդ եղեք ձեր ծնողներին ի Տեր, որովհետև դա է ճիշտը։ Պատվիր քո հորն ու մորը,- որ առաջին պատվիրանն է՝ տրված խոստումով,- որպեսզի լավ լինի քեզ համար, և երկար կյանք ունենաս երկրի վրա» (Եփես. 6:1-4)։*

Երկրի վրա մեր ծնողների խոսքը Աստվածային զորություն ունի։

Ընտանեկան տան շինութեան երկու հիմնաքարերը կազմում են հայրն ու մայրը։ Ընտանիքը երջանիկ է այն դեպքում, երբ այնտեղ կա սեր, ներողամտության ոգի և համերաշխություն, որը անկասկած կբերի ընտանեկան խաղաղություն։

Մեր ծնողները Աստծու պատկերներն են։ Երբ նրանց ամեն օր տեսնում ենք, լսում ու խոսում և մանա-

վանդ Աստծուց նրանց սիրելու ու պատվելու հրաման ունենք, եթե չսիրենք նրանց, Աստծուն, Որին երբեք չենք տեսել ու Նրա ձայնը չենք լսել, ինչպե՞ս կարող ենք սիրել: Այդպիսի զավակները, երբ ասում են սիրում ու հավատում ենք Աստծուն, երբեք էլ մի՛ հավատացեք, նրանք սուտ են խոսում: Մեկ է՝ մի օր Աստված Իր պատիժները պիտի տա այսպիսի զավակներին, ուր էլ որ նրանք գտնվելիս լինեն: Փախուստ չկա: Սողոմոն իմաստունը ասում է. *«Անհնազանդ որդին գնում է դեպի կորուստ»:*

Պիտի գա մի ժամանակ, երբ մեր ծնողների հիվանդության և ծերության վիճակը անտանելի պիտի լինի, այդ պարագայում պիտի հիշենք, թե նրանք ինչ դժվարությամբ և ինչ զոհողությունների գնով են մեծացրել մեզ: Երբ մի ուրիշից փոքրիկ բարիք ենք տեսնում, շնորհակալ սրտով ուզում ենք փոխհատուցել, ուրեմն ինչքան շատ բանով պիտի փոխադարձենք նրանց այն բարիքների համար, որոնք ընդունել ենք մեր ծնողներից:

Այս պատվիրանը ճիշտ կատարած կլինենք, եթե Աստծուց հետո սիրենք մեր ծնողներին և նրանց նկատմամբ որդիական սեր ու հարգանք ունենանք և իրենց ծերության ժամանակ պետք եղած օգնությունը հասցնենք: Միշտ պիտի հիշենք այն խոր սերը, որով նրանք մասնակից են եղել թե՛ մեր ուրախություններին և թե՛ մեր ցավերին, քանի՛ քանի՛ անգամներ մեր հանգստության համար նրանք անհանգիստ են եղել ու մեր երջանկության համար իրենց երիտասարդ ծաղիկ տարիներն են զոհել: Նույնիսկ զարմանալ կարելի է, որ զավակների ապերախտությունն ու անհնազանդությունը անտեսելով, նրանք չեն պակասեցնում իրենց սերը նրանց նկատմամբ մինչև իրենց կյանքի վերջին րոպեն:

Պատահում է և հակառակը, եթե մենք իբրև զավակներ երախտամոռ լինենք մեր ծնողների նկատմամբ, արժանի եղած պատիվները չտանք, ինչպես պատվիրել է մեզ Աստված, եթե արհամարհենք նրանց, օրհնության տեղ

անեծք պիտի ստանանք ու վա՛յ այդ զավակներին, որովհետև *«Մոր անեծքը որդիների տունը հիմքից խախտում է» (Սիրաք 3:11):*

Մեր եռամեծ Վարդապետներից Սբ. Գրիգոր Տաթեվացին ասում է.

«Բազում պատճառներով ծնողները արժանի են պատվի:

Նախ, որ Աստծու պատկերն են և խորհրդավոր կերպով իբրև ծնող արժանի են Աստծուն տրվելիք պատվին: Երկրորդ՝ գործիք են Աստծու պատկերը մեր վրա ձևավորելու համար, որովհետև առանց ծնողների Աստված ո՛չ հոգի է ստեղծում և ո՛չ էլ մարդ կազմավորում որովայնի մեջ»:

Հետաքրքիրն այն է, որ ո՛չ միայն Աստված. գրքերը և օրենքներն են խրատում սիրել ծնողներին, այլև անասունները և թռչունները բնությամբ ծնողասիրություն ունեն: Վերցնենք օրինակ արագիլներին: Ասում են, թե երբ նրանց ծնողները ծերանում են, մտնում են նրանց թևի տակ, ման են տալիս ու կերակրում, իսկ երբ չեն կարողանում այլևս քայլել, նստեցնում են բնի մեջ, կերակրում այնպես, ինչպես նրանք էին սնել իրենց ձագ եղած ժամանակ: Արդ, ինչքան ամոթ պիտի լինի մի զավակի համար, որ թռչուններից ավելի վատ գտնվի և մոռանա իր ծնողների բարությունն ու զոհողությունը:

Իբրև եկեղեցական շատ անգամներ ներկա եմ եղել հայ ընտանիքների խնջույքներին ու լսել բաժակաճառերի միջոցով հրաշալի խոսքեր ծնողների հասցեին: Շատ գնահատելի ու խրախուսելի է, որ այդ պահին երիտասարդները հասկանում են, թե ի՞նչ մեծ արժեք ունեն նրանք: Իսկ հետո՞… հաջորդ օրը՞… մյուս օրերի՞ն… ի՞նչ է տեղի ունենում: Գիշերային ուշացումներ, խմիչքի ու ծխախոտի չարաշահումներ, ընտանեկան բուռն վեճեր, որոնք երբեմն վերջանում են ողբերգությամբ: Երևի մեր երիտասարդները ծնողներին ցավ ու նեղություն պատճառելը համարում

են սիրել ու հարգել: Ահա այս պատճառով է, որ Աստված ո՛չ թե ծնողներին է պատվիրանը տալիս, այլ՝ զավակներին, քաջ գիտենալով նրանց ապերախտությունը և երախտամոռ լինելը: Որ տարիքում էլ լինենք, բնական է և երբեք էլ զարմանալի չէ, մեր ծնողների զավակն ենք, նույնիսկ եթե մենք էլ ծնող ենք: Նրանց նկատմամբ սերը սոսկ պարտականություն չպիտի լինի, այլ՝ հոգու արտահայտություն:

Աստծու օրենքի համաձայն ո՛չ միայն մենք մեր ծնողներին պիտի սիրենք և մեր երախտագիտությունը հայտնենք, այլև մեր հոգևոր ծնողներին, մեր ուսուցիչներին, եկեղեցական հայրերին, մեր բարերարներին ու առաջնորդներին, որովհետև ծնողները մեր մարմնավոր կեանքն են պահպանում, իսկ հոգևոր ծնողները մեր հոգու սնունդն են պատրաստում. *«Հոգին է կենդանարար, մարմինը ոչ մի բան չի կարող անել: Այն խոսքը, որ ես ձեզ ասացի, հոգի է և կյանք» (Հովհ. 6:64):*

Վշտի ու ցավի Ամենայն Հայոց Կաթողիկոս Խրիմյան Հայրիկի այս սքանչելի խոսքը ուղղված է ծնողներին.

«Դուք ձեր զավակներին օրհնեցե՛ք այնպես, որ նրանք հայրենատուր սուրբ կրոնը, հավատը, սուրբ ավանդությունները՝ անարատ ու անեղծ պահեն. Հայաստանայց Եկեղեցին սիրեն, Թադեոսի, Բարդուղիմեոսի և Լուսավորիչ Հոր հոտից ու փարախից չբաժանվեն: Օրհնեցեք, որ նրանք Ավետարանը գրկեն և սովորեն նրա սիրո դասերը, եղբորը սիրեն, ընկերոջը սիրեն ու մարդասեր լինեն»:

Երիտասարդներ սթափվեցե՛ք, քանի դեռ ուշ չէ. սիրեք ձեր ամենաթանկագին զանձերին ու ստացեք նրանց օրհնությունը, որպեսզի երջանիկ և ուրախ կյանք ունենաք:

Իմ պատգամը վերջացնում եմ նորից մեջբերելով Խրիմյան Հայրիկի խոսքերը.

«Տուն և ընտանիք մի փոքրիկ թագավորության երկիրն ու սահմանն են, որո նահապետական աթոռին վերա կնստին ծնողք, հայր իբրև թագավոր և մայրն իբրև թագուհի և կկառավարեն հպատակ ընտանիքը: Սույն ընտանեկան պալատին և թագավորության մեջ ո՛չ ոստիկան կա, ո՛չ սուր, ո՛չ բռնություն, ո՛չ գավազան, այլ ամենուն տեղ հայրական սեր և մայրական գորովն է, դաստիարակ և խրատ՝ ծնողաց կենդանի օրինակն է»: Ամեն:

«Եվ երբ երեկո եղավ, նրա աշակերտները ծովեզերք իջան։ Եվ նավակ նստելով գալիս էին դեպի ծովի մյուս կողմը, դեպի Կափառնայում։ Եվ երբ մութն ընկավ, Հիսուս դեռ իրենց մոտ չէր եկել, և ծովը հողմի ուժգին փչելուց փոթորկվում էր։ Երբ շուրջ հինգ կամ վեց կիլոմետր թիավարելուց հետո տեսան Հիսուսին, որ քայլում էր ծովի վրայով և նավակին մոտեցել էր, սաստիկ վախեցան։ Եվ նա ասաց նրանց. «Ես եմ մի՛ վախեցեք»

(Հովհ. 6:16-20)

Ավետարանների մեջ տարբեր տեղերում կարդում ենք, թե՝ երբ Հիսուս որևէ մեկի մոտ էր գտնվում՝ նրա վախը անմիջապես անհետանում էր։ Իրապես, մեր Տերը քաջություն, զորություն և հաստատակամություն էր սրփոռում Իր շուրջը։ Թեև Նա բազմաթիվ մարդկային հուզումների, չարչարանքների ու տանջանքների ենթակա եղավ, սակայն ո՛չ մի ժամանակ չվախեցավ, որովհետև Աստծու Որդին էր։

Մարդկանց համար վախենալը և ահ ու դողի մատնվելը ամենօրյա ու բնական մի երևույթ է։ Կարող եմ համարձակ ասել, թե բոլոր մարդիկ էլ վախկոտ են ծնվում։ Նույնիսկ Առաքյալները, որոնք Հիսուսի զորակցությունն ու աջակցությունը ունեին, նորից վախկոտ մարդիկ էին։ Պետրոսը, որը հաճախ ինքնիրեն քաջ, համարձակ և անվախ էր ցույց տալիս, իր սիրելի ու պաշտելի Տիրոջը մի գիշերվա մեջ երեք անգամ ուրացավ, ասելով, թե՝ *«Ես նրան չեմ ճանաչում» (Ղուկ. 22:57)։*

Մեր կրոնը և Սուրբ Գիրքը չեն ասում, սակայն, թե ամեն տեսակի վախ ու երկյուղ անբնական և անիմաստ են։ Սատանան երբ մեր Տիրոջը ուզեց փորձել՝ Նրան կանգնեցրեց տաճարի աշտարակի վրա ու ասաց. *«Եթե Աստծու Որդին ես, քեզ այստեղից ցա՛ծ գցիր, որովհետև գրված է՝ իր հրեշտակներին պատվիրված է քո մասին, և ձեռքերի*

վրա պիտի վերցնեն քեզ, որպեսզի երբեք քո ոտքը քարին չխփես» Հիսուս նրան ասաց. *«Գրված է՝ քո Տեր Աստծուն չփորձես» (Մատթ. 4:5):* Սատանան մի անգամ ևս Հիսուսին փորձության ենթարկեց, սակայն մեր Տերը նրան ասաց. *«Ետիս գնա՛, սատանա. . .», այսինքն՝ «Ինձանից հեռու գնա՛, սատանա» (Մատթ. 4:10):*

Առակաց գրքում ասվում է. *«Իմաստության սկիզբը Տիրոջ երկյուղն է» (Առակ. 1:7):*

Այս խոսքը կարևոր է և օգտակար ու պատկանում է բոլոր ժամանակների մարդկանց: Կարելի է այն նկատել որպես կյանքի նշանաբան: Իրականության մեջ, սակայն կան բազմաթիվ անձեր, որոնց կյանքի գերագույն նպատակը եղել է ապրել Աստծու երկյուղով, բայց գործնականում իրենց ապրած առօրյա կյանքը ցույց է տալիս, թե այս խոսքը նրանք կամ սխալ են հասկացել կամ էլ այն երբեք չեն ըմբռնել: Ուրեմն, ի՞նչ է նշանակում *«Իմաստության սկիզբը Տիրոջ երկյուղն է»* խոսքի իմաստը:

Ցավալի է, որ նույնիսկ շատ հավատացյալներ, որոնք հավատում են Աստծու գոյությանը, խոսքով ասում են, թե երկյուղ չունեն Նրանից, բայց գործնականում Աստված տեղ չունի նրանց գործերում, տներում, սրտերում և ընդհանրապես նրանց կյանքում ու արդարանում են ասելով. *«Նա երկնքում է, իսկ մենք՝ երկրի վրա»:* Եվ երբ նեղության ու դժվարությունների մեջ են, փոխանակ Աստծուն դիմելու և Նրա Օրհնությունը հայցելու, մարդկանց օգնության վրա են հույսները դնում ու շատ քիչ անգամներ է պատահում, որ Տիրոջն են ներկայացնում իրենց խնդրանքները՝ այն էլ կասկածելով:

Հիշում եմ, երբ փոքր էինք ու երբեմն բնական կերպով չարություն էինք անում, մայրս մեզ սաստում էր, ասելով. *«Եթե խելոք չմնաք Աստված Պապիկին կասեմ ձեզ պատժի»:* Խոսքս սրանից քառասունհինգ տարիներ առաջվա պատմություն է պատահած Հայաստանի մեջ: Մենք փոքրերս մտածում էինք, թե՝ *«Ո՞վ պիտի լինի այս Աստված*

Պապիկը, որ մեր մայրը նույնիսկ վախենում է Նրանից»: Անշուշտ տարիներ հետո երբ մեծացանք, հասկացանք, որ բոլոր մարդիկ էլ պետք է ունենան երկյուղ և սեր Աստծու նկատմամբ: Սակայն սա չի նշանակում, թե մեր հավատը վախի ու դողի վրա հիմնված մի վարդապետություն է: Սխալ չհասկանանք: Աստված ցանկանում է, որ Իր ստեղծած մարդիկ առանց վախի, երջանիկ և ուրախ ապրեն:

Երբ եկեղեցի ենք մտնում, եկե՛ք գիտակցենք, թե ո՞ւր ենք գտնվում: Խավարը և լույսը իրար հակառակ են, սևն ու սպիտակը չեն կարող իրար միանալ: Արդար ու մաքուր մարդիկ միշտ աշխատում են լույսի մեջ, իսկ անարդար մարդիկ նախընտրում են խավարը, որպեսզի իրենց չար գործերը չերևան: Ուրեմն նախ պիտի աշխատենք մեր հոգիները մաքրել ու երբ լսենք Տիրոջ ձայնը, թե՝ *«Ես եմ մի՛ վախեցեք»*՝ չվախենանք, այլ ճանաչենք Նրա ձայնը, լինենք Նրա հետ, որպեսզի չարը չկործանի և չզրկի մեզ հավիտենական կյանքից: Հիսուսի միջոցով ավելի մոտից ճանաչենք Հայաստանյայց Առաքելական մեր Մայր Եկեղեցին և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ու հեռու մնալով տեսակ-տեսակ աղանդներից և խորթ սովորություններից, հավատարիմ մնանք մեր Հայրերի սուրբ հավատին: Ամեն:

ՄԵԶՆԻՑ Ո՞Վ Է ՄԵԾԸ

«Մեզնից ո՞վ է մեծը երկնքի արքայության մեջ»
(Մատթ. 18:1)

Հիսուս զգում է, որ առաքյալների միջև վիճաբանություն է տեղի ունենում և ուզում է իմանալ, թե՝ ինչո՞ւ, ինչի՞ համար հարցնում է նրանց. *«Ճանապարհին իրար հետ ինչի՞ մասին էիք վիճում» (Մարկոս 9:32):* Առաքյալները լռում են, անհարմար են զգում պատասխանել, քանի որ իրենցից մեծին որոշելը նույնքան անիմաստ էր, որքան որևէ մի մարդու ժառանգությունը դեռ չմեռած բաժանելը: Հիսուս գիտեր վեճի պատճառը, բայց ցանկանում էր, որ նրանք արտահայտվեն, ուստի կրկնում է Իր հարցը և առաքյալները տեսնելով, որ անհնար է խուսափելը՝ խոստովանվում են, թե՝ *«Ճանապարհին իրար հետ վիճում էինք, թե ո՞վ է մեծը» (Մարկոս 9:33):* Հիսուս նրանց ասում է. *«Եթե մեկն ուզում է առաջին լինել, բոլորից վերջինը և բոլորի սպասավորը պիտի լինի» (Մարկոս 9:34):*

Մեր Տերը ո՛չ միայն Մեծ եղավ, այլ նաև մեծության գաղափարը նոր իմաստով լցրեց: Մինչև իր ժամանակը մեծության չափանիշը ուժը և հարստությունն էր: Մեծությունը այն աստիճան նյութականացված էր, որ հին հայերենում նշանակում էր հարստություն: Աշխարհի մեծերը պաշտոնների վրա գտնվողներն ու իշխանավորներն են, որոնք իրենց ագահ, անազնիվ ու անարդար կյանքով վնասում են մարդկանց: Սա մեծության այլասերված ըմբռնումն էր, որը Հիսուս հիմնովին փոխեց և մի մանուկ վերցնելով ասաց. *«Ահա իմ սիրած մեծությունը, անմեղ և միամիտ պարզություն, թե որ դուք էլ փոքրիկ երեխայի նման անմեղ ու միամիտ լինեք, Երկնքի Արքայությունում կլինեք մեծ… Հետևապես իզուր եք փնտրում նրան, ով իմ փոխարեն ավագ պիտի լինի. ես ավագ չեմ կարգելու. ամենից փոքրն էլ մեծ է իմ աչքում, եթե նա մեծ է առաքինությամբ» (հմմտ. Մատթ.18:4-6):* Ինչպես բոլոր ժամա-

նակներում, այսօր էլ մարդկանց մեջ առաջինը և ամենամեծը դառնալու ձգտումը կա: Այս զգացումը բխում է եսասիրությունից: Հիսուս Ինքը լավագույն ձևով է տալիս այս բացատրությունը. *«Մեծարանք ընդունելու չեկա, այլ՝ ծառայելու»:… «Ես ձեր մեջ մի սպասավորի պես եմ» (Ղուկ. 22:27)* ու այս խոսքերը հաստատեց Իր կենդանի օրինակով, երբ վերջին ընթրիքի ժամանակ ծնկի եկավ և լվաց Իր աշակերտների փոշոտ ոտքերը:

Աստծու հրաշքն է, որ աշխարհում կան անթիվ նվիրյալ, արդար, ազնիվ ու հավատով մարդիկ, որոնք իրենց *«ես»-ը* մոռացած, *«մենք»-ի* գիտակցությամբ շարունակում են կատարել իրենց բարի գործերը՝ միմիայն Աստծու փառքի համար:

«Ժամանակին մի կրիա խնդրում է արծվին, որ թևի վրա վերցնի իրեն ու միասին թռչեն կապույտ երկնքում:

Արծիվը կատարում է նրա խնդրանքը: Բարձունքների զովության մեջ թարմացած ու հարբած կրիան, խնդրում է արծվից, որպեսզի իրեն ազատ թողնի, որ ինքն էլ թռչի: Արծիվը չկարողանալով դիմադրել կրիայի աղաչանքներին, բաց է թողնում նրան ու կրիան անհասանելի բարձունքներից ընկնելով ջարդուփշուր է լինում ժայռերի վրա»:

Առակն ասում է, թե երբե՛ք չպետք է դուրս գանք մեր բնականոն վիճակից ու փորձենք անել այն ինչը մեր ուժերից վեր է: Այդպիսիների համար կրիայի օրինակը թող լավ դաս լինի:

Քրիստոնյա լինել՝ նշանակում է խոնարհ ու համեստ լինել, սակայն իրական խոնարհությունը՝ ինքնաճանաչումն է:

Եթե մարդը ինքնիրեն քննի և ուշադրությամբ նայի իր շրջապատին, կհասկանա, որ շատ դեպքերում նույնիսկ անզոր է դիմադրել կենդանական աշխարհի կամ բնության անակնկալներին: Օրինակ՝ ո՞վ կարող է ազատվել

կայծակի հարվածից, անձրևների ողողումներից և կրակի տաքությունից:

«Ինքնիրեն ճանաչելուց հետո մարդուն մնում է անկեղծ լինել այնպես, ինչպես է իր ընկերության մեջ»,- ասել է Կ. Պոլսի Պատրիարք երջանկահիշատակ Շնորհք Արք. Գալուստյանը,- «Իշխանը իշխան պիտի լինի, ո՛չ թե իշխելու, հարստահարելու և գերելու, այլ կառավարելու, տկարին պաշտպանելու համար, այսինքն՝ բառի ազնվագույն առումով՝ ծառայելու համար:... Խորքում խոնարհ լինել՝ այս է նշանակում» (Ավագ Շաբաթ, 1974):

Ճշմարիտ քրիստոնյա լինելու և մնալու համար անհրաժեշտ է, որ բարի գործեր կատարենք, օգնենք կարոտյալներին ու խնամենք հիվանդներին: Որով, չսպասենք, որ նրանք խնդրեն մեզ կամ մեր դուռը թակեն, այլ մենք կամավոր կատարենք մեր խղճի պարտքը և Աստված անպայման պիտի հատուցի մեզ ավելիով: Ամեն:

ԲԱՐԻ ԳՈՐԾԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

«Որովհետև, ով որ ձեր թշնամին չէ, ձեր կողմն է»
(Ղուկ. 9:50)

Քրիստոսի խոսքերն են, որը վերցրել եմ Ղուկաս ավետարանչի 9-րդ գլխի 50-րդ համարից: Հիսուսի այս պատգամը ցույց է տալիս, թե ինչպե՞ս կարելի է ազատվել երևույթները դատելուց: Առաքյալները մոտենում են Տիրոջը և պատմում մի մարդու մասին, որը Նրա անունով դևեր էր հանում: Եվ քանի որ այդ մարդը առաքյալների հետ չէր գնում, նրան արգելեցին այդ կատարել. *«Վարդապե՛տ, տեսանք մեկին, որ քո անունով դևեր էր հանում և արգելեցինք նրան, որովհետև մեզ հետ չի շրջում»* (Ղուկ. 9:49): Այստեղ հայտնի չէ, թե նրանք ի՞նչն էին արգելում. դևերին հալածե՞լը, թե՞ Հիսուսի անունը գործածելը: Սակայն կարծես թե նրանք ավելի մտածում էին նրան արգելել, որպեսզի Հիսուսի անունը չգործածի, կարծելով, թե այդ ձևով Նրա հեղինակությունը պիտի ընկնի: Հիսուսի պատասխանը նրանց կարելի է ասել ցնցեց. *«Մի՛ արգելեք նրան, որովհետև, ով որ ձեր թշնամին չէ, ձեր կողմն է»:*

Դժբախտաբար ապրում ենք մի աշխարհում, ուր մարդիկ ավելի շատ տարված են տեսանելի երևույթներով, այսինքն՝ այն ինչ տեսնում, հավատում են ու այդպես էլ դատում: Սակայն Հիսուսի խոսքն այլ էր թերահավատ Թովմաս Առաքյալին. *«Որովհետև դու ինձ տեսար և հավատացի՛ր, երանի նրանց, ովքեր չեն տեսել, և սակայն կհավատան» (Հովհ. 20:29):* Կարծես թե ամեն ինչ դրանում է կայանում; Շատ կարևոր է, թե ի՞նչ ենք հագնում, ինչպե՞ս ենք խոսում, ինչքան բան գիտենք, ինչքան գեղեցիկ ենք և այլն…: Եթե որևէ մեկը այս երևույթներին չի հարմարվում, նման է այն մարդուն, որը հոսանքին հակառակ է լողում:

Քանի որ այս պատճառով բարոյականությունն էլ սկսում է հիմնվել տեսանելի երևույթների վրա: *«Եթե տեսնեմ, կհավատամ, չեմ տեսնի՝ չեմ հավատա»,* այսպես են

արտահայտվում թերահավատ մարդիկ: Ներքին հոգեկան վիճակից և կամ սիրո արտահայտություններից ավելի, բարոյական կյանքի օրենքները հասկանում են գործադրելու, ձևերն ու սովորությունները կատարելու մեջ: Հավանաբար այս է պատճառը, որ բարոյականությունը իբրև ձև հսկա անկում է ապրում և դրան հակառակ՝ անբարոյականությունը դառնում է ավելի բնականոն և զարմանալիորեն՝ շարունակաբար, քանի որ պարզ ու հասարակ երևույթները, որոնք մենք տեսնում ենք, չեն կարող համոզել մի մարդու, որը խելացի է ու սիրում է մտածել: Եվ եթե այդ խելացի ու մտածող մարդը ընկնում է հաճույքների ու կրքերի ետևից, բնական է, որ պիտի մոռանա ամեն բարոյական սկզբունք, ձև կամ օրենք:

Սակայն սրանք դեռ ոչինչ, կան ավելի վատերը: Ձևապաշտություն, իշխանամոլություն աշխարհիկ, եկեղեցական կամ հավատի կյանքում: Դժբախտաբար մեր ժողովրդի և Եկեղեցու պատմությունը լիքն են այսպիսի քայքայիչ գործունեությունների պատմություններով: Մարդիկ, ժողովուրդներ, եկեղեցականներ, մինչև իսկ պետություններ ու եկեղեցիներ կռվել, չարչարել, պատերազմել, սպանել ու կործանել են: Ու մի՛ կարծեք, թե խոսքս միայն անցյալի մասին է. դժբախտաբար այսօր էլ աշխարհում շարունակվում են՝ նույն անհանդուրժողությունը, ատելությունն ու թշնամանքը մինչև իսկ միևնույն դավանանքը ունեցող Եկեղեցիների անդամների միջև: Օրինակները շատ են: Վատն այն է, որ ամեն բան կատարվում է Աստծու անունով:

Նույնն էր պարագան, երբ երկու հազար տարի առաջ առաքյալները արգելեցին մի մարդու, որը Տիրոջ անունով դևեր էր հանում: Սուրբ Գիրքն ասում է, որ նա ոչ թե փորձում էր, այլ ուղղակի հանում էր, այսինքն մարդկանց, հիվանդներին Տիրոջ անունով բուժում էր, մի խոսքով Աստծու Որդու գործն էր կատարում: Սակայն առաքյալները անիմաստ նախանձախնդրությամբ արգելեցին

նրան և այս մասին հպարտությամբ պատմեցին Տիրոջը: Պատկերացնում եք այն սպասումի վիճակը, որ առաքյալները ունեին, մտածելով, թե բարի գործ են կատարել: Նրանք չէին սպասում հանդիմանության, այլ՝ գնահատանքի: Սակայն Տերը սառը ջուր լցրեց նրանց սպասելիքներին, ցնցիչ և քննադատական պատասխան տալով նրանց. *«Արգելք մի՛ եղեք նրան, որովհետև չկա մեկը, որ իմ անունով զորավոր գործեր անի ու կարողանա ինձ հայհոյել…» (Մարկ. 9:38):*

Նույն բանը պատահել էր Մովսես մարգարեին: Երբ մարդիկ գալիս ու նրան ասում են, թե երկու հոգի ժողովրդի մեջ մարգարեություններ են անում, այսինքն, ուզում էին ասել, մարգարեն դու ես, բայց ուրիշները նույնպես մարգարեանում են, նա պատասխանում է. *«Ո՞ւմ համար է ձեր նախանձախնդրությունը՝ Աստծո՞ւ, թե՞՝ իմ: Երանի ամբողջ Իսրայելի ժողովուրդը իմ նման լիներ»:* Սուրբ Գիրքը անմիջապես շարունակում է, թե աշխարհում Մովսեսից ավելի խոնարհ մեկը չկար:

Աստծու առատաձեռնությունն ու կամեցողությունն անսահման են մարդու հանդեպ:

Հետաքրքիր է.

«Մի իմաստուն մարդ կար իր ժամանակին, որն ուսյալ էր, քարոզող ու աղոթող: Նրա մասին ասում էին, թե Աստծուն նվիրված հավատի մշակ է: Նա ուր որ ապրում էր ծովեզերքի քաղաքներից մեկն էր, նրան մոտիկ մի կղզի կար, ուր քարայրում առանձնացված ապրում էր մի ճգնավոր՝ Հիսուսին մկրտող Սուրբ Հովհաննես Նախակարապետի նման: Նրա կերածը մարախ ու վայրի մեղր էր:

Սակայն այս անապատականը հրաշագործ էր Սբ. Պողոս և Սբ. Պետրոս առաքյալների նման և բժշկություններ էր կատարում, միայն թե նրա մասին ասում էին թե սովորած չի, դպրոց չի գնացել: Երբ հիվանդներ էին բերում, նա աղոթում էր ու նրանք բուժվում էին, բայց ո՛չ մեկը չգիտեր, թե նա ի՞նչ է աղոթում և ինչպե՞ս է աղոթում:

Այս Անապատականի համբավը հասնում է իմաստուն մարդու ականջը և նա իր մտքում ասում է. «Ես որ այսքան սովորած մարդ եմ և միշտ աղոթող, բայց հրաշագործ չեմ, ուրեմն ես էլ գնամ, այցելեմ այդ անապատականին, տեսնեմ ի՞նչ է նրա աղոթքը, որը հաճելի է Աստծուն, սովորեմ նրանից աղոթել և մի օր հրաշքներ գործեմ…»:

Նստում է նավ այլ ուղևորների հետ, դուրս է գալիս ծովեզերք, առաջնորդվում ճգնավորի քարայրը և ի՞նչ տեսնի… մրոտ-փրչոտ, մորուսավոր մի մարդ բազմած մերկ քարի վրա Եղիա մարգարեի նման, իր գործը միայն Աստծու հետ է:

Իմաստունը քաղաքի ճոխ ու փարթամ կյանքին վարժված մեկն էր, շատ չէր սիրում այդ ճգնավորի կյանքը: «Բայց, կարևոր չի, թող մի անգամ էլ այսպես ապրեմ, միայն թե իմանամ հրաշագործության գաղտնիքը, դրանից հետո թող ճգնավորը տառապի իր գործի մեջ»,- ասում է մտքում իմաստունը:

Այս մտածելով, նա մոտենում է ճգնավորին, խոնարհվում նրան ու ասում.

Ով Աստծու մարդ, լսել եմ, որ դու հրաշագործ մեկն ես: Ինչ որ խնդրես Աստծուց՝ ստանում ես: Արդ, ես էլ մի իմաստուն եմ և եկել եմ խնդրելու քեզանից, որ ինձ սովորեցնես քո աղոթքը:

Ճգնավորը մի պահ զարմանում է, լռում, չի համարձակվում խոսել, բայց իբրև մի բարի էակ չի ցանկանում մերժել իմաստունի խնդրանքը:

Միայն ասում է.

«Ես երկար աղոթքներ չգիտեմ, իմ կյանքս էլ տարբեր է թերևս ձեզանից, աղոթքս էլ; Ուզո՞ւմ ես իմ աղոթքը լսել: Ահավասիկ այս է միայն.

Աստված Դու ինձ մեղա՝ ես Քեզ՝ ողորմյա:

«Ի՞նչ, մեղա, մեղա ասեցիր»,- միջամտում է իմաստունը: Աստված քեզ մեղա պիտի ասի, որ դու իրեն

ողորմե՞ս: Դու ո՞վ ես: Ո՛չ, ո՛չ: Խնդրում եմ սրանից հետո ուղիղ և ճիշտ աղոթես ու պիտի ասես.

Աստված՝ Քեզ մեղա, Դու ինձ՝ ողորմյա:

Այսպես մեր իմաստունը ճգնավորին մի քանի անգամներ կրկնել է տալիս այս աղոթքը ու նավը նստելով՝ հեռանում: Ճգնավորը կրկնում է մի քանի անգամ իմաստունի սովորեցրածը ու հետո ծովի վրայով քայլելով վազում է նավի ետնից ու կանչում.

Խնդրում եմ, ասես, մոռացա, թե ինչպե՞ս պիտի աղոթեի:

Իմաստունը տեսնելով ջրի վրայով քայլող ու վազող ճգնավորին, այլայլված ասում է.

Քո իմացածը ճիշտ է, քո իմացածը ճիշտ է, գնա՛ և այդպես շարունակիր աղոթել» (Կարապետ Ավ. Քհն. Գալֆայանի գրվածքներից, «Գիրք Առակաց», 1957, Բեյրութ, էջ 11):

Հետաքրքիր է, այս պարագային *«Ի՞նչ կլինի մեր դիրքը կամ կեցվածքը, եթե այսօր որևէ մեկը մեր հասկացածից ու ընդունածից մի այլ ձևով գործի, սակայն դրանով փառաբանվի Տիրոջ անունը. մարդիկ ազատվեն դեվերից, Աստծուն ճանաչեն, հոգևոր կյանքը ծաղկի, հավատը զորանա, այսինքն այդ մարդը Աստծու գործը կատարի: Կհալածե՞նք, չե՞նք թողնի, որ նա իր գործը կատարի, ոստիկանությո՞ւն կկանչենք, մի խոսքով ի՞նչ կանենք»:* Հիսուս մեզ տալիս է այդ ուղղությունը Իր այս խոսքով. «*Մի՛ արգելեք նրան, որովհետև, ով որ ձեր թշնա-մին չէ, ձեր կողմն է…». (Ղուկ. 9:50):* Զգուշ եղե՛ք, չլինի, որ մենք անտեսենք Աստծու Որդու խրատը և ուղղությունը ու մի օր էլ մենք մեզ գտնենք արգելող մարդկանց մեջ: Հիսուս շարունակում է Իր խրատը. *«Այս բաները ասացի ձեզ, որպեսզի գայթակղությունից հետ մնաք: Իրենց ժողովարաններից դուրս պիտի հանեն ձեզ. մինչև իսկ ժամանակը կգա, երբ, ով ձեզ սպանի, պիտի համարի, թե Աստծուն պաշտամունք է մատուցում: Եվ այդ բանը պիտի անեն ձեզ*

էլ, որովհետև չճանաչեցին ո՛չ Հորը և ո՛չ էլ ինձ» (Հովհ. 16:1-3):

Որևէ գործի Աստծուն հաճելի լինելու գլխավոր չափանիշ այն է, թե արդյոք դրանով մարդիկ ավելի կմոտենա՞ն Նրան, Աստծու անունը կփառավորվի՞, Եկեղեցին կպայծառանա՞, կսրբանա ու կզորանա՞: Եթե ոչ՝ անշուշտ որ Աստծու կողմից մերժելի է այդ գործը: Իսկ եթե՝ այո՛, կարծում ենք, թե այս պարագային ձևն այնքան էլ կարևոր չէ, քանի որ այդպիսի բարի գործունեությունը օրհնված է և Աստծու կողմից ընդունելի:

Թող Տերը մեզ բոլորիս իմաստություն պարգևի, որպեսզի Նրա ճշմարիտ կամքը կատարողները լինենք: Ամեն:

ԻՆՉՊԵ՞Ս ՀԱՂԹԵԼ ՉԱՐԻՆ

«Թույլ մի՛ տուր, որ չարը հաղթի քեզ,
այլ բարիո՛վ հաղթիր չարին»
(Հռոմ. 12:20-21)

Պողոս Առաքյալի խոսքերն են ուղղված Հռոմայեցիներին: Ինչո՞ւ, ի՞նչն էր պատճառը: Պարզ է, թե ինչո՞ւ, որովհետև Հռոմայեցիների համայնքը նոր էր և քրիստոնյաները բավական դժվարություններ ունեին հոգևոր ու բարոյական կյանքի տեսակետից:

Եթե ուսումնասիրենք աշխարհի մարդկության անցած պատմությունը, կտեսնենք, որ բարու և չարի առեղծվածը միշտ էլ եղել է մարդկանց ու ժողովուրդների ուշադրության կենտրոնում: Իմաստասերներ, կրոնա-բարոյագետներ, աստվածաբաններ և գիտնականներ իրենց մեկնաբանություններն են կատարել այս հարցի վերաբերյալ:

Այդքան էլ հեշտ չի այս պատգամը իրագործել մեր կյանքում: Իսկապես քրիստոնեական ուժեղ ոգի է պետք, որպեսզի չարի դեմ բարիով կարողանաս հաղթանակ տանել: Նույնիսկ նշանավոր աղոթասացները, հավատով ուժեղները, սիրո առաքյալները և մեր սրբերը, որոնք իրենց կյանքը չզլացան զոհաբերելու հանուն Քրիստոսի, շատ անգամներ դժվարություններ են ունեցել այս պատգամը իրականություն դարձնելու: Բայց մի բան պարզ է ու հասկանալի. այս գործադրելու համար շատ կարևոր է մեր ամենօրյա անձանձրույթ աղոթքը, որը մեր հավատը պիտի զորացնի, որպեսզի մեր հույսը դնենք Աստծու վրա· Նրա կամքո՛վ պիտի լինի ամեն ինչ, առանց Նրա նույնիսկ ծառի մի տերև իսկ չի կարող շարժվել: Դրա համար էլ Տերունական աղոթքի մեջ ասվում է· *«Եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի»,* այսինքն՝ *«Թող Քո կամքը լինի ինչպես երկնքում, այնպես էլ երկրի վրա»:*

Եկեք մի պահ անդրադառնանք Հիսուսի այս խոսքերին. *«Եթե քաղցած է քո թշնամին, հա՛ց տուր նրան, և եթե՝ ծարավ, ջո՛ւր տուր նրան· այս անելով՝ կրակի կայծեր կկուտակես նրա գլխին: Թույլ մի՛ տուր, որ չարը հաղթի քեզ, այլ բարիո՛վ հաղթիր չարին» (Հռոմ. 12:20-21)* և հարցին մոտենանք հոգեբանական տեսանկյունից:

Իբրև մարդ, եթե մեր մեջ արթուն ու պատրաստ չի քրիստոնյա մարդը, անկարելի է, որ կարողանանք իրագործել Առաքյալի այս խոսքերը, այսինքն՝ վրեժ լուծելու, բռնելու ու չարչարելու, տանջելու և նույնիսկ մահվան դատապարտելու փոխարեն, կերակրենք, սիրենք ու կարիքի դեպքում օգնենք մեր թշնամուն: Եթե սիրելու և օգնելու փոխարեն, հակառակը անենք, այսպես վարվելով մենք ցույց կտանք, որ մեր մեջ բացակայում է Աստծու սերն ու ներողամտության ոգին: Էլ չեմ խոսում վերջին խրատի մասին· *«Թույլ մի՛ տուր չարը հաղթի քեզ, այլ բարիո՛վ հաղթիր չարին»,* որով ըստ Առաքյալի՝ *«այս անելով՝ կրակի կայծեր կկուտակես նրա, այսինքն՝ թշնամու գլխին»:*

Եթե չարը չարիքով փոխադարձենք, ի՞նչ պիտի շահենք, ոչինչ, ո՛չ մի բան չենք կարող փոխել մեզ չարիք պատճառած անձի հոգեկան աշխարհում, այլ՝ ընդհակառակը, մենք մեզ իջեցրած կլինենք չարագործի մակարդակին: Ինքը մեր Տերը օրինակ հանդիսացավ մեզ, խաչի վրա ներելով Իրեն չարչարողներին, տանջողներին և խաչ բարձրացողներին՝ *Հայ՛ր ների՛ր դրանց, որովհետեւ չգիտեն թե ինչ են անում» (Ղուկ. 23:34):*

Բարի մարդուց միայն բարիք կարելի է սպասել: Հիսուս ասում է. *«Որովհետև չկա բարի ծառ, որ չար պտուղ տա և դարձյալ՝ չկա չար ծառ, որ բարի պտուղ տա, որովհետև յուրաքանչյուր ծառ իր պտղից է ճանաչվում» (Ղուկ· 6:43-44):* Մենք հայերս գեղեցիկ խոսք ունենք, երբ տեսնում ենք մի հավատավոր, խելոք, կրթված ու զարգացած երիտասարդի և գիտենք ծնողներին, ասում ենք· *«Պտուղը ծառից հեռու չի ընկնում»,* այս ասելով նկատի ենք

ունենում անշուշտ երիտասարդի ծնողների կրթուած ու շնորհքով մարդիկ լինելը:

Հասկանալի է և ընդունելի, որ իբրև թույլ մարդիկ շատ անգամ մեր հոգին՝ Աստծու տուած պարգևը, պատրաստ է չարին բարությամբ հաղթելու, բայց մեր մարմինը թույլ է այն գործադրելու: Սակայն անկարելի բան չկա աշխարհում, եթե մարդը իր ամբողջ էությամբ ձգտի իրագործել այն: Մենք կարող ենք հաղթել մեր թուլություններին, վնասակար մոլություններին, անկարելի թվացող երևույթներին, երբ գործադրենք Աստծու կամքը, որը մեր մեջ է. միայն հարկավոր է, որ ցանկանանք: Հեշտ է ասել՝ չեմ կարող, չի ստացվում, հնարավոր չի, անկարելի է և այսպիսի թույլ ու Նրա կամքին հակառակ արտահայտություններ: Հիսուս շարունակում է. *«Բարի մարդը իր սրտի բարի գանձերից բարին է բխեցնում, իսկ չար մարդը՝ չարն է բխեցնում. որովհետև սրտի ավելցուկից է, որ խոսում է նրա բերանը» (Ղուկ· 6:45):*

Ֆրանսիական առածն ասում է. *«Ես ինձ կարող եմ պաշտպանել իմ թշնամիներից, եթե Աստված էլ ինձ պաշտպանի իմ բարեկամներից»:* Այս խոսքը կարելի է այսպես մեկնաբանել· *«Ավելի նախընտրելի է թշնամու անկեղծ ապտակը, քան բարեկամի կեղծավոր համբույրը»:* Ֆրանսիացիները շարունակում են·. *«Ավելի լա՛վ է ունենալ միայն մի բարեկամ, որը անկեղծ է, քան ունենալ բազմաթիվ բարեկամներ, որոնք սուտ ու կեղծավոր են»:* Սա էլ կարելի է այսպես մեկնաբանել· *«Նախընտրելի է թշնամու խոժոռ դեմքը, քան կեղծավոր բարեկամի սուտ ժպիտը»:*

«Ինչպե՞ս կարելի է հաշտեցնել անմեղությունը՝ խարդախության հետ, և բարությունը՝ չարության հետ: Կարելի՞ է բարին համեմատել գործված չարիքի հետ»:

Այսպիսի հարցեր են ծագում յուրաքանչյուր մարդու մտքում, երբ ամեն րոպե առնչվում ենք կյանքի այնպիսի երևույթների, որոնք շատ անգամներ մեծ չարիքներ

են առաջացնում ո՛չ միայն պարզ մարդկանց, այլև ժողովուրդների կյանքում:

Ժողովրդական առածն ասում է. *«Գլուխը ծակող քարը հաճախ չակնկալված կամ չսպասված տեղից է գալիս»:*

«Թշնամու» դանակը խոցում, արյունոտում ու վիրավորում է, բայց չի մեռցնում, մի *«բարեկամ»-ի* կամ *«բարեկամ»* կարծվածի, որին վստահում ես, մթան մեջ մեջքից խփված դանակն է, որ քեզ մեռցնում է:

Մեր Տերը Իր վստահված սուտ բարեկամի խարդախության զոհը եղավ: Ինչպե՞ս:

ա. Հիսուս խաչվեց Հուդայի խարդախ ու կեղծ համբույրով.

բ· Հեթանոս հռոմեացիներից մեխվեց փայտի վրա և առաջին խաչելությունը անհամեմատորեն ավելի տառապանք տվեց Նրան, քան երկրորդ խաչելությունը Գողգոթայի լեռան վրա: Առաջին խաչելության մեջ՝ «*Միրո ու վստահության մատնությունը»* կար. անորակելի հուսախաբություն սուտ և կարծեցյալ մի «*բարեկամ»-ից,* որը չկա՛ր երբեք երկրորդ խաչելության ժամանակ:

Այս աշխարհում չարերի ուժը և կարողությունը կկոտրվի ու անհետևանք կմնա, եթե բարիները չխաբե՛ն և չդավաճանե՛ն: Այս՛ է առաջին պայմանը բարու հաղթության և չարի պարտության:

Ամեն մարդ, որ կյանքում ակնկալում է հեշտ ու հարթ ճանապարհ ունենալ, իզուր տեղն է չարչարվում, քանի որ այդպես չի կարող ապրել այս աշխարհում: Այդ դեպքում ավելի լավ է նա չծնված ուղղակի երկինք թող բարձրանա: Արդեն Հիսուս Իր աշակերտներին ասաց· *«Աշխարհում նեղություն պիտի ունենաք, սակայն քաջալերվեցե՛ք, որովհետև ես հաղթեցի աշխարհին» (Հովհ· 16:33):*

Արդյո՞ք ինձ էիր փնտրում – Հայելի Վարուց
«Բարոյա-խրատական պատումներ»

Ամբրոսիոս անունով հռչակավոր մի ճգնավոր է լինում: Նրա համբավը և հրաշագործությունները ամենուր տարածված են լինում: Մի երիտասարդ ցանկանում է նրա աշակերտը դառնալ, ավելի ճանաչել Աստծուն, նվիրվել հոգևոր կյանքին: Մի անգամ հանդիպում է մի ծերունու, ով նրան ասում է.

Եթե ուզում ես ավելին գիտենալ Աստծու մասին, այդ դեպքում փնտրիր Ամբրոսիոս ճգնավորին, նա քո առջև կբացահայտի Աստծո խորհուրդները: Երիտասարդը ճամփա է ընկնում ու գտնում հռչակավոր սրբին ու ասում.

Հա՛յր սուրբ, մանկությունից Աստծուն եմ փնտրել ու կամեցել Նրան լավ ճանաչել, Նրա ճանապարհներն ու շավիղներն իմանալ ու Նրան հետևել: Խնդրում եմ, ընդունիր ինձ որպես աշակերտ քեզ մոտ: Ճգնավորը նայում է երիտասարդին, ժպտում ու հարցնում.

Արդյո՞ք կարող ես թողնել աշխարհը և հետևել ինձ:

Կարող եմ,- պատասխանում է երիտասարդը:

Ճգնավորն ասում է.

Այդ դեպքում, հետևիր ինձ ու լսիր, թե Տիրոջ մասին քեզ ինչ կասեմ ու կպատմեմ, և թե ինչպես է պետք հոգևոր կյանքով ապրել: Եվ նրանք զրուցելով քայլում են: Նրանց դեմ-դիմաց գեղեցիկ կառք է գալիս քաղաքի եպիսկոպոսը՝ ոսկեզոծ զգեստներ հագած ու մեծ հարգանքով բարևելով ճգնավորին ասում է.

Հայ՛ր սուրբ, գիտեմ, որ Աստծո առաջ մեծ շնորհ ունես և բազում աշակերտներ: Ինձ մի օգնական է պետք, ուղարկիր աշակերտներիցդ որևէ մեկին՝ որպես ինձ օգնական:

Երիտասարդը տեսնելով գեղեցիկ կառքը, հրաշագեղ նժույգներն ու եպիսկոպոսի ոսկեզոծ թագն ու կապը, խնդրում է.

Սրբազան հայր մանկությունից ի վեր ցանկացել եմ ծառայել Աստծուն ու Նրա շավիղներն ու ճանապարհները իմանալ վերցրու ինձ՝ իբրև քեզ օգնական: Եպիսկո-

պոսը նայում է ճգնավորին, որը գլխի շարժումով իր հավանությունն է տալիս: Երիտասարդը մեծ ուրախությամբ նստում է կառքը, եպիսկոպոսի հետ հեռանում: Ետ է նայում ու մի տեսիլք է տեսնում, որ ճգնավորի հետ մի ծերունի է քայլում: Ծերունին կանգնում է, շրջվում: Դա այն ծերունին էր, որը երիտասարդին խորհուրդ էր տվել գտնել ճգնավորին ու աշակերտել նրան: Այնուհետև ծերունին վերափոխվում է և երիտասարդը պայծառ լույսի մեջ տեսնում է Հիսուսին: Հիսուս նրան հարցնում է.

Արդյո՞ք ինձ էիր փնտրում:

Երիտասարդը պատասխանում է.

Տե՛ր իմ, գիտես, որ միշտ քեզ եմ փնտրել, քանի որ հոգևոր էությունս միշտ կամեցել է Քեզ մոտ շատ լինել և Քեզ ավելի լավ ճանաչել:

Հիսուս նրան պատասխանում է.

Եթե դու հոգևոր լինեիր, կճանաչեիր Իմ խոսքը, կլսեիր Իմ ձայնը՝ կանչն ու հրավերը և կհետևեիր Ինձ, բայց դու ընտրեցիր աշխարհը և նրա անցողիկ փառքը:

Այնուհետև Հիսուս շրջվում է ու ճգնավորի հետ հեռանում: Երիտասարդը հասկանում է իր սխալը, կանգնեցնում է կառքը, դուրս գալիս ու շտապում է դեպի ճգնավորը:

Այո՛, կարևոր է, որ փնտրենք Հիսուսին և գեղեցիկ ու շքեղ կյանքի հաճույքներին զոհ չդառնանք. արդեն չարի ու սատանայի ուզածը այդ է, աստվածաստեղծ մարդուն հեռացնել Աստծուց և թաթախել մեղքի ու չարության մեջ:

Դժվարությունները, հուսախաբությունները, ցավը, արցունքը, պայքարը, նեղությունները յուրաքանչյուր մարդու ամենօրյա կյանքի մաս են կազմում. դրանք այն փոսերն են, որոնք չեն թողնում, որ մարդը արկածի ենթարկվի: Մարդկանցից ո՛չ մեկը չի կարող այդ խոչնդոտները վերացնել, դա իր ուժերից վեր է, բայց կարող է պայքարել դրանց դեմ՝ համբերել, ներել, սիրել և նույնիսկ ընկ-

նել վերկենալով շարունակել առաջ գնալ այդ ճանապարհներով: Նրանք, որոնք այդ պայքարից հաղթական են դուրս գալիս, բնականորեն շարժում են մյուսների նախանձը, որոնք անկարող են և կամ չեն ուզում պայքարել, ավելի հեշտ կյանքի ակնկալիք ունենալով: Ու սկսվում է չարի հալածանքը և քարկոծումը, որպեսզի պայքարողը դադարեցնի իր գործունեությունը ու իր շնորհները ցույց չտա;

Ընդհանուր Քրիստոնեական Եկեղեցու Հայրերից Սուրբ Օգոստինոսն ասում է. *«Ամեն ձախորդություն հաջողության ճանապարհի վրա դրված մի անկյունաքար է»:*

Ուշադի՛ր նայեցեք ձեր շուրջը՝ ստախոսները չեն սիրում ճշմարտախոսներին, ինչպես չարերը երբե՛ք չեն սիրում բարիներին: Պատճառը շատ պարզ է, որպեսզի իրենց սուտը և սխալ ճանապարհի վրա լինելը չնկատվեն: Ուրեմն զգույշ մնանք *«քաղցր լեզվով օձ»-երից,* որոնք շատ անգամ ոչխարների պես են մոտենում բարիներին, որպեսզի վնասեն նրանց: Այդպիսիները կեղծավոր և ներսից ուտողներ են, որոնք ավելի շատ են վնաս հասցնում, քան՝ թշնամիները: Մեր պատմության ընթացքում քանի՛ քանի՛ այդպիսի անձեր ու դեպքեր մեր անմեղ ժողովրդի կոտորածի և մեր երկրի ավերման պատճառ դարձան: Բնության մեջ նույնիսկ, եր-բեմն նայում ես արտաքինից առողջ ու գեղեցիկ ծառը ընկնում է, փնտրում ես պատճառը և տեսնում, որ որդը ներսից կերել է այն, արտաքինից չերևացող որդը:

Պողոս Առաքյալը չարի դեմ պայքարելու իր ձևն ուներ և մեզ էլ պատգամում է այդպես վարվել. *«Թույլ մի՛ տուր, որ չարը հաղթի քեզ, այլ բարիո՛վ հաղթիր չարին»:* Նրա պայքարը այսպես էր և նա իր ներշնչումն ու ուժը ստանում էր Աստծուց: Չարին չարով պատասխանելը, նշանակում է նորանոր խնդիրներ առաջացնել, պատերազմներ հրահրել, խռովությունները խորացնել, գժտությունները ամրացնել և այլն: Հետևենք մեծ առաքյալի օրինակին: Ամեն:

ՄԱՐՄԻՆՆ ՈՒ ԱՇԽԱՐՀԸ

«Ով սիրում է իր անձը, կկորցնի այն, իսկ ով այս աշխարհում իր անձն ատում է, այն կպահի հավիտենական կյանքի համար»

(Հովհ. 12:25)

Այս կյանքում կան երկու արգելող պատճառներ, որոնք իբրև գլորվելու պատրաստ քարեր, կանգնած են մեր ոտքերի առջև: Դրանցից առաջինը՝ *ՄԱՐՄԻՆՆ Է,* իսկ երկրորդը՝ *ԱՇԽԱՐՀԸ:* Ուրեմն եկեք քննենք դրանք, տեսնելու համար թե սրանք հավիտենական մի կյանք արժե՞ն, որոնց համար ներկա կյանքը մեր ձեռքից բաց թողնելու փորձության մեջ ենք և կամ թե սրանք կորցնելը հավիտենական կորստից ավելի՞ ծանր է:

Մեղավոր մարդը սիրում է իր մարմինը հոգուց ավելի, թեև գիտի, որ մարմինը ժամանակավոր է, իսկ հոգին՝ անմահ: Մարմինը հողից է ստեղծված, իսկ հոգին՝ Աստծու պատկերն է: Մարմինը մի տուփ է, իսկ հոգին՝ նրա մեջ պահված մի գոհար: Մեր մտածողներից մեկը ասել է. «*Բայց ինչքան կարող ես, աշխատիր շահել մարմինդ… չէ՞ որ որոշ ժամանակ հետո պիտի կորցնես այն… Զվարճացրու ինքդ քեզ ոգելից խմիչքներով, բայց մի օր մի կաթիլ ջրի կարոտ պիտի քաշես և այն էլ հավիտյան չպիտի կարողանաս գտնել: Զարդարիր ինքդ քեզ փառավոր ու գունավոր զգեստներով, բայց մի օր սպիտակ սավանով պիտի փաթաթվես՝ փոսի մեջ դրվելու համար: Հանգստացրու ինքդ քեզ փափուկ անկողինների վրա, բայց մի օր անկողինն ու վերմակդ էլ հողից պիտի լինեն…*»: Ահա այս է Տիրոջ վճիռը. *«Ով որ իր անձը կորցնի, պիտի գտնի այն»:* Հիմա իմաստուն մարդու պես մտածիր ու դատիր, թե այս կարգի մարմնապաշտ անձերը իրենք իրենց սիրա՞ծ, թե՝ ատած կլինեն:

ՄԱՐՄԻՆԸ առաջին արգելող պատճառն է:

Երկրորդ պատճառը՝ *ԱՇԽԱՐՀՆ Է:* Աշխարհի համար փրկության ճանապարհից ետ կանգնելը նույնքան անմիտ մի գործ է, որովհետև անցավոր ու թշվառությամբ լի աշխարհը նշանակում է փոխել հավիտենական երջանկությամբ լցված մի այլ աշխարհի հետ: Սրան մարդը պատասխանում է. *«Ես այս աշխարհը պահելով հանդերձ երկինքն էլ եմ շահում»,* սակայն մի մարդ երկու Տիրոջ չի կարող ծառայել, ինչպես ասաց մեր Տերը. *«Ո՛չ մի ծառա երկու տիրոջ ծառայել չի կարող. որովհետև, եթե մեկին ատի, մյուսին կսիրի. կամ եթե, մեկին մեծարի, մյուսին էլ կարհամարհի» (Ղուկ. 16:13):* Ինչքան մարդիկ կապված են աշխարհին, որքան էլ որ սիրեն ու գիշեր ցերեկ իրենց անձը նրան հաճելի դարձնելու համար աշխատեն, աշխարհը երբեք չի կարող մարդկանց սիրել կամ գոնե նրանց սիրո համար փոխադարձաբար մի բարի բանով փոխարինել: Ձեզանից ցածր գտնվողները՝ ձեզ կատեն, հավասար եղողները՝ կնախանձեն, իսկ ավելի բարձրում գըտնվողները՝ կարհամարհեն:…

Բնական է, որ բոլորս էլ մոտ բարեկամներ, ընկերներ ու սիրելիներ ունենք, հնարավոր է, որ նրանց համար արգելք ունենանք մեր ճանապարհին. Սակայն հիշեք Հիսուսի խոսքը. *«Ով որ իր հորը կամ մորը ինձնից ավելի է սիրում, ինձ արժանի չէ. ով որ իր որդուն կամ դստերը ինձնից ավելի է սիրում, ինձ արժանի չէ: Եվ ով որ իր խաչը չի վերցնում ու իմ հետևից չի գալիս. ինձ արժանի չէ» (Մատթ. 10:37-39):* Թերևս նրանք ձեզ անկեղծությամբ սիրեն, բայց այդ սերը հաստատուն ու մնայուն չի կարող լինել, որովհետև երբ դուք մեռնեք ու ձեր մարմինը նրանց աչքերի առաջից աներևույթ լինի, ձեր հիշատակն էլ պիտի թառամի: Գերեզմանափոսի մեջ ծածկվելուց որոշ ժամանակ հետո, թող զարմանալի և տարօրինակ չթվա, ձեր սերը ամենամոտ սիրելիների սրտում իսկ մոմի լույսի պես պիտի նվազի: Այսօրվանից մտածեք, թե իրապես արժի՞ այսպիսի ժամանակավոր երկրային հաճույքների ու վա-

յելքների համար ձեր անձը մատնեք հավիտենական դատապարտության:

Սա իրական դեպք է, պատմում է ինքը մեքենայի արկած ունեցողը՝ Մամբրե Աբեղա Տաշչյանը: Ես այն մեջ եմ բերում վերցված ֆեյսբուքից, ինչպես որ Հայր Սուրբը գրել էր:

«Օրհնությամբ Աստծու վերադարձա երկրային կյանք»

Այն ինչի մասին ուզում եմ պատմել, շատերին անիրական, ֆանտաստիկ կթվա: Ինքս էլ գուցե այնքան էլ չհավատայի, եթե լսեի մեկ ուրիշից, քանզի կարծում էի՝ անհավանական է լինել Արարչի մոտ և այնուհետև վերադառնալ երկիր…»:

Այստեղ Հայր Սուրբը պատմում է, թե ինչպե՞ս է տեղի ունեցել իր մեքենայի արկածը, ի՞նչ պայմաններում և ապա ինքը ինչպե՞ս է հայտնվել անգիտակից վիճակում ու հետո ի՞նչ է պատահել: Բնականաբար նրան այցելել են Վեհափառ Հայրապետը, ծնողները, ընկերները, բայց ինքը ոչինչ չի զգացել ու շարունակում է.

…«Վթարից անմիջապես հետո ես կարծես տեղափոխվեցի մի ուրիշ աշխարհ: Քաղցր նինջը պատեց աչքերս, և ես սկսեցի բարձրանալ: Մարդկային լեզուն ի զորու չէ նկարագրել իմ տեսած գեղեցկությունը: Անծայրածիր կանաչ տարածություններ՝ ծաղկազարդ ու խնկաբույր: Այդ վայրը թվում էր այնքան սքանչելի, որ կարող էի հավիտենություն անհոգ ապրել: Այս դրախտային վայրում մի մեծ ու գեղեցիկ տուն կար: Ներս մտնելով՝ տեսա մի սպիտակամորուս, փառահեղ ծերունու, որն ինձ ընդառաջ էր գալիս: Ես անմիջապես հասկացա, որ ինձ բախտ է վիճակվել, սեփական աչքերով տեսնել ՆՐԱՆ՝ Տիեզերքը Արարողին, մեր բոլորի Հայր Աստծուն: Ողջունելուց հետո ինձ ծանոթացրին տան պայմաններին: Այստեղ ինձ հյուրասիրեցին երկնային ուտելիքներով՝ սուրբ հացով և

փլավով: Ինձ համար ամենազարմանալին այն էր, որ այնտեղ կար ինչ որ հսկա իր, որը ցույց էր տալիս, թե ինչ է կատարվում երկրում: Այդ հիասքանչ վայրում շատ մարդիկ կային: … Նրանց մեջ ես ճանաչեցի մեր հարևանուհիներից մեկին (որը ինչպես հետագայում իմացա, մահացել էր իմ վթարի ենթարկվելուց մի քանի օր անց):

Այն ինչ կատարվում էր այս դրախտային վայրում, պարզապես հրաշք էր: Այստեղ կարծես չկար ժամանակ, համենայն դեպս, ես այն չեմ զգացել: Ինքս ինձ զգում էի հավիտենության ու երանության գրկում: Ամեն ինչ անկեղծ ու անբասիր էր, հետաքրքիր, հիասքանչ: Մեզ տեղեկացնում էին ամեն բանի մասին, մենք տեսնում էինք ամեն ինչ:

Միառժամանակ հետո, սպիտակափառ ծերունին, ինքը՝ Հայր Աստված, կանչեց ինձ և ասաց, որ պետք է վերադառնամ երկիր՝ ծնողներիս և ինձ սպասող մյուս մարդկանց մոտ: «Ես քեզ հետ եմ ուղարկում երկիր,- ասաց նա,- հորդ ու մորդ մոտ, և քեզ տեսնելով՝ շատ մոլորյալներ դարձի են գալու ու հավատալու են ինձ»:

Ես ասացի, որ չեմ կարող վերադառնալ, քանի որ հետդարձի ճանապարհը չգիտեմ: Նա մի հրեշտակի կարգադրեց ուղեկցել ինձ;

Վայրեջքը նույնքան հուզիչ էր, որքան վերելքը: Իջնելիս աչքս ընկավ խոր գետնախորշերի, որտեղից մարդկային սրտակեղեք ձայներ էին լսվում: Այդ չարագուշակ փոսերում ես տեսա հսկայագլուխ շներ (կարծեմ՝ Կերբեր էին անվանում): Այդ գազանների երախն այնքան մեծ էր, որ մարդ առանց դժվարության կարող էր մտնել այնտեղ և դուրս գալ: Հրեշտակն ասաց, որ դրանց մոտ գցում են չար մարդկանց:

Քիչ անց հրեշտակն այլևս ինձ հետ չէր: Հետդարձս կատարված էր: Ես երկրի վրա էի՝ շրջապատված ինձ հարազատ մարդկանցով» (Ֆեյսբուքում դրված է Հրաչ Բեգլարյանի «Հրաշքների մասին» գրքից):

«Ես հավատում եմ քեզ, սիրելի Հայր Սուրբ, քանի որ այս աշխարհում և հավիտենական կյանքում ամեն ինչ կատարվում է Աստծու կամքով: Դրա համար ամեն անգամ «Հայր մեր» Տիրոջ աղոթքը արտասանելիս ասում ենք. «Թող Քո կամքը լինի՝ ինչպես երկնքում, այնպես էլ երկրի վրա»: Թողնենք ամեն ինչ Աստծու կամքին ու Նրա տնօրինությանը: Վստահ եղեք թե՛ հոգեպես և թե՛ ֆիզիկապես շատ ավելի հանգիստ ու խաղաղ կլինենք: Քեզ երկար կյանք, սիրելի Հայր Սուրբ»,-այսպես գրեցի ես իր ժամանակին ի պատասխան այս գեղեցիկ վկայության: Հիմա հերթը ձերն է հավատալո՞ւ կամ չհավատալու: Հավատաք՝ պատրաստ կլինեք հավիտենական կյանքին, չհավատաք՝ հանկարծակիի պիտի գաք, երբ հեռանաք այս աշխարհից:

Երբ դուք ձեր մեղքերի պատճառով դատապարտվեք, այնտեղ աշխարհը կամ ձեր սիրելիները ձեզ ի՞նչ մխիթարություն կամ ի՞նչ օգնություն կարող են ցույց տալ: Նույնպես աշխարհում վայելած ձեր հաճույքները վերջին դատաստանի օրը ձեր չարչարանքների դիմաց ի՞նչ մխիթարություն կարող են լինել. կերուխումը, խաղն ու պարը կարծո՞ւմ եք դեռևս իրենց ազդեցությունները կունենան կամ այն ներդաշնակ նվագարանների ձայները դեռևս կլսվե՞ն. իհարկե՝ ո՛չ, դրանց փոխարեն միայն պիտի լսվեն՝ հավիտենական ողբ, հուսահատություն ու հառաչանք: …Դատաստանի օրը փոխանակ օգնություն կամ մխիթարություն լինելու, ավելի դառնություն և դժոխային մի կյանք պիտի լինեն, որովհետև սրանք Հովնաթանի նման քեզ հավիտյան պիտի աղաղակել տան. *«Ճաշակելով ճաշակեցի մի քիչ մեղր և ահա ես պիտի մեռնեմ»,* որովհետև սրանք ձեզ պիտի հիշեցնեն, թե ինչպես ձեր վայելած հեշտ կյանքը մի կաթիլ մեղրի նման ոչինչ ու բոպեական մի բան էր, սակայն նրանց համար սահմանված պատիժները սոսկալի ու հավիտենական են: Քանի դեռ այդ վիճակի մեջ չեք ընկել, ձեզ համար կա հույս ու հնարավորություն փրկվելու: Ձեր կամքով բաժանվեք մարմնից ու աշխարհից, քանի դեռ մահը ձեզ բռնությամբ չի բաժանել: Աստծուն հաճելի ու Նրա կամքը փնտրե՛ք, ձեր սիրտն ու սերը ամբողջովին Նրա՛ն նվիրեք և հաղթելով ձեր դեմ եղած արգելքներին, առա՛ջ գնացեք փրկության նեղ ճանապարհով դեպի լայն ճանապարհը: Ամեն:

ՆԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ

«Այստեղ աշխարհում նեղություն պիտի ունենաք, սակայն քաջալերվեցե՛ք, որովհետև, ես հաղթեցի աշխարհին» - ասում է մեր Տերը
(Հովհ. 16:33)

Աշխարհում գնալով ավելանում է բժիշկների, բժշկական տեխնիկայի, դեղամիջոցների քանակը, բարձրանում է բուժման մակարդակը, բայց չեն պակասում հիվանդությունները: Ընդհակառակը ավելանում է դրանց քանակը, տեսակը, հին հիվանդությունները փոխում են իրենց տեսքը… Առաջին հայացքից դրա պատճառն անհասկանալի կարող է թվալ, սակայն բավական է հիշել հիվանդության բուն պատճառը, մեղքը, որպեսզի ամեն ինչ իր տեղն ընկնի:

Հետաքրքիրն այն է, որ մեր հոգևոր հայրերը մարդու համար անհրաժեշտ են համարել նեղությունները, հալածանքներն ու հիվանդությունները: Դրանք դեղ են համարել քրիստոնյայի հոգու համար: Մարդու համար անհամեմատ ավելի վատ է, եթե նա ո՛չ մի փորձություն ու վիշտ չի ճաշակում: Այդպես հնարավոր է մոռանալ Նրա մասին և հեռանալ Երկնքի Արքայություն տանող ճանապարհից: Աստծուն գոհություն և փառք պիտի տաս, երբ Նա քեզ որոշ փորձություն է ուղարկում: Դա նշանակում է, որ Նա քեզ չի մոռացել և Իր շնորհը չի վերցրել քեզնից:

Ահա թե ինչ է պատմում հոգևոր հայրերից մեկը, որն Ալեքսանդրիայում Եկեղեցի էր մտել աղոթելու համար: Նա այնտեղ տեսնում է մի սևազգեստ այրի կնոջ, որը Փրկչի պատկերի առաջ աղոթում և լաց էր լինում, անընդհատ կրկնելով. *«Մի՛ լքիր ինձ, Տեր, գթա, ողորմած»:*

Երբ նրան պատճառն են հարցնում, նա պատասխանում է. *«Հայր իմ, չգիտես իմ վիշտը»,*- լաց լինելով ասում է կինը,- *«Ես ապրում եմ Աստծուց մոռացված: Տերը մոռացել է ինձ այցելել և արդեն երեք տարի է, որ ո՛չ մի*

վիշտ չեմ տեսել: Ո՛չ ես եմ հիվանդացել, ո՛չ՝ որդիս: Նույնիսկ մի հավ չի կորել իմ տանից: Մտածում եմ երևի իմ մեղքերի համար է Աստված լքել ինձ և աղաչում եմ, որ Նա որորմի ինձ»:

Ահա թե աստվածավախ մարդիկ ինչպես են ընդունում երկար ժամանակ անցավ կամ անփորձանք մնալը: Նեղությունները համարում են իրենց նկատմամբ ցուցաբերած առանձնակի ուշադրության արդյունք: Անհնար է, որ քրիստոնյան իր կյանքն Աստծուն նվիրելով զերծ մնա փորձություններից: Սիրաքն ասում է. *«Որդյա՛կ, եթե նըվիրվում ես Տիրոջը ծառայելու, քո անձը փորձությունների պատրաստիր: Ուղղի՛ր քո սիրտը, համբերի՛ր և շփոթության մի՛ մատնվիր աղետների ժամանակ» (Սիրաք 2:1-2):*

Տիրոջը նվիրված կյանքը լի է փորձություններով, ցավերով, վշտերով ու տառապանքներով: Իսկ մեղքի համար ստացած արդարագույն պատիժն այն է, որ մարդ կորցնում է այն, ինչը չի ցանկացել լավ օգտագործել: Եթե ասենք առողջությունը ճիշտ չի օգտագործվել, այն խաթարվում է, կորչում: Նույնպես նաև Տիրոջ կողմից տրվող մյուս պարգևները:

Բնականորեն ոմանք կարող են առարկել, թե՝ *«Ի՞նչ անենք, թողնենք, որ նեղությունը կորստյա՞ն մատնի մեզ«:* Սխալ մտածում է ու թերահավատներին բնորոշ: *«Ո՛չ թե նեղությունն է այդ անում, այլ՝ մեր ծուլությունը»: «Իսկ ի՞նչ կարելի է անել դրանից խուսափելու համար»,*- կարող է հարցնել մեկ ուրիշը: Պատասխանը պարզ է. եթե արթուն լինենք ու խնդրենք Աստծուն, որ մեր ուժից վեր մեզ փորձության չենթարկի:

«Դրա համար գոհունակությամբ համակերպվում եմ տկարություններին, նախատինքներին, վշտերին, հալածանքներին, և նեղություններին՝ Քրիստոսի համար. որովհետև, երբ տկար եմ. այն ժամանակ եմ զորավոր» (Բ.

Կորնթ. 12:10),- ասում է Պողոս Առաքյալը Կորնթացիներին ուղղված իր երկրորդ թղթում:

Ֆրանսիացի հայտնի մաթեմատիկոս Բլեզ Պասկալը, որը 24 տարեկանում հիվանդանում է շատ ծանր և աղոթքի ու խորհրդածությունների ժամանակ գրում է. *«Դու ինձ առողջություն շնորհեցիր, որպեսզի ուղղես ինձ, ուրեմն մի՛թող, որ զայրացնեմ Քեզ իմ անհամբերությամբ»* և ապա շարունակում է. *«Տեր, շնորհիր ինձ ուժ, որ կարողանամ զգոնությամբ վերաբերվել բոլոր իրադարձություններին… Չգիտեմ, թե ի՞նչն է օգտակար ինձ առողջությո՞ւնը, թե՝ հիվանդությունը, հարստությո՞ւնը, թե՝ աղքատությունը: Այդ մասին դատելը վեր է մարդու և հրեշտակների ուժերից, այն ծածկված է Քո նախախնամության գաղտնիքներում, ինչի առջև խոնարհվում եմ չհանդգնելով հասու լինել դրան»:*

Ընդհանրական Քրիստոնեական Եկեղեցու Հայրերից Օգոստինոս Հայրապետն ասում է.

«Քննությունը ցույց է տալիս, որ մարդն ինչպիսի մեղք էլ որ գործի, այն առաջին հերթին ուղղված է ո՛չ թե Աստծու, այլ սեփական անձի դեմ, «որովհետև նույնիսկ ինչով որ հանցավոր են Քո հանդեպ, դրանով իսկ չարիք են գործում իրենց հոգիներին»:

Երկրի վրա երջանկություն մի՛ փնտրիր; Երկիրը դրախտ չէ: Ադամի մեղքից և արտաքսումից հետո երկրի վրա դրախտ չկա: Եվ աշխարհում ամեն ոք իր խաչն ունի: Այն յուրաքանչյուր մարդու համար հենց իր ուժերի չափ է, ո՛չ ծանր, ո՛չ թեթև: Ճիշտ է ամեն ոք ունի իր խաչը, բայց մեկն այն կարող է կրել հոգու փրկության, մյուսը՝ այն ծառայեցնել իր կործանման համար: Տերը մեզնից յուրաքանչյուրի վրա Իր խաչը դնելով ցանկանում է, որ մենք այն ծառայեցնենք մեր փրկության համար:

Սբ. Գրիգոր Տաթևացին ասում է. *«Մի՛ նախանձիր ուրիշին, համարելով, թե նրա խաչն ավելի թեթև է: Խաչի ծանրությունն ու կշիռը ո՛չ ոք չի կարող իմանալ բացի*

նրանից, ով, այն կրում է: Անկասկած է միայն, որ դու ինչպիսի խաչ էլ, որ ընտրելու լինես քեզ համար, ո՛չ մեկը քեզ հարմար չի լինի, բացի քո խաչից: … Տերն ավելի լավ գիտի, թե մեզնից ամեն մեկին ի՞նչ է պետք, ինչպիսի ծանրություն դնի յուրաքանչյուրիս ուսերին, ինչպիսի պայքար, ինչպիսի փորձություններ տա մեզ…»:

Անշուշտ հիվանդության ժամանակ պետք է բժշկի դիմել, բայց հարկավոր չէ խուճապի մատնվել, և պետք է հույսը դնել Տիրոջ վրա: Վախը, հուսահատությունը վատ խորհրդատուներ են նման դեպքում: Քանի որ բժշկությունն աստվածահաճո գործ է, հենց իրենք բժիշկներն էլ չեն կարող բուժել առանց Տիրոջ կամքի: Դրա համար էլ՝ *«Կարդալով բժշկական գրքեր, կամ հարցնելով նրանց մասին որևէ մեկին, մի՛ մոռացիր, որ առանց Աստծու ո՛չ ոք բժշկություն չի ստանում: Արդ, ով իրեն նվիրում է բժշկության արվեստին, պետք է իրեն հանձնի Աստծու անվանը և Աստված կօգնի նրան: Բժշկության արվեստը չի խանգարում մարդուն բարեպաշտ լինել» (Աբբա Դորոթեոս, էջ 294):*

Մեր խորհուրդն է, որ հիվանդությունների ժամանակ բժիշկներին ու դեղերին դիմելուց առաջ աղոթեք Սուրբ Սերապիոն եպիսկոպոսի նման, այսպես.

«Տեր Հիսուս, Դու ես մեր օգնականը, Քո ձեռքերում ենք: Դու գիտես մեր լավն ու վատը՝ օգնի՛ր մեզ: Մի՛ թող մեզ մեր կամքով շարժվենք, մի՛ թող մեզ կորչենք մեր մեղքերի մեջ, այլ գթա՛ Քո ստեղծածին, մի՛ անտեսիր մեզ մեր մեղքերի պատճառով, որովհետև մեր հույսը Դու ես: Բժշկի՛ր մեր անձը, որովհետև մեղանչեցինք Քո հանդեպ, Քեզանից բացի ուրիշ ապավեն չունենք: Փրկի՛ր մեզ ըստ Քո ողորմության և թող ամաչեն բոլոր նրանք, որոնք Քո անվան համար հարձակվում են մեր վրա ու այդ ձևով ձգտում են մեզ հեռացնել Քեզանից, որովհետև Դու, Տեր, Ամենակարող ես և Քոնն է փառքը հավիտյանս» (Աղոթագիրք, Գանձասար, 1992թ., էջ 36-37): Ամեն:

ԱՌԱՋԻՆ ՀՐԱՇՔԸ

«Գինի ոչ ունին» - «Գինի չունեն»
(Հովհ.2:4)

Գալիլիայի Կանա քաղաքի համեստ տներից մեկում մի հարսանիք կար: Հիսուս նույնպես հրավիրված էր Իր մոր ու աշակերտների հետ: Հարսանեկան ուրախության կեսին գինին պակասում է: Հիսուսի մայրը մոտենում է Նրան ու ասում. *«Գինի չունեն»*: Հիսուս պատասխանում է. *«Ի՞նչ ես ուզում ինձնից, ո՞վ կին, իմ ժամանակը դեռ չի հասել» (Հովհ. 2:3-4):*

Հակառակ Հիսուսի այս պատասխանին՝ մայրը թելադրում է սպասավորներին կատարել Նրա ասածը: Հիսուս հրահանգում է ջրով լցնել քարե այն վեց ամանները, որոնք, ըստ հրեական ավանդույթի, դրված էին տան մի անկյունում: Սպասավորներն այդ ամանները բերնեբերան լցնում են ջրով և տանում են սեղանապետին (թամադային): Երբ սեղանապետը համտեսում է գինու փոխված ջուրը, զարմանում է ու փեսային ասում. *«Ամեն մարդ նախ ընտիր գինին է մատուցում, և երբ հարբած են, այն ժամանակ՝ վատը: Իսկ դու ընտիր գինին մինչև հիմա պահել ես» (Հովհ. 2:10):*

Պատմությունն այստեղ վերջանում է: Հովհաննես ավետարանիչը միայն ավելացնում է. *«Հիսուս այս առաջին նշանն արեց Գալիլիայի Կանա քաղաքում որպես սկիզբը նշանների և հայտնեց իր փառքը, ու նրա աշակերտները հավատացին նրան» (Հովհ. 2:11):*

Առաջին ընթերցումից թվում է, թե սա մի պարզ պատմություն է, բայց հիմա կհամոզվեք, թե ինչ հարուստ և խոր իմաստ ունի այն:

Կանա քաղաքում կատարված այս հարսանիքը մեր մեջ արթնացնում է որոշ մտածումներ և ճշմարտություններ:

Առաջին հերթին հրաշքը տեղի է ունենում Կանա քաղաքի համեստ մի ընտանիքում հարսանիքի ընթացքում: Այստեղ երկու կարևոր կետեր կան.

ա. Հիսուս առաջին հրաշքը կատարում է պարզ մի ընտանիքում՝ մի խումբ հարսնևորների ներկայությամբ: Նա Իր փառքն էր ցույց տալիս ընտանեկան հարկից ներս՝ փորձելով շեշտել Աստծու ներկայությունը և ընտանիքի սրբությունը:

բ. Հրաշքը կատարվում էր հարսանեկան մի ուրախության ընթացքում: Հիսուս աշխարհ չեկավ մարդկանց զրկելու աշխարհիկ ուրախություններից, ընդհակառակը, Ինքն էլ մասնակից եղավ նրանց, մի տարբերությամբ միայն թերևս, որ Նա այս երկրավոր ուրախությունը նկատում էր որպես նախապատրաստություն հավիտենական մի մեծ ճաշկերույթի:

Շատերը Հիսուսին համարում են խստակյաց ու ճգնավորական կյանքի քարոզիչ և այդ մատնանշելով՝ փորձում են Նրա վարդապետության մեջ տեսնել մարդկային կյանքի ուրախությունների ու վայելքների ժըխտումը: Անշուշտ, Հիսուսի ուսուցումները հիմնված են աստվածային հավիտենական ճշմարտությունների և մեր բարոյականության վրա: Նա չափավորության կոչ էր անում Իր հետևորդներին ո՛չ միայն ուրախության, այլ նաև վշտի ու տառապանքի մեջ: Իր երեք տարվա առաքելության շրջանում Հիսուս Իր կյանքի օրինակով ցույց տվեց, որ Իր աշակերտների հետ ընդառաջելով հրավերներին՝ Նա մասնակից է դառնում ուրախություններին և տխրություններին, որոնք հարմար առիթներ էին Իր հետևորդներին բացատրելու հավիտենական հրավերի կարևորությունը:

Դժվար է ենթադրել փեսայի ու հարսի ով լինելը, մանավանդ որ ավետարանիչը չի խոսում այդ մասին, սակայն Հիսուսի, Նրա մոր և աշակերտների ներկայությունից կարելի է ենթադրել հարսնետիրոջ ու Հիսուսի

ընտանիքի միջև մոտավոր բարեկամական կապի մասին: Այս ենթադրությունը ավելի հատկանշական է դառնում հարսանեկան ուրախության նկատմամբ Հիսուսի մոր ցուցաբերած նախանձախնդրությունը, երբ հանկարծ հարսանիքի մի ուրախ պահին գինին վերջանում է: Նա խնդրում է Որդուն ցուց տալ Իր աստվածային զորությունը: Հակառակ մորը տված բացասական թվացող պատասխանին, թե՝ *«դեռևս ժամանակս չի հասել»*, Հիսուս կատարում է ջուրը գինու փոխակերպելու հրաշքը:

Մեր Տիրոջ *«դեռ ժամանակը չի հասել»* խոսքը չպետք է այնպես հասկանալ, թե Նա նոր էր սկսում Իր առաքելությունը: Նա արդեն իսկ սկսել էր Իր առաքելությունը, հավանաբար խոսքն այստեղ հավիտենական կյանքի և այդ ընթացքում Նրա տալիք գինու շնորհքի բաշխման մասին է: Վեց մեծ ամաններում դրված ջրի՝ գինու փոխակերպումը խորհրդանիշն է Իր առատ շնորհների բաշխման: Գինին մարդկային կյանքում ուրախության խորհրդանիշն է: Հիսուս աշխարհ եկավ մարդկանց հաճույք և ուրախություն բերելու, դրա համար պակասած գինու փոխարեն նոր և ընտիր գինի տվեց հարսնևորներին, որպեսզի նրանց ուրախությունը չընդհատվեր:

Կանայի հարսանիքի ընթացքում կատարված հրաշքը խորքում մի կոչ է՝ ուղղված յուրաքանչյուր քրիստոնյայի, իր կյանքը ներդաշնակելու Քրիստոսի կտակ թողած կյանքի հետ: Մանավանդ այսօր, 21-րդ դարի կյանքի պայմաններում, ավելի հրամայական է դառնում, որ մեզանից ամեն մեկը մի պահ վեր բարձրացնի իր հայացքը՝ տեսնելու համար աստվածային ճշմարտությունները, որոնք հեշտությամբ կարող են մեր կյանքը Քրիստոսի հրաշագործ գինու նման կերպարանափոխել և վերածել շնորհքի տաճարի ու աստվածային մշտատև ներկայության մեր մեջ:

Հարսանիքի առաջին րոպեներին հյուրասիրված գինին, որ ըստ սեղանապետի *«հասարակ»* էր, կարծես

խորհրդանիշն է աշխարհիկ, ժամանակավոր և երբեմն հրապուրիչ այն երևույթների, որոնցով մարդիկ ուզում են իրենց ժամանակը անցկացնել, իսկ *«ընտիր»* գինին՝ հյուրասիրված Հիսուսի կողմից, աստվածային ճշմարտությամբ արմատավորված կյանքն է, որ վեր է ամեն տեսակի խաբուսիկ երևույթներից ու վայելքներից: Միայն Քրիստոսով ու Իր հյուրասիրած շնորհք-գինով է, որ մարդն ունենում է իսկական կյանքի վայելք և աստվածային ճշմարտության կատարյալ գիտություն:

Ուրեմն, մոտենանք Հիսուսին և խմենք Նրա քաղցրահամ գինուց, որ մեզ պիտի առաջնորդի դեպի մաքրություն, ազնվություն և արդարություն: Եվ այդ գինով արբած՝ մեր Տիրոջ շնորհներով լցնենք մեր սրտերն ու հոգիները, սիրով ու աղոթքով առ Աստված ուղղենք մեր խնդրանքները, որպեսզի Նա օգնի մեզ հավատով շարունակելու մեր կյանքը՝ միշտ փառք ու պատիվ ընծայելով Ամենաբարձրյալին: Ամեն:

ԿԵՆԴԱՆԻ ՀԱՑԸ

«Ես եմ կենաց հացը. ով դեպի ինձ գա, քաղց չի զգա, և ով ինձ հավատա, երբեք չի ծարավի»
(Հովհ. 6:35)

Մարդկային մտածողությունը հաճախ սահմանափակվում է միայն աշխարհիկ բաներով: Սուրբ Հովհան Ոսկեբերան Հայրապետն ասում է. *«Մարդը կառչել է երկրային կյանքի նյութերին»:*

Բնական է, որ առանց հացի չենք կարող ապրել: Հացի խնդիրը արտաքնապես կարևոր է, սակայն այնտեղ, որտեղ չկա մի կտոր հաց, և աղքատության երեսից մարդիկ կեղտոտ, խոնավ ու մութ սենյակներում են ապրում, անմտություն պիտի լիներ այնտեղ բարձր քաղաքակրթության, արվեստի և գիտության զարգացման մասին խոսել…

«Օրինակի համար հավաքեցեք մարդկանց ցուրտ, օդից զուրկ նկուղներում և նվագեցեք Բեթհովենի Իններորդ սիմֆոնիան կամ ցուց տվեք նրանց դասական հանճարեղ նկարիչների ու բանաստեղծների մեծագույն գործերը, գոհ պիտի լինեք, եթե նրանք ձեզ դուրս չնետեն այնտեղից: Եթե մեկը մի կտոր հաց չունի, քաղցած է, հագուստ չունի և մրսում է, այնտեղ ինչպե՞ս կարող ես բարձր ստեղծագործությունների, քաղաքակրթության և հոգևոր կյանքի մասին խոսել»,- ասում է երջանկահիշատակ Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանցը:

Սակայն սա կյանքի մի երեսն է, քանի որ պարզ է, որ մեր ֆիզիկական գոյության համար նյութական հացի չափ անհրաժեշտ է նաև հոգևոր հացը: Հիսուս հիշեցնում է մեզ, որ չպետք է աշխատենք միայն նյութական սննդի համար, այլ այն հոգևոր սնունդի, որը մնում է հավիտենական կյանքում:

Հիսուս սովորական հոգևոր մի առաջորդ, մարգարե կամ վարդապետ չէր։ Նա Երկնավոր Հացն էր, որ ծնվեց Բեթղեհեմում։

Որքան գեղեցկորեն է այս ճշմարտությունը ամփոփել բազում դարեր առաջ Ընդհանուր Եկեղեցու հայրերից Սուրբ Հովհան Ոսկեբերան Հայրապետը. *«Տեր Աստված մեր… Քո երկնավոր Հացը, մեր Տեր Հիսուս Քրիստոսին ուղարկեցիր իբրև Փրկիչ, Կյանք և Բարիք բերող ուտելիք ամբողջ աշխարհի համար՝ սրբելու և օրհնելու մեզ… (Պատարագամատույց)։*

20-րդ դարի մեր շնորհալի Հայրապետներից Գարեգին Արքեպս. Հովսեփյանցը հրաշալի կերպով է բնութագրում հացի խնդիրը.

«Բայց ճշմարիտ է նաև, որ մարդկության երջանկությունը միայն հացից, հարստությունից կախված չէ։ Քի՞չ են հարուստ և դժբախտ մարդիկ։ Կան և հարստության թըշվառ զոհեր։… Հացի խնդիրը սուրբ է աղոթքի մաս կազմող մաքրությամբ, բայց ո՛չ ուրիշների արյան գնով։ Ինչ որ կամենում եք, որ մարդիկ ձեզ անեն, արեք և դուք նրանց… Ապրի՛ր, թող ուրիշներն էլ ապրեն։ Չե՞ս կամենում, որ սոված մնաս, դու, կինդ, զավակներդ. մի՛ ստեղծիր ուրիշի համար այդպիսի վիճակ։ Չե՞ս կամենում կեղտի մեջ կորչել աղքատության երեսից, ցնցոտիներով տեսնել կնոջդ, երեխաներիդ, մի՛ աշխատիր այդպիսի դրություն ստեղծել ուրիշների համար։ Ո՛հ, ինչ կորստաբեր է լինում երբեմն հաց ձեռք բերելու սխալ ճանապարհը, հազարավոր կյանքերի կորուստ, նյութական, մշակութային, բարձր ստեղծագործությունների ոչնչացում, ինչպես հացի անունով կեղեքումներն են կամ պատերազմները…» (Դեպի լույս և կյանք, 1994)։

Կյանքում երկու տեսակ քաղց կա. ֆիզիկական և հոգեկան։ Նյութական ուտելիքը կշտացնում է մեր ֆիզիկական քաղցը, բայց չի զոհացնում մեր հոգեկան ապրումները։

Հույն պատմիչներից Պլինոսը շատ ճիշտ կերպով է վերլուծում մարդկանց այս հոգեվիճակը: Նա վկայում է, թե Հռոմեական կայսրությունը, Ք. Հ. 60-ական թվականներին ապրում էր իր փառավորագույն շրջանը: Հռոմեացիները, ծանրացած ոսկով, հեշտորեն գոհացնում էին իրենց ֆիզիկական կարիքները, սակայն այդ ճոխության ու շռայլության մեջ կյանքի հանդեպ դժգոհությունը ուրվականի պես հետապնդում էր նրանց: Այդ նրանց ունեցած հոգեկան դատարկությունն էր, որը նրանք ի զուր փորձում էին լցնել աշխարհիկ վայելքներով:

Երբ մի հայացք նետենք մեր ապրած դարաշրջանի վրա, պիտի տեսնենք, որ դժբախտաբար ամենուր գտնվում են նույն այն հոգեվիճակում, ինչպիսին էր ժողովուրդը Հռոմեական կայսրության ժամանակ:

Քսանմեկերորդ դարը գերազանցել է բոլոր նախորդ դարերի ճոխությունն ու փարթամությունը: Մարդիկ դրամով լցրած իրենց գրպաններով վազում են երկրային վայելքների ու հաճույքների ետևից: Նրանք դրամը համարում են իրենց կյանքի գլխավոր նպատակն ու դժբախտաբար դառնում իրենց վաստակած նյութի գերին:

Մեր Տերը Վերջին Ընթրիքի ժամանակ հաստատեց Հաղորդության Սուրբ Խորհուրդը, վերցրեց հացը, օրհնեց, կտրեց և տվեց աշակերտներին՝ ասելով. *«Այս է իմ մարմինը, որ շատերի համար է տրված. այս արեք իմ հիշատակի համար».* բաժակով գինին էլ օրհնեց և ասաց. *«Այս բաժակը նոր Ուխտ է իմ արյունով՝ ձեզ համար թափված» (Ղուկ. 22:19-20):*

«Չենք ապրում ուտելու համար, այլ ուտում ենք ապրելու համար»: Երբ Հիսուս քառասուն օրեր անապատում ապաշխարությամբ անցկացրեց և չկերավ ու չխմեց, սատանան Նրան ուզեց փորձել. *«Եթե Աստծու որդի ես, այդ քարին ասա, որ հաց լինի»:* Հիսուս նրան պատասխանեց. *«Գրված է՝ «Միայն հացով չէ որ կապրի մարդ, այլ Աստծու ամեն խոսքով» (Ղուկաս 4:3-4):*

Հիսուս մեզ հորդորում է, որ լսենք Իր ձայնը. *«Գնացե՛ք աշխատեցե՛ք ո՛չ թե կորստական ենթակա կերակրի համար, այլ այն կերակրի, որը մնում է հավիտենական կյանքի համար և որը մարդու Որդին կտա ձեզ...» (Հովհ. 6:27):*

Եկե՛ք լսենք մեր Տիրոջ ձայնը և մոտենանք Իր կենդանի հացին ու ճաշակենք նրանից, որպեսզի հավիտենական կյանք ունենանք: Ամեն:

ՀԵՌԱՑՐՈՒ ՉԱՐԻՔԸ

«Եվ եթե քո աջ ձեռքը քեզ գայթակղեցնում է,
կտրի՛ր այն և դե՛ն գցիր քեզնից»
(Մատթ. 5:30)

Ի՞նչ եք կարծում Հիսուս այս խոսքերն ասելիս, նկատի ունե՞ր, որ մենք այն կիասկանանք ճիշտ այնպես, ինչպես գրված է: Անշուշտ՝ ո՛չ:

Ժամանակին պատահել է այս դեպքը, երիտասարդներից մեկը, բառացիորեն ընդունելով Հիսուսի այս խոսքը, կացնով կտրել է իր ձեռքը: Բարեբախտաբար, աշխարհի պատմության ընթացքում, այդպիսի դեպքեր հազվադեպ են եղել: Այնուամենայնիվ մեզանից շատերը մի տեսակ մտածմունքի մեջ են ընկնում, երբ փորձում են հասկանալ, թե իրականում Հիսուս ի՞նչն է նկատի ունեցել այս խոսքը ասելիս: Հետաքրքիրն այն է, որ Նա օգտագործել է տեղի բարբառային մի դարձվածք՝ արտահայտության մի ձև, որը ո՛չ միայն տարօրինակ, այլև իր բառացի նշանակությամբ խորթ է մեր ազգի մտածելակերպին:

Կարող եք հարցնել, թե դա ի՞նչ արտահայտության ձև է:

Եթե ուշադիր ռուսումնասիրենք, կտեսնենք, թե բոլոր ժողովուրդների մեջ էլ կան արտահայտության ձևեր, որոնք եթե բառացիորեն ընկալենք, կընկնենք ծիծաղելի վիճակի մեջ: Անշուշտ մեր լեզվում էլ կան այդպիսիք, որոնք վերաբերում են օրինակ՝ ձեռքերին: Որպեսզի ավելի լավ կարողանանք բացատրել մեր այս ասածը, մեջ ենք բերում փոքրիկ դրվագներ.

«Պողոս անունով մեկը մի աղջիկ ուներ, որը չափազանց անհնազանդ էր: Նա ամեն կերպ ուզում էր իր ձեռքի տակ պահել դստերը, բայց փաստորեն ձեռքից բաց էր թողել աղջկա դաստիարակությունը»:

«Հակոբը մեքենան ձեռք էր բերել երկրորդ ձեռքից, բայց իրականում այն բազմաթիվ ձեռքերով էր անցել»:

Մի օր երիտասարդ Հակոբը Պողոսից խնդրեց նրա դստեր ձեռքը:

Ամուսնանալուց հետո Հակոբը հաճախ էր ձեռք մեկնում իր կնոջ հայրական ընտանիքին, թեև ընդհանրապես փակ ձեռ մարդ էր»:

Կարդալով այս պատմությունը, եթե փորձենք ձեռքերի հետ կապված բառերը առանձին հասկանալ ուղղակիորեն՝ բուն իմաստը կկորչի:

Հիսուս ասում է. «Եթե քո աջ աչքը քեզ գայթակղեցնում է, հանիր այն և դեն գցիր քեզնից»:

Իսկ մինչ այդ Նա ասել էր.

«Եթե քո աջ աչքը քեզ գայթակղեցնում է, հանիր այն և դեն գցիր քեզնից» (Մատթ·5:29):

Այստեղ Նա նույնպես օգտագործել է մի արտահայտության ձև, որը ժամանակին կատարելապես հասկանալի էր Իրեն լսողների համար: Աչքերի մասին մեր դարձվածքներից շատերը նույնպես անհասկանալի կլինեն օտար մի մարդու, երբ մեր լեզուն սովորելիս նա առաջին անգամ հանդիպի այդ արտահայտության ձևերին:

Արամերեն լեզվում, որով խոսում էր Հիսուս, գոյություն ունեին արտահայտության ձևեր, որոնք այսօր մեզ համար դժվար հասկանալի են դարձնում ձեռքերի և աչքերի կիրառությունը, բայց սրանից երկու հազար տարի առաջ Պաղեստինում ապրող ժողովրդին միանգամայն հարազատ էին:

Այս եզրակացությունը հիմնավորում է նաև ժամանակակից ասորի մի գիտնական՝ Դոկտոր Ջորջ Լամսան:

Նա ծնվել ու մեծացել է Քյուրդիստանի Շաոյրիլա երկրամասում: Այստեղի ժողովուրդը ապրել է ինքնամփոփ և օտար քաղաքակրթություններին անհաղորդ է մնացել ավելի քան երկու հազար տարի: Հետաքրքիրն այն է, որ մինչև այժմ նրանք պահել են Հիսուսի օրերի լեզուն ու սովորույթները: Լամսան հաստատում է, որ ինքը և իր հայրենակիցները կատարելապես կհասկանան Հիսուսին,

եթե Նա վերադառնա երկիր և խոսի ճիշտ այն լեզվով ու նույն դարձվածքներով, ինչպես խոսել էր Հրեաստանում՝ առաջին դարում:

Նա ասում էր, որ իր ժողովուրդը մինչև հիմա օգտագործում է *«Կտրի՛ր ձեռքդ»* արտահայտությունը, որը նշանակում է *«դադարիր ինչ որ բան անելուց»:* Երբ նրանք ասում են *«Կտրիր ձեռքդ իմ խաղողի այգուց»,* ապա նրանք ուզում են ասել *«Մի՛ քաղիր իմ խաղողը»:* Ասել է, որ մի մարդու ձեռքը չափազանց երկար է, նշանակում է, որ նա գող է: *«Կարճացրո՛ւ ձեռքդ»,* հաճախ ուղղակիորեն նշանակում է *«Վե՛րջ տուր վատ սովորությանդ»:*

Ուրեմն ակնհայտ է, որ այսպիսի արտահայտության ձևերի իմաստը հատուկ նրբերանգ ունի և շատ հըստակ է, որ Քրիստոս մտադրություն չուներ Իր խոսքը տառացիորեն իմաստավորելու, երբ ասում էր.

«Եթե քո աջ աչքը քեզ գայթակղեցնում է, հանի՛ր այն և դե՛ն գցիր քեզնից»:

Այն պատգամը, որը մեր Տերը Հիսուս Քրիստոս նախատեսել էր ուսուցանել տվյալ խոսքով, վստահաբար կարելի է ասել, որ հետևյալ խորհուրդն ունի.

«Եկեղեցին և քրիստոնյան պետք է միշտ արթուն լինեն եւ ամրապնդեն անձնական կարգապահությունը՝ հեռացնելու համար այն ամենը, ինչը որ չար է:

Քանզի անգամ փոքր չարիքը, հետագայում զարգանալով, կարող է պատճառ հանդիսանալ ողջ կյանքի կորստյան համար, այն սկզբունքով, որ մի փոքրիկ թթխմորը կարող է թթվեցնել ամբողջ զանգվածը»:

Ուրեմն մեր կյանքի իբրև ուղեցույց ունենալով Հիսուսի այս խոսքը, իբրև Եկեղեցի և ժողովուրդ, ձեռքձեռքի տված, միասնական ոգով, հավատով ու սիրով, շարունակենք մեր հոգևոր առաքելությունը հնարավոր չափով մեր միջից հեռացնելով մոլախոտերը, որպեսզի ցորենը ավելի առողջ աճի և առատ հունձք տա: Ամեն:

ՄԵԾ ԽՆՋՈՒՅՔԸ

«Ասում եմ ձեզ, որ այդ հրավիրվածներից
ո՛չ ոք իմ ընթրիքից չի ճաշակի»
(Ղուկ. 14:24)

Հիսուսի այս խոսքը Ղուկաս Ավետարանչի 14-րդ գլխի 16-24 համարներից է, ուր Նա պատմում է մի առակ ճաշկերույթի հրավիրող տանտիրոջ մասին։

«Մի մարդ ընթրիք սարքեց և հրավիրեց շատերին։ Եվ ընթրիքի ժամին իր ծառային ուղարկեց՝ կանչելու հրավիրվածներին։ Եվ ամենքը մեկ-մեկ սկսեցին հրաժարվել։ Առաջինն ասաց. «Ագարակ գնեցի, և պետք է, որ գնամ տեսնեմ. . .»։ Եվ մյուսն ասաց. «Հինգ լուծ եզներ գնեցի, գնում եմ դրանք փորձելու»։ Իսկ մյուսն ասաց. «Կին եմ առել, դրա համար էլ չեմ կարող գալ»։ Եվ ծառան եկավ ու իր տիրոջը պատմեց այս։ Այդ ժամանակ բարկանալով, տանտերն իր ծառային ասաց. «Իսկույն դուրս եկ քաղաքի հրապարակներն ու փողոցները և աղքատներին, խեղանդամներին, կաղերին ու կույրերին բեր մտցրո՛ւ այստեղ։ Եվ ծառան ասաց. «Տե՛ր, ինչ հրամայեցիր՝ կատարվեց և էլի տեղ կա»։ Եվ տերը ծառային ասաց. «Դուրս եկ ճանապարհներն ու ցանկապատերի առաջ և մարդկանց այստեղ մտցրո՛ւ, որպեսզի տունս լցվի»։ Ասում եմ ձեզ, որ այդ հրավիրվածներից ո՛չ ոք իմ ընթրիքից չի ճաշակի» (Ղուկաս 14:16-24)։

Ճաշկերույթը ներկայացնում է Աստծու թագավորությունը, որը մարդիկ կարող են վայելել, երբ կմասնակցեն դրան։ Հիսուս աշխարհ եկավ և առաջին առիթով հրավիրեց Աստծու ընտրյալ ժողովրդին մաս կազմելու Աստծու Թագավորության, սակայն Նրա հրավերը չընդունվեց։

Առակի պատմածի նման Աստված մեզ ամեն Կիրակի Եկեղեցի է հրավիրում։ Նրանք, որոնք գալիս են, պատրաստ թե անպատրաստ, նպատակ ունեն աղոթելու և մաքրվելու Գառնուկ Հիսուսի արյունով։

Եթէ այսպիսի մի ճաշկերույթին հրավիրողը մենք լինեինք և իմանայինք հրավիրվածների մերժողական պատասխանը, բնական է, որ մենք ևս պիտի բարկանայինք ու նեղվեինք։ Բայց հարց է առաջանում, թե՝ *«Ի՞նչ է լուծումը այսպիսի կացության»։* Անշուշտ, որ պիտի չուզեինք փչացնել պատրաստված ուտելիքները։ Եթե թափեինք դրանք, մեր ամբողջ ծրագիրը, աշխատանքը, հույսն ու ուրախությունը չպիտի իրականանային։ Մի բան պիտի մտածեինք։ Նույն հասկացողությամբ ազնվականը փրկում է դրությունը, դրսից ընդունելով աղքատներին, անտուններին, խեղանդամներին, կաղերին ու կույրերին։ Այս արարքով, նա մեզ հիշեցնում է ճաշկերույթին մասնակցել չուզող հրավիրվածներին ուղղված Հիսուսի խոսքը. *«Ասում եմ ձեզ, որ այդ հրավիրվածներից ո՛չ ոք իմ ընթրիքից չի ճաշակի»։*

Ահա տեսնում ենք, թե ինչպիսի ձևով ճաշկերույթը վերածվում է մի մեծ բարեգործության։ Նրանք, որոնք պիտի սպասարկեին բարեկամներին ու ընկերներին, ծառայում են անծանոթ կարոտյալներին։

Բարեկամների ու ընկերների համար ճաշկերույթ տալը սխալ չէ, սակայն Հիսուս հիշեցնում է, թե ավելի բարձր վարձատրություն է սպասում մեզ, երբ մենք հրավիրում ենք այնպիսի մարդկանց, որոնք մեզանից բախտավոր չեն և պետք ունեն օգնության։ Երբ փնտրում ենք կարիքավորներին ու նրանց, որոնք չեն կարող վերադարձնել իրենց տրված բարիքների փոխարենը, այն ժամանակ կատարած կլինենք մեր Տիրոջ պատվիրանը։

Մի ձկնորս գետնից մի քար վերցնելով ծովն է գցում։ Քարը անմիջապես մտնում է ծովի հատակը։ Ահավասիկ մի պատկեր, մի երևույթ, որն Աստծու սերն է բացատրում։ Աստծու սիրտն էլ ծովի պես է։ Սերը օվկիանոսի չափ անհուն ու խորն է, որ կարող է ամբողջ մարդկության մեղքը ընդունել ու ներել։ Արդյոք Աստված հաշվետետր ունի՞։ Ինչո՞ւ պիտի ունենա, երբ միշտ սիրում է ու ներում։

Նետված քարը կարող է վնաս պատճառել ամեն ինչին, բացառությամբ ջրի մեջ ընկնելուց։ Ջուրը քարի հարվածներից չի վնասվում։ Երբ քարը ծովի մեջ է ընկնում, նա միայն ժպտում է ու բարձրաձայն ծիծաղում։ Սակայն, երբ քարով պատուհանին ենք հարվածում, ապակին ջարդ ու փշուր է լինում։ Մեր սիրտը սիրո ու ներողամըտության օվկիանոսի վերածելով, կարող ենք չեզոքացնել ամեն տեսակի թշնամական հարված ու կներենք։ Փոխանակ մարդկանց խոսքերին ուշադրություն դարձնելու, առաջին հերթին քննենք ինքներս մեզ, մեր անձը և ճանաչենք այն։ Սա անշուշտ ամենադժվարն է։ Շատ կարևոր չէ, թե մեր մասին չարախոսողները ի՞նչ են անում և ի՞նչ են ծրագրում։ Մենք մեզ հարց տանք, թե մենք ի՞նչ ենք արել և ի՞նչ ենք անելու ու թե բավական մեծ և խոր սեր ունե՞նք, որ կարողանանք նրանց ցանած չարիքը ջրի մեջ նետված քարի պես անվնաս դարձնել։

Հայ քրիստոնյայի համար շնորհակալություն հայտնելը պետք է լինի իր ամենօրյա պարտքը։ Նախ գոհություն պիտի տանք Աստծուն՝ Իր բարիքների համար, մեր Հոգևոր Ծնող՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին ու Հայաստանյայց Առաքելական մեր Մայր Եկեղեցուն ու մեր Սուրբ Հողին՝ Մայր Հայրենիքին, ինչպես նաև մեր ֆիզիկական ծնողներին՝ իրենց հոգատարության ու խնամքի համար և երկրորդ՝ պատրաստ պիտի լինենք իբրև երանելի հրավիրվածներ, մասնակցելու երկնքում Աստծու հավիտենական ճաշկերույթին։ Ամեն։

ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆ

«Ի՞նչ է ապաշխարությունը»

«Ապաշխարությունը Աստծու դիմաց մարդու խղճի հաշվետվությունն է»,- ասում է Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանցը:

Ապաշխարությունը յոթը խորհուրդներից մեկն է *(Մկրտություն, Դրոշմ, Ապաշխարություն, Հաղորդություն, Պսակ, Կարգ հիվանդաց կամ Վերջին օծում, Կարգ Ձեռնադրության):* Կազմված է *«ապա» և «աշխարել»* բառերից, որ նշանակում է *զղջալ, տրտմել, ցավել, զղջալ հանցանքի, սխալի կամ մեղքի համար*:

Ապաշխարությունը խորհուրդ է կոչվում, քանի որ մարդկանց մեղքերից սրբվելը ո՛չ ոք չի տեսնում, բայց հավատում ենք, որ ապաշխարելով ու զղջալով նրանց մեղքերին թողություն է շնորհվում;

Հովհաննես Մկրտիչը, որ Հիսուսին մկրտեց Հորդանան գետում, քարոզում էր. *«Ապաշխարեցե՛ք, որովհետև երկնքի արքայությունը մոտեցել է»… Ես ձեզ ջրով եմ մկրտում ապաշխարության համար, բայց ով գալիս է ինձնից հետո, ինձնից ավելի հզոր է, և ես արժանի չեմ հանելու նրա կոշիկները. նա կմկրտի ձեզ Սուրբ Հոգով և հրով…» (Մատթ. 3:2,11):*

Ապաշխարող անհատի առաջին մտահոգությունը իր անձի փրկությունն է:

Մի նշանավոր քարոզիչ հետևյալ միտքն է արտահայտում. *«Եթե Աստված ինձ երևար և ասեր. ցանկանո՞ւմ ես փոխեմ մարդկային բնությունդ և դարձնեմ քեզ հրեշտակի նման անմեղ»,* կպատասխանեի. *«Ո՛չ, Տեր, թող ինձ մարդկային հատկություններով, միայն թե մեջս չմեռնի սայթաքումներից ու անկումներից գիտակցության գալու զգացումը, բարձրանալու ձգտումն ու տենչը»:*

Սարգիս Շնորհալին ասում է, *«…Ապաշխարությունը ընկած հոգիները բարձրացնում է և մոտեցնում*

Աստծուն. մեղքերով կեղտոտված մարմինը լվանում է և ձյունից ավելի սպիտակեցնում: Ապաշխարությունը մեղքերից մեռած հոգին կենդանացնում է և նրան պարգևում հավիտենական անմահություն…խոստովանությունը և ապաշխարությունը մեզ մոտեցնում են Սուրբ սեղանին և հոգևոր հացին հաղորդակից դարձնելով կատարյալ սրբություն են մեզ պարգևում»:

Հարց կարող է ծագել, թե՝ *«Մեղանչողը ի՞նչ պիտի անի ապաշխարելու համար».*

ա. Սրտանց զղջա իր գործած մեղքերի համար և վճռի այլևս չմեղանչել.

բ. Ջերմեռանդությամբ և երկյուղածությամբ աղոթի, խոստովանի Աստծու առջև իր մեղքերը և թողություն խնդրի, որովհետև Աստծու գթությունն ու ներողամտությունը մեղավորին առիթ են ընձեռում ապաշխարելու և արդարանալու.

«Եթե արհամարհում ես նրա բարության առատությունը և ներողամտությունն ու համբերությունը, չգիտե՞ս, որ Աստծու բարությունը քեզ ապաշխարության է տանում: Եվ քո խստասրտությամբ ու անզիղջ սրտով քո անձի դեմ բարկություն ես դիզում բարկության օրվա և Աստծու արդար դատաստանի հայտնության օրվա համար. Աստծու, որ հատուցում է յուրաքանչյուրին ըստ իր գործերի»,- ասում է Պողոս Առաքյալը Հռոմայեցիներին ուղղած իր նամակում *(Հռոմ. 2:4-6):*

գ. Միշտ հիշի, որ ինքը փրկվել է Հիսուս Քրիստոսի Արյունով և պարտավոր է հետևել Նրա անմեղ կյանքին:

Աղոթքը չմեղանչելու ամենագործնական միջոցն է: Խոստովանությունն ամենից առաջ կատարվում է մարդու խղճի մեջ՝ դառնալով ապաշխարության հիմքը, այլ խոսքով հնարավոր չի ապաշխարել առանց խոստավանվելու:

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Արք. Հովսեփյանցը հրաշալի կերպով է բացատրում ապաշխարության խորհրդի իմաստը.

«Ապաշխարությունը հոգևոր հաշվետվություն է մեր խղճի և Աստծու առաջ: Հաշվապահության կանոններից մեկն է՝ տարեվերջին մատյանները քննության և ստուգության ենթարկել. այդպիսի ստուգության պիտի ենթարկենք այս ապաշխարության օրերում ո՛չ միայն մեր արտաքին գործողությունները, այլև նրանց ներքին, ծածուկ շարժառիթներն ու պատճառները … Զորեղ է թշնամին և՛ ներքին, ուստի և՛ նորա դեմ պիտի զինենք և՛ մեր բարոյական բոլոր ուժերը…»:

«Ապաշխարությունը հոգևոր բժշկության առաջին պայմանն է:… Ապաշխարել նշանակում է սրբել մեր մեղավոր միտքը, հոգին նորոգել ներքուստ: «Ապաշխարության նպատակն է կյանքի ճահիճներից հանել մարդկանց և նոր արարած շինել»:

«Հին ճգնավորներն ու անապատականները փախչում էին աշխարհից՝ նորա ապականություններից և մոլություններից ազատ լինելու համար. Ծեծում էին իրենց մարմինը. քաղցած և ծարավ էին մնում՝ մարմինը ճնշելու, և դորա հետ նորա մեղավոր հակումները խեղդելու նպատակով, բայց՝ իզուր: Պատերազմը ներքին է: Եվ միայն ներքին զենքերով կարող ենք մաքառել հակառակորդի դեմ: Այդ ներքին զենքը Ապաշխարությունն է: Զղջման և դարձի զգացումը…»:

«Անառակ որդին իր բոլոր ունեցածները վատնելուց հետո միայն անդրադարձավ իր գործած մեծ մեղքին և քաջությունը ունեցավ վերադառնալու իր երկիրն ու սրտանց ներում խնդրելու իր հորից: Նա ապաշխարությամբ տիրացավ իր նախկին փառքին, որովհետև կորած էր և գտնվեց, մեռած էր և կենդանացավ: Ապաշխարել նշանակում է անդրադառնալ գործած սխալի և կամ մեղքի, անկեղծությամբ զղջալ, տառապել, ողբալ, խոստովանվել. հաղորդվել Սբ. Մարմնով ու Արյունով և որոշել մի անգամ էլ չկրկնել նույն ու նմանօրինակ մեղքեր» («Դեպի Լույս և Կյանք» «Ապաշխարություն»):

Երբ ապաշխարում ենք և փորձում սրբվել մեր հին մեղքերից, պիտի աշխատենք այլևս մեղքեր չգործել ու մանավանդ հինը չկրկնել:

Աստված մարդու մեջ ներարկեց Իր խիղճը, որն Աստվածային է: Կյանքում շարժվենք Աստծու տված այս կարևոր շնորհքով մեր նմանների՝ մարդկանց նկատմամբ ու հանգիստ կլինենք և՛ հոգեպես և՛ մտքով: Ամեն:

ԱՇԽԱՐՀԸ ԴԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Դատաստանի համար եկա այս աշխարհը,
որպեսզի, ովքեր չեն տեսնում, տեսնեն,
և ովքեր տեսնում են, կուրանան»
(Հովհ. 9:39)

Հիսուսի այս խոսքերը կարող են զարմացնել շատերին, որովհետև Նա այլ առիթներով վկայել է. *«Աստված իր Որդուն չուղարկեց աշխարհ, որ դատապարտի աշխարհը, այլ՝ որպեսզի աշխարհը նրանով փրկվի» (Հովհ. 3:17):*

Առաջին ակնարկով մտածում ենք, թե այս խոսքերի մեջ հակասություն կա: Արդյոք Տերը այս խոսքերով ի՞նչ է ուզում ասել մեզ:

Հիսուս ո՛չ թե աշխարհը դատելու, այլ նրան ողորմելու եկավ: Բարի լուր բերեց: Մարդիկ այդ բարի լուրը լսելով, երկու ձևով այն ընդունեցին: Նրանք, որոնք իրապես հավատով էին և պատրաստ էին Աստծու ճշմարիտ խոսքը լսելու, ուրախությամբ ընդունեցին այդ բարի լուրը, իսկ նրանք, որոնք աստվածային ճշմարտությունները մերժողներն ու ավելի աշխարհիկ ցանկությունների ետևվից գնացողներն էին, բնական է չընդունեցին ու մերժեցին նույնիսկ լսել այն: Այս երկու ձևով մտածողները ինչպես երկու հազար տարիներ առաջ, այսօր էլ ապրում են կողքկողքի՝ միասին:

Աստված մարդուն ստեղծեց և օժտեց ամենակարեվոր շնորհով, որը կենդանուն չտվեց. *խելքով, խղճով ու ազատ կամքով*: Մարդը իր ազատ կամքով կարող է այս աշխարհի պայմանների համաձայն Աստծուն մերժել կամ Նրա ողորմությունը ընդունել: Ընտրողն էլ կամ չընտրողն էլ հավասարապես շարունակում են ապրել իրենց կյանքի համաձայն: Աստված Իր ճշմարտությամբ, ինչպես նաև Սուրբ Գրքում գրված խրատներով, ցույց է տալիս ուղիղ

ճանապարհը, սակայն ինքը մարդն է որոշողը գնա՞ այդ ճանապարհով, թե՝ ոչ:

Նրանք, որոնք Սուրբ Պատարագի ընթացքում զոհաբերվող մեր Տիրոջ՝ Հիսուսի, փրկարար զորությանը հավատում են, նրանց մեղքերը ներվում են, նրանք, որոնք սիրելով լույսը, գնում են դեպի նա, հրաժարվելով իրենց սխալներից, ուղիղ կյանքով են ապրում իրենց փրկող այդ լույսի ներքո և Աստծուն ուրախացնում են: Իսկ նրանք, որոնք մերժում են Տիրոջ զոհողությունը իրենց փրկության համար, մշտապես մնալով իրենց կատարած սխալների մեջ, առանց անդրադառնալու, քայլում են խավարի մեջ ու լույսը հեռանում է նրանցից: Նրանք խավարը ավելի են սիրում, քան՝ լույսը:

Ուրեմն, յուրաքանչյուր մարդ ընտրելով իր ճանապարհը, Աստծու կողմից գնահատվում ու արժևորվում է այդ ձևով:

Հայրենի գրող Ավետիք Իսահակյանի այս պատմությունը ուսանելի է.

«Արևելքի քաղաքներից մեկում մի աղքատ դերվիշ (թափառաշրջիկ) պառկած մայթի վրա ննջում էր: Այդ պահին քաղաքապետը իշխանների շքախմբով անցնում է այդ ճանապարհից: Անցորդները խոնարհվելով մի կողմ են քաշվում, միայն ծերունին է մնում պառկած: Իշխանների առաջնորդը գավազանով խփում է ծերունուն, ասելով.

«Վեր կա՛ց., չե՞ս տեսնում ով է անցնում»: Իսկ ծերունին հանդարտորեն պատասխանում է նրան:

Ես միայն ինձանից մեծերի առաջ եմ ոտքի կանգնում:

Քաղաքապետը զարմանքով հարցնում է.

Մի՞թե ես քեզնից մեծ (բարձր) մարդ չեմ:

Իհարկե ոչ: Քեզանից ավելի բարձրերն էլ կան: Այդպե՞ս չէ:

Այո՛:

Դու քաղաքապետ ես, երբ պաշտոնդ բարձրանա, ի՞նչ կլինես:

Նահանգապետ:

Հետո ի՞նչ կլինես:

Վեզիր:

Հետո՞:

Փոխարքա:

Վերջ՞ը:

Այսքան: Վերևում շահը (թագավորը) կա:

Ասենք թե շահ դարձար, հետո՞:

Հետո՝ ոչինչ,- պատասխանում է քաղաքապետը:

Ահա,- ասում է ծերունին,- այդ ոչինչը ես եմ:

Քաղաքապետը զարմացած ամոթից թողնում հեռանում է»:

Քաղաքապետը պատրաստ մեկը չէր հասկանալու, որ իր այս կյանքը իրապես *«ունայնություն ունայնության»* է, ինչպես կասեր Սողոմոն իմաստունը, այսինքն բառիս բուն իմաստով ծե*ռունու ասածի նման՝ «ոչինչ», «որովհետև հող էիր և հող էլ կդառնաս» (Ծննդոց 3:19):* Ահա Աստծու հրամանը առաջին մեղավոր մարդուն՝ Ադամին:

Հիսուս ի ծնե կույրի աչքերը բացեց, սակայն մինչև բուժելը նրան հարցրեց. *«Հավատո՞ւմ ես, որ ես կարող եմ քեզ բուժել»* և *«այո»* դրական պատասխանից հետո նոր բացեց նրա աչքերը: Եթե մենք էլ այդ կույրի հավատալու ցանկությունը, կամքն ու հնազանդությունը ցույց տանք, մեր ընտրությունը մեզ պիտի քայլ առ քայլ առաջնորդի դեպի հավիտենական լույսը: Սակայն դրա հակառակն էլ կա, եթե մերժենք գնալ դեպի լույսը:

Մեր առջև ընտրության ճանապարհները միշտ բաց են: Փորձենք ի ծնե կույրի պես բուժվել և հավիտենական բարությունը ստանալ: Նա մարմնապես կույր էր, Հիսուսին դիմեց և՛ բացվեցին նրա մարմնի և՛ հոգու աչքերը: Այսօր էլ աշխարհում շատ շատերը կույր են ո՛չ միայն ֆիզիկապես, այլ առավելապես հոգով, որը շատ

անգամներ անբուժելի է: 5-րդ դարի մեր մեծագույն հայրերից Եզնիկ Կողբացին ասում է. *«Լավ է կոյր աչօք, քան կոյր մտօք»,* այսինքն՝ *«Ավելի լավ է աչքերով կույր լինել, քան թե՝ մտքով»:* Հիսուս Ինքն էր ասում· *«Աչքեր ունեք՝ չե՞ք տեսնում, ականջներ ունեք՝ չե՞ք լսում»*: Այո՛, աշխարհը այսօր կուրացել ու խլացել է աստվածային ճշմարտությունները լսելու և տեսնելու մեջ: Մարդիկ մոռանալով *Աստծուն, Հիսուս, խաչ, եկեղեցի, հավատ,* խելակորույս ընկել են նյութականի՝ դրամի և ունեցվածքի հետևից, մի խօսքով այն ինչ որ ժամանակավոր է ու անարժեք: Հարց է ծագում, *«Իսկ մարդը ինչպե՞ս կարող է ազատվել խավարի իշխանությունից«:*

Այն ժամանակ, երբ լսենք Տիրոջ ձայնը. *«Եկե՛ք ինձ մոտ, բոլո՛ր հոգնածներդ ու բեռնավորվածներդ, և ես ձեզ կհանգստացնեմ: Իմ լուծը ձեր վրա վերցրե՛ք և սովորեցե՛ք ինձնից, որ հեզ եմ և սրտով խոնարհ. և ձեզ համար հանգիստ պիտի գտնեք, որովհետև իմ լուծը քաղցր է և իմ բեռը՝ թեթև» (Մատթ. 11:28-30):*

Բացե՛ք ձեր հոգու աչքերը, հավատով նորոգվեք և զորացեք, որպեսզի օրհնվի ձեր կյանքը: Ամեն:

Ի՞ՆՉ Է ՕՐԵՆՔԸ

«Եվ ուրեմն հեթանոսները, որ օրենք չունեն, բնականորեն են օրենքի գործերը կատարում, նրանք, օրենք չունենալով, իրենք իրենց համար իսկ օրենք են»
(Հռոմ. 2:14-15)

«Ի՞նչ է օրենքը, ե՞րբ և ո՞ւմ կողմից սկսվեց, արդյոք օրենքի կարիքը կա՞, թե՝ ոչ, մարդկային և աստվածային օրենքների տարբերությունն ի՞նչ են»:

Այս հարցերը իբրև մարդ մենք ակամայից տալիս ենք մեզ և մեր կյանքի ընթացքում փորձում ենք գտնել համապատասխան պատասխանները:

Սկսենք աշխարհի սկզբից: Աստվածաշնչում կարդում ենք, որ Աստված ստեղծեց աշխարհը հինգ օրում և ապա վեցերորդ օրը՝ մարդուն, Իր պատկերի համաձայն: Հակառակ որ Աստված առաջին մարդուն իշխան կարգեց աշխարհի բոլոր բարիքների վրա, սակայն նրան արգելեց օգտվել պարտեզում գտնվող մի ծառից: Պարտեզում հազարավոր պտղատու ծառեր կային, բայց Աստված հատուկ արգելեց մարդուն չուտել այդ մեկ հատիկ ծառից: Ինչո՞ւ: Արդյոք Աստված վստահ չէ՞ր մարդու հավատարմության վրա կամ նրան փորձե՞լ էր ուզում»: Ո՛չ, Աստված մարդուն փորձել չէր ուզում, այլ նրա առջև դնում էր հարգել ու կատարել իրեն Ստեղծողի կողմից դրված օրենքը: Ծառը մի տեսակ պատրվակ էր, առիթ էր մարդուն հասկացնելու համար, որ ինքը Աստված չէ, որ նրա գործողությունները անսահման չեն, այլ մարդը Նրանից մի աստիճան ցածր է կանգնած: Հակառակ Նրա այդ մեծագույն վստահության, մարդը խախտեց Աստծու դրած առաջին արգելիչ օրենքը ու պատժվեց դուրս վտարվելով դրախտային կյանքից:

Ծննդոց Գրքում հետաքրքիր մի երկխոսություն կա Աստծու և Ադամի միջև, ուր նա արդարանալով փորձում է իր կատարած մեղքը գցել Եվայի՝ իր կնոջ վրա. *«Տեր Աստված կանչեց Ադամին ու ասաց. «Ո՞ւր ես»: Ադամը պա-*

տասխանեց. «Լսեցի քո ձայնն այստեղ՝ դրախտում, ամաչեցի, որովհետև մերկ էի, և թաքնվեցի»: Աստված նրան ասաց. «Ո՞վ հայտնեց քեզ, թե մերկ ես: Արդյոք կերա՞ր այն ծառի պտղից, որից պատվիրել էի, որ չուտես»: Ադամն ասաց. «Այս կինը, որ տվեցիր ինձ, նա՛ տվեց ինձ ծառի պտղից, և ես կերա»: Տեր Աստված ասաց կնոջը. «Այդ ի՞նչ ես արել»: Կինն ասաց. «Օձը խաբեց, և ես կերա» (Ծննդոց 3:9-13): Այս խոսակցությունից պարզ է դառնում, որ Աստված իրոք նրանց արգիլել էր օգտվել այդ ծառի պտղից: Ուրեմն առաջին օրենքը ստեղծվեց Աստծու կողմից: Այսպիսով առաջին մարդու՝ Ադամի ու Եվայի մեղանչելու պատճառով մեղք գործելը շարունակվեց և մի տեսակ բաց տարածություն առաջացավ Աստծու ու մարդու միջև: Ադամի որդիներից մեկը՝ Կայենը նախանձեց իր եղբորը՝ Աբելին և սպանեց:

Մեղքի, հանցանքի հետևանքները անդրադարձել են ո՛չ միայն անհատ մարդու, այլ նաև ընդհանուր՝ հասարակական կյանքի վրա:

Երանելի Օգոստինոս Հայրապետն ասում է, որ առաջին մարդու՝ Ադամի և Եվայի կողմից Աստծու պատվիրանների խախտումը իր մեջ պարունակում էր բոլոր հանցանքները:

ա. *Հպարտություն,* որովհետև մարդը ցանկացավ Աստծուց առանձնանալ, այսինքն՝ ինքն իր մեջ երևալ:

բ. *Սրբապղծություն,* քանի որ նա խախտեց հավատարմությունը Աստծու նկատմամբ:

գ. *Սպանություն:* Աստծու պատվերը չկատարելով մարդը անմահության փոխարեն մահը ժառանգեց, այսինքն՝ ինքն իրեն մահվան դատապարտեց:

դ. *Հոգևոր անառակություն,* նույնիսկ կարելի է ասել՝ *դավաճանություն,* որովհետև օձից խաբվելով և նրա հետ համագործակցելով մարդը կորցրեց իր հոգու մաքրությունն ու ակամա հեռացավ իրեն Ստեղծողից:

Ե. *Գողություն և շահամոլություն:* Այսինքն մարդը ուզեց գողանալ Աստծու իրավունքները Նրան հավասարվել ուզելով, հետապնդելով իր շահը և մտածելով իր անձի մասին:

Այսպիսով մեղքը չարի կերպարանքով մտավ մարդու մեջ;

Հարց է առաջանում, թե՝ *«Այս մեղսալից աշխարհում, ինչպե՞ս և ի՞նչ ձևով կարելի է պայքարել չարի դեմ»:*

Դրա պատասխանը արդեն իսկ տալիս է Աստված, մեզ ցույց տալով օրենքի ճանապարհը. այսինքն՝ օրենքը օգտագործենք իբրև զենք չարի դեմ պայքարում:

Մինչև Հիսուսի գալուստը, Աստված մի անգամ ևս օրենքներ տվեց Մովսես մարգարեին Սինա լեռան վրա հրեա ժողովրդի միջոցով ամբողջ մարդկության համար: Այդ օրենքները հայտնի են մեզ բոլորիս *«Տասնաբանյա պատվիրաններ»* անունով:

Ինչո՞ւ Աստված այս տասը օրենքները տվեց հրեա ժողովրդին, որ գործադրեն, արդյոք նրանք դրա կարիքը ունե՞ին: Այո՛, Ադամի և Եվայի նման նրանք էլ էին մեղանչել և սկսել ոսկյա կուռքերին պաշտել, հակառակ որ Աստված նրանց փրկեց գերությունից, Կարմիր ծովով անցկացրեց ազատելով թշնամիների հետապնդումից: Եթե այսօրվա մտածումով արտահայտվենք, հրեա ժողովուրդը երախտամոռ եղավ իրեն բարիք արած Աստծու նկատմամբ: Աստվածաշունչը վկայում է, թե մինչ Մովսես մարգարեն ստանում էր Աստծու պատվիրանները Սինա լեռան վրա, նրա ժողովուրդը ներքևում ոսկյա արձաններ պատրաստելով սկսել էին նրանց երկրպագել: Ահա ձեզ օրենքի բացակայությունը: Իսկ օրենքը՝ Աստված է:

Ինձ հետ այստեղ մի քանի տարիներ առաջ հետաքրքիր դեպք պատահեց, երբ Հոլիվուդի փողոցներից մեկով թեքվեցի, ոստիկանը ինձ և մի այլ մեքենայի վարորդի կանգնեցրեց: Նրա հետ հարցերը և տուգանքը գրել-վերջացնելուց հետո, նա մոտեցավ ինձ, պահանջեց վարոր-

դական իրավունքս և ապահովագրությունը, մի քանի ր-ոպե ուսումնասիրելուց հետո, վերադարձավ ու ասաց, թե ի՞նչ սխալ եմ թույլ տվել և անակնկալ հարցրեց· *«Դուք հոգևորակա՞ն եք»: Ասացի՝ «Այո՛»: «Ո՞ր Եկեղեցուն եք ծառայում»: «Հայաստանեայց Առաքելական Եկեղեցուն – ես հայ հոգևորական եմ», պատասխանեցի ու մտածեցի, էս ի՞նչ լավ եղավ հիմա ինձ կների և պատիժ չի տա: «Իբրև հոգևորական Դուք կատարո՞ւմ եք աստվածային օրենքները»,- անակնկալ շարունակելով հարցրեց նա: «Իհարկե»,- զարմացած պատասխանեցի: «Եթե աստվածային օրենքները հարգում եք, որոնք չեք տեսնում, ապա ինչո՞ւ չեք պահում Ամերիկյան օրենքները, որոնք տեսնում եք»:* Ճիշտը եթե ասեմ, ես զարմացած ուշքի չէի գալիս ոստիկանի այս խոսքերից ու պատասխանելու ոչինչ չգտա. լուռ կախեցի գլուխս և ստացա համապատասխան պատիժը: Տեսա՞ք: Ահա այս է օրենքը: Օրենքը բոլորի համար է վերևից ներքև, մեծ և փոքր չկա, պատիժը պիտի լինի հավասարապես:Պետք է հասկանանք ու գիտակցենք, թե՝ *«Օրենքը մարդու համար է, և ո՛չ թե մարդը օրենքի համար»:*

Պողոս Առաքյալը Հռոմայեցիներին ուղղած իր նամակում ասում է. *«Եվ ուրեմն հեթանոսները, որ օրենք չունեն, բնականորեն են օրենքի գործերը կատարում, նրանք, օրենք չունենալով, իրենք իրենց համար իսկ օրենք են» (Հռոմ. 2:14-15),* և շարունակելով ասում է. *«Իսկ արդ, դու, որ ուսուցանում ես ընկերոջդ, ինքդ քեզ չես ուսուցանում. քարոզում ես՝ չգողանալ, գողանում ես. ասում ես՝ չշնանալ, շնանում ես. գարշում ես մեհյաններից, տաճարներն ես կողոպտում, օրենքով պարծենում ես՝ օրենքը խախտելով Աստծուն ես անարգում···» (Հռոմ. 2:21-24),* այսինքն՝ մարդկային օրենքները ժամանակավոր են և փոփոխական, իսկ աստվածային օրենքները՝ հավիտենական և անփոփոխ: Աստված հենց աշխարհի ստեղծումից մարդուն ցույց տվեց օրենքի ու պատժի ճանապարհը:

Այստեղ նորից հարց է ծագում· *«Մի՞թե չարն անհաղթահարելի է: Աստված տվե՞լ է մեզ ինչ որ մի զենք նրանից պաշտպանվելու համար»:*

Այո՛, Աստված տվել է մեզ մի զենք չարից հեռու մնալու և կամ նրանից պաշտպանվելու համար: Դա մեր խիղճն է, որն աստվածային է:

«Մաքուր խիղճ կարելի է գտնել աղոթքի, իսկ մաքուր աղոթք՝ խղճի միջոցով: Մեկը մյուսի կարիքն ունի բնությամբ: Խիղճը բռնության գիրքն է: Ով նրանում իր կարդացածը գործադրում է, ստանում է Աստծու օգնությունը: Ով չի դիմանում իր խղճի քննությանը, չի դիմանա նաև հանուն Աստծու մարմնավոր չարչարանքին»,- ասում է 5-րդ դարում ապրած Մարկոս ճգնավորը:

Աստված մարդուն կենդանուց տարբերելու համար օժտեց խելքով ու խղճով, որպեսզի նա հնարավորություն ունենա ընտրելու բարի՛ն, թե՝ չարը, լա՛վը, թե՝ վատը, այսինքն ազատ կամք տվեց: Խղճով մարդը երբե՛ք ու երբե՛ք չի կարող մարդ սպանել կամ վատություն ու չարություն անել, ինչ պարագայում էլ որ լինի, որովհետև նրա մեջ Աստծու սերը կա:

Մարդը ինչքան էլ իրեն ուժեղ զգա, առանց Աստծու միջամտության ու Նրա կամքի, ոչինչ չի կարողանա կատարել: Նրանք, որոնք մինչև այսօր փորձել են միայնակ, ինքնուրույն հաղթել չարին ու ազատվել մահվանից, կործանվել են, *որովհետև առանց Աստծու՝ չկա փրկություն, առողջություն և չկա ո՛չ մի հաջողություն:*

Պատկերացրեք, որ Ամերիկայի Միացյալ Նահանգներում, ուր ապրում են հարյուրավոր տարբեր ազգի ներկայացուցիչներ, եկած աշխարհի զանազան երկրներից, օրենք չլիներ և մանավանդ այն իր ուժը չունենար, երանի պիտի տայինք այնպիսի երկրների, որտեղ ապրելը դժողքի հավասար է: Վերջերս լսեցի մի ավտովթարի մասին Երևանում: Քույր և եղբայր փողոցը անցնելիս, մի մեքենա չափից ավելի արագությամբ հարվածում է քրոջը և

նա վնասվածքներով տեղափոխվում է հիվանդանոց ու մահանում՝ ուշքի չգալով: Պարզվում է, որ վարորդը մի ղեկավարի որդին է, որը մեկ տարի առաջ նմանատիպ մի ավտովթար է ունեցել, վթարի ենթարկելով մեռցրել ուրիշ մի երիտասարդի և անպատիժ մնացել: Իսկ ո՞ւր է օրենքը: Արդյունքը մի նոր սպանություն ու մի նոր զոհ:

Մի դեպք էլ տեղի է ունեցել Լոս Անջելոսում: Տարիքով կին էր: Ես նրան ճանաչում էի: Մայրիկը արգելված տեղով էր անցել փողոցը, արդյունքում մեքենաներից մեկը չտեսնելով հարվածել էր նրան ու նա մահացել էր: Այս պարագային մեղավորը մայրիկն էր, որ արգելված տեղով էր անցել: Օրենքը վարորդին չմեղադրեց և դատարանը մեռնողին մեղավոր հանեց ու վարորդին ազատ արձակեց: Տեսա՞ք, ահա այ՛ս է օրենքը:

Ուրեմն հետևենք մարդկային և աստվածային օրենքներին ու խնդրենք Աստծու կամքը մեր բոլոր գործերում, որպեսզի առողջ լինենք և միշտ փառք տանք Ամենակալին. *«Աստված գնահատում է մեր արարքն ըստ մեր նպատակի, որովհետև ասված է, որ Տերը կտա քեզ ըստ քո սրտի»,- ասում է Մարկոս ճգնավորը:* Ամեն:

ՄԱՐԳԱՐԵԻ ՊԱՏԻՎԸ

«Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ մարգարեն
ընդունելի չէ իր քաղաքում»
(Ղուկ. 4:24)

Ղուկաս Ավետարանիչը գեղեցիկ կերպով նկարագրելով Հուդայի անապատում Հիսուսի անցկացրած քառասնօրյա փորձության շրջանը ու Նրա տարած հաղթանակը սատանայի կողմից խոստացված անցողիկ փառքերի ու վայելքների վրա, շարունակում է պատմել, թե Հիսուս զգալով, որ այլևս Իր առաքելության ժամանակը հասել է, սկսում է Իր վարդապետության սերմերը ցանել Հուդայի գավառում: Կարճ ժամանակի ընթացում Նա ունենում է բազմաթիվ հետևորդներ, որոնց միջոցով Նրա հրաշագործությունների համբավը տարածվելով Պաղեստինի բոլոր շրջանները, հասնում է մինչև Նրա ծննդավայրը՝ Գալիլիայի Նազարեթ քաղաքը:

Եվ մի շաբաթ օր, Հիսուս մտնում է Նազարեթ ու Իր սովորության համաձայն գնում Տաճար՝ աղոթելու: Այնտեղ Նրան տրվում է Եսայու մարգարեության գիրքը, որպեսզի մի հատված կարդա և մեկնաբանի ժողովրդին:

«Ժողովականները, ըստ երևույթին սպասում էին տափակ ճառի, ծամծմված մի քարոզի: Հիսուսի իմաստությունը ուժեղ տպավորություն է թողնում և խանգարում նրանց: Նրանք չեն կարողանում ընդունել, որ գյուղի երեխաներից մեկը իրեն Աստծու ընտրյալ է համարում: Նրանք կապ են տեսնում Հիսուսի ասածների ու Իր կատարած հրաշքների միջև, որոնց մասին լսել ու դիմադարձում են Նրան: Եվ Իր ծննդավայրի մարդիկ… տանում են նրան լեռան դարավանդը, որպեսզի գահավեժ անեն: Հիսուս հետագայում կունենա ծանր ու դառն պահեր, դեռ շատ անգամ կմղկտա Աստվածորդու սիրտը՝ մարդկանց ստոր ու դաժան վերաբերմունքից, բայց այդ օրը նա երբեք չի մոռանա: Տարիներ հետո Նա վերադարձավ իր քաղաքը,

բայց իր քաղաքը չընդունեց Նրան, ավելին՝ սպանության դավով էր լցված մանկության օրրանը Իր հանդեպ:

Ու նա հեռանում է հայրենի ափերից, նույնիսկ չուզենալով հրաշքներ գործել ու բժշկել մարդկանց, որովհետև հրաշագործության առանցքը երկու կողմերի անխախտ հավատն է հրաշքի հանդեպ: Անհավատ ամբոխի դիմաց Հիսուս մի տեսակ թևաթափ է զգում Իրեն և հեռանում է Նազարեթից: նա ոչինչ չունի անելու այնտեղ» (Զաքարիա քահանա Սարիբեկյան «Անհավատ հավատարմություն» քարոզից):

Վերոհիշյալ տողերը Եսային մարգարեացել էր Մեսիայի համար, հետևաբար, երբ Հիսուս այն հեղինակային շեշտով կարդում է, ասելով, թե արդեն այդ բոլորը իրագործվում են Իր Անձով, Նա շփոթության է մատնում Իրեն լսողներին, որոնք իրար հարց էին տալիս. «Մի՞թե սա հյուսն Հովսեփի որդին չէ՞» և, երբ Նազովրեցիները մի հրաշք են խնդրում Հիսուսից, փաստելու համար Իր Մեսիա լինելը, Նա պատասխանում է՝ «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ մարգարեն ընդունելի չէ իր քաղաքում»: Արդարև ասում եմ ձեզ, որ Եղիայի օրով Իսրայելում բազում այրիներ կային, երբ երկինքը փակվեց երեք տարի ու վեց ամիս, և ամբողջ երկրի վրա մեծ սով եղավ: Սակայն նրանցից ոչ մեկի մոտ Եղիան չուղարկվեց, այլ միայն՝ մի այրի կնոջ սիդոնացիների Սարեփթա քաղաքում: Նաև՝ Իսրայելում Եղիսե մարգարեի օրով բազում բորոտներ կային, և սակայն նրանցից ոչ մեկը չմաքրվեց, այլ միայն՝ Նեեման ասորին»: Երբ այս լսեցին, ժողովարանում բոլորը լցվեցին բարկությամբ և վեր կենալով՝ նրան քաղաքից դուրս հանեցին ու տարան մինչև դարավանդը այն լեռան, որի վրա շինված էր իրենց քաղաքը, որպեսզի նրան գահավեժ անեն: Իսկ նա, անցնելով նրանց միջով, գնաց» (Ղուկ. 4:24-30):

Քրիստոսի հայտնած այս կենդանի ճշմարտությունը, որն իր տեղական բնույթի համար վրիպել է շատերի աչքերից, իր նախընթացը չունի Հին Կտակարանի ու հունական գրականության մեջ:

Թագավորաց գրքում կարդում ենք, որ Եղիայի մարգարեությանը չէին հավատում նրա հայրենակիցները ու, երբ երեք ու կես տարի սով տիրեց երկրում, շատ այրիներ սովից մեռան իրենց անհավատության պատճառով, մինչդեռ մարգարեն Աստծու հրամանով կերակրում էր հեթանոս մի այրու, որը հավատացել էր իր մարգարեությանը: Նույնպես Եղիսե մարգարեի օրով մեծ թվով բորոտներ էին ապրում Պաղեստինում, այս անգամ էլ մարգարեն ուղարկվում է հավատացող մի հեթանոսի մոտ՝ Նեեման Ասորու, որպեսզի նրան բուժի:

Իսկ «հեթանոսաց Քրիստոս» կոչված հանրածանոթ Ապողինոսի կյանքում հանդիպում ենք այսպիսի տողերի. «Որքան տարօրինակ է այս երևույթը, երբ համայն մարդկության կողմից փառաբանվում եմ որպես Աստված, դժբախտաբար դեռևս ծննդավայրիս բնակիչները շարունակում են ինձ չճանաչել»: Պլուտարքոս Հույն պատմիչն էլ արդարորեն մեր ուշադրությանն է հանձնում, թե՝ «Հազվագյուտ է թիվը այն իմաստուն և մեծ մարդկանց, որոնք գնահատված լինեն իրենց ծննդավայրում»:

Նազովրեցիները ինչպե՞ս հավատային Հիսուսի մեսիականության, երբ նա ծնվել էր հողեղեն արարածներից, մեծացել նրանց մեջ և որ մինչ այդ հյուսնությամբ էր զբաղվում:

Հետաքրքիր է, ի՞նչ է փոխվել երկու հազար տարի հետո. արդյոք այսօր մարդիկ գնահատվա՞ծ են իրենց ծննդավայրում: Ուրիշ ժողովուրդների պատմությանը շատ ծանոթ չեմ և չեմ կարող որևէ բան ասել նրանց մասին, բայց եթե վերցնենք մեր ժողովրդին, կարող եմ վկայել, որ՝ ո՛չ: Մեր տաղանդավոր հայորդիները անհատապես փայլում են աշխարհի ամեն կողմում, թե՛ մարմնամարզության, թե՛

գիտության, թե՛ կրթության, թե՛ արվեստների և թե՛ արհեստների բնագավառում, մի խոսքով ամեն ինչում:

Ինչքան երգահաններ, խմբավարներ, գիտության նվիրված մարդիկ, արվեստագետներ՝ լինեն դրանք երաժիշտներ, նկարիչներ, քանդակագործներ, իրենց երկրում կամ ծննդավայրում չգնահատված, չընդունված լինելու գիտակցությունից վիրավորված, թողել ու հեռացել են այլ երկրներ, ուր նրանց գտել, ընդունել և տեղ են տվել; Ես ապրում եմ Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Այս երկրի նշանավոր գյուտերը կատարել են մեր հայրենակից հայերը: Ինչո՞ւ, նրանք չէի՞ն կարող դա անել մեր Հայրենիքում: Կարող էին, բայց…

Այլ ժողովուրդներ գնահատելով մեր տաղանդներին, հպարտանում են նրանցով, այդ ժամանակ միայն մենք հասկանում ենք, թե ի՞նչ ենք կորցրել ու փորձում ենք վերականգնել նրանց հետ մեր հարաբերությունները, որպեսզի նրանք վերադառնան ու իրենց տաղանդները օգտագործեն մեր երկրի համար: Ավա՜ղ, երբեմն ուշ է լինում: Կոտրված ու վիրավորված սրտերը դժվար են վերականգնվում: Օրինակների շատ են՝ «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ մարգարեն ընդունելի չէ իր քաղաքում»: Հիսուսի պատասխանը ճիշտ ու ճիշտ այսօրվա և ինչո՞ւ չէ մեր ժողովրդի տաղանդավոր զավակների համար է:

Իշխանավոր և Իմաստուն

(Վարդան Վարդապետ Այգեկցի – Աղվեսագիրք)

«Կար մի աշխարհակալ իշխանավոր, և նա ուներ մի խիստ գեղեցիկ տղա: Եվ իշխանավորն ասաց, թե գեղեցիկ աղջիկ կառնեմ, որ կին լինի իմ որդուն և ունենամ գեղեցիկ թոռներ՝ ժառանգ իմ գահի: Եվ գնաց բերեց մի գեղեցիկ հարս և դեռ թոռ չէր ունեցել, երբ որդին մեռավ, և հարսը մնաց: Եվ ինքը կամեցավ հարսին առնել և հարցրեց իմաստուններին, թե՝ «Կա՞ իրավունք» և նրանք ասացին, թե՝ «չկա իրավունք, որ հայրն առնի հարսին»: Եվ չկամեցավ լսել նրանց և գտավ մի այլ իմաստուն, որ նրա սիրե-

լին էր և այդ իմաստունն ասաց իշխանավորին. «Աշխարհում յոթանասուներկու ազգ կա և նրանցից ոչ մեկին չի հասնում այդ, բայց քեզ կհասնի»: Եվ իշխանավորն ասաց, թե՝ «Ինչո՞ւ աշխարհի յոթանասուներկու ազգին չի հասնում այդ, իսկ իրեն կհասնի»: Եվ իմաստունն ասաց. «Վախենում եմ պատճառն ասել, որովհետև կսպանես ինձ»: Եվ նա երդվեց չպատժել նրան, եթե պատճառն ասի: Այն ժամանակ իմաստունն ասաց. «Որովհետև դու ամեն ազգից դուրս ես, և քո վրա չկա իշխանություն, և ինչ կամենաս կարող ես անել»:

Կյանքում էլ այդպես է: Ո՞ր ասպարեզում էլ ուզում ես ծառայիր, կհանդիպես այսպիսիներին, որոնք՝ «Ո՛չ Աստծուց են վախենում և ո՛չ էլ մարդկանցից ամաչում», ի՞նչ ուզում են, անում են, քանի որ իշխանություն ունեն, այս պահին ուժ ու աթոռ ունեն: Իսկ հետո... ոչինչ... մի բուռ հող»:

Հրեաների ակնկալությունը բոլորովին տարբեր էր Մեսիայի հանդեպ. նրանք սպասում էին այնպիսի մեկին, որը երկնքից պիտի իջներ հրեշտակների բանակներով, իրենց պիտի ազատեր օտարների լծից և Երուսաղեմը դարձներ աշխարհի մայրաքաղաքը՝ մյուս բոլոր պետություններին հպատակեցնելով իրենց իշխանության:

Ուստի, ինչպես Ղուկաս ավետարանիչն է ասում, Նազովրեցիները չհավատացին, որ Հիսուս Աստծու Որդի է և Նրան դուրս հանեցին Նազարեթից ու ո՛չ միայն, այլև փորձեցին նրան գահավեժ անել և սպանել: Բացի Նազովրեցիներից Հիսուսի մեսիականությանը չհավատաց նաև հրեա ժողովրդի մեծամասնությունը, հակառակ այն հաստատ իրողության, որ Հիսուս գործադրեց Եսայու մարգարեությունները:

Մեր Տիրոջ ասածի պես նրանք իրենց աչքերը փակեցին, որպեսզի չտեսնեն ճշմարիտ լույսը, իրենց ականջները՝ որպեսզի չլսեն Աստծու ձայնը և շարունակեցին մնալ խավարում իրենց չարագործություններով:

Սակայն, ինչպես հեթանոսները իրենց հավատի համար Աստծուց շնորհ գտան Եղիա և Եղիսե մարգարեների օրով, դարձյալ հեթանոսներն էին, որ ճանաչեցին ճշմարիտ լույսը՝ դուրս գալով իրենց խավար վիճակից և Քրիստոսին դավանեցին իբրև Աստվածորդի ու ճշմարիտ Մեսիա:

Մեր նախահայրերը հավատացին Հիսուսի բերած Ավետարանի բարի լուրին: Քրիստոնյա հայը քսանմեկ դարերից ի վեր, հավատարմորեն իր լույս հավատը պահեց ի գին ամեն զոհողության ու այսօր մենք էլ պարտավոր ենք փոխանցել այն եկող նոր սերունդին:

Բավական դժվար, նույնիսկ անկարելի պիտի լինի մեզ կատարել այդ սրբազան պարտականությունը, եթե պակասում է մեզ գիտակցությունը լիովին կատարելու քրիստոնեական կրոնի մեր վրա դրված պարտականությունները:

Որպեսզի Աստվածորդին Իր երկնային փառքով երկրորդ անգամ աշխարհ գալու ժամանակ չասի մեզ, թե՝ *«Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ մարգարեն ընդունելի չէ իր քաղաքում»*, այլ ընդհակառակը՝ Նրա սիրտը թող հրճվի, որ ոչ միայն հավատարիմ ենք մնացել Իր քարոզած ճըշմարտության և մեր պապենական սուրբ հավատին, այլ նաև՝ ջերմորեն ընդունել ենք Նրան մեր սրտի ու հոգու մեջ: Ամեն:

ԳԵՐԳԵՍԱՑԻ ԴԻՎԱՀԱՐԸ

«Պիղծ ոգի, դո՛ւրս ելիր այդ մարդուց»
(Մարկ. 5:1-20)

Այս պատմությունը դուք կարող եք կարդալ Մարկոս Ավետարանչի 5–րդ գլխի 1-20 համարներում, ուր Հիսուս բուժում է Գերգեսացի դիվահարին:

«Եվ Հիսուս եկավ ծովի հանդիպակաց կողմը, գերգեսացիների երկիրը: Եվ երբ նա նավակից դուրս ելավ, գերեզմաններից նրա դեմն ելավ մի մարդ, որին բռնել էր մի պիղծ ոգի, որի բնակության տեղն իսկ գերեզմանների մեջ էր: Եվ ոչ ոք նրան շղթաներով անգամ չէր կարող կապել, որովհետև շատ անգամ ոտնակապերով և շղթաներով կապված էր, բայց շղթաները փշրել էր ու ոտնակապերը՝ ջարդել: Ո՛չ ոք նրան չէր կարողանում զսպել, որովհետև միշտ, գիշեր ու ցերեկ գերեզմաններում և լեռներում, աղաղակում էր և ինքն իրեն քարերով ծեծում: Երբ նա Հիսուսին հեռվից տեսավ, առաջ վազեց ու երկրպագեց նրան. բարձրաձայն աղաղակեց և ասաց. «Ի՞նչ ես ուզում ինձնից, Հիսո՛ւս, բարձրյալ Աստծո՛ւ Որդի: Երդվեցնում եմ քեզ Աստուծով, ինձ մի՛ տանջիր», քանի որ Հիսուս նրան ասում էր. «Պի՛ղծ ոգի, դո՛ւրս ելիր այդ մարդուց»: Եվ նրան հարցրեց. «Անունդ ի՞նչ է»: Եվ նա ասաց նրան. «Իմ անունը Լեգեոն է, քանի որ բազում ենք»: Իսկ պիղծ ոգիները սաստիկ աղաչում էին նրան, որ այդ շրջանից դուրս չուղարկի իրենց: Եվ այնտեղ, լեռան լանջին, խոզերի մի երամակ կար, որ արածում էր: Բոլոր դևերը աղաչեցին նրան և ասացին. «Մեզ խոզերի մեջ ուղարկիր, որ մտնենք նրանց մեջ»: Եվ նա հրամայեց նրանց: Երբ պիղծ ոգիները դուրս ելան, մտան խոզերի մեջ, և երամակը, թվով մոտ երկու հազար, դարավանդից դիմեց դեպի ծովը, և խեղդվեցին ծովում:… Խոզարածները փախան և քաղաքում ու ագարակներում պատմեցին և մարդիկ դուրս եկան տեսնելու, թե ի՞նչ էր կատարվել: Եկան Հիսուսի մոտ և տեսան դի-

վահարին, որ նստել էր՝ հագնված և զգաստացած, նրան, որ լեգեոն ուներ. և զարհուրեցին: Եվ ովքեր որ տեսել էին, պատմեցին նրանց, թե ինչ պատահեց այսահարին և ինչ՝ խոզերին: Եվ սկսեցին աղաչել Հիսուսին, որ հեռանա իրենց սահմաններից» (Մարկ. 5:1-20):

Երբ քննում ենք այս դիվահարի վիճակը, տեսնում ենք, որ շատ բաներում մենք՝ քրիստոնյաներս, նմանվում ենք նրան: Այս խոսքերիցս շատերը վստահ եմ կդժգոհեն, նույնիսկ կարող են զարմանալ, սակայն հիշենք այս ասացվածքը. *«Ամեն բան քննե՛ք և բարին ամուր բռնեք»,* մենք էլ փորձենք քննել, համեմատություններ անցկացնել այս դիվահարի ու մարմնավոր, այսինքն՝ հոգևոր կյանքից թուլացած, տկարացած քրիստոնյաներիս միջև: Եվ քանի որ մարդասպանությունն ու եղբոր վրա զուր տեղը բարկանալը նույնն են Աստծու մոտ, շնությունն ու ուղղակի ցանկությամբ կնոջը նայելը միևնույն մեղքերն են, ապա շատ բաներ, որոնք տեսնում ենք գերգեսացու մեջ, կարող ենք տեսնել և մեր՝ քրիստոնյաներիս մեջ: Իհարկե, մարդկային տեսանկյունից դրանք անհամեմատելի են, բայց Սուրբ Գիրքն ասում է, *«Աչքի տեսածով մի՛ դատեք»:*

Ուրեմն սկսենք:

ա. Նախ գերգեսացու ապրած տեղը գերեզմանն էր և ամեն անգամ նա դիվոտելով շղթաները պոկում ու փախչում էր: Սուրբ Գիրքն ասում է. *«Թող աշխարհը ձեզ համար խաչը եղած լինի, իսկ դուք էլ՝ աշխարհի»:* Բայց շատ հաճախ մենք մեզ ավելիով տեսնում ենք աշխարհում և կարծես այս պատվիրանը այն շղթան է, որով կապված էր գերգեսացին, որը և կապում է մեզ: Բայց ամեն կերպ պոկում ենք այն և փախչում դեպի աշխարհ, այսինքն՝ գերեզման: Հոգևոր կյանքում աշխարհը գերեզմանն է, որ-տեղ թաղված պիտի լինի հին մարդն իր կրքերով հանդերձ: Բայց եթե մեկն ասի, թե մենք աշխարհում չենք և այն չենք սիրում, ապա թող քննի իր անձը, թե օրը քանի՞ ժամ է նստում հեռուստացույցի կամ համակարգչի (internet)-ի առջև,

քանի ժամ՝ թերթեր ու ամսագրեր է կարդում, որքան՝ քաղաքականության շուրջն է զրուցում և ամենակարևորը՝ թե միտքը օրվա մեջ ինչքան ժամանակ է ցնորական պըտույտներ գործում աշխարհային՝ մարմնավոր ոլորտներում ու ինչքան աստվածայինի մասին մտածում:

Չէ որ պատվիրանն ասում է. *«Ամբողջ մտքով, հոգով, սրտով և ամբողջ էությամբ սիրիր քո Տեր Աստծուն»:* Եվ եթե անկեղծորեն քննենք ինքներս մեզ ու տեսնենք, որ շատ բաներում իսկապես մենք ավելի աշխարհն ենք սիրում, այսինքն՝ մահն ու գերեզմանը, ապա կսարսափենք, քանի որ՝ *«Աշխարհի հանդեպ սերը թշնամություն է Աստծու դեմ»:* Հիսուս ասաց. *«Ես իսկ եմ հարություն և կյանք, ով հավատում է ինձ, թեպետ և մեռնի, կապրի. և ով կենդանի է ու ինձ հավատում է, հավիտյան չի մեռնի» (Հովհ. 11:25-27):*

Ուրեմն չփախչենք կյանքից դեպի մահ, այլ խնդրենք, որ Տիրոջ շնորհը մեզ բժշկի աշխարհսիրությունից: Փորձենք նմանվել Նրան, այլ ո՛չ թե գիշեր ու ցերեկ գերեզմաններում անցկացնենք դիվահարի պես:

բ. Կարդում ենք նաև, որ դիվահարը լեռներում աղաղակում էր: Շատերս էլ կարծես նույն բանն ենք անում սիրով ու ձգտում ենք բարձր տեղերի, առաջին աթոռների՝ փառավորվելով մարդկանցից և քայլելով հպարտության բարձունքներում, այնինչ Սուրբ Գրքում ասվում է. *«Աստված դեմ է հպարտներին»:* Եվ այդ բարձր տեղերում որքան էլ խոսակցությունը հավատի շուրջ լինի, որքան էլ քարոզները գիտական մեծ բովանդակություն ունենան, դրանք կնկատվեն որպես հպարտության լեռից հնչող աղաղակ և ուրիշ ոչինչ:

Շատ անգամ տեսնում ենք, որ քրիստոնյաներիս մեջ, երբ միասին ենք, ավելի շատ խոսում ենք աշխարհի մասին, մեկ էլ տեսար մեզանից մեկն ընկնում է բարկության մոլուցքի մեջ ու սկսում բարձր-բարձր աղաղակել, մյուսը՝ մի զվարճալի բան է պատմում և դրանից բնակա-

նորեն առաջանում է անզուսպ ծիծաղ ու հռհռոց և այս բոլորը ոչ այլ ինչ է, եթե ո՛չ գերգեսացու աղաղակը: Եթե նման բան նկատենք մեր մեջ. հեռվում աղանդավորների մեջ չփնտրենք *«գառան մորթով գայլերի»,* այլ այդ տեսնենք մեր մեջ, քանի որ անարժանաբար Տիրոջ սուրբ անունն ենք վերցրել մեր վրա ու շատերին երևում ենք որպես լույսի որդիներ, բայց իրականում մենք ավելի նման ենք *հպարտության, փառամոլության, ինքնավստահության և մեծամտության* լեռներից աղաղակող գերգեսացի դիվահարին: Եվ ինչպես ասում է Սուրբ Գրիգոր Նարեկացին. *«Կռապաշտ է նա, որ ծածկված քողով ձևացնում է իրեն բարեպաշտ, բայց կատարում է Արարչի համար անախորժ գործեր»:*

Ուրեմն, եթե սա էլ նկատենք մեր մեջ, անհոգ չլինենք, այլ Եզեկիա թագավորի պես լաց լինենք Տիրոջ առջև, Նրանից ապաշխարության ժամանակ խնդրենք, փորձենք իջնել խոնարհության ձորը, որպեսզի Տերը մեզ բարձրացնի Իր սուրբ լեռը:

գ. Եվ ապա կարդում ենք, որ դիվահարը ինքն իրեն քարերով ծեծում էր: Այստեղ էլ բազում նմանություններ կգտնենք մարմնավոր ընթացքով քայլող քրիստոնյաների և նրա միջև: Փորձենք տեսնել, թե մենք ինչպիսի՞ քարերով ենք միշտ ծեծում մեր հոգին ու մեր անձը: Շատ հաճախ տեսնում ենք քրիստոնյա մեկին՝ բարկության մեջ: Այնքան կարևոր չէ պատճառը, քանի որ բարկությունը մահացու մեղք է, և մենք կարծես վերցնելով բարկության քարը՝ դրանով ինքներս մեզ ենք ծեծում՝ ավերելով մեր հոգևոր կյանքը: Մոռանում ենք այս խոսքը. *«Բարկացե՛ք, բայց մի՛ մեղանչեք»:* Երբեմն վերցնում ենք նախանձի քարը և դրանով ծեծում՝ ինքներս մեզ: Ում որ նախանձում ենք, դրանից նա չի տուժում, բայց նախանձողի համար գրված է, թե՝ *«Նախանձը ոսկորների փտություն է բերում»:* Ահա թե ինչու, մեր հոգիները անդամալույծ են դառնում հոգևոր փտախտից:

Երբեմն վարպետորեն օգտագործելով ծիծաղկոտության և կատակասիրության քարերը, ջախջախում ենք մեր մեջ այն երանելի զղջման հոգոցներն ու արցունքները, որոնք թե՛ յուղ են մեր լապտերների համար և թե՛ պատճառ՝ մեղքերի թողության: Քանի որ, թե՛ Պետրոսը և թե՛ Եզեկիան ապրեցին արտասուքների պատճառով, նաև ասվում է, թե՝ *«Եթե զղջաս և հոգոց հանես, այնժամ կապրես»:*

Ու այս մատենաշարում կտեսնենք, թե ուրիշ քանի՛ քանի՛ տեսակ քարերով գիշեր ու զոր ծեծում ենք ինքներս մեզ և զարմանում, թե ինչո՞ւ չի գործում Աստծու զորությունը մեր մեջ, ինչո՞ւ չկա *սեր, խոնարհություն, հավատ ու հույս:* Ուրեմն, դադարենք դիվահարին կրկնօրինակելուց, դեն նետենք այս հոգեսպան քարերը, որպեսզի բժշկություն գտնենք Տիրոջից և սրանից հետո կարողանանք գիտակցել, թե՝ ո՞րն է բարին և ո՞րն է չարը, քանի որ գրված է. «*Վա՛յ նրան, ով չարին բարի կասի և բարուն՝ չար»:* Եվ երբ Հիսուս հարցրեց գերգեսացուն, թե անունն ի՞նչ է, սա պատասխանելով ասաց, թե՝ *«Լեգեոն»,* քանի որ շատ էին:

դ. Մեր մեջ էլ, ճիշտ է, ո՛չ դևերի, բայց կրքերի բազում լեգեոններ կան, *հարստության, շատակերության, ագահության, աշխարհասիրության, դատարկաբանության,* և դեռ բազում այլ կրքերի: Սրանցից ազատվելու համար, նախ պիտի գիտակցենք, որ դրանք չար ու մահաբեր բաներ են և մեծ արգելքներ՝ երկնքի արքայության ճանապարհին: Բոլոր սուրբ հայրերի նպատակը մեկն էր՝ հասնել անկիրք երկիրը, այսինքն՝ ըստ Պողոս Առաքյալի՝ *«Հին մարդը կրքերով հանդերձ խաչը հանել»*:

ե. Իսկ ի՞նչ են խոզերը, եթե ո՛չ առարկաները, որոնց հանդեպ հետաքրքրություն է առաջանում մեր մեջ. դրանք կարող են լինել հագուստ կամ կերակուր, պաշտոն կամ գեղեցիկ կերպարանք, գրքեր կամ ինչ-որ հավաքածու, հեռուստացույց և թե աշխարհային բազում բաներ:

զ. Բայց մենք պարտավոր ենք անտարբեր չլինել այս բոլորի հանդեպ, որպեսզի պանդխտության օրերը այս անցավոր կյանքում կարողանանք հասցնել հաղթական ավարտին ու հասնել բուն հայրենիքը՝ «Ի Վերին Երուսաղեմ»: Մեր անելիքը սա է՝ *փնտրենք, որպեսզի գտնենք, ծեծենք, որպեսզի բացվի, և խնդրենք, որպեսզի տրվի:* Իսկ եթե հույսդ դրել ես Աստծու ողորմության վրա և անհոգ ես կրքերիդ հանդեպ, ապա քեզ օրինակ թող լինի գերգեսացիների դասը, որոնք Տիրոջը իրենց երկրից դուրս հանեցին: Ուրեմն մենք մեր գործերով Տիրոջը մեր սրտերից չհանենք: Իսկ եթե Աստված տեսնի մեր, թեկուզ, թույլ և տկար փորձերը, ապա Նա էլ Իր ողորմությամբ ու մարդասիրությամբ կմիջամտի և կօգնի մեզ մաքրվել ու սրբվել մեր կրքերից և ցանկություններից, որոնք մեղք են ծնում, իսկ սա էլ իր հերթին՝ մահ:

Եվ երբ Տիրոջ ողորմությամբ կմաքրվենք և կբժշկվենք, այն ժամանակ կարող ենք հանգիստ նստել Նրա ոտքերի մոտ՝ բժշկված գերգեսացու պես: Ու այն ժամանակ, ինչպես գերգեսացիները տեսնելով բժշկված դիվահարին՝ վախեցան, մենք էլ կդառնանք ահ ու սարսափ դևերի համար, որովհետև նրանք մեր դեմ են դուրս գալիս մեր կրքերի պատճառով, իսկ, երբ ազատվում ենք՝ նրանց զորությունը թուլանում է:

Հանգիստ քնելու և հոգեպես խաղաղվելու համար օգտագործենք այս դեղը.

«Մի բժիշկ հարցնում է ծերունիներից մեկին. «Բոլոր հոգևոր ցավերի դեղերը գիտե՞ս, ո՛վ հայր»: Ծերը պատասխանում է. «Շատ բան գիտեմ, եթե լսես: «Վերցրու ապաշխարության շաքարը, եղբայրսիրության ծաղիկը, աղքատսիրության տերևը, խոնարհության պտուղը և լցրու ողորմության աղամանի մեջ ու աղա այն՝ ծնրադրելով: Այնուհետև քամի՛ր նեղության սրբիչով և արտասվախառն խմի՛ր ամբողջ գիշերվա ընթացքում: Սա է բոլոր ցավերի դեղը, որ ո՛չ միայն ներքին մարդուն է բժշ-

կում, այլև արտաքինն է բուժում, նորոգում ու մաքրում» (Հարանց վարք, Խրատանի 1, էջ 30):

Իրապես այս բժշկված վիճակում է միայն, որ կարող ենք լսել Աստծու ձայնը և նույնիսկ պատճառ դառնալ շատ մարդկանց փրկության: Ինչպես որ Տերը ասաց բժշկված գերգեսացուն՝ *«Գնա՛ քո տունը հարազատներիդ մոտ և պատմի՛ր նրանց այն ամենը, ինչ Տերը արեց և թե ինչպես խղճաց քեզ» (Մարկ. 5:19):* Նա էլ գնաց և սկսեց Դեկապոլիսի մեջ պատմել, ինչ որ Հիսուս իրեն արեց: Բոլորը զարմանում էին:

Ուրեմն, մեր հավատով ու վկայություններով չընմանվենք աղաղակող գերգեսացուն, այլ մեր կյանքի ճըշմարիտ փոփոխությամբ քարոզենք Երկնքի Արքայությունը՝ Աստծու փառքի համար: Ամեն:

ԲԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ԹՇՆԱՄԱՆՔ Է

«Բարկությունը թշնամանք է հարուցում, և թշնամանքը կռիվ է ծնում, իսկ կռիվը՝ հարվածներ, և հարվածները՝ վերքեր, իսկ վերքերից շատ անգամ մահեր են լինում»
Սուրբ Բարսեղ Մեծ Հայրապետ

Այս խոսքը Ընդհանրական Քրիստոնեական Հայրերից՝ Սուրբ Բարսեղ Մեծ Հայրապետի խոսքերն են։

Հետաքրքիր մտածումներ են։ Փորձենք հարցերի վերածել սրանք. *«Ի՞նչ է բարկությունը, որը թշնամություն է առաջ բերում, ի՞նչ է թշնամությունը, որը կռիվ է ծնում, իսկ կռիվը՝ հարվածներ և հարվածները՝ վերքեր, վերքերից էլ երբեմն մահեր են լինում»։*

Եկեք առանձին-առանձին վերլուծենք այս հարցերը.

ա. *Նախ ի՞նչ է բարկությունը, մարդիկ ինչո՞ւ են բարկանում։* Բարկությունը առաջ է գալիս, երբ յուրաքանչյուր մարդ սխալ մի բան է տեսնում՝ *անիրավություն, անտեղի զրպարտություն, անարդար վերաբերմունք, ճըշմարտության ուրացում,* որոնք երբեմն հունից հանում են տվյալ անձին։ Սաղմոսաց գրքում ասվում է. *«Բարկացե՛ք, բայց մի մեղանչեք և օր չանցնի ձեր բարկության վրայից» (Սաղմ. 4:4),* այսինքն սխալ կամ անարդարացի բաների համար չափից ավելի բարկանալը մեղք է և վնասակար։ Անզգամ ու շահամոլ մարդիկ են, որ չեն բարկանում, երբ տեսնում են անիրավություններն ու անարդարությունները։ Երկրորդ, երբ բարկանում ենք զգույշ պիտի լինենք, որ այն թշնամությունների դուռ չբացի։ Շատ անգամ մարդիկ այդպիսի բարկությունների ժամանակ է, որ տարիներով իրար հետ չեն խոսում, դառնում են իրար թշնամիներ, նույնիսկ քույրը՝ եղբոր, ծնողները՝ զավակների, հարևանները՝ իրար և ընկերները՝ ընկերների հետ։ Այդ պատճառով բարկությունը մեր Եկեղեցում դասվել է յոթը մահացու մեղքերի շարքին։

բ. *Թշնամությունը՝ կռիվ է ծնում:* Այո՛, ճիշտ է, չափից ավելի բարկացած մարդիկ չեն կարողանում իրենք իրենց վրա հսկել, դուրս են գալիս ափերից և սկսվում են փոխադարձ հայհոյանքները, մեկը մյուսին մեղադրելը զանազան հանցանքների մեջ, խոսքերը վերածվում են բռունցքների:

Պողոս Պատրիարք Ադրիանուպոլսեցին ասում է. *«Բարկությունն անվանել բոլոր չարիքների աղբյուր անտեղի չէ, որովհետև չկա չարիք, որ բարկությունից առաջ չգա՝ հայհոյանք, հարված, սպանություն, գերություն, ունեցվածքի կորուստ, քաղաքների ավերում, խաղաղության, սիրո և բոլոր բարիքների վերացում. մի խոսքով՝ բարկությունը մարդկային ցեղի ժանտախտ ու դժոխքի դուռ է»* և շարունակում է. *«Բարկությունը հոգու կիրք է, որի պատճառը սրտի շուրջ արյան եռքն է, որի չափը երբ անցնում է, մարդու մեջ մեծամեծ վնասներ են գործվում, մինչև իսկ երակները պայթելու և տարաժամ մահվան հասնելու աստիճան: Որովհետև «բարկ» բառը նշանակում է սաստիկ ու ազդու, ուստի առած կա, թե՝ «Բարկ քացախն իր ամանին վնաս է»: Այս պատճառով էլ բժիշկները մարդկանց պատվիրում են սաստիկ բարկությունից զգուշանալ, քանզի դրանից առողջը հիվանդանում է, և հիվանդը՝ մեռնում, երբեմն էլ բարկությունը հիվանդանալու ժամանակ ու տեղ չի թողնում, այլ իսկույն նույն տեղում, իբրև անողորմ դահիճ, կյանքից զրկում» («Խրատի Թանգարան»):*

գ. *«Կռիվը՝ հարվածներ և հարվածները՝ վերքեր, իսկ վերքերից երբեմն մահեր են լինում»:* Իրականում բարկացած մարդը անկառավարելի է և անզսպելի: Դեպքեր են լինում, երբ մեկը մյուսին հարվածում են, վերքեր են բացվում, նույնիսկ շատ անգամներ այդ հարվածներից մարդիկ մահանում են: Առակաց գրքում ասվում է. *«Անզգամ մարդը հակառակություն է գրգռում, հեզաբարո մարդը դադարեցնում է մեղքերը, իսկ բարկացկոտ մարդը*

խորացնում է դրանք» (Առակ. 29:22): Կռիվ հրահրողը անպայմանորեն ինքն է տուժում: Սրա համար հայկական ժողովրդական առածն ասում է. *«Բարկությամբ ոտքի կանգնողը՝ վնասով իր տեղն է նստում»:*

Հետաքրքիր է այս պատմությունը, որը պատկերում է բարկությունը, սակայն կենդանական աշխարհում.

«Պատմվում է, թե Հնդկաստանի անտառներից մեկի մոտակայքում գտնվող մի գյուղի ծայրամասի հյուղակում երկու փոքրիկ առանձին քնել էին: Անտառից մի խոշոր վագր է դուրս գալիս և մարդու հոտ առնելով մոտենում է հյուղակին ու նրա բաց դռնից ներս մտնում: Տեսնում է քնած փոքրիկներին և պատրաստվում է նրանց վրա ցատկել ու բզկտել: Հանկարծ դիմացի հայելու մեջ նկատում է մի այլ խոշոր վագրի: Բարկանում է, նա էլ նույնն է կրկնում, զայրանում է և ատամներն է ցույց տալիս, նա էլ նույնն է անում: Այս արարքի վրա դիմացի վագրին պարտության մատնելու և որսը առանձին ուտելու համար վագրը իր ամբողջ ուժով նետվում է հայելու վագրի վրա: Արդյունքը այն է լինում, որ հայելին ջարդ ու փշուր է լինում և աղմուկից վագրը երեխաներին թողած լեղապատառ փախչում է անտառ»:

Հարց է առաջանում. *«Արդյոք բարկության դիմաց մի դեղ կամ հնարավորություն կա՞ կանխելու համար այս մահացու մեղքի գործադրությունը»:*

Լսենք այս մասին մի անգամ ևս Պողոս Պատրիարքի խրատը. *«Բարկության ախտի դեմ դյուրապատրաստ դեղ է մարդու բնության տկարությունը ճանաչելը, որն առավել տկար է մանուկների, կանանց, երկչոտների ու թեթևամիտների մեջ և սպասավորների սխալները ներելը, որ ակամա գործվում են նրանց անգիտությունից կամ տկարությունից. որովհետև եթե նույնիսկ կամենան իրենց պարտավորությունն անթերի կատարել, միևնույն է, հնարավոր է, որ ինչ-ինչ բաներում թերանան:*

Ուստի տանուտերը ներողամիտ ու համբերող պիտի լինի և ո՛չ թե վառոդի պես բոցակիզի նրանց, որպեսզի չլինի թե հուսահատվելով կորցնեն իրենց հավատարմությունը և մտածեն նրան չարիք հասցնել» («Խրատի թանգարան»):

Մի՛ բարկացեք, ոխ ու քեն մի՛ պահեք, բարկությունը բեռ մի՛ դարձրեք ձեր առանց այդ էլ մտահոգիչ, ծանրաբեռնված ու հոգսերով լի կյանքում, այլ եղեք հանգիստ, խաղաղ և ապրեք հավատի, աղոթքի ու սիրո կյանքով:

Ուրեմն, եկե՛ք հետևենք Հիսուսի աստվածային պատվիրաններին, փորձենք չբարկանալ, այլ, ընդհակառակը, մեր մեջ ավելի զորացնենք սերն ու ներողամտության ոգին մեկս մյուսի նկատմամբ, մնանք մեր բարձրության վրա, ապրենք պատվաբեր կյանքով, նվիրվենք մեր ընտանիքին, մեր ժողովրդին ու մեր Եկեղեցուն: Դժվար է, բայց անկարելի չէ, ապրել *հեզ, պարկեշտ, մաքուր ու սրբակենցաղ կյանքով*: Ամեն:

Ի՞ՆՉ Է ՍԵՐԸ

«Սերն է ամենակարևորը»,- ասում է Պողոս առաքյալը

Պողոս առաքյալը Կորնթացիներին ուղղած իր նամակի 13-րդ գլխում խոսում է Սիրո մասին: Այդ գլուխը կոչվում է *«Օրհներգ Սիրո»,* ուր նա խոսում է այն մասին, թե ամեն բան կարող ենք իմանալ և ունենալ՝ լեզուներ, մարգարեություններ, ունեցվածք, հարստություն, լեռները տեղափոխելու չափ հավատ, զանազան գիտություններ, սակայն, եթե սեր չունենանք՝ ոչինչ ենք: *«Սերը համբերող է, քաղցրաբարո է, սերը չի նախանձում, չի ամբարտավանանում, չի գոռոզանում, անվայել վարմունք չի ունենում, իրենը չի փնտռում, բարկությամբ չի գրգռվում, չար բան չի խորհում, անիրավության վրա չի ուրախանում, այլ ուրախանում է ճշմարտության վրա. ամեն բանի դիմանում է, ամեն բանի հավատում է, մշտապես հույս է տածում, ամեն բանի համբերում: Սերը երբեք չի անհետանում, թե մարգարեություններ են, պիտի չքանան, թե լեզուներ՝ պիտի լռեն, թե գիտություն՝ պիտի անցնի, քանզի շատից քիչը գիտենք և շատից քիչն ենք մարգարեանում: Իսկ երբ գա կատարյալը, շատից քիչը կանհետանա: Բայց արդ, մնում են՝ հավատ, հույս, սեր, սրանք երեքը՝ և սրանցից մեծագույնը՝ սերն է» (Ա. Կորնթ. 13:1-13):*

«Սերն է ամենակարևորը»,- ասում է Պողոս առաքյալը:

Դժբախտաբար այսօրվա աշխարհը զուրկ է այդ աստվածային սիրուց: Մենք կարիքը չունենք նայելու աշխարհի քարտեզին, զգալու համար այդ բացը մեր ընկերային կյանքից ներս, երբ ամեն օր անցնում ենք տխուր փորձության միջով ամենուր տիրող քաղաքական վերիվայրումների պատճառով, ուր չար մարդիկ շեղված Աստծու պատգամած սիրուց ու հանդուրժողության ոգուց, իրենց գազանական բնազդները սրած, քաղաքական շա-

հեր ակնկալելով, անմեղ մարդկանց ամենօրյա սպանությունների ու դժբախտությունների պատճառ են դառնում:

Դարեր շարունակ, տարբեր մոտեցումներով առաքյալներից սկսած մինչև եկեղեցու հայրերն ու բանաստեղծները, երգել են հավատով ու հույսով լի սերը: Սերը, որը հույս ու հավատ է ներշնչում, կորածին ու մոլորվածին, սերը, որը հույս և հավատ կոչվող այս երկու արժանիքներին իրապես տալիս է իրենց դիրքին պատշաճ բարձրությունը:

Ահա թե ինչպես է պատկերացնում Սերը Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Շենուդա Գ-ը *«Աստված Միրո Գանձ է»* վերնագիրը կրող իր խրատականի մեջ:

«...Մի՛ սպասեք, մինչև չար միտքը գա ձեր ուղեղի մեջ, և դուք դժվարանաք դիմադրել, այլ դուք պետք է նախաձեռնություն հանդես բերեք և զբաղեցնեք ձեր մտքերը արդար գործերով: Զգտեք ձեռք բերել սուրբ խոկումներ և աստվածային մտքերի գանձ, առ Աստված ունեցած սիրո գանձը, որ ձեր գիտակցությունը ամաչի այն մտքերից և զգացմունքներից, եթե դնը ուզում է կեղտոտել այն կամ մղել անկման: Միշտ զբաղվեք օգտակար բաներով և հիշեք, որ Աստված կարդում ու քննում է ձեր մտքերը: Ուստի դուք պետք է ամաչեք ձեզանից, երբ տեղ եք տալիս մեղսալից մտքերի: Եվ երբ դուք ընկնեք չար մտքերի մեջ, մի՛ հուսահատվեք կամ պահեք այդ միտքը, այլ սթափվեք շուտով և կարգավորեք ձեր մտքերը:

Ես խորհուրդ եմ տալիս ձեզ անել առաջին քայլը. դուք պետք է ուղղեք ձեր մտքերը և թույլ չտաք նրանց իշխելու և կառավարելու ձեզ: Միտքը կարող է զենք լինել ձեր ձեռքին և կարող է զենք դառնալ ձեր դեմ. թող այն ձեր ընկերը լինի և ո՛չ թե՝ թշնամին: Իմացե՛ք, որ ամենանշանակալի և օգտակար նախաձեռնությունները նախապես գաղափար են եղել և օգտակար համամարդկային գործերը՝ ծնունդ են առել գաղափարներից: Թող ձեր գաղա-

փարները գանձ լինեն թե՛ ձեր և թե՛ ուրիշների համար: Թող ձեր մտքերը օրհնություն լինեն այն հասարակության համար, որտեղ ապրում եք: Եթե դուք չեք կարող ձեր մտքերն օգուտի աղբյուր դարձնել ձեր և ուրիշների համար, գոնե թույլ մի՛ տվեք, որ այն ձեր սրտի մաքրության և հավիտենականության կորստյան պատճառ դառ-նա:

Թող Աստված ձեզ հետ լինի, շնորհելով ձեզ մտքի մաքրություն որպես մի սուրբ գանձ»:

Այս պատմությունը հուզիչ է և ուսուցողական.

«Իրական և անշախախնդիր սերը.

Սովորական մի հոգսաշատ առավոտ էր...ժամը 8:30-ի մոտ էր... 80 տարեկանի մոտ մի ծերունի եկել էր հիվանդանոց, որ ձեռքի մատի կարերը հաներ: Ակնհայտ էր, որ նա շատ էր շտապում ու դողդողացող ձայնով ասաց, թե շատ կարևոր գործ ունի ժամը 9-ին:

Ես խնդրեցի նրան նստել՝ իմանալով, որ բոլոր բժիշկները զբաղված են: Երբ նայում էի նրա ձեռքը, նա ամեն վայրկյան թախծոտ աչքերով նայում էր ժամի վայրկյանասլաքին: Ես տեսա, որ դեռ շուտ է կարերը հանելու համար... մյուս բժիշկներից վերցրի համապատասխան դեղանյութերը...իսկ մինչ այդ մենք զրուցում էինք: Ես հարցրի.

Երևի դուք մեկ այլ բժշկի մոտ եք նշանակված ու դրա համար եք շտապում:

Ո՛չ, ո՛չ...ես պետք է հասցնեմ մեկ այլ հիվանդանոց գնալ, որ կերակրեմ իմ հիվանդ կնոջը:

Ես հարցրեցի ծերունուն ու իմացա, որ իր կինը հիշողության կորուստ ունի:

Խոսելու ընթացքում ես մշակեցի նրա ձեռքն ու վիրակապ դրեցի կրկին: Նայեցի ժամին ու հարցրեցի.

Կանհանգստանա՞ ձեր կինը, եթե մի փոքր ուշ գնաք:

Իմ կինը ինձ չի հիշում արդեն հինգ տարուց ավել է: Նա անգամ չգիտի, թե ո՞վ եմ ես,- ասաց ծերունին:

Ու դուք ամեն առավոտ գնում եք նրա մոտ, չնայած նրան, որ նա ձեզ չի՞ հիշում...

Նա ժպտաց ու հայրաբար բռնելով ձեռքս՝ ասաց.

Նա չգիտի, թե ո՞վ եմ ես, բայց ես գիտեմ չէ, թե ո՞վ է նա:

...Ես հազիվ էի զսպում արցունքներս ու փշաքաղվել էի... և մտածում էի. «Հենց սա է այն սերը, որի մասին ես միշտ երազել եմ»…

Ընդհանրական Քրիստոնեական Հայրերից Սուրբ Հովհան Ոսկեբերան Հայրապետն ասում է. *«Եթե բժիշկն ատի և երես թեքի հիվանդից, իսկ հիվանդը խուսափի բժշկից, ապա կարո՞ղ է հիվանդը բուժվել, երբ բժիշկ չկանչի, իսկ բժիշկը չայցելի նրան: Ինչու՞ ես դու խուսափում և երես թեքում նրանից: Որովհետև նա պի՞ղծ է: Հենց այդ պատճառով հարկ է գալ և բժշկել, որպեսզի վերականգնվի հիվանդի առողջությունը: Թեկուզև նա տառապի անբուժելի հիվանդությամբ, միևնույն է, դու պետք է քո գործն անես: Հուդան նույնպես բռնված էր անբուժելի հիվանդությամբ, սակայն Աստված չդադարեց նրան բժշկել:*

Այդ պատճառով դու մի՛ թուլացիր: Թեկուզև ջանքեր թափելով դու անկարող ես նրան ազատել պղծությունից, միևնույն է, դու պարգև կստանաս՝ կարծես թե ազատել ես նրան և կստիպես նրան զարմանալ քո խոնարհությամբ՝ դրանով իսկ փառաբանելով Աստծուն: Թեկուզև հրաշքներ գործես, թեկուզև հարություն տաս մեռյալներին, թեկուզև նման այլ բաներ կատարես, հեթանոսները երբեք այդքան չեն զարմանա քեզ վրա, որքան երբ քեզ տեսնեն այդպես խոնարհ, այդքան բարի և սիրալիր վարվեցողությամբ: Իսկ դա պակաս կարևոր չէ, որովհետև շատերն այդ կերպ կարող են ազատվել արատներից: Ոչինչ այնպես չի կարող գրավել, քան սերը:

Այսպիսով, եթե սերը առաքինության մեղավորն է, ապա ջանք չխնայենք, որ նա բնակվի մեր հոգիներում,

որպեսզի նա մեզ բարիքներ պարգևի և մենք մշտապես հավաքենք նրա հավերժ ծաղկող ու երբեք չթառամող առատության պտուղները: Այդ կերպ մենք հասու կլինենք և հավերժական բարիքներին, որոնցով և կարժանանանք մենք բոլորս՝ բարեշնորհ և մարդասեր մեր Տեր Հիսուս Քրիստոսին»:

Սերը մի տեսակ նպաստ է, աստվածային նվեր ու մեզանից յուրաքանչյուրը անպայման կարող է իր բաժինը բերել ամեն ասպարեզում, որպեսզի մարդիկ ամեն օր ու ամեն րոպե, փառք տան Աստծուն՝ Սիրո Արարչին:

Կ. Պոլսի Պատրիարք Մեսրոպ Արքեպս. Նարոյանը, իր քարոզներից մեկում այս ձևով է ներկայացնում Սիրո իմաստը. *«Սիրո կյանքը հավատի ծաղկումն է: Հավատը սիրո շնորհիվ է աշխատում ու կյանքում շարունակվում, ինչպես արյունը մարմնի մէջ: Հավատը մեռած է, եթե նրա հետ զուգընթաց չէ Սերը՝ կյանքի երջանկությունը: Ամեն մարդ պետք է իր անձից, իր տաղանդից, իր հարստությունից մի բան զոհի, նվիրի իր ընկերոջը: Որով «Սերը մեր հավատի ոգին ու իմաստն է»:*

Եկե՛ք հետևենք Պատրիարք Հոր իմաստուն խոսքերին և աղոթենք, որպեսզի Աստված Հավատի ու Սիրո անսպառ աղբյուրից հոսեցնի մեր ժողովրդի բոլոր զավակների սրտերից ներս: Ամեն:

ՆԱԽԱՆՁԱԽՆԴՐՈՒԹՅԱՆ ՈԳԻՆ

«Նախանձ տան քո կերիցէ զիս»
«Քո տան նկատմամբ իմ
նախանձախնդրությունը ինձ պիտի ուտի»
(Հովհ. 2:17)

Սաղմոսերգուի դարերի խորքից եկող խոստովանությունն է սա, խոստովանություն, որը պարզապես խոստովանություն չէր, այլ նաև՝ մարգարեություն, որը կարող է նույնիսկ մեզ ուղեցույցի դեր կատարել:

Այս խոսքերը, Քրիստոսի մարդեղությունից հազար տարիներ առաջ արտասանված Դավիթ թագավորի կողմից, մի անգամ ևս նորոգվեցին Աստվածորդու աշակերտների մտքում, երբ Հիսուս հաղթականորեն մուտք գոր-ծելով Երուսաղեմ տաճար մտավ, սրբագործելով Աստծո Տունը, բացականչելով՝ *«Գրված է՝ իմ տունը աղոթքի տուն պիտի կոչվի, իսկ դուք ավազակների որջ եք արել այդ» (Մատթ. 21:13)* և Իր նախանձախնդրության դրսևորումով մեզ բարի օրինակ եղավ: Աստծու տաճարում աստվածային հեզությունը փոխակերպվեց բարկության, մեր Տիրոջ *«սրբասեր աչքը»* չհանդուրժեց ապականությունը և Նրա նախանձախնդրության շնորհիվ տաճարը մաքրվեց ու սրբացավ:

Նույն նախանձախնդրությամբ էր, որ Մովսես մարգարեն Իսրայելի ժողովրդին դուրս բերեց Եգիպտոսից և Հեսուն առաջնորդեց նրանց *«Ավետյաց Երկիր»:* Նախանձախնդրությունն իմաստնացրեց Սողոմոնին ու Սիրաքին, ոգեշնչեց մարգարեներին, սաղմոսերգուին ուղղություն տվեց կնքելու իր խոստովանագիրը: Եղիա մարգարեն, մինչ իր հրեղեն կառքով երկինք բարձրանալը, այդ ոգին փոխանցեց Եղիսեին:

Հիսուս Իր համբարձումից տասը օր հետո աշակերտների վրա իջեցրեց *«Նախանձախնդրության և կրակի հոգին»: «Եվ բոլորը լցվեցին Սուրբ Հոգով ու սկսեցին խո-*

սել ուրիշ լեզուներով, ինչպես որ Սուրբ Հոգին նրանց խոսել էր տալիս» (Գործք 2:1-4): Եվ առաքյալները, ովքեր Հիսուսի ձերբակալության ժամանակ *«հրեաների վախից թաքնվել էին»,* բոցավառված այդ ոգով, անվեհեր նետվեցին վկայելու Աստվածորդու մասին և արժանացան նահատակության փառավոր պսակին: Նրանցից երկուսի՝ Սբ. Թադեոս և Սբ. Բարթողիմեոս առաքյալների արյունը սրբագործեց հայոց հողը և դարձավ վեմը Հայ Եկեղեցու:

Նույն ոգով մեր հավատի Հայրապետը՝ Սբ. Գրիգոր Լուսավորիչը հանձն առավ կրել բազում տառապանքներ և որպես իր չարչարանքների արդյունք լուսավորեց ազգը Հայոց: Եվ մեր հայրերը, հայացքները հառած այդ Կենսատու Լույսին, իրենց արյան և քրտինքի գնով փայփայեցին ու առատապէս փոխանցեցին մեզ ազգային-եկեղեցական արժեքները:

Կան մարդիկ, ովքեր կարծում են, թե իրենք ամենակարող են և Աստծուց էլ ուժեղ են ու կարող են ամեն ինչ ստեղծել առանց Նրա օգնության: Ինչո՞ւ, որովհետև նրանց մեջ նախանձախնդրության ոգին ո՛չ միայն թույլ է, այլ՝ պակաս է:

Այս պատմությունը դրա մասին է.

«Խորհրդային Միության անհավատության շրջանի գիտնականներից մեկը, որը ուժեղ անհավատ էր և երկրի վրա իր քարոզչությունն էր կատարել ամենաթունդ կերպով, մահանում և նրա հոգին բարձրանում է երկինք: Հրեշտակները նրան հարցնում են, թե ինչո՞ւ իր ամբողջ կյանքում չի հավատացել Աստծո զորությանը: Անհավատը պատասխանում է և ասում, որ Աստված իրենից այնքան էլ ուժեղ չէ, որովհետև ինքն էլ է կարողանում ստեղծել այն, ինչ որ ստեղծել է Աստված: Եվ այդ դեպքում էլ ինչո՞ւ պիտի հավատա Նրա զորությանը: Հանկարծ լսվում է Աստծու ձայնը.

Դե որ այդպես է, արի մա՛րդ ստեղծենք:

Անհավատը համաձայնվում է: Տիրոջ հետ շտապ գործի անցնելով, նա կռանում է և փորձում գետնից մի բուռ հող վերցնել: Այդ պահին Աստված նրան կանգնեցնում է և ասում.

Այդ հողը ես եմ ստեղծել: Դու օգտագործիր քո ստեղծածը: Գիտնականը մնում է գլխիկոր» («Գեղեցիկ ապրելու գաղտնիքները» գրքից):

Մի՞թե այսօր նախանձախնդրության ոգու անհրաժեշտությունը կենսական չէ մեզ համար, մի՞թե սաղմոսերգուի երեք հազար տարիներ առաջ արտասանված խոսքերը ժամանակակից չեն, մի՞թե Աստվածորդու տված օրինակը համազոր չէ այսօրվա մարտահրավերներին: Մի՞թե երանություն չէ, Հայրենիքի ու Եկեղեցու նկատմամբ մեր դրսևորած նախանձախնդրության պատճառով, ազգային-եկեղեցական արժեքները *«նախատողներին, նախատինքի»* արժանացնելը:

Մի պահ ինքներս մեզ հարցնենք. *«Արդյոք մեր մեջ բնակվո՞ւմ է նախանձախնդրության ոգին, արդյոք ամբողջական նվիրման ու հանձնառության ոգո՞վ ենք մոտենում մեր պարտավորություններին»:*

Սուրբ Անտոն Մեծը ասում է. *«…Այդ զորությունը փրկության նախանձախնդրությունն է, որ հանուն Աստծո փառքի պատրաստ է ամեն ինչի: Եթե այդ նախանձախնդրությունը կա, ապա վանականի բոլոր սխրագործությունները ի գործ են դրված, եթե չկա, ապա ամեն ինչ կորած է:*

Ուստի, երբ մի անգամ մի եղբայր, ում մեջ պակասում էր այդ նախանձխնդրությունը, գալով Սուրբ Անտոնի մոտ, խնդրեց նրան աղոթել իր համար, մեծ ծերը պատասխանեց նրան. «Ո՛չ ես, ո՛չ Աստված չենք գթա քեզ, եթե ինքդ չհոգաս քո համար և չաղոթես Աստծուն… Այդ պատճառով հորդորեց ո՛չ մի բանում ներողամիտ չլինել ինքն իր հանդեպ, այլ համբերությամբ միշտ պահել այդ նույն նախանձախնդրության ոգին՝ ասելով. «Վանականը, որը

մի քանի օր աշխատում է, իսկ հետո ներողամտությամբ վերաբերվում իր անձի նկատմամբ, ապա նորից աշխատում է և նորից ծուլանում, այդպիսի վանականը միեվնույնն է, թե ոչինչ չի անում և երբեք կյանքի կատարելության չի հասնի մշտական նախանձախնդրության ու համբերատարության պակասի պատճառով… Բայց նախանձախնդրությունը ինքն իրենով երբեմն կույր է լինում և կարող է ընտրել մի այնպիսի ուղղություն, որը համապատասխան չլինի բռնած կյանքի ճանապարհին: Այդ պատճառով պետք է պաշտպանված լինի ղեկավարների կողմից: Իսկ ովքե՞ր են այդ ղեկավարները: Սուրբ Անտոնը մատնանշում է երկուսը՝ սեփական դատողությունը և փորձառուների խորհուրդները»:

Ամեն մեկս առիթի դեպքում, երբ մեզ հնարավորություն է տրվում, պարծենում ենք մեր հայրերի փառավոր գործերով ու մեր ժառանգած արժեքներով: Այո՛, իրապես մենք վայելում ենք նրանց տքնության ու չարչարանքի գինը, բայց արդյոք դա բավարա՞ր է: Այսօր նույնպես հանդիպում ենք ազգանպաստ ու եկեղեցաշեն ձեռնարկումների, բայց որքանո՞վ է մեզանից յուրաքանչյուրը մասնակից այդ ամենին և ի՞նչը պետք է առաջնորդի մեզ մաս ու բաժին ունենալու այն մեծ առաքելության մեջ, որը կոչվում է *«շինություն»:* Խոսքը ֆիզիկական շինության մասին չէ, այլ՝ հոգեկան, որը կառուցելը այնքան էլ հեշտ բան չէ, բայց անկարելի չէ: Այսօր, առավել քան երբևէ, մեծ են հնարավորությունները ապրելու և ստեղծելու: Երանելի ենք, քանզի Ամենաբարձրյալն Աստված մեզ շնորհք ու ազատություն է պարգևել անկաշկանդ առաջ գնալու և մեր հայրերի ավանդին մեկ քար ևս ավելացնելու: Բայց ի՞նչն է պատճառը, որ մեր վերելքն ուշանում է, ո՛չ այնքան կայուն տնտեսությո՞ւնը, քաղաքական բարդությունն ե՞ր, բարոյահոգեբանական մթնոլո՞րտը, անտարբերությո՞ւնը մեր շրջապատում տիրող երևույթների նկատմամբ: Արդյոք այս կերպ չե՞նք դավաճանում մեզ բազում անգամներ փոր-

ձություններից ազատած նախանձախնդրության ոգուն: Հիշենք, որ այդ ոգին մեզ երբեք չի դավաճանել:

Եկե՛ք միասին աղոթենք, որ Տերը մեր Հայրենիքին, այնտեղ ապրող կառուցող ու շենացնող մեր ժողովրդին, ինչպես նաև Սփյուռքի մեր եղբայրներին ու քույրերին պարգևի խաղաղություն, սեր և միություն, իսկ մեր դարավոր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն՝ պայծառություն ու անսասանություն: Ամեն:

ԹԱՐԳՄԱՆԻՉ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐ

«Որք զարդարեցին տնօրինաբար զիմաստ անեղին, հաստատելով յերկրի զգիր կենդանի…» (Շարական)

«Ովքեր տնօրինաբար զարդարեցին Անստեղծի իմաստը երկրում հաստատելով Կենդանի Գիրը…»

Հոկտեմբեր ամիսը նվիրված է Հայ Մշակույթին: Տոնն է նաև մեր Սուրբ Թարգմանիչ Վարդապետների՝ Սահակի և Մեսրոպի, Եղիշե Պատմիչի, Մովսես Քերթողի, Դավիթ Անհաղթ փիլիսոփայի, Գրիգոր Նարեկացու և Ներսես Կլայեցու (Շնորհալի): Թարգմանիչ ընդհանուր անվան տակ հայտնի են Սբ. Մեսրոպ Մաշտոցին և Սբ. Սահակ Պարթևին աշակերտած ավելի քան հարյուր սաներ:

Մինչև 5-րդ դար Հայ Եկեղեցին դեռևս չէր հայացել, որովհետև չուներ իր սեփական գիրն ու գրականությունը և նույնիսկ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց մեկ դար հետո էլ, հակառակ որ վանքերում ու եկեղեցիներում կանոնավոր արարողություններ էին կատարվում, ընթերցվում էր Սուրբ Գիրքը, բայց ժողովրդի համար անհասանելի էր և անհասկանալի, քանի որ եկեղեցական լեզուն ասորերենն էր: Աստծու խոսքերը լսում էին, բայց շատ շատերի սրտերին չէր հասնում:

Սբ. Մեսրոպ Վարդապետի, Սբ. Սահակ Պարթև Կաթողիկոսի և Վռամշապուհ թագավորի նախաձեռնությամբ ու Աստծու կամքով, ստեղծվեցին հայ գրերը: Ապա սկսվեց Սուրբ Գրքի ամբողջական թարգմանությունը, որը մշակումներով ու լրացումներով տևեց մոտ 30 տարի: Սբ. Մեսրոպ Մաշտոցը այն անվանեց Աստվածաշունչ, այն մտածումով, որ Աստծու շունչը կա Սուրբ Գրքի ամեն մի տողի մեջ (Բ. Տիմ. 3:16): Աստվածաշունչը հայերեն էր և Աստված արդեն խոսում էր մեր ոսկեդենիկ լեզվով: Նրանց կատարյալ թարգմանության շնորհիվ Աստվածաշնչի հայերեն օրինակը բոլոր ազգերի կողմից ընդունվեց և ան-

վանվեց Թագուհի Թարգմանությանց, այսինքն՝ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԱԳՈՒՀԻ ու 5-րդ դարը իրավամբ կոչվեց Հայ Ժողովրդի ՈՍԿԵԴԱՐԸ:

Թարգմանիչ Վարդապետները իրենց կյանքով դարձան հայ ժողովրդի թարգմանը Աստծու մոտ: Նրանք դեռ շարունակում են իբրև փարոս լուսավորել հայոց ապագան: Թարգմանչաց տոնը հայ հոգու պանծացման տոնն է:

Մեր Եկեղեցու հայրերն այսօր էլ կարծես խոսում են մեզ հետ: Սբ. Սահակը սովորեցնում է մեզ մեծ լինել և խոնարհ, Սբ. Մաշտոցը՝ չվախենալ և աղոթքով հաղթահարել դժվարությունները, Եզնիկը՝ ուղեցույց է հավատը պաշտպանելու, Եղիշեն՝ հայրենասիրությամբ է լցնում մեզ, Խորենացին՝ ուսուցանում է հայոց պատմությունը, Շիրակացին՝ առաջնորդում է բնության և տիեզերքի գաղտնիքների մեջ, Գրիգոր Նարեկացին՝ մեր հոգին բարձրացնում է դեպի Աստված, Շնորհալին՝ հայ հավատի բանաձևն է տալիս և սովորեցնում Աստծու փառքը երգել: … *«Թարգմանիչներ»* անվանված հոգևոր մշակութային հզոր շարժումն անկրկնելի երևույթ էր հայոց պատմության մեջ: Թարգմանիչները հիմք դրեցին ազգային ինքնուրույն *գրականության, ճարտարապետության, պատմագրության, բժշկության, փիլիսոփայության, աստվածաբանության, երաժշտության,* որով մենք քաղաքակիրթ աշխարհի լիիրավ անդամը դարձանք: Այդ նրանք էին, որ գրեթե ոչնչից ստեղծեցին ինքնատիպ մի մշակույթ, որ ուրիշ ո՛չ մեկ ազգի հետ չես շփոթի: Այդ նրանց ջանքերով էր, որ ազգը համախմբվեց միասնական մեկ հավատի շուրջ և կարողացավ ետ վանել պատմության դառը փորձությունները:

Հազար ու մի փոթորիկներ անցան հայ ժողովրդի վրայով, բայց ո՛չ մի արհավիրք չկարողացավ նրա հոգուց խլել իր սեփական մայրենի լեզուն և իր արյունով գնված քրիստոնեական հավատը, որ մեր պապերը կտակեցին

մեզ: Նրանք կտակեցին չբաժանվել մեր Մայր Եկեղեցուց, որ ծննդավայրն է հայ լեզվի և հայ մշակույթի:

Այսօր մեզ մնում է աղոթել Աստծուն և մաղթել, որ Թարգմանչաց ոգին ու նրանց շնորհները մնան հայ ազգի յուրաքանչյուր անհատի հետ:

«Առանց մեսրոպյան ոճով մարդակերտումի խախուտ են մեր ազգային կյանքի բոլոր կերտվածքները, ինչպես խախուտ են աշխարհի ավազահիմն ու հողաշեն կառույցները ...: Հայ Գիրքը մյուռոն է մեր ժողովրդի զավակների համար: Նա, որ Հայ Գիրք է կարդում, մյուռոնվում է հայությամբ: Հայաստանը միայն հող ու քար չէ, վանք ու եկեղեցի չէ, խաչքար ու հուշարձան չէ, բերդ ու պարիսպ չէ, կամուրջ ու աղբյուր չէ, այլ մագաղաթ ու գիրք է»,- ասում է հոգելույս Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Իսկ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Արքեպս. Հովսեփյանցը շարունակում է. *«Հայ տառերի գյուտի հետ Աստվածաշնչի թարգմանությունը մեր երանելի հայրերի՝ Սուրբ Սահակի և Սուրբ Մեսրոպի ու նրանց աշակերտների հետ, Մերձավոր Արևելքի ազգերի համար ևս նշանակալից պատմական երևույթ էր: Նրանց և հաջորդող սերունդների ձեռքով թարգմանվել են գրեթե բոլոր նշանավոր հայրերի գործերը: Աստվածաշնչի թարգմանությունը միայն մի գլուխգործոց էր՝ դասական հստակ գրաբարով, հայ լեզվի հարստության ամենամեծ գանձարանը…Հիշատակելի է վերջապես, մեր հոգևոր աշխարհի բանաստեղծությունը մեր շարականների հեղինակների հետ՝ Սբ. Գրիգոր Նարեկացին, Սբ. Ներսես Շնորհալին և ուրիշները…»:*

Իր խոսքն է ասում նաև մեր հայրենի գրողներից՝ Ղազարոս Աղայանը.

«Բավական չի ազգասեր և հայրենասեր լինելը: Պետք է մի քիչ էլ լեզվասեր լինել, պետք է սիրել, պաշտել, զգվել հարազատ լեզուն. այս սերը միայն մեր առջև կբացի լեզվի անհատնում ճոխությունը, նրա նրբությունը և քաղց-

րությունը: Եթե բոլոր հայ մայրերը այնքան հայրենասեր և ազգասեր լինեն, որ իրենց զավակների հետ մայրենի լեզվով խոսեն, նրանց սրտում ազգային պատվասիրություն ու հայրենիքի սեր թողնեն, էլ այնուհետև ի՞նչ մահ կարող է սպառնալ մեզ»:

Թարգմանիչ վարդապետները իրենց անսահման ջերմությամբ և հավատի լույսով ցրեցին տիրող խավարը ու սիրով և ջերմությամբ լցրեցին հայ մարդու հոգին: Նրանց տքնաջան աղոթքի ու նվիրումի շնորհիվ Աստվածաշունչ մատյանը հայերեն թարգմանվեց և հայը առաջին անգամ լինելով հնարավորություն ստացավ իր մայրենի լեզվով կարդալու Աստծու կենդանի խոսքը: Նրանք իրենց լայն գործունեությամբ նպաստեցին Հայոց աշխարհի հոգևոր-մշակութային զարթոնքին:

Դժվար է պատկերացնել, որ եթե 5-րդ դարում չլիներ Թարգմանչաց շարժումը, մատենագրական ինչպիսի ահռելի կորուստ կարող էինք ունենալ: Մեր Սուրբ Հայրերը ո՛չ միայն հայերենի թարգմանեցին Աստվածաշունչ Մատյանը, այլ նաև բազում սուրբգրային մեկնություններ, մեծ հեղինակների գործեր. այս ձևով մեզ հիշատակ թողեցին հայրախոսական մի ամբողջ հսկայածավալ շտեմարան: Փա՛ռք ու պատիվ նրանց:

Հոգելույս Գարեգին Ա.-ը շարունակում է. *«Դարձե՛ք դեպի մեր արմատները, դարձեք դեպի մեր ինքնությունը, դարձե՛ք դեպի մեր արժանապատվությունը, դարձե՛ք դեպի մեր արժեքները, որոնք խորթ չեն, հարազատ են, մարդկային քաղաքակրթության անկորնչելի արժեքներին, բայց մերն են, մեր արյանը խառնված, մեր հայրերի հոգով կյանք առած, մեր նախնիների անուններով մկրտված:… Այդ դարձով մենք ավելի մոտ կլինենք Աստծուն…Եկեղեցի, մշակույթ, ազգ, հայրենասիրություն այս բոլորը օդում կմնան, մինչև որ չմարդանան, կյանք չստանան մեր կյանքի միջից՝ մեր ժողովրդի կյանքի սիրույն»:*

Այսօր մեզ մնում է աղոթել Աստծուն և մաղթել, որ Թարգմանիչ Վարդապետների ոգին ու նրանց շնորհները մնան հայ ազգի յուրաքանչյուր անհատի մեջ, ծիլ տան ու ծաղկեն, աճեն ու բազմանան՝ ի փառս մեր ժողովրդի և ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու։ Ամեն։

«Ո՞ՒՐ ԷԻՐ ԱՍՏՎԱԾ»

Բարին և չարը հակառակ են իրար

Այս նյութը ընտրեցի, քանի որ աշխարհում բարին ու չարը միշտ մրցության մեջ են և մենք շատ անգամ չենք կարողանում կողմնորոշվել, թե ո՞ր ճանապարհը ընտրենք՝ բարո՞ւ, այսինքն՝ Աստծու, թե՞ չարի՝ սատանայի:

Ինչպե՞ս կարելի է հանգիստ մտածել Աստծու Բարության և Ամենակարող լինելու ու միաժամանակ չարիքի գոյության մասին:

Կարելի՞ է բացատրել այս հակադրությունը, օրինակի համար, Աֆրիկայի անապատներում և անտառներում սովից հյուծվող անմեղ մի երեխայի մորը:

Կամ ինչպե՞ս բացատրենք այս մասին Նյու Յորքի Սեպտեմբերի 11-ի պայթյունների և Աֆղանստանի ռմբակոծումների տակ անմեղորեն մեռածների հարազատներին:

Իսկ մենք ազգովին նույն հարցը չտվեցի՞նք Մեծ Եղեռնին ու չերգեցի՞նք՝ *«Ո՞ւր էիր Աստված...»:*

Արդյոք պատասխաններ կա՞ն այս հարցերին:

Ռուս նշանավոր գրող Դոստոևսկին, ասել է. *«Ամբողջ մարդկության երջանկությունը մի երեխայի արցունքներն անգամ չարժեն»:* Ահա այսպիսի հարցեր են առաջանում մարդու մտքում, երբ նա դեմ հանդիման է գտնվում մանավանդ մեծ ողբերգությունների և աղետների դիմաց:

Հ,րեա մեծ փիլիսոփա Լեվինասը, ապրելով հոլոքոսթը, կորցնելով իր ամբողջ հարազատներին, նրանց մէջ նաև իր կնոջն ու երեխաներին, ապրելով լիովին այդ մեծագույն աղետը, որին որպես հետևանք Աստծու գոյությունը դրժեց, երկար տարիներ հետո հասավ այն եզրակացության, թե Աստված Ինքն էլ այդ օրերին *«Տառապում էր»* համակեդրոնացման ճամբարների գազի սենյակներում: Չարի ներկայության հարցը զոհերից ավելի տալիս

են կողմնակի մարդիկ, մինչ տուժվածները ապրելով փորձում են մոտենալ Աստծուն: Օրինակ, Եղեռնի ժամանակ մեր պապիկներն ու մամիկները նման հարցեր երբե՛ք չտվեցին, այլ ընդհակառակը՝ ավելի ամուր կառչեցին իրենց հավատին ու ցուցաբերեցին քրիստոնեական պատմության ամենացայտուն հավատի վկայություններից մեկը:

«Ով մարդկային արդարություն, թող ես թքնեմ քու ճակատիդ»,- ասել է վաղամեռիկ բանաստեղծ Սիամանթոն:

Բարու և չարի հակադրության պարագային, երբ խոսում ենք չարի մասին հարցերը շատ են. *«Ինչո՞ւ Աստված թույլ տվեց նրա գոյությունը, ինչպե՞ս եղավ, որ չարը տարածվեց աշխարհով մեկ, ինչո՞ւ Աստված վերջնականապես չի կործանում նրան և այլն և այլն»:* Հարցեր են, որոնք մշտապես հուզում են այսօր բոլոր մարդկանց:

Աստվածային ստեղծագործությունը իր ամբողջության մեջ բարի է ու կատարյալ: Արդարորեն Եզնիկ Վարդապետ Կողբացին ասում է. *«Եթէ բարին ու չարը չլինեին, ապա Աստված ինչի՞ հիման վրա Իր դատաստանը պիտի աներ: Ինչի՞ հիման վրա բարին պիտի պարգևատրվեր ու չարը՝ պատժվեր»:*

«ԵՐԻՏԱՍԱՐԴ ԲԺՇԿԻ ՀՆԱՐԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ

Կյանքի խաչմերուկում հանդիպում են երիտասարդ բժիշկն ու մահը և նրանք ջերմորեն զրուցում են կյանքի ու մահվան մասին: Բավական զրուցելուց հետո, իրար հետ պայմանավորվում են: Մահն ասում է, եթե ես հիվանդի գլխավերևում կանգնած լինեմ, նա իմն է. հիվանդը պիտի մեռնի, իսկ եթե ոտքերի մոտ՝ քոնն է:

Տարիներ են անցնում: Երիտասարդ բժիշկը այդպես շատ հիվանդների կյանքեր է փրկում և հայտնի դառնում աշխարհում իբրև հրաշալի, խղճով, բարի ու ազնիվ բժիշկ:

Մի օր, հեռու քաղաքների հիվանդանոցներից մեկից հրավիրում են նրան ծանր վիրահատության: Երբ բժիշկը մտնում է վիրահատության սենյակ, տեսնում է, որ հիվանդը մի երիտասարդ ու գեղեցիկ աղջիկ է: Ու հանկարծ սարսափով նկատում է, որ մահը կանգնած է այդ գեղեցկուհու գլխավերևում: Բժիշկը ցնցվում է: Երկար մտածելու ժամանակ չկար ու նրա միտքը արագ կողմնորոշվում է:

Նա անմիջապես կարգադրում է, որ մահճակալը շուռ տան հակառակ կողմը՝ գլուխը ներքև, ոտքերը վերև: Եվ մահը գլխիկոր հեռանում է այդ գեղեցիկ աղջկանից ու բժշկին հնարավորություն տալիս փրկելու նրա կյանքը»:

Բժիշկը խիղճ և ցանկություն պիտի ունենա: Եվ եթե այդպիսին է, նա անպայման կկարողանա հրաշքներ գործել՝ հիվանդին փրկելու, նույնիսկ մահվան դեմ դուրս գալու: Այդպիսի բժիշկը ընտրված է Աստծու կողմից: Նա իրապես Հիպոկրատի երդում տված բժիշկն է, որի համար մարդկանց կյանքը փրկելը սրտի ու խղճի պարտականություն է:

Աստված մարդուն օժտել է ամենակարևոր հատկանիշներով՝ *խելքով, խղճով ու ուժեղ կամքով:* Այդ պատճառով մարդը աշխարհում Աստծու ստեղծագործության պսակն է: Եթե նա իր հույսը Աստծու վրա դնի, երբեք էլ չարը չի կարողանա հաղթել նրան, ինչպես այս պարագային արեց բժիշկը իր հնարամատությամբ փրկելով երիտասարդ աղջկա կյանքը:

Չարը չի կարող արգելք հանդիսանալ Գերագույն Բարուն, որ է Աստված:

Ղպտիների Պատրիարք Շենուդա Գ.-ի գեղեցիկ խրատը.

«Աշխարհից ոչինչ չեմ ուզում, քանի որ ո՛չ թե իմ շահի համար է աշխարհն ինձ որևէ բան տալիս, այլ՝ իրեն հպատակեցնելու: Նրանք, ովքեր աշխարհի տվածը վերցրել են, դարձել են աշխարհի ստրուկները: Տվել է նրանց

մարմնի հաճույքներ՝ զրկելով հոգու անբծությունից: Տվել է աշխարհիկ վայելքներ՝ զրկելով երկնային Արքայության օրհնություններից: Սատանան նրանց տվել է աշխարհի բոլոր թագավորությունները և դրանց փառքը, որպեսզի իր առջև խոնարհեցնի ու երկրպագել տա իրեն: Նա ամեն միջոցի դիմում է, որպեսզի կորստյան մատնի մարդկանց հոգիները: Ինչ վերաբերում է ինձ. «Ամեն ինչից զրկվեցի, և այդ բոլորը աղբ եմ համարում, որպեսզի շահեմ Քրիստոսին» (Փիլ. 3:8): Այս աշխարհն ավելի շատն ու ավելի լավն է վերցնում, քան տալիս է: Իրեն տենչացողներին նա իրեն է ենթարկում: Ուրեմն, ես ոչինչ չեմ ուզում նրանից:

Աշխարհից ոչինչ չեմ ուզում, քանի որ վեր եմ նրանից: Ես Աստծո որդի եմ, Աստծո նմանությամբ և պատկերով, Ես Սուրբ Հոգու տաճար եմ և Աստծո բնակարան: Ես միակ արարածն եմ, ով ճաշակում է Նրա Սուրբ Մարմինն ու Արյունը: Ես ավելի վեր եմ կանգնած, քան աշխարհը, և ավելի ճիշտ կլինի ասել, որ աշխարհն ինձնից սպասելիք ունի, քանի որ ես ունեմ երկնքի և երկրի բանալիները. ես, ում Աստված Իր անսահման ողորմածությամբ կամեցավ դարձնել աշխարհի լույսը և երկրի աղը (Մատթ. 5:13-14):

Աշխարհից ոչինչ չեմ ուզում, որովհետև միայն Քեզ եմ ուզում. Քեզ, որ մինչև վերջ ինձ սիրեցիր և Քո անձը տվեցիր ինձ համար, որ ինձ ոչնչից ստեղծեցիր և փոխարենը չպահանջեցիր Քեզ ծառայել, այլ ավելի շուտ՝ ես Քեզանով ղեկավարվելու կարիքն ունեմ: Դրա համար է, որ ուզում եմ ազատագրվել աշխարհից և միանալ Քեզ, որ Քեզ ճանաչելու շնորհն ես տվել ինձ»:

Աստծու ստեղծագործության ամբողջապես բարի լինելու մեծագույն ապացույցը տեսնում ենք հանդերձյալ կյանքում, ուր ոգեղեն բոլոր արարածները, ունեն Ազատ կամք, նրանցից մի խումբն էր միայն, որը լքեց իր բարու ազատ ընտրությունը ու հետամուտ եղավ չարին, ընկավ և դարձավ չարի աղբյուրն ու մարմնացումը:

Ընդունում ենք, որ իբրև մարդիկ տկար արարածներ ենք, շատ անգամ մեր հոգին հոժար է, չարին հաղթելու, բայց մեր մարմինը տկար է այն գործադրելու։ Սակայն աշխարհում անկարելի բան չկա, եթե մարդը իր ամբողջ էությամբ ձգտի իրագործել այն։ Մենք կարող ենք հաղթել մեր տկարություններին, երբ գործի դնենք Աստծու կողմից մեզ տրված ամենամեծ հատկանիշը՝ կամեցողությունն ու կամքը։

Աստված բոլորիս հետ է՝ չար, թե՝ բարի։ Նա միշտ ավելիով բարիների հետ է։ Եվ սպասում է, որ չարը դարձի գա, մոլորվածն ու մեղավորը ետ վերադառնան։ Աստված համբերող է։ Մենք էլ համբերող լինենք ու բարի և արդար գործեր կատարենք։ Ամեն։

«Տեր, ո՞վ պիտի ապրի քո վրանում, կամ
ո՞վ պիտի բնակվի քո սուրբ լեռան վրա»
(Սաղմ.14:1)

Սա հետաքրքիր ու անհրաժեշտ մի հարց է հոգևոր կյանքի համար, մի հարց, որը Սուրբ Գրքում ենք հանդիպում եւ այնտեղից էլ ստանում պատասխանը:

«Ո՞վ կարող է մտնել Տիրոջ Խորանը»:

Տիրոջ Տունը մտնելու համար կարևոր են մի քանի բարոյական պայմաններ, որոնց գործադրությունը խիստ անհրաժեշտ է մեր հոգևոր կյանքում:

Ինչպես իր ժամանակին օրինական էր համարվում պտուղների առաջին հունձով ներկայանալը, այնպես էլ կարևոր էր *«Աստծու Խորանի»* տակ բնակվելու համար նկատի ունենալ պանդուխտի, որբի ու այրու վիճակը թեթևացնելու անհրաժեշտությունները: Բավական չէր միայն զբաղվել զոհերով ու նրանց ծիսական կատարումներով, այլ նաև պետք էր կատարել Տիրոջ պատվիրանները ու չմոռանալ ճշմարիտ Աստվածպաշտությունը: *«Նա ով անբասիր է ընթանում, արդար գործ է կատարում, ճշմարտություն խոսում իր սրտում: Ով չի նենգել իր լեզվով և ընկերոջը վատություն չի արել մերձավորներից նախատինք չի ստանում և չարագործն անարգված է նրա աչքում: Այդպիսին փառաբանում է նրանց, ովքեր երկյուղ ունեն Տիրոջից, երդվում է իր բարեկամին և երդումն իր չի դրժում:... Ով անում է այս, նա հավիտյան չի սասանվի» (Սաղմ.14:2-5):*

Ուրեմն պարզ է, թե որո՞նք են այն բարոյական օրենքները, որոնց յուրաքանչյուր քրիստոնյայի հնարավորություն պիտի տան մտնելու Աստծու Խորանից ներս:

ա. Օգնություն պանդուխտներին, որբերին ու այրիներին, թեթևացնելու համար նրանց վիճակը.

բ. Խարդախ, նենգ գործեր չկատարել, այլ լինել մաքուր ու արդար, խոսել միմիայն ճշմարտությունը:

գ. Սիրել իրար ամբողջ հոգով ու սրտով:

դ. Ընկերոջը բարություն անել, աչք չտնկել նրա ունեցվածքի վրա;

ե. Երկյուղ ունենալ Տիրոջից և իզուր տեղը երդում չանել.

զ. Սիրել Բարձրյալն Աստծուն, ինչպես նաև՝ չհայհոյել, չստել, չգողանալ, պատվել, հարգել, սիրել ծնողին:

Ահա այն բարոյական օրենքները, որոնց կատարումով է միայն, որ մենք կարող ենք արժևորել մեզ՝ մըտնելու Աստծու Խորանը, ապրելու նրա մեջ ու բարձր ճակատով բարձրանալու այն *«Սուրբ լեռը»*, ուր բնակվում է Ինքը՝ Աստված:

Աստծու Տունը մտնելու պայմանները այսօր էլ անփոփոխ են յուրաքանչյուր հավատացյալի համար, նույն արգելքն ու նույն պատգամն է, որ լսվում է Աստծու Խորանից. «*Այն վայրը, ուր կանգնած ես դու, սուրբ հող է» (Ելք 3:3):* Այս պատգամը գեղեցկորեն պատշաճում է բոլոր քրիստոնյաների համար ևս: Բոցակեզ մորենու լույսով վառված լապտերը ձեռքին պետք է մոտենալ Աստծու Տանը, որի շեմին ոտք չդրած քրիստոնյան պարտավոր է մըտածելու, թե արդյոք լրացնո՞ւմ է այն բարոյական պայմանները, որոնք հրամայվում են Աստծու կողմից և առանց որոնց կատարման չի կարելի սպասել մեղքի թողության ու հոգու փրկության:

Կարևոր է իմանալ, թե երկնային մխիթարությունը իր զվարթարար ցողը տեղացնում է միայն այն ժամանակ, երբ մարդը մաքուր է ապրում այս աշխարհում: Հիսուս Հայր Աստծուն ուղղած խոսքերում Իր հետևորդների մասին ասում է, թե՝ *«Նրանք այս աշխարհից չեն, ինչպես ես էլ աշխարհից չեմ: Սրբացրու նրանց քո ճշմարտությամբ, որովհետև քո խոսքը ճշմարտություն է: Ինչպես դու ինձ ուղարկեցիր աշխարհ. ես էլ նրանց ուղարկեցի աշխարհ:*

Եվ ես ինձ սրբացնում եմ նրանց համար, որպեսզի նրանք էլ սրբացվեն ճշմարտությամբ» (Հովհ. 17:16-19):

Սրբերի հետ մեր Եկեղեցին օրենք է սահմանել, որով մեղավորները ևս, խոստովանությամբ ու ապաշխարությամբ կարող են մտնել Տիրոջ Տունը և արժանի դառնան երանավետ փրկության:

Ո՛չ մի շենքի գեղեցկություն և ո՛չ էլ արվեստի գլուխ գործոց, լինի դա քանդակված մարմարի կամ կտավի վրա, չի կարող ունենալ այն արդյունքը, որից պիտի ծնվի հոգու փրկությունը:

Քրիստոնյա մարդը դեռ Եկեղեցուց ներս չմտած, պետք է զգա, թե իր վրա կրում է բարոյական պարտավորություններ, որոնք առանց պահած լինելու, նրա շեմից ներս չի կարող կատարել իր հանդուգն քայլերը, որովհետև նա չի կարող օգտվել Եկեղեցու ո՛չ լուսաշող կանթեղներից և ո՛չ էլ Սուրբ Սեղանի ճոխությունից: Այդ բարոյական ու փրկարար պայմաններին զուգընթաց Եկեղեցու մուտքին պետք է լինի նաև լրջորեն մտածելու անհրաժեշտ պայմանը, հակառակ դեպքում, նրա մուտքը անարդյունք կլինի, որովհետև, ինչպես ասում է նշանավոր գրող Պասկալը. *«Եթե մարդ իր կյանքում իր վրա անդրադառնալու մտածումը չունի՝ նա բոլորովին զուրկ է բարոյական սկզբունքներից, մարդ պետք է ճանաչի իր անձը և այնպես մտնի Տիրոջ Տունը»:*

Յուրաքանչյուր հայ քրիստոնյա, եթե ուզում է խղճի հանգստությամբ, պարզ մտքով բարձրանալ *«Տիրոջ լեռը»* և կամ *«Սրբության տեղը»,* միանգամ ընդմիշտ պետք է հասկանա ու գիտակցի, թե՝ հարկավոր են *«սուրբ»* ձեռքեր և *«անբիծ» սրտեր, «լինել բարի» և «անսուտ»: «Ո՞վ կբարձրանա Տիրոջ լեռը կամ ո՞վ կկանգնի նրա սրբավայրում, նա, ով մաքուր ձեռքեր և անբիծ սիրտ ունի» (Սաղմ. 23:3-4):*

Այն հավատացյալները, որոնք իրապես իրենց մաքուր և արդար կյանքով լրացնում են մեր Տիրոջից ժա-

ռանգություն ստացած այս բարոյական պայմանները և յուրացնում փրկության արժանի դառնալու գեղեցիկ ըսկզբունքները, նրանք են, որ միայն *«արժանավոր ձևով»* ճակատները բարձր մտնում են Եկեղեցի և Տիրոջից օգնություն ու ողորմություն ստանում: «*Հիշի՛ր Տե՛ր, քո գթություններն ու ողորմությունները, որոնք հավիտենական են» (Սաղմ. 24:6):*

Իբրև հայ քրիստոնյաներ, մեր Տիրոջ բարոյական օրենքները պահելով ամեն մեկս կարող ենք դառնալ բարի և լցված սիրով ու հավատով մեր շրջապատի նկատմամբ: Եվ երբ այդ ճանապարհով ընթանանք, բոլորս միաբերան պիտի կարողանանք մեր Տիրոջը պատասխանել. *«Տե՛ր, մենք պիտի ապրենք քո վրանում եւ պիտի բնակվենք այդ սուրբ լեռան վրա»* մեր արդար ու ազնիվ կյանքով, նվիրումով, երջանկությամբ և ուրախությամբ ու քրիստոնյային վայել պարտականության մեծ գիտակցությամբ: Ամեն:

ՇՆԱՑՈՂ ԿԻՆԸ

«Ձեր միջից անմե՛ղը նախ թող քար գցի դրա վրա»
(Հովհ. 8:7)

Աստված մարդուն տվել է ամենակարևորը, որը կենդանուն չի տվել. մտածելու կարողություն և ազատ կամք: Որով մարդը ազատ է իր ընտրության մեջ գնալ դեպի չարը՝ սատանայի կողմը և կործանվել ու հակառակը՝ ընտրել բարու ճանապարհը և օրհնյալ լինել Աստծու կողմից:

Մեր Տերը ժողովրդին հասկանալի լինելու համար միշտ առակներով էր խոսում նրանց հետ: Այս անգամ պատմում է հետևյալ ուսուցողական դեպքը:

«Առավոտյան դարձյալ Տաճար եկավ. ամբողջ ժողովուրդը գալիս էր նրա մոտ և ինքն ուսուցանում էր նրանց: Օրենսգետներն ու փարիսեցիները բերեցին շնության մեջ բռնված մի կին և նրան մեջտեղ կանգնեցնելով՝ ասացին Հիսուսին. «Հանցանքի մեջ բռնված այս կինը հայտնապես շնացել է, իսկ Օրենքում Մովսեսը մեզ պատվիրել է այսպիսիներին քարկոծել. արդ, դու դրա մասին ի՞նչ ես ասում» (Հովհ. 8:7):

Այսպես խոսում էին Նրան փորձելու համար, որպեսզի մեղքի մեջ բռնելով կարողանային ամբաստանել: Իսկ Հիսուս այս խոսակցության ընթացքում նրանց վրա նույնիսկ ուշադրություն էլ չէր դարձնում, միայն գետնին նայելով. գրում էր, բայց նրանց անդադար հարցումներին չդիմանալով, Իր գլուխը բարձրացնում է ու ասում. *«Ձեր միջից անմե՛ղը նախ թող քար գցի դրա վրա» (Հովհ. 8:7): Եվ դարձյալ ցած նայելով՝ գետնի վրա գրում էր: Եվ այս լսելով՝ մեկ առ մեկ ելնում գնում էին՝ տարիքավորներից մինչև փոքրերը: Եվ Հիսուս միայն մնաց ու կինը՝ կանգնած նրա առաջ: Հիսուս նրան ասաց. «Ո՛վ կին, ո՞ւր են. քեզ ոչ ոք չդատապարտե՞ց»: Եվ նա ասաց. «Ո՛չ, Տեր»: Եվ Հիսուս*

ասաց. «Ես էլ քեզ չեմ դատապարտում. գնա՛, այսուհետև մի՛ մեղանչիր» (Հովհ. 8:10-11):

Այս դեպքում երկու տեսակի մարդիկ կան՝ արդարն ու մեղավորը: Մեղավորը՝ ինքնիրեն հանցավոր զգալով ամոթից կամրում է, սակայն կան մարդիկ, որոնք իրենց անմեղ ու արդար կարծելով քննադատում են ուրիշներին ու աղոթում փարիսեցու հոգեբանությամբ և նոր թակարդներ են լարում, որպեսզի իրական արդարները ընկնեն դրանց մեջ, ինչպես տեսնում ենք Ավետարանի պատմության մեջ: Հիսուս ինչ էլ ասեր, Նրան պիտի զրպարտեին: Օրինակ, եթե ասեր, թե՝ *«Օրենքի համաձայն քարկոծեցեք»,* փարիսեցիները պիտի ասեին, թե՝ *«Հռոմեական կայսրության օրենքը մեզ արգելում է դա անել»,* քանի որ նրանք մահապատժի թույլտվությունը վերցրել էին հրեաներից: Մյուս կողմից, Հիսուս Ինքն իրեն հակասած կլիներ, քանի որ միշտ մեղավորների հանդեպ ներողամտության ոգի էր ցույց տալիս: Իսկ եթե ասեր, թե՝ *«Ներեցեք, մի՛ քարկոծեցեք»,* այն ժամանակ էլ պիտի բողոքեին, թե՝ ահավասիկ Մովսիսական օրենքը ոտնակոխ է անում ու Ինքնիրեն Մովսեսից վեր է դասում:

Շատ հեշտ է տեսնել ուրիշի աչքի շյուղը և դժվար է նշմարել մեր աչքի գերանը:

Մարդը լավ գիտի թե ո՞րն է չարը և ո՞րն է բարին, բայց չի խոստովանվում, իր հոգու խորքում անգամ անհարմար է զգում դա անել: Ուստի պատճառաբանություն, արդարացում, մխիթարություն է խնդրում և երբ այն գտնում է իրենից դուրս, չափազանց ուրախանում է:

Գիտենք, որ Աստված ամեն ինչ ստեղծեց ու ասաց. *«Թե բարի են, թող լինեն»:* Ուրեմն բարություն ստեղծողը բնական ձևով բարի պետք է լինի: Այս դեպքում մեզանից յուրաքանչյուրի մտքում, ակամա այսպիսի հարց է ծագում. *«Եթե Աստված բարի է, որտեղի՞ց են այսքան պատերազմները, կռիվները, վեճերը, չարությունները, սպանություններն ու ամեն տեսակի բռնությունները»: Ինչո՞ւ*

Աստված չի բռնում մարդասպանի, ավազակի, գողի ու սրիկայի ձեռքը»: Սա պարզից էլ պարզ է, որովհետև ցանկանում են իրենց ունեցածի կրկնապատիկը, երբեմն էլ տասնապատիկը ունենալ, ավելի բարձր պաշտոնների տիրանալ, իսկ երբ չեն կարողանում հասնել դրան, այն ժամանակ սկսում են ամեն տեսակի վատ գործեր կատարել: Ագահությունը մոլություն է և յոթը մահացու մեղքերից մեկը: Պողոս առաքյալը հաստատում է, թե՝ *«Բոլոր չարիքների արմատը արծաթսիրությունն է»*: Աստվածային օրենքը հստակ է, մարդ արարած, դու ազատ ես ընտրելու լավն ու վատը, գործելու բարին ու չարը, սակայն դրա համար մի օր Դատաստանի առաջ պատասխան պիտի տաս:

Հիսուս ասում է. *«Մի՛ դատեք, որ Աստծուց չդատվեք, որովհետև ինչ դատաստանով, որ դատեք, նրանով եք դատվելու» (Մատթ. 7:1-2):*

Հիսուսի վարդապետությունը շատ բարձր է ու վեհ, մեր իմացածից և հասկացածից էլ ավելին, որով առաքինի ու պատվական մարդիկ միայն կարող են ըմբռնել նրա բարձրությունն ու վեհությունը: Արդար մարդը լավ հասկանալով *«Ճանաչի՛ր քեզ»* խոսքի իմաստը, կարողանում է քննության ենթարկել իր ներաշխարհը և զղջում ու թողություն է խնդրում Ամենակալ Հորից և կամա թե ակամա գործած մեղքերի համար:

Մեր Տերը խրատում է մեզ նախ մեր պակասություններն ու թերությունները ուղղել և հետո մեր ընկերոջը. բարեկամինը կամ հարևանինը տեսնել: Որով, լավ պիտի լինի, եթե չար գործեր չկատարենք, որպեսզի չարիք չգտնենք, այլ ներողամիտ լինենք մեկս մյուսի նկատմամբ, որպեսզի մենք էլ ներվենք ու սիրվենք բոլորի կողմից: Չարիք գործելով, մի ուրիշին դատապարտելն ու մեղադրելը շատ հեշտ է, բայց եկե՛ք մեր բարի գործերով, մեր արդար քրտինքով ու մեր միասնական աշխատանքով արժանանանք Աստծու սիրույն, գուրգուրանքին և գնահատանքին: Ամեն:

ԱՆՊՏՈՒՂ ԹԶԵՆԻՆ

«Մի մարդ իր այգում մի թզենի էր տնկել. և երբ պտղի ժամանակը հասավ, նա եկավ նրա վրա պտուղ փնտրելու ու չգտավ: Այգեգործին ասաց. «Ահա երեք տարի է, որ գալիս եմ այդ թզենու վրա պտուղ փնտրելու և չեմ գտնում. արդ, կտրի՛ր այդ, ինչո՞ւ է հողն զբաղեցնում»: Այգեգործը պատասխանեց. «Տեր իմ, նրան այս տարի էլ թո՛ղ, մինչև որ նրա շուրջը փորեմ և աղբ գցեմ. գուցե թե պտուղ տա. ապա թե ոչ՝ մի տարուց հետո կկտրես այդ» (Ղուկ· 13:6-9):

Տանտերը՝ Երկնավոր Հայրն է, Պարտիզպանը՝ Հիսուս, իսկ անպտուղ թզենին՝ այն ժողովուրդն է, որը երկու հազար տարիներ առաջ ո՛չ միայն անտարբեր գտնվեց Նրա քարոզած Վարդապետության լույսի նկատմամբ, այլ ընդհակառակը՝ մեր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին խաչ հանեց:

Եկեք մի պահ մտածենք այն ծառի մասին, որը պտղատու ծառերի մեջ խոշոր ու փարթամ տերևներ ունի, սակայն պտղաբեր չէ: Չե՞ք կարծում, որ այն իզուր տեղն է զբաղեցնում հողի մի մասը ու արգելք լինում, որպեսզի այլ պտղատու ծառեր, իրենց համեղաճաշակ մրգերով հարստացնեն պարտեզը ու հաճելի դառնան մարդկանց: Հիսուս ասում է· *«Եթե աղը իր համը կորցնի ո՛չ մի օգտակարություն էլ չունի»:* Այսպիսի անպտղաբեր ծառերը նմանվում են այն մարդկանց, որոնք պաշտոններ են ստանձնում որևէ ասպարեզում, օգտվում են, սակայն ո՛չ մի ձևով իրենց նպաստը և օգնությունը չեն բերում նրանց հաջողությանն ու առաջընթացին;

Վերադառնալով առակին, այնպես է երևում թե տանտերը համաձայնվել է ծառը չկտրելու և մեկ տարի ևս խնամելու խնդրանքին, բայց թե հաջորդ տարի ծառը պտուղ տվե՞լ է, թե ոչ՝ շատ էլ կարևոր չէ, որովհետև անպտուղ թզենու առակի նշանակությունը ո՛չ մի ձևով չի փոխվում պատասխանը իմանալով կամ չիմանալով:

Ուրեմն, *«Ի՞նչ է սովորեցնում մեզ այս առակը»:*

Առակում պատմվածը պարզ մի խոսակցություն է այգեպանի ու իր տանտիրոջ միջև, որը կարող ենք այսօր էլ գործադրելի դարձնել: Երբ մենք օրերով, շաբաթներով, ամիսներով ու տարիներով աշխատում ենք, սպասում, որ մեր կատարած գործը իր արդյունքը տա և միաժամանակ մենք էլ օգտվենք դրանից:

Ինչպես առակից տեսանք, գործավորի պատասխանը հետաքրքրական է նրանով, որ նա թելադրում է տանտիրոջը վերջնականապես մի բան քանդելուց առաջ համբերություն ունենալ ու մի անգամ ևս փորձել:

Յուրաքանչյուր հայ քրիստոնյա, կարող է ինքն իրեն հարց տալ. *«Արդյոք ես մի պտղաբեր ծա՞ռ եմ իմ ընտանիքի, իմ ժողովրդի, իմ Եկեղեցու, ինչո՞ւ չէ նաև Հայրենիքի համար, թե թզենու նման անպտուղ եմ, որը արժանի է միայն կտրվելու»:* Իրականում առակը հոգևոր մի դաս է մեր ժողովրդի բոլոր զավակների համար: Խոսքը անշուշտ դրամի, հարստության և ունեցվածքի մասին չէ, այլ՝ հավատի, եղբայրական սիրո, փոխադարձ հասկացողության և այդ սերն ու հավատը շոշափելի կերպով գործի վերածելու մասին է: Դրա համար մեզանից յուրաքանչյուրը քաջությունը պիտի ունենա հանձն առնելու այդ զոհողությունը, որովհետև սիրո ամենացայտուն օրինակը զոհողությունն ու նվիրվածությունն են: Դպրոցն ու Ընտանիքը ինչի՞ են ծառայում, եթե չեն դաստիարակում: Գիրքը, թերթն ու հեռուստատեսությունը ինչի՞ համար են, եթե կարդացող ու լսող չունեն: Ծխական Խորհրդի, Տիկնանց, Երիտասարդաց և այլ Միություններ ո՞ւմ համար են, եթե նրանց ծրագրերին ու միջոցառումներին մասնակցողներ չկան:

Այգեգործի խնդրածի պես պետք է խնամենք, որպեսզի թզենին գոնե հաջորդ տարի պտղաբեր լինի; Պտուղը ինքնիրեն չի հասնում, այլ մշակների ամենօրյա աշխատանքի ու խնամքի կարիքն ունի:

Պողոս Առաքյալը Հռոմայեցիներին ուղղած իր նամակում քրիստոնյաներին խրատում է այս խոսքերով· *«Հոգո՛վ եռացեք. Տիրո՛ջը ծառայեցեք. հույսո՛վ ուրախացե՛ք, նեղության համբերեցե՛ք, հաճախակի աղոթեցե՛ք··· համերա՛շխ եղեք միմյանց հետ. դուք ձեզ իմաստունի տեղ մի՛ դրեք, մեկի չարի փոխարեն չար մի՛ հատուցեք» (Հռոմ. 12:12-21):*

Ամեն մեկս մի ծառ ենք տնկված Աստծու Մեծ Պարտեզում: Եկեղեցին փորձում է մեզ հոգեպես աճեցնել ու խնամել, մեզանից միայն սեր ու բարի գործեր սպասելով:

Եկե՛ք այսօր հետադարձ մի հայացք նետենք ու նայենք մեր ապրած կյանքին և մեզ հարց տանք· *«Արդյոք բարի գործեր կատարե՞լ ենք, թե՝ թերացել ենք մեր պարտականությունների մեջ»:* Եթե թերացել ենք, ուշ չէ, ժամանակ ունենք, ուղղվենք ու պտղատու ծառ դառնանք, որպեսզի զորանանք և Աստծու Մեծ Պարտեզում, ուր կան հազարավոր ծառեր ու ծաղիկներ, մենք էլ մեր տեղը ունենանք և երբ մեր Տերը գա նրա վրա միշտ լիքը ու քաղցր պտուղներ գտնի: Ամեն:

ՀԱՄԲԵՐՈՒԹՅՈՒՆ

«Ով մինչև վերջ համբերի, նա պիտի փրկվի»
(Մատթ. 10:22)

Մատթեոսի Ավետարանից վերցված այս խոսքերը Հիսուս կարծես այսօրվա համար ասած լինի:

Ով պատրաստ է համբերելու ու դիմանալու զանազան նեղությունների, դժվարությունների և մինչև վերջ հաստատ մնալու իր հավատի մեջ, նա՝ միայն պիտի ապրի: Հավատացյալը եթե համբերություն չունենա, կնըմանվի այն ցորենի հատիկին, որն ընկնում է ժայռի վրա և աճելու փոխարեն չորանում է հող չունենալու պատճառով: Մեր Տիրոջ տված մեկնաբանությունը սերմնացանի առակին պարզ է ու հասկանալի: *«Եվ որոնք որ ապառաժի վրա են, այդ նրանք են, որ երբ լսեն, խնդությամբ են ընդունում խոսքը, բայց արմատ չեն բռնում, սրանք միառժամանակ հավատում են, իսկ փորձության ժամանակ՝ հեռանում» (Ղուկ. 8:13):*

Ապրում ենք այնպիսի մի դարում, որտեղ քրիստոնությունը սկզբնական դարերի պես այլևս հալածված կրոն չէ, ընդհակառակը, այն համարվում է տիեզերական կրոններից մեկը. ուրեմն ինչպե՞ս պիտի հասկանանք մեր Տիրոջ խոսքերը: Դրանք պետք է հասկանալ արտաքնապես և ներքնապես: Արտաքնապես կարող ենք թշնամիներ ունենալ: Սատանան՝ փորձիչը, չպիտի դադարի մեզ իր թակարդների մեջ գցելուց ու մեզ հաճախ պիտի երևա ո՛չ թե որպես չար ոգի, այլ իբրև բարի հրեշտակ կամ արդար մարդ, շփոթի մատնելու մեր միտքն ու շեղելու մեզ ճշմարիտ ճանապարհից: Համբերել նշանակում է նեբել մեզ հալածողներին ու հակառակորդներին, որոնք չարի ազդեցության տակ կուրացել են:

Մեր ասածը հաստատում է 21-րդ դարում ապրող երիտասարդի՝ շուտ տեղ հասնելու ցանկությունը: Աշխարհը մեծ քայլերով առաջ է գնում, նա ինչպե՞ս կարող է

սպասել վաղվան, այդքան համբերություն իրեն ո՞վ է տվել: Շուտ հարստանալու ցանկությունը նրա մոտ անհամբերության նշան է: Ընդհանուր մի երևույթ է սա, որ աշխարհի բոլոր երկրների ու ժողովուրդների երիտասարդների մոտ նույն ձևով է արտահայտվում. Նրանք մտածում են, թե ինչպե՞ս անեն, որ շուտ հարստանան, և այս ճանապարհին, ցավոք, շատերն իրենց մարմինները փչացնում են բանտերի մութ խուցերում՝ առանց հասնելու *«երազային բարձունքներին»:*

Պողոս Առաքյալը հրաշալի ձևով է ներկայացնում երիտասարդների այս անհամբեր կյանքի երևույթը. *«Չգիտե՞ք, թե նրանցից, որ ասպարեզում վազում են,- թեև բոլորն են վազում,-միայն մեկն է առնում հաղթության մրցանակը: Այնպես վազեցեք, որ հասնեք դրան» (Ա. Կորնթ. 9:24-25):*

Հետաքրքիր է իմանալ այս պատմության մասին.

«Մի մարդ բացառիկ ձևով խնամում էր իր աղավնիներին; Աղավնիների բույնը կարող էր մաքրության մրցանակ շահել: Այս մարդու ամենամեծ հաճույքն իր տան շուրջ աղավնիների թռիչքը դիտելն էր: Թռչունները, նրա ձայնը լսելով, մոտն էին հավաքվում, ոմանք ուտելիքը ստանում էին նույնիսկ ուղղակի նրա ձեռքից: Սակայն ամեն տարի սեպտեմբերի առաջին կիրակիից սկսած ուղիղ երկու ամիս նա աղավնիներին բանտարկում էր վանդակում: Խեղճ թռչունները չէին կարողանում հասկանալ, թե ինչպես կարող էր իրենց բարեգութ տերն այդքան անխիղճ դառնալ և իրենց ազատությունից զրկել»:

Ի՞նչն էր սրա պատճառը: Պարզ էր, սեպտեմբեր ամսից սկսվում էր որսորդության շրջանը: Աղավնիների համար շատ վտանգավոր էր, կարող էին պատահական գնդակի զոհ դառնալ: Եվ Տերը շատ սիրելու պատճառով նախընտրում էր կարճ ժամանակով բանտարկել, քան թե կորցնել նրանց:

Ահա ճիշտ այդպես է վարվում նաև Աստված: Նա երբեմն թողնում է, որ չարը մեզ փորձության ենթարկի՝ ստուգելու համար մեր հավատն ու նվիրվածությունն

Իրեն: Սրա լավագույն օրինակը Հին Կտակարանից Հոբ Երանելու կյանքն է *(Հոբ 1:10-12),* երբ սատանան ուզեց փորձել նրա հավատը և համբերությունը: *«Հոբը ձրի՞ է պաշտում Տիրոջը, չէ՞ որ դու ես պաշտպանել նրան արտաքուստ ու նրա տունը՝ ներքուստ և ամեն ինչ, որ կա նրա շուրջը. . . Բայց դե փորձիր մեկնել ու գցել քո ձեռքը նրա ամբողջ ունեցվածքին, ու կտեսնես, որ նա դեմառդեմ կանիծի քեզ»,*- ասում է սատանան Աստծուն: Տերը պատասխանում է. *«Ահա նրա ամբողջ ունեցվածքը քո ձեռքն եմ տալիս, պայմանով, որ նրա անձին ձեռք չտաս» (Հոբ, 1:10-12):* Եվ ինչպես ծանոթ է սատանան նրա ամբողջ ունեցվածքը ոչնչացնում է ու նրա ամբողջ ընտանիքի անդամներին մեռցնում, սակայն ամեն անգամ Հոբը, երբ լսում էր իրեն հասած հերթական ողբերգության մասին, ձեռքերը երկինք էր բարձրացնում ու ասում. *«Իմ մոր որովայնից ես մերկ դուրս եկա, մերկ էլ կվերադառնամ: Տերը տվեց, Տերն էլ հետ առավ» (Հոբ 1:20-22):* Հակառակ իրեն հասած դրժբախտություններին, նա միշտ փառք էր տալիս Աստծուն: Չարը պարտվում է, իսկ Աստված հպարտ է զգում Հոբի ծով համբերության համար և տասնապատիկ վարձատրում նրան: Հոբի նման մենք էլ պետք է, համբերող լինենք ու Աստծուն հավատարիմ մնանք և փառք տանք Նրան թե՛ ուրախության, թե՛ տխրության, թե՛ հարստության և թե՛ աղքատության ժամանակ:

Ձեր ուշադրությանն եմ ուզում հանձնել այս ուսանելի պատմությունը.

«Մի թագավոր կռվի է բռնվում իր թշնամիների դեմ: Առջևում մեծ բանակ տեսնելով՝ թողնում է իր զորքն ու փախչում: Վախից կանգնում է մի ժայռի մոտ՝ շունչ առնելու. Տեսնում է մրջյուններին և մտածմունքի մեջ ընկած՝ հետաքրքրությամբ դիտում, թե նրանք ինչպես են շարժվում: Տեսնում է, որ մի մրջյուն իրենից մեծ ուտելիք է տանում: Քանի՛ քանի՛ անգամներ մրջյունը վերցնում է ուտելիքը, փորձում տանել, սակայն չի կարողանում, ընկնում է, նորից է բարձրանում և այսպես շարունակ: Թագավորը զարմանում է մրջյունի համ-

բերության ու աշխատասիրության վրա և հետաքրքրությամբ նայում է, թե վերջը ինչ է լինելու: Վերջապես մրջյունը կարողանում է իր ուտելիքը տանել այն բարձր տեղը, ուր նպատակ էր դրել:

Այս տեսնելով՝ թագավորն անմիջապես նստում է ձին ու գնում ետ՝ դեպի պատերազմի դաշտ: Զինվորները, որոնք իրենց թագավորի բացակայության պատճառով արդեն սկսել էին թուլանալ թշնամու զորքերի ճնշման տակ, ուրախանում են, երբ տեսնում են, որ նա գալիս է: Նրանց հարցին, թե թագավորն ո՛ւր էր գնացել, նա պատասխանում է, թե՝ նոր զորք բերելու, որը քիչ հետո պիտի միանա իրենց: Այս խոսքերով քաջալերելով իր զինվորներին՝ նա նոր թափով անցնում է հարձակման և հասնում հաղթանակի»:

Աստծու ծրագիրը իրականանալու համար ժամանակ ու համբերություն է պետք: Նրա ձեռքերը մաքուր ու ապահով են և երաշխավորում են մեր հանգիստը, խաղաղությունն ու կյանքը: Երբե՛ք չկասկածենք: Մեր վըստահությունն ու հավատը ժայռի նման ամուր ու անխախտ պահենք: Փորձենք փակված ու մութ վանդակում նույնիսկ աղոթքով մեր հոգու հավատի կանթեղը միշտ վառ պահել:

«Մի երիտասարդ, որը հավատով էր, այցելում է անապատում ապրող ճգնավորին ու խնդրում, որ իրեն աշակերտ ընդունի:

Երիտասարդը ծերունի ճգնավորին դուր է գալիս, բայց ընդունելու համար մի քանի պայմաններ է դնում: Նա առաջարկում է, որ իր խրճիթի մուտքին դրված պղնձե արձանը գետին գլորի: Երբ հրամանը կատարվում է, ծերունի հարցնում է, թե այդ արձանը ցած ընկնելիս որևէ բողոք հայտնե՞ց կամ դիմադրե՞ց: Երիտասարդը ասում է՝ ո՛չ: Այս անգամ սուրբը նրան մի մուրճ է տալիս ու ասում.

Ուժեղ խփիր այս արձանին և գոռա նրա վրա:

Երիտասարդը կատարում է նրա հրամանը; Ճրագնավորը հարցնում է, թե արձանը անհամբերության կամ բարկության նշաններ ցույց տվե՞ց, թե՝ ոչ:

Ո՛չ,- պատասխանում է երիտասարդը:

Զավա՛կս, եթե կարողանաս այս արձանի պես համբերություն ունենալ, ինձ աշակերտ կդարձնեմ: Եթե չես կարող քո մեջ սպանել զգացմունքներդ, ուրեմն հարմար մեկը չես այսպիսի կյանքի համար, որն անտրտունջ աշխատանք, զոհաբերություն, սեր և համբերություն է պահանջում»:

Աշխարհը պատկանում է համբերողին:

Լավ պիտի հասկանանք ու գիտակցենք, թե կյանքի երջանկությունների աղբյուրը կամ նույնիսկ, ինչո՞ւ չէ, բանալին՝ համբերությունն է: *«Ձեզ համբերություն է պետք, որպեսզի Աստծու կամքը կատարելով, հասնեք նրա խոստմանը, քանի որ մի փոքր, շատ փոքր ժամանակ ևս, և գալու է նա, ով պիտի գա և չպիտի ուշանա»,- ասում է Պողոս Առաքյալը (Եբր. 10:36-37):*

Հեթանոսների Առաքյալի այս խրատը մեզ ուղղություն է տալիս, որ իրապես մեզ համբերություն է պետք, որպեսզի Աստծու կամքը կատարվի, այսինքն՝ մեր ամենադժվար պահին հիշենք աշխատասեր ու համբերությամբ լի մրջյունին՝ Աստծու կողմից ստեղծված այդ փոքրիկ միջատին, և օրինակ վերցնենք նրանից, ինչպես թագավորը, որը հասավ հաղթանակի: Վստահ եղեք, որ մենք էլ կհասնենք մեր նպատակին: Ամեն:

ԿԱՏԱՐԵԼՈՒԹՅՈՒՆ

«Եղերուք կատարեալք, որպէս և երկնաւոր Հայրն ձեր կատարեալ է»

«Արդ, կատարյա՛լ եղեք դուք, ինչպես որ ձեր երկնավոր Հայրն է կատարյալ»
(Մատթ. 5:48)

Ամեն մարդ ձգտում է կատարյալին:

Կյանքը լի է անկատարություններով: Մարդիկ դժվարությունների և նեղությունների են հանդիպում: Կատարյալ քրիստոնյա գոյություն չունի:

Մեր Տերը միայն կատարյալ անձանց չսիրեց. *«Ես եկա, որպեսզի մեղավորին փրկեմ«: «Երկինքը ցնծությամբ է լցվում, երբ մի մեղավոր ապաշխարում է, քան իննսուն ինը»:*

Կատարելության ձգտումը շարունակական է: Հավատացյալը չի կարող ասել, թե կատարյալ դարձա, այլևս փնտրելու կարիք չկա, կարող եմ հանգստանալ:

«…Աղոթեցե՛ք նրանց համար,- ասում է Հիսուս,- որ չարչարում են ձեզ և հալածում, որպեսզի որդիները լինեք ձեր Հոր, որ երկնքում է, քանի որ նա իր արեգակը ծագեցնում է չարերի և բարիների վրա և անձրև է թափում արդարների և մեղավորների վրա: Եթե սիրեք միայն նրանց, որոնք ձեզ սիրում են, ձեր վարձն ի՞նչ է, չէ՞ որ մաքսավորներն էլ նույնն են անում: Եվ եթե միայն ձեր բարեկամներին ողջույն տաք, ի՞նչ ավելի բան եք անում, չէ՞ որ մաքսավորներն ու մեղավորները նույնն են անում: Արդ, կատարյա՛լ եղեք դուք, ինչպես որ ձեր երկնավոր Հայրն է կատարյալ» (Մատթ. 5:44-48):

Անկարելի է Աստծու նման կատարյալ լինել: Փըրկության ճանապարհն Աստծուն նմանվելու և Նրա շնորհքով մեծանալու աննահանջ հոգևոր մի քայլարշավ է, մի թռիչք է մեղքից դեպի Քրիստոս, գերությունից՝ ազատու-

թյուն, խավարից՝ լույս, կորստից՝ հույս և մահից դեպի կյանք գնալու համար:

Վանքում մի սուրբ ճգնավոր կար, բոլոր միաբանները փորձում էին նրա օրինակին հետևել և, երբ աշակերտներից մեկը նրան հարց է տալիս իր սրբակյաց կյանքի մասին, նա համեստորեն պատասխանում է. «*Տղա՛ս, ես դեռ նոր սկսեցի, նոր սկսեցի»:*

Եթե ուզում ենք առողջ և եղբայրական հարաբերություններ հաստատել մեր միջև, պայման է, որ ամեն բանից առաջ մենք տեսնենք մեկս մյուսի լավ կողմերը, հատկություններն ու արժանիքները: Եթե լավի կողքին թերություններ էլ կան, դրանք թող մի քիչ սպասեն: Մենք նախ տեսնենք լավ կողմերը:

Բայց անշուշտ, այստեղ անմրջապես մեր դիմաց է դուրս գալիս անողոք ճշմարտությունը. *Յանկանալն այլ բան է, գործադրելը՝ ուրիշ:*

Մեր առօրյա կյանքում ճանաչում ենք մարդկանց, որոնք իրենց նմանների մեջ անպայման բացասական բան են փնտրում: Նրանք նման են այն ոստիկաններին կամ դատախազներին, որոնց բնական պարտականությունն է կասկածել մարդկանց՝ փնտրելով նրանց հանցանքը: Մենք պիտի ասենք, թե դժբախտ է այն մարդը, որը անհամբեր սպասում է, թե իր նմանը երբ պիտի սխալվի: Դժբախտ է նա, եթե հիվանդագին երջանկություն է զգում այդ թերությունները բացահայտելուց: Դժբախտ է, որովհետև մարդու հոգին միայն լավ ու գեղեցիկ բաներով է լուսավորվում, իսկ բացասական տվյալները խավար են ստեղծում հոգու մեջ: Հիսուս ասում է. *«Կեղծավո՛ր, նախ հանի՛ր քո աչքից այդ գերանը և ապա հստակ կտեսնես՝ քո եղբոր աչքից շյուղը հանելու համար» (Մատթ. 7:5):* Մարդն իսկապես չար է դառնում, եթե շարունակ սխալ, կեղտոտ, տգեղ բաներ է փնտրում ու դրանից հաճույք ստանում: Ո՛վ գիտե, թերևս մենք էլ շատ անգամներ ենք գործել նույն սխալը, նախընտրել ենք մոռանալ նրանց լավ

կողմերը: Ի՞նչ է նրանք լավ կողմեր չունե՞ն: Անշուշտ ունեն: Զարմանալու բան չկա, եթե նրանց մեջ գտել ենք նաև ժխտական գծեր: Աշխարհի վրա միայն անմիտ ու միամիտ մարդիկ կարող են պնդել, թե մարդը հարյուր տոկոսով մաքուր ու կատարյալ է: Ամենասուրբ մարդն անգամ հավանաբար մի մեղք կամ մի թերություն ունի: Անթերի մարդ չկա: Աստված չէր կարող ստեղծել մեկին, որը նաև լավ կողմ չունենար: Ճիշտ է կույր չենք և, բնական է, որ պիտի տեսնենք սխալներն ու թերությունները, բայց դրանից առաջ շատ կարևոր է, որ մեր աչքերը լայն բացենք, որպեսզի տեսնենք լավ կողմերը: Կարծում ենք, որ լավ է հիշել հետևյալը.

Ճիշտ է, մարդիկ երբեմն չարիքներ են գործում, ունեն սխալներ ու թերություններ, բայց այս աշխարհի վրա ինչքան լավ բան, որ իրականացվել է կամ իրականություն է դառնում, կատարվել է ու հիմա էլ կատարվում է մարդ-կանց լավ կողմերի ու բարի հատկությունների շնորհիվ: Ամեն:

ՀԱՎԱՏՔՈ՛Վ ԲՈՒԺՎԻՐ

«Վե՛ր կաց, վերցրո՛ւ քո մահիճը և գնա՛»

Եվ մարդը առողջացավ, վեր կացավ,
վերցրեց մահիճը և ման էր գալիս»
(Հովհ. 5:9)

Հիսուս եկել էր ծառայելու, հրաշագործություն-ների և բժշկությունների ճանապարհով ցույց տալու Իր աստվածային զորությունն ու մարդկանց առաջնորդելու դեպի Լույս, դեպի Ճշմարտություն, դեպի առավել Կյանք և վերջապես, դեպի Աստված:

Երբ Նա շրջում էր գյուղից-գյուղ, ավանից ավան, հրեաների մի տոնի ընթացքում Գալիլիայից Երուսաղեմ է անցնում և այցելում Պրոբատիկե կոչվող ավազանը: Հրեաների լեզվով այն Բեթհեզդա էր կոչվում, որ նշանակում էր *«Ողորմության դուռ»,* այսինքն՝ հայտնըվում էր աստվածային ողորմությունը և այդ ավազանի ջրով հիվանդները բուժվում էին: Հիվանդների, կույրերի ու կաղերի հսկա մի բազմություն, գետնին պառկած, հույսով սպասում էր ավազանի ջրերի խառնվելուն: Տիրոջ հրեշտակը երբեմն-երբեմն իջնում էր այդ ավազանի ջրերի մեջ և այն խառնում էր: Հիվանդներից նա, ով առաջինը կարողանում էր ինքն իրեն գցել խառնըված ջրերի մեջ, իր բոլոր հիվանդություններն անմիջապես բուժվում էին: Պարզ ժողովրդի հավատն էր այս:

Ահա այդ սրահներից մեկում մի անդամալույծ կար, որ երեսունութ տարի այնտեղ հիվանդ պառկած սպասում էր: Հիսուս երբ նայում է նրան, անմիջապես հասկանում է նրա վիճակը: Զգում է, որ նրա վշտահար ու մելամաղձոտ աչքերը օգնություն էին աղերսում: Նա, Իր աստվածային խորաթափանց հայացքը շեշտակի ուղղելով հիվանդին, քաղցր ժպիտով հարցնում է նրան. *«Ուզո՞ւմ ես առողջանալ»:* Նրա անսպասելի հարցից անակնկալի եկած հիվանդը հուզված պատասխանում է.

«Տե՛ր, ոչ ոք չունեմ, որ երբ ջրերը խառնվեն, ինձ ավազանի մեջ իջեցնի և մինչ ես դանդաղում եմ, մեկ ուրիշն ինձնից ավելի առաջ է իջնում» (Հովհ. 5:7): Հիսուս նայում է անդամալույծի աչքերի մեջ և հրամայում, *«Վե՛ր կաց, վերցրո՛ւ քո մահիճը և գնա՛»:*

Անդամալույծն առողջանում է, վերցնում իր մահիճը ու սկսում քայլել:

Մեր այս օրերի դժվարությունների ու նեղությունների մեջ, երբ մի կողմից կան տնտեսական և քաղաքական տագնապներ, ընկերային-բարոյական լուրջ հարցեր, իսկ մյուս կողմից վաղվա անորոշություններն ու հոգեկան խռովալի կացություններ, ապրուստի և այլ մտահոգություններն անդամալույծ են դարձրել մեր առօրյա կյանքը, ի՞նչը կարող է մեզ ու աշխարհին տալ կյանք, հույս և մխիթարություն, եթե ոչ Հիսուսի վերոհիշյալ խոսքը ուղղված մեզ և բոլոր դարերի անդամալույծներին. *«Վեր կացե՛ք, վերցե՛ք ձեր մահիճը և գնացե՛ք»:* Բարիք գործելու համար չկա ո՛չ օր, ո՛չ ժամանակ և ո՛չ էլ սահման: Աստված ինչ որ ստեղծեց բարի էր և մարդու համար կատարեց: Ժամանակը կամ օրը միմիայն միջոցներ են բարի գործեր կատարելու համար: Հետևելով Աստծու օրինակին՝ պարտավոր ենք ամեն օր բարի գործեր կատարել: Ճշմարիտ քրիստոնյայի պարտականությունը ճիշտ նույնը պետք է լինի, ինչպես Քրիստոսի սերը եղավ մեր հանդեպ:

Այստեղ հարց է ծագում, թե արդյոք մենք՝ իբրև հայ քրիստոնյաներ, այսօր աշխարհի աղմուկի ու բազմանվագ եղանակների միջից պիտի կարողանա՞նք տարբերել և լսել Հիսուսի մեղմ, անուշ ու կյանք պարգևող ձայնը: Լքելով մեր մեղավոր անցյալը՝ կամքի ուժը պիտի ունենա՞նք ոտքի կանգնելու, այնպես, ինչպես Պրոբատիկե ավազանի անդամալույծը խնդրեց ու հավատաց Քրիստոսին և բժշկվեց ու քաջաբար ոտքի կանգնելով առանց վախենալու բոլորի առաջ վկայեց, որ իրեն բուժողը Հիսուս Քրիստոսն է:

Այսօր՝ 21 դարեր հետո, Հիսուսի ձայնը կրկին մաքուր, հատիկ առ հատիկ իբրև մարտահրավեր սփռվում է աշխարհով մեկ ու բոլորիս կոչ է անում. *«Վե՛ր կացե՛ք, վերցրե՛ք ձեր մահիճը և գնացե՛ք»:* Ամեն:

ՀՈԳՈՒ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ

«Զխաղաղութիւն քո տուր մեզ Տէր»
«Տեր, Քո Խաղաղությունը տուր մեզ»

Հին տարվա վերջին առիթն է այս, որ միասնաբար պիտի աղոթենք: Մեզ պես միլիոնավոր հավատացյալներ նույնը պիտի անեն աշխարհի զանազան երկրներում:

Մի քանի օրից այս տարին էլ պիտի անցնի պատմության գիրկը: Վստահ եղեք, որ այսօրվա օրը ո՛չ մի բանով չի տարբերվում երեկվանից, ինչպես նաև վաղվանը՝ իր բոլոր անակնկալներով հանդերձ: Այս անվիճելի փաստը գիտակցելով՝ յուրաքանչյուրս անբացատրելի ներքին զգացումներ է ապրում: Ի՞նչ ենք զգում կամ ի՞նչ ենք երազում ու ակնկալում Նոր տարուց ու նրանից հետո եկող ժամանակներից: Ամեն մեկս էլ մի բան կարող ենք ասել. մեկը առողջություն է խնդրում իր կամ հարազատի համար, մի ուրիշը՝ հաջողություն կամ հարստություն, իսկ երրորդը՝ իր հանգուցյալ հարազատի համար հոգու հանգստություն է հայցում:

Սակայն այսօր ավելի հրամայական է դարձել, որ բոլորս՝ իբրև հայ քրիստոնյաներ, մի ցանկություն ունենանք ու միասնաբար Աստծուց մի բան խնդրենք: Այո՛, բոլորս մեր մտածումներով, վշտերով և թեկուզ ուրախությամբ ամփոփվելու փոխարեն միանանք ու Աստծուց խնդրենք այն ամենակարևորը, որը, վստահ եղեք բոլորիս պիտի մխիթարի և ուրախացնի. *«Տե՛ր, Քո խաղաղությունը տուր մեզ»:*

Հավատում ենք, որ աշխարհը ու ամեն մեկս էլ մեր հերթին, մանավանդ այս օրերին մեր բազմաչարչար Հայրենիքը, օդի ու ջրի պես խաղաղության կարիքն ունենք: Հիսուս ասում է. *«Խաղաղություն եմ թողնում ձեզ, իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ. . . » (Հովհ. 14:27):*

Ուրեմն, բացի այս աշխարհի խաղաղությունից, նաև մի ուրիշ խաղաղություն կա՝ ՀՈԳՈՒ ԽԱՂԱՂՈՒ-

ԹՅՈՒՆԸ, որը Հիսուս պատգամում է Իրեն հետևողներին ու հավատացողներին:

Երբ խաղաղություն ենք ասում, հասկանում ենք մի հանգիստ շրջան՝ առանց իրարանցումների, աղմուկի և մանավանդ պատերազմի: Այս իսկ պատճառով ոստիկանության ու բանակի պարտականությունն է մարդկանց պահպանել ամեն տեսակի արտաքին ու ներքին թշնամիներից: Մենք էլ մեր հերթին գիշեր ու ցերեկ մեր քունը փախցրած՝ աշխատում ենք հոգալ մեր ընտանիքների նյութական ապահովությունն ու բարեկեցությունը: Գիտնականներն ու բժիշկները ամեն օր նոր դեղամիջոցներ ու գործիքներ են հայտնաբերում մեր առողջությունը հնարավորին չափ պահպանելու համար:

Թվում է, թե ամեն բան ունենք, բայց ինչո՞ւ ուրախ չենք ու հաճախ, շատ հաճախ երջանկություն ասված բանը չենք զգում: Ինչի՞ համար ենք հուզվում, խռովում ու վախենում: Բնական հարց է առաջանում՝ *«Ինչի՞ց և ո՞ւմից»:*

Մարդկանց մեծամասնությունը հոգեկան խռովք են ապրում, վախ, անբավարարվածություն զգում իրենց մեջ, չունեն մտքի, խղճի ու հոգու խաղաղություն: Այս աշխարհն էլ իր ամբողջ բարիքներով ու գանձերով ի վիճակի չի այն մեզ տալու, որովհետև մենք մեր ու ուրիշների փորձառությունից ելնելով, չենք վստահում աշխարհի տված բարիքների հարատևությանը: Պատերազմները, մարդասպանություններն ու գողությունները, գործի անհաջողություններն ու հիվանդությունները, միշտ մարդկանց շրջապատում են ու հանգիստ չեն տալիս: Հանգիստ չեն տվել երկու հազար տարիներ առաջ, հանգիստ չեն տալու հիմա ու երբեք էլ չպիտի տան: Քրիստոսի սերն է, որ մեզ պիտի տա այդ հանգիստն ու խաղաղությունը: Այդ սերը աշխարհը չի կարող մեզ տալ, այլ միայն մեր Տերը: *«Եկեք ինձ մոտ, բոլոր հոգնածներդ և բեռնավորվածներդ, և ես ձեզ կհանգստացնեմ… (Մատթ. 11:28):* Դրա համար

էլ Աստծու տված խաղաղության հիմնական հատկություններն են՝ *սերն ու արդարությունը:* Նա ով սեր ունի, արդար մեկն է, իսկ նա, ով արդար մարդ է, պիտի սիրի նաև խաղաղությունը: Եթե Քրիստոսի խաղաղությունը ունենանք մեր մեջ, վստահ եղեք, որ ո՛չ մի փորձանք, ո՛չ մի զրկանք ու ո՛չ մի բռնություն չեն կարող թուլացնել մեզ, ընկճել ու հուսահատության մատնել:

Երջանիկ ու հանգիստ մի կյանք ապրելու համար, որը բոլորիս երազանքն է, հարկավոր է Աստծուն վստահել ու ապավինել Նրա զորությանը՝ ամեն պահ ու ամեն խնդրում, որովհետև Նա մեր բոլորի երկնավոր Հայրն է և Նրա մեջ է ճշմարիտ խաղաղությունը:

Ուրեմն կանգնած Նոր տարվա սեմին՝ ի՞նչ կարող ենք խնդրել Աստծուց, եթե ո՛չ միայն ու միայն Իր խաղաղությունը. *«Տե՛ր, Քո խաղաղությունը տուր մեզ»:*

«Երանի խաղաղարարներին, որովհետև նրանք Աստծու որդիներ պիտի կոչվեն»,- ասում է Հիսուս:

Բացե՛ք ձեր հոգու աչքերը և այս Նոր Տարում ավելիով լցվեցեք հավատով ու սիրով մեկդ մյուսի նկատմամբ: Շնորհավոր Նոր տարի: Ամեն:

Ղուկասի Ավետարանի 17-րդ գլխի 4-րդ համարում Հիսուս ասում է.

«Եթե քո եղբայրը մեղանչի, սաստի՛ր նրան և եթե զղջա, ների՛ր նրան; Եվ եթե յոթն անգամ մեղանչի քո դեմ և յոթն անգամ դառնա քեզ և ասի՝ զղջում եմ, ների՛ր նրան» (Ղուկ. 17:4):

Եղբայր ասելով այստեղ չպիտի հասկանանք միայն նույն մորից ծնված զավակներին, այլ բոլոր քրիստոնյաներին, որոնք եղբայր են իրար հետ Հիսուսի միջոցով:

Հիսուսի այս խոսքում կարող ենք գտնել երկու պարտականություններ, առաջինը, այն է, որ մեզանից յուրաքանչյուրին այս կյանքում տրված է հսկիչ դառնալու պաշտոնը՝ հանդիմանելու կամ ուղղելու մեր եղբորը կամ ընկերոջը՝ իր կատարած սխալի համար;

Երկրորդը՝ *ներողամտությունն է:* Երբ տեսնում ենք մեր եղբոր կամ ընկերոջ զղջումը կամ սխալը ընդունելու պատրաստակամությունը, պետք է ներենք նրան, որպեսզի նրա մեջ վերահաստատվի Քրիստոսի սերն ու խաղաղությունը:

Ներողամտության ամենապայծառ օրինակը տրվեց մեր Տերը՝ Հիսուս, երբ խաչափայտի վրա Իր մահվան վերջին պահին խնդրեց Հորը, որ ների Իրեն չարչարողներին ու խաչողներին. *«Հա՛յր, ների՛ր դրանց, որովհետև չգիտեն, թե ինչ են անում«(Ղուկ. 23:34):*

Հիսուս մեզանից պահանջում է կատարել Իր պատգամը և այն դարձնել մեր կյանքի ապրելու ձևը: Պատկերացրեք, եթե մեր հայրերն ու մայրերը իրենց զավակների հանդեպ ներողամիտ և համբերող չլինեին, ի՞նչ պիտի լիներ ընտանիքի վիճակը:

Զղջումն ու ապաշխարությունը ներելու պայմաններն են: Բայց զղջալուց հետո շատ հնարավոր է, որ նորից մեղանչենք: Կրկին մեղանչելուց հետո նոր զղջու-

մը կարո՞ղ է արդյոք առաջին զղջումի պես ընդունելի լինել և ներման արժանանալ: Ահա մի հարց, որը հուզում էր նաև առաքյալներին: Այդ պատճառով Պետրոս առաքյալը, որը ամենահամարձակն էր, մոտենում է Հիսուսին և խնդրում պարզել այս հարցը. *«Տե՛ր, քանի՞ անգամ, եթե եղբայրս իմ դեմ մեղանչի, պետք է ներեմ նրան. մինչև յո՞թն անգամ»:* Հիսուս պատասխանում է. *«Քեզ չեմ ասում, թե մինչև յոթն անգամ, այլ մինչև յոթանասուն անգամ յոթը» (Մատթ. 18:21-22):*

Այս պատմությունը հետաքրքիր է.

«Մի մարդ խելակորույս արագությամբ մոտենում է ծովափին գտնվող ժայռի գագաթին՝ ինքն իր հետ խոսելով.

Այլևս չեմ կարող... այլևս չեմ կարող ապրել մեղքերի բեռից և ծանրությունից ու այսքան անհաջողություններից...

Ժայռի գագաթին կանգնած նա տեսնում է Հիսուսին, որը փոքրիկ քարեր էր գցում ծովի մեջ:

Հետաքրքրությունից դրդված նա հարցնում է.

Տեր Հիսուս, նախքան ինձ այս ժայռից ցած գցելը, կուզենայի իմանալ, թե ինչո՞ւ ես քարեր նետում ծովի մեջ:

Հիսուս պատասխանում է.

Ցանկանում եմ ծովը լցնել քարերով և ժայռին հավասարեցնել, որպեսզի չկարողանաս նետվել այդտեղից:

Բայց, Տեր, գիտենք, որ Դու ամենակարող ես և իմաստություն պարգևողն ես, Քեզ համար անկարելի ոչինչ չկա, մի քանի րոպեում Դու կարող ես ծովը ցամաքեցնել ու ժայռին հավասարեցնել, իսկ այսպես անելով, հազար տարի էլ անցնի, փոքրիկ քարերով ծովի երեսը նույնիսկ չի ծածկվի...»,-ասում է զարմացած մարդը:

Հիսուս պատասխանում է.

Ահա այսպես էլ Աստծու սերը, ներողամտությունը, ողորմությունն ու փրկությունն են, որոնք այնքան մեծ են ու անսահման, որ մեղքերդ չեն կարող ծածկել դրանք: Գնա՛,

զղջա՛ և ապաշխարի՛ր ու մեղքերիդ ծանրությունից կազատվես:

Մարդը անդրադառնալով իր սխալին, լսում է Հիսուսին ու գլուխը կախ հեռանում ժայռի գագաթից» (Հովհաննես Մանուկյան):

Կյանքը պայքար է, մի՛ հուսահատվեք և մի՛ ընկճվեք:

Աստված մոռանում է բոլոր հին մեղքերը, եթե մեղավոր մարդը զղջում է իր արածների համար: Շատ հաճախ մարդիկ հարցը հետևյալ կերպ են ձևակերպում. *«Եթե Աստված ներող է, ինչո՞ւ է պատժում»:* Բնական մարդկային մտածում է, սակայն այդպիսիները պետք է հասկանան, որ ամեն մեղք հատուցում է պահանջում: Եթե երեխան բաժակը կոտրում է, ծնողը սկզբում բարկանում է, սակայն դա մի պահ, հետո գրկում, համբուրում է նրան ու ներում, սակայն ո՞վ է վճարում կոտրած բաժակի համար, անշուշտ, միայն ծնողը: Ներումը իր գինն ունի: Եվ Աստված այդ գինը վճարեց Իր Միածին Որդու՝ խաչի վրա տառապալից մահով:

Ցավոք, իբրև մարդիկ ներման այդ շնորհքը պակասում է մեր մեջ: Փոխանակ մտածենք այդ պակասը լրացնելու մասին, բոլորս մի-մի դատավոր դարձած, այնպիսի ատելությամբ ենք լցված իրար նկատմամբ և այնպիսի դատեր ենք տեսնում, որ նույնիսկ անհավատ մարդկանց նախանձը կշարժեր:

Եկեք ներե՛նք միմյանց, իսկ այն մարդու պատիժը, որը մեղանչել է մեր դեմ, գոնե մեզ այդպես է թվում, թողնենք Աստծու դատաստանին և հիշենք Նրա խոսքը, թե՝ *«Իմն է վրեժխնդրությունը, և ես կհատուցեմ» (Հռոմ. 12:19):*

Մի՛ սպասեք խաղաղություն այնտեղ, ուր բացակայում է ներելու ոգին:

Մեղքը մի սև ամպ է, որը ստվերի մեջ է դնում Աստծուն, Նրան պահում ու հեռացնում մեր տեսողությունից:

Աստված թողություն տալով մեզ, Իր Թագավորությունն է հաստատում մեր մեջ: Նա ներում է մեզ երկնքից, իսկ մենք, երկրի վրա ապրելով, պարտավոր ենք ներել մեր նմաններին: Ներման չափանիշը սերն է: Աստված սեր լինելով, անհունորեն ներում է:

Ինչո՞ւ չներենք մեր եղբորը, մի՞թե մենք Աստծուց ավելի մեծ ենք: Նա միշտ պատրաստ է մեր մեղքերը ներելու, երբ զղջանք ու ապաշխարենք, ապա ինչքան ավելիով մեղանչական մարդը պիտի կարողանա ներել իր եղբորը:

«Եթե դուք մարդկանց ներեք իրենց հանցանքները, ձեր երկնավոր Հայրն էլ ձեզ կների: Իսկ եթե դուք մարդկանց չներեք իրենց հանցանքները, ձեր Հայրն էլ ձեզ չի ների ձեր հանցանքները» (Մատթ. 6:14-15):

Ներենք միմյանց և ասենք. *«Խաղաղություն բոլորին»:* Ամեն:

ՄԻ՛ ՀԱՅՀՈՅԻՐ

«Մարդու համար փառք է հեռու մնալ հայհոյանքներից, բայց ամեն մի անզգամ խառնվում է այդպիսի բաների»
(Առակ.20:3)

Այս խոսքը ես վերցրել եմ Առակաց Գրքի 20-րդ գլխի 3-րդ համարից:

Բազում դարեր առաջ Սողոմոն իմաստունը պատգամում և խորհուրդ է տալիս մեզ ամենքիս հեռու մնալ հայհոյանքներից, որովհետև ըստ իմաստունի միայն անպարկեշտ մարդիկ են ընդունակ այդպիսի բաների: Չնայած այս խոսքերն արտասանվել են իմաստունի բերանից շատ վաղուց, բայց այսօր էլ չեն կորցրել իրենց թարմությունը, որովհետև մեր առօրյա կյանքում առանց անդրադառնալու մեզանից շատերն ընկնում են հենց այս մեղքի մեջ, բայց ցավալին այն է, որ մեր գիտակցության մեջ շատ հաճախ հայհոյելը մեղք չի համարվում, ավելին' նույնիսկ չենք էլ ցանկանում ուշադրություն դարձնել քրիստոնեական ոգուն խորթ այս երևույթին' կամ էլ լավագույն դեպքում, եթե անդրադառնում էլ ենք, ապա ամեն կերպ աշխատում ենք արդարացնել ինքներս մեզ ասելով, թե դիտավորյալ չեղավ: *«Խոսք էր, ասացինք անցավ-գնաց, էլ ինչ կարիք կա անընդհատ հիշեցնելու»:*

Գաղտնիք չի, եթե ասենք, որ շատեր իրենց ամենօրյա խոսքում հայհոյում են, իսկ դժբախտաբար ոմանց համար էլ այդպիսի խոսելաձևը դարձել է կարելի է ասել կյանքի մի մասնիկը: Այդպիսի մարդիկ չեն կարողանում իրենց կյանքը պատկերացնել առանց այդ *«գեղեցիկ խոսքերի»:* Ոմանք էլ սխալմամբ կարծում են, թե հայհոյելով իրենց քաջությունն ու առավելությունն են ցույց տալիս մյուսների նկատմամբ:

Անկասկած, հայհոյելը կամ չհայհոյելը նախ և առաջ խոսում է տվյալ անձի բարեկրթության և դաստիա-

րակության մասին: Իր հոգին ու միտքը կրթած մարդը, անկախ իր հավատացյալ կամ անհավատ լինելուց, իր պաշտոնից, սեռից ու տարիքից, երբե՛ք չի հայհոյում, անվայել խոսքեր չի ասում, ընդհանրապես նրա բերանից արտաբերված յուրաքանչյուր խոսքն ու արտահայտությունը չափված են:

Հայհոյելուն նպաստում են նաև շրջապատն ու ընկերները, որոնք կարող են և՛ բարերար ազդեցություն ունենալ և՛ հակառակը: Ուստի շատ կարևոր է մարդու կյանքում այն միջավայրը, ուր նա մեծանում և կրթվում է: Անհատի ձևավորման գործում մեծ և կանխորոշիչ դեր ունի անշուշտ նաև ընտանեկան դաստիարակությունը: Որով մարդիկ շատ անգամ լավ կամ վատ սովորությունները ձեռք են բերում հենց այս միջավայրում: Իսկ ընտանեկան ճիշտ դաստիարակություն ստացած մարդը երբե՛ք չի հայհոյում' անկախ իր դավանած հայացքներից: Ուստի շատերի մոտ կարող է այսպիսի հարց ծագել. *«Հայհոյելը մեղ՞ք է, թե՞ պարզապես անգիտակցորեն ասված խոսք կամ վատ սովորություն, որից դժվար է ձերբազատվել»:*

Սուրբ Գրքի համաձայն Հիսուս Քրիստոս Իր երկրային կյանքի ընթացքում բազմիցս անտեղի հանդիմանվում էր փարիսեցիների կողմից նախնիների ավանդությունը չպահելու և օրենքը խախտելու համար: Վերջիններս այնքան էին գերի դարձել օրենքի տառին, որ մոռացել էին դրա բուն էությունը: Փարիսեցիներն այդպիսի քայլերով ամեն կերպ ցանկանում էին ժողովրդին հրահրել Տիրոջ դեմ ու վարկաբեկել նրան: Եվ ահա նմանատիպ դեպքերից մեկի ժամանակ, երբ Աստվածորդուն մեղադրում են, թե ինչու են Նրա աշակերտներն անլվա ձեռքերով հաց ուտում, Հիսուս հանդիմանում է նրանց՝ ասելով, թե նրանք Աստծու խոսքը վերածում են սովորության և ավելացնում է. *«Լսեցե՛ք և իմացե՛ք, ոչ թե՝ ինչ որ բերանով է մտնում, ա՛յն է պղծում մարդուն, այլ ինչ որ ելնում է*

բերանից, այն է պղծում մարդուն» (Մատթ. 15:10-11), այսինքն՝ ուտելիքը կամ անլվա ձեռքերով ուտելը չէ, որ պղծում են մարդուն, այլ՛ այն ամենը, ինչ որ դուրս է գալիս մարդու բերանից, այլ կերպ՝ սրտից: Ուստի Տերը շարունակում է Իր միտքն ավելի սուր կերպով և ասում. *«Քանի որ սրտից է, որ ելնում են չար խորհուրդներ, սպանություններ, շնություններ, պոռնկություններ, գողություններ, սուտ վկայություններ, հայհոյանքներ» (Մատթ. 15:19):* Ավետարանական այս դրվագից պարզ է դառնում, որ Տերն ի շարս այլ մեղքերի հայհոյանքն էլ է համարում մեծ մեղք, որը պղծում և ապականում է մարդուն՛ հեռացնելով իր Արարչից:

Պողոս առաքյալն էլ իր թղթերում պատվիրում է, որ թոթափենք մեր բերաններից *բարկությունը, զայրույթը, չարությունը, հայհոյությունը,* որով այս ամենը հատուկ են միայն հին մարդուն և որպես Աստծու ընտրյալներ՝ հագնենք նորը զինվելով քրիստոնեական ճշմարիտ ու ազնիվ առաքինություններով, որոնք մարդուն կատարելության են տանում. *«Այժմ դուք ևս թոթափեցե՛ք այդ բոլորը՝ բարկություն, զայրույթ, չարություն, հայհոյություն և խեղկատակություն՝ ձեր բերաններից:... Որպես Աստծու ընտրյալներ, սրբեր և սիրելիներ, հագե՛ք, ուրեմն, գութ, ողորմություն, քաղցրություն, խոնարհություն, հեզություն, համբերատարություն՝ հանդուրժելով միմյանց, ներելով միմյանց... Եվ այս բոլորի վրա հագեք սերը, որ կապն է կատարելության: Եվ ձեր սրտերում թող հաստատվի Քրիստոսի խաղաղությունը, որին և կոչվեցիք մեկ մարմնով. և գոհությո՛ւն մատուցեցեք» (Կող. 3:8-15):* Իսկ Հակոբոս առաքյալն իր ընդհանրական թղթում բազմապիսի դատողություններ է կատարում լեզվի մասին՝ հորդորելով հնազանդեցնել այն. *«Լեզուն էլ կրակ է, մի աշխարհ անիրավության, մեր անդամների մեջ է հաստատված լեզուն, որ ապականում է ամբողջ մարմինը և կրակով վառում մեր ամբողջ կյանքը, բորբոքված գեհենի կրակով» (Հակոբ. 3:6):* Եկեղեցու սուրբ հայրերը ևս իրենց գրվածքներում դատապարտում

են հայհոյության երևույթը և խորհուրդ տալիս հեռու մնալ այս մեղքից, որովհետև այն կուտակումն է այլ մեղքերի: Հայհոյանքի պատճառ կարող են լինել *ոխակալությունը, ատելությունը, չարախոսությունը, նախանձը, բամբասանքը, հեշտասիրությունը, բարկությունը* և այլն:

Սիրտը խորհուրդների բնակավայրն է, ուստի բոլորիս պարտքն է մաքուր և անարատ պահել այն: Չէ՞ որ ըստ Ավետարանի *սրտով մաքուրներն են, որ պիտի տեսնեն Աստծուն (Մատթ. 5:8):* Բացառություն չեն նաև մեր լեզուն և բերանը: Իսկ այն ո՛չ այլ ինչ է, եթե ո՛չ Աստծուն օրհնաբանելն ու փառաբանելը, Նրան որպես Տեր և Փրկիչ խոստովանելն ու Նրա ամենասուրբ կամքին հնազանդվելը: Չպետք է մոռանալ, որ մենք այդ նույն բերանով ենք ճաշակում Տիրոջ փրկարար մարմինն ու արյունը, այսինքն՝ հաղորդություն ենք ստանում և այդ նույն բերանով հայհոյում ենք ու այլ մեղքեր գործում: *«Արդյոք համատեղելի՞ են այս երկուսը»:* Ահա հարց, որը ամեն մեկիս մտածելու առիթ պիտի տա:

Պողոս Պատրիարք Ադրիանուպոլսեցին ասում է. *«Արդարև հույժ բարի ու պիտանի են սրանք, երբ պատշաճն են խոսում, այսինքն՝ ընկերոջը խրատում են, տգետին ուսուցանում, տրտմածին միխթարում կամ Աստծուն աղոթում: Նրան օրհնում ու Նրանից շնորհակալ լինում: Իսկ եթե անվայելն ու անպատեհն են խոսում,* ապա *խիստ վնասակար ու չար են դառնում», այսինքն եթե մեր բերանն ու լեզուն իրենց բնականոն վիճակից դուրս են գալիս, ապա ոչ աստվածահաճո բաներ են խոսում և այդպիսով մեզ մեղքի մեջ են գցում: Իսկ քանի որ ըստ Առաքյալի, «մեղքի վարձը մահն է, իսկ Աստծու շնորհը՝ հավիտենա-կան կյանք՝ մեր Տեր Քրիստոս Հիսուսի միջոցով» (Հռոմ. 6:23),* ուրեմն պետք է աշխատենք հեռու մնալ մեղքից:

Յուրաքանչյուր քրիստոնյայի պարտականությունն է սրբության և կատարելության ձգտումը, այսինքն մաքուր լինելը թե՛ մտքով, թե՛ սրտով, թե՛ խօսքով և թե՛

գործով: Ամեն մեկիս կյանքում գալիս է մի պահ, երբ մենք ուխտ ենք անում մեր Արարչի հետ՝ խոստանալով փոխել մեր նախկին ընթացքն ու Քրիստոսով նոր մարդ դառնալ: Այդ ուխտի պահը Մկրտութեան սրբազան խորհուրդն է, որով սրբվում ենք մեր մեղքերից եւ զինվորագրվում Քրիստոսի անպարտելի բանակին: Երբ Քահանան մկրտում է երեխային, դրանից հետո կատարում է նաև Դրոշմի խորհուրդը, այսինքն՝ սրբալոյս մյուռոնով օծում է մկրտվողի բոլոր զգայարանները, յուրաքանչյուր օծման ժամանակ արտասանելով համապատասխան բացատրական խոսքը: Քահանան ի թիվս այլ զգայարանների, անուշաբույր մյուռոնով դրոշմում է նաև մեր բերանը ասելով. *«Հիսուս Քրիստոսի անունով այս կնիքը թող լինի քեզ պահպանություն բերանի և ամուր դուռ քո շուրթերին»,* այսինքն՝ մենք խնդրում ենք Ամենակալ Տիրոջից, որ հետայսու մարդն իր բերանն այլևս չպղծի, այլ ամեն ժամ օրհնություն դուրս գա այնտեղից:

Գիտենք, որ Մկրտության և Դրոշմի խորհուրդներով մենք կենդանի Աստծու տաճար ենք դառնում և զարդարվում Սուրբ Հոգու շնորհների լույսով: Մենք մեր ողջ գիտակցական կյանքում պարտավորվում ենք արթուն պահել և երբեք մեր մեջ չթմրեցնել սրբազան խորհուրդների միջոցով ստացած այդ լույսը, որի աղբյուրը Ինքը Սուրբ Հոգին է: Բայց երբ հայհոյում ենք, մեր մեջ հանգչում է Սբ. Հոգու վառած այդ կենդանարար լույսը, իսկ մեր հոգին խավարում է:

Անտարակույս, ամեն մի չարախոսություն կամ հայհոյանք իր մեջ կործանարար վտանգ է պարունակում և առաջին հերթին վնասում հենց մեզ: Բերանից արտաբերված խոսքը պարզ խոսք չէ, այլ այն իր մեջ զորություն և ուժ ունի: Եվ ինչ որ դուրս է գալիս մեր բերանից, այն այլևս հնարավոր չէ ետ առնել: Իսկ այդ խոսքը շատ անգամ կարող է նաև ճակատագրական լինել: Երբ մենք հայհոյում ենք մեր դիմացինին, որը մեզ նման Աստծու

պատկերով ու նմանությամբ է ստեղծվել, մենք մեր Արարչին ենք անպատվում և անարգում: Հայհոյանքը մեր թոյլ և տկար լինելու մասին է խոսում:

Այստեղ հարկ ենք համարում անդրադառնալ մեկ այլ խորթ երևույթի, որը բարեբախտաբար շատ քիչ տարածում ունի հայկական ընտանիքներում, բայց կա: Խոսքս մանուկներին հայհոյանք սովորեցնելու տգեղ սովորության և այն խրախուսելու մասին է: Որոշ ընտանիքներում ազգականներին, մտերիմներին կամ պարզապես ինչ-որ հյուրի ընդունելիս սովորաբար կանչում են երեխային և ասում, որ նա հայհոյի, կարծես թե դա պարծանք լինի իրենց համար: Ինչ լավ կլիներ, եթե այդ երեխայի բերանից աղոթք և օրհնություն դուրս գար, կամ գեղեցիկ ու իմաստալից մի բանաստեղծություն և երգ: Ահա այս դեպքում արժեր ուրախանալ և հպարտանալ: Եկե՛ք ազատագրենք ինքներս մեզ այս ահավոր սովորությունից և բռնենք սրբության ճանապարհը՝ միշտ մեր մտքում ունենալով Հիսուսի հետևյալ խոսքը. *«Քո խոսքերով պիտի արդարանաս և քո խոսքերով պիտի դատապարտվես» (Մատթ. 12:37):* Ամեն:

ՍԲ. ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

«Ո՞ւր ես գնում, Տե՛ր» …

Ըստ ավանդության՝ Պետրոս առաքյալը, որն իր քարոզությունների կենտրոնը դարձրել էր Հռոմ քաղաքը, մի օր փորձում էր հեռանալ այնտեղից ու տեսիլքի նման տեսնում է Հիսուսին, որն իր առջևից գնում էր խաչը ուսին և հուզված հարցնում է. *«Ո՞ւր ես գնում, Տե՛ր»:* Հիսուս կարծես թե ուզում էր երկրորդ անգամ խաչվել: Ինձ թվում է, թե այժմ էլ այս փոթորկահույզ աշխարհում, երբ ամեն կողմ պատերազմներ, ցեղասպանություններ և կոտորածներ են տեղի ունենում, Հիսուս խաչն ուսին քայլում է երկնակամարով, պատրաստ նորից խաչվելու մարդկության փրկության համար, որովհետև այդպես էլ նրանք չհասկացան, թե ո՞րն էր Տիրոջ մարդանալու, չարչարվելու, խաչվելու և վերստին հարություն առնելու իրական իմաստը:

Մեր Տերը ցանեց Իր սիրո սերմերը, սակայն եկե՛ք տեսնենք, թե երկու հազար տարիներ հետո դրանք ի՞նչ արդյունք են տվել: Այն ուղին, որ Հիսուս մեզ ցույց տվեց, արդյոք մենք քայլո՞ւմ ենք այդ ճանապարհով, թե պտտվելով նորից եկել ենք նույն տեղին և այժմ կարիքն ունենք, որ նորից *«Նա Իր վրա վերցնի աշխարհի մեղքերը»:* Ցավոք, այդպես է, որ կա: Մարդկությունը այդպես էլ չհասկացավ, որ Հիսուս մեզ ազատեց օրենքի գերությունից և տվեց սիրո օրհնությունը:

Հիսուս վերացրեց քարացած հոգևոր օրենքները և մեզ բերեց Իր կյանքի օրինակը ու կրոնը դարձրեց ապրած, ապրող և կենդանի մի կյանք: *«Մի՛ կարծեք, թե Օրենքը կամ մարգարեներին ջնջելու եկա. չեկա ջնջելու, այլ՝ լրացնելու» (Մատթ. 5:17),- ասաց Նա:*

Նա պաշտպանեց ու մեծ սիրով գուրգուրեց մոլորյալ և արհամարհված, շեղված ու խավարում քայլող հոգիներին: Հիշենք դրանցից մի քանիսին. անառակ որ-

դուն, խաչված ավազակին, շնացող կնոջը, արհամարհված սամարացիներին, խուլին, համրին, կույրին, դիվահարին, բորոտին ու անդամալույծին: Ահա թե որոնցով շրջապատեց Իրեն: Իսկ մենք ի՞նչ ենք անում. անառակ որդի ենք փնտրում, որպեսզի փակենք մեր տան դռները նրա առջև, ավազակ ենք փնտրում, որպեսզի դատապարտենք, խուլ, համր ու հիվանդ ենք փնտրում, որպեսզի ծաղրենք ու ծիծաղենք նրանց վրա:

Այսօր բոլորս էլ հիվանդ ենք ու մեղավոր: Հիսուս եկավ հիվանդների և մեղավորների համար, բայց դժբախտաբար, մենք չենք ուզում ընդունել մեր հիվանդությունն ու մեղավոր լինելը: Արդեն դա էր տարբերությունը փարիսեցու և Հիսուսի ոտքերը արցունքներով լվացող մեղավոր կնոջ միջև: Այդ կինը գիտեր, որ ինքը հիվանդ է, շատ հիվանդ և պետք ուներ Հիսուս-բժշկին, որովհետև ինքը միայնակ չէր կարող բուժվել: Իսկ փարիսեցին ինքն իրենից գոհ էր և իրեն բարձր էր դասում մարդկանցից, նա իրեն առողջ էր համարում և բժշկի կարիք չուներ:

Հավատացե՛ք, որ այսօր էլ ոչինչ չի փոխվել և Հիսուս Իր Երկրորդ Գալստյան ժամանակ նույն հարցերն է տալու մեզ, ինչ որ առաջին անգամ: Հիշենք Նրա մի քանի մեղադրական խոսքերը ուղղված մարդկության որոշ խավերին.

«Երուսաղե՛մ, Երուսաղե՛մ, որ կոտորում էիր մարգարեներին ու քարկոծում քեզ մոտ ուղարկվածներին. քանի՛ անգամ կամեցա հավաքել քո մանուկներին, ինչպես հավն է հավաքում իր ձագերին թևերի տակ, բայց չկամեցաք» (Մատթ. 23:37):

«Աստված մեռելների Աստված չէ, այլ՝ ողջերի, ուստի դուք խիստ մոլորված եք»:

«Կեղծավո՛ր, նախ քո աչքի գերանը հանիր...»: «Ինչո՞ւ ինձ Տե՛ր, Տե՛ր եք կոչում, իսկ ինչ ասում եմ՝ չեք անում»... (Ղուկ. 6:46):

Չլինենք հոռետես և վատ տրամադրվենք կյանքի նկատմամբ: Ավելի քան գեղեցիկ է Աստծու կողմից

մեզ շնորհված այս կյանքը: Ընդհակառակը, եկե՛ք փորձենք գտնել ետդարձի ճանապարհներ ու հասկանալ մեր Տիրոջը, թե՝ *«Ի՞նչ էր ուզում Նա իրականում»:* Նրա ուզածը մեր սրտերն ու հոգիներն էին, լցված աստվածային լույսով, ջերմ սիրով, անսահման ներողամտությամբ և անկեղծությամբ: Հայ ժողովուրդը երկու հազար տարիներ առաջ իմաստությամբ կարողացավ հասկանալ մեր Տիրոջ այս Վարդապետությունը և ընդունեց այն իր սրտի ու հոգու մեջ: Չնայած շատ անգամներ հավատի ու հայրենիքի համար նահատակվեց, սակայն առանց տատանվելու շարունակեց, շարունակում է այսօր ու պիտի շարունակի իր աստվածահաճո ընթացքը դեպի ավելի լուսավոր ապագան: Դժվար ու ծանր ժամանակների սերունդ ենք մենք այսօր, քանի որ ամեն ինչ ունենալով՝ շքեղ տներ, թանկ մեքենաներ ու թանկարժեք զարդեղեններ, ոչնչով չենք կարող մեկս մյուսին զարմացնել, մանավանդ Ամերիկյան այս հզոր երկրում, ուր բախտի անիվը մեզ նետել է շարունակելու մեր նախնիների գործը: Կարող ենք մեկս մյուսին զարմացնել մի բանով միայն – *մեր բարությամբ, մաքրությամբ ու ազնվությամբ:* Մեզ բաժին է ընկել խելահեղ 21-րդ դարը, սակայն ամեն ինչ կորած չէ: Այստեղ տեղին է հիշել սրբերից մեկի՝ Սբ. Ֆրանչիսկոսի խոսքերը. *«Ահավոր և բարձրագույն սարսափների ժամանակաշրջանը, դա նաև ժամանակն է մեծագույն հույսերի ու սպասումների»:*

Հույսներս չկորցնենք և իբրև հավատարիմ զավակները Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, աղոթքով զորացած մեր բարի ու արդար գործերով, մեր սրտում և հոգում ունենալով Տիրոջ Լույսն ու Սերը, շարունակենք քայլել դեպի հավիտենական կյանք: Ամեն:

ՈՐՈՄՆԵՐԻ ԱՌԱԿԸ

21-րդ դարում ենք ապրում և այնպիսի ժամանակներում, ուր բարին և չարը, լավն ու վատը միասնաբար գոյություն ունեն կողք-կողքի: Սակայն հաճախ այն երևույթները, որոնք տեղի են ունենում մեր շուրջը և մենք տեսնում ենք, մեզ զարմացնում են ու ակամա մտածում ենք, թե ինչպե՞ս չար, անօրեն, անհավատ և անխիղճ մարդիկ երբեմն շատ ավելի լավ պայմաններում են ապրում, քան մենք, որ ազնիվ, մաքուր ու արդար ենք, հավատում ենք Աստծուն ու ամեն օր փառաբանում Նրա ճըշմարիտ և սուրբ անունը ու հաճախ մեր մտքում այսպիսի հուզումնալից հարցեր են առաջ գալիս. «*Եթե Աստված կա, ապա ինչո՞ւ չարը պիտի լինի ու ինչպե՞ս է, որ դեռ այն գոյություն ունի»:*

Պատասխանը ստանում են, երբ կարդում ենք Մատթեոսի Ավետարանի 13–րդ գլխի 24-30 համարները, որտեղ Հիսուս խոսում է Երկնքի արքայության մասին՝ պատմելով այս առակը:

Հիսուս Երկնքի արքայությունը նմանեցնում է մի մարդու, որն իր արտում բարի սերմ է ցանում: Եվ երբ բոլորը քնած էին, թշնամին որոմ է գցում ցորենի սերմերի վրա (*որոմը այն վնասակար մոլախոտն է, որը խեղդում է պտղաբեր բույսերը, այս դեպքում՝ ցորենը)*: Ժամանակն անցնում է և ցորենը սկսում է աճել ու նրա հետ հայտնվում է որոմը: Ծառաներն առաջարկում են քաղել, բայց տերն ասում է. *«Ո՛չ, մի գուցե որոմը քաղելիս ցորենն էլ նրա հետ արմատախիլ անեք: Թողե՛ք, որ երկուսն էլ միասին աճեն մինչև հունձը, և հնձի ժամանակ ես հնձողներին կասեմ՝ նախ այդ որոմը քաղեցե՛ք և դրանից խուրձեր կապեցեք այրելու համար, իսկ ցորենը հավաքեցե՛ք իմ շտեմարանների մեջ» (Մատթ. 13:29-30):*

Երկու հազար տարիներ ի վեր խոսվում է այս առակի մասին: Բայց եկեք մտածենք, թե 21-րդ դարում ապրող մարդկանց համար ի՞նչ նշանակություն ունի փոխանցելիք

այս առակը: Սերմնացանը, որը ցանեց բարի սերմը, Աստված՝ Ինքն է, իսկ արտը՝ աշխարհն է: Ցորենը բարի մարդիկ են, որոնք Աստծու խոսքը լսում ու գործադրում են, իսկ թշնամին սատանան է, որը գալիս է գիշերը ու իր սև գործն անում:

Աստված մեզ շնորհել է այս գեղեցիկ կյանքը ու պատվիրել աշխատել, ստեղծել, մշակել և բարի գործեր կատարել Իր փառքի համար: Մեզանից յուրաքանչյուրը՝ իբրև քրիստոնյա, հոգևորական, թե՝ աշխարհական, մեծ, թե՝ փոքր, ի՛նչ պաշտոնի, ի՛նչ աթոռի, ի՛նչ մակարդակի կամ կյանքի ի՛նչ պայմաններում էլ գտնվելիս լինի, պիտի ապրի Տիրոջ պատվիրաններով և հաջորդաբար փոխանցի դրանք մեր ապագա սերունդներին: Սբ. Ներսես Շնորհալի Հայրապետի բացատրության համաձայն՝ իբրև հավատացյալներ *«Ո՛չ թե լինենք մի խոդովակ, որի միջից հոսի Աստծու խոսքը, այլ պետք է լինենք մի սպունգ»,* որով նախ մենք մեր կյանքով ցույց տանք, որ ապրում ենք Քրիստոսի լույսով ու Նրա ճշմարիտ ուսմունքի համաձայն, որպեսզի օրինակ ծառայենք ուրիշներին:

Որոմները այն չար խորհուրդներն են, որոնք արմատ են գցում մեր կյանքում, երբ մեր սրտից բացակայում է Քրիստոսի ներկայությունը: Այն կարող ենք զգալ այն ժամանակ, երբ սեր, հարգանք ու հասկացողություն ունենանք իրար նկատմամբ և ձեռք ձեռքի տված աշխատենք Աստծու փառքի համար: Հետևաբար, չար խորհուրդներ երբեք մի՛ մտածեք և մի՛ քննադատեք բոլոր նրանց, որոնք անիրավ ու անարդար կյանքով են ապրում և կարծեցյալ հաջողություն են ունենում այս աշխարհում, որովհետև Հիսուս ասում է. *«Այդ է նրանց վարձքը»:*

Ձեզանից շատերը լավ ծանոթ են հայրենի նշանավոր և անմահ բանաստեղծ Հովհաննես Թումանյանին, որը գրել է բազմաթիվ բանաստեղծություններ, պոեմներ, հեքիաթներ, կյանքից վերցված զանազան պատմություններ, ինչպիսիք են մեզ բոլորիս ծանոթ «*Անուշը», «Թմբ-*

կաբերդի առումը», Լոռեցի Սաքոն», Շունն ու կատուն», «Անբախտ վաճառականները», «Լուսավորչի կանթեղը», «Մի կաթիլ մեղրը», Չարի վերջը» և այլն:

Այստեղ հարմար է մեջբերել *«Չարի վերջը»* հեքիաթը, որը կապ ունի այսօրվա առակի հետ: Սա մի պատմություն է կկվի և աղվեսի մասին, ուր Հովհաննես Թումանյանը հրաշալի կերպով ընդգծում է բարու և չարի հակասությունը, վախճանն ու գնահատանքը:

«Ըստ այս պատմության, կկուն ապրում էր անտառում՝ ծառի վրա, իր երեք ձագերով: Աղվեսը մի օր գալիս է ու նրան սպառնում, թե կացինով ծառը կկտրի, եթե նա իր ձագերից մեկին չտա իրեն: Կկուն երկու անգամ լալով տալիս է իր ձագերին: Երրորդի պարագային նրան հանդիպում է ագռավը, որը նրա լացը տեսնելով խղճում է նրան ու ասում, որ աղվեսի սպառնալիքը սուտ է, քանի որ անտառը բոլորին է պատկանում: Կկուն աղվեսին հանդիմանում է և չի տալիս իր վերջին ձագին, բայց ասում է, որ ագռավն է խրատել իրեն: Աղվեսը սուտ քուն ձևանալով, բռնում է ագռավին և ուզում է ուտել, սակայն ագռավը նրան խորհուրդ է տալիս տիրանալ ուտելիքներով լի մի պահեստի: Աղվեսը, ագահությամբ լցված, լսում է նրան ու գնում նրա ցույց տված տեղը: Մինչ այդ ագռավը թռչելիս տեսել էր, որ մի թփի տակ շուն կար: Երբ ագահությունից կուրացած աղվեսը թռչում է կարծեցյալ ուտելիքներով լի պահեստի վրա, դրա փոխարեն շունն է դուրս գալիս բռնում նրան ու սկսում խեղդել: Աղվեսի վերջին խոսքերն են լինում.

Ա՜խ, ե՜ս,… ա՜խ, ե՜ս…
Զգույշ աղվես,
Փորձանքի մեջ ընկնեմ էսպե՜ս…
Ա՜խ անիրավ,
Դու սև ագռավ...
Իսկ ագռավը թռչելով պատասխանում է.
Ինչքան էլ որ լինես զգույշ,

Չարի համար վաղ թե ուշ,
Էդ է պահված,
Աղվես աղա,
Ղա՛, դա՛, դա՛, դա՛...»:

Չարի կործանման հրաշալի մի օրինակ է տալիս մեզ բանաստեղծը, որի մեջ կյանքի մեծ խորհուրդ կա:

Մեզանից յուրաքանչյուրը թող փորձի ցանել այն, ինչ որ Աստված տվել է մեզ. Նրա խոսքը, սերը և այն կատարելը ո՛չ միայն պարզ գործողություն համարի, այլ, ինչպես Հիսուս է ասում. *«Դու ինքդ՝ իբրև քրիստոնյա, պետք է այդ հողում մեռնես»:*

Հնարավոր է, որ ձեզանից շատերը զարմացած ակամա այսպիսի հարց ունենան. *«Ո՞վ է լսել այսպիսի բան, մի՞թե կարելի է չարին պահել: Ինչպե՞ս կարող է Աստված, որ այնքան բարի, ողորմած, գթած, սիրով լի է, պահի չարին, տեղ տա անիրավին ու ավազակին»:* Պատասխանը ավելի քան հստակ է: Աստվածային նախախնամության մեջ գաղտնիքներից մեկը չարիքների հանդեպ ցույց տրված Աստծու ներողամտության խորհուրդն է բացատրում:

Աստված չարին պահում է երկու պատճառով. նախ՝ երբ որոմը քաղվի, ցորենն էլ հետը չկորչի, խնայվի ցորենը, չփչանա, և երկրորդ՝ Աստված՝ իբրև գթառատ, սիրող ու ներողամիտ Հայր, որոմն էլ է թողնում ցորենի կողքին, որպեսզի մի օր էլ այն դարձի գա և իսկական, պտղաբեր ցորեն դառնա ու փրկվի, այսինքն՝ Աստված հնարավորություն է տալիս մեղավորին, այս դեպքում չարին զղջալու, դարձի գալու և հասկանալու իր սխալը ու այս ձևով ներում ստանալու: Ամեն:

ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ

«Արդարների համար չէ օրենքը, այլ՝
Անօրենների և անհնազանդների…»
(Ա. Տիմ. 1:9)

Այս խոսքը ես վերցրել եմ Պողոս Առաքյալի իր աշակերտ Տիմոթեոսին ուղղած նամակի 1-ին գլխի 9-րդ համարից, ուր նա շեշտը դնում է անհնազանդության վրա։

«Ի՞նչ է անհնազանդությունը և ո՞վ անհնազանդ գտնվեց Աստծուն, անհնազանդությունը թերությո՞ւն է, թե՞՝ առաքինություն»։

Այս հարցերին պատասխանելու համար, պիտի սկսենք աշխարհի և մարդու ստեղծումից։ Աստված մարդուն ստեղծեց Իր պատկերի համաձայն, այսինքն՝ նրան տվեց *հոգի, միտք, կամք, խիղճ և աշխարհին կառավարելու իշխանություն,* քանի որ մարդը Աստծու ստեղծած ամենակատարյալ էակն էր։

Առաջին կնոջ թերությամբ և Ադամի սխալով անհնազանդությունը տեղ գտավ աշխարհի վրա։ Առաջին մարդը ապերախտ գտնվեց Աստծու հանդեպ և չկարողացավ վայելել եդեմական կյանքը, որովհետև իր կնոջը Աստծուց ավելի սիրեց և փոխանակ Նրան, իր կնոջը հնազանդվեց, որը խաղալիք էր դարձել սատանայի ձեռքում։

Աստծուն չհավատացողն ու Նրան իր սրտում չունեցողը՝ հնազանդություն էլ չունի։ Աստված չունեցողը սեր ու վախ էլ չունի։

Սուրբ Ավետարանը մեր հավատի պատմության գիրքն է, որի յուրաքանչյուր խոսքը մեզ մարդկանց դեպի կյանք առաջնորդելու լուսատու լապտեր է։

Եթե մի այլ կողմից մոտենանք, կտեսնենք, թե անհնազանդությունը նաև հպարտության արդյունք է, ինչպե՞ս։ Պարզ է, հպարտ մարդը ինքն իրենից այն կողմ ոչինչ չի տեսնում և դրա համար էլ չի հնազանդվում ո՛չ Աստծուն և ո՛չ էլ որևէ մեկին։

Պողոս առաքյալը ասում է. *«Համերա՛շխ եղեք միմյանց հետ, մի՛ մեծամտացեք, այլ խոնարհ եղեք խոնարհների հանդեպ, դուք ձեզ իմաստունի տեղ մի՛ դրեք, մեկի չարի փոխարեն չար մի՛ հատուցեք. խորհեցե՛ք բարին՝ բոլոր մարդկանց առաջ» (Հռոմ. 12:16-17):*

Անհնազանդությունը առաքինություն չէ, այլ՝ թերություն:

Այս փոքրիկ պատմությունը հետաքրքիր է.

«Ճաշարանատերից մեկը հայտարարություն է տալիս թերթում, թե մատուցողների կարիք ունի: Հաջորդ և մի քանի օրերի ընթացքում բավական մեծ թվով երիտասարդներ են ճաշարան գալիս: Ճաշարանատերը շփոթվում է այդքան շատ երիտասարդներ տեսնելով, սակայն արագ կողմնորոշվելով հնարը գտնում է. «Կընդունեմ նրանց, ովքեր հնազանդ են իրենց ծնողներին»: Կատարվում է զարմանալին, մնում են ընդամենը երկու երիտասարդ»:

Ցավ ես ապրում այս կարդալով: Մեր երիտասարդները կարծում են իրենց ծնողներին հնազանդվելով կորցնում են իրենց անկախությունը և անհատապես իրենց շնորհները դրսևորելու կարողությունը: Այդպես չէ, ծնողներին հնազանդվելով, նրանք ընդհակառակը ուժ են ստանում անվախ ու համարձակ քայլելու ուղիղ և ճիշտ ճանապարհով:

Հնազանդվել բառը ուղղակի կերպով չպիտի հասկանանք: Այն նշանակում է հարգել ու սիրել: Ես համաձայն չեմ կույր հնազանդության: Դա ավելի մեծ փորձության կարող է տանել անհատին: Սիրել ու հարգել ո՛չ թե իբրև պարտականություն, այլ՝ գիտակցորեն:

Կարող ենք զարմանալ, եթե ուշադիր դիտենք բնությունն ու կենդանական աշխարհը: Սրանցից ո՛չ մեկը Աստծու կամքին հակառակ չեն գործում: Ամեն բան իր եղանակն ու ժամանակը ունի: Մարդու պարագային հակառակն է, ո՛չ ժամանակ կա և ո՛չ էլ եղանակ անհնազան-

դության իրենց արարքների մեջ: Եթե մարդ դիտի մրջյունների կյանքը, նրանցից կարգապահություն և աշխատասիրություն կսովորի: Նրանք ուժեղ կարգապահությամբ հետևում են իրենց առաջնորդին և երբեք էլ շարքից դուրս չեն գալիս:

Այս պատմության մեջ հնազանդությունը ուղղակի փրկում է երեխայի կյանքը.

«Տարիներ առաջ Ռուսաստանի գյուղերից մեկի երկաթգծային կայարանի պահակը, նշան է տալիս, որպեսզի գնացքը անցնի: Այդ պահին հանկարծ նկատում է իր չորս տարեկան փոքրիկին, որը խաղում էր երկաթգծերի վրա: Գնացքը շատ մոտ էր և պահակը ժամանակ չուներ տղային ազատելու: Նա արագ պիտի կողմնորոշվեր կամ փոքրիկը պիտի զոհվեր և կամ գնացքը պիտի խորտակվեր՝ ուղևորներն էլ զոհվեին՝ տղային փրկելու համար: Պահակի մտքում անմիջապես մի միտք է ծագում. նա ամբողջ ուժով գոռում է, որ փոքրիկը պառկի գետնին: Հակառակ որ փոքրիկը չի հասկանում, թե ի՞նչ է լինում և ինչո՞ւ ինքը պիտի պառկի, սակայն հնազանդվում է իր հորը ու գնացքը անցնում է նրա վրայից՝ առանց նրան վնասելու: Պահակը արժանի կերպով գնահատվում է փոքրիկին ճիշտ ձևով դաստիարակելու և կրթելու համար»:

Ադամ Քահանա Մակարյանը գրում է. *«Գիտենք, որ քրիստոնեական կրոնը քարոզում է հնազանդություն իշխողների նկատմամբ, որովհետև ըստ Աստվածաշնչի՝ յուրաքանչյուր իշխանություն տրվում է Աստծո կողմից (Հռ. 13.1): Սակայն շատ սրբերի արարքների մեջ տեսնում ենք անհնազանդություն և նույնիսկ ըմբոստություն հեթանոս իշխողների հրամանների ու կարգադրության դեմ: Ինչպե՞ս կարող ենք հասկանալ քրիստոնեական հնազանդության կոչը և այս սրբերի արարքները: Մեզ հաճախ թվում է, թե հնազանդությունը ազատության սահմանափակումն է: Եվ մեր ժամանակների պատկերացումներն էլ*

ազատության մասին հասել են անհեթեթության իրենց բարձրակետին: Այսօրվա մարդկանց մեծամասնության մտածելակերպով ազատություն նշանակում է ամեն ինչ անելու կարելիություն: Բայց մի պահ կանգ առնենք և մտածենք՝ մի՞թե ազատություն նշանակում է սանձարձակություն…:

Ճշմարիտ ազատությունը, որը մեծ չափով բխում է հնազանդությունից, լինում է աշխարհիկ և հոգևոր: Աշխարհիկ և հոգևոր հնազանդությունները միշտ իրար միացած պետք է լինեն և բաժանվեն միայն այն դեպքում, երբ աշխարհիկ հնազանդությունը կարող է սպառնալ հավատի ու հոգու կորստյանը: Այս ամենն իմանալուց հետո մեզ համար հասկանալի է դառնում որոշ սրբերի ըմբոստությունն ու պայքարը: Ի՞նչ կարող են սովորել մեր երեխաները այն սրբերի կյանքի պատմությունից, ովքեր անհնազանդ են եղել իրենց հեթանոս ծնողներին: «Հայրը պիտի բաժանվի որդու դեմ և որդին՝ հոր, մայրը՝ աղջկա դեմ, և աղջիկը՝ մոր» (Մատթ. 10:35, Ղուկ. 12:53, հմմտ. Միք. 7:6),- ասում է Աստվածաշունչը…: Սուրբ Հովհան Ոսկեբերանի խոսքերն են. «Մի՛ ասա, թե երկար ժամանակ է պետք արդեն հայհոյանք կամ անպատշաճ խոսքեր սովորած երեխային ուղղելու համար, երկու ամիսն էլ բավական է»: Անհոգ ծնողները կպատժվեն ո՛չ միայն իրենց մեղքերի համար, այլև իրենց երեխաների վրա ունեցած վատ ազդեցության կամ իրենց պարտականության թերացման համար: Առաջին հերթին երեխայի հոգին պետք է զորացնել ու պարարտացնել և ո՛չ թե մարմինը: Իսկ ինչպիսի՞ն էին քրիստոնեական ոգով դաստիարակված սրբերը: Իրենց հոգևոր իմաստության և ուժի շնորհիվ անգամ գազանները նրանց չէին վնասում և առյուծները ծառայում էին նրանց: «Եթե հայրերը քրիստոնեաբար դաստիարակեին իրենց երեխաներին, ապա պետք չէին լինի ո՛չ դատարաններ և ո՛չ էլ պատիժներ ու զրկանքներ»,- ասում է Սուրբ Հովհան Ոսկեբերանը: Ահա այսպի-

սի ոգով դաստիարակված երեխաները ծնողների կամ պետության հանդեպ որոշ սրբերի անհնազանդությունից չար վարվելակերպ երբե՛ք չեն սովորի և միայն մեկ կարևոր բան կիմանան՝ Աստված ավելի վեր է քան պետությունը և ավելի բարձր է, քան ծնողը» («Քրիստոնեության Իսկությունը» գրքից):

Եթե անհնազանդությունը գիտակցության պակասությունն է, հնազանդությունը մարդուն երջանկության ու կատարելության առաջնորդող մի միջոց է: *Ճանապարհը Ինքը՝ Քրիստոսն է:*

Նախամարդու թերությունը եղավ իր անհնազանդությունը: Այն օրից ի վեր մարդկային փորձառությունը սովորեցնում է, թե սիրո օրենքի կատարմամբ և Քրիստոսին հասնելով հավատացյալը կարող է վերստին մտնել այդ ճանապարհի մեջ ու քայլել դեպի կատարելություն և հավիտենական երջանկություն՝ հնազանդվելով Աստծու կամքին:

Բոլոր հոգևորականները ձեռնադրությունից առաջ ուխտ են կատարում, որ պիտի լինեն նվիրյալ ու ծառայասեր սպասավորները Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու և միաժամանակ հնազանդվեն իրենց առաջնորդներին: Անհնազանդությունը պատժվում է:

«Մի անգամ չորս սկյութիացիներ գնացին երանելի Հայր Պամբոյի մոտ: Նրանք կաշվե զգեստներ էին հագել, և նրանցից յուրաքանչյուրը պատմեց իր հետ այնտեղ եղող ընկերոջ առաքինությունները: Նրանցից մեկն անսասան էր պահքի մեջ, երկրորդն՝ այնինչ էր, երրորդը՝ հույժ ողորմած էր, իսկ չորրորդի մասին ասացին, թե քսաներկու տարի է, ինչպիսի հնազանդությամբ մնում է ծերի մոտ: Հայր Պամբոն նրան ասաց. «Ահա ասում եմ ձեզ, որ սրա առաքինությունն ամենքիցդ բարձր է, որովհետև ձեզնից յուրաքանչյուրը, որ առաքինությունը կամեցավ, այն էլ գործադրեց, իսկ սա իր կամքը մերժեց և ուրիշների կամքը

կատարեց: Այսպիսիները մարտիրոսներ են, եթե պահեն մինչև վերջ»:

Բոլոր մարդիկ էլ մեղավոր են: Անմեղ մարդ չկա: Եթե մեղավոր ենք, ուրեմն նշանակում է նաև անհնազանդ ենք: Այդ պատճառով Պողոս Առաքյալը շեշտում է. *«Արդարների համար չէ օրենքը, այլ՝ անօրենների և անհնազանդների…» (Ա. Տիմ. 1:9):*

Ուրեմն փորձենք հնազանդվել Աստծու կամքին: Եթե ուզում ենք երջանկության ու կատարելության հասնել, ճանապարհը մեկն է՝ հետևել ու հնազանդվել Ճշմարիտ Հովվին՝ Հիսուս Քրիստոսին: Ամեն:

ԵՍ ԵՄ ԱՇԽԱՐՀԻ ԼՈՒՅՍԸ

«Ես եմ աշխարհի լույսը, ով որ իմ հետևից է գալիս, խավարի միջով չի քայլի, այլ կընդունի կենաց լույսը»
(Հովհ. 8:12)

Հովհաննեսի Ավետարանի 3-րդ գլխի 19-21 համարներում Հիսուս ասում է. *«Եվ դատաստանը այսպե՛ս իսկ է. որ լույսը եկավ աշխարհ, սակայն մարդիկ խավարն ավելի սիրեցին, քան լույսը, որովհետև իրենց գործերը չար էին. որովհետև, ով չարիք է գործում, ատում է լույսը և չի գալիս դեպի լույսը, որպեսզի նրա գործերը իր երեսովը չտան: Իսկ ով կատարում է այն, ինչ ճշմարիտ է, գալիս է դեպի լույսը, որպեսզի նրա գործերը հայտնի լինեն, թե Աստուծով կատարվեցին» (Հովհ.3:19-21):* Լույսի ու խավարի մասին Աստվածաշունչը Ծննդոց գրքի 1-ին գլխի 4-րդ համարում այսպես է ասում. *«Աստված տեսավ, որ լույսը լավ է, Աստված լույսը բաժանեց խավարից» (Ծննդոց 1:4):* Ինչպես տեսնում եք, հենց աշխարհի սկզբից Աստված լույսը խավարից բաժանեց, քանի որ լույսը բարի էր:

Առակաց գրքում ասվում է. *«Արդարների ճանապարհները նման են ծագող լույսի, որ առաջնորդում և լուսավորում է նրանց, մինչև որ օրը լրիվ լուսավորի: Ամբարիշտների ճանապարհները նման են խավարի, և նրանք չգիտեն, թե ինչպես պիտի սայթաքեն» (Առակ. 4:18-19):* Հիսուս ճշմարիտ լույսն էր; Նա աշխարհի մեջ էր և Նրան չճանաչեցին: Հովհաննեսի Ավետարանի 8-րդ գլխի 12 համարում Հիսուս ասում է. *«Ես եմ աշխարհի լույսը, ով որ իմ հետևից է գալիս, խավարի միջով չի քայլի, այլ կընդունի կենաց լույսը»:* Իրապես էլ Հիսուսի *«լույս»* լինելը առաքյալներին հայտնվեց Թաբոր լեռան վրա, երբ Նա այլակերպվեց և արեգակից էլ *«լուսավոր»* եղավ: Նրա *«լույս»* լինելը մի անգամ ևս հռչակվեց Սուրբ Հարության օրը: Սուրբ Պողոս Առաքյալը Դամասկոսի ճանապարհին *«լուսավոր»* Քրիստոսին տեսավ ու դարձի եկավ: Նույնիսկ

Եսայի մարգարեն հազարավոր տարիներ առաջ հայտարարեց, որ *«լույս»* պիտի ծագեր աշխարհի վրա: Հայ ժողովուրդը Հիսուսի *«լույս»* լինելը պաշտամունքի և սիրո առարկա է դարձրել: Մեր երկրի առաքյալներին ու ավետարանիչներին *«լուսավորիչ»* ենք կոչել: *«Իջավ Միածինը Հորից և փառքի լույսը Նրա հետ»* շարականն ենք երգել ու մինչև այսօր էլ երգում ենք: Մեր շարականագիրները գրել են. *«Լույս, Արարիչ Լույսի»:*

Մեզ ասում են, որ մենք կրակապաշտ ենք, եկեղեցիներում և նույնիսկ մեր տներում մոմ ենք վառում: Ավետարանում չի ասված, որ աղոթելիս մոմ վառենք: Կրակին պաշտելը հեթանոսների սովորությունն է: Մոմ վառելը բացարձակապես չի նշանակում կրակապաշտ լինել: Այդ գեղեցիկ սովորությունը գալիս է հին ժամանակներից, և նպատակն էլ տարբեր է: Առաջին շրջանում քրիստոնյաները անընդհատ հալածանքների էին ենթարկվում, ստիպված քարայրներում և գերեզմանախորշերում էին հավաքվում աղոթելու, որտեղ մշտապես մութ էր. լուսավորելու համար մոմեր էին վառում: Երկար ժամանակ նրանք օգտագործեցին այս միջոցը լույս ունենալու համար, որը կարծես սովորություն դարձավ ու դարեր հետո մեզ հասավ: Այսօր մենք կարիք չունենք մոմերով մեր եկեղեցիները լուսավորելու, քանի որ ժամանակակից սարքավորումների միջոցով էլեքտրականություն ունենք, սակայն այդ բարեպաշտ սովորությունը պահում ենք՝ դրա մեջ ուրիշ ավելի կարևոր ու գեղեցիկ իմաստ տեսնելով: Վառվող մոմը առաջին հերթին մեզ համար խորհրդանշում է Քրիստոսին և Նրան հետևողներին: Հիսուս Ինքը չհանգչող մոմ էր. այդ մշտավառ մոմից միլիոնավոր ուրիշ մոմեր վառվեցին և այսօր էլ շարունակվում են վառվել: Մեր ժողովուրդն էլ դարեր առաջ վառեց իր մոմը Հիսուսով ու մինչև այսօր անշեղորեն վառված է պահում այդ լույսը իր հոգում և սրտում: *Փոքրիկ մոմը խորհրդանշում է մեր հավատի լույսը:*

Հաճախ սիրտս ցավում է ու ինքս ինձ հարցնում եմ, թե մենք այսօր ինչո՞վ ենք տարբերվում Հիսուսին խաչ բարձրացնողներից, երբ նախանձով ենք լցվում, քննադատում մեզ շրջապատողներին, օգնության փոխարեն երես թեքում կարիքավորներից ու կարոտյալներից, ներողամտության փոխարեն վրեժ լուծում ու մեկս մյուսին հայհոյում: Այս բոլորը կատարելով՝ արդյոք անուղղակիորեն մենք էլ Քրիստոսին խաչ չե՞նք բարձրացնում: Հիսուսին խաչել նշանակում է լույսը խավարեցնել և բարու փոխարեն չարն ընտրել:

Հավատի կարևոր արտահայտություններից մեկն էլ Եկեղեցի այցելելն է: Եկեղեցի գալը յուրաքանչյուր հայ հավատացյալի համար կարևոր և անհետաձգելի պարտականություն է, որովհետև Եկեղեցին բոլորիս հոգեպես սնում ու զինում է՝ պայքարելու համար չարի ու խավարի դեմ: Եկեղեցին սիրել չի նշանակում շենքը սիրել, այլ այդ շենքում մատուցված Սուրբ Պատարագը, շարականները և երգողությունը սիրել. *«Բավական չէ մտածել նյութական շենքի մասին, այլ պետք է մտածել նաև բարոյական ու հոգեկան շենքի վերանորոգության մասին»,- ասում է մեր Հայրապետներից մեկը:*

Ոմանք կարող են այս հարցը տալ, թե՝ *«Ինչո՞ւ մեղքի խավարում բնակվող մարդիկ մերժեցին ու մինչև օրս դեռ մերժում են Հիսուսին՝ Ճշմարտության Լույսին ու Արդարության Արեգակին: Ի՞նչն է պատճառը»:* Ավետարանում հստակ կարող ենք ստանալ սրա պատասխանը: Այն մարդիկ, որոնց գործերն ու ցանկությունները հակառակ են Աստծու կամքին, չեն կարող դիմանալ Հիսուսի խոսքերից ճառագայթող ճշմարիտ լույսին: Ամեն:

ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ

«Տերը հակառակ է ամբարտավաններին.
նա շնորհ է տալիս խոնարհներին»
(Առակ. 3:34)

Ամեն անգամ, երբ հավատացյալները Սուրբ Պատարագի ընթացքին իրենց մեղքերի համար թողություն են խնդրում Աստծուց և մասնակցում հավաքական խոստովանանքին, լսում են բազում մեղքերի մասին՝ *բամբասանքի, հայհոյանքի, նենգության, ատելության, խորամանկության, անզգամության, հանդգնության, դատարկաբանության, անիծաբանության, չարախոսության, ստախոսության* և այլն ու ասում են *«Մեղա Աստուծո»* և հոգևորականը թողություն տալով հաղորդությամբ մաքրում է նրանց մեղքերը: Սակայն այս հարյուրավոր մեղքերի կողքին, մեր եկեղեցական Հայրերը իմաստությամբ առանձնացրել են մեր առօրյա կյանքում թունավորող թուլություններ, որոնք *«մեղա»-ի* բաժնում կոչվում են յոթը մահացու մեղքեր. *«Հպարտություն, Նախանձ, Բարկություն, Ծուլություն, Ագահություն, Որկրամոլություն (շատակերություն), Յանկասիրություն»:* Այս մահացու մեղքերից ո՞րը կուզեք ընտրեք և կտեսնեք, որ մեր երկրային կյանքում սրանք իրապես նման են թունավոր նետերի, որոնց հարվածը անբուժելի է ու քեզ փրկություն չկա:

Ահա այս թունավոր նետերից մեկն է հանդիսանում *«Հպարտությունը»:* Այս մոլության հակառակ առաքինություններն են՝ *«Համեստությունը և Խոնարհությունը»:*

Աստվածաշնչում կարդում ենք, թե Աստված հակառակ է հպարտ և անբարտավան մարդկանց ու Իր շնորհները բաշխում է միայն խոնարհներին:

Առակաց Գրքում կարդում ենք՝ *«Տիրոջ անեծքն ամբարիշտների տներում է, մինչդեռ արդարների տներն օրհնվում են: Տերը հակառակ է ամբարտավաններին, նա շնորհ է տալիս խոնարհներին» (Առակ. 3:33-34):*

Յուրաքանչյուր մարդ կարող է հարց տալ, թե՝ *«Ի՞նչ է նշանակում ամբարտավան և կամ ո՞վ է նա»:* Հայերեն լեզվի բառագրքում *«ամբարտավան»* բառի դիմաց դրված է

հետևյալ բացատրությունը. *«Մի մարդ, որ հպարտ ու գոռոզ է»:* Այս բառին իբրև հոմանիշ դրված են՝ *«ինքնահավան»* և *«մեծամիտ»* բառերը: Առակաց գրքում սրանց մասին հետևյալ բառերն են օգտագործվում. *«Ամբարիշտ, անիրավ, չար, անորեն, բարկասիրտ, նենգավոր, վատ, կարճամիտ...»* և այլն: Հիսուս Իր քարոզությանց մեջ շատ անգամներ ակնարկություն արեց մարդկանց մասին: Բերենք մի քանի օրինակներ: *Առաջինը՝ Աղքատ Ղազարոսի և մեծահարուստի պատմությունն է (Ղուկ. 19:19-31):* Մեծահարուստը այստեղ *ամբարտավանի մեկն էր, որովհետև իր անսիրտ և անզգամ* վարմունքով, աղքատ ու վիրավոր Ղազարոսին իր ուտելիքի փշրանքներից իսկ զրկեց և արժանացավ գեհենի կրակների մեջ այրվելուն: *Երկրորդը՝* Տաճարում աղոթող փարիսեցին, որը նույնպես ամբարտավանի մեկն էր, քանի որ բարձրաձայն փառաբանում էր իր անձը և քննադատում Տաճարի անկյունում գտնվող մաքսավորին *(Ղուկ. 8:9-14):* Աստված անշուշտ չլսեց եսասեր ու ամբարտավան փարիսեցու աղոթքը և մերժեց այն ու արդարացրեց մեղավոր մաքսավորին, որը կուրծքը ծեծում էր և *«Աստված թողություն տուր իմ մեղքերիս»* էր աղերսում: *Երրորդը՝* Անիրավ Դատավորն էր, որը նույնպես ամբարտավանի մեկն էր, որովհետև ո՛չ Աստծուց էր վախենում և ո՛չ էլ մարդկանցից ամաչում *(Ղուկ. 18:8):*

Հպարտ մարդկանց ծանրագույն մեղքը այն է, որ նրանք իրենք իրենց աստվածներ են կարծում և փորձում են նստել Աստծու Աթոռին: Սատանան ժամանակին հրեշտակ էր, բայց գոհ չմնալով իրեն տրված պատիվներից, ուզեց Աստծուն հավասար լինել ու ընկավ փառքի աթոռից:

Այսօր 21-րդ դարում հոգեկան հիվանդագին մի վիճակ է տիրում մեր շուրջը: Մարդիկ ուղղակի տառապում են *«մեծության»* և *«ինքնահավանության»* մոլուցքից: Դժվար է հասկացնել այսպիսիներին, որ ամեն մարդ գնահատվում է իր արժանիքների ու շնորհքների համաձայն: Դժբախտաբար իրական ճշմարտությունից խուսափելու մի տրամադրություն կա, որը ժողովուրդը արդարորեն կոչում է *«ջայլամի քաղաքականություն»* կամ *«թզենու տերևով»* ծածկվելու ինքնախաբեություն:

«Հին Հունաստանում ապրող մի ոմն իմաստուն ոսպ (աղքատի կերակուր) էր ուտում ծառի տակ: Նրան է մոտենում մի մեծահարուստ և հպարտ մի պալատական հռետոր ու ծաղրանքով խրատում,- Ո՛վ իմաստուն մարդ, եթե դու քո խելացիությանդ հետ մի քիչ էլ շողոքորթություն ու հպարտություն ունենայիր և կարողանայիր կեղծավորություն անել, ապա այժմ պալատում փառահեղ ճաշ կուտեիր:

Իմաստունը անվրդով պատասխանում է.

Իսկ դու, ո՛վ ստահոս, եթե ոսպով բավարարվեիր, կարիք չէիր ունենա կեղծավորություն անելու և ստորանայու մեծերի առջև»:

Համեստ մարդուն երջանիկ ապրելու համար բավական է աշխարհի մի խաղաղ անկյունը, սիրելի անձերով շրջապատված մի պատառ հացը ու հոգու խաղաղությունը:

Աստված նախընտրում է խոնարհ մարդկանց: Սուրբ Կույս Մարիամը Աստվածածին լինելու պատվին արժանացավ խոնարհ և հնազանդ լինելու պատճառով. *«Ահավասիկ ես մնում եմ Տիրոջ աղախինը, թող քո խոսքի համաձայն լինի ինձ» (Ղուկ. 1:38):* Մեր Տերը պալատների արժանի էր, սակայն ծնվեց մսուրի մեջ: Թագավոր էր և ավանակի վրա նստեց ու անուսում ձկնորս մարդկանց հրավիրեց Իրեն աշակերտ և առաքյալ լինել: *«Ես աղքատներին ու մեղավորներին քարոզելու եմ եկել»,*- ասաց Նա:

Այս բոլորից հետո, որևէ մեկը իրավամբ կարող է հարցնել. *«Իսկ ովքե՞ր են խոնարհները»:* Առակաց գրքի համաձայն, խոնարհ մարդիկ լինում են՝ *«արդար, բարերար, հեզ, ուղիղ, երկյուղած, պարկեշտ, անարատ»* և նույնիսկ՝ *«իմաստուն ու խորագետ»: «Երանի հեզերին, որովհետև նրանք երկիրը պիտի ժառանգեն» (Մատթ. 5:5),*- ասում է Հիսուս Իր *«Լերան քարոզում»:* Հոբ Երանելին խոնարհ և համեստ մարդ էր, ինչպես նաև Բարի Սամարացին:

Խոնարհությունը անզորության և վախկոտության նշան չէ, *(ինչպես սխալմամբ կարծում են որոշ մարդիկ),* ու ո՛չ էլ մարմնավոր և կամ մտային հիվանդություն: Այն օրհնություն է, առաքինություն և շնորհք է:

12-րդ դարի մեր վարդապետներից Սարգիս Շնորհալին այսպես է արտահայտվում.

«Մոտեցե՛ք Աստծուն և նա կմոտենա ձեզ» (Հակոբ. 4:8):

«Խոնարհությունը միմյանցից անսահման հեռավորությամբ բաժանված բնությունները միավորեց., քանի որ չկա մի այնպիսի վայր, ուր Աստված ներկա չինի, բացի ամբարտավան հոգուց: Որքան հեռու է արևելքն արևմուտքից, բյուրապատիկ ավելի հեռու է Աստված ամբարտավան հոգուց, սակայն երբ վերջինս կտրում-դեն է գցում չար արմատը և խոնարհվում, իսկույն Աստծուն է մոտենում»:

«Դու որպես մարդ ես խոնարհվում՝ քո մեղքերի ու չարության պատճառով, իսկ նա քեզ իբրև Աստված է բարձրացնում՝ Իր մարդասիրությունից ու ողորմությունից մղված» («Խրատանի Ա.», Սուրբ Էջմիածին, 2002*, էջ* 60-61*).*

Ամեն մարդ պետք է լավ ճանաչի իր անձը, որպեսզի իմանա իր բարի հատկությունները, վստահի իրեն և հաջողություն ունենա կյանքում, սակայն որևէ մեկը իրավունք չունի իրեն վերագրելու այնպիսի արժանիքներ, որոնք չունի և *ո՛չ* էլ իրավունք ունի վիրավորելու ուրիշներին, որքան էլ նրանցից բարձր լինի իր հարստությամբ, մտքով, հեղինակությամբ ու գեղեցկությամբ: Ձեր ուշադրությանն եմ ուզում հանձնել Դանիել մարգարեի ընթերցվածներից մի հատված, որը կարդացվում է Սուրբ Ծնունդի և Սուրբ Զատկի ճրագալույցին Ավետարանների ընթերցումներից հետո:

«Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագավորը գրավում է Արևելքի երկրները և գերում բազմաթիվ թագավորների: Հպարտանում է ու կարծում է, թե ինքը Աստված է: Այդ նպատակով պատրաստել է տալիս իր ոսկյա արձանը և հրամայում բոլոր մեծամեծներին ու գերի թագավորներին, որպեսզի իրեն երկրպագեն: Այս տեսնելով Աստված մեծ պատիժ է տալիս Նաբուգոդոնոսոր արքային: Նա խենթանում է, թողնում իր թագավորական աթոռը ու գնում է անապատ, և ապրում գազանների հետ: Որոշ ժամանակ հետո, անդրադառնում է, որ ինքը պարզ մարդ է և իր տարած հաղթանակները եղել են Աստծու շնորհիվ ու ինքը պարտական է Նրան, զղջում է, թողություն խնդրում իր սխալի համար և բոլորի մոտ հաստատում է Աստծու զորությունն ու արքությունը: Աստված տեսնելով նրա դարձը, կրկին վերադարձնում է նրա աթոռն ու նախկին պատիվը»:

19-րդ դարի Կ. Պոլսի Պատրիարք Պողոս Ադրիանուպոլսեցին իր *«Խրատի Թանգարան»* գրքի *«Հպարտություն»* բաժնում ասում է հետևյալը.

ԻԲ. «Չկա աշխարհում մի ամրակուռ շինվածք, որը ժամանակի հնությունից չխարխլվի, ո՛չ էլ հզոր իշխանություն, որը թշնամուց չկործանվի, և ո՛չ հմուտ արվեստագետ, որին արիշները չգերազանցեն: Ուստի թող ո՛չ ոք չհպարտանա իր կորովամտությամբ, թե ո՛չ ոք չի կարող իր չափին հասնել, որովհետև գուցե ուրիշներն ավելի լավ կարողանան իմանալ ու գործել:

ԻԴ. «Ամեն հպարտ կա՛մ տգետ է, կա՛մ հանդուգն: Տգետ է, որովհետև չունեցած բարին կարծում է, թե ունի, քանզի հպարտներին հատուկ է մտքով կուրանալ, և հանդուգն է, որովհետև ունեցած սակավ բարիքներով կամենում է ընկերների մեջ առավել բարձր երևալ, որով և արհամարհում է ուրիշներին՝ իբրև բարիքներից զուրկ եղողների»:

ԼԸ. «Եթե հպարտը մտքով երևակայեր, թե աշխարհում միայն Աստվածն ու ինքն են և ուրիշ ոչ ոք, և աշխարհն ու նրանում եղող ամեն ինչ Աստված միայն իր՝ մարդու համար է ստեղծել, միայն իր մասին է հոգում և իր բոլոր մտքերն ու գործերը քննում, բնավ չէր մեծամտանա: Որովհետև այդժամ ո՞ւմ պիտի կարողանար գերազանցել, եթե ոչ Աստծուն, քանի որ այլ մեկը չէր լինի երկրի վրա, որին կարծեր, թե գերազանցում է: Բայց անհնար է, որ միտք ունեցող արարածն այնքան խելագարվի, որ իրեն Աստծուց բարձր համարի» («Խրատի Թանգարան» Սուրբ էջմիածին 1999, էջ 258-260, 266):

Ուրեմն ամեն մարդ ինքն է, որ պատասխան պիտի տա իր գործերի համար: Եկե՛ք իբրև հայ քրիստոնյաներ, հեռու մնանք հպարտության մահացու մեղքից և հետևենք Հիսուսի ճշմարիտ ու արդար ճանապարհին՝ *ազնվությամբ, համեստությամբ և իմաստությամբ* ու այս առաքինություններով զինված հավատարիմ զավակները լինենք Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու, Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի ու մեր բազմաչարչար Հայրենիքի: Ամեն:

ՀՈԳԵՎՈՐ ԱՂԸ

Իսկական հավատացյալները երկրի աղն են:

Նյութական իմաստով աղը ուտելիքը պահպանում է փչանալուց և համ տալիս նրան: Եթե աղը չլինի, կերակուրը կկորցնի իր համը: Հոգևոր իմաստով ճշմարիտ հավատացյալները մարդկանց պահպանում են սխալ ճանապարհով գնալուց՝ իրենց օրինակով, ուղղամտությամբ, մաքուր գործերով և բարի խորհուրդներով: Նրանց շնորհիվ կյանքը դառնում է քաղցր ու հաճելի: Մարդիկ սիրով հետևում են ճշմարիտ քրիստոնյային և նրա գործերին, որոնք պարզ երևում են այն քաղաքի նման, որը կառուցված է լեռան գագաթին: Ո՛չ մի մարդ թող չկարծի, թե իր գործերը գաղտնի ու ծածուկ կմնան, դրանք լինեն բարի թե չար, անպայման երևալու են: *«Երանի՜ բարի գործերը ծածուկ մնան ու, երբ հայտնաբերվեն, պատիվ և փառք բերեն կատարողին, թեկուզ և երկար տարիներ հետո, նույնիսկ եթե այդ բարի գործ կատարողը մահացել է»:*

Սուրբ Գրքում աղը հիշատակվում է բազմաթիվ առիթներով, նախ որպես համեմ կերակուրների համար: Եղիսե մարգարեի միջոցով աղով աղբյուրի ջուրը մաքրվում է. *«Ինձ մի նոր կուժ բերեք ու այդտեղ դրեք:* Նա գնաց ջրերի ակունքը և այնտեղ աղ գցելով՝ ասաց, *«Այսպես է ասում Տերը. «Ես մաքրեցի այս ջրերը, որ դրանցից մահ եւ անբերրիություն չառաջանա» (Դ. Թագ. 2:20-22):* Եվ այդ ջրերը մաքուր դարձան:

Հայ Եկեղեցում ևս հնավանդ սովորության համաձայն, երբ մատաղ են անում, նախքան նրա պատրաստությունը, աղը օրհնվում է ու տրվում ոչխարին, գառնուկին կամ աքաղաղին: Սակայն Սուրբ Պատարագի նըշխարն ու ժողովրդին բաժանվող մասը անխմոր և առանց աղի են պատրաստվում:

Սուրբ Գրքի համաձայն, բարի, հավատավոր ու սիրով լցված անձնավորությունները համարվում են *«Երկրի Աղը»:* Հիսուսի աշակերտները Նրա կողմից բնորոշվում

են որպես *«երկրի աղը»: «Դուք եք երկրի աղը և աշխարհի լույսը, սակայն եթե աղը անհամանա, ինչո՞վ այն կաղվի. այնուհետև ոչ մի բանի պիտանի չի լինի, այլ միայն դուրս կթափվի և մարդկանց ոտքի կոխան կլինի» (Մատթ. 5:13):* Սուրբ Ներսես Շնորհալու ճշմարիտ խոսքերը ևս *«վեզվի աղ»* են կոչվում:

Աղը հետաքրքիր պատմություն ունի: Հույները նրա սպիտակության ու մաքրության համար, այն աստվածային են համարել: Հռոմայեցիները այն նկատում էին ամենամաքուրը, որովհետև աղը բաղկանում էր արևից ու ծովից. *«Աշխարհի վրա արևից ու աղից ավելի օգտակար բան չկա»,*- ասում էին նրանք: Իսկ Արևելքում, Քրիստոսի ժամանակ աղը այնքան թանկագին մի նյութ էր, որ երբեմն զինվորներին դրամի փոխարեն՝ աղով էին վարձատրում:

Վերոհիշյալներն աղի համար դրական իմաստով են ասվում, սակայն մյուս կողմից.

ա. Երբ աղը հողի համար է գործածվում, այն կարող է բերք չտալ ու կանաչություն կամ գյուղատնտեսություն կատարելը այնտեղ անկարելի լինի, բանի որ աղը պիտանի չի բերքի ու պտղաբերության համար:

բ. 21-րդ դարի բժշկությունը խորհուրդ է տալիս մարդկանց, որ զգույշ լինեն աղի չափից ավելի գործածությունից և նույնիսկ ոմանց հիվանդության պատճառով բացարձակապես արգիլվում է այն օգտագործելը:

Մարդկային տեսակետից, այնպես, ինչպես որ աղը համ է տալիս կերակուրներին, նույն ձևով նաև առօրյա ընթացիկ խոսքերի ժամանակ քրիստոնյաների արտահայտությունները տրամաբանական պիտի լինեն: Անհամ ու անիմաստ խոսքերը հաճելի չեն որևէ մեկի համար: Բարկություն պատճառող անճիշտ ու անտեղի արտահայտությունները բացի մարդկանց միտքն ու մթնոլորտը պղտորելուց, չեն կարող նման անհամ խոսք ասողին լուրջ մարդու տեղ դնել: Այս իմաստով է, որ այդպես խոսողներին ասում ենք. *«Խոսքիդ աղ խառնիր»,* այսինքն՝ ծիծաղելիության սահմաններից դուրս արի:

Այս պատմությունը ուսանելի է.

«Բարեհոգի ու բարեպաշտ մի եպիսկոպոս ասում է մի նորընծա աբեղայի.

Գնանք քարոզենք քաղաքի զանազան շրջաններում:

Եվ քայլում են ամբողջ քաղաքով մեկ, փողոցից-փողոց շրջելով, առանց մի բառ իսկ արտասանելու:

Եպիսկոպոսի սրբակյաց ներկայությունը ամեն տեղ շատ համակրալիր տպավորություն է թողնում:

Աբեղան այլևս համբերությունը սպառված, հարցնում է եպիսկոպոսին.

Սրբազան, երեկո եղավ, ե՞րբ պիտի քարոզեք:

Քարոզը վերջացավ,- պատասխանում է Սրբազանը կտրուկ կերպով:- Միրելիս, ուր որ գնացինք, ժողովրդի վրա այնպիսի տպավորություն թողեցինք, որ էլ ավելորդ էր քարոզելը: Մեր արածը անաղմուկ քարոզչություն էր, զարմանում եմ, որ չնկատեցիր»:

ժողովրդական խոսք է. *«Լռությունը ոսկի է»:*

Հին աշխարհում աղը օգտագործվում էր իբրև կարևորագույն նյութերից մեկը: Աղի այս հատկության համար Պլուտարքոս Հույն պատմիչը այն նմանեցնում է նոր հոգու, պատճառաբանելով, որ միսը մեռած մի մարմին է կամ մեռած մարմնի մի մասը և, եթե առանց աղվելու թողնվի՝ կփչանա, բայց աղը պահպանում է նրան նեխելուց: Որով, եթե աղը եղել է և այսօր էլ պահպանում է կերակուրն ու մարմինը փչանալուց, ապա երբեմն այն եղել է նաև խորհրդանիշ ու պահապան չարի դեմ: Այս մտածողությամբ է, որ քրիստոնեության սկզբնական շրջաններում, մկրտվող երեխայի բերանը աղ էին դնում, իբրև համ տալու նշան:

Թեև քսանմեկերորդ դարի քաղաքակրթությունը ավելի բարձր մակարդակի վրա է գտնվում, քան Հունա-Հռոմեականը, սակայն դրանով հանդերձ, ներկայիս բազմապիսի աղանդներ սխալ ու անազնիվ ճանապարհների են առաջնորդում մարդկանց ու մեծ վտանգ հանդիսանում

քրիստոնեության համար: Կարելի է զարմանալ, բայց դժբախտաբար սա իրականություն է, որ այս բոլորը հիմնականում արդյունք են կյանքի հանդեպ քրիստոնյաների որդեգրած անտարբեր կեցվածքի: Եթե յուրաքանչյուր քրիստոնյա իր ապրած միջավայրի ու ընդհանրապես կյանքի հանդեպ չեզոք դիրք ունենա, ինքնիրեն կդատարկի քրիստոնեական հավատի վեհ ներշնչումներից ու իր պատյանում քաշված մի կյանք կվարի, մի խոսքով, եթե նա անօգուտ ու անտարբեր դառնա իր շրջապատի, բարեկամության և ընկերության մեջ՝ անհամ կլինի: Որով ճշմարիտ քրիստոնյան ժողովրդի մեջ մտնելով, ո՛չ միայն իր, այլև իր նմանների կյանքին մի նոր իմաստ պիտի հաղորդի: Ուրեմըն քրիստոնյան չպետք է՝ ինքնիրեն մեկուսացնի աշխարհից, այլ պարտավոր է՝ *«անարատ պահել իր անձը աշխարհից» (Հակ. 1:27):*

Աղը այնքան հարգի ու նվիրական էր, որ հատուկ ուշադրություն էին դարձնում աղամանին և փայտից, կավից կամ հախճապակուց գեղեցիկ զարդարանքներով տուփեր էին պատրաստում:

Մեր եկեղեցական Հայրերից Գրիգոր Վարդապետ Տաթևացին հետաքրքիր մեկնաբանություն ունի հոգևոր աղի մասին,

«...Հնում երկու ընծա կար զոհաբերության ժամանակ, նախ, մանանան, որին աղ չէր խառնվում, և երկրորդը սպիտակ այլուրը՝ յուղով պատրաստված, որին աղ էր խառնվում:

Արդ, մանանան փրկչական խորհրդի օրինակն էր, որտեղ աղ չկար, իսկ հարած սպիտակ այլուրը մարտիրոսների հիշատակն էր, որին աղ ենք խառնում զոհին մորթելու ժամանակ և անուշ յուղ՝ի խորհուրդ նրանց:

Իսկ նրանք, ովքեր համարելով աղ են խառնում նշխարին հին օրինակով, նշանակում է պետք է խառնեն նաև ձեթ, հատիկ, խունկ, զառան միս՝ խառնելով կաթսայում կամ տապակի մեջ, որպեսզի օրինակը ամբողջությամբ կատարեն և հեռանան ճշմարտությունից» («Գիրք Հարցմանց»):

Աղը նաև ժողովրդական ասացվածքների նյութ է դարձել և ժողովրդի կողմից մի շարք առածներ են հորինվել: Օրինակ՝

Աղ ու հաց կտրել - նշանակում է իրար հետ բարեկամություն հաստատել կամ մեկի տան մեջ հաց ու կերակուր ուտել և կամ մեկին առանց պատճառի պաշտոնից հանել:

Աղ ու հացի վրա լինել - նշանակում է մեկի տանը շաբաթներով ու ամիսներով ապրել:

Աղ ու հացով մարդ - նշանակում է հյուրասեր ու հաճելի մարդ:

Հիսուսի *«Դուք եք երկրի աղը»* խոսքը ուղղված չէր միայն քսանմեկ դար առաջ հավաքված ժողովրդին ու Իր առաքյալներին, այլ այսօր մի կարևոր պատգամ է նաև մեզ՝ բոլորիս համար: Երանի թե մեզանից յուրաքանչյուրը կարողանար համ տալ իր ապրած միջավայրին և այն մաքուր պահել: Դա անելու համար նախ մեզ պետք է լրիվ չափով գործադրել քրիստոնեական վարդապետության սկզբունքներն ու պատվիրանները, որոնք մեզ շնորհված են իբրև աստվածային ճշմարտություններ մեր Տիրոջ կողմից, սկզբունքներ, որոնք ոչ միայն մեզ հեռու կպահեն աշխարհիկ մոլություններից, այլ՝ կառաջնորդեն դեպի Աստված:

Ուրեմն հետևենք մեր մեծ Ուսուցչի՝ Աստվածորդու պատգամին, լինենք ճշմարիտ քրիստոնյաներ, առանց ձանձրանալու աղոթենք ու ապրենք մի կյանք, որը համապատասխան լինի Նրա ուսուցումներին ու մշտապես լցվելով Սուրբ Հոգու շնորհներով, կարողանանք աղ լինել և համ տալ մեր ընտանիքին, մեր շրջապատին, մեր Եկեղեցուն ու մեր Համայնքին, բարեկամությանը և ընկերությանը, սիրելով ու օգնելով մեկս մյուսին, ստեղծելով այնպիսի պայմաններ, որոնք ամեն օր ավելի ու ավելի կզորացնեն մեր հավատը դեպի Աստված: Ամեն:

ՄԱՏԱՂ, ՍՐԲԱՊԱՏԿԵՐՆԵՐ ԵՎ ԽԱՉ

Հոգևորականի առաջին և ամենամեծ պարտականությունը Քրիստոսի Ավետարանը քարոզելն է: Սա-կայն բացի Ավետարանից մի շարք այլ բաներ կան, որոնք անմիջականորեն կապված են մեր հավատի հետ, առավել ևս մեր առօրյայի անբաժանելի մասն են դարձել: Այսօր պիտի խոսենք *մոմի, մատաղի, սրբապատկերների և Խաչի մասին:* Ինչո՞ւ որոշեցինք խոսել դրանց մասին: Երկու պատճառով, առաջին, որպեսզի բոլորս վերհիշենք և ամբողջովին հասկանանք մեր կատարածը ու երկրորդ՝ համոզված լինելով և իմանալով կարողանանք մեզ պաշտպանել մեր Եկեղեցուն ու մեր ժողովրդի սովորություններին խորթ զանազան տեսակի կրոնական հարձակումներից:

Մեր Եկեղեցու դավանանքը, աստվածաբանությունն ու ազգային ավանդությունները պատահականորեն չեն ստեղծված, նրանք իրենց մեջ կրում են կյանքի իմաստությունը, զարդարված ազգային հատկանիշներով և անցնելով գերագույն քննիչի *«ժամանակ կոչվածի»* ձեռքի տակից՝ հասել են մեզ:

Ուրեմն սկսենք.-

ՄԱՏԱՂ: Հին Կտակարանում Մովսես Մարգարեի միջոցով Աստված պատվիրեց մարդկանց զոհ մատուցել իրենց գործած մեղքերի համար: Սակայն Հիսուսի խաչելությունից ու Հարությունից հետո այդ օրենքը ամբողջովին նորոգեց իր իմաստն ու նշանակությունը, քանի որ Ինքը մեր Տերը դարձավ մատաղ իբրև Գառն Աստուծո, զոհվեց ու Իր արյունը թափեց մեր մեղքերի համար: Ուրեմն ո՛չ մի այլ զոհ իմաստ չունի՞: Հարց է ծագում, ապա *«Ինչո՞ւ ենք մատաղ անում, դրա իմաստը ի՞նչ է»:* Քրիստոնեության հիմքը Աստծու և մերձավորի նկատմամբ մեր ունեցած սերն է: Սիրո արտայայտման լավագույն ձևերից մեկը ողորմությունն է: Երբ մեր հայրերը մատաղ էին անում՝ դա

ողորմության համար էր: Կարեկցել աղքատին, հիվանդին, որբին և կարիքավորին ու նրանց ուտելիք մատակարարել: Ահա սիրո արտահայտության կարևոր մասը: Հիսուս ասաց. *«Եղեք գթասիրտ, ինչպես որ գթասիրտ է ձեր երկնավոր Հայրը» (Ղուկ. 6:36):* Այսօր մենք շարունակում ենք մեր հայրերի սովորությունը, մատաղ ենք անում: Եվ գիտե՞ք թե ինչ աղոթք է արտասանվում *«Խորհրդակատարության Մաշտոց»-ում* մատաղի աղը օրհնելու ժամանակ. *«Օրհնի՛ր Տե՛ր, Քո ողորմությամբ այս աղը և սրբի՛ր այն, որպեսզի ամեն ինչ, որ սրան խառնվի, հաճելի ու ընդունելի լինի Քեզ և մեզ համար հոգու ու մարմնի մաքրություն և առողջություն լինի»:*

Արտակ Արք. Մանուկեանը այս մասին հետևյալն է ասում.

«Մատաղ բառը մի քանի իմաստ ունի, այսպես՝ մատաղ նշանակում է մատղաշ, նորածին, փափուկ, իսկ կրոնական իմաստով նշանակում է այն կենդանին, որ մորթվում է որպես զոհ և եփվելով բաժանվում է ժողովրդին: Հնում տարածված սովորություն էր, որ որպես մատաղ մորթվեր գառնուկը, իբրև նորածին:

Մատաղ նշանակում է նաև զոհ, ընծա, բայց այս բոլորի մեջ ընդհանրացած իմաստը զոհվող կամ մորթվող կենդանին է:

Մատաղը կամ զոհը այն կենդանի է, որ պարզապես իբր նվեր մորթվում է և նվիրվում աղքատներին կամ ժողովրդին:

Նախաքրիստոնեական շրջանում, հատկապես հեթանոսական որոշ կրոնների և ժողովրդի մեջ տարածված սովորություն էր զոհաբերումը: Հեթանոսական տաճարներում կենդանիներ էին զոհվում և այս կերպով մատաղ լինում:

Տաճարներում հատուկ վայր գոյություն ուներ՝ ուր քուրմը կամ կրոնականը կենդանին մորթում և զոհ էր կատարում:... Տաճարում հատուկ տեղ էր նկատի առնվել նաև զոհաբերման համար և այդ կոչվում էր վկայության խորան:

Հրեաների մոտ երեք տեսակ զոհ գոյություն ուներ.

«Ողջակեզ, Վասն մեղաց և Խաղաղության զոհ»:

«Հեթանոսական շրջանի գոյություն ունեցող զոհի, ընծայի կամ մատաղի սովորույթը փոխանցվեց քրիստոնեության և մինչև իսկ Պողոս առաքյալը իր թղթերի մեջ անդրադառնում է առաջին շրջանի քրիստոնեական համայնքում տեղի ունեցող վեճին ու տարակարծությանը՝ զոհաբերվող կենդանիների միսը եփելու և ուտելու առնչությամբ:

Կիրակի և տոն օրերին մատուցվող պատարագը ևս նշանակում է զոհ, մատաղ, ընծա. Հիսուսը խաչի վրա Իր արյունը դրեց և հանդիսացավ զոհ՝ մարդկանց մեղքերի թողության համար, և ամեն անգամ որ պատարագ է մատուցվում, հիշատակվում է նաև Հիսուսի զոհաբերումը. պատարագը համարվում է նաև անարյուն զոհ» («Շողարձակ», Բ. հատոր, 1996, Թեհրան, էջ 157-158):

«Այս օրերին թելադրելի է, որ մատաղի փոխարեն նվիրատվություններ կատարվեն ազգային, եկեղեցական, կրթական կամ բարեսիրական նպատակների համար, որով-հետև արդի պայմաններում քաղաքակրթության նվաճումների հետ փոփոխության են ենթարկվել նման սովորույթներ ու մտայնություններ, և Աստվածահաճո ու մարդահաճո գործը տրվող նվերն է, որ լավ ու բարի նպատակների պիտի ծառայի...» (Նույնը, էջ 161):

Մի սովորություն կա մատաղացու կենդանու արյունը քսել ճակատին, որը ընդունելի չէ ու սխալ է: Ինչո՞ւ: Լսենք 12-րդ դարի մեր Հայրապետներից Սուրբ Ներսես Շնորհալուն, *որը արգիլել* է այդ բանը անել, ասելով, *որ «մեր բոլոր զգայարանները Քրիստոսի արյունով օծված են Սուրբ Մկրտության ժամանակ և մեր ճակատները կնքված են Սուրբ մյուռոնով, ուստի կարիքը չունենք այլ կնիքների»:*

ՍՐԲԱՊԱՏԿԵՐՆԵՐ - Շատերից լսել ենք, վստահ եմ դուք էլ լսած կլինեք, որ սրբապատկերներ ունենալը նյութապաշտություն է: Ըստ նրանց բոլոր սրբերը մեզ պես մարդիկ են եղել և նրանց դիմաց աղոթելը ճիշտ չէ:

Նախ եկեք տեսնենք, թե որտե՞ղից են գալիս սրբապատկերները: Հիսուսի Հարությունից հետո, շատերը նա-

հատակվեցին և ժամանակի ընթացքում Եկեղեցու Հայրերի կողմից սրբացվեցին: Նրանց բարի օրինակով բազմաթիվ սերունդներ դաստիարակվեցին, իրապես դարձան Հիսուսի Եկեղեցու սյուները: Նորադարձ քրիստոնյաները, որոնք այնքան շատ էին լսել սրբերի կյանքի, նրանց սխրանքների մասին, ցանկանում էին ավելի շատ տեղեկություն ունենալ: Սա շատ բնական ցանկություն էր: Մենք էլ հաճախ մեր հին նկարները վերցնում ենք, նայում ու փորձում ենք վերհիշել մեր և մեր հարազատների ապրած անցյալ կյանքի օրերը: Ուրեմն, նույն ձևով էլ սրբերի ժամանակակիցները քրիստոնյա դարձող հավատացյալների ազնիվ ցանկությունը գոհացնելու համար, սկսեցին Եկեղեցիների պատերի վրա այս կամ այն սրբի նկարը և կամ Հիսուսի կյանքից որևէ ավետարանական մի դրվագ նկարել: Սակայն դժբախտաբար եկավ մի ժամանակ, երբ Եկեղեցիները չափից ավելի սկսեցին սրբապատկերներին ուշադրություն դարձնել: Այդ ժամանակաշրջանը կոչվեց *պատկերապաշտություն* անունով: Նկարներ պաշտելը ծայրահեղություն էր: Դրան հակառակ ծայր առաւ *պատկերամարտություն* կոչված շարժումը, որը փորձում էր հակազդել պատկերներ պաշտող ծայրահեղականներին: Մեր Եկեղեցիներում կան մի բանի սրբագործված պատկերներ, նրա համար, *որպեսզի հավատացյալները իրենց աչքի առաջ ունենան սրբերին, բաջալերվեն և փորձեն նմանվել նրանց:* Հայրենիքի մեջ մեր քարաշեն Եկեղեցիները երբ մտնեք, պարզ քարի մեջ կգտնեք ամենամեծ խորհուրդը: Խորհուրդ, որը քեզ ակամայից ծնկի է բերում սրտանց աղոթելու և փառք տալու Աստծուն, դրա համար էլ սրբապատկերները քիչ են և արտաքին ճոխություն չկա:

ԽԱՉ - Եթե մատաղը և սրբապատկերները նյութական իմաստով մեր սերը արտահայտելու միջոցներ են, ապա Խաչը մեր փրկության և հավիտենական կյանքի փարոսն է:

Նախքան Քրիստոս ի՞նչ էր Խաչափայտը, եթե ոչ անարգանքի և մահապատժի միջոց: Այսինքն Խաչը ինքը մահն էր: Մարդիկ իրենց մեղքերի համար պատժվում էին մահով: Բայց ի՞նչպես պատահեց, որ մահվան անգութ և խայտառակ գործիքը փառավոր ու հաղթական, հավիտենական կյանքի զինանշանը դարձավ: Պարզ է, որովհետև մեր Տերը Իր վրա վերցրեց մարդկության բոլոր մեղքերը և Խաչ բարձրացավ: Հիսուս մեզ ցույց է տալիս ներելու և սիրելու ճանապարհը: Մահը հաղթվել է: Այն ամբողջապես մաքրվել է ո՛չ թե ջրով կամ մեր իմացած նորագույն հեղուկներով և փոշիներով, այլ՝ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Արյունով ու Իր Հաղթական Հարությամբ:

Ի զուր չէ, որ ամեն անգամ հոգևորականը հավատացյալներին օրհնում է այս բառերով.

«Քրիստոս Աստված մեր, որ հավատացյալների պահապանն ու հույսն ես, Քո սուրբ և պատվական Խաչիդ հովանու տակ, խաղաղության մեջ պահիր և պահպանիր (հավատացյալ ժողովուրդը կամ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և այլն), փրկիր երևելի և աներևույթ թշնամիներից: Արժանի արա գոհությամբ փառավորելու Քեզ, Հոր և Սուրբ Հոգուդ հետ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն:

ԲԱՐԵԿԱՄ

«Հավատարիմ բարեկամը հզոր պատվար է,
իսկ ով գտնի նրան, գանձ է գտել»
(Սիրաք 6:14)

Բարեկամ բառը նշանակում է բարին կամեցող: Ամեն մարդ փորձում է գտնել իր նմանին: Ավետարանն ասում է· *«Նմանը իր նմանին է գտնում»:* Ինչո՞ւ է այդպես: Որովհետև ամեն մարդ իր դիմացինի մեջ փորձում է գտնել այն լավ հատկություններ, որոնք ինքն ունի: Հայհոյող մարդը չի կարող բարեկամություն կամ ընկերություն անել այնպիսի մեկի հետ, որը չի հայհոյում ու չի կարողանում տանել այն, գիտենալով Աստծու պատվիրանը, *«Մի՛ հայհոյիր»:* Կամ ստախոսը՝ ճիշտ խոսողի, հավատարիմը՝ անհավատարիմի, գողը՝ իր քրտինքով ապրողի հետ, և այլն:

Լինելով երկար տարիների հոգևորական և շատ ու շատ ընտանիքներին այցելող, տեսել եմ իրապես հրաշալի ընտանիքներ, որոնք անշահախնդիր կերպով երկար տարիներ մտերմություն են հաստատել իրար հետ զավակներով ու նույնիսկ թոռներով միասին: Այս փաստը իրապես ուրախալի է:

Սակայն կա և սրա հակառակ կողմը: Մարդիկ, որոնք սիրում են ճանապարհից շեղվել, օրենքները շրջանցել, մարդկանց խաբել, կողոպտել, վիրավորել, արհամարհել, նախանձել: Մի խոսքով այսպիսիների հետ բարեկամություն կամ ընկերություն հաստատել, կնշանակի ընտանիքը քայքայել կամ ժամանակը անցկացնել բանտում:

Հիսուս մեզ ցույց է տալիս իսկական բարեկամության ճանապարհը, խրատելով Իր աշակերտներին,

«Այս է իմ պատվերը, որ սիրեք միմյանց, ինչպես որ ես սիրեցի ձեզ: Ավելի մեծ սեր ոչ ոք չունի, քան այն, որ մեկն իր կյանքը տա իր բարեկամների համար: Դուք իմ

բարեկամներն եք, եթե անեք այն, ինչ որ ես ձեզ պատվիրում եմ: Այլևս ձեզ ծառաներ չեմ կոչում, որովհետև ծառան չգիտի, թե տերն ինչ է անում, այլ ձեզ բարեկամներ կոչեցի, որովհետև այն բոլորը, ինչ իմ Հորից լսեցի, հայտնեցի ձեզ» (Հովհ. 15:12-15):

Մեկը կարող է հարց տալ, թե՝ *«Արդյո՞ք մարդը կարիք ունի բարեկամության կամ ընկերության»:* Իհարկե ունի: Մարդը ընկերային էակ լինելով բարեկամության կարիքն ունի թե՛ ուրախության և թե՛ տրտմության մեջ: Իսկ ով մեկի հետ բարեկամական սեր չունի, մարդկային բնության սահմանից դուրս է գալիս, որովհետև բարեկամների ընկերակցությամբ ուրախությունը մեծանում է, իսկ տրտմությունը՝ նվազում: Եվ ով չգիտի, թե ի՞նչ է բարեկամությունը կամ ընկերությունը, նա չգիտի, թէ ի՞նչ է մարդ լինելը:

Կան մարդիկ, ովքեր կյանքի օգտվելու կերպերը չգիտեն կամ անտեսում են, որովհետև չեն գիտակցում, թե ո՞րն է կարևորը, ո՞րը՝ ո՛չ: Աստված նրանց ցույց է տալիս իրենց երազանքները կատարելու ճանապարհը և ճշմարիտ բարեկամին, սակայն նրանք անցնում են կողքով առանց նկատելու: Հետո անդրադառնում են, բայց՝ ուշացած:

Այս պատմությունը այդպիսի մարդկանցից մեկի մասին է.

«Մի մարդ կար, ով երեք երազանք ուներ՝ բարձր վարձատրությամբ լավ աշխատանք ունենալ, ամուսնանալ բարի ու գեղեցիկ աղջկա հետ և… ողջ աշխարհին հայտնի դառնալ:

Նրա կյանքում շատ դեպքեր պատահեցին, մենք կպատմենք դրանցից երեքի մասին:

ա. Ձմեռային սառնաշունչ առավոտ էր և երիտասարդը հարցազրույցի էր շտապում մի հայտնի ընկերությունում: Հանդիպմանը հինգ րոպե էր մնացել, իսկ նա դեռ մի թաղամաս վազելով պիտի անցներ: Հանկարծ հենց նրա

առջև մի տարեց մարդ սայթաքում է ու վայր ընկնում: Մեր հերոսը նայում է նրան, որոշում, որ հարբած է և առանց ձեռք մեկնելու՝ վազում է իր գործին: Բարեբախտաբար ժամանակին հասցնում է հարցազրույցին: Դժբախտաբար նրան չեն ընդունում իր երազած աշխատանքին:

բ. Ամառային մի տաք երեկո նա զբոսնում էր քաղաքում: Փողոցում ելույթ ունեցող արտիստների տեսնելով՝ կանգ է առնում, որպեսզի զմայլվի ներկայացմամբ: Հանդիսատեսը մեծաթիվ չէր, բայց ներկայացումը բավականին հետաքրքիր ու զվարճալի էր: Ներկայացման ավարտից հետո ծափեր են լսվում ու մարդիկ սկսում են ցրվել: Մեր տղամարդը նույնպես շրջվում է, որպեսզի հեռանա, բայց ինչ որ մեկի ձեռքի երկչոտ հպումն է զգում իր ուսին: Ներկայացման գլխավոր հերոսուհին էր՝ պառավ ծաղրածուի կերպարով: Նա սկսում է հարցուփորձ անել, թե արդյո՞ք ներկայացումը դուր եկավ նրան, գո՞հ է դերասանների խաղից: Բայց մարդը չի ցանկանում զրույցը շարունակել և զզվանքով շրջվելով, տուն է գնում:

գ. Աշնանային մի անձրևոտ երեկո մարդը տուն էր շտապում՝ ընկերոջ ծննդյան տարեդարձի տոնից հետո: Ծանրաբեռնված օր էր եղել և նա երազում էր բոպե առաջ տուն հասնել, լոգանք ընդունել և տաքուկ անկողնում քուն մտնելու մասին: Հանկարծ ինչ որ մեկի խուլ հեկեկոցներ է լսում: Մի կին մեր հերոսի տան մոտ, նստարանին նստած լաց էր լինում: Նա մենակ էր, առանց անձրևանոցի, և միայն թեթև բաճկոնի գլխանոցն էր նրան փրկում սառն անձրևից: Մեր հերոսին նկատելով՝ օգնություն է խնդրում նրանից: Ինչ-որ բան էր պատահել նրա ընտանիքում և կինը շատ էր ուզում որևէ մեկի հետ անկեղծորեն խոսել: Մարդը մտածմունքի մեջ է ընկնում, նրա հայացքի առջև հառնում են լոգարանն ու անկողինը և նա, մրմնջալով, որ սարսափելի զբաղված է՝ շտապում է շենքի մուտքից ներս մտնել:

Մարդն ապերջանիկ կյանքով ապրում է ու մահանում առանց իր երազանքների կատարման հասնելու:

Հանդերձյալ կյանքում իր պահապան հրեշտակին է հանդիպում՝ ու բողոքի ձևով ասում.

Գիտե՞ս, բոլորովին տխուր ու անպետք կյանք եմ ունեցել: Երեք երազանք ունեի, սակայն դրանցից և ո՛չ մեկն իրականություն չդարձավ: Ի՞նչ ափսոս…

Հը՛մ… Միրելի՛ բարեկամ, ես ամեն բան արեցի, որպեսզի երազանքներդ իրականություն դառնան, և դրա համար պետք էր ընդամենը մեկ անգամ ձեռք մեկնեիր, աչքերդ բաց անեիր ու սիրտդ ջերմացնեիր:

Ինչի՞ մասին ես խոսում:

ա. Հիշո՞ւմ ես այն մարդուն, որ սայթաքեց սառույցի վրա ու ընկավ: Հիմա ցույց կտամ այդ պատկերը… Այդ մարդն այն ընկերության գլխավոր տնօրենն էր, որտեղ այդքան ուզում էիր աշխատել: Քեզ փայլուն ապագա էր սպասում: Այն ամենն, ինչ պահանջվում էր քեզանից՝ ձեռքդ մեկնելն էր:

բ. Հիշո՞ւմ ես պառավ ծաղրածուին, որը ներկայացումից հետո քեզ մոտեցավ իր հարցերով: Դա երիտասարդ, գեղեցկուհի դերասանուհի էր, որն առաջին հայացքից սիրահարվել էր քեզ: Ձեզ երջանիկ ապագա էր սպասում, երեխաներ, անմար սեր: Քեզնից ընդամենը պահանջվում էր աչքերդ բաց անել:

գ. Հիշո՞ւմ ես ձեր մուտքի մոտ լաց լինող կնոջը: Անձրևոտ երեկո էր և նա ամբողջովին թրջվել էր անձրևից ու արցունքներից… Նա հայտնի գրող էր: Ընտանեկան ճգնաժամ էր ապրում և ջերմ աջակցության կարիք ուներ: Եթե օգնեիր նրան տաքանալ քո բնակարանում, լսեիր և մխիթարեիր նրան, ապա նա մի գիրք կգրեր, որում կպատմեր այդ դեպքի մասին: Գիրքը համաշխարհային ճանաչում ձեռք կբերեր և դու ևս, քանի որ առաջին էջում հեղինակը կնշեր այն մարդու անունն, ով այդ ստեղծագործության մուսան էր հանդիսացել: Ամենն, ինչ այն ժա-

մանակ պահանջվում էր քեզանից՝ սրտիդ մի փոքրիկ կայծն էր միայն: Իսկ դու ուշադիր չէիր, բարեկա՛մս:

Պետք է ունկնդիր լինել կյանքին, այն հնարավորություններ է առաջարկում: Իսկ օգնությունը պետք է կարողանալ ո՛չ միայն խնդրել, այլև՝ արժանապատվորեն ընդունել»:

Ճշմարիտ բարեկամությունը կամ ընկերությունը հիմնականում գտնվում է իմաստունների, մարդասերների և առաքինիների մեջ: Ուստի ով մեկի հետ հավատարիմ բարեկամություն ունի, նշանակում է, թե ունի նաև իմաստություն կամ մարդասեր է: Ավելի շատ այդպիսիների հետ են մարդիկ փորձում բարեկամություն կամ ընկերություն անել: Իսկ նա, ով ո՛չ մի բարեկամ կամ ընկեր չունի, նշանակում է, տվյալ անձը կամ մարդ չի սիրում կամ ինչ որ մի բանի մոլի է:

Ավելի լավ է իմաստուն բարեկամներ ունենալ, քան բազում գանձեր, որովհետև իմաստուն բարեկամը նեղ օրն օգտակար խրատներով օգնում է, իսկ գանձերն ու հարստությունը՝ երբե՛ք: Կեղծ բարեկամը կամ ընկերը անձրևային բարակ առու է, և ինչպես որ առուն անձրևի պակասելու դեպքում ցամաքում է, այդպես և կեղծ բարեկամն է հաջողության սառելու դեպքում՝ անհետանում:

Զարմանքի արժանի է, որ երբ մարդիկ ձի կամ էշ են գնում, նրա բնավորությունն ու բարքը քննում են, իսկ երբ որևէ բարեկամ են ձեռք բերում, միայն նրա արտաքին կերպարանքին են նայում, իսկ նրա բնավորության մասին չեն մտածում: Ով իր համար առաքինի ու ճշմարտախոս մարդկանց չի ընտրում իբրև բարեկամ ու խորհրդակից, բնական է, որ խորամանկ շողոքորթների նենգավոր խոսքերից կվնասվի:

Սրանից ավելի վտանգավոր ի՞նչ հիմարություն կա, որ մարդիկ հիվանդ անասուններին առանց քաշվելու հեռացնում են իրենց տանից, իսկ մոլի բարեկամներին

ընդհակառակը՝ շարունակ իրենց սեղանակից և խորհրդակից են դարձնում:

Զախորդությունը բարեկամության կամ ընկերության փորձաքարն է: Ժողովուրդն ասում է. *«Եթե ուզում ես իմանալ բարեկամիդ կամ ընկերոջդ անկեղծ ու հավատարիմ լինելու մասին, նրա հետ կամ ճանապարհ գնա և կամ գործի մեջ մտիր»:* Կեղծ բարեկամը կամ ընկերը հայտնի թշնամուց առավել չար է, որովհետև իմացած թշնամիներից մարդ սովոր է զգուշանալ, իսկ գաղտնի կամ աներևույթ թշնամիներից կասկած չունենալով կարող է չարաչար վնասվել: Եթե կամենում ես, որ մեկը քեզ բարեկամ ու հավատարիմ ընկեր լինի, նախ դու նրա հետ անկեղծ եղիր, որովհետև եթե դու ուրիշների բարին չես ցանկանում հույս մի ունեցիր, թե ուրիշները քեզ բարիք կկամենան: Հիշեք Ավետարանի ոսկե օրենքը· *«Այն ամենը, ինչ կկամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես և դուք արեք նրանց…» (Մատթ. 7:12):*

Իմաստուն բարեկամների կամ ընկերների խրատն ավելի լավ է պահպանվում, քան բազմահազարանոց զորքը:

Սիրաքի գրքում ասվում է. *«Բարեկամ լինելու փոխարեն մի՛ եղիր թշնամի. քանզի չար անունը իր հետ կբերի ամոթ և նախատինք մեղավորին ու երկերեսանուն: …Քաղցր բերանը շատացնում է իր բարեկամներին, քաղցրախոս լեզուն մեծացնում է մտերմությունը…: Եթե բարեկամ ես ձեռք բերում, փորձո՛վ ձեռք բեր նրան և իսկույն մի՛ վստահիր նրան, քանզի բարեկամ կա, որ բարեկամ է իրեն պետք եղած ժամանակ միայն և քեզ հետ բարեկամ չի մնա քո նեղության օրը:…Հավատարիմ բարեկամը կյանքի դեղ է և Տիրոջից երկնչողները միայն կգտնեն նրան: Ով երկնչի Տիրոջից, կհաջողի բարեկամության մեջ, որովհետև ինչպիսին ինքն է, այնպիսին էլ՝ իր մերձավորը» (Սիրաք (6:1:17):*

Եթե ուզում ես կյանքում միշտ երջանիկ, ուրախ ու հաջողություններ ունեցող մեկը լինել, բարեկամ կամ ընկեր դարձիր մեր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին, որը երբե՛ք քեզ չի վնասի, չի լքի ու քո նեղության ժամանակ մենակ չի թողնի քեզ; Նա քո համար կլինի ամենահավատարիմ բարեկամը կամ ընկերը, ինչպես եղավ Իր աշակերտների համար: Անձանձրույթ աղոթքով փորձիր գտնել այն ճանապարհը, որը քեզ կարող է մոտեցնել Նրան ու ընկեր դարձնել: Ամեն:

ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ

«Երանելի է այն մարդը, որն ամբարիշտների խորհրդով չի շարժվում, մեղավորների ճանապարհին ոտք չի դնում և չարագործների հետ համախոհ չի լինում, այլ հաճույք է ստանում Տիրոջ օրենքներից»
(Սաղմ. 1:1)

Հարց է ծագում. *«Ի՞նչ է երջանկությունը, ինչպե՞ս կարող ենք երջանիկ լինել, ո՞վ կարող է մեզ երջանիկ դարձնել, ինչպիսի՞ երջանկության մասին ենք երազում»:*

Սաղմոսերգուն խոսում է երջանկության մասին, որը հոգեկան հատկություն է և ո՛չ թե ֆիզիկական հաճույք: Աշխարհում հնարավոր չէ գտնել մի մարդու, որը չձգտի երջանկության: Սա ապացուցում է, որ մարդը անկատար էակ է:Մարդու սպասածը այս աշխարհում առանց ցավի ու առանց կարոտի մի կյանք է: Այսպիսի կյանքը նրան առաջնորդում է հոգեկան ուրախության, որը նրան բարձրացնում է դեպի երջանկություն: Այս իր ավարտին հասցնելու համար մարդը պետք է զինվի մտքի արդարությամբ, խղճի խաղաղությամբ և հոգու սրբությամբ, որով նա այս ձևով մոտեցած կլինի իր Արարչին:

Արտաքին գեղեցկությունները մարդուն չեն մեծացնում ու չեն բարձրացնում: Մարդը այն է ինչ որ է: Նրա մեջ պիտի հարգվի անձի արժեքը և ո՛չ թե արտաքին հագուստը: Այդքան էլ հեշտ չէ կյանքում երջանկության հասնել, որովհետև այն լի է նեղություններով, ցավերով ու տառապանքներով:

Այս փոքրիկ պատմությունը կարող է բացատրել երջանկության կարևորությունը.

«Անհավատ մի ազնվական հանրային պարտեզի անկյուններից մեկում լսում է մի փոքրիկ աղջկա գեղեցիկ երգը: Հետաքրքրությունից մոտենում է նրան և ուշադիր լսում: Երկար ժամանակ նրան լսելուց ու դիտելուց հետո,

տեսնում է, որ աղջկա այտերից արցունքի կաթիլներ են հոսում.

Ինչո՞ւ ես երգելու ժամանակ լաց լինում,- հարցնում է նա աղջկան.

Երջանկությունից,- պատասխանում է փոքրիկը:

Եթե այդքան երջանիկ ես, ինչո՞ւ ես լաց լինում,- շարունակում է ազնվականը հետաքրքրությամբ:

Հիսուսին այնքան եմ սիրում, որ ուրախությունից լաց եմ լինում,- պատասխանում է աղջիկը:

Ո՞ւր է Հիսուսը,- դարձյալ հարցնում է ազնվականը;

Երկնքում,- լինում է պատասխանը:

Քանի որ երկնքում է ի՞նչ կարող է անել քեզ համար: Նա չի կարող քեզ հագուստ կամ խաղալիք գնել կամ բերել, ինչպես անում են ծնողներդ ու ընկերներդ,- ասում է անհավատը:

Բայց Նա մի ուրիշ բան կարող է անել: Նա կարող է հոգուս մեջ իջնել ու ինձ երջանկացնել,- պատասխանում է փոքրիկ աղջիկը աշխուժությամբ:

Անիմաստ խոսք,- արհամարհանքով ասում է անհավատը:

Ո՛չ,- անիմաստ չէ,- հուզված շարունակում է փոքրիկ Ավետարանիչը: Գիտեմ, որ ասածս ճիշտ է և ինձ կերջանկացնի:

Անհավատ ազնվականը այս խոսքերից ձանձրացած սկսում է հեռանալ: Բայց հանկարծ մի հրեշտակի դիպչելն է զգում իր սրտին: Ապա փնտրում է Փրկչին քարոզած փոքրիկ աղջկան և իր ամբողջ էությունը լցվում է երջանկությամբ»:

Աստծու գործերը անքննելի են: Նա կարող է մեկ րոպեում մարդուն անհավատից հավատացյալ դարձնել:

Պողոս Պատրիարք Ադրիանուպոլսեցին ասում է. *«Չկա մեկը, որ երջանկություն չկամենա, բայց չգիտենալով նրա տեղը՝ անընդհատ իզուր տատանվում է: Մերթ կարծում է, թե երջանկությունը համադամ խորտիկների մեջ է,*

և երբ շատ է զվարճանում, ձանձրանալով թողնում է այս և հարստություն ցանկանում, հույս ունենալով, թե երջանկությունը նրա մեջ է։…Ով կամենում է բախտավոր լինել, թող ապավինի Աստծուն, սակայն չթուլանա իր պահպանության համար անել այն, ինչ կարող է։ Որովհետև Աստված կամենում է, որ մարդիկ ինչ որ կարող են անեն և ինչ չեն կարող իրեն հանձնեն։ Բայց մարդ կա, որ կամենում է Աստծուն իր համար իբրև սպասավոր ունենալ, և ինչ որ պատշաճում է, որ մարդն անի, այն թողնում է, որ Աստված կատարի և երբ չի կատարում, Աստծուց դժգոհում է՝ չտարբերելով Աստծուն վայել գործերը մարդուն վայել գործերից» («Խրատի Թանգարան»)։

«ՊԱՏՄՈՒՃԱՆԸ

Մի բարեպաշտ արհեստավոր աղոթում է, որպեսզի Երկնավոր Հայրն իրեն օգնի հանապազօրյա հացը վաստակելու համար։ Աստված լսում է նրա աղոթքը։ Եվ մի շինականի միջոցով մի քանի գեղեցիկ հախճապակյա ափսեներ է ուղարկում որպես նվեր։

Բարեպաշտ մարդն ուրախանում է, այդ ափսեները շուկայում վաճառում է և փոքրիկ գումար վաստակելով ետ դառնում դեպի տուն՝ գոհություն հայտնելով Աստծուն ու որոշելով այդ գումարից մի փոքր էլ հատկացնել իրենց գյուղի եկեղեցուն։

Ճանապարհին ավազակներ են հայտնվում, հափշտակում այս մարդու գումարը և մի պատառոտված, փոշոտ պատմուճան թողնելով հեռանում։

Արհեստավորը շատ է տխրում և ասում.

Տեր Աստված, մի փոքրիկ գումար էի վաստակել, սակայն այս փորձանքն եղավ։ Այժմ դատարկաձեռն եմ վերադառնում ու հոգևոր նպատակների համար էլ ոչինչ չեմ կարող անել…։

Իբրև մխիթարություն վերցնում է պատառոտված պատմուճանը, գցում ուսին, մտքերով տարված շարունակում ճանապարհը։

Թագավորական գնդի զինյալ հեծյալներ են մոտենում և շրջապատում նրան՝ բարձրաձայն ասելով.

Ահա գտանք նրան:

Արհեստավորը սրտատրոփ մտածելով, որ այս անգամ էլ մի նոր փորձանք է իրեն սպասում, դողդոջուն ձայնով հարցնում է, թե ո՞ւմ գտաք:

Հեծյալներից մեկն իջնում է ձիուց և պատասխանում.

Մեր թագավորը ժառանգ չուներ և իր կտակի համաձայն ավազակների կողմից գողացված այն պատմուճանը ով գտներ և կրեր իր ուսերին, որն այժմ դու ես կրում, պիտի ժառանգեր իր կարողությունը և թագավորությունը: Այժմ դու ես մեր արքան...:

Աստծո առատաձեռնությունն ու կամեցողությունն անսահման են մարդու հանդեպ…» (Հովհաննես Մանուկյան «Առակներ»):

Քրիստոս մեզ սովորեցրեց ո՛չ թե ապրել ուղղակի հավատալով ճշմարիտ Աստծուն, այլ կատարել նրա կամքը. *«Ո՛չ ամեն մարդ, որ ինձ, «Տե՛ր, Տե՛ր» է ասում, երկնքի արքայություն կմտնի, այլ նա, ով կատարում է կամքը իմ Հոր, որ երկնքում է» (Մատթ.7:21):* Ահա և ճշմարիտ երջանկության բանալին: Երջանկությունը չի գնվում ոսկով ու արծաթով:

Պողոս Պատրիարքը շարունակում է. *«Որովհետև երջանկությունը, որը մտքի ու ցանկությունների հանդարտությունն է, ուրիշ բանի մեջ չի գտնվում, եթե ոչ իմաստության ու առաքինության: Ուստի յուրաքանչյուր մարդ պիտի գտնի ու ձեռք բերի իմաստություն ու առաքինություն, որոնցով նա կկարողանա գտնել բնական երջանկությունն այս աշխարհում և գերբնականը՝ հավիտենական կյանքում:…»:* Ամեն:

ՆԿԱՐԱԳԻՐ

«Բարի անունը լավ է մեծ հարստությունից,
ընտիր շնորհքը՝ արծաթից ու ոսկուց»
(Առակ. 22:1)

Այս բնաբանը ես վերցրել եմ Առակաց գրքի 22-րդ գլխի 1-ին համարից, ուր խոսվում է, թե բարի անունը լավ է մեծ հարստությունից, իսկ ընտիր շնորհքը՝ արծաթից ու ոսկուց։

Այս խոսքից բխում է մի հարց. *«Ի՞նչ է մարդու նկարագիրը, ինչպիսի՞ն է մարդու էությունը, ի՞նչ է նշանակում բարի անուն, ի՞նչ պիտի անենք այն վաստակելու համար»։*

Նախ բացատրենք, թե ի՞նչ է նշանակում *նկարագիր* բառը։ Եթե բառը բաժանենք երկու մասի, այսպիսի պատկեր կունենանք՝ *նկար և գիր*, այսինքն, յուրաքանչյուր մարդու դիմագիծը, պատկերը, էությունը։ Մարդու նկարագիրը չի տեսնվում ու չի շոշափվում, առարկա չէ, որ երևա։ Աշխարհում շատ բաներ կան, որոնք նույնպես չեն տեսնվում ու չեն շոշափվում։ Վերցնենք օրինակ *ցավը,* որը չի տեսնվում ու չի շոշափվում, սակայն զգում ենք նրա գոյությունն ու ներկայությունը։

Նկարագիր ունեցող մարդը զարդարված է լինում բարոյական ու հոգեկան հատկություններով և առաքինություններով։ Չար մարդը նկարագիր ունենալ չի կարող, որովհետև նկարագիրը լավ հատկություն է։

Հարց է առաջանում. թե՝ *«Ե՞րբ է սկիզբ առնում մարդու նկարագիրը»։* Նկարագրի շենքը սկսվում է մեր մանկության ժամանակ ու շարունակվում մինչև մահ։ Նորածին մանուկը նմանվում է կավի։ Կավագործը իր ցանկությամբ կավին տալիս է իր ուզած ձևը, իր ծրագիրը իրագործելու համար։ Այնպես էլ, ըստ մանկավարժ հոգեբանների, մանուկի մեջ նկարագիրը կերտվելու համար գլխավորը իր միջավայրն է և ո՛չ թե իր ժառանգականությունը։ Մանուկի անբիծ ուղեղը լուսանկարչական մեքե-

նայի նման ընդօրինակում է իր տեսածն ու լսածը: Հազվագյուտ է լինում, երբ լավ միջավայրից վատ մարդ է դուրս գալիս:

Նկարագիրը բարոյական մի սերմ է, որը բուսնում է միայն ու միայն մաքրակենցաղ հոգիներում և պտղաբերում է զանազան շնորհալի հատկություններով: Սողոմոն իմաստունը այսպիսի առաքինության համար է, որ ասում է. *«Բարի անունը լավ է մեծ հարստությունից, ընտիր շնորհքը՝ արծաթից ու ոսկուց»:*

Մի նշանավոր մտածող ասել է. *«Ամեն մարդ իր նկարագրի ճարտարապետն է և կամ նկարագիրը կատարելապես դաստիարակված կամքն է»:*

Նկարագիրը և շնորհքը մարդու զգեստի նման են, ինչպես որ վայելուչ մի հագուստ գեղեցիկ երևույթ է տալիս տվյալ անձին, այնպես էլ նկարագիրն ու առաքինազարդ կյանքը հոգեկան գեղեցկություն են տալիս նրան և զանազանում ուրիշներից:

Նկարագիր ունենալու առաջին պայմանը հոգու ազնվությունն ու կամքի զորությունը ունենալն է: Ամեն հովի առջև առագաստ բացողը չի կարող նկարագիր ունենալ և իր կյանքի ընթացքը ուղիղ քայլել;

Այս պատմությունը, որը կոչվում է՝ *«Ո՛չ սիրելի աշակերտը»* մանուկի ճիշտ դաստիարակության ու նկարագրի կերտման մասին է:

«Ուսումնական տարվա սկզբին վեցերորդ դասարանի դասղեկը կանգնած էր իր նախկին հինգերորդցիների առջև: Նա մի հայացք նետեց դասարանին և ասաց, որ նրանց բոլորին հավասարապես սիրում է և ուրախ է կրկին տեսնել: Դա մեծ սուտ էր, քանի որ նստարաններից մեկի վրա կծկված մի տղա էր նստած, որին ուսուցչուհին չէր սիրում: Ուսուցչուհին նախորդ տարի էր ծանոթացել այս դասարանի հետ և դեռ այն ժամանակ էր նկատել, որ այդ տղան իր համադասարանցիների հետ չի խաղում,

նրա հագուստը կեղտոտ էր և այնպես էր բուրում, որ կարծես երբեք չէր լողացել:

Ժամանակի ընթացքում ուսուցչուհու վերաբերմունքն այդ աշակերտի նկատմամբ ավելի վատացավ և հասավ այնտեղ, որ նա ցանկանում էր ուղղակի կարմիր գրիչով խազմզել նրա գրավոր աշխատանքները և մեկ նշանակել:

Մի անգամ դպրոցի ուսմասվարը խնդրեց վերլուծել բոլոր աշակերտներին տրված բնութագրերը և ուսուցչուհին չսիրած աշակերտի գործն ամենավերջում դրեց: Երբ վերջապես հասավ դրան և չցանկանալով՝ սկսեց ուսումնասիրել՝ ապշեց:

Առաջին դասարանի ուսուցչուհին գրում էր. «Փայլուն երեխա է՝ լուսաշող ժպիտով: Տնային աշխատանքները մաքուր և կոկիկ է անում: Շատ հաճելի է նրա կողքին լինել»:

Երկրորդ դասարանի ուսուցչուհին գրում էր. «Գերազանց աշակերտ է, որին բոլոր ընկերները գնահատում են, բայց նա խնդիրներ ունի ընտանիքում՝ նրա մայրն անբուժելի հիվանդ է և տանը նրա կյանքը պետք է, որ մահվան դեմ պայքար լինի»:

Երրորդ դասարանի ուսուցչուհին նշել էր. «Մոր մահը շատ մեծ հարված էր նրա համար: Նա ամեն կերպ ջանում է, բայց հայրը նրան ուշադրություն չի դարձնում և այդ վիճակը կարող է ազդել նրա ուսման վրա, եթե ոչինչ չձեռնարկվի»:

Չորրորդ դասարանի ուսուցչուհին գրել էր. «Տղան անպարտաճանաչ է և ուսման հանդեպ հետաքրքրություն չի ցուցաբերում: Ընկերներ համարյա չունի և հաճախ քնում է դասերի ժամանակ»:

Բնութագրերն ընթերցելուց հետո ուսուցչուհին ինքն իրենից շատ ամաչեց: Նա իրեն ավելի վատ զգաց, երբ Նոր Տարուն բոլոր աշակերտներն իր համար փայլուն թղթերով ու ժապավեններով փաթեթավորված նվերներ

բերեցին, իսկ չսիրած աշակերտի նվերը կոպիտ շագանակագույն թղթի մեջ էր փաթաթված: Երեխաներից ոմանք սկսեցին ծիծաղել, երբ ուսուցչուհին փաթեթից մի ապարանջան հանեց, որի վրա մի քանի քար պակասում էր, և օծանելիքի մի սրվակ, որի մեկ քառորդն էր միայն մնացել: Բայց ուսուցչուհին լռեցրեց բոլորին՝ բացականչելով.

Ի՜նչ գեղեցիկ ապարանջան է,- և սրվակը բացելով՝ մի քիչ օծանելիք ցանեց դաստակին:

Այդ օրը տղան մնաց դասերից հետո, մոտեցավ ուսուցչուհուն և ասաց.

Այսօր դուք իմ մայրիկի պես եք բուրում:

Նրա հեռանալուց հետո ուսուցչուհին երկար լաց եղավ: Այդ օրվանից նա ո՛չ միայն գրականություն ու լեզու էր դասավանդում երեխաներին, այլև բարություն, կարեկցանք և սկզբունքներ:

Նման կրթությունից որոշ ժամանակ անց չսիրած աշակերտը սկսեց կյանք վերադառնալ ու տարեվերջին դասարանի լավագույն աշակերտներից էր և ուսուցչուհու՝ սիրելին:

Դպրոցն ավարտելուց հինգ տարի անց ուսուցչուհին նամակ ստացավ նրանից, որտեղ տղան պատմում էր, որ ավարտել է քոլեջը և գնահատականներով երրորդն է եղել դասարանում, իսկ նա իր կյանքի ամենալավ ուսուցչուհին է:

Չորս տարի անց ուսուցչուհին մեկ այլ նամակ ստացավ, որտեղ նախկին աշակերտը գրում էր, որ բարձր գնահատականներով ավարտում է համալսարանը և ևս մեկ անգամ հաստատեց, որ նա մնում է իր կյանքի լավագույն ուսուցչուհին:

Մեկ այլ նամակ էլ ուսուցչուհին ստացավ ևս չորս տարի անց և աշակերտի անվան դիմաց արդեն դոկտոր բառն էր գրվում: Նա կրկին հավաստիացնում էր, որ ուսուցչուհին լավագույնն է իր կյանքում և հայտնում էր, որ հայրը մահացել էր երկու տարի առաջ, իսկ ինքը պատ-

բաստվում է ամուսնանալ, և հարցնում, թե չէր համաձայնվի արդյոք իր հարսանիքին գրավել փեսայի մոր տեղը:

Ուսուցչուհին իհարկե համաձայնվեց և հարսանիքի օրը դրեց այն նույն ապարանջանը, որն իր սիրելի աշակերտն էր նվիրել, և գնեց այն նույն օծանելիքից, որը խեղճ երեխային իր մորն էր հիշեցնում:

Երբ հանդիպեցին ու գրկախառնվեցին, աշակերտն ասաց.

Շնորհակալություն, որ հավատացիք իմ ուժերին, հավատալ տվեցիք իմ անհրաժեշտությանն ու նշանակությանը, և օգնեցիք հավատալ սեփական ուժերիս, սովորեցրեցիք զանազանել բարին չարից:

Ուսուցչուհին՝ արցունքն աչքերին,- պատասխանեց.

Սխալվում ես, այդ դու ինձ ամեն բան սովորեցրիր: Ես չգիտեի, թե ինչ է պետք սովորեցնել, մինչև որ քեզ չհանդիպեցի…» (Վերցրել է surbzoravor.am կայքից, ռուսերեն թարգմ.՝ Էմիլիա Ապիցարյանի):

Կյանքն ունի իր վերուվայրումները: Նյութական ամեն կորուստ կարելի է վերագտնել, սակայն որևէ բարոյական կորուստ չի կարելի: Ինչպես որ մեռնողը չի կարող վերադառնալ, այնպես էլ կորած նկարագիրը ետ չես կարող բերել: Եթե մարդու անունը արատավորվի, դժվար կմաքրվի: Որևէ մարդ ինքն է, որ փչացնում է իր անունը կյանքի սխալ ընթացքով: Եթե մարդը հաստատ է մնում իր նկարագրի վրա, ուրիշների քննադատությունները կամ բամբասանքները չեն կարող նրա մաքուր ու բարի անունը արատավորել: Այս բամբասանքները նման են ծովի ալիքներին, որոնք մի պահ ցույց են տալիս, թե ծածկում են ափի ավազները, սակայն մի քանի րոպեից հետո, երբ ալիքները հանդարտվում են ու քաշվում, դարձյալ երևան են գալիս մաքուր ու ջինջ ավազները;

Մեր եկեղեցական հայրերից Հովհաննես Վարդապետ Երզնկացին ասում է. *«Մարդու մարմինը պարսպապատ քաղաքի նման է, որն ունի հինգ դուռ՝ աչքը, ականջը, բերանը, ձեռքն ու ոտքը, այսինքն՝ շոշափելիքները: Բոլոր չար ու բարի բաներն այս հինգ դարպասներից են մտնում ներս և դուրս գալիս այնտեղից: Հոգին այս քաղաքի բնակիչն է, իսկ մարդու բարի գործերը՝ քաղաքի գանձերը: Միտքը թագավորն է այս քաղաքի ու գանձերի պահապանը, սատանան ու իր դևերը թշնամիներն են, որոնք ուզում են գրավել քաղաքը և հափշտակել հոգևոր գանձերը: Աստված, երբ բարիք է տալիս, և մարդիկ այդ մեծարանքի պատիվը չեն հասկանում ու գոհություն չեն հայտնում, Նա ետ է առնում Իր տված բարիքները»:*

«Միտքը առանց սրտի, իմաստությունը առանց նկարագրի, խելացիությունը առանց բարության, եթե ուժեր են, այդ պարագային չարիքի համար են»,- ասում է մի այլ մտածող:

«Նկարագիրը մի ադամանդ է, որը կարող է քերել մյուս բոլոր քարերը»:

Քրիստոնեական մաքուր ու առաքինի նկարագրով օժտված մարդը կարող է ինքնիրեն աշխարհի ամենաերջանիկ ու հարուստ անձը նկատել, որովհետև այնպիսին հաճելի կլինի Աստծուն ու կհարգվի մարդկանցից:

Փորձենք մեր հավատի զորությամբ, խղճով ու աննկուն կամքով հեռու մնալ նկարագիրը արատավորող ու փչացնող մութ գործերից և մեր կյանքը առաջնորդենք դեպի Լույսի ու Բարության Աղբյուրը հանդիսացող Ամենակարող Արարչին: Ամեն:

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆԸ

«Բժիշ՛կ, բժշկի՛ր ինքդ քեզ»
(Ղուկ. 4:23)

Այս խոսքը ասվեց Հիսուսի մասին, երբ նա Տաճար էր գնացել աղոթելու: Նրան տրվեց Եսայի մարգարեի գիրքը, որպեսզի նրանից մի էջ կարդա: Ընթերցման վերջավորության Հիսուս ասաց լսողներին, թե՝ *«Այսօր այս գրքի խոսքը արդեն իրականացել է»:*

Ներկաները զարմացել էին, քանի որ հիշում էին, որ Նա ատաղձագործ Հովսեփի որդին էր, և նա ինչպե՞ս կարող էր Ինքն իր մեջ կատարված տեսնել Եսայի մարգարէի խոսքը: Հիսուս կարդաց նրանց միտքը և ասաց. *«Անշուշտ, ինձ այս առածը կասեք. «Բժի՛շկ, բժշկի՛ր ինքդ քեզ»: Այն ամենը, ինչ արել ես Կապառնայումում, որչափ որ լսեցինք, արա՛ և այստեղ, քո գավառում»: Եվ նա ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ մարգարեն ընդունելի չէ իր քաղաքում» (Ղուկ. 4:23-25):*

Նրանք տեսել էին Հիսուսի մանկությունը և գիտեին, որ Նա աղքատ ծնողների զավակ էր ու չէին կարողանում պատկերացնել, թե Նա կարող էր աստվածային շնորհներով օժտված լինել: Ինչ կա. քիչ աղքատ ծնողների զավակներ կան, որոնք հայտնի մարդիկ են դարձել կամ հակառակը՝ հարուստ ծնողների զավակներ, որոնք ոչ պիտանի մարդիկ են եղել ազգի համար:

«Բժի՛շկ, բժշկի՛ր ինքդ քեզ» խոսքը վերաբերում է ամեն մեկիս, քանի որ իբրև մարդիկ բոլորս էլ ունենք ֆիզիկական ցավեր և նեղություններ, որոնց համար գնում ենք բժշկի, որպեսզի նա մեզ ուղղություն տա, թե ինչպե՞ս կարող ենք բուժվել: Դրա կողքին ունենք նաև հոգեկան ցավեր, որոնց համար աղոթքի ճանապարհով կապ պիտի հաստատենք մեր Երկնավոր Հոր հետ, որպեսզի Նա այդ ցավերը մեղմացնի:

Ամեն մարդ առաջին հերթին ինքը պիտի լինի իր բժիշկը: Ինչպե՞ս: Շատ պարզ: Ամեն օր պիտի խնամենք մեր մարմինը և չչարաշահենք այն: Դժբախտաբար մեր օրերում ես շատ անգամ տեսնում եմ, թե ինչպես երիտասարդներն ու նաև տարիքով մարդիկ, զբաղված են ուտելիխմելով՝ չափ ու սահման չճանաչելով: Եվ պատահում է անսպասելին՝ *«հեռացավ կյանքից անժամանակ, կյանքի ծաղկուն տարիքում»:* Ինչո՞ւ, ինչո՞ւ, ահա այս հարցն ենք տալիս այդ ժամանակ, մի պահ սթափվում ենք, սակայն դա մի պահ ու նորից… այլևս չեմ խոսում հոգին խնամելու մասին: Նույնիսկ չգիտեն, թե դա ինչպե՞ս պիտի անեն: Սովորեցնում ես, լսում են մի ականջով, մյուսով դուրս է գալիս: Հոգու խնամքը լինում է միայն աղոթքով ու ծոմապահությամբ: Իսկ ո՞ւր է մեր աղոթքը: Էլ չեմ խոսում պահեցողության մասին:

Մարդու համար երկուսն էլ կարևոր են՝ ֆիզիկական առողջությունը և հոգեկան խաղաղությունը: Մեկը մյուսին պիտի լրացնեն, որպեսզի ամբողջություն լինի և մարդը առողջ մնա:

Այս պատմությունը լույս կսփռի իմ ասածների վրա, ուշադի՛ր կարդացեք;

«Այս դեպքը տեղի է ունեցել Ամերիկայի Հարթվըրտ Քընեթիքեթի մեջ, դերձակ Արամայիս անունով մի հայ մարդու:

Դերձակ Արամայիսը տաքարյուն ու աշխույժ, ընկերական և ազնիվ վարվելակերպ ունեցող մի մարդ էր՝ իրեն հատուկ անձնական համոզմունքներով ու ցանկություններով: Նրան երբեմն այցելության էր գալիս Հոգևոր ճեմարանում սովորող մի երիտասարդ, որը դերձակի հետ խոսակցությունների ընթացքում միշտ վեճի մեջ էր մտնում նրա հետ կյանքի որոշ հարցերում. մանավանդ դրամական խնդիրների շուրջ: Այդ վեճերի ընթացքում Վարպետ Արամայիսի հաճախ կրկնվող խոսքը լինում էր այս արտահայտությունը. «Ով որ փող շատ ունի երբեք էլ

դարդ ու ցավ չունի»: Ապագա երիտասարդ հոգևորականը նրա հետ համաձայն չէր և միշտ շեշտում էր մարդու համար ամենակարևորը՝ առողջությունը և հոգեկան հարստությունը, «որոնք դրամով չես կարող գնել»,-ասում էր նա: Ու այսպես ամեն այցելության վարպետ Արամայիսն ու երիտասարդը վիճում էին այս հարցում ու երբեք էլ համաձայնության չէին գալիս, քանի որ դերձակը երազում էր հարուստ լինելու և շատ դրամ ունենալու մասին, ինչո՞ւ, որովհետև նա առողջ էր ու նրա միակ պակասությունը այդ պահին դրամն էր:

Ժողովուրդը երբեմն այս խոսքը ունի. «Ով ինչի կարիք ունի, այդ է ուզում ու ձգտում ունենալ»:

Սովորական մի աշխատանքային օր, երբ երիտասարդը կրկին այցելում է նրան, դերձակ Արամայիսը ժպիտով դիմավորելուց հետո, նրան ասում է. «Արի՛, արի՛, մի շատ ուրախ լուր ունեմ տալու քեզ»: Երիտասարդը կատակով նրա ժպիտին ժպիտով պատասխանելուց հետո, ասում է. «Վարպետ, երևում է բախտդ բերել է ու հարստացե՞լ ես, եթե ո՛չ, ապա ի՞նչ է քո այսքան ուրախության պատճառը»: Վարպետը մի պահ շունչ առնելով ասում է. «Ո՛չ, ո՛չ, իրապես արդեն հարուստ մարդ լինելուս մասին այսօր եմ իմացել»: Ու պատմում է օրվա ընթացքում իր հետ պատահածը: Ի՞նչ էր այն:

«Հաճախորդներիցս մեկը, որը տկար ու թույլ մի մարդ էր, միջին տարիքի, վերջը իմացա, որ միլիոնատեր էր, այսօր ինձ մոտ եկավ այն ժամանակ, երբ ես կեսօրվա ճաշս էի ուտում տանից ուղարկված ձավարով փլավը, քյովթան և հետն էլ շշով թանը: Դեռ նոր էի սկսել ճաշել, երբ նա ներս մտավ արհեստանոցս: Ճիշտը եթե խոստովանեմ շատ սոված էի և ախորժակով էլ ուտում էի: Երբ նրան տեսա, հիշեցի, որ մարդու հագուստը պիտի արդուկեի, բայց մոռացել էի: Ցավեցի մոռացկոտությանս համար և փորձեցի ճաշս կիսատ թողնել ու հագուստը արդուկել: Սակայն մարդը չթողեց ու ինձ ասաց, որ առանց

շտապելու հանգիստ ճաշս շարունակեմ ուտել ու ինքը նստեց սպասելու: Առ ի քաղաքավարություն նրան հրավիրեցի միանալ ինձ միասին ճաշելու, սակայն նա շնորհակալություն հայտնեց ու հառաչելով ասաց. «Երանի՜ թե կարողանայի, հիմա՛դու կե՛ր, ես իմ պատմությունը պատմեմ»:

Նա պատմում էր, թե իր պատանեկության ու երիտասարդության տարիներին շատ է երազել միլիոնատեր դառնալ: Եվ ամեն բան արել է, որ հասնի այդ նպատակին: Ո՛չ մի միջոցի առաջ կանգ չի առել, նույնիսկ անտեսել է իր ընտանիքի բոլոր հոգսերը: Վերջ ի վերջո շատ տարիներ հետո, նա հասել է իր նպատակին՝ դարձել է միլիոնատեր: Նրա ուրախության չափը չի եղել, սակայն, ինչպես ժողովուրդն է ասում. «Երկու երնեկ մի տեղ չի լինում», այդ փշոտ ճանապարհին նա հիվանդանալով ենթարկվում է մի քանի վիրահատությունների ու կորցնում իր թանկագին առողջությունը: Իր խոսքերն էին. «Ջիղերս, երակներս ու արյանս շրջանառությունը անդարմանելիորեն վնասված են: Բժշկիս շարունակական հսկողության տակ եմ ու ապրում եմ ճոճվող կյանքով, ցավերով լի: Իմ առօրյա սնունդս է միայն ու միայն մի քանի հատ քրեքքը և կամ երկու բաժակ կաթ, սրանից ավելի ո՛չ մի այլ ուտելիք: Բժիշկս ասել է, որ եթե ես մի օր փորձվեմ այս սովորական սնունդիս սահմանից մի քայլ այն կողմ անցնել, օրինակ՝ մի քիչ մսեղեն կամ նման մի բան ուտել, որը դու ուտում ես, այդ կլինի իմ վերջին օրը»:

Դերձակ Արամայիսը շարունակելով, ասաց, որ իր հաճախորդը հառաչելով կրկնել է այս խոսքերը, որոնք նիզակի պես խոցել են իր սիրտը: Հիվանդի հառաչանքով ասված խոսքերն էին. «Երդվում եմ, որ եթե հնարավոր լիներ քո առողջությունը և ախորժակը գնել, նույնիսկ մի րոպե իսկ չպիտի տատանվեի ունեցածս հարստությունը ամբողջությամբ քեզ տալու, միայն, որպեսզի կարողանայի գոնե մի քանի տարի առողջ ու բնականոն կյանքով ապրել:

Բայց դրամը չի կարող անկարելին անել, առողջությունը չի կարող գնել: Իսկ նրանք, որոնք «ամենակարող դոլար» (Օլմայդի դալլը) խոսքը հրապարակի վրա են զցել, պարզապես նյութապաշտ ապուշներ են, որոնք չգիտեն, թե ի՞նչ են խոսում»,- վերջացրեց հաճախորդս և հագուստը վերցնելով գնաց:

Դերձակ Արամայիսը շարունակեց. «Հաճախորդիս գնալուց հետո ամեն բան փոխվեց իմ աչքում, ես ինձ դատապարտեցի, որ մինչև այսօր չեմ հասկացել իմ առողջության գինը և նույնիսկ անարժեք մի բան եմ համարել այն: Հիմա եմ զգում ու հասկանում, որ ես ինչքան հարուստ եմ եղել»: Նա իր դասը առել էր և հասկացել իր հարստության գինը, որն իր ունեցած առողջությունն էր և շարունակելով ասաց. «Երանի թե առողջություն ունեցողները իմաստուն լինեն և լրիվ կերպով հասկանան իրենց ունեցածի արժեքը»:

Այո՛, առողջությունը մարդու համար անգին հարստություն է, միայն թե պետք է հասկանալ ու գիտակցել և ժամանակից շուտ չկորցնել այն:

Առողջություն ասելով պետք է հասկանալ, այն իր ամբողջական նշանակությամբ, որը մեկ է ու անբաժանելի, այսինքն՝ առողջություն մարմնի, մտքի ու հոգու:

ա. *Առողջ է <u>մարդու մարմինը,</u>* եթե այն խնամում ենք ու բնականոն կյանքով ապրում մեր կյանքը: Մարմինը երկաթ չի, որ դիմանա, մի օր պիտի մաշվի, եթե չարաչար կերպով օգտագործենք այն:

բ. *Առողջ է <u>մարդու միտքը</u>,* եթե բարոյական իմաստով ճշմարտության լույսով է լուսավորված:

գ. *Առողջ է <u>մարդու հոգին</u>*, եթե ճշմարիտ հավատով իր Աստծու հետ շարունակական հաղորդակցության մեջ է գտնվում;

«Արդյո՞ք մարմնով առողջ ու հանգիստ եք»: Սակայն դա միայն խոսքով չի լինում: Հիսուս ասում է. *«Բժի՛շկ, բժշկի՛ր ինքդ քեզ»,* այսինքն՝ առաջին հերթին

մենք պիտի լինենք մեր մարմնի ու հոգու բժիշկը: Մարմինը պիտի խնամենք սնունդով, իսկ հոգին՝ աղոթքով: Երկու հարստություն կողք կողքի պիտի լրացնեն իրար ու մեզ պիտի պահեն առողջ և ապահով: Ուրեմն, *«Զգույշ եղե՛ք, քննեցե՛ք դուք ձեզ տեսնելու համար, թե ձեր ունեցած այս օրհնությանը արժանի՞ եք»:*

Աղոթենք, որ Աստված Իր ողորմության ու զթության դռները բացի ու բուժի մեզ և ների մեր մեղքերը, որպեսզի սրանից հետո զղջմամբ ու ապաշխարությամբ կարողանանք հետևել Նրան և ապրենք աստվածահաճո կյանքով: Ամեն:

ՄԱՀԱՑՈՒ ՄԵՂՔԵՐԻՑ ՄԵԿԸ՝ ԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ

«Մի վախեցիր, փոքրիկ հոտ, որովհետև ձեր Հայրը հաճեց տալ ձեզ արքայությունը: Վաճառեցե՛ք ձեր ինչքերը և ողորմություն տվեք. և ձեզ համար շինեցե՛ք չինացող քսակներ և անհատնում գանձեր երկնքում, ուր ո՛չ գողն է մոտենում, և ո՛չ ցեցը՝ փչացնում. որովհետև ուր որ ձեր գանձն է, այնտեղ և ձեր սրտերը կլինեն»

(Ղուկ. 12:32-34)

Այս աշխարհի հարստությանը սպառնում են գողերը, իսկ ցեցերը՝ վնասում են շտեմարանները, սակայն երկնքում Աստծու գանձին ո՞չ գող է մոտենում, ո՛չ ցեցն է ապականում, սիրտդ էլ հանգիստ է ու ապահով: Մարդը միշտ սրտով կապված է իր հարստությանը, նրա մասին մտածում է և վախենում սպառնացող վտանգներից:

Հոգեբանները ասում են, թե մանուկը ագահ է ծնվում: Ինչ որ տալիս ես քաշում է դեպի իրեն: Կրակն անգամ եթե տաս, առանց հասկանալու և գիտակցելու իր կողմն է քաշում:

Հիսուս ասում է. *«Ինչ որ մարդուց դուրս է գալիս, այն է, որ պղծում է մարդուն, որովհետև ներսից, մարդկանց սրտից են ելնում չար խորհուրդները՝ շնություն, պոռնկություն, գողություն, սպանություն, ագահություն. . . » (Մարկ. 7:20-22):*

Ագահը ո՛չ միայն Աստծուն և մարդկանց օգտակար չի հանդիսանում, այլ դժբախտությունն այն է, որ ինքնիրեն զրկելով ամեն բանից, անձնապես իրեն էլ օգուտ չի տալիս: Մարդիկ կարծում են, թե աշխարհը կապված է միայն նյութին և ինչքան հավաքեն, կյանքը այնքան ավելի լավ կապրեն, առանց անդրադառնալու, թե մի ստամոքսից ավել հնարավոր չի լցնել:

Սողոմոն իմաստունը աշխարհի այս հարստությունը ունայնություն է կոչել, որովհետև այդ հարստու-

թյունը անցողիկ է, միակ իրավականը երկնքի գանձերն են։ Աշխարհի վրա պատերազմներն ու տնտեսական տագնապները կարող են գլխիվայր շրջել նյութական վիճակը, բայց պարկեշտ ու առաքինի ապրած մի կյանք և անշահախնդիր կերպով կատարված բարեգործությունները, կարող են հոգեկան երջանկություն պարգևել։

Շատ անգամ ագահությունը մարդուն դնում է դժվար վիճակի մեջ և շատ հաճախ էլ մահվան առաջնորդում։

Պատմեմ ձեզ մի դեպք Հնդկաստանի կյանքից.

«Հնդկաստանի հարուստներից մեկը երկրից դուրս գալուց առաջ կանչում է իր սպասավորներից մեկին ու պատվիրում, որպեսզի հսկի քարայրին, որ այն չբացեն։ Նրա մեկնելուց հետո, սպասավորը մտածում է, թե իր տիրոջ հարստությունը այնտեղ պահված պիտի լինի։ Որով, սկսում է երևակայությամբ գեղեցիկ դղյակներ կառուցել։ Պարզ է, որ այդ նպատակին հասնելու և իր երազները իրականություն դարձնելու համար, նախ պետք էր Տիրոջ հարստությունը կողոպտել։ Այս մտածումով, մի մութ ու լուռ գիշեր մոտենում է քարայրին և դռան խոշոր քարը մի կողմ գլորում։ Դեռևս մի քայլ չարած, մի մեծ վագր քարայրի միջից ցատկում ու բզկտում է նրան»։

Ագահությունը ընտանիքներ է քանդում։ Ո՛չ մի կին չի ցանկանա ագահ ամուսին ունենալ և ընտանեկան կյանքում դժբախտանալ։

Ագահ մարդը միշտ էլ դժբախտ է, հիվանդ է և երբե՛ք էլ երջանիկ չի իր հարստությամբ, որովհետև նա մինչև իր կյանքի վերջը գերի է նրան։

Աստծու համար դրամը սակայն ամեն ինչ չէ։ Երբ փարիսեցիները Քրիստոսին մոտեցան և դրամի գործածության համար հարցեր տվեցին, Նա պատասխանեց. *«Տվե՛ք կայսրինը՝ կայսեր, իսկ Աստծո՛ւնը՝ Աստծուն»։* Քրիստոսի համար, սակայն դրամը ըստ ինքյան ատելի և անպիտան մի նյութ չէր։ Նա այրի կնոջ լուման մեծագույն

գանձերի համարժեք նկատեց։ Դրամը գտնող կնոջ երանությունը երկնքի արքայությանը նմանեցրեց։ Իրենց շնորհները օգտագործող ծառաների իմաստությունը գովեց և *«Ամեն մշակ արժանի է իր վարձքին»,*- ասաց։

Հայր Աստված հարուստների հարուստն է։ *«Քոնն են երկինքն ու քոնն է երկիրը, ամբողջ աշխարհը դու հաստատեցիր»,*- երգում է Դավիթ մարգարեն։ *«Երկնքի արքայության համար աղոթեցե՛ք և ամեն ինչ պիտի տրվի ձեզ»,*- ասում է Հիսուս։

Աստված բարի է և Իր բարությունն է բաշխում մարդկանց, որպեսզի բոլորս երջանիկ ապրենք։ Մեզ տրված է խելք, իմաստություն, որ ճանաչենք երկրավոր բարիքները, օգտագործելու լավագույն միջոցները։

ա. Այնպես պետք է օգտագործել բարիքները, որ նրանք ծառայեն ամբողջ ժողովրդին և արդարության ու մարդկանց արժանապատվության հիմնական սկզբունքներին դեմ չլինեն։

բ. Բարիքները պետք է գործածել մեր նմաններին օգնելու, այսինքն պետք է քաջալերել բարեսիրական ձեռնարկներին և այն կազմակերպություններին, որոնք թըշվառներին, ծերերին և անօգնականներին օգնության են հասնում։

Երկու տեսակ հարստություն կա, նյութական և հոգևոր։

Նյութական հարստությունը *(դրամ, ունեցվածք կամ շարժական իրեր և այլն)* մնայուն արժեքներ չեն, ենթակա են կորստյան և ոչնչացման։

Հոգևոր հարստություն ունենալ նշանակում է աղոթքով ու հավատով մաքրված և սրբված արդար գործեր կատարել, գործածել Աստծու տված բարիքներն ու պարգևները, օգնել կարիքավորներին, խնամել հիվանդներին, այցելել բանտարկյալներին և հոգատարություն ցույց տալ նրանց նկատմամբ, իսկ ամենակարևորը՝ անշահախնդիր ձևով սիրել մարդկանց։ Հոգևոր հարստությունը մնայուն արժեք է, ո՛չ կարող են գողանալ և ո՛չ էլ կփչանա։ Աշխատենք լինել հոգեպես հարուստ։ Ամեն։

ՀԻՍՈՒՍԻ *«ԵՂԲԱՅՐՆԵՐ»-Ը*

«Ո՞վ է իմ մայրը կամ ովքե՞ր են իմ եղբայրները»
(Մատթ. 12:48)

Մատթեոսի Ավետարանի 12-րդ գլխի 46-50 համարներից է վերցված այս խոսքը. *«Մինչ Հիսուս դեռ խոսքն ուղղում էր բազմությանը, ահա նրա մայրն ու եղբայրները կանգնած էին դրսում և ուզում էին խոսել նրա հետ»:* Եվ մեկն ասաց նրան. *«Ահա քո մայրն ու քո եղբայրները դրսում կանգնած են և ուզում են քեզ հետ խոսել» (Մատթ. 12:46-47):* Նա այդ ասողին պատասխանեց ու ասաց. *«Ո՞վ է իմ մայրը, կամ ովքե՞ր են իմ եղբայրները»:* Եվ Իր ձեռքը երկարելով դեպի Իր աշակերտները՝ ասաց. *«Ահա՛ իմ մայրը և իմ եղբայրները, որովհետև, ով կատարում է կամքը իմ Հոր, որ երկնքում է. նա՛ է ինձ եղբայր և քույր և մայր» (Մատթ. 12:48-50):*

Կան մարդիկ, որոնք առանց հասկանալու, փորձում են Ավետարանում գրվածները մեկնաբանել իրենց իմացածի պես: Շատ հաճախ չափազանցությունների մեջ մտնելով, նրանք կարող են լուրջ սխալներ թույլ տալ: Ինչպես օրինակ, Մատթէոսի Ավետարանի այս հատվածի մեկնաբանության հարցում: Շատերը պարզապես ընդօրինակելով, հանգում են այն եզրակացության, թե Հիսուս Սուրբ Կույսի միակ զավակը չի եղել, այլ ունեցել է նաև եղբայրներ՝ դրանով կասկածի տակ դնելով Աստվածամոր հավիտենական կուսությունը:

Տարօրինակ է, որ նման մարդիկ առանց հարցը ուսումնասիրելու, նկատի չեն առնում հենց Քրիստոսի իսկ տված պատասխանը, թե՝ *«Ո՞վ է իմ մայրը, կամ ովքե՞ր են իմ եղբայրները»:* Իր շարունակության մեջ Հիսուս տալիս է գեղեցիկ և տրամաբանական պատասխան, թե՝ *«Նրանք են իմ մայրն ու եղբայրները, որոնք կատարում են իմ Հոր կամքը»:*

Այս խոսքերի մեջ ուշադրության արժանի է Հիսուսի պատասխանի այն բաժինը, ուր նա մատնացույց է անում Իր աշակերտներին, որոնք Իր առաջին հետևորդներն էին և որոնք տեսնողն ու լսողները պիտի լինեին Նրա կատարած բոլոր հրաշքների և ուսուցումների:

Եթե իսկապես մեր Տերը այս պարագայում մարմնավոր եղբայրներ ունենար, վստահաբար կամ պիտի թույլատրեր նրանց մուտքը կամ թելադրեր նրանց համբերել մինչև Իր խոսքի ավարտը և կամ Ինքը պիտի միանար նրանց: Սակայն տեղի չունեցաւ ո՛չ մեկը և ո՛չ էլ մյուսը, այլ Հիսուս պարզապես ասաց. *«Նրանք, ովքեր լսում են իմ խոսքերը, որոնք Աստծու կամքն են և գործադրում են դրանք, նրանք են իմ թե՛ մայրս և թե՛ եղբայրներս»:*

Արդյոք մի հավատացյալ կամ Սուրբ Գիրքը լավ իմացող մեկը կարո՞ղ է գտնել որևէ նշում մարգարեությունների մեջ, ուր հիշատակված լինեն սպասված Մեսիայի եղբայրներ և այլ հարազատներ ունենալու մասին;

Ենթադրենք, որ Ավետարանիչների գրածը պետք եղածի չափով հստակ չէ, հապա ի՞նչ կասեք մարգարեների մասին, որոնք ամենայն ճշգրտությամբ ու մանրամասնություններով նախագուշակել էին Քրիստոսի կյանքի բոլոր դրվագները, որտե՞ղ կա հիշատակություն Նրա… եղբայրների մասին:

Եկեք ժամանակագրական կարգով շարժվենք առաջ. Մարիամը և Հովսեփը դեպի Երուսաղեմ իրենց կատարած ամենամյա ուխտից վերադարձի ճանապարհին զգացին, թե տասներկու տարեկան մանուկ Հիսուսը իրենց հետ չէր: Ո՛չ մի Ավետարան, ո՛չ մի պատմիչ, ո՛չ մի ավանդություն չեն հիշում, թե Հովսեփի և Մարիամի զույգի զավակներից Հիսուսն էր, որ բացակայում էր:

Հետաքրքրական է ստուգել, թե Հիսուսի ժամանակակիցները ի՞նչ են վկայում այս մասին;

Մի առիթով, Հիսուս քարոզում էր Կափառնայումի մեջ, ասելով, թե՝ *«Ես եմ կյանքի հացը» (Հովհ. 6:35),* թե՝

Ինքը երկնքից իջել է Հայր Աստծու կամքը կատարելու: Ժողովուրդը շփոթված և վրդովված դժգոհում է. «*Սա Հիսուսը չէ՞՝ Հովսեփի որդին, որի հորն ու մորը մենք ճանաչում ենք» (Հովհ. 6:42):* Եթե Հիսուս եղբայրներ ունեցած լիներ, պարզ է, որ ժողովուրդը նրանց պիտի հիշեր… Մենք նրա հորը, մորը և եղբայրներին էլ ենք ճանաչում: *«…Սա հյուսնի որդին չէ՞. սրա մայրը չէ՞, որ Մարիամ է կոչվում. և սրա եղբայրները՝ Հակոբոս, Հովսես, Սիմոն և Հուդա: Եվ սրա քույրերը բոլորը մեզ մոտ չե՞ն…» (Մատթ. 13:55-56):* Այս մեջբերումը թող այն տպավորությունը չթողնի, թե Հիսուս իրապես քույրեր և եղբայրներ ուներ: Վերեվում նշված նրա եղբայրները ոչ թե Սուրբ Կույսի զավակներն էին, այլ մի ուրիշ Մարիամի. *«…որոնք (խոսքը Յուդաբեր կանանց մասին է) Գալիլիայից եկել էին Հիսուսի հետևից՝ նրան ծառայելու համար. նրանց մէջ էին Մարիամ Մագդաղենացին, **Հակոբի և Հովսեի մայր Մարիամը** և Զեբեդեոսի որդիների մայրը» (Մատթ. 27:55-56):*

Հիսուս, երբ խաչի վրա մահվան դատապարտվեց, համաձայն ավետարանիչների, Նրա խաչելությանը ականատես վկաները եղան Նրա մայրը և այլ կանայք:

Ո՞ւր էին Նրա կարծեցյալ եղբայրներն ու քույրերը: Երբ Հիսուս խաչի վրա մեռնելուն էր դատապարտվում, եթե եղբայրներ ունեցած լիներ, հնարավոր չէր, որ նրանք այնտեղ ներկա չգտնվեին:

Խաչելությունից առաջ, նախքան Իր հոգին ավանդելը, Հիսուս ի տես Իր սգավոր մոր, կտակի նման Իր վերջին խոսքը ուղղեց Մարիամին ու Իր սիրած առաքյալ Հովհաննեսին, որը խաչի մոտ կանգնած էր. *«Ո՛վ կին, ահա՛ քո որդին»* իսկ Իր աշակերտին պատգամեց. *«Ահա՛ քո մայրը» (Հովհ. 19:27):*

Եթե Քրիստոս եղբայրներ ունենար, արդյոք Իր մոր հոգատարությունը նրանց չպիտի՞ վստահեր:

Եվ որովհետև չուներ, Իր մորը հանձնեց Հովհաննեսի խնամքին և խնդրեց մորը, որ նրան ընդունի իր որդու նման: Այստեղ հարկավոր է ուշադրությամբ կարդալ ավետարանիչի եզրափակիչ նախադասությունը. *«Եվ այդ պահից աշակերտը նրան իր մոտ առավ» (նույն տեղը):*

Իր Հարությունից հետո իսկ Քրիստոս, երբ երևաց Յուղաբեր կանանց և Մարիամին, հայտնեց իր ով լինելը, չթույլատրեց նրան Իրեն մոտենալ, քանի որ վերջինս Նրան տիրոջ պարտիզպանի հետ էր շփոթել, այլ հանձնարարեց. *«Ինձ մի՛ մոտեցիր, քանի որ Հորս մոտ չեմ բարձրացել. ուրեմն գնա՛ դու իմ եղբայրների մոտ ու նրանց ասա՛, որ ես բարձրանում եմ դեպի իմ Հայրը և ձեր Հայրը, դեպի իմ Աստվածը և ձեր Աստվածը» (Հովհ. 20:17):*

Այս բոլոր բացատրությունները լսելուց հետո ակամայից կարող է մի հարց ծագել. ինչպե՞ս բացատրել եղբայրների պարագան. ովքե՞ր են Քրիստոսի հիշած *«եղբայրները»:*

Քրիստոնեության առաջին դարերում, Հիսուսի բացատրության համաձայն, բոլոր նրանք, որոնք քրիստոնեական հավատի հետևորդներ էին, իրար *«եղբայր և քոյր»* էին կանչում:

Այս ոգու արտացոլումն էր Գործք Առաքելոցի մեջ և այլուր զանազան առիթներով արձանագրված. *«Եղբայրներ, Աբրահամի տոհմի որդիներ» (Գործք 13:26)* կամ *«Սավուղ եղբայր» (Գործք 9:17)* կամ *«Եղբայրները, այս բանը իմանալով, նրան Կեսարիա իջեցրին» (Գործք 9:30): (Խոսքը Սողոսի մասին է, որ վերջում դարձավ Պողոս առաքյալ):*

Հիշենք, որ Հիսուս կոչվում էր նաև Միածին Որդի: Սա հետագայում ավելացված մի նոր անուն չէր, այլ նույնիսկ առաջին դարում գործածվել է Սբ. Կույսից միակ ծնունդը լինելու համար: Հովհաննես ավետարանիչն ասում է. *«Քանի որ Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ իր միածին Որդուն տվեց, որպեսզի, ով նրան*

հավատում է, չկորչի, այլ ընդունի հավիտենական կյանքը» (Հովհ. 3:16):

Այս հավատը հիմնավորվեց Քրիստոնեական Ընդհանրական Եկեղեցու կյանքում իբրև անհերքելի իրողություն 325 թվականին կայացած Նիկիո առաջին Տիեզերական ժողովի ընթացքում, որտեղ բանաձևված Նիկիական Հանգանակում, որը որդեգրվել է Հայց. Առաքելական Եկեղեցու կողմից, կարդում ենք. *«Հավատում ենք նաև մեկ Տեր Հիսուս Քրիստոսին, Աստծու Որդուն, որը ծնվել է Հայր Աստծուց՝ իբրև Միածին…»:*

Նրա Միածին լինելը մեկ անգամ ևս հաստատում է, որ Հովսեփը և Մարիամը միայն մեկ զավակ՝ Հիսուսին են ունեցել:

Այստեղ ուզում եմ ավելացնել, որ երկու հազար տարիներ անց, այսօր էլ կան Եղբայրակցություններ և հոգևոր հաստատություններ, որտեղ մեկը մյուսին *«եղբայր և քույր»* բառերով են կանչում՝ իբրև քրիստոնյաներ:

Գեղեցիկ է *«եղբայր»* լինելը, պարզ է, որ մենք պետք է աղոթենք հավատով, սիրով ու ջերմությամբ լցված՝ այն հարստացնելու համար՝ օրինակ վերցնելով մեր Տիրոջից, և շարունակենք իրար նկատմամբ ունենալ այդ եղբայրական սերը՝ հոգևոր իմաստով: Արևմտահայ Գրականության տաղանդավոր բանաստեղծներից Մկրտիչ Պեշիկթաշլյանը իր *«եղբայր եմք մեք»* բանաստեղծության յուրաքանչյուր տունը վերջացնում է այսպես՝

«Ընդ աստեղոք ինչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն…»:

Սիրենք իրար՝ իբրև եղբայրներ Քրիստոսով, իբրև համայնք, Եկեղեցի, Հայրենիք, ու այս եղբայրական սիրով զարդարենք մեր հոգիներն ու սրտերը: Ամեն:

ԵՐԱՆԻ՛ ՍԳԱՎՈՐՆԵՐԻՆ

«Երանի՛ սգավորներին, որովհետև նրանք պիտի մխիթարվեն»
(Մատթ. 5:4)

«Երանի՛ նրանց, որ սրտով մաքուր են, որովհետև նրանք Աստծուն պիտի տեսնեն»:

«Երանի՛ հոգով աղքատներին, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը»:

«Երանի՛ ողորմածներին, որովհետև նրանք ողորմություն պիտի գտնեն» (Մատթ. 5:4-7) և այլն:

Սուգը թանկագին կորուստների առթիվ զգացված ցավն է, որը մարդկանց իրապես տխրեցնում է և շատ անգամներ լացացնում: Կյանքը մարդու թանկագին հարստությունն է, երբ նա առողջ է և՛ հոգով և՛ մարմնով ու մանավանդ այդ նույն կյանքը նրան սգավոր չի դարձնում:

Մահը երբեմն սարսափեցնում է մարդկանց: Պատմության ընթացքին մեռնողների գերեզմանների վրա կամավոր մարդիկ էին մեռնում: Հայոց Արտաշես թագավորի մահը մեծագույն սուգը պատճառեց իր ժամանակիցներին և այնքան կյանքեր զոհվեցին նրա մահվան առթիվ, որ ծաղկող Հայաստանն ավերակի պես էր երևում գահաժառանգ Արտավազդի աչքին: Այսպես կամ այնպես, մարդիկ վերջապես մխիթարվում են, ինչքան էլ ծանր լինի նրանց սուգը: Բայց Ավետարանի «*Երանին*» ուղղված չէ միայն հարազատի մահ ունեցող սգավորներին:

Մարդիկ ավելի մեծ, դառն ու անբուժելի կորուստներ ունեն իրենց կյանքում, որոնց սուգը չի կարող համեմատվել մահվան սգի հետ: Հավատի կորուստը մարդու ներսում ավելի սգավոր է դարձնում նրան: Հույսի կորուստը՝ ամենածանր դժբախտության և թշվառության է տանում հուսահատվածին: Սիրո կորուստը՝ դատապարտում է մարդուն մենակության տառապանքներին: Արժանապատվության կորուստը՝ ողջ-ողջ սպանում է մարդուն:

Սրբության կորուստը մարդու հոգուց՝ մեղքերով է լցնում նրան ու նա դառնում է ամենաանմխիթար սգավորը:

Սգավոր ենք այսօր բոլորս, որովհետև մահամերձ է մեր հավատը: Շատերը նույնիսկ այն կորցրեցին: Հավատը անսպառելի գանձն է Հայ քրիստոնյա ժողովրդի համար, որը այդ հրաշալի ուժով կառուցեց իր տունը, գրկեց ու փայփայեց նրան, իր գոյությունն ու պատիվը պաշտպանելու համար և դրանով ամրացրեց իր Եկեղեցին, դպրոցը, շուկան ու իր ընկերային կյանքի այլ բերդերը:

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Բաբկեն Արքեպս. Կյուլեսերյանն ասում է.

«Ասպետական ոգին եղել է հայ ժողովրդի նկարագիրը: Արժանապատվությունը, անձի պատիվը, մարդու ներքին արժեքը, ասպետական ոգու ակնաղբյուրն է:... Կրոնի լեզվով սրբությունը Աստծուն տեսնելու միակ միջոցն է: Նա մեր ներքին մարդու առաստ աչքն է: Սրբության կորուստը մեղքի գյուտն է: Վերցրեք սրբությունը ձեր հոգուց՝ մեղքը անմիջապես կտիրի նրան: Եվ մեղքը հիմա այն անիմաստ բառն է, որի համար մարդիկ միայն ծիծաղում են: Չէ՞ որ ասում են, իրավունք ունենք ուրախանալու... Խաբողը ասում է. սա առևտուր է, թող գնողը աչքերը լավ բացի և չխաբվի, ո՞վ է իրեն ստիպում: Խաբիր, այսպիսի առիթ ե՞րբ պիտի պատահի մի անգամ էլ: Մի՞թե սա շատ բնական չի՞:... Թող աչքը բացի և չխաբվի: Մնացածը շան քարոզ է, շուկայում այդպիսի բան չի անցնում: Մենք տուն, ընտանիք ենք պահում:... Շահենք, որ եկեղեցուն էլ, ազգային կարիքների համար էլ տանք: Սովորական շահերով սոված կմնանք:

Արդյոք շատ խի՞ստ են այս պատկերի գծերը: Չեմ կարծում: Սա է առևտրական կյանքի հոգեբանությունը: Եվ սա ինքնին մեղքն է» (Երուսաղեմ, «Սիոն» *ամսագիր, 1929-1930):*

Ավետարանը հակառակ չի շահելուն: Շահիր ինչքան որ կարող ես և հնարավոր է: Դա քո իրավունքն է: Ավետարանում չափ ու սահման չկա առևտրի համար:

Սուտը, խաբելը, ագահությունը, սրանք են, որ ապականում են առևտուրը և խափանում մեծ ու իրական շահերի տևականությունը: Սրանք են, որ ջնջում են սրբությունը հոգիներից և լայն տեղ բացում մեղքի թագավորության:

Ըստ Ավետարանի մարդկային տառապանքների պատճառները հոգեկան են:

Մեր Փրկիչը իր երանիների երկրորդը ուղղում է սգավորներին, որովհետև նրանք պիտի մխիթարվեն, բավական է, որ գան Ավետարանի լույսին և չխարխափեն խավարում: Սխալ ըմբռնումները և կյանքի իրականությունների մասին մարդկանց սխալ մոտեցումները, իրապես նրանց սգավոր են դարձնում:

«Երանի՛ սգավորներին, որովհետև նրանք պիտի մխիթարվեն», մի պայմանով, որ նրանք նետվեն Փրկչի գիրկը և ամբողջությամբ զգան Նրա ներկայությունը իրենց մեջ:

Հին Կտակարանում հարազատի կորուստը սգի առիթ էր լինում: Աբրահամը սգում է իր տիկնոջ Սառայի մահը *(Ծնն. 23:2):* Հակոբը, երբ լսեց Հովսեփի՝ իր կրտսեր զավակի ենթադրյալ մահը, սուգ բռնեց *(Ծնն. 37:34):*

Նոր կտակարանում ևս հանդիպում ենք սգի նույնիմաստ գործածության (Մարկ. 16:10)*:* Պողոս առաքյալի մտածողության մեջ սգի պատճառը միայն սիրելիի կորուստը չէ. մեղքի ծանրությունը ևս սգի է մատնում քրիստոնյային. *«Եվ դուք հպարտանում եք. ավելին. չեք էլ սգում, որպեսզի վերանար ձեր միջից նա, ով այդ արարքը կատարեց...» (Ա. Կորնթ.5:2):* և շարունակում է. *«Երբ գամ, գուցե դարձյալ իմ Աստվածն ինձ նկուն դարձնի ձեր առաջ, և սուգ անեմ նախապես մեղանչած շատերի համար, որոնք չեն ապաշխարել իրենց գործած պղծության, պոռնկության և վավաշոտության համար»...(Ա. Կորնթ. 12:21):*

Հայերեն լեզվում սուգ նշանակում է վիշտ, տառապանք, հարազատի կորուստի պատճառած նեղություն ու ցավ: Անկասկած սիրելիի կամ բարեկամի մահը խոր

սուգի է մատնում բարեկամներին ու հարազատներին և երբեմն սա առիթ է լինում, որ սգավորը անդրադառնա իր ապրած սխալ ընթացքին ու փոխելով իր ճանապարհը քրիստոնյային վայել կյանքով ապրի: Հաճախ ո՛չ միայն մահը, այլ նաև մտերիմ բարեկամի և ընկերոջ նեղ կացությունն ու թշվառությունը պատճառ են հանդիսանում մարդու սթափության և զգաստության, եթե նա սխալ ճանապարհի վրա է գտնվում:

Արևելյան առակն ասում է. *«Չկա մարդ առանց վշտի, բայց եթե կա մեկը, որ վիշտ չի ունեցել նա մարդ չէ»:* Հետաքրքիր և տարօրինակ խոսք է և հակառակ դրան ինչ-որ տեղ նաև ուսանելի:

Ավետարանի հասկացողությամբ սգավոր է նա, որ գիտակցորեն զգալով, որ մեղավոր է, զղջում է ու ապաշխարությամբ և աղոթքով Աստծու ողորմությանը ու ներողամտությանն է դիմում: Սուրբ Ներսես Շնորհալի Հայրապետն ասում է. *«Ինչքան ժամանակ, որ մարդը մեղքի մեջ է, չի կարող հեշտությամբ սգալ»:* Սուգը, ըստ նրա, մարդու մեջ այն վիճակն է, որով զգում ու ապրում է իր մեղավորությունը. *«Կույրը, որն արևը չի տեսնում, երբ բանտում նստի չի զգա լույսից իր զրկվածությունը, մինչդեռ նա, որ տեսել է արևի գեղեցկությունը, կզրկվի նրանից, գիտի թե ինչ բան է զրկված լինելը»:*

Մեր Եկեղեցու հայրերը, Ավետարանի ճշմարիտ մշակները իրենց ամբողջ կյանքում *«սգավոր»-ի* իրական վիճակով ապրեցին ի խնդիր հավիտենական մխիթարության:

Այսօր, դժբախտաբար աշխարհը իրական սգի մեջ է, որովհետև.-

ա Հավատը թուլացել է.

բ. Հույսը հուսահատության է փոխարինվել.

գ. Սերը դարձել է *«պոնձյա շեփոր, հնչյուն և դողանջ ծնծղաների».*

դ. Սրբության երանական վիճակը տեղի է տվել մեղքի առջև:

Ժամանակը հասել է, որ քրիստոնյա անհատը ինքը ևս իր Փրկչի հետևությամբ՝ *«Հավատա Աստծուն և քաջասրտությամբ հաղթի աշխարհին»:* Չէ որ նույն այդ Փրկիչը տառապեց, որ կարողանա մեզ օգնել (Եբր. 2:18):

Մեր Տերը քարոզության սկսեց Իր հետևորդներին հրավիրելով ապաշխարության ու մի նոր կյանքի: Այսօր Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին ևս նույն կոչն է անում իր հավատացյալներին: Քրիստոսի Ավետարանի ժիր մշակը՝ Պողոս առաքյալն ասում է. *«Արդ, ո՞վ պիտի բաժանի մեզ Քրիստոսի սիրուց, տառապա՞նքը, թե՞ անձկությունը, թե՞ հալածանքը, թե՞ սովը, թե՞ մերկությունը, թե՞ վտանգները, թե՞ սուրը: Բայց այս բոլորից էլ ավելի հաղթական ենք դուրս գալիս նրա միջոցով, ով սիրեց մեզ...» (Հռոմ. 8:35,37):*

Նույն խոսքը կրկնեցին մեր Հայրերը 5-րդ դարում, ահեղ թշնամու սպառնալիքների առջև և հաղթական դուրս եկան, որովհետև անկեղծ էին իրենց խոսքերի մեջ: Մենք այսօր իբրև նրանց ժառանգորդները կարո՞ղ ենք նույն ուժով կրկնել այս խոսքերը, աշխարհի այն չարերի երեսին, որոնք մեզ իրական սգավորներ դարձրեցին ու մինչև այսօր էլ դարձնում են, մեր պատմական Հայրենիքի հողերի սրբապղծմամբ: Կարո՞ղ ենք այս խոսքերով ապրել, գործել, աշխատել, ստեղծագործել, աղոթել և ինչո՞ւ չէ նաև պայքարել մեր սգավորութեան մեջ, ուժեղացնելու քրիստոնեական մեր հավատը, ամրապնդելու մեր հույսը, գործնականացնելու համար մեր սերը և ամուր հիմքերի վրա դնելու մեր կամքը: Ինչպես արևմտահայ սքանչելի գրող Վահան Թեքեյանը կասեր. *«Եկեղեցին հայկական, մեն մի քարին տակ գետնի, դեպի երկինք բարձրացող գաղտնի ճամբա մը ունի»:*

Այո՛, պետք է գիտակից սգավորությամբ ապրել մեր կյանքը, որպեսզի արժանանանք երանության, որով և հավերժական մխիթարության:

Մեր Տերը շատ տարօրինակ խոսքերով քարոզեց Լերան վրա: Այդ արտահայտություններից մեկն այն էր, որ երանի է տալիս սգավորներին, որովհետև նրանք մխիթարություն պիտի գտնեն: Կողքից մեկը կարող է այսպես մտածել ու գլուխը շարժել. *«Ինչպե՞ս կարող է մարդ իր սիրելիին կորցնել ու մխիթարվել»:*

Փորձենք պատասխանել Ընդհանրական Եկեղեցական Հայրերից Սուրբ Հովհան Ոսկեբերան Հայրապետի բերանով. *«Երբ Աստված մխիթարում է, այնուհետև եթե սուգերը ձյունի փաթիլների նման հազարներով իսկ իջնեն ձեր վրա, բոլորին էլ պիտի կարողանաք ոտքերով տրորել»:*

Իսկ Սուրբ Բարսեղ Կեսարացին շարունակում է. *«Այդ սուրբ առավոտը (խոսքը մահվան մասին է) այն հունդն է, որից պիտի բացվի ու մեծանա հավիտենական ուրախության ծաղիկը»:*

Մարդ իր մեղքերից երբ ձերբազատվում է, իրապես կարծեք թեթևություն է իջնում նրա հոգու վրա ու մխիթարություն է գտնում, նույնիսկ այն պարագային, եթե ֆիզիկական նեղության մեջ էլ գտնվելիս լինի:

Պողոս առաքյալը Փիլիպպեցիներին ուղղած իր թղթում ասում է. *«Արդ, եթե կա մխիթարություն Քրիստոսով, եթե կա սիրո սփոփանք, եթե կա Հոգու հաղորդություն, եթե կա գթություն և ողորմություն, ուրեմն կատարյա՛լ դարձրեք իմ ուրախությունը, նո՛ւյն բանը խորհեցեք, նո՛ւյն սերն ունեցեք ձեր մեջ, եղե՛ք միաշունչ, միախորհուրդ» (Փիլ. 2:1-2):*

Մեր Տերը սգավորներին խոստանում է լրիվ մխիթարություն, պայմանով, որ նրանք իրենց հավատը ամրացնեն Աստծու վրա: Հովհաննես առաքյալը Նրա ձայնը երկնքից լսեց, որ ասում էր.

«Եվ երկնքից լսեցի մի ձայն, որ ասում էր. «Հավասիկ Աստծու խորանը, որ մարդկանց մեջ է. նա պիտի բնակվի նրանց

հետ, և նրանք պիտի լինեն նրա ժողովուրդը, և նա էլ նրանց Աստվածը, և պիտի սրբի նրանց աչքերից ամեն արտասուք, և այլևս մահ չկա. ո՛չ սուգ, ո՛չ աղաղակ, ո՛չ ցավ և ո՛չ չարչարանք, քանի որ առաջինն անցավ» (Հայտ. 21:3-4):

«Եվ մի՛ վախեցեք նրանցից, որ մարմինն են սպանում, բայց հոգին սպանել չեն կարող՝ այլ դուք առավել վախեցե՛ք նրանցից, ով կարող է գեհենի մեջ կորստյան մատնել հոգին և մարմինը» (Մատթ. 10:28):

Երբ մարդը չարիք է գործում, թաղվում է մեղքերի ծովի մեջ ու ամբողջովին տրվում դրանց: Երբ մեր Տերը կենդանի մարդկանց մասին ասաց. *«...թող մեռյալները թաղեն իրենց մեռելներին» (Մատթ. 8:22),* նկատի ուներ անաստվածությունն ու անհավատությունը: Աստծուց հեռանալն արդեն ինքնին մահ է:

«Հոգին ավելի է, քան մարմինը», այսինքն՝ ինչպես որ մարմինն ավելի է, քան՝ հագուստը: Քրիստոնյան մահը աչքերի առաջ պիտի ունենա ամեն օր, միշտ, սակայն առանց վախի: Հետաքրքիր է, թե մեր Տերը ինչո՞ւ է հատկապես շեշտում մեր այցելությունը սգո տները կամ սգո վայրերը, որովհետև այնտեղ մարդկանց հոգիներն ավելի պատրաստ են Աստծու խոսքն ու ճշմարտությունը լսելու և ընդունելու, քանի որ ուզեն կամ չուզեն մտածում են մահվան մասին:

Մարդիկ վախենում են մահից, ինչո՞ւ, որովհետև նրանք հավատից թույլ են և չեն ընդունում հավիտենական կյանքի իրողությունը, քանի որ նրանց համար մահը առեղծված է, իսկ ճշմարիտ քրիստոնյայի համար մահը երբեք էլ գաղտնիք չէ, որովհետև նա իր բարի և արդար գործերով, աղոթքով ու հավատով պատրաստ է դիմավորելու նրան և իր խնդրանքը ուղղված է Աստծուն, որպեսզի արժանացնի իրեն Երկնքի Արքայության:

Ճշմարտություն է, որ հավատով ապրած, փորձություններից ու մեղքից հեռու մնացած հավատացյալ մարդը, ավելի խաղաղ և հանգիստ է ընդունում մահվան իրո-

ղությունը, քան նա, ով ապրել է Աստծուց հեռու, միմիայն նյութական կյանքով:

Իբրև վերջաբան մեջ եմ բերում Պողոս Պատրիարք Ադրիանուպոլսեցու խոսքերը մահվան մասին.

«Մահը մարդկանց վրա Աստծուց կարգված անհրաժեշտ ոստիկան է, որ ծննդյան օրվանից բռնած պահում է յուրաքանչյուր մարդու օձիքը՝ տանելու և կանգնեցնելու Աստծու առաջ... (էջ 228)»:

«Երեք պատճառով է մահը դառը թվում՝ աշխարհի սիրո, խղճմտանքի և փրկության անստուգության: Ուստի մի իմաստասեր ասում էր. «Քանի որ չգիտես, թե որտեղ ու երբ է քեզ մահը սպասում, դու նրան ամեն ժամ սպասիր, որպեսզի անպատրաստ չլինես նրա գալստյան ժամանակ... (էջ 231):

«Գերեզմանատունն այնպիսի դպրոց է, որտեղ մեռյալները սովորեցնում են ապրողներին, համրերը՝ խոսողներին...» (էջ 233):

«Մահը բարիներին երկու շնորհ է անում. մեկը՝ նրանց ազատում է աշխարհի չարիքներից, որոնցում տառապում էին, և մյուսը՝ նրանց հասցնում իրենց փափաքած երկնային բարիքները ժառանգելուն» («Խրատի Թանգարան», Սուրբ Էջմիածին, 1999, էջ 234): Ամեն:

ԵՐԱՆԻ՛ ՀԵԶԵՐԻՆ

«Երանի՛ հեզերին, որովհետև նրանք
երկիրը պիտի ժառանգեն»
(Մատթ. 4:5)

«Երանի՛ հոգով աղքատներին, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը»:

«Երանի՛ սգավորներին, որովհետև նրանք պիտի մխիթարվեն»:

«Երանի՛ նրանց, որ քաղցն ու ծարավն ունեն արդարության, որովհետև նրանք պիտի հագենան» (Մատթ. 5:4-6) և այլն:

Դժբախտաբար, մարդկային ընկերության մեջ, առաջընթացի և զարգացման այս հզոր դարում, հեզերը նկատվում են խեղճեր, ողորմելիներ և վախկոտներ:

Հակառակ տիրող այս սխալ ըմբռնմանը, հեզությունը ողորմելիություն, վախկոտություն կամ էլ խեղճություն չէ, այլ բարոյական քաջություն, ինչպես նաև ավետարանական առաքինություն, որը չի կասկածում իր ուժերի վրա, սակայն ճանաչում է իր տկարությունը. գիտի ճշտել տարբերությունը բնության օրենքների և իր հասկացողության միջև ու ամբողջ սրտով խոնարհվում է թե՛ Աստծու և թե՛ մարդկանց առջև:

Յուրաքանչյուր մարդ, եթե մի պահ մտածի, թե ի՞նչ է հիմա ու ի՞նչ պիտի լինի վաղը, երբեք էլ չի հպարտանա, այլ վեհանձնորեն կնայի տկարին, ընկածին ու կօգնի նրան՝ իր հնարավորության սահմաններում:

Հեզերը կրոնի խորքը թափանցող, կյանքի օրենքներին գիտակ, նրա ոգով ապրող ու ներքին օրենքներով ղեկավարվող մարդիկ են, որոնք գիտակից լինելով իրենց կարողությանը, իրենց սեփական նկարագիրը ունեն, հանդարտ դիմավորում են կյանքի բոլոր արտաքին հարված-

ներին ու շնորհիվ իրենց խոնարհ բնավորության, հեշտությամբ արհամարհում են բռնությունը, անիրավությունը և չեն կորցնում իրենց հոգու հիանալի խաղաղությունը:

Պատմությունը ցույց է տվել, թե իսկական տաղանդներն ու մեծ հոգի ունեցողները, միայն կարող են հեզ լինել:

Հեզերը լավ գիտեն, որ իրենք Աստծու ստեղծածներն են ու աշխարհին նայում են իբրև Նրա ունեցվածքը, քանի որ Աստծու կամքով են կառավարվում բոլոր իրերը և բնության մեջ ամեն ինչ ենթակա են Նրա օրենքներին: Աստված մարդացավ, որպեսզի մարդը բարձրանա: Մեզ բոլորիս հստակ է, թե հեզության և խոնարհության ուսուցիչն ու մարմնացումը եղավ Ինքը՝ Աստվածորդին՝ Հիսուս Քրիստոս. *«Եկե՛ք ինձ մոտ, բոլոր հոգնածներդ ու բեռնավորվածներդ, և ես ձեզ կհանգստացնեմ: Իմ լուծը ձեր վրա վերցրե՛ք և սովորեցե՛ք ինձնից, որ հեզ եմ և սրտով խոնարհ. և ձեզ համար հանգիստ պիտի գտնեք, որովհետև իմ լուծը քաղցր է և իմ բեռը՝ թեթև» (Մատթ. 11:28-30):*

Հեզը նման է մի պտղատու ծառի, որի պտուղը ինչքան առատ լինի, այնքան կխոնարհվեն նրա ճյուղերը: Նրա դեմքը միշտ պայծառ է, սիրտը մաքուր, իր խոնարհ բնավորությամբ նա հեշտ է հաղորդակցվում ուրիշների հետ ու վստահություն ստեղծում իր շուրջը: Նա գիտի, որ իր ունեցած արժանիքները տրված են Աստծու կողմից ու դրա համար էլ ո՛չ պարծենում է և ո՛չ էլ հպարտանում:

Ճանաչելով իր անձի կարողությունը, չի ձգտում այն բանին, որին արժանի չէ ու ինչքան էլ փառքի, պատիվների և պաշտոնի մեծության հասնի, չի գոռոզանում, այլ ընդհակառակը՝ աշխատում է միշտ Աստծու պատվիրանները կատարել, որովհետև՝ *«Նա ով որ ինքն իրեն բարձրացնում է, պիտի խոնարհվի և նա, ով ինքն իրեն խոնարհեցնում է, պիտի բարձրանա» (Ղուկ. 14:11):*

Հեզությունը քրիստոնյա մարդու իսկական նկարագիրն է, որը միշտ կարող ենք ձեռք բերել աղոթքի միջոցով ու Քրիստոսի օրինակին հետևելով:

Հակառակ որ մարդը ստեղծվել է Աստծու պատկերի համաձայն և ունի Նրա հրաշալի հատկությունները՝ *բարություն, մաքրություն, հավատ և ամուր կամք,* սակայն նրա վրա իշխում է նյութը, որը բերում է վնասակար հատկություններ, ինչպես՝ *ագահություն, չարություն, նախանձ և հպարտություն:* Իսկ այդպիսիները, երբ տեսնում են հեզ, խոնարհ, արդար և օրենքներին ենթարկվող մարդկանց, ո՛չ միայն օրինակ չեն վերցնում նրանցից, այլ ընդհակառակը՝ նույնիսկ ծիծաղում են նրանց վրա, առանց հասկանալու, թե այս կյանքը ժամանակավոր է և հավիտենական են միայն մարդկանց թողած բարի գործերը: Եկեք լավ մտածենք այս մասին, լսենք մեր խղճի ձայնը, լինենք հեզ ու խոնարհ, քանի որ Աստված մեզ տվել է ամենակարևոր մի բան՝ մտածելու կարողություն և ազատ կամք, որպեսզի զանազանենք չարը՝ բարուց և ընտրենք լավն ու գեղեցիկը: Ո՛չ մեկս մյուսի համար պատասխան չենք տալու և մեզ էլ իրավունք չի տրված դատելու որևէ մեկին: Հիսուսի պատվիրանն է. *«Մի՛ դատեք, որ Աստծուց չդատվեք. որովհետև ինչ դատաստանով, որ դատեք, նրանով եք դատվելու. և ինչ չափով, որ չափում եք, նրանով պիտի չափվի ձեզ համար» (Մատթ. 7:1-3):*

Իրական հեզերին տրված է Ավետարանի լուծը տանելու կարողությունը և այս է պատճառը, որ մեր Փրկիչը Իր անձը օրինակ բերելով, խոսքը ուղղում է աշխարհի բոլոր մարդկանց. *«Ես հեզ եմ ու սրտով խոնարհ» (Մատթ. 11:29):*

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս (1868-1936) Բաբկեն Արքեպս. Կյուլեսերյանը հետաքրքիր մեկնաբանություն ունի.

«Եվ մեր Փրկիչը Ավետարանը նմանեցրեց լուծի: Ավետարանը, այո՛,... կյանքի այս նոր կանոնագիրը: Հպարտը, ամբարտավանը, աշխարհի հզորներն ու բռնավորները չեն կարող այն կրել, ընդվզում են և լուծից ընկնելու պես են շինում: Իրական հեզերին է միայն տրված Ավետարանի լուծը տանելու

կարողությունը և այս է պատճառը, որ մեր Փրկիչը ուղղակի մատնանշում է Իր Անձը, խոսքը ուղղելով աշխարհի բոլոր վաստակաբեկ և հանգստացած հոգիներին, թե՝ Ինձ մոտ եկե՛ք, որ ձեզ հանգստացնեմ, որովհետև հեզ եմ, իմ սիրտս շատ խոնարհ է, եկե՛ք Իմ մոտ, առեք Իմ ավետարանի լուծը, նա շատ թեթև ու շատ հաճելի է, առե՛ք այն ձեր ուսերի վրա, ինչպես որ Ես եմ առել և Ինձանից սովորեցե՛ք, թե ի՞նչպես կարելի այն կրել. իմ հաջողությունների գաղտնիքը կայանում է Իմ հեզության մեջ...»:

...«Մենք տեսնում ենք, որ «իրավունքը» շատ գոռացող ամբարտավանին է: Ով որ ուժեղ է իր ներվերի մեջ և դրամ ունի իր քսակում, նա է խոսքի և գործի տերը:

Այս է տեսնված իրականությունը այսօրվա կյանքի պայքարում էլ: Բայց սա չի իրական կյանքը: Սա իր նպատակից շեղված, հիվանդոտ, խենթի կյանք ունեցողի արտահայտությունն է...:

Ավետարանի լույսով պետք է նայել կյանքի մթին իրականությունների վրա և Ավետարանը ասում է, թե աշխարհի տերերը և ժառանգորդները հեզերն են ու նրանք պիտի լինեն» («Սիոն» ամսագիր, Երուսաղեմ, լույս տեսած 1929-1930 թվականներին: Քաղված Ֆրեզնոյի «Ս. Պողոս» Հայց. Եկեղեցու «Տաճար» թերթիկից):

Աստծու և մարդկանց հարաբերության մասին էլ Հին Ուխտի մարգարեական պատգամը հստակ կերպով ասում է, թե Աստված հեզերի մեջ է միայն հանգստանում (Եսայի 46):

Հեզեր չեն նրանք, որոնք համեստությունը և խոնարհ լինելը կեղծում են, ծածկելով իրենց չարությունը և տկարությունը խեղճության քողի տակ: Հեզ մարդը կուշտ է, այս աշխարհի կյանքը դիմավորելու կեցվածք ունի, մի մարդ է, որի լույսը ներսից է գալիս, կարող է տառապել ու դժվարություններին համակերպվել, սա ո՛չ թե տկարության, այլ հոգեկան մի ներքին ուժի նշան է:

Սբ. Ներսես Շնորհալի Հայրապետը ասում է. *«Խո-*

նարհությունը հեզության ծնունդն է, իսկ ամբարտավանությունը՝ բարկության, որովհետև բարկությունը թշնամություն և անարգանք է պատճառում, մինչդեռ այնտեղ, ուր խոնարհություն կա, անարդարություն ու տխրություն չկա»:

Հայերեն լեզվում *հեզ* նշանակում է *քաղցր, մեղմ բնավորություն, խոնարհ,* ավելի մեղմ ու հանդարտ բնավորության տեր:

Այս պատմությունը ուսանելի է.

«ԻՆՔՆԱՀԱՎԱՆ ԳԻՏՆԱԿԱՆԸ

Մի անգամ ծովի վրա ճամբորդելու ժամանակ մի անվանի ու ինքնահավան գիտնական հարցնում է նավավարին.

Տղաս, ֆիզիկա գիտե՞ս.

Ո՛չ - գլուխը շարժելով պատասխանում է նա:

Ափսո՛ս,- ասում է գիտնականը.- կյանքիցդ մի մաս կորցրեցիր:

Մի քիչ հետո մեծամիտ գիտնականը նորից է հարցնում.

Նավավար, քիմիա գիտե՞ս.

Ո՛չ,- տխուր խոստովանվում է նավաստին.

Ափսո՛ս դժբախտ ես, ուրեմն կյանքիդ կեսը կորցրեցիր:

Հանկարծ ծովում ուժեղ փոթորիկ է սկսվում ու նավը ընկղմվելու վտանգի տակ է: Նավավարը տագնապահար հարցնում է գիտնականին.

Գիտնական, դուք լողանալ գիտե՞ք:

Ո՛չ,- պատասխանում է գիտնականը:

Ափսո՛ս, ուրեմն ձեր ամբողջ կյանքը կորցրեցիք»

Ի՞նչ է այս պատմության դասը: Ո՛չ համալսարանների վկայականները, ո՛չ հարուստ օժիտը, ո՛չ հաջող գործը, ո՛չ դրամը, ոչինչ չեն օգնի, եթե խոնարհություն չունես և Հիսուսի պես հեզ չես, որպեսզի կարողանաս լողանալ կյանքի ծովում:

Մեր Տերը, որ հեզության մարմնացումն էր, տաճարում, երբ տեսավ, որ կենդանիների առևտուր էր կատարվում ու սեղանավորները ապրանք էին ծախում,

սաստիկ բարկացավ, ճիպոտով խարազանեց, բոլորին դուրս վռնդեց տաճարից, ասելով. *«Գրված է՝ Իմ տունը աղոթքի տուն պիտի կոչվի, իսկ դուք ավազակների որջ եք արել այդ» (Մատթ. 21:13):*

Մեր եկեղեցական հայրերից Գրիգոր Վարդապետ Տաթևացին ասում է.

«Հեզն է, որ չի չարչարում և չի բռնադատում: Իսկ հեզությունը նույնանում է հաստատակամության հետ, որովհետև ասում են, թե հաստատակամությունը համբերություն է, որովհետև համբերությունն էլ նախատինքներին դիմանալն է»:

«Հարց - «Ի՞նչ է հեզությունը» և «Ի՞նչ է խոնարհությունը»:

Պատասխան - Հեզությունը ցասմանն է հակառակ, խոնարհությունը՝ հպարտությանը» («Գիրք Հարցմանց»):

Սուրբ Գիրքը մեզ ուսուցանում է, որ գոյություն ունի երկու տեսակի հարստություն, մեկը՝ *ցանկալի,* իսկ մյուսը՝ *դատապարտելի:* Պետք է հետամուտ լինել առաքինության գանձերին և մերժել նյութական հարստությունը, որովհետև առաջինը, այսինքն՝ ցանկալին, հոգևոր վաստակ է, իսկ երկրորդը, այսինքն՝ դատապարտելին՝ խեղաթյուրում է: Եթե մարդը աղքատ է *ժուժկալությունից, արդարամտությունից, իմաստությունից, խոհեմությունից կամ նման այլ մեծարժեք գանձերից,* ողորմելի է, որովհետև զուրկ է ճշմարիտ արժեքներից: Իսկ եթե նա հոժարակամ աղքատ է չարից, եթե նրա ներաշխարհում դիվային գանձեր չկան թաքնված և նա նախանձախնդիր է հոգով, ապա անկորչելի գանձ է կուտակում: Ինչպես Պողոս առաքյալն է ասում, *«...Որին իր ժամանակում հայտնի պիտի անի Երանելին և միակ Հզորը, թագավորների Թագավորը և տերերի Տերը, նա, որ միայն Ինքն ունի անմահությունը և բնակվում է անմատչելի լույսի մեջ...» (Ա. Տիմ. 6:15-16):* Որով, կան աստվածային օրենքներ, որոնց կարող է հետևել որևէ մարդ, եթե ցանկություն ունենա: *«Որո՞նք են դրանք»: «Հոգով աղքատ»* լինելը համարվում է կամավոր խոնարհությունը: Առաքյալը բերում է Աստծու աղքատության օրինակը, ասելով. *«...Ձեզ համար աղքատացավ նա, որ հարուստ էր,*

որպեսզի դուք Նրա աղքատությամբ հարստանաք» (Բ. Կորնթ. 8:9): Եթե Աստծուն նմանվենք ինչը հնարավոր է այս երկրային կյանքում, անպայման երանելի վիճակ կունենանք: Բայց առանց չարչարանքի, չեք կարող խոնարհ լինել: Այն ավելի շատ աշխատանք է պահանջում, քան որևէ այլ առաքինություն: Ինչո՞ւ: Պատասխանը պարզ է. թեև մարդու մեջ բարի սերմեր են ցանվել, սակայն նրա քնած ժամանակ արմատավորվել է մեր կյանքի թշնամու շաղ տված չար սերմերից ամենաուժեղը՝ հպարտության սերմը: Ո՛չ մի բան մարդկանց համար այնքան վտանգավոր ու ողբալի չէ, որքան հպարտության պատճառած չարիքը: Եվ քանի որ հպարտության այս մոլությունը արմատավորված է գրեթե բոյոր ժողովուրդների մեջ, Տերը Երանիները սկսում է հենց դրանից. *«Երանի՛ հոգով աղքատներին, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը» (Մատթ. 5:3):* Նա մեր բնությունից արմատախիլ է անում հպարտությունը՝ մեզ հորդորելով նմանվել Իրեն՝ ճշմարիտ Երանելիին, որ հոժարակամ աղքատացավ: Այսպես, ինքնահոժար աղքատությամբ միայն կարելի է բաժնեկից լինել նրա Երանությանը: Ինչպես Պողոս առաքյալն է ասում. *«Զեզանից յուրաքանչյուրը թող խորհի այն, ինչ որ կա Քրիստոս Հիսուսի մեջ, որը Աստծու կերպարանքով էր, բայց Աստծուն հավասար լինելը հափշտակություն չհամա-րեց, այլ Իր անձը ունայնացրեց ծառայի կերպարանք առնելով, մարդկանց նման լինելով և մարդու կերպարանքով խոնարհեցրեց ինքն իրեն...» (Փիլիպ. 2 :5-7):* Աստծու համար կա՞ ավելի մեծ աղքատություն, քան ծառա լինելը: Իշխանների Իշխանը, Տերերի Տերը կամավոր կերպով ինքնակամ հագնում է ծառայի պատմուճանը:

Մեր նախահայրերի նման լսենք նրա ձայնը և պատգամը ու քայլենք հեզության և խոնարհության ճանապարհով, որպեսզի արժանանանք աստվածային օրհնության ու երանության: Ամեն:

ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

«Երանի՛ նրանց, որ քաղցն ու ծարավը ունեն արդարության, որովհետև նրանք պիտի հագենան»
(Մատթ.5:6)

Այս խոսքը ես վերցրել եմ Մատթեոս Ավետարանչի 5-րդ գլխի 6-րդ համարից։

Հիսուս Լեռան վրա Իր քարոզում խոսեց ինը երանիների մասին. դրանցից չորրորդն է այս երանին, ուր Հիսուս խոսում է արդարության մասին։

Նշենք մի քանիսը այդ երանիներից.

«*Երանի՛ հոգով աղքատներին, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը».*

«Երանի՛ սգավորներին, որովհետև նրանք պիտի մխիթարվեն»։

«Երանի՛ հեզերին, որովհետև նրանք երկիրը պիտի ժառանգեն» և այլն։

Հարց է առաջանում, թե՝ *«Ի՞նչ է արդարությունը»։*

Եթե խորքում ուսումնասիրենք, *արդարություն* բառը մեծ իմաստ ունի։

Ըստ մեր Տիրոջ արդարությունը երկնքի բանալին է. *«Եթե ձեր արդարությունը ավելի չլինի, քան օրենսգետներինը և փարիսեցիներինը, երկնքի արքայությունը չեք մտնի» (Մատթ.5:20)։*

Հիսուս ամեն անգամ շեշտում էր, թե աղոթելիս ուրիշ ո՛չ մի բան չխնդրենք Հորից, այլ միայն երկնքի արքայությունը. *«Նախ խնդրեցեք Աստծո արքայությունը և նրա արդարությունը, և այդ բոլորը ձեզ ավելիով կտա» (Մատթ.6:33)։*

Աստծո հետ կապ հաստատելու համար պետք է Նրան նմանվենք, քանի որ ստեղծված ենք Նրա պատկերով։ Մարդիկ կարող են մաքուր և պարկեշտ լինել, սակայն քրիստոնյա չլինել. այսինքն՝ ավելի կապված լինեն ունեցվածքին. հողին, հարստությանը, դրամին, մարմնին

և մեռնելուց հետո ամեն բան թողնել այստեղ։ Այսպիսի մարդիկ կարծում են այս կյանքում ուտել-խմելով, թանկարժեք հագուստներ հագնելով ու մեքենաներ քշելով և պալատների նման տներում ապրելով՝ ապահով են, բայց դա խաբուսիկ է։ Նրանք նույնիսկ աշխարհը չեն կարողանում ապահովել, քանի որ հեռանում են դատարկ ձեռքերով։ Այդպես չէ քրիստոնյայի պարագային։ Նա հետևելով Հիսուսի օրինակին, իր ազնվությամբ, արդարությամբ ու հավատի գործերով, նվիրումով և զոհողության ճանապարհով ձգտում է ժառանգել Երկնքի արքայությունը։ Այս աշխարհը նրա համար միջոց է, երկինքը ժառանգելու համար։

Արդարության հակառակորդներն են՝ *ագահությունը և եսասիրությունը։*

«Հարուստ և ագահ մարդկանցից մեկը մեռնում է, բայց աչքերը բաց են մնում։ Բոլոր հուղարկավորները փորձում են փակել նրա բաց աչքերը, բայց չեն կարողանում։ Ուշիմ և հնարագետ մի մարդ, մի քիչ փոշիացած հող է բերում և աչքերին քիչ-քիչ կաթեցնում է։ Աչքերը անմիջապես փակվում են։ Այս է արդարությունը ոտնակոխող մարդու վերջավորությունը»։

Ագահությունը յոթը մահացու մեղքերից մեկն է։ Այդ մոլությունը ունեցողը անկուշտ է և երբեք էլ չի գոհանում իր ունեցածով։

«Մի քաղաքում երկու մարդ կար. մեկ հարուստ էր, մյուսն՝ աղքատ։ Հարուստն ուներ շատ ու շատ հոտեր ու նախիրներ, իսկ աղքատը ոչինչ չուներ, բացի մի փոքրիկ էգ գառնուկից, որը ծախու էր առել ու պահում էր։ Գառնուկը մեծացավ նրա ու նրա որդիների հետ։ Նա ուտում էր նրա հացից, նրա բաժակից խմում, նրա ծոցում էր քնում. դա կարծես նրա դուստրն էր։ Այդ հարուստ մարդու մոտ մի անցորդ եկավ։ Հարուստը չուզեց իր հոտերից ու արջառներից մի անասուն մորթել, որ հյուրասիրի իր մոտ եկած անցորդին, առավ աղքատի գառնուկը և

կերակուր պատրաստեց իր մոտ եկած մարդու համար» (Բ. Թագ. 12:1-5): Աստված գիտի, որ այդ անխիղճ հարուստը չարագործ է։

Աստծու թշնամին մեղքն է։ Իսկ արդարությունը դրա դեմն առնելու ուժն է։

Ո՛չ մի մարդ չի ուզում վատ բան ուտել, նույնիսկ գողերն ու ավազակները, երբ գողություն են անում ու սպանում են մարդկանց, լավ բաներին տիրանալու համար են գործում դրանք։

Ագահը հեռու է մնում բարի գործերից, իսկ եսասերը, եթե անում էլ է, հետին նպատակներ է հետապնդում։

Քաղցն ու ծարավը ապահովում են մարդու ֆիզիկական սնունդը։ Բնական է, որ առանց ուտելու և խմելու չենք կարող ապրել, որովհետև ապրելու համար սնունդը կարևոր է։ Սակայն հոգու սնունդը տարբեր է։ Մեր ամենօրյա աղոթքով կարող ենք սնել մեր հոգին։ Հիսուս նկատի ունենալով մեղավորներին ու արդարներին, ասում է. *«Եվ նրանք պիտի գնան դեպի հավիտենական տանջանք, իսկ արդարները՝ հավիտենական կյանք» (Մատթ. 25:46):*

Աստված առատաձեռն է։ Նրա մատակարրությունը անսպառ և անսահման է։ Բայց տալիս է խնդրողին. *«Խնդրեցեք և Աստծուց կտրվի ձեզ»:*

Էմմանուել Քահանա Նազարյանն ասում է. *«Աստված մարդուս համար երկու կյանք է պատրաստել, մեկը՝ զգայական, մյուսը՝ հոգևոր, մեկն՝ ասպարեզ է, մյուսը՝ վարձատրության տեղ, մեկը՝ դարձրել է ծով, մյուսը՝ նավահանգիստ, մեկը՝ ժամանակավոր է, մյուսը՝ հավիտենական, մեկը՝ ձեռքերիս է, մյուսին՝ սպասում ենք։ Բայց մարդս ստեղծված է ո՛չ այնքան ժամանակավոր, որքան հավիտենական կյանքի համար»…*

Հիսուս այդ հանդերձյալ կյանքն անվանում է *«Երկնքի արքայություն», «Աստծո արքայություն» կամ «Հավիտենական կյանք»:* Երկնքի կամ Աստծո արքայություն ասելով Նա ուզում է մեզ հասկացնել, որ Աստծո կամքը

կատարելը, ինչպես հրեշտակներն են կատարում երկընքում, մի անսպառ երանության աղբյուր է, մի արքայություն, մի երկնային թագավորություն։

«Արդարների փառքն էլ երկու տեսակ է. մեկը նրանց գործերի, մյուսը՝ հատուցումների փառքը։ Այժմ միայն արդարների հոգիներն են ստանում իրենց գործերի փառքը, հավիտենական կյանքում ստանալու են հատուցումների փառքը՝ հոգով ու մարմնով, հետևապես բարձրանալու են մի փառքից մյուսը՝ փառաց ի փառս» (Էմմանուել քահանա Նազարյան, «Պարզ քարոզներ»)։

Սբ. Հովհան Ոսկեբերան Հայրապետն ասում է. *«Մեղավորներն արքայությունից զրկվելու համար ավելի կցավեն, քան հավիտենական տանջանքների համար»։*

Մեղավորներին խղճի խայթն է, որ կրծելու է և տանջելու նրանց սիրտը. *ա. Թե նրանք ինչ չնչին բանի համար դատապարտվեցին. բ. Թե ինչ թեթև բան էր պահանջվում փրկվելու համար. և գ. Թե ինչ մեծ բարիք կորցրեցին։*

Սարգիս Վարդապետ Շնորհալին ավելացնում է. *«Եթե բոլոր արարածները հավիտենական կյանքից զրկվողի վրա մշտապես աղիողորմ կերպով ողբան, դարձյալ չեն կարող ողբալ այն բոլորի միայն մի մասը, ինչին որ արժանի է այդպիսի մի ողորմելին»։*

Տաթևի վանքի վանահայր՝ Միքայել Վարդապետն ասում է.

«Եկեղեցու սուրբ հայրերն ասում են, որ դժոխքի տանջանքներում մարդիկ անընդհատ ծխի մեջ կլինեն և այդ ծխից նրանց աչքերը արտասուքներով կլցվեն ու այնպիսի սառնամանիք կլինի, որ ատամներով անընդհատ կկրճտացնեն, ինչպես մարդ ցրտից է ատամները կրճտացնում։ Իսկ արդարները կփայլեն Երկնքի Արքայության մեջ, ինչպես արեգակը, որովհետև արդարները, ովքեր արժանի կլինեն փրկվելու և Երկնքի արքայությունը ժառանգելու, լույսի նման կլինեն։ Ինչպես արեգակն է ամեն առավոտ մեզ ուրախացնում, այնպես էլ արդարները մշտապես ուրախ պետք է լինեն երկնքի արքայության մեջ. և այնտեղ չի լինի ցավ, նեղություն ու տրտ-

մություն, այլ հարազվարձ, մշտական ուրախություն և երջանկություն: Ուրեմն, գիտակցենք, թե Քրիստոս մեզ ինչի է կոչում. ընտրում ենք Երկնքի Արքայությունը, արդարների հետ ուրախությունը, թե՞ ընտրում ենք դժոխքի տանջանքները, աչքերի լացն ու ատամների կրճտոցը: Մեր առջև է դրված ընտրությունը. Աստված արդար է, բայց նաև ողորմած, սպասում է մեղավորի դարձին, չի ուզում նրա կորուստը: Ուստի, գիտակցենք և ճիշտ ընթանանք մեր կյանքը, որպեսզի Երկնքի Արքայությանն արժանանանք արդարների և սրբերի հետ: Ամեն:

«Երանի՜ է ձեզ, երբ ձեզ նախատեն ու հալածեն և իմ պատճառով ձեր մասին ամեն տեսակ չար խոսք՝ սուտ ասեն: Ցնծացե՛ք և ուրախացե՛ք, որովհետև երկնքում ձեր վարձը շատ է, քանի որ այսպես հալածեցին մարգարեներին, որոնք ձեզնից առաջ են եղել»

(Մատթ. 5:11-12)

«Երանի՜ հոգով աղքատներին, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը»:

«Երանի՜ սգավորներին, որովհետև նրանք պիտի մխիթարվեն»:

«Երանի՜ ողորմածներին, որովհետև նրանք ողորմություն պիտի գտնեն» (Մատթ. 5:4-7) և այլն:

Երանիներից վերջինը մյուսների պսակը լինելով, կարելի է ասել հանդիսանում է ամենամարդկային և հավատի մեջ զորացած քրիստոնյային կյանք տվողն ու ներշնչիչը: Մարդկությունը շատ հին ժամանակներից սկսած իր մեջ ունեցել է լուսավորիչներ, առաջնորդներ, ճշմարտության հետևորդներ, որոնք գրեթե միշտ ենթակա են եղել ծաղրի, հեգնանքի, այլ նաև նախատինքի ու հալածանքի: Զարմանալին նրանում էր, որ մինչ այդ չէր պատահել, որ որևէ մեկը երանի տար այդպիսիներին: Իրապես, եթե խորը մտածենք, վերջին երանին նույնիսկ կարող է մեզ շատ անհասկանալի թվալ:

Հիսուս Իր աշակերտներին պատվիրում է չվախենալ ու համարձակորեն խոստովանվել իրենց հավատը մարդկանց առջև: Թելադրում է նրանց չընկճվել սպառնալիքից, չարչարանքից ու նույնիսկ մահից: Քաջալերում է, որ չամաչեն իրենց հավատից, այլ բարձր ձայնով հայտարարեն դրա մասին: Հորդորելով կատարել այն, ինչ Ինքը պատվիրում է, հուսադրում է, թե նրանք պատիվ պիտի համարեն քաջաբար այն խոստովանվելով, որով իզուր չպիտի անցնեն նրանց զոհողությունները. *«...Ով որ*

մարդկանց առաջ խոստովանի ինձ, մարդու Որդին էլ նրան կխոստովանի Աստծու հրեշտակների առաջ» (Ղուկ. 12:8):

Եթե մեր սերը Քրիստոսի հանդեպ կատարյալ է, ո՛չ չարչարանքները և ո՛չ էլ մահը մեզ չեն կարող վախեցնել: Այս իմաստով Պողոս առաքյալն ասում է. *«Արդ, ո՞վ պիտի բաժանի մեզ Քրիստոսի սիրուց, տառապա՞նքը, թե՞ անձկությունը, թե՞ հալածանքը, թե՞ սովը, թե՞ մերկությունը, թե՞ վտանգները, թէ՞ սուրը» (Հռոմ. 8:35):* Ավելին, պատահում է ճիշտ հակառակը: Բոլոր դառնությունները ավելի են խորացնում աստվածային սերը: Սա հաստատեցին առաջին դարի և քրիստոնեական բոլոր դարաշրջանների նահատակները: Աշխարհը նրանց արյամբ ոռոգվեց՝ պատճառ հանդիսանալով քրիստոնեության տարածմանը:

Ահա ձեզ մի օրինակ արդարության ու ճշմարտության համար հալածվող մի սրբի կյանքից:

«Քրիստոնեության հալածանքների ժամանակ Բերիլոս եպիսկոպոսը ձերբակալվում է իր հրաշալի քարոզների և ուսուցումների համար:

Բյուզանդիայի Լևոն Կայսրը գաղտնի հրաման է տալիս, որ նրան բանտում գլխատեն, որպեսզի չշարունակի իր պայքարը հանուն քրիստոնեության ուղղափառ հավատի:

Բերիլոս եպիսկոպոսը Կայսրի հին բարեկամն էր և իր նվիրապետական աստիճանների բարձրացումը ստացել էր նրա հրամանով:

Երբ դահիճները գալիս են մահապատիժը գործադրելու, եպիսկոպոսը ծնկի եկած գրում է հետևյալ երկտողը և խնդրում, որ այն անպայման հանձնեն Կայսրին:

Նամակի բովանդակությունը այս էր.

«Վեհափառ Տեր, միշտ էլ ուզել ես պատվել քո հին բարեկամիդ:

Սարկավագությունից ինձ բարձրացրեցիր աբեղայության, աբեղայությունից՝ Եպիսկոպոսության և հիմա մեծա-

գույն շնորհն ես անում պատվելով ինձ արքազնագույն տիտ-դրոսով, մարտիրոսության պսակով, շնորհակալ եմ»:

Կայսրը կարդալուց հետո այս սրտառուչ տողերը, ցնցվում է և հրամայում, որ մահապատիժը չգործադրվի, բայց ավա՜ղ սուրբն արդեն իսկ գլխատված էր»:

Այս կյանքում չարչարանքները և ուրախություն-ները չափանիշ չեն ո՛չ չարության ու ո՛չ էլ՝ բարության: Աստված հաճախ փորձում է Իր ընտրյալներին՝ համբե-րության, հավատի ու սիրո մեջ աստվածային վեհ նպա-տակների իրագործման համար: Դրա լավագույն օրինակը հանդիսանում է Հոր Երանելին, որն իր ամբողջ ունեց-վածքն ու զավակներին կորցնելով հանդերձ, թե՛ հարս-տութեան և թե դժվարությունների ժամանակ չհեռացավ Աստծուց, ամուր պահեց իր հավատը ու միշտ փառք տվեց Նրան:

Նախատինքն ու հալածանքը, արդյունք են սիրո պակասին, ոխին, քինախնդրության և աստվածային ճշմարտության անգիտության: Նախատել, արհամարհել, անպատվել իր նմանին, նշանակում է ծաղր ու ծանակի ենթարկել նրան: Արդարության ու ճշմարտության զգա-ցումից զուրկ մարդիկ են, որոնք այսպես են մտածում և գործում:

Մեր Տերը ծանոթ լինելով մարդու ներաշխարհին ու ապրելակերպին, նոր ձև ու գույն է տալիս դրան: Կյան-քը, որն ապրում է մարդը, լի է նեղություններով ու տառա-պանքներով: Եվ զարմանալին այն է, որ նույն մարդն է դրանց ստեղծողն ու առաջ բերողը, այսինքն մենք ենք նեղություն և տառապանք պատճառում մեր նման մարդ-կանց: Դժբախտաբար մարդիկ փորձում են ամեն ինչ իրենցով չափել ու մտածում են, թե ամեն բան իրենց ներքին աշխարհի զգացումներին ներդաշնակ պիտի լինի ու այդպես էլ կշռում են աշխարհը: Մարդու մէջ *«ես»-ը* այնքան ուժեղ է, որ դրանից դուրս ուրիշ բան չի տեսնում և կամ չի ուզում տեսնել, հետևաբար նա ստիպված ուզի

կամ չուզի հարմարվում է այդ վիճակին, ինչպես մեր ժողովուրդն է ասում. *«Հոսանքին հակառակ չգնալու համար»,* հակառակ դեպքում նրանց սպասվում են՝ *«հալածանքը, նախատինքը, բամբասանքն ու չարախոսությունը»:*

Դժբախտաբար իրականություն է հաստատել այն դառն իրողությունը, թե մարդիկ, որոնք խորապես չեն ապրում քրիստոնեական կյանքով, սիրով ու հավատով, հեռացնում են իրենցից ճշմարտությունը և փոխանակ զղջալու, դարձի գալու ու իրենց մեղքերը Աստծու մոտ խոստովանվելու, արհամարհում, բամբասում ու հալածում են նրանց, որոնք ապրում են հավատով, արդարությամբ, մաքրությամբ ու ազնիվ կյանքով:

Հիսուս նախատեսել էր այդ. *«Մի՛ տխրեք սրա համար, այլ ուրախացե՛ք, որովհետև մարդիկ դարերով հալածել ու նախատել են ճշմարտության, աստվածպաշտության հետամուտ մարդկանց, մարգարեներին ու արդարներին»:* Իրապես, Քրիստոսով պայծառացած հոգիների համար հալածանքը պատիվ է ու փառավորության ճանապարհ: Չէ որ Նա էլ հալածվեց ու Իր արյունը թափեց մարդկության փրկության համար: Նրա սիրո հուրով վառված հոգիների համար հա-լածանքը գեղեցկագույն առիթ է ճշմարիտ վկայության: Հալա-ծանքն ու նախատինքը, որոնք հավատով տկարների համար կարող են խոչընդոտ լինել, մինչդեռ ճշմարիտ հավատացյալին դրանք իբրև սանդուղք են ծառայում դեպի Աստված բարձրանալու համար:

Դարերով մարդիկ ո՛չ միայն չեն սիրել ճշմարտությունն ու արդարությունը, այլն հալածել, նախատել են ճշմարտախոսին ն չարչարանքներով նույնիսկ մահվան դատապարտել արդարին: Բամբասանքը, չարախոսությունը եղել են, կան ու պիտի լինեն իբրև զենք նրանց համար, որոնք թույլ են՝ հավատի, հույսի ու սիրո մեջ:

Ի սեր գերագույն ճշմարտության հալածվել՝ սիրո առաքինություն է: Այս հավատարմության գեղեցկագույն

օրինակները տվեցին առաջին դարի քրիստոնյաներն ու Եկեղեցու Հայրերը: Կարող ենք հիշել Պողիկարպոս Զմյուռնիացի Հայրապետին, որ դահիճների առջև կանգնած աղոթում էր Հիսուսին, որպեսզի իրեն արժանի անի արյունով նահատակության:

Ճշմարիտ քրիստոնյայի համար կյանքի իմաստն ու արժեքը չհալածվելու, չնախատվելու մեջ չէր, այլ՝ հալածվելով, նախատվելով, սակայն երբեք չհուսահատվելու մեջն էր: Պողոս առաքյալը իր սիրելի աշակերտ Տիմոթեոսին թելադրում է. *«Եվ բոլոր նրանք, որ ուզում են աստվածպաշտութեամբ ապրել Քրիստոս Հիսուսով, հալածանքների մեջ պիտի լինեն... ...Իսկ դու արթո՛ւն եղիր ամեն ինչում, նեղությունների մեջ համբերի՛ր, ավետարանի գործե՛ր արա, լիուլի կատարի՛ր քո պաշտոնը» (Բ. Տիմ. 3:12, 4:5):*

Հավատով զորացած հոգիների համար հալածանքը դեղ է ու բալասան, որով նրանք բուժում են իրենց մարդկային տկարությունները: Սրբերը հանդիսանում են մեծագույն օրինակները հավատի, հույսի ու սիրո: Քրիստոսի սիրով վառված հոգիների համար նեղությունը, հալածանքը, սովը կամ այլ վտանգներ բավարար չեն նրանց հեռացնելու Աստծուց ու Նրա ճշմարտություններից:

Հալածանքն ու նախատինքը կարծեք միշտ ուղեկից են եղել բոլոր նրանց, որոնք եղել են *հոգով աղքատ, սգավոր, հեզ, արդարության քաղցն ու ծարավը ունեցող, ողորմած, սրտով սուրբ և խաղաղարար:*

Չարչարանքն ինքնըստինքյան չարիք չէ քրիստոնյայի համար, մանավանդ, երբ հավատի դավանության հետևանքն է, որովհետև Երկնքի Արքայությունում այս երկրային կյանքում, կրած չարչարանքների դիմաց վարձատրությունը շատ ավելի մեծ է լինելու: Ավելին, հավատացյալն այսպիսով լրացնում է Քրիստոսի չարչարանքները Եկեղեցու շինության ու պայծառության համար: Պողոս առաքյալն ասում է. *«Եվ այժմ ուրախ եմ ձեզ*

համար կրած իմ չարչարանքների համար և լրացնում եմ իմ մարմնի մեջ Քրիստոսի նեղությունների պակասը իմ մարմնի համար, որ է եկեղեցին» (Կող. 1:24): Իսկ Պետրոս առաքյալը քաջալերում է քրիստոնյաներին՝ նման չարչարանքները դիմագրավելու. *«Իսկ եթե արդարության համար չարչարվեք էլ երանի՛ է ձեզ» (Ա. Պետ. 3:14):*

Ընդհանրական Քրիստոնեական Հայրերից Սուրբ Հովհան Ոսկեբերան Հայրապետն ասում է. *«Լավություն - քաջություն է ո՛չ թե վատ խոսքեր լսելը, այլ լսելը և այն քաջությամբ տանելը, որովհետև այս կերպով գործնականապես հանդիմանվում են դրանք ասողները, որովհետև ո՛չ թե չարչարվելն է, չհալածվելն է մեծությունը, այլ չարչարվելը, հալածվելը և սակայն չհուսահատվելը»:*

Իր ծագման օրից իսկ քրիստոնեությունը ենթարկվեց հալածանքների: Քրիստոնյաները զարմանալի համբերությամբ և հավատով հանձն առան դրանք: Պատճառը Հիսուսի Տեր և Աստված դավանելն էր, հրեաները, ազդված առաքյալների կատարած հրաշքներից, խումբ առ խումբ զալիս էին քրիստոնեությունն ընդունելու: Նրանց մեծամեծները խիստ հալածանքներ շղթայազերծեցին Եկեղեցու դեմ: Առաքյալներից և հետևորդներից ոմանք սպանվեցին, բանտարկվեցին, չարչարվեցին, ոմանք էլ, հալածանքների պատճառով, ցրվեցին աշխարհով մեկ:

Հեթանոսները ևս ձեռնպահ չմնացին: Տասը տարի մինչև չորրորդ դարի սկիզբը մեծ հալածանքներ կազմակերպվեցին: Երբ 312 թվականին Կոստանդիանոս կայսրը քրիստոնեությունը հռչակեց ազատ կրոն, կարծես քրիստոնյաների հոգսը թեթևացավ, զոնե այդպես թվաց նրանց, սակայն առաջին հալածանքը սկսեց Ներոն կայսրը: Չորս տարի անընդմեջ (64-68) քրիստոնյաներն աներևակայելի տանջանքների ենթարկվեցին: Նահատակվեցին շատերը, այդ թվում նաև Պետրոս և Պողոս առաքյալները: Վերջին հալածանքի կազմակերպիչը եղավ Դիոկղետիանոս կայսրը: Ամենասոսկալին, սակայն, պարսից Շապուհ արքայի

շղթայազերծած հալածանքն էր, որը տևեց քառասուն երկար տարիներ և ստացավ *«Քառասնամյա հալածանքներ»* անվանումը: Հալածանքին զոհ զնացին հարյուր հազարավոր քրիստոնյաներ:

Արդարությունը արևի նման փայլող մի իրականություն է, զողերն ու ավազակները փախչում են նրանից և նախընտրում են խավարը, որպեսզի իրենց չար ծրագրերը իրագործեն: Եսասեր, փառամոլ ու պաշտոն սիրող մարդիկ գունավոր ակնոցով են դիտում արդարությունը: Այսպիսի մարդկանց համար արդարությունը բառարանում տպված բարդ մի բառ է:

«Եվ բոլորը վկայում էին ու զարմանում նրա բերանից ելած շնորհալի խոսքերի վրա ու ասում. «Սա Հովսեփի որդին չէ"»: Եվ նա ասաց նրանց. «Անշուշտ, ինձ այս առածը կասեք. «Բժի՛շկ, բժշկի՛ր ինքդ քեզ»: Այն ամենը, ինչ արել ես Կապառնայումում, որչափ որ լսեցինք, արա՛ և այստեղ, քո գավառում»: Եվ նա ասաց, «ճշմարիտ եմ ասում ձեզ, որ մարգարեն ընդունելի չէ իր քաղաքում» (Ղուկաս 4:22-24),- ասել է Փրկիչը: Ինչո՞ւ, որովհետև մարգարեն Աստծու մարդն է և ճշմարտությունն է խոսում: Այս նյութապաշտ դարում Ավետարանի ճշմարիտ քարոզչությունը հաճելի չէ շատերի ականջին: Այդ պատճառով էլ ուղղափառ քարոզիչը հալածվում է քրիստոնեությունը դիմակ դարձնողների կողմից:

Մարդիկ այսօր *«Աստծուն երկնքում չեն փնտրում,* այլ՝ նյութի մեջ և *«Իրավունքը ուժեղինն է»* սկզբունքին են հավատում: Այդ *«ուժեղ»-ը* անխուսափելիորեն նյութն է: Հավատում են, թե ամեն հարգանք ու պատիվ պիտի ընծայվի նյութին և ո՛չ թե խելքին, սրտին ու հոգուն:

Այսօրվա ամենաահավոր հիվանդությունը ցուցամոլությունն է: Սա մի հոգեբանական հիվանդություն է, որ նմանվում է դատարկ տակառի ձայն հանելուն:

Անգլիացիների համար ասվում է, թե ճակատամարտները կորցնում են, բայց դրա փոխարեն շահում են պատերազմը:

Արդարության համար հալածվողներն էլ նման են այս վիճակին: Նրանք ժամանակավոր կերպով ենթարկվում են հալածանքի, չարչարանքի, տառապանքի, ճակատամարտեր են կորցնում, բայց վերջ ի վերջո վերջնական հաղթանակը նրանցն է:

Հիսուսից հետո ո՞ր մի առաքյալը, ճշմարտախոս և արդար հայրապետը, վարդապետը կամ ճշմարտութեան ո՞ր մի քարոզիչը չի հալածվել: Սակայն այսօր այդ նոյն հալածվողները իբրև սրբեր զարդարում են Եկեղեցիների Սուրբ Սեղանները: Նրանք պատմության էջերը փայլեցնում են ու դառնում սերունդների ներշնչման աղբյուր: Բայց ո՞ւր են հալածողները, ո՞ւր են արդարության երեսին ապտակողները և փշե պսակ դնողները: Նրանք Աստծու օրենքի համաձայն խառնվել են գերեզմանների փոշիներին:

Արդարության ձայնը չի կարող խեղդվել: Այդ բարի ու անուշ ձայնը ուշ թե շուտ լսվելու է ու նրա դատին օգնողները ստանալու են իրենց արժանի վարձը:

Հալածվել բամբասանքի ու չարախոսության արժանանալ միայն նրա համար, որ Հիսուսի հետևորդներն ենք, նշանակում է փառքի պսակը ունենալ: Մեր ժողովուրդը դարեր շարունակ օտար բռնակալների կողմից փշե պսակների է արժանացել, շատ անգամներ նահատակվել, բայց այսօր հակառակ նրան, որ իրեն հալածողներից, տիրապետողներից ու անարգողներից շատերը աշխարհի երեսից ջնջվել են կամ փոքրացել իրենց մեծությունից, փառք ու պատիվ մեր ժողովրդին, քանի որ ինչպես մեր մեծ բանաստեղծ Պարույր Սևակն է ասել, *«ապրել ենք, ապրում ենք ու պիտի ապրենք»:*

Երկնքի Արքայության մէջ կյանքը պիտի լինի զուտ հոգևոր գոյություն՝ հիմնված հավիտենական արդարության, խաղաղության, երանության և Սուրբ Հոգու շնորհաբեր ներկայության վրա: Պողոս առաքյալը փորձում է նկարագրել այս վիճակը, երբ ասում է. *«Ինչ որ աչքը չտեսավ,*

և ականջը չլսեց, և մարդու սիրտը չընկավ, Աստված այն պատրաստեց իր սիրելիների համար» (Ա. Կորնթ. 2:9):

Երկնքի Արքայությունն սկսվում է այս աշխարհից, Հիսուսի հանդեպ մեր ունեցած հավատով և իր ավարտին պիտի հասնի երկնքում՝ Աստծու շնորհներով:

Քրիստոսի հավատարիմ գինվորի նման համբերությամբ տանենք չարչարանքներն ու նեղությունները: Այս խրատը դարձնենք մեր կյանքի նշանաբանը, որպեսզի ժառանգենք հավիտենական կյանքը:

Պողոս առաքյալը Թեսաղոնիկեցիներին ուղղած երկրորդ թղթում ասում է. *«Եղբայրներ, պարտավոր ենք միշտ գոհություն մատուցել Աստծուն ձեզ համար, ինչպես որ արժանի իսկ է, քանի որ ավելի ու ավելի է աճում ձեր հավատը, և շատանում է ձեզնից յուրաքանչյուրի սերը միմյանց հանդեպ, այնպես որ մենք ձեզնով պարծենում ենք Աստծու եկեղեցիներում ձեր համբերության և հավատի համար՝ ձեր այն բոլոր հալածանքների և նեղությունների մեջ, որոնց դուք համբերում եք: Դրանք ապացույց են Աստծու արդար դատաստանի, որպեսզի դուք արժանի լինեք Աստծու արքայությանը, որի համար էլ նեղություն եք կրում: Եվ արդար է Աստծու առաջ, որ ձեզ նեղողներին նեղություն հատուցվի, իսկ ձեզ՝ նեղություն կրածներիդ՝ հանգիստ մեզ հետ, երբ Տեր Հիսուս հայտնվի երկնքից՝ իր հրեշտակների զորքով՝ կրակի բոցով վրեժ լուծելու համար նրանցից, որոնք չեն ճանաչում Աստծուն և չեն հնազանդվում մեր Տեր Հիսուս Քրիստոսի Ավետարանին...» (Բ. Թեսաղ. 1:3-9):*

Աղոթում եմ Աստծուն, որ աղքատներ, կարոտյալներ և մանավանդ անբուժելի հիվանդներ չլինեն: Աստծու մոտ անկարելի ոչինչ չկա: Մեր աղոթքով կարող ենք հասնել ամեն ինչի: Միշտ աղոթեցեք և լցվեցեք մեր Տիրոջ սիրով և եթե այդ սիրո համար նույնիսկ հալածանքի ենթարկվեք. *«...Ցնծացե՛ք և ուրախացե՛ք, որովհետև երկրնքում ձեր վարձը շատ է...»:* Ամեն:

ՆԵՂՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԿԱՐՈՒԹՅՈ՞ՒՆԸ

«Ով ասում է, թե ինքը Նրա մեջ է բնակվում,
պարտավոր է այնպես ընթանա
ինչպես որ Նա էր ընթանում»
(Ա. Հովհ. 2:6)

Երբ փորձության մեջ ենք ընկնում, մտաբերում ենք Հիսուսին: Գիտենք, որ Նրա ճանապարհը շատ փշոտ ու նեղություններով և նախատինքով լիքն էր: Հրեաները միշտ Նրան խելագար, մոլորեցուցիչ և հմայող էին կոչում. *«Այս մարդը Աստծու կողմից չի, այլ մի մոլորեցնող է»: «Տե՛ր, հիշեցինք, թե այն մոլորեցնողը, քանի կենդանի էր, ասում էր, թե՝ երեք օրից հարություն պիտի առնեմ» (Մատթ. 27:63):*

Երբ մարդը դժվարության կամ թշվառության մեջ է, նրա վիճակը ավելի ծանր է դառնում անընդհատ բողոքելով ու դժգոհելով: Այդպիսիները դժգոհելու փոխարեն, ընդհակառակը՝ պիտի օրհնեն, որպեսզի Աստված էլ իրենց օգնի, այսինքն՝ ավելի լավատես լինեն, քան հոռետես, կյանքին նայեն պայծառ աչքերով և Աստծու տված բարիքները վայելեն միշտ Նրան փառք տալով:

Ընդհանրական Եկեղեցու Հայրերից մեկն ասում է. *«Ինչպես շունը երբ սեղանի մոտ է մի պատառ ես նետում, մնում է և սպասում, որ էլի տաս ու չի գնում, այդպես էլ սատանան միշտ կանգնում է մեր առաջ բաց բերանով, սպասելով, թե երբ Աստծուն վիրավորող, հայհոյող ու դժգոհություն պարունակող բառ պիտի ասենք, որպեսզի այն բռնելով՝ նորից գա: Իսկ եթե միշտ գոհություն մատուցենք Աստծուն, քաղցի կմատնենք նրան և կստիպենք փախչել»:*

«Չես կարող լռել,- խորհուրդ է տալիս Ընդհանրական Քրիստոնեական Եկեղեցու նշանավոր Հայրերից՝ Սուրբ Հովհան Ոսկեբերան Հայրապետը,- *խոսիր, բայց ո՛չ թե հայհոյանք, այլ՝ շնորհակալություն հայտնիր, իսկ բողոքի փոխարեն՝ օրհնություն խնդրիր: Բարձր ձայնով կանչիր Տի-*

րոջը՝ Նրան փառաբանելով: Դրանից սիրտդ կթեթևանա, քանի որ քո շնորհակալության պատճառով սատանան կփախչի և Աստծու օգնությունը արագ կհասնի քեզ»:

Անցյալ դարի Կ. Պոլսի մեր Լուսամիտ Պատրիարքներից Շնորհք Արքեպս. Գալուստյանը ասում է.

«Մեզ համար շատ ուսանելի են Հոբ Երանելիի, Հայր Աբրահամի և Հովսեփ Գեղեցիկի օրինակները: Նրանք որոշ ժամանակ ապրեցին ահավոր աղքատության ու թշվառության մեջ, հակառակ դրան այդ նեղությունների մեջ իսկ մշտապես փառաբանում էին և օրհնում Աստծուն, մինչև ի վերջո կարողացան Նրա օգնությամբ ապրել խաղաղ և հանգիստ մի կյանք» («Համաքրիստոնեական Սուրբեր», էջ 19):

Երկրորդ դարում ապրած Հուստինոս *«Մարտիրոս»-ի* վկայությամբ, *«Թեև քրիստոնյաները խաչվեցին, վայրի գազանների առջև նետվեցին, շղթաներին հարվածվեցին, այրվեցին, տանջվեցին, իրենց ստացվածքներից ու դիրքերից զրկվեցին, բայց չհրաժարվեցին իրենց կրոնից: Ընդհակառակը, որքան շատացան չարչարանքները, այնքան բազմացան քրիստոնյաները...»:*

Խաչի շուրջ հավաքվելով հրեաները ծաղրում էին Հիսուսին և իրենց գլուխները շարժելով՝ ասում. *«Վա՜հ, դու որ քանդում էիր տաճարը և երեք օրից այն շինում, փրկիր քեզ, եթե Աստծու Որդի ես, իջի՛ր այդ խաչից» (Մատթ. 27:40):* Երբ *«ծարավ եմ»* ասաց և ջուր ուզեց, նրա փոխարեն քացախ տվին, թքեցին Նրա երեսին, ծաղրելով ծնկի էին գալիս և այլ նեղություններ պատճառեցին Նրան:

Նույնիսկ Նրա աշակերտներից ոմանք վախենալով հետևեցին հրեաներին և այլևս չէին շրջում Հիսուսի հետ: Մեր Տերը այս նկատի ունենալով հարցնում է Իր տասներկու աշակերտնե*րին. «Միթե դո՞ւք էլ ուզում եք գնալ» (Հովհ. 6:68),* այսինքն՝ հետևել մյուս աշակերտների *օրինակին:*

Երջանկայիշատակ Շնորհք Պատրիարք Գալուստյանը ասում է.

«Հալածանքը քանդում է այն հավատը, որը արմատ չի գցել մարդու հոգու խորքերում...: Աստված տվել է անհրաժեշտ ուժը բոլոր քրիստոնյաներին դիմանալու ամեն տեսակ հալածանքի, տառապանքի և փորձության: Երբ չենք դիմանում սրանց, այդ նշանակում է, որ կամ չենք գործածում Աստծուց մեզ շնորհված այդ զորությունը և կամ բոլորովին զուրկ ենք դրանից, ինչ որ համազոր է ասելու, թե հոգեպես քրիստոնյա չենք, և հետևաբար չենք ստացել այդ անհրաժեշտ զորությունը» («Համաքրիստոնեական Սուրբեր», էջ 26):

Պողոս առաքյալը իր և քրիստոնյաների օրինակով հորդորում է դիմանալ նեղություններին. *«Մինչև այսօր և՛ քաղցած մնացինք, և՛ ծարավեցինք, և՛ մնացինք մերկ, և՛ բռնցքահարվեցինք, և՛ մնացինք անկայան, և՛ չարաչար աշխատեցինք մեր ձեռքերով. նախատում էին մեզ՝ օրհնում էինք, հայհոյում էին՝ աղոթում էինք» (Ա. Կորնթ. 4:11-13):*

Այսօր մեզանից ո՞ր մեկը կարող է դիմանալ Պողոս առաքյալի կրած չարչարանքներին ու նեղություններին. *«Հրեաներից, հինգ անգամ, քառասունից մեկով պակաս ծեծ կերա, երեք անգամ ձաղկվեցի, մեկ անգամ բարկոծվեցի. երեք անգամ նավաբեկության ենթարկվեցի. մեկ ցերեկ և մեկ գիշեր ծովի անդունդներում տառապեցի» (Բ. Կորնթ. 11:24-26):*

Հեթանոսաց առաքյալը ոչ միայն իր, այլև Հիսուսի նեղությունների մասին էլ է խոսում. *«Նայենք Հիսուսին՝ հավատի զորագլխին, այն կատարելագործողին, որն իր առաջ դրված ուրախության համար հանձն առավ խաչը, արհամարհեց ամոթը և նստեց Աստծու աթոռի աջ կողմում» (Եբր. 12:2):* Մեր Տերը Իր աշակերտներին զգուշացրեց գալիք նեղությունների ու դժվարությունների մասին. *«Աշխարհում նեղություն պիտի ունենաք...» (Հովհ. 16:33):*

Եթե քրիստոնյա ենք, պիտի հետևենք Մեծ Վարդապետի օրինակին և գնանք Իր քայլած ճանապարհով, թեկուզ և այն լինի փշոտ ու նեղություններով լի:

«Կարելի՞ է երևակայել մեր աշխարհը առանց քամու և փոթորիկի, առանց ձյունի և ձմեռի: Բույսերի աճման ու հատ-

կապես ամրացման մեջ կարևոր դեր ունեն դրանք: Մի ծառ ինչքան շատ շարժվի, այնքան անհնարին է իր արմատները ավելի խորացնելու. Որքան ցրտին ենթակա է լինում, այնքան կարծրանում է: Ամենաամուր փայտերը գալիս են հյուսիսային գոտիներից և բարձրաբերձ լեռներից: Հալածանքն էլ ծառայում է ամրացնելու հավատքը, եթե այն արմատ բռնել է» («Համաքրիստոնեական Սուրբեր», էջ 26),- ասում է Շնորհք Պատրիարքը:

Ուրեմն նեղությունը օգտակա՞ր է: Իրապես զարմանալի է նույնիսկ մտածել այս հարցի մասին: Այո՛, ասում է Հիսուս: Ինչպե՞ս: Նեղությունները մեզ առաջնորդում են երկու մեծ ու կարևոր ճանապարհների:

ա. Նախ «մեղքը փախչում է մեզանից» և բ. «Հավատի մեջ մեզ ավելի ամուր է պահում»: Բնականորեն ոմանք կարող են առարկել, *թե՝ «Ինչ անենք, թողնենք, որ այն (նեղությունը) կորստյա՞ն մատնի մեզ»:* Սխալ մտածում է ու հատուկ թերահավատներին: *«Ո՛չ թե նեղությունն է այդ անում, այլ՝ մեր ծուլությունը»: «Իսկ ինչ կարելի է անել դրանից խուսափելու համար»,* կարող է հարցնել մի ուրիշը: Եթե արթուն լինենք ու խնդրենք Աստծուն, որ մեր ուժից վեր մեզ փորձության չենթարկի: Եթե ճանաչենք և մեր մեջ Տիրոջը ունենանք, նույնիսկ եթե փորձություններն ու նեղությունները փոթորիկի պես ուժեղ փչեն, մեզ համար դրանք թեթև քամուց թռչող ճյուղ և տերև կարող ենք նկատել:

«Երբ տկար եմ, այն ժամանակ եմ զորավոր» (Բ. Կորնթ. 12:10),-ասում է Պողոս առաքյալը Կորնթացիներին ուղղած իր Երկրորդ թղթում:

«Կա մի գեղեցիկ պատմություն ոչխարի մասին, որը կաղում էր և հովիվից միայն հինգ մետր հեռու էր կանգնում: Մի անծանոթ հարցնում է այս ոչխարի մասին, թե ինչո՞ւ է կաղում և թե ինչո՞ւ իր կողքից երբեք չէր հեռանում: Հովիվը բացատրում է, որ տվյալ ոչխարը մասամբ խուլ է ծնվել և հովիվի ձայնը չի լսում: Այդ պատճառով էլ միշտ վտանգի մեջ է լինում: Շատ անգամներ նա փրկել է ոչխարին

վտանգից: Վերջ ի վերջո հովիվը ստիպված նրա սրունքին վնաս է հասցնում: Դրանից հետո ոչխարը սկսում է կաղալ, սակայն դրա փոխարեն հովիվի մոտից հեռու չի գնում ու զերծ է մնում վտանգից»:

Պողոս առաքյալը խոսում է նմանօրինակ կաղության մասին, որը անվանում է *«մարմնի փուշ»:* Դա մի տեսակ երկարատև հիվանդություն էր, որը մեծ անհանգստություն պատճառեց նրան:

Երբ կյանքում հասնում ենք մի տեղ, ուր մարդկային ուժը մեզ բավարար չէ շարունակելու մեր ճանապարհը, կարող ենք երկու կարծիք ունենալ կամ ձեռքերը վեր բարձրացնելով անձնատուր լինել և պարտությամբ մի կողմ քաշվել ու կամ էլ՝ Աստծուն գտնել և Նրա զորությամբ առաջ գնալ:

Մեր իսկական զորությունը մեր անզորության ու մեր թուլության մեջ է, որը մեզ մղում է Աստծուն խնդրել օգնության համար, որից հետո անօգնական մարդիկ դառնում են ամենակարող: Թեև մենք իբրև մարդիկ անօգնական ենք, սակայն կարող ենք *«ամեն բան անել Քրիստոսով, որը մեզ կուժեղացնի»:*

«Նեղությանս մեջ ես Տիրոջը դիմեցի և իմ Աստծուն աղաղակեցի.

Նա լսեց ինձ և իմ աղոթքի ձայնն իր սուրբ տաճարից,

Նրան ուղղված աղաղակս նրա ականջին է հասնելու» (Սաղմ. 17:7):

Ո՜վ Տեր մեր թուլություններն ու դժբախտությունները թող մեզ ավելի մոտեցնեն դեպի Քեզ, որպեսզի Պողոս առաքյալի նման Քո մեջ գտնենք ամեն բան կատարելու ուժը:

Եթե մեր հույսը Աստծու վրա դնենք, երբեք չենք նեղվի ու չենք հուսահատվի, նույնիսկ եթե կողոպտվենք, հալածվենք ու տեսակ-տեսակ նեղությունների մատնվենք, քանի որ երկնքում պիտի արձանագրվի մեր քա-

ջությունը: Այնտեղ հավաքենք մեր բարեգործությունները և այս կյանքի մասին շատ չմտահոգվենք, որովհետև ինչ էլ լինեն երկրի վրա՝ ամեն ինչ ստվեր է ու երազ:

Պողոս առաքյալն ասում է. *«Մեր թեթև նեղության առժամանակյա հաճախանքը (շարժումը) մեր մեջ առաջ է բերում հավիտենական փառք, որ գերազանցում է ամեն ինչ» (Բ. Կորնթ.* 4:17*):*

Մեր Տերը Լերան քարոզի Իր նշանավոր խրատականում ասում է.

«Երանի՜ է ձեզ, երբ ձեզ նախատեն ու հալածեն և իմ պատճառով ձեր մասին ամեն տեսակ չար խոսք՝ սուտ ասեն: Ցնծացե՛ք և ուրախացե՛ք, որովհետև երկնքում ձեր վարձը շատ է, քանի որ այսպես հալածեցին մարգարեներին, որոնք ձեզնից առաջ են եղել» (Մատթ. 5:11*):* Զարմանալի, բայց ճշմարիտ խոսքեր են: Իրապես իբրև քրիստոնյա այնքան ուժեղ հավատ պիտի ունենանք, որ մեզ հալածողներին կարողանանք շնորհակալություն հայտնել, քանի որ Աստված ասում է, որ մեր վարձքը երկնքում կստանանք: Դժվար գործադրելիք մի բան է սա մանավանդ այս փշոտ ու նյութապաշտ աշխարհում, սակայն անկարելի չէ, եթե ճշմարիտ և ուժեղ հավատ ունենք:

Պողոս առաքյալը խրատում է Կորնթացիներին. *«...Ինչքան բաժնեկից լինենք Քրիստոսի չարչարանքներին, նույնքան և Քրիստոսի միջոցով մեր մխիթարությունն էլ առավել կլինի. քանզի եթե նեղություն ենք կրում, այդ՝ ձեր մխիթարության և փրկության համար է...» (Բ. Կորնթ.* 1:5-6*):*

Եվ վերջապես՝ *«Ի՞նչ է նեղությունը, որ Հիսուսի և Նրա առաքյալների կողմից օգտակար է նկատվում»:*

Այս պատմությունը հետաքրքիր է.

«Միջին դարում մի ծուխի քահանա նկատելով, որ իր շրջանում աղքատները շատանում են ու նրանց զավակները դժվարությամբ են ապրում, դիմում է երևելի մի մեծահարուստի և օգնություն խնդրում նրանից: Հարուստը ոչ՝ միայն չի զլանում իր քսակը բացել, այլ կոպտորեն մերժում է քահանայի խնդրանքը ու անպատվում աղքատներին: Աստծու ծառան անտեսելով

նրա կոպտություններն ու վիրավորանքը, ամեն անգամ համառորեն աղքատների սիրույն խնդրում է, որ հարուստը օգնի նրանց:

Եվ երբ մի անգամ քահանան կրկին դիմում է նրան, մեծահարուստը այլևս չհամբերելով, ափերից դուրս է գալիս և բարկացած վիճակում ուժգնորեն ապտակում է նրան: Պատկերացրեք, եթե այդպիսի ապտակ ստացողը դուք լինեիք, ի՞նչ կանեիք, կլռեի՞ք, կթողնեիք ու կգնայի՞ք լուռ կուլ տալով վիրավորանքը, թե՝ դուք էլ ապտակով կպատասխանեիք: Գիտեմ, որ հիմա դժվար է ձեր կողմից որևէ պատասխան ստանալը: Ժամանակ է պետք, որ մտածեք: Տեսնենք, թե քահանան ինչպես վարվեց: Ինչպես վայել է Աստծու ծառային, համբերությամբ ու սառնարյուն կերպով, կարծես թե ոչինչ չէր պատահել, դիմում է մեծահարուստին ու հանգիստ ասում.

Շնորհակալ եմ, ես իմ բաժինը ստացա, հիմա խնդրում եմ մի բան էլ իմ աղքատներին տվեք:

Կարծես մի լույս է ծագում մեծահարուստի մտքում, սրտում ու հոգում և նա հուզված ու զղջացած, տալիս է քահանայի խնդրած գումարը և հազար անգամ ներողություն խնդրում իր կոպիտ արարքի համար»:

Մեր ժողովուրդը այսպիսի մի գեղեցիկ և ուսանելի արտահայտություն ունի. *«Մինչև որ քեզ չվնասես կամ նեղություն չտաս, չես կարող ուրիշին լավություն անել»:* Մի՛ մտածեք ձեր *«ես»-ի* մասին, այլ ապրեք ու գործեք *«մենք»- ի* գիտակցությամբ:

Յուրաքանչյուր քրիստոնյա պիտի հիշի իր Մեծ Ուսուցչի՝ Հիսուսի խոսքը. *«Երանի՜ նրանց, որ հալածվում են արդարության համար, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը» (Մատթ.* 5:10):

Ուրեմն պարզ է մեզ համար, թե իբրև քրիստոնյա ինչո՞ւ նեղություն պիտի ունենանք: Մտածենք այս մասին և եթե մեզ նեղություններ ու դժվարություններ ստեղծողներ կան՝ մեր Մեծ Վարդապետի նման ասենք. *«Հայր նե-րիր դրանց, որովհետև չգիտեն, թե ինչ են անում» (Ղուկ.*

23:34):

Նեղություններն ու դժվարությունները կարող ենք հաղթահարել միմիայն Աստծու և միմյանց նկատմամբ ունեցած մեր անշահախնդիր սիրով։

Պողոս առաքյալի այս գեղեցիկ խոսքը թող լինի իբրև վերջաբան. *«Եվ բոլոր նրանք, որ ուզում են աստված-պաշտությամբ ապրել Հիսուսով, հալածանքների մեջ պիտի լինեն» (Բ. Տիմ. 3:12):* Ամեն։

ԳՈՀԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՕՐ

«Գոհություն մատուցեցեք Տիրոջն ու օրհնեցեք անունը նրա: Քաղցր է Տերը, նրա ողորմությունը հավերժ է, նրա ճշմարտությունը՝ սերնդից սերունդ»
(Սաղմ. 99:4-5)

Սաղմոսերգուի այս խոսքը Աստծուն գոհություն մատուցելու մասին է: Գոհաբանության Տոնն է: Ամերիկայի Միացյալ Նահանգներում մի ամբողջ օր մարդիկ, քաղաքացիներ փառք ու գոհություն պիտի հայտնեն Աստծուն, որ ապրում են, ստեղծում ու մանավանդ փառաբանում Նրա անունը: Ամեն տարի մենք մեզ հարց ենք տալիս, թե՝ *«Ինչո՞ւ ենք փառք տալիս Աստծուն», «Արդյոք դրա կարիքը կա՞»: «Մի՞թե չենք կարող ապրել առանց Աստծու փառաբանության ու շնորհակալության»* կամ *«Ի՞նչ պիտի տա մեզ Աստծուց շնորհակալ լինելը»:*

Ահա այս հարցերն են, որոնք մեր մտքերը զբաղեցնում են ամեն տարի և շատ անգամներ նայելով մեր շրջապատին ու առօրյա կյանքին, մենք դրանց պատասխանները չենք կարողանում գտնել ու այդպես էլ անցնում է մի ամբողջ կյանք:

Գոհաբանության օրվա տոնակատարության նպատակն է գոհություն մատուցել Երկնավոր Հորը, այն բոլոր բարիքների համար, որոնցով օժտել է մեր երկիրն ու մեզ և մենք օգտվում ենք այդ բարիքներից: Դժբախտաբար, սակայն մեր երկրում տիրող նյութապաշտությունը և դրամի նկատմամբ ունեցած պաշտամունքը մի տեսակ դատարկել են մարդկանց այն գիտակցությունից, թե՝ *«ամեն մեզ տրված բարիք և պարգև երկնքից է իջել»* ու մենք այդ ստացողներս կարծես թե պարտադրված ենք գոհանալու Աստծուց: Երանի կարողանանք ո՛չ թե պարտադրաբար, այլ սիրով ամեն օր գոհանալ Աստծուց Իր տված բարիքների ու պարգևների համար և ամենօրյա մեր աղոթքների միջոցով փառք ու գոհություն հայտնենք Նրան:

Թեև Սուրբ Ծնունդը ամերիկյան Կոնգրեսի որոշումով ազգային տոն է, սակայն բոլոր Արևմտյան երկրներն էլ գիտեն, որ Սուրբ Ծնունդը հարձակման տակ է, ինչպես նաև տոնի հետ կապված կրոնական արարողությունները, որոնք հետզհետե կորցնում են իրենց իմաստը: Դժբախտաբար Ամերիկայի բնակչության կարևոր մասը, չասելու համար մեծ մասը, ինչպես նաև աշխարհում այլ ժողովուրդներ, թեքված են ավելի շատ այն արժեքների կողմը, որի բացատրությունը ամենակարճ ձևով կարելի է այսպես ամփոփել. *«Դրամը խոսում է ու ամեն բան շարժվում»:* Միակ բանը, որ մեզ մի քիչ մխիթարում է և հույս է տալիս, այն է, որ գոնե Գոհաբանության օրը պահպանվում է ակնածանքը Աստծու և Իր պարգևած բարիքների նկատմամբ: Արևելյան Եկեղեցիները Սուրբ Պատարագի ընթացքին Աստծուն փառաբանելու և գոհություն մատուցելու այս աղոթքն են ուղղում Տիրոջը. *«Ո՛վ Տեր, Քրիստոս Աստված, բոլոր ժամանակների Թագավորը և Արարիչը ամեն բանի, գոհություն ենք հայտնում Քեզ այն բոլոր բարիքների համար, որ շնորհել ես մեզ…»:*

«Ի՞նչ է նշանակում Աստծուն փառք տալ և մենք ինչպե՞ս պիտի գոհանանք Նրանից»:

Հետաքրքիր հարց է: Օրինակի համար լսում եք, որ ձեր ծանոթներից մեկը հիվանդ է և պառկած է հիվանդանոցում: Անմիջապես ձեր բոլոր գործերը թողնում եք ու գնում նրան այցելության: Ձեզ տեսնելով հիվանդի տրամադրությունը փոխվում է, ուրախանում է, ժամանակավորապես մոռանում իր ցավերը և ջերմորեն զրուցում է ձեզ հետ: Բավական ժամանակ մնալուց հետո, նրան առողջություն մաղթելով հրաժեշտ եք տալիս մի բարի գործ կատարողի բավարարվածությամբ: Ի՞նչ եք կարծում սա Աստծուն փառք տալ չի՞ նշանակում, չէ՞ որ դուք այս պահին ձեր այցելությամբ մի բարի և հրաշալի գործ կատարեցիք. հիվանդի տրամադրությունը բարձրացրիք՝ նրա մեջ հույս արթնացնելով կյանքի նկատմամբ: Եվ

այսպես տարբեր առիթներով՝ այցելություն ծնողներին, հարգանք նրանց նկատմամբ, սեր մարդկանց հանդեպ, համերաշխություն ընտանիքի անդամների և ինչո՞ւ չէ նաև աշխատանքի վայրում ձեր ընկերների հետ: *Բարություն, արդարություն, մաքրություն, համերաշխություն, խաղաղություն, սեր,* սրանք բոլորն էլ Աստծու հատկանիշներն են, որոնք Նա ներարկեց Իր նմանի՝ մարդու մեջ: Եվ այս բոլորը կատարելով, դուք փառք եք տալիս ձեզ Ստեղծողին և ո՛չ միայն փառք եք տալիս, այլ գոհանում եք ձեր ունեցածով: Փառք տալ նշանակում է գոհ լինել: Երանի՜ այդպես լիներ:

Փառք տվեք և շնորհակալ եղեք, որ ապրում եք: Իրականությունը դժբախտաբար այլ է.այսօր ավելի շատ բողոքողներ ու գանգատվողներ կան Աստծուց, քան՝ շնորհակալ և գոհ եղողներ:

Հրեշտակների մասին այս պատմությունը դրա վառ վկայությունն է.

«ԵՐԿՈՒ ՀՐԵՇՏԱԿՆԵՐ

Մի մարդ մահանում է ու գնում երկինք: Աստծու մոտ գնալու ճանապարհին նա տեսնում է երկու հրեշտակների: Նրանցից մեկը սուրճ էր խմում, գիրք էր կարդում և երբեմն էլ պատասխանում էր հեռախոսազանգերին: Երկրորդ հրեշտակը չափից ավելի զբաղված էր, նա ընդունում էր բազմաթիվ էլ-նամակներ, համակարգիչով պատասխանում էր շատ ու շատ հարցերի և այլ պարտականություններ կատարում: Մի խոսքով համեմատած առաջին հրեշտակի հետ, այս մեկը չափազանց զբաղված էր:

Մարդը բարկացած այսպիսի անարդարության դեմ, շարունակում է իր ճանապարհը: Երբ հասնում է Աստծու մոտ, վրդովված Նրանից բացատրություն է ուզում, ասելով.

«Տեր Աստված ես գիտեմ, որ Դու արդար, մաքուր ու անաչառ ես և բոլորի նկատմամբ էլ սիրով ես վերաբեր-

վում: Ես ուղղակի զարմացած եմ այն անարդարության վրա, որ տեսա իմ ճանապարհին»: Եվ պատմում է երկու հրեշտակների մասին ու սպասում պատասխանի:

Աստված ուշադիր լսելով նրան, ժպտալով պատասխանում է. *«Բայց վրդովվելու կարիք չունես, քանի որ ո՛չ մի անարդարություն էլ չկա այդտեղ: Առաջին հրեշտակը ընդունում էր այն մարդկանց շնորհակալությունը, որոնք ուղղված էին Ինձ: Տեսա՞ր չէ ինչքան քիչ էին զանգերը: Այդ հրեշտակը ծույլ-ծույլ սուրճ էր խմում, քանի որ շնորհակալություն հայտնող համարյա չկա երկրից: Իսկ երկրորդ հրեշտակը, որը չափից ավելի զբաղված էր, ընդունում էր մարդկանց բողոքներն ու գանգատները, որոնք ինչպես տեսար շատ ու շատ են»:*

Այս պատմությունը ցույց է տալիս, թե մարդիկ ինչքան սխալ ճանապարհի վրա են: Անընդհատ բողոքում են, նեղվում, բարկանում, մտահոգվում են և աղոթքի կյանքով էլ չեն ապրում: Երբ հարցնում ես. *«Ինչպե՞ս ես»,*-պատասխանը ժխտական է այսպես. *«Մի օր լավ կլինեմ»,* իսկ թե ո՞րն օրն է գալու այդ լավ օրը անշուշտ ո՛չ ինքը գիտի և ո՛չ էլ որևէ մեկը: Իսկ ճիշտ չի՞ լինի, եթե նա պատասխանի՝ *«Փառք Աստծու, շնորհակալ եմ իմ այսօրվա վիճակից»:* Այսպիսի մոտեցումը կոչվում է լավատեսություն, որը քեզ ուժ, հույս և լույս կտա խավարած ճանապարհին:

Հակառակ, որ աշխարհիկ արժեքների աստվածը՝ դրամն է տիրապետում, սակայն կան սովորություններ, որոնք դեռ պահպանվում են. օրինակ ճամբորդությունները, որով այցելում են իրենց հարազատներին, ընտանիքներով միասին անցկացնելն ու հնդկահավ ուտելը, աղոթելը և այլն:

Մեր Եկեղեցու Ժամագրքի մեջ Աստծուն գոհություն հայտնելու և փառաբանելու շատ գեղեցիկ աղոթքներ կան, սա դրանցից մեկն է: Եկե՛ք այս ուրախ առթիվ շնորհավորենք մեկս մյուսին, աղոթենք իրար հետ և գոհություն հայտնենք Տիրոջը.

«Գոհանում ենք Քեզանից, Տե՛ր Աստված մեր, որ Քո երևելի լույսով ուրախացրեցիր Քո բոլոր արարածներին, իսկ Քո պատվիրանների իմանալի լույսով լուսավորեցիր բոլոր նրանց, ովքեր հավատում են Քեզ: Զորացրու՛ և մեզ, Տեր՛, պահելու Քո պատվիրաններն այսօր և ամեն ժամ: Որպեսզի լուսավորված մտքով միշտ Քո կամքը կատարենք և գալիք բարիքներին հասնենք Քո բոլոր սրբերի հետ՝ մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի շնորհով և մարդասիրությամբ»: Ամեն:

ԱՌԱՏԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

«Յուրաքանչյուրը թող տա, ինչպես հոժար է սրտով և ո՛չ թե հարկադրաբար և տրտմությամբ, որովհետև Աստված սիրում է զվարթառատ տուրքը»

(Բ. Կորնթ. 9:7)

Այս խոսքերը Պողոս առաքյալի Կորնթացիներին ուղղած երկրորդ նամակի 9-րդ գլխի 7 համարից է. շարունակելով Առաքյալն ասում է. *«Եվ Աստված կարող է ամեն շնորհ շատացնել ձեր մեջ, որպեսզի ամեն ինչում ամենայն ժամ ամենայն բավականություն ստանալով առատանաք բոլոր բարի գործերում, ինչպես գրված էլ է. «Սփռեց և տվեց աղքատներին, նրա արդարությունը մնում է հավիտյան» (Բ. Կորնթ. 9:8-9):*

«Ի՞նչ է նշանակում առատաձեռն լինել, ինչո՞ւ պետք է առատաձեռն լինենք և ինչպե՞ս»:

Երբեմն կան մարդիկ, որոնք այսպիսի արտահայտություն են ունենում, երբ հարց է լինում աղքատներին, բարեսիրական հաստատություններին, հիմնադրամներին և այլ նպատակների համար օգնություն ցուցաբերելու, ասում են. *«Եթե ունենանք, անպայման կօգնենք»:* Ճիշտ խոսք չէ, ամեն մարդ կարող է այս պահին իր ունեցածից օգնել, ինչ որ ունի. իսկ վաղվա օրը Աստծուն է պատկանում:

Աստված ուզում է, որ մարդը նախ մաքուր, արդար ու անխարդախ հոգի ունենա և ապա բարի նպատակների համար իր նվերները կատարի, որպեսզի կարողանա շարունակել իր բարի գործերը աշխարհում, ինչպես որ Պողոս առաքյալն է ասում Եբրայեցիներին ուղղած իր նամակում. *«Մի՛ մոռացեք բարեգործությունը և ձեր ունեցած բարիքներին միմյանց մասնակից դարձնելը, քանզի այդպիսի պատարագներն են հաճելի Աստծուն» (Եբր. 13:16):*

Շատ մարդիկ կան, որոնք նվիրաբերելով նույնիսկ մեծ գումարներ, երբեք չեն ուզում, որպեսզի իրենց անունները որևէ տեղ հիշատակվեն: Այդպիսիները հրաշալի գիտեն Հիսուսի խոսքը, թե՝ *«Երբ դու ողորմություն անես, թող քո ձախ ձեռքը չիմանա, թե ինչ է անում աջը» (Մատթ. 6:3)* և կամ *«Վաճառեցե՛ք ձեր ինչքերը և ողորմություն տվեք. և ձեզ համար շինեցեք չհնացող քսակներ և անհատնում գանձեր երկնքում, ուր ո՛չ գողն է մոտենում, և ո՛չ ցեցը՝ փչացնում» (Ղուկ. 12:33):*

Շատ հարուստ և բարեգործ մարդիկ եղան պատմության ընթացքին, որոնք իրենց կենդանության ընդհանրապես չուզեցին որևէ հիշատակություն ունենալ, բայց իրենց մահից հետո մեր ժողովուրդը նրանց անունները անմահացրեց:

Այսպիսի խոնարհ մարդկանց կողքին դժբախտաբար կան մարդիկ, որոնք իրենց կենդանության ո՛չ մի բարի գործ չեն կատարում, այլ միայն հարստություն են հավաքում: Ո՛չ միայն ուրիշներին բարիք չեն անում, դըժբախտաբար իրենք էլ չեն վայելում:

Այս օրինակը դրա ցայտուն վկայությունն է.

«Մի մեծահարուստ շատ ունեցվածք էր հավաքել, բայց ո՛չ առանց մեղքերի: Երբ վերջին շնչում էր հարազատները նրան խրատում են, որպեսզի մտածի իր հոգու փրկության մասին: Բայց նա նման խոսքեր լսել չէր սիրում, սակայն մահճակալի մեջ այս ու այն կողմ շրջվելով ափսոսում էր, ի խորոց սրտի լաց ու կոծ էր անում և ողորմելի ձայնով ողբում էր.

Ավա՜ղ, ինչ մեծ չարչարանքով փորձեցի, որ հարստություն ձեռք բերեմ, և ահավասիկ ես չվայելեցի ուրիշները պիտի ժառանգեն ու վայելեն իմ գանձերը: Օ՜, ունեցվածք իմ, օ՜, հարստություն իմ, օ՜, մխիթարություն իմ սրտի, ո՞ւմ ձեռքը պիտի ընկնեք, ո՞ւմ պիտի թողնեմ ձեզ: Եվ այսպիսի խոսքեր ասելով սրտի նեղությունից մահանում է»:

Չնմանվենք այս պատմության մեջի դրամ, ունեցվածք, հարստություն ունեցող մարդուն, որը փոխանակ բարի գործ անելու, իր մահվան մահճում նույնիսկ մտածում է միայն, թե ո՞ւմ պիտի մնա իր ունեցածը: Ավա՛ղ, անցած փառքիս: Այլևս շատ ուշ է:

Մեր ունեցած նյութական հարստությունը եկե՛ք օգտագործենք այն հավատավոր հոգիների համար, որոնք մեր սիրո և օգնության կարիքն ունեն: Աշխատենք նյութական հարստության միջոցով ձեռք բերել ամենակարևորը՝ հոգևոր հարստությունը:

Հետաքրքիր մի խոսք էր գրված մահացած մարդու տապանաքարի վրա, որը կարող է դաս լինել վերևում հիշված մարդկանց նմանների համար. *«Ինչ որ տվել եմ՝ ունեմ, ինչ որ ծախսել եմ՝ ունեի, ինչ որ պահել եմ՝ կորցրել եմ»:*

Ի՜նչ մեծ դաս ունևոր ազահներին, որոնք արևի լույսի դեմ աչքները փակելուց հետո ամեն ինչ պիտի կորցնեն:

Մինչդեռ բանաստեղծ Վահան Թեքեյանի ձայնը հնչում է.

«Ինչ որ գնաց ուրիշին վերադարձավ անուշցած
Ու զորացած՝ հոգիիս մեջ մնալու հավիտյան»:

Տարիներ առաջ ծանոթ էի մի բարի մարդու: Զարմանալի մարդ էր, այն իմաստով, որ շատ անգամներ տարբերվում էր իր հասակակիցներից իր մարդկային արժանիքներով: Առատաձեռն էր: Սիրում էր մարդկանց օգնել և՛ դրամով և՛ խորհրդով: Իմ հարցին, թե ինչո՞ւ է այդքան առատաձեռն, նա պատասխանում էր. *«Աստված ասում է, քո ունեցածից բաժին հանիր կարիքավորներին, աղքատներին, տնանկներին, որպեսզի ավելիով քեզ տամ: Եթե աջ ձեռքով վերցնում եմ իմ աշխատանքի վարձը, քրտինքով վաստակածս, ձախ ձեռքով էլ այն պիտի բաժանեմ նրանց, ովքեր պետք ունեն իմ օգնության»:* Եվ իրապես էլ ինչքան ծախսում էր, այնքան Աստված նրան ավելիով էր տալիս: Ափսո՛ս, որ այդ մարդը այսօր հավիտենության մեջ է և

վստահ եմ, որ նա երկրի վրա արդեն իսկ երկնքում իր օթևանը ապահովել էր՝ բարությամբ, ազնվությամբ ու հավատով և անսահման սիրով իր ընտանիքի ու մեր ժողովրդի նկատմամբ:

Ադամ Քահանա Մակարյանն ասում է. *«Միմյանց հետ խոսակցության ժամանակ մարդկանց գիտակցությունը կարծես թուլանում և ուժգնանում է՝ կախված այն բանից, թե որքանով է զրուցակցի ասածը հետաքրքրում դիմացինին: Անգամ խոսակցության մեջ մարդիկ սիրում են շահը, սեփական օգտակարության համար որևէ բան ստանալը: Սակայն առաքյալը հիշեցնում է Քրիստոսի խոսքերը, թե՝ երանելի է մանավանդ տալը, քան առնելը (Գործք 20:35): Հետևաբար, երանելի է ողորմություն անելը: Փիլիսոփաներից մեկն ասում է, որ Ալեքսանդր մեծը թագավորություններ էր բաժանում, իսկ Ավետարանի այրի կինը ընդամենը երկու լումա էր գցում գանձանակը: Եվ չնայած նրանց տվածի չափը տարբեր է, բայց երկու դեպքում էլ նույն առատաձեռնությունն է դրսևորվում, որովհետև նրանցից յուրաքանչյուրը տվեց իր ունեցածից մեծագույնը: Դրա համար էլ քիչ ունեցողի քիչ տվածը շատ է համարվում, իսկ շատ ունեցողի քիչ տվածը համարվում է ժլատություն:*

Փիլիսոփա Կանտն ասում էր, որ արարքը լավն է, երբ արվում է պարտքի զգացումից, նույնիսկ առավել գնահատելի է այն դեպքում, երբ մարդը հակառակ իր ցանկության, բայց պարտքի զգացումից ելնելով՝ բարի բան է անում: Սակայն այս կարծիքին հակադրվում էր փիլիսոփա Շոպենհաուերը, ով պնդում էր, որ անգամ արվեստի գործերն արարվում են ո՛չ թե գեղագիտության չոր օրենքներով, այլ ներշնչումով ու ներշնչանքով: Նույնպես բարեգործությունը արժևորվում է գթասրտությամբ: Իսկ Պողոս առաքյալն ասում է. «Ինչ էլ անեք, ամեն ինչ արեք Աստծու փառքի համար» (Ա Կորնթ. 10.31), («Քրիստոնեության Իսկությունը» գրքից):

Հիսուս ասում է. *«Գանձեր, մի՛ դիզեք ձեզ համար երկրի վրա, ուր ցեց և ժանգ ոչնչացնում են, և, ուր գողեր պատերն են ծակում ու գողանում, այլ գանձեր դիզեցե՛ք ձեզ համար երկնքում··· քանի որ, ուր ձեր գանձերն են, այնտեղ և ձեր սրտերը կլինեն» (Մատթ· 6:19-21):* Սխալ չհասկանանք, Հիսուս չի ասում, թե դրամ չունենանք, այլ հորդորում է՝ չհավաքել, բարեգործություններ անել և օգնել նրանց, ովքեր դրա կարիքն ունեն։

Ուրեմն, հետևենք մեր Մեծ Վարդապետի խրատին ու փորձենք մեր այս ժամանակավոր կյանքում առատաձեռն կերպով նվիրել նրանց, ովքեր սպասում են մեր օգնության, առանց ակնկալիքի ու փոխադարձ վարձատրության, նույնիսկ կարող եմ ասել՝ առանց սպասելու շնորհակալության։ Աստված Ինքը վարձահատույց կլինի մեզ մեր առատաձեռնության համար, երբ մեր ժամանակը հասնի։ Ամեն։

ԱՆՁՆՈՒՐԱՑՈՒԹՅՈՒՆ

«Որը Աստծու կերպարանքով էր, բայց Աստծուն հավասար լինելը հափշտակություն չհամարեց, այլ իր անձը ունայնացրեց՝ ծառայի կերպարանք առնելով. մարդկանց նման լինելով և մարդու կերպարանքով խոնարհեցրեց ինքն իրեն»

(Փիլ. 2:6-8)

Այս խոսքը ես վերցրել եմ Պողոս առաքյալի Փիլիպպեցիներին ուղղած նամակի 2-րդ գլխի 6-րդ համարից, ուր նա խոսում է Հիսուսի Անձնուրացության մասին։

«Ի՞նչ է անձնուրացությունը, ինչպե՞ս մարդը կարող է զոհել իր անձը, կամ ինչպե՞ս կարող է այն նվիրել և զոհաբերել հանուն հայրենիքի և հանուն հավատի»։

Իր անձը ուրացողը արդեն պատրաստ է այն զոհելու իր սիրածի կամ հավատացած գաղափարի համար։ Որևէ անհատ մարդու կողմից կատարված զոհողություն իր մեջ պարունակում է մեծ սեր։ Անձնուրացությունը հակապատկերն է անձնասիրության։

Հայրենասիրության ու ազգասիրության զգացումները շատ անգամ մարդկանց մղում են անձնուրացության ի պաշտպանություն հայրենի հողի և ժողովրդի ազատության։

Ապրիլյան քառօրյա Արցախյան պատերազմը ցույց տվեց, թե մեր երիտասարդ՝ 18-20 տարեկան զինվորները ինչպիսի՞ անձնուրացությամբ, անձնազոհությամբ և քաջությամբ պաշտպանեցին մեր Հայրենիքի սահմանները ներս խուժած թշնամուց, իրենց ամենաթանկագինը՝ կյանքը դնելով Հայրենիքի զոհասեղանին ու մատաղ անելով այն։

Հիսուս և մեր քաջարի զինվորները իրենց անձնուրացությամբ և անձնազոհությամբ հրաշալի օրինակ են մեզ բոլորիս համար։

Մի մտածող ասել է. *«Անձնուրացությունը Աստծու հետ մի տեսակ ընկերակցություն է: Նրան քեզ բաժնեկից անելով, Նրա մոտ քո երջանկությամբ հետաքրքվելու տրամադրություն ես առաջացնում»:*

Պողոս առաքյալը վկայում է, թե՝ Հիսուս. *«Որը Աստծու կերպարանքով էր, բայց Աստծուն հավասար լինելը հափշտակություն չհամարեց, այլ իր անձը ունայնացրեց՝ծառայի կերպարանք առնելով. մարդկանց նման լինելով և մարդու կերպարանքով խոնարհեցրեց ինքն իրեն՝հնազանդ լինելով մինչև մահ և այն էլ մահվան՝խաչի վրա»:*

Այս պատմությունը զոհողության սքանչելի օրինակ է.

«Շվեդիայի թագավորը, պատերազմի ամենածանր պահին, երբ տեսնում է, որ զինվորները ռազմադաշտը լքում ու խուճապահար փախչում են, ձիուց իջնում է և բարձրաձայն կանչում նրանց.

Ո՞ւր եք փախչում ա՛յ վախկոտներ, գոնե մի րոպե կանգնեք, որ տեսնեք, թե ինչպե՞ս է մեռնում ձեր թագավորը:

Այս խոսքերը լսելով, զինվորները ուժ են առնում, վերադառնում են ճակատ և հերոսական դիմադրությունից հետո, թեև թշնամին պարտված նահանջում է, բայց ծանրորեն վիրավորված թագավորը, մի քանի րոպե հետո մահանում է»:

Երբ Հուդան Հիսուսին մատնեց և զինվորները Նրան բռնեցին, առաքյալները վախեցան ու փախան: Նույնիսկ Պետրոս առաքյալը, ով իրեն անվախ ու քաջ էր համարում, պատրաստ մեռնելու Հիսուսի հետ, երեք անգամ վախի պատճառով ուրացավ Նրան: Սակայն Հիսուսի զոհողությամբ և ապա մեռելներից Հարությամբ առաքյալները վերստին ուժ առան ու լցվելով Մխիթարիչ Սուրբ Հոգու շնորհներով՝ անվախ քարոզեցին՝օրինակ ունենա-

լով Մեծ Վարդապետին և իրենց նահատակությամբ ամուր հիմքերի վրա դրեցին Քրիստոնեությունը։

Կյանքը այնքան էլ հեշտ չէ, մարդիկ այսօր *«կե՛ր, խմի՛ր և ուրախ եղի՛ր»-ի* տրամաբանությամբ են շարժվում, որը աշխարհում դժբախտաբար համատարած երևույթ է դարձել։ Անձնուրացության հարյուրավոր օրինակներ ունենք պատմության մեջ, սակայն ցայտուն օրինակներից մեկն է հանդիսանում Հիսուսի աշակերտներից Հովսեփ Արեմաթացին, ով Նրան խաչից իջեցրեց և իր անձի համար պատրաստել տված գերեզմանը տրամադրեց Նրա մարմնին։

Երբ մեկը մի օգտակար ծառայություն է ուզում կատարել, անպայման կարևոր է, որ մոռանա իր անձը, իր հանգիստը, իր դիրքը և իր օգուտը։ Եթե ուզում ենք նվիրվել, չենք կարող որևէ բանից օգուտ ակնկալել։ Եթե մտածենք մեր օգուտի մասին և այդ տեսակետից անձնական օգուտի ակնկալություն ունենանք, այդ պահից կդադարի մեր ծառայությունը նվիրում ու անձնուրացություն լինելուց։

Իր անձը ուրացողը նման է խունկի ու մոմի։ Նա լուսավորում է ուրիշին ինքնիրեն հանգցնելով և անուշահոտությամբ ուրախացնում է՝ դարձյալ ինքնիրեն զոհելով։ Ճիշտ այստեղ է անձնուրացության գաղտնիքն ու խորհուրդը;

Սողոմոն իմաստունը, ով ամեն տեսակ փառքեր ու վայելքներ տեսավ, սակայն Աստծու փառքը առաջնային համարեց, ասում է. *«Բարի անունը հարստությունից ավելի լավ է»։*

Պատմության մեջ շատ մարդիկ կան, որոնք իրենց անունները արյունով գրեցին նրա էջերում, ինչպես՝ Ներոնը, Աբդուլ Համիդը, Էնվերը, Թալեաթը, Հիտլերը, Ստալինը և ուրիշներ, որոնք անմահացել են իրենց ոճիրներով ու դարեր շարունակ անեծքներ պիտի ընդունեն, թեև ժամանակին իրենց վատությունը արեցին ու միլիոնավոր

մարդիկ մեռան։ Երանի՜ նրանց, ովքեր պատմության մեջ և կամ մարդկանց սրտերում օրհնյալ անուն կթողնեն ու կանմահանան։

Պապիսիոս Աթոսացին ասում է.

«Մեղավոր մարդիկ մյուս կյանքում իրենց ցանկությունների պատճառով պիտի տառապեն։ …

Ինչ նշանակություն, որ բենզինն ունի մեքենայի համար, այդպես էլ սիրտն է հոգևոր կյանքի համար։ Մարդն ինչ-որ ի սրտե է անում, չի հոգնեցնում նրան։ Դրա համար էլ բոլոր նրանք, ովքեր ինձ հարցնում են՝ ի՞նչ սովորել, պատասխանում եմ՝ ինչ որ սիրում եք։ Հատկապես որոշ մասնագիտություններ, ինչպես օրինակ՝ բժիշկ, մանկավարժ, շատ անհրաժեշտ է, որ մարդը դրանք սիրի։ Հոգևոր կյանքում էլ, աղոթքին սիրտն էլ պետք է մասնակցի։

Հոգևոր կյանքը մեծ անձնուրացություն և բարեխղճություն է պահանջում» («Խրատներ»)։

Դժբախտաբար շատ մարդիկ անձնուրացությունը հիմարություն և նույնիսկ ծիծաղելի են համարում, որովհետև նրանց ավելի հետաքրքրքրում է շահը, հաճույքներն ու վայելքները։ Նրանց երկրպագության առարկան դրամն է։ Այսպիսի մարդիկ կյանքը մսի ու ոսկորի բաժինն են կարծում և անմահությունը երազում են դրամի զորությամբ ու նրա միջոցով։

Պողոս Պատրիարք Ադրիանուպոլսեցին ասում է. *«Այս աշխարհը կառավարվում է Աստծու իմաստությամբ, նախախնամվում Նրա ողորմությամբ ու արդարությամբ, որ չգիտի վրիպել կամ որևէ մեկին անիրավել։ Քանզի վտանգներն էլ՝ երկնքից, երկրից, տարերքներից կամ մարդկանց անիրավությունից եկող, ո՛չ թե պատահականորեն են հասնում մարդկանց, այլ ըստ Աստծու անքնին դատաստանների՝ ըստ այսմ. «Ո՛չ արևելքից, ո՛չ արևմուտքից, ո՛չ էլ լեռների անապատից, այլ Աստված է դատավոր» (Սաղմ. 74:7)։*

Ուրեմն՝ կարճամիտների լեզուները թող պապանձվեն՝ չխոսելու ընդդեմ Աստծու նախախնամության ու դատաստանի, այլ միայն գոհանան նրանից, որ ամեն ինչ արեց ու միշտ անում է բարվոք կերպով»:

Եկե՛ք հետևենք Պողոս Պատրիարքի խրատին ու մեր հույսը դնելով Աստծու վրա, փորձենք օգտակար հանդիսանալ մեր նմաններին առանց որևէ շահի ակնկալության, սիրով ու հավատով, նվիրումով և զոհողությամբ ու վստահ եղեք, որ Տիրոջ օրհնությունը միշտ մեզ հետ պիտի լինի: Ամեն:

ԿԵՂԾԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

«Հիսուս հասկացավ նրանց խորամանկությունն ու ասաց. «Ինչո՞ւ եք ինձ փորձում, կեղծավորներ»
(Մատթ. 22:18)

Որպեսզի կարողանանք լրիվ հասկանալ, թե Հիսուս ինչո՞ւ ասաց այս խոսքը և ո՞ւմ համար, պիտի կարդանք Մատթեոս Ավետարանչի 22-րդ գլխի 15-17 համարները. *«Այն ժամանակ փարիսեցիները գնացին խորհուրդ արեցին նրա մասին, թե ինչպես խոսքերով նրան որոգայթ լարեն: Եվ նրա մոտ ուղարկեցին իրենց աշակերտներից ոմանց՝ հերովդեականների հետ միասին և ասացին. «Վարդապե՛տ, գիտենք, որ ճշմարտախոս ես և Աստծու ճանապարհը ճշմարտությամբ ես ուսուցանում, և ո՛չ մեկից չես քաշվում ու ո՛չ մի մարդու աչառություն չես անում: Արդ, ասա՛ մեզ, ինչպե՞ս է քեզ թվում, պե՞տք է հարկ տալ կայսրին, թե՞ ոչ»:*

«Հիսուս հասկացավ նրանց խորամանկությունն ու ասաց. «Ինչո՞ւ եք ինձ փորձում, կեղծավորնե՛ր, ինձ հարկի դահեկան ցույց տվեք»: Եվ նրանք մի դահեկան բերեցին: Եվ նա ասաց նրանց. «Այս պատկերը կամ գիրը ո՞ւմն է»: Նրանք ասացին՝ կայսրինը: Այն ժամանակ նրանց ասաց. «Գնացեք տվեք կայսրինը՝ կայսեր և Աստծունը՝ Աստծուն» (Մատթ. 22:15-22):

Երեմիա մարգարեն ասում է. *«Նրանց նենգավոր լեզուները խոցոտող նետ են: Նրանց բերանի խոսքերը իրենց ընկերոջ հետ խաղաղության մասին են խոսում, իսկ նրանք իրենց սրտում թշնամություն ունեն» (Երեմ. 9:8):*

Շահ փնտրող և հաճելի երևացող մարդիկ շատ անգամ խաբում են նաև իրենց ղեկավարին, որովհետև շրջապատելով նրան շողոքորթում են: Զարմանալիորեն ղեկավարը ավելի նախընտրում է գործ ունենալ այսպիսի մարդկանց, քան նվիրյալ ու խելացի անձերի հետ:

Սաղմոսաց գրքում ասվում է։ *«Աստված ցրելու է երեսպաշտների ոսկորները» (Սաղմ. 52:6)։*

Միամիտ պիտի լինենք, եթե հավատանք շողոքորթներին։ Նրանք մեր երեսին ծիծաղում են և հաճոյանում, բայց դա անում են, որպեսզի գողանան մեր սրտի գաղտնիքները ու խաբեն հօգուտ իրենց։

Հիսուս դիմելով փարիսեցիներին ասում է. *«Այժմ դուք՝ փարիսեցիներդ, բաժակի և ամանի արտաքինն եք մաքրում, իսկ ձեր ներքինը լի է հափշտակությամբ և չարությամբ։ Անմիտնե՛ր, չէ՞ որ նա, ով արտաքինը ստեղծեց, նաև ներքինը ստեղծեց։ Բայց տեսե՛ք, թե ինչն է իսկապես արժան. ողորմությո՛ւն տվեք, և ահա ձեր ամեն ինչը մաքուր կլինի» (Ղուկ. 11:39-41)։*

Մի՞թե ժամանակավոր մարդը կարող է ուժեղ լինել ու միշտ հրամայող։ Այնպիսի բռնակալ-ուժեղներ են աշխարհ եկել ու գնացել, առանց դույզն իսկ մի հետք թողնելու։ Բռնակալները միշտ էլ շրջապատված են եղել կեղծավորներով, շողոքորթներով ու գիշեր-ցերեկ նրանց գովեստի խոսքեր ասողներով։ Ոչինչ հավիտենական չէ, նույնպես էլ բռնակալները։

«Թագավորի զորությունը և Սիրո Կայսրությունը.

Ժամանակին, Անգլիական արքունիքում պալատականները թագավորի մոտ տեղ ունենալու համար, գովում էին նրա սիրագործությունները։

Թագավորը լավ էր ճանաչում նրանց իբրև հիվանդ կեղծ գովեստներ շռայլողներ։ Եվ մի օր էլ նրանց տանում է ծովեզերք ու սուրը մերկացնելով ասում իր ոտքերը թրջող ալիքներին·

Ես, Անգլիայի և Գաղթավայրերի ամենազոր թագավորը, հրամայում եմ ձեզ, որ կանգ առնեք և չթրջեք ոտքերս։

Ծովը չի լսում սակայն արքայական այս ազդու հրամանը և ավելի ուժեղ մի ալիք արագ ձևով բարձրա-

նալով ամբողջ մարմնով թրջում է թագավորին ու պալատականներին:

Հիմա հասկացա՞ք, թե ինչքա՞ն թույլ է ձեր գոված թագավորի զորությունը,- ասում է նա դառնալով իր պալատականներին,- որ նույնիսկ մի ալիքի կողմից անգամ հանդիմանվում է ու անպատվում» (Վարդան Ա.Ք. Դուլգերյանի «Արձակ և չափածո մանրավեպեր» գրքից):

Կեղծավորները կարելի է ասել աշխարհի ամենավատ նկարագիր ունեցող մարդիկ են: Շատեր զոհ են գնացել նրանց արարքներին և բազմաթիվ ընտանիքներ քանդվել են նրանց երեսից: Ի՞նչ է նրանց շահը. դրամ, դիրք ու ձրի պատիվ: Սրանց հասնելու համար նրանք մոռանում են կյանքի ամեն սկզբունք և նույնիսկ՝ ոտքի տակ ընկնելով, ծռմռվելով, հազար ու մի տեսակ ձևեր և արարքներ կատարելով, փորձում են ամեն գնով հասնել իրենց նպատակին:

Դժբախտաբար ցավ ի սիրտ աշխարհը լցված է կեղծավորների *«բանակով»*, որոնք սրբություն չունեն. նրանք ինչի ասես ընդունակ են՝ *լրտեսության, մատնության, ստորաքարշության, վատության, չարության, նենգության* ու այդ ճանապարհին նրանք չեն խնայում նույնիսկ իրենց հարազատներին և ընկերներին ու առանց խղճի խայթ զգալու, դաշունահարում են նրանց մեջքից, Հուդայի համբույր տալով:

Մեր Տերը զգուշացնում է բոլորին. *«Երբ ողորմություն անես, փող մի՛ հնչեցրու քո առջև, ինչպես անում են կեղծավորները ժողովարաններում և հրապարակներում» (Մատթ. 6:2): «Եվ երբ կաղոթես, չլինես կեղծավորների նման» (Մատթ. 6:5))* ու շարունակում է.

«Կեղծավո՛ր, նախ հանիր քո աչքից այդ գերանը և ապա հստակ կտեսնես՝ քո եղբոր աչքից շյուղը հանելու համար» (Մատթ. 7:5):

Խիստ հատկանշական է պատվերը, որովհետև այն ի հայտ է բերում մարդու նկարագրի հոռի երևույթներից մեկը՝ կեղծավորությունը։…

«…Անկեղծ մեղավորը, գիտակից գործած իր մեղքին, ո՛չ միայն ճշմարտորեն է զղջում ու ապաշխարում, այլև գործնական միջոցներ է ձեռք առնում, որպեսզի նույն մեղքը չգործի ուրիշ անգամ։ Ինչ պիտի արժի զղջումն ու ապաշխարությունը, եթե մի քանի ժամ հետո կրկին պիտի մեղանչենք։ Այս ճշմարիտ երևույթի առնչությամբ, ինչքան ճիշտ է մի բարոյագետի բերած հետևյալ օրինակը՝ թե երբ մարդը մի կեղտոտ բան ունի իր ձեռքում, նա ինչքան էլ փորձի իր ձեռքերը լվանալ նույնիսկ ամբողջ ծովերի ջրերով, չպիտի մաքրվի, սակայն եթե ձեռքի կեղտոտ բանը նետի, այն ժամանակ մի բաժակ ջուրն էլ բավական պիտի լինի կեղտոտ ձեռքերը մաքրելու» (Բարկեն Վրդ. Թոփչյան, «Քարոզներ»)։

Կեղծավորները իրենք իրենց առանձնաշնորհյալ և ընտրյալ մարդիկ են կարծում ու հակառակ իրենց իմացական և հոգեկան բոբիկության, խնջույքների, համերգների, հանդեսների ու զանազան այլ միջոցառումների ժամանակ, միշտ աշխատում են նստել ամենաառաջին աթոռներին, որպեսզի բոլորի ուշադրության կենտրոնում լինեն *«իբրև թե պատվավոր մարդիկ են»։*

Բավական դժվար է կեղծավորներին զանազանելը մաքուր ու անկեղծ մարդկանցից, սակայն ժամանակը ուշ թե շուտ այն ցույց է տալիս ու ամեն ինչ ջրի երես է դուրս գալիս։ Ավետարանը մեզ զգուշացնում է հեռու մնալ նրանցից։

Լսենք Տիրոջ ձայնը.

«Վա՛յ ձեզ կեղծավորներիդ՝ օրէնսգետներիդ և փարիսեցիներիդ, որ երկնքի արքայությունը փակում եք մարդկանց առաջ. դուք չեք մտնում և մտնողներին էլ թույլ չեք տալիս, որ մտնեն»։

«Վա՜յ ձեզ կեղծավորներիդ՝ օրենսգետներիդ և փարիսեցիներիդ, որ շրջում եք ծովի ու ցամաքի վրա, անգամ մեկին նորահավատ դարձնելու համար, և երբ նա այդպիսին է դառնում, նրան ձեզանից կրկնակի անգամ ավելի գեհենի որդի եք դարձնում»…:

«Վա՜յ ձեզ կեղծավորներիդ՝ օրենսգետներիդ և փարիսեցիներիդ, որ տալիս եք անանուխի և սամիթի ու չամանի տասանորդը, բայց թողել եք օրենքի ամենից կարևորները՝ արդարադատությունը, ողորմությունը և հավատը. հարկ էր այս անել և այն չթողնել…Կո՛ւյր առաջնորդներ, որ մժղուկները քամում եք և ուղտերը կուլ եք տալիս» (Մատթ. 23:13-16, 23-24, 27-28):

Փորձենք ապրել մաքուր ու արդար կյանքով՝ առանց կեղծավորության: Ամեն:

ԻՆՔՆԱԽԱԲԵՈՒԹՅՈՒՆ

«Իմ բարկության մեջ ես ասացի,
թե հավետ չեմ սասանվի»
(Սաղմ. 29:7)

Այս խոսքը ես վերցրել եմ Սաղմոսաց գրքի 29-րդ գլխի 7-րդ համարից, որտեղ Սաղմոսերգուն մեզ բացատրում է Ինքնախաբեության մասին:

Մարդիկ կան, որոնք *փառասեր, ինքնահավան, անձնասեր ու հպարտ են:* Սրանք կարելի է ասել գլխավոր պատճառներն են, որ մարդը ինքն իրեն խաբելու վիճակն ունենա: Իրապես ողբալի և վերին աստիճանի ցավալի է, երբ մարդը ինքն իրեն փորձում է խաբել:

«Ի՞նչ է ինքնախաբեությունը, ինչպե՞ս մարդ կարող է ինքն իրեն խաբել, ինչո՞ւ են մարդիկ հաճախ իրենց դնում այս վիճակի մեջ, ի՞նչն է պատճառը»:

Այսպիսի հարցեր են ծագում մեր մտքում, երբ մտածում ենք այդ մասին:

Կան մարդիկ, որոնք կարծում են, թե իրենք ուրիշներից ավելի խելացի ու ճարպիկ են, սակայն նրանք այս ձևով իրենք իրենց են խաբում:

Հայրենի գրողներից Ռաֆֆին ասում է.

«Ինքնախաբեությու՛ն…դա մի շատ հասարակ բառ է, բայց նրա մեջ թաքնված են մարդու բոլոր թշվառությունները: Տեսնում ես մեկը հիմար է, բայց կարծում է, թե խելք ունի: Մյուսը երկչոտ է, կարծում է, թե առյուծի սիրտ ունի: Երրորդը ոչինչ չէ սովորել, բայց իրան հանճար է երևակայում: Չորրորդը չարագործ մեկն է, բայց իրան առաքինության տիպար է համարում: Այս բոլորը առաջ է գալիս ինքնախաբեությունից:

Ինքնախաբեությունը մի աչք միայն ունի, և նա ամեն բան լավ կողմից է տեսնում: Նրա մյուս աչքը կույր է տգեղություններ, այլանդակություններ և մոլություններ տեսնելու համար: Եվ այս պատճառով այն թշվառականը,

որ մի այդպիսի ողորմելի դրության մեջ է գտնվում, միշտ գոհ է իր վիճակից, որովհետև իր մեջ թերություններ չէ տեսնում: Եվ դրա համար նա միշտ անշարժ է մնում. ո՛չ մի ձգտում դեպի առաջադիմություն և ո՛չ մի պահանջ կյանքից չունի. իրան ամեն բանով լիացած է համարում: Ինքնախաբեությունը բարոյական ինքնասպանություն է. մի մեռելություն է, որի մեջ մարդկային բոլոր կրքերը հանգիստ են»:

Ինքնախաբեության և ագահության ցայտուն օրինակ է Ավետարանի մեծահարուստի մտածելակերպը. *«Գիտեմ ինչ կարող եմ անել, քանի որ բերքս կուտակելու տեղ չկա: Գիտեմ,- ասաց նա,- թե ինչ պետք է անեմ. կքանդեմ իմ շտեմարանները և ավելի մեծերը կշինեմ ու այնտեղ կհավաքեմ ցորենը և իմ ամբողջ բարիքները. ու ինքս ինձ կասեմ՝ ո՛վ մարդ, շատ տարիների համար ամբարված բազում բարիքներ ունես, հանգի՛ստ արա, կե՛ր, խմի՛ր և ուրա՛խ եղիր»: Աստված նրան ասաց. «Անմի՛տ, հենց այս գիշեր հոգիդ քեզնից պահանջելու են, իսկ ինչ որ պատրաստել ես, ո՞ւմն է լինելու» (Ղուկ. 12:18-21):*

Գալիս ենք ու գնում: Երկու բան չգիտենք՝ մեր ծընունդը և մահը: Ծնունդից մինչև մեր մահը ընկած ժամանակն է, որ մերն է: Թե մենք ինչպե՞ս պիտի անցկացնենք այդ ժամանակամիջոցը, կախված է մեզանից: Հարստությա՞մբ, թե՞՝ իմաստությամբ, բարի ու արդար գործերո՞վ, թե՞՝ չար գործերով: Սակայն մեր այս կյանքի համար մի օր պատասխան պիտի ստանանք Տիրոջից, եթե վարվենք ագահ ու ինքն իրեն խաբող Ավետարանի մեծահարուստի նման:

Հիսուս էլ փորձության ենթարկվեց: Սատանան նրան առաջարկեց քարերը հացի վերածել, սակայն մեր Տերը չխաբվեց նրան: Մեծագույն սխալը կլիներ, եթե քարերը հաց դառնային: Այդ հրաշքը անբնական կլիներ, իսկ Հիսուսի բոլոր հրաշքները բնական ու աստվածային էին և

այդ բոլորը կատարվեցին Աստծու Որդու զորության միջոցով:

Մարդիկ կան, ովքեր կարծում են, որ իրենց հույսը դնելով միայն Աստծու վրա, ամեն ինչի պիտի հասնեն: Սա ինքնախաբեություն է: Մարդուն Աստծու կողմից տրված է նաև՝ *խելք, խիղճ և անկոտրում կամք,* որպեսզի այդ բոլոր օգտագործելով հասնի ամեն ինչի ու Աստծուն փառք տա:

Այս պատմությունը կոչվում է *«Անզոր աղվեսը»,* որը ուսանելի է.

«Բարեպաշտ մի մարդ անտառում տեսնում է մի աղվեսի, որը ոտքեր չուներ:

Նա ցանկանում է իմանալ, թե ինչպե՞ս է աղվեսը այդքան ժամանակ կենդանի մնացել: Եվ սպասելով որոշ ժամանակ ու տեսնում է մի վագրի, որը ատամներով բռնել էր որսը: Մի քիչ ուտելուց հետո, վագրը մնացածը տալիս է աղվեսին: Հաջորդ օրը գնալով, մարդը տեսնում է նույնը:

Վերադառնալով անտառից՝ մարդը մտածում է Աստծու ողորմածության մասին:

Եվ հանկարծ նա ինքն իրեն մտածում է. «Ես նույնպես կպառկեմ մի անկյունում և հույսս կդնեմ Աստծու վրա»: Ա՛յ քեզ հիմար տրամաբանություն:

Մի ամբողջ շաբաթ մարդը ծույլ-ծույլ պառկում է անկողնում ու տանից դուրս չի գալիս: Բնական է ոչ մի սնունդ չուտելով, նա ահագին հյուծվել էր, երբ հանկարծ լսում է մի ձայն, Ով նրան ասում է.

Ո՛վ դու, սխալ ճանապարհով քայլող, բաց աչքերդ և հասկացիր ողջ ճշմարտությունը: Օրինակ վերցրու ոչ՛ թե աղվեսից, այլ՝ վագրից» («Գեղեցիկ ապրելու գաղտնիքները» գրքից):

Ի՞նչ գեղեցիկ օրինակ է, այո՛, օրինակ պետք է վերցնենք բարի գործ անողից, ո՛չ թե այն ընդունողից:

19-րդ դարի մեր հոգևորականներից՝ Գևորգ Եպիսկոպոսը ցույց է տալիս ինքնախաբեության ճշմարիտ ճանապարհը իր այս խրատի մեջ, որը վերաբերում է ո՛չ

միայն Հիսուսի ժամանակվա փարիսեցիներին ու սադուկեցիներին, այլ նաև մեզ բոլորիս, երեկվա և այսօրվա ապրողներիս։ Բացե՛նք մեր աչքերը ու ինքներս մեզ չխաբենք.

«Ահա մեկը, որ բարեպաշտի անուն է վայելում։ Ի՞նչ է անում, հաճախ ժամ է գալիս, սրբերի առաջ մեծ-մեծ մոմեր տնկում, չոգում ու երկար աղոթում, քահանային հիշելիք տալիս, երբեմն աղքատին էլ չի մոռանում՝ բուռը կոպեկ է դնում, պատարագ է անել տալիս, ծնողների գերեզմանը օրհնում և այլն և այլն։

Այս բոլորը լավ, բայց մի՞թե սա է ճշմարիտ բարեպաշտությունը, մի՞թե սա է Փրկչի հոգով և ճշմարիտ երկրպագունը, մի՞թե նույնը չի կարող անել մի անհավատ և կամ անտարբեր մեկը։ Հիսուս ջերմ հոգի է ուզում, որ հասկանա օտարին և սիրի նրան։ Սակայն ո՞ւր որոնենք այդ հոգին։…

Ահա ձեզ հարուստ դասակարգը. ինչպես է հասկանում նա յուր պարտքը դեպի յուր աղքատ եղբայրը, ինչո՞վ է կապված նրա հետ. մի արտաքին կապով, որ չի բխում կարեկցությունից և սիրուց, այլ անձնասիրությունից։ Մի ցուցադրական շարժում է անում հարուստը յուր ավելորդը նվիրելով կարոտյալներին՝ և արդեն կատարած է համարում յուր քրիստոնեական պարտքը դեպի ընկերը. բայց այս պարտաճանաչություն չէ, այլ լոկ մի շարժում յուր անունը հավերժացնելու, աժան ժողովրդականություն վայելելու նպատակով կատարված։

Սակայն ո՞ւր է ներքինը, որին այնքան կարոտում է աղքատը՝ կյանքի ծանր խաչը թեթևացնելու, յուր թշվառությունը մոռնալու համար։ Ո՞ւր է հարուստի քաղցր խոսքը, բարեկամական վերաբերմունքը, եղբայրական հովանավորությունը, որ սրտի կապ է հաստատում մարդոց մեջ և հոգևոր մխիթարություն պատճառում։

Այսպես ուրեմն ճշմարիտ բարեպաշտները ներքնապես կենդանի ու Աստուծով բոցավառ հոգիներն են, որ ընդունակ են անձնվեր գործելու և եղբայրասեր ապրելու,

որ միայն կարող է մարդուն երջանկացնել, դժողքը դրախտի վերածել, երկիրը երկնքի փոխել» («Քարոզներ»)

Երբ մարդիկ հասկանան, թե այսօր իրենց վերջին օրն է, վստահորեն պիտի փորձեն ապրել անխարդախ ու պարկեշտ մի կյանքով։ Ինչ որ պիտի անենք, այսօր անենք. օրինակ՝ եթե հիվանդ ունենք, աշխատենք այսօր այցելել, չթողնենք վաղվան ու փորձենք օգնել նրան մեր ներկայությամբ, եթե մեկը սգավոր է, գնանք ու մխիթարենք նրան, այցելենք ծերանոցները՝ մեծահասակներին, ժամանակ անցկացնենք նրանց հետ, ժպիտ պարգևենք նրանց մեր ներկայությամբ, սիրով և հարգանքով ուրախություն պատճառենք մեր ծնողներին ու չմոռանանք նրանց։ Ապրենք խաղաղ կյանքով, չվիրավորենք ու չզրպարտենք ուրիշներին, չխլենք նրանց նյութական ու բարոյական իրավունքները և մանավանդ չխաբենք մենք մեզ, թե ամենակարող ու ամենագետ ենք։ Հիշենք, որ նույնիսկ ամենատկար մարդն էլ կարող է օգտակար լինել ամենաուժեղին։

Սաղմոսերգուն զգուշացնում է ինքնախաբեությամբ տառապող մարդկանց. *«Իմ բարկության մեջ ես ասացի, թե հավետ չեմ սասանվի»։*

Միշտ պիտի հիշենք, որ անսասանը, մնայունն ու հավիտենականը միայն Աստված Ինքն է: Ամեն։

ՔԱՆՔԱՐՆԵՐԻ ԱՌԱԿԸ

«Արդ, դրանից առեք այդ քանքարը և
տվեք նրան, ով տասը քանքար ունի»
(Մատթ· 25:28)

Առաջին հայացքից այս խոսքերը զարմանալի և նույնիսկ կարելի է ասել դաժան են թվում ու մենք ակամայից մտածում ենք, թե՝ *«Ո՞ւր է մարդկային խիղճը, ո՞ւր մնաց արդարության և եղբայրութեան ոգին»:*

Մատթեոսի Ավետարանի 25-րդ գլխի 14-30 համարներում Հիսուս պատմում է մի առակ. *«Մի հարուստ մարդ հեռավոր երկիր գնալուց առաջ կանչում է իր ծառաներին ու ամեն մեկին որոշ գումար տալով, պատվիրում է, որ դրանք գործի դնեն և իր վերադարձին ավելիով ետ վերադարձնեն: Առաջին երկուսը դրամները գործի մեջ են դնում և նույնքան գումար շահում ու այդպես վերադարձնում են իրենց տիրոջը: Տերը արժանվույն գնահատում է նրանց աշխատանքը: Երրորդ ծառան այսպես է պատասխանում, երբ իրենից տերը հաշիվ է պահանջում.«Տե՛ր, գիտեի, որ դու մի խիստ մարդ ես, հնձում ես, ինչ որ չես սերմանել, և հավաքում ես այնտեղից, ուր չես ցանել. վախեցա. գնացի և թաքցրի քո այս քանքարը հողի մեջ: Արդ, ահավասիկ, քոնը՝ քեզ»: Տերը պատասխան է տալիս նրան և ասում. «Չա՛ր և ծո՛ւլ ծառա, գիտեիր, որ հնձում եմ, ուր չեմ սերմանել, և հավաքում այնտեղից, ուր չեմ ցանել. դու պետք է իմ այդ դրամը լումայափոխների մոտ դնեիր, և ես, գալով, տոկոսով միասին պահանջեի այն, ինչ որ իմն է: Արդ, դրանից առէք այդ քանքարը և տվե՛ք նրան, ով տասը քանքար ունի. քանի որ՝ ով ունի, նրան պիտի տրվի և ունեցածը պիտի ավելացվի, իսկ ով չունի, նրանից ունեցածն էլ պիտի վերցվի: Իսկ այդ անպիտան ծառային հանեցեք դուրս, արտաքին խավարը. այնտեղ կլինի լաց և ատամների կրճտում» (Մատթ. 25:14-30):*

Եթե ուշադիր կարդանք Հիսուսի առակները, բոլորն էլ ուսուցողական են և իրենց մեջ ամփոփում են երեք կարևոր կետեր: Առաջինը՝ *ցույց են տալիս մարդկային թույլ կողմը կամ մեղքը,* երկրորդը՝ *գործած սխալի համար նախատեսված, անկասկածորեն արդար պատիժը* և վերջապես երրորդը՝ *փրկության ճանապարհը, ինչպե՞ս դուրս գալ սխալ ու կործանարար վիճակից:*

Այս առակը ևս բացառություն չէ: Եկե՛ք տեսնենք, թե ո՞րն է այստեղ մեղքը, որը Քրիստոս հանդիմանում է:

Այս առակում մեղքը անշուշտ ծուլությունն է, տերը շատ լավ գիտեր, որ վերջին ծառային ընդամենը մեկ քանքար էր տվել, և նրանից չէր ակնկալում հինգը կամ տասը, բայց գոնե մեկը երկու դարձներ: Նա մատը մատին կպցնել չուզեց, առավել իր ծուլությունը արդարացնելու համար տիրոջ խստությունը պատճառ բռնեց:

Տերը հրամայեց առնել նրա ձեռքից ունեցած քիչն էլ: Նայենք մեր շուրջը և կտեսնենք Հիսուսի պատմած առակի շատ ապացույցներ: Ծույլ և ոչ աշխատասեր մարդիկ կամաց-կամաց վատնում են իրենց ծնողների վաստակը ու մի օր էլ մնում են առանց որևէ բանի: Տեսե՞լ եք մեկին, որը ծույլ լինի և բարգավաճ կյանքով ապրի կամ մի բարի գործ անի: Եվ դրա համար էլ մեր եկեղեցական հայրերը ծուլությունը դասել են յոթը մահացու մեղքերի շարքում:

Այս բոլոր զգուշացումները անելուց հետո, Հիսուս խրախուսում է մեզ աստվածահաճո և աշխատասեր կյանքով ապրել առաջին երկու հավատարիմ ծառաների օրինակով: Աստված բոլորիս մի շնորհք, մի կարողություն է տվել: Սակայն ինչպես Ինքն է նշում առակում, բոլորը հավասար շնորհքներ չեն ստանում, մեկը ավելի՝ մյուսը՝ պակաս, յուրաքանչյուրը իր կարողության համեմատ: Կարևորը սակայն քանակը չի, այլ, թե ինչպես ենք գործադրում մեր կարողությունը, աստվածատուր հնարավորությունները: Մեր բոլոր կարողությունները շրջանառու-

թեան մեջ դնենք, ինչպես առևտրականներն իրենց նյութականն են առևտրի մեջ դնում ու այդտեղից էլ մեծ շահեր ստանում: Ադամանդը որքան էլ թանկարժեք է, իրենից մեծ արժեք չի ներկայացնում, մինչև չտաշվի ու գեղեցիկ շրջանակի մեջ չանցկացվի: Նույն ձևով մենք մեր բնատուր կարողությունները, հատկությունները պետք է մշակենք ու կատարելագործենք, ապա թե ոչ դրանք կառնվեն մեր ձեռքից, կարծես թե չենք ունեցել, ինչպես տեղի ունեցաւ առակում:

Միտրոպոլիտ Անտոնի Սուրոժսկին այսպես է մեկնաբանում. *«Տերը, որ գնում էր հեռու երկիր, Հիսուս Քրիստոսն է: Նա կանչում է Իր ծառաներին և հանձնում նրանց Իր ունեցվածքը՝ ավետարանական ճշմարտության խոսքերը, քանզի «Տիրոջ խոսքերը … ինչպես ընտիր ու փորձված արծաթ՝… մաքրված ու զտված» են (Սաղ. 11:7): Ծառաները նրանք են, ում վստահված է խոսքի ծառայությունը՝ եպիսկոպոսները, քահանաները, սարկավագները և մենք՝ բոլորս, որ ընդունեցինք Տիրոջից քանքարներ, այսինքն՝ աստվածաշնչյան պատվիրանները և Սուրբ Հոգու շնորհները: Մեզ հանձնելով Ավետարանի խոսքն ու ուսմունքը (յուրաքանչյուրին՝ ըստ իր կարողության, այսինքն՝ հավատի և մաքրության չափով) Աստված սպասում է համապատասխան պտուղներ՝ բարոյականություն, առաքինություն, ժուժկալություն, ողորմածություն, հեզություն… Տերը մեզ չի դատում այն բանի համար, թե ինչքան պտուղ ենք բերել, այլ՝ թե ինչպես ենք վերաբերում մեզ վստահված քանքարին: Քարոզելու շնորհ, հարստություն կամ իշխանություն, կամ ինչ-որ գիտելիք և ընդունակություն ստացողը պետք է բազմապատկի դրանք Եկեղեցու և մերձավորների օգտին:*

Տաղանդը հողի տակ թաքցնել՝ նշանակում է սեփական շնորհներից չկարողանալ օգտվել, Աստծուն ու մերձավորներին ծառայելու պարտքը մինչև վերջ չկատարել: Լումայափոխները նրանք են, ովքեր Քրիստոսի

խոսքի համաձայն՝ Ահեղ Դատաստանի օրը պիտի վկայեն մեզ համար, թե՝ երբ քաղցած էինք, մեզ կերակրեցիք, ծարավ էինք, և մեզ ջուր տվեցիք, օտար էինք, և մեզ ձեր մեջ առաք, մերկ էինք, և մեզ հագցրեցիք, հիվանդ էինք կամ բանտարկյալ, և մեզ այցի եկաք (Մատթ. 25:35-40): Նրանց միջոցով Աստծո խոսքի արծաթը բազմապատկվում է, քանի որ ճշմարտության խոսքին ավելանում է հավատը, հավատին՝ արդարության գործերը, գործերին՝ գոհունակությունը, և այսպես բազմապատկվում է Աստծո փառքը:

Տերը միանման գովում է երկուսին էլ, ովքեր իրենց տրվածի վրա աշխատեցին, նրանցից յուրաքանչյուրը լսում է. «Ապրե՛ս, բարի՛ ու հավատարի՛մ ծառա»: Բարի ասելով՝ ընդհանրապես հասկանում ենք մարդասերին ու առատաձեռնին, ով բարություն է անում իր մերձավորներին: Եվ քչի մեջ հավատարիմ եղողները շատի վրա են կանգնելու, քանզի ինչ էլ ստանանք այս կյանքում, ինչ բարիքներ էլ վայելենք, չնչին են հանդերձյալ բարիքների հետ համեմատած: Ինչպես Դավիթ մարգարեն է ասում. «Տերն ուրախանում է Իր արարածներով» (Սաղ. 103:31) (Ըստ արքեպս. Ավերկի Տաուշևի «Նոր Կտակարանի Սրբազան Գրվածքների ուսումնասիրության ձեռնարկ» գրքի և միտրոպոլիտ Անտոնի Սուրոժսկու քարոզների):

Իբրև հայ հոգևորական, առանձնացմանս պահերին, երբեմն ինձ հարց եմ տալիս և այսօր էլ ձեզ եմ ուղղում այս հարցը, թե՝ *«Մեր ունեցած բազմաթիվ շնորհները արդյոք պիտի բավականացնե՞ն մեզ, մեր հավատի ուժով հաղթահարելու այս փոթորկահույզ կյանքի բազմաթիվ դժվարությունները, նեղություններն ու տառապանքները»:* Ու այս հարցի պատասխանը գոնե ես զգում եմ իմ հոգու մեջ, երբ մի փոքրիկ բարի ծառայություն եմ անում, երբ աշխատում եմ արդարորեն ու մաքուր ձևով իմ հոգու և խղճի պարտականությունը կատարել իմ Ընտանիքի, իմ Ազգի և իմ Եկեղեցու հանդեպ: Դուք էլ նո՛ւյնը արեք, մի՛ բողոքեք,

կարող եք, եթե ուզեք, որովհետև ամո՛ւր է ձեր Հավատը և ուժե՛ղ է Հայի Ոգին:

Միտրոպոլիտ Անտոնին շարունակում է իր մեկնաբանությունը. *«…Անպիտան ծառան աշխատելու ժամանակն անցկացրեց անգործությամբ և իրավունք չուներ մեղադրել իր տիրոջը խստության մեջ: Տերը նրանից, ինչպես մյուսներից քիչ չէր պահանջում: Աստծուն դաժանության մեջ մեղադրելը մեղքի պատճառով Աստծո Որդի լինելու զգացումը կորցրած և դրա պատճառով Աստծուն դաժան ու անարդար, իսկ իրեն որպես զոհ պատկերացնող մեղավորի սովորական ինքնարդարացում է: Իրականում մեր Տերը Նա չէ, ով հանդիմանում ու սպառնում է, այլ Նա, ով գովում է մեզ բարի արարքների համար, բարեհաճ է մեր նկատմամբ և օրհնում է մեզ» (նույնը):*

Մեր Եկեղեցու հայրենասեր Հայրապետներից Գարեգին Արքեպս. Հովսեփյանցը ասում է.

«Խնդիրը այն է, որ յուրաքանչյուրս լավագույն ձևով կատարենք մեր պարտքը· որովհետև, «որին շատ տվեց, շատ էլ պիտի պահանջի, որին, որ քիչ տվեց՝ քիչ էլ պիտի պահանջի»: Բայց գնահատության արժանի է մեզանից ամեն մեկը, որը լավագույն կերպով կարողացել է օգտագործել իրեն շնորհված դրամագլուխը: Աստված գիտի լավագույնը գնահատել··· Կյանքը կազմված է փոքր բաներից, բայց առանց այդ փոքր բաների լավ կատարման լավագույն մեծը չի ստեղծվի: Ամենահասարակ կարծված երևույթներն իսկ, իրենց արժեքն ունեն: Ամենալավ սերմը նույնիսկ ժայռի վրա ընկած, անպտուղ կմնա, իսկ բարեբեր հողում՝ արդյունավետ կլինի···»:

Ուրեմն պարտավոր ենք օգտագործել Աստծուց մեզ տրված շնորհները և դրանք արժևորել մեր կյանքում ու մեր բոլոր գործերում, ապրելով քրիստոնյային վայել մաքուր և արդար կյանքով: Ամեն:

ՓՈՂԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Բոլոր չարիքների արմատը փողասիրությունն է, որին ոմանք ձգտելով՝ մոլորվեցին հավատից և իրենք իրենց գցեցին բազում ցավերի մեջ»
(Ա. Տիմ. 6:10)

Այս խոսքը ես վերցրել եմ Պողոս առաքյալի Իր աշակերտ Տիմոթեոսին ուղղած առաջին թղթի 6-րդ գլխի 10-րդ համարից, ուր նա խրատում է, որպեսզի հավատացյալները հեռու մնան արծաթսիրությունից։

«Ի՞նչ է դրամը և ի՞նչ է փողասիրությունը։ Տարբերություն կա՞»։

Ապրում ենք աշխարհում, ունենք ընտանիք, զանազան տեսակի ծախսեր, վճարումներ, որոնք միմիայն կարող ենք կատարել դրամով։ Առանց դրամի, անշուշտ հնարավորություն չենք ունենա ո՛չ մի բան անել, նույնիսկ չենք կարող պարզ ուտելիք գնել սնվելու համար։ Ուրեմն դրամը կարևոր է, այնքանով, որ իբրև միջոց պետք ունենք այն օգտագործելու։ Իսկ երբ այն դառնում է նպատակ, այսինքն գիշեր ցերեկ մտածում ենք դրամի մասին, թե ո՞ր-տեղից շատ վաստակենք, որպեսզի կարողանանք վայելել ու օգտվել հաճույքներից՝ մեղքի է վերածվում։

Ուրեմն, երբ դրամը դառնում է նպատակ, չարիքի է վերածվում։ Դրա համար էլ Պողոս Առաքյալն ասում է. *«Որովհետև բոլոր չարիքների արմատը փողասիրությունն է, որին ոմանք ձգտելով՝ մոլորվեցին հավատից և իրենք իրենց գցեցին բազում ցավերի մեջ»։* Ուշադրություն դարձրեք, առաքյալը չի ասում չարիքի արմատը դրամն է, այլ՝ շեշտում է, որ չարիքի արմատը դրամասիրությունն է, այսինքն՝ դրամը դարձնել կուռք, սիրել, երկրպագել ու խոնարհվել։

«Աշխարհի սերը և Աստծո սերը չեն կարող համատեղ բնակվել մի սրտում, ինչպես որ նույն աչքերը չեն կարող միաժամանակ նայել երկինք ու երկիր»,- ասում է

Ընդհանրական Քրիստոնեական Հայրերից՝ Օգոստինոս Երանելին, իսկ Սարգիս Վարդապետ շնորհալին շարունակում է. *«Մարդկանց մեծամասնությունը այսօր ձգտում է հարստության և փողի: Այնինչ «Տերը մեզ հրամայում է, որ գանձերը պահենք երկնքում, որը գողերի համար անմերձենալի է (Ղուկ. 12:33), իսկ մենք մեր ունեցած գույքը հողի մեջ ենք թաղում և գողերի ու ավազակների համար ենք հավաքում»:*

Դրամի ստրուկը չդառնանք՝ կկորչենք, քանի որ այն ժամանակավոր է, ինչպես ամեն մի իր, ունեցվածք, նույնիսկ մարդը՝ իբրև մարմին: Հին Կտակարանից Հոբ երանելու պատմությունը մեզ համար լավագույն օրինակն է, երբ նա սատանայից փորձվելով իր ամբողջ ունեցվածքը, ընտանիքը, հարստությունը կորցնելուց հետո, չի դադարում խոնարհվել և երկրպագել Տիրոջը, որից հետո ստացավ ավելին իր հավատարմության, համբերության ու սիրո համար: Իսկ մենք պիտի կարողանա՞նք այսօր դիմանալ այն փորձությանը, որը չարը մեզ ենթարկում է՝ երևալով ու գայթակղելով մեզ դրամի կերպարանքով:

Սուրբ Հովհան Ոսկեբերան Հայրապետն ասում է.

«Երբ մենք մեր միտքը կատարյալ դարձնենք և ցույց տանք, որ մենք արհամարհում ենք երկրավոր բաները, այնժամ Աստված շնորհում է մեզ նաև երկրայինը, բայց ոչ առաջ, այլ միայն այս բանից հետո, քանի որ մենք կապված ենք երկրավոր բարիքներին և եթե այն ստանանք, առավել կկապվենք նրան: Ազատվիր նախ ստրկությունից, ասում է Նա, և այնժամ ստացիր, քանզի դու ստացար ո՛չ թե որպես ստրուկ, այլ որպես տեր: Արհամարհիր հարստությունը և կլինես հարուստ, արհամարհիր փառքը և կփառավորվես, արհամարհիր թշնամուն վրեժխնդիր լինելը և վրեժդ կլուծվի, արհամարհիր հանգիստը և կստանաս այն, որպեսզի ստանալով, չստանաս որպես ստրուկ, այլ որպես տեր» և շարունակում է. «Սարսափելի, ճշմարտապես սարսափելի բան է արծաթսիրությունը: Այն փակում

է թե՛ աչքերը, և թե՛ականջները, դարձնում է գազաններից ավելի կատաղի, թույլ չի տալիս մտածել ո՛չ խղճի, ո՛չ ընկերության, ո՛չ հարաբերվելու, ո՛չ էլ սեփական հոգու փրկության մասին, սա հանկարծ ետ է դարձնում այս ամենից, և իրենով գերվածներին դարձնում ստրուկներ, ինչպես ոմն դաժան բռնավոր: Եվ ի՞նչն է ավելի վատ, որ այս դառը ստրկության մեջ, սա ստիպում է, որպեսզի էլ ավելի իրենով տարվեն և ինչքան ավելի է տարածվում, ավելի հաճելի է թվում արծաթասերին: Եվ հիմնականում սրանից է, որ այս հիվանդությունը դառնում է անբուժելի ու այս գազանը չի սանձահարվում»:

Մեր ամբողջ էությամբ նվիրվենք Աստծուն, տանք Նրա բաժինը և չզլանանք Իր շնորհների ու պարգևների դիմաց:

Այս պատմությունը ուսանելի է. այն վերնագրված է՝ *«Աստծուն տվածը ետ չի կարելի վերցնել»*.

«Կոստանդնուպոլսեցի մի մարդ ծանր հիվանդ էր և վախենալով մահվանից՝ աղքատներին է բաժանում 30 ոսկեդրամ: Աստված գթառատ է գտնվում նրա նկատմամբ և նրա տված ողորմության դիմաց նրան առողջություն է շնորհում: Բայց այս անմիտը դրամի փայլից կուրացած սկսում է զղջալ ծախսած գումարի համար ու այդ մասին իր վիշտն ու ցավը հայտնում է իրեն ծանոթ մի հարուստ մարդու: Հարուստը փորձում է համոզել նրան չզղջալ տված ոսկիների համար. «Նայի՛ր, որ չբարկացնես Տիրոջը,- ասում է նա,- չէ՞ որ Նա քո տված ողորմության դիմաց համարյա թե քեզ մեռելներից հարություն տվեց: Տե՛ս, որ չմահանաս առանց ապաշխարության այդ բանի համար»: Բայց այդ անմիտը չէր դադարում ափսոսալ իր ոսկիների համար: Այդ ժամանակ հարուստը ասում է նրան. «Եթե դու չես ուզում լսել ինձ, ուրեմն գնանք եկեղեցի, այնտեղ միայն ասա՝ «Տե՛ր, ողորմությունը ես չեմ տվել, այլ՝ այս մարդը»: Հենց նույն պահին ես քեզ կտամ քո բոլոր ոսկի-

ները»: Դժբախտ արծաթասերը ուրախությամբ համաձայնվում է:

Երբ եկեղեցում նա արտասանում է վերևում հիշատակված խոսքերը ու իր ձեռքն է վերցնում հարուստի տված ոսկիները, հենց այդ պահին ընկնելով՝ մահանում է: Եկեղեցու սպասավորները առաջարկում են հարուստին ետ վերցնել 30 ոսկին, բայց Աստծու ծառան պատասխանում է. «Աստված ինձ հեռու պահի նման բանից, որ ես վերցնեմ այն, ինչը ես արդեն տվել եմ Աստծուն: Մի՞թե հնարավոր է: Աստված ծաղրի ենթակա չի»:

Եվ այդ դրամները բաժանվում են աղքատներին: Ահա այսպես եղավ Աստծու դատաստանն այն մարդու հանդեպ, որը չամաչեց շահամոլությունից դրդված հրաժարվել այն բարի գործից, որի փոխարեն նա արդեն Աստծուց մեծ ողորմություն էր ստացել» (Հոգեշահ գրքեր):

Տեսա՞ք, թե դրամասիրությունը ինչի՞ պատճառ դարձավ այն մարդուն, որն արդեն իսկ Աստծուց առողջություն էր ստացել իր ողորմության դիմաց: Այդպիսիների համար կարելի է գործածել՝ *«Ողորմելի»* բառը: Այո՛, իրապես, որ այդպես է: Այն մարդիկ, որոնք չեն հասկանում թե ի՞նչ է իրենց կյանքի իմաստն ու նպատակը՝ ողորմելի են, քանի որ ո՛չ մեկը այս աշխարհից իր հետ ոչինչ չի տանելու, ինչպես վերևում հիշված անմիտ մարդը չտարավ այն ոսկիները, որոնք նա ետ վերցրեց:

Աստծու պատվիրանները պահելը և՛ աշխարհային և՛ թե հոգևոր կյանքում կարևոր է: Դրանք պահող անձը, երբեք վախ չունի, թե կարող է ձախորդություն ունենալ իր կյանքում, որովհետև հետևում է իր խղճի ձայնին ու միշտ բարձր է մնում բոլոր այն հակասական երևույթներից, որոնք հանդիպում են իրեն, կամա թե ակամա, իրեն դժվարության մատնելու ու իր հավատի մեջ թուլություն մտցնելու մտածումով:

Թորգոմ Պատրիարք Գուշակյանն ասում է. *«Ու այդ պատճառով անհրաժեշտություն է իր չափի մեջ պահել*

դրամի համար զգացված սերը: Առանց սանձի՝ մի գազան է այն, մի բռնավոր, որը խորտակում է ամեն ինչ որ գեղեցիկ է հոգու մեջ:

...«Սա այն մոլությունն է, որ փչացնում է բոլոր մյուս առաքինություններին, երբ մի անգամ իրեն իբրև բույն է դարձնում սիրտը, այնտեղ այլևս տեղ չունի սերը. ո՛չ Աստծու, ո՛չ ընկերոջ, ո՛չ ընտանիքի, ո՛չ ազգի, և ո՛չ իսկ իր անձի - այս վերջինը անշուշտ իր լավագույն իմաստով - այո՛, ո՛չ իսկ իր անձի նկատմամբ:... Ի զուր չի, որ հառաչել է հնության ամենամեծ բանաստեղծներից մեկը. «Գարշելի արծաթասիրություն, ինչ ահավոր ոճիրների ես առաջնորդում դու հաճախ մարդկային սիրտը»:

Լսենք Սուրբ Հովհան Ոսկեբերան Հայրապետին.

«Արհամարհենք դրամը և փառքը: Այս կրքերից ազատվածը ազատ է բոլոր մարդկանցից առավել և հարուստ է արքայական պատմուճան հագնողից: Չե՞ս տեսնում արդյոք, թե որքան չարիք է լինում դրամի պատճառով: Չեմ ասում, որքան ագահությունից, այլ որքան փողի հանդեպ կրքոտությունից: Օրինակ, մեկը փող է կորցրել և հիմա ապրում է մի կյանքով, որ մահվանից ավելի անտանելի է: Ինչի՞ համար ես դու սգում, ով մարդ, ինչի՞ համար ես լացում, արդյոք դրա համա՞ր, որ Աստված քեզ ազատեց ավելորդ հոգսերից: Այն բանի համա՞ր, որ էլ չես նստում ահի և դողի մեջ: Եթե մեկը քեզ նստեցներ իր գանձի մոտ և հրամայեր գիշեր ու զոր այն հսկել, դու կդժգոհեի՞ր դրա համար և կտրտնջայի՞ր: Բայց երբ դու ինքդ ես քեզ կապել անտանելի կապանքներով, էլ ինչու՞ ես սգում, որ արձակվել ես այդ կապանքներից»:

Հայրապետը մեզ խրատում է, հեռու մնալ դրամասիրությունից: Այն կործանարար է: Ուրեմն բավարարվենք մեր ունեցածով և փորձենք բաժին հանել նրանց, ովքեր կարիքավոր են, պետք ունեն մեր օգնության, նեղյալներին, հիվանդներին, տնազուրկներին, որպեսզի Տերն էլ Իր գթությունն ու ողորմությունը պարգևի մեզ: Ամեն:

ՑՈՒՑԱՄՈԼՈՒԹՅՈՒՆ

«Համբավ (անուն) ձեռք բերենք ողջ աշխարհով սփռվելուց առաջ»
(Ծնն.դ. 11:4)

Այս խոսքը վերցրել եմ Ծննդոց գրքի 11-րդ գլխի 4-րդ համարից: Խոսքը ցուցամոլության մասին է:

«Ի՞նչ է ցուցամոլությունը, ովքե՞ր են ցուցամոլները, սա մոլությո՞ւն է, թե՞ առաքինություն»:

Ցուցամոլության տեսակները շատ են: Ոմանք փոքրիկ աղջնակների պես ցանկանում են ցուցադրել իրենց հագուստներն ու զարդերը: Աղքատները կամ մի քիչ ավելի դրամ ունեցողներն էլ հարուստներին հասնելու համար պարտքերի տակ են ընկնում, որպեսզի իրենք էլ հետ չըմնան: Սա իհարկե երբեմն էլ ողբերգական վախճան է ունենում:

Կան ցուցամոլներ, որոնք իրենք իրենց գիտունի տեղ են դնում և խառնվում են միջոցառման ծրագրի գործադրությանը: Ժողովրդական խոսքն այսպիսի մարդկանց համար ասում է. *«Կոշիկիցդ վերև մի բարձրացիր»: Այս խոսքի մասին հետաքրքիր մի պատմություն կա, ըստ որի մի կոշկակար գնում է ցուցահանդես: Նկարները նայելու ժամանակ կանգ է առնում մի պատկերի առաջ, որը մի մարդու նկարն էր կանգնած վիճակում: Նկատում է, որ նկարիչը կոշիկը անբնական կերպով է նկարել ու այդ մասին ասում է նրան: Նկարիչը, իմանալով նրա մասնագիտությունը, ուրախությամբ ընդունում է նրա նկատողությունը, բայց մի քանի րոպե անց կոշկակարը իր կարծիքն է հայտնում նաև գլխարկի մասին, սակայն նկարիչը նրան պատասխանում է. «Կոշիկիցդ վերև մի բարձրացիր», նկատի ունենալով, որ նա գլխարկ կարող չի, այլ ընդամենը կոշկակար է: Իհարկե այս խոսքը վերաբերում է բոլոր նրանց, ովքեր հասկանում են կամ չեն հասկանում,*

իրենց ցույց տալու համար կարծիքներ են հայտնում այս կամ այն բանի մասին:

Ցուցամոլությունը անշուշտ թերություն է և մեղք: Ահա տեսեք, թե սաղմոսերգուն ինչ դիտողություն է անում այսպիսիներին, նկատի ունենալով, որ նրանք Աստծուց վեր չեն ու չեն կարող սխալ բաներ խոսել. *«Ձեր կոտոշները վեր մի՛ տնկեք, և Աստծու մասին անիրավաբար մի՛ խոսեք» (Սաղ. 74:6):*

Ցուցամոլը պարզապես մտքից թույլ մեկն է: Մտածողներից մեկն ասում է. *«Ցուցամոլությունը կեղծավորության ցուցադրոշակն է: Շատ խոսողը ձանձրալի ու կասկածելի է: Փարիսեցին ցուցամոլ է, որովհետև կեղծավոր է: Հպարտությունը սատանայի գլուխ-գործոց մեղքն է և նա ինքնին ստերի հայրն է»:*

Իր ժամանակին մեր Տերը հանդիմանեց օրենսգետներին ու փարիսեցիներին, ովքեր ամեն ինչ ի ցույց ժողովրդի էին անում միայն, բայց իրենց ներսում մաքուր չէին և խորհուրդ տվեց Իր աշակերտներին լսել նրանց, քանի որ Աստծու խոսքն են քարոզում, սակայն չհետևեն նրանց գործերին:

«Մովսեսի աթոռի վրա նստեցին օրէնսգետներն ու փարիսեցիները. ամեն ինչ, որ նրանք ձեզ ասեն, արե՛ք և պահեցեք, բայց մի՛ արեք ըստ նրանց գործերի, քանի որ ասում են, բայց չեն անում: Ծանր ու դժվարակիր բեռներ են կապում և դնում մարդկանց ուսերի վրա, բայց իրենց մատով անգամ չեն կամենում շարժել դրանք: Եվ իրենց բոլոր գործերն անում են՝ ի ցույց մարդկանց. լայնացնում են իրենց գրպանակները և երկարացնում իրենց զգեստների ծոպերը: Սիրում են ընթրիքների ժամանակ պատվո տեղերը, ժողովարաններում՝ նախապատիվ աթոռները և հրապարակներում ողջույններ առնելը..» (Մատթ. 23: 1-6) և շարունակում է.

«Վա՛յ ձեզ կեղծավորներիդ՝ օրենսգետներիդ և փարիսեցիներիդ, որ նման եք սպիտակեցրած գերեզման-

ների, որոնք դրսից գեղեցիկ են երևում, մինչ ներսից լի են մեռելների ոսկորներով և ամենայն ապականությամբ: Նույնպես և դուք, դրսից մարդկանց արդար եք երևում, մինչ ներսից լի եք կեղծավորությամբ և անօրենությամբ» (Մատթ. 23: 27-28):

«Մի անգամ իշխաններից մեկը գալիս է աբբա Սիմեոնին տեսակցության: Գալիս են կղերիկոսները և ասում. «Աբբա՛, պատրաստվի՛ր, քանզի մի իշխան է գալիս քեզ տեսնելու և օրհնություն ստանալու»: Եվ նա ասում է. «Այո՛, հիմա կպատրաստվեմ»: Աբբան հագնում է իր ցնցոտիները, հաց ու պանիր վերցնելով ձեռքը՝ նստում է դռանը և սկսում ուտել: Գալիս է իշխանն իր սպասավորներով և տեսնելով նրան՝ հայհոյում է և ասում. «Ա՞յս է անապատականը, որի մասին լսեցինք»: Եվ նույն պահին էլ ետ է դառնում» («Սուրբ հայրերի վարքն ու կենցաղավարությունը» գրքից, Հատոր Ա, Էջմիածին, 2016):

Խելացի մարդը որևէ մի գործ կատարելու ժամանակ չի մտածում պաշտոն կամ աթոռ ունենալու մասին, դա անում է ինչ որ մի գաղափարի հանդեպ ունեցած իր հավատի համար: Մինչդեռ ցուցամոլը ինքնիրեն անփոխարինելի է կարծում, մտածելով, թե՝ *«Ես եմ որ կամ, ինձանից այն կողմ աշխարհ չկա»* սկզբունքով: Աշխարհում ոչ մի անփոխարինելի մարդ չկա: Գլխավորը այն է, որ կյանքում ամեն մարդ իմանա իր տեղը:

Այժմ ցուցամոլության ժամանակաշրջան է և ցավով պիտի ասենք, որ այն մեծ տարածում ունի:

Այսօր մեր հասարակությունն, ասես, իր կամքն է թելադրում ամենքին՝ անգամ նրանց, ովքեր ի սկզբանե դեմ էին դրան: Օրինակ, եթե դասարանում աշակերտներից մեկը Iphone չունի, ուրեմն նա վատն է, կամ եթե գործընկերներից մեկը արձակուրդն անցկացրել է տանը, ոչ՝ Թուրքիայում կամ Եգիպտոսում, ուրեմն նա գծուծ է: Եթե դուք գործարար եք, ուրեմն բոլորն ակնկալում են, որ

պետք է մեծ և շքեղ մեքենա վարեք, այլապես դուք դադարում եք հաջողակ բիզնեսմեն լինելուց։

Եթե ձեր բոլոր գումարները ծախսեք ուրիշներին հաճելի լինելու նպատակով, մեկ է կտեսնեք, որ նախանձող մարդիկ և պատճառներ միշտ էլ լինելու են։ Չգիտես ինչու՝ բոլորը կարծում են, որ այսպես նրանք նմանվում են հաջողակ և ինքնահաստատված մարդկանց։ Սակայն իսկապես հասուն մարդը երբեք չի փորձի իրեն բարձրացնել ուրիշների աչքում։ Նա չի կարող պարծենալ իր նվաճումներով, չի նվաստացնի իր աշխատողներին և հաջողություն չի ունենա իրենից ավելի ցածր մարդկանց հաշվին։ Որովհետեւ այդպիսին նայում է ո՛չ թե ներքեւ, այլ վեր՝ դեպի երկինք. Ում նա ձգտում է հասնել։ Եվ նա լավ հասկանում է, որ նոր հաջողություններ ունենալու համար պետք է մշտապես զարգանալ ու կատարելագործվել։ Այսպիսի մարդու կյանքում ամեն ինչ իր ժամանակին է տեղի ունենում, և նա աստիճանաբար առաջ է շարժվում ու ավելի լուրջ և կարևոր հաջողությունների է հասնում։

Հարց է ծագում՝ *«Իսկ ինչո՞վ է ցուցամոլությունը վտանգավոր»։*

ա.Մարդը սահմանափակում է իր դրական հնարավորությունները և իր գումարները ծախսում ո՛չ թե ինքնազարգացման, այլ ձևական կողմերը պահպանելու համար։

բ. Նա սկսում է ամեն ինչ հաշվարկել, թե՝ *«Ինչ կասեն մյուսները»* տեսանկյունից։ Արդյունքում այնպես է ստացվում, թե մեր սեփական կարծիքը կախված է ուրիշների մտածելակերպից։

գ. *«Թվալու, ո՛չ թե ապրելու»* պահանջը դառնում է մեր կյանքի գլխավոր նպատակը։

Սաղմոսերգուն մեզ խորհուրդ է տալիս հեռու մնալ ցուցամոլությունից. *«Համբավ (անուն) ձեռք բերենք ողջ աշխարհով մեկ սփռվելուց առաջ»* և ամեն ինչ կատարենք Աստծու կամքի համաձայն, որը մեզ թույլ կտա ավելի հանգիստ, խաղաղ ու ընտանեկան երջանկությամբ ապրել։ Ամեն։

ԱՆՁՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

«Այն ամենը, ինչ կկամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես և դո՛ւք արեք նրանց, որովհետև այդ իսկ են Օրենքն ու մարգարեները»
(Մատթ. 7:12)

Ավետարանից մեջբերված այս ոսկե օրենքն իր մեջ մեծ իմաստ ունի, որովհետև, երբ մարդ միայն իր անձի մասին է մտածում և սպասում, որ բոլորն իրեն գովաբանեն ու փառաբանեն, այդպիսին հիվանդ է:

Դժբախտաբար այսօր աշխարհում աճող երևույթներից մեկը ինքն իր մասին մտածելու հոգեվիճակն է:

Միշտ ես, ուրիշն ինձ համար կարևոր չէ:

Ահա մի մտածելակերպ, որը պարզ բառով կոչվում է անձնասիրություն: Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, ասում է. *«Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ,… ով սիրում է իր անձը, կկորցնի այն, իսկ ով այս աշխարհում իր անձն ատում է, այն կպահի հավիտենական կյանքի համար» (Հովհ. 12:24-25):*

Շատերն այն կարծիքին են, որ բարձր դիրքի վրա գտնվող մարդիկ բոլորն էլ կրթված են լինում: Սխալ մտածում է: Ռուս ակադեմիկոս Դիմիտրի Լիխաչովը, որը բացառիկ գիտելիքներով օժտված գիտնական էր, ռուսական հեռուստատեսությամբ իր ելույթներից մեկում ասում է. *«Ժլատը կարող է ձևանալ առատաձեռն, տգեղը՝ գեղեցիկ և այլն: Բայց ներքին կուլտուրայից զուրկ մարդը երբեք չի կարող ձևանալ կուլտուրական: Դա Աստվածատուր է»:*

Ձեզանից մեծ մասը, չասեմ բոլորդ, կարդացել եք բազմաթիվ հեքիաթներ անմիտ թագավորների մասին, որոնք, ժառանգական հաջորդականությամբ գահը գրաված լինելով, տիրացել են թագավորական իշխանության: Այդպիսի թագավորներից մեկի կատարած անհեթեթ մի

կարգադրության մասին հյուսված հեքիաթը՝ իբրև բարոյական դաստիարակության նյութ, ուզում եմ ձեզ պատմել:

«Ժամանակներ առաջ լինում է չի լինում, ինչպես սովորաբար սկսվում են հեքիաթները մի թագավոր, որը, ձանձրացած լինելով իր պալատի շուրջ գտնվող պարտեզներից, անտառներից ու լճերից, ուզում է ծով գնալ՝ լողալու: Թագավորական պահակագնդի հսկողության տակ նրա ծառաները ծովափին ընտրում են մի այնպիսի տեղ, որտեղ բնակչություն չկա և ուր ընդհանրապես ժողովուրդ չի գնում զբոսնելու: Այդ առանձնացված վայրի հարմարություններն ունեցող ծովափը, սակայն, ուներ մեկ անհարմարություն՝ քարքարոտ էր: Ծովեզրը ավազի փոխարեն ծածկված էր ծովային քարերով, որոնց վրայից թագավորը քայլելու դժվարություն է ունենում: Ծով մտնելու և այնտեղից դուրս գալու պահին այս դժվարությունը հարթելու նպատակով իր հետ լողացող երկու իշխաններին հրամայում է, որ իր երկրում գտնվող ամբողջ կովերը մորթեն ու նրանց մորթին փռեն ծովեզրի քարերի վրա: Թագավորական հրաման էր. պետք էր գործադրել:

Սա բարոյալից պատմվածքի ճանապարհով փոխանցվող մի օրինակ է անմիտ թագավորների տված հրամաններից, որոնք դարեր շարունակ ստրկացրել են պարզ ժողովուրդներին ու իրենց քմահաճույքին ենթարկել նրանց:

Թագավորի օգնական իշխանները, պալատ վերադառնալով, կանչում են պալատական խորհրդականներին ու հաղորդում նրանց արքայական հրամանը: Իմաստուն մարդիկ, իմանալով թագավորի սահմանափակ մտածելակերպը, անմիջապես գնում են նրա մոտ, որպեսզի նրան հետ կանգնեցնեն իր վտանգավոր որոշումից, մի որոշում, որը, հակառակ իր համար բարիք բերելուն, պիտի վնասեր ամբողջ երկրի տնտեսությանը: Պալատի արքայական խորհրդականներից մեկը թագա-

վորին առաջարկում է մորթել մի փոքրիկ ուլ և նրա մորթուց պատրաստել մուճակներ, հողաթափեր, որպեսզի քարերի վրա քայլած ժամանակ թագավորը նեղություն չկրի: Նա, զարմանալով այսքան պարզ լուծումի վրա, խելքին մոտ է գտնում եղած առաջարկը, և լսելով իր խորհրդականի խրատը՝ հրաժարվում է իր ծրագրից:

Ահա ձեզ եսասիրության հրաշալի մի օրինակ:

Կյանքում շատ մարդիկ կան, որոնք սպասում են, որ ամեն ինչ իրենց ուզած ժամանակ ու իրենց մտածածի պես լինի: Այդպիսիներն իրապես անմիտ թագավորին խրատող մի անձնավորության կարիք ունեն, որը պարզապես իրենց հիշեցնի, որ պետք է մի քիչ էլ երբեմն ուրիշների մասին մտածել: Մտածո՞ւմ ես արդյոք ուրիշների մասին, այն ժամանակ Աստված քեզ համար կըստեղծի լավագույն պայմանները: Միշտ պետք է հիշել և գործադրել կյանքում Ավետարանի այս ոսկե օրենքը. *«Այն ամենը, ինչ կկամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես և դո՛ւք արեք նրանց»:* Ամեն:

«Երեկոյան դեմ, աշակերտները մոտեցան Նրան և ասացին. «Այս տեղը ամայի է և օրը տարաժամել է, արձակիր ժողովրդի բազմությունը, որպեսզի գնա շրջակա գյուղերը իր համար ուտելիք գնի»: Եվ Հիսուս ասաց. «Հարկ չկա, որ նրանք գնան, դուք նրանց ուտելու բան տվեք»: Եվ նրանք ասացին նրան. «Այստեղ ուրիշ բան չունենք, բացի հինգ նկանակից և երկու ձկից»: Եվ նրանց ասաց, «Այստեղ բերեք այդ»: Եվ հրամայեց ժողովրդի բազմությունը նստեցնել խոտի վրա, և վերցնելով հինգ նկանակն ու երկու ձկները՝ նայեց դեպի երկինք, օրհնեց, կըտրեց և նկանակները աշակերտներին տվեց. իսկ աշակերտները՝ ժողովրդին: Բոլորը կերան ու հագեցան: Եվ տասներկու սակառ լիքը կտորտանքների մնացորդներ վերցրին: Եվ նրանք, որ կերան, մոտ հինգ հազար հոգի էին՝ չհաշված կանանց և երեխաներին» (Մատթ. 14:15-21):

Մեր Տերը Իր երեք տարվա քարոզչությանց ընթացքում բազմահարյուր բժշկությունների կողքին, մի քանի հրաշքներ կատարեց: Հիշենք Իր առաջին հրաշքը Կանա քաղաքում հարսանիքի ժամանակ, երբ գինին վերջացավ և Իր մոր խնդրանքով Նա ջուրը գինու փոխեց, երկրորդը՝ Հայրոսի տասներկուամյա աղջկա հարությունը, երրորդը՝ Իր մեռած բարեկամ Ղազարոսի հարությունը, ծովի վրայով քայլելը, փոթորիկի հանդարտեցումը և այլն:

Ավետարանչի այս պատմությունը Հիսուսի հրաշքներից մեկն է: Ըստ նրա Բեթսայիդայի անապատում մեկ օրվա ընթացքում առավոտից մինչև երեկո հինգ հազար հոգի էին հավաքվել լսելու Հիսուսի քարոզությունները ու տեսնելու համար Նրա բժշկությունները: Շտապելուց ժողովուրդը իր հետ ուտելիք չէր վերցրել: Այս նկատի ունենալով առաքյալները Հիսուսի ուշադրությանն են հանձնում և խնդրում, որ նա ժողովրդին ազատ արձակի, որպեսզի գնան գյուղերը և ուտելու բան կարողանան

գնել իրենց համար, քանի որ մոտ էր նաև գիշերը։ Հիսուս նրանց հորդորում է, որ իրենք կերակրեն ժողովրդին։ Առաքյալները զարմանում են, որովհետև իրենց Վարդապետը շատ լավ գիտեր, որ իրենք աղքատ էին և հնարավորություն չունեին այդքան մարդու ուտելիքով ապահովել։ Հիսուսի խնդրանքի համաձայն Նրա մոտ են բերում հինգ գարու հաց և ձուկ։ Մեր Տերը նայում է դեպի երկինք, աղոթում է և օրհնում հացն ու ձուկը, որից հետո առաքյալներին հրամայում է բաժանել խումբ-խումբ նստած ժողովրդին։ Թե ինչպես տեղի ունեցավ հինգ հազար հոգու ուտելիքով ապահովելը հինգ հացով և երկու ձկով, չորս Ավետարանիչների մոտ բացատրության ո՛չ մի բառ չենք գտնում, որպեսզի այդ փաստի վրա հիմնվելով կարողանանք հրաշքի ձևը բացատրել։ Ըստ ոմանց Հիսուսի ձեռքում հացն ու ձուկը երբեք չպակասեցին, այլ քանի անգամ, որ առաքյալները իրենց զամբյուղները դատարկելով Նրա մոտ վերադարձան, միշտ պետք եղածը ստացան Հիսուսից ու տարան և բաժանեցին ժողովրդին։ Ուրիշներն ասում են, թե առաքյալների զամբյուղների մեջ դրված մի քիչ հացը և մի կտոր ձուկը բազմացան ու նրանք որքան իրենց ձեռքները նրանց մեջ մտցրին, միշտ բաշխելու որևէ բան գտան և այլն։

Հավանականը առաջինն է այն պատճառով, որ Ավետարանի պատմության մեջ հիշված զամբյուղների դատարկվելը, նորից լցվելը և ուտելիքի ավելանալը։

Հոգևոր իմաստով հացը այստեղ խորհրդանշում է Աստծու խոսքը, որը աստվածային անսպառ սնունդ է յուրաքանչյուրիս համար, եթե լսենք, իրագործենք և օգտվենք նրանից։

Հիսուսի հրաշքների և բժշկությունների նպատակը մեկն էր, մարդկանց ցույց տալ, որ այդ բոլորը կատարում է ոչ թե Իր, այլ միայն Հայր Աստծու փառքի համար։

Մենք էլ իբրև իբրև հայ քրիստոնյաներ, պետք է մեր բոլոր գործերը, նվիրումը, ծառայությունը, սերն ու հա-

վատը, ամեն ինչ կատարենք միայն Աստծու փառքի համար: Աստված տվել է մի կյանք, որը Նրա կողմից մեզ ընծայված ամենաթանկագին պարգևն է, կյանք, որի համար, պարտավոր լինենք լցնելու իմաստությամբ, ազնվությամբ, բարի, արդար և առաքինի գործերով, խոնարհությամբ ու համեստությամբ: *«Խոնարհվիր, որ բարձրանաս»:* Ահա Հիսուսի պատգամը, որը Նա Իր կյանքի օրինակով ցույց տվեց: Հակառակ Աստծու Միածին Որդի լինելու հանգամանքին, Նա խոնարհվեց և լվաց Իր աշակերտների կեղտոտ ու փոշոտ ոտքերը, համեստության և խոնարհության հրաշալի օրինակ դառնալով մեզ համար: Դժբախտաբար կան մարդիկ, որոնք իրենց կյանքում այնպիսի հպարտ կեցվածք են ընդունում, արհամարհանքով մտածելով, թե մնացածները որևէ արժեք չունեն: Հպարտությունը յոթը մահացու մեղքերից առաջինն է և սատանան դրա պատճառով մեղանչեց: Այդպիսիները շուտ են մոռանում, որ կյանքը անցողիկ է, ամեն գեղեցկություն, հարստություն և այն ինչ որ նյութական են կորստյան ենթակա են: Լավ կլիներ, եթե բոլոր հպարտ, եսասեր ու անազնիվ մարդիկ ուշքի գային ու աղոթեին և ամեն առավոտ Աստծուն փառք տալով ողջունեին մեկը մյուսին ու վերափոխվեին, հավատացեք աշխարհում ամեն ինչ շատ ավելի հրաշալի կլիներ: Պողոս առաքյալը արդարորեն և իմաստուն կերպով ասում է. *«Եթե աշխարհը շահեմ և անձը կորցնեմ, ի՞նչ կշահեմ»:* Երկնքի արքայությունը ժառանգելու համար եկե՛ք շարունակենք մեր այս երկրավոր կյանքը բարի և արդար գործեր կատարելով: Վստահ եղեք, որ իբրև մարդիկ մեր խիղճը հանգիստ կլինի: Ամեն:

ՊԱՀՊԱՆԻ՛Ր ԹՇՆԱՄՈՒՑ

«Փրկեա յերեւելի եւ յաներեւոյթ թշնամւոյն»
«Փրկիր մեզ երևելի և աներևույթ թշնամուց»
(Մաշտոց)

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ամենագեղեցիկ աղոթքներից մեկն է *«Պահպանիչ»-ը,* որը գրեթե բոլոր ծիսակատարությունների վերջավորության և կամ հավաքույթների ավարտին հոգևորականը արտասանում է, օրհնելով ներկա ժողովրդին:

Այս աղոթքը մեզ ծանոթ է առաջին իսկ բառով *«Պահպանիր…»:* Այն երկար չի, բայց շատ խորիմաստ է:

«Խաղաղությամբ պահպանիր մեզ Քրիստոս Աստված սուրբ և պատվական խաչիդ հովանու տակ: Փրկիր մեզ երևելի և աներևույթ թշնամուց: Արժանի դարձրու գոհությամբ փառավորել Քեզ՝ Հորը և Սուրբ Հոգու հետ միասին, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն»:

Աղոթքն ունի իր որոշ տարբերակները, որը հոգևորականը ընտրում է պատշաճեցնելով ըստ օրվա հավաքույթի կամ արարողության: Օրինակ՝ *«Քրիստոս Աստված պահպանիչը և հույսը հավատացյալների, օրհնիր և պահպանիր Հայոց Ազգը, Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցին և ներկա հավատացյալ ժողովուրդը, խաղաղությամբ սուրբ և պատվական խաչիդ հովանու տակ. . . »* և այլն:

Մի քանի նախադասություններից բաղկացած այս աղոթքը իր մեջ ընդգրկում է աղոթող մարդու սրտից խնդրանք ուղղված Աստծուն:

Աղոթողը խնդրում է, որ Աստված պահի ու պահպանի իրեն սուրբ և պատվական խաչի ներքո՝ խաղաղության մեջ:

Պահելն ու պաշտպանելը Աստծու կողմից տրված մարդկային հատկություն է: Չկա մի ծնող, որն իր ամբողջ էությամբ չպայքարի պաշտպանելու իր ընտանիքը: Հայ-

ռենասերները մինչև իսկ իրենց կյանքի գնով պատերազմում զոհվում են Հայրենիքի ու հավատի համար: Վարդանանց հերոսները մեզ օրինակ: Վարդանն ու իր ընկերները Հիսուսի և Հայրենիքի համար իրենց կյանքով պաշտպանեցին այսօրվա մեր Սուրբ Եկեղեցին ու Հայրենիքը:

Պաշտպանության հատկությունը կենդանական աշխարհում էլ բացահայտ է: Մեկ տարբերությամբ միայն, կենդանին բնազդով է պաշտպանում իր ձագերին ու բույնը, մարդը սակայն՝ գիտակցությամբ և կամքով:

Քրիստոնյա հավատացյալը Աստծուց խնդրում է, որ իրեն պահի սուրբ խաչի զորության ներքո: Այն խաչը, որը մահվան գործիք էր, Քրիստոսի խաչելությամբ դարձավ փրկության խորհրդանիշ. խաղաղության և օրհնության նշան: Քրիստոնյան ինքնիրեն ապահով է զգում խաչի զորության ներքո:

«Փրկիր մեզ երևելի և աներևույթ թշնամիներից»:

Բնական է, երբ մենք գիտենք, թե ո՞վ է մեր թշնամին, նրանից զգուշանում ենք ու միշտ պատրաստ ենք լինում պաշտպանելու մեզ երևելի թշնամիներից: Բայց աղոթքը մեզ զգուշացնում է, թե այս աշխարհում կան նաև աներևույթ թշնամիներ, որոնք ավելի վտանգավոր են, քանի որ մենք չենք տեսնում նրանց: Օրինակ եկեք հիշենք Վարդանանց հերոսամարտի պատմութիւնը: Երբ բոլոր հայ իշխաններն ու հոգևորականները Ավարայրի վճռական ճակատարտից առաջ հաղորդվեցին Քրիստոսի սուրբ մարմնով ու արյունով, Աստծու Սուրբ Սեղանի առաջ ուխտելով, թե մինչև մահ պիտի պահեն ու պաշտպանեն Քրիստոսի սուրբ հավատն ու Հայրենիքը, նրանցից մեկը՝ Վասակ Սյունին, որը վայելում էր բոլորի հարգանքն ու պատիվը իբրև Երկրի Մարզպանը, ճակատամարտի ամենավճռական պահին դավաճանեց իր հավատն ու Հայրենիքը, անցնելով թշնամու կողմը: Սակայն ինչպես գիտենք, նրա փառքի ձգտումը ունեցավ տխուր վախճան:

Երբեք չզարմանաք, եթե ասենք, որ այսօր էլ մեր ժողովրդի մեջ կան այդպիսի թշնամիներ, որոնք Եկեղեցու ու Հայրենիքի վճռական պահին կամավոր և գիտակցաբար օժանդակում են թշնամուն, որպեսզի նա իր չար գործը կատարի։

Այս աղոթքով մենք խնդրում ենք Աստծուց, որ մեզ պաշտպանի աներևույթ թշնամիներից, որովհետև իբրև մարդիկ մենք անկարող են դա անելու։ Ու հավատացեք, որ Աստված կպահի ու կպահպանի իրեն հավատարիմ ծառային։ Դրանում երբեք մի՛ կասկածեք։ Մեր երկար տարիների փորձառությամբ ենք դա ասում։ Դուք ձեր աղոթքը կատարեցեք, մնացածը թողեք Աստծու հույսին ու զորությանը և կտեսնեք հրաշքը բարության ու չարի պատիժը։ Դուք միայն կրկնեցեք աղոթքի այս վերջին բառերը.

«Արժանի դարձրու մեզ գոհությամբ փառավորել Քեզ՝ Հորը և Սուրբ Հոգու հետ միասին, այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից։ Ամեն»։

Քրիստոնյա հավատացյալի ամենակարևոր ցանկությունն է արժանի լինել։ Արժանի լինել ինչի՞ն։ Աստծու թագավորության, երկնային դրախտին և հավիտենական կյանքին։ Աստծու աչքին արժանի լինել, նշանակում է Նրա պատվիրաններին հետևել, այսինքն՝ օգնել կարիքավորներին, աղքատներին, հիվանդներին, չբամբասել, խրատել իրար Աստծու ճշմարտությունների ճանապարհով և լինել անկեղծ ու գթառատ։

Քրիստոսի ժամանակ փարիսեցիները իրենց կեղծավոր հավատով ժողովրդականություն էին ձեռք բերել։ Նրանք վայելել էին մակերեսային հարգանք ու պատիվ այդ ժամանակի իշխանությունների և մտավորականության կողմից։ Թող ձեզ զարմանալի չթվա, եթե ասենք, որ այսօր էլ կան փարիսեցիներ ու կեղծավորներ, որոնք արտաքնապես, ձևական բարեպաշտական կեցվածքով, ցույց են տալիս իրենց քրիստոնեական հավատը, որը չունեն։ Կան ավելի ծայրահեղները, որոնք իրենց վարքով կարևոր

են համարում պահքի օրերին միս չուտելը, սակայն անարդարորեն իրենց նմանի միս են կրծում: Ահավասիկ այս արարքներով զբաղվող մարդը՝ ըստ ճշմարիտ և ուղղափառ հավատի, չի կարող արժանի լինել աստվածպաշտության: Կարևոր չէ թե նա գիտնական է, աստվածաբան կամ լեզվաբան կամ որևէ ասպարեզի աշխատող ու կարևոր չի նույնիսկ նրա ժողովրդականությունն ու հեղինակությունն ունենալը: Մի՛ հավատացեք այն մարդկանց, որոնք ձևացնում են, թե հավատով են, բարի են, սակայն արհամարհում, նվաստացնում, ցեխին են հավասարեցնում իրենց նմանի հեղինակությունը: Եվ հետո էլ նրանց ավելի մոտից ճանաչող մարդիկ ասում են, թե՝ *«Մի՛ նեղացեք, նրա սիրտը բարի է, կոշտ բնավորության վրա ուշադրություն մի՛ դարձրեք»:* Այս խոսքերը ակամա ծիծաղ են առաջացնում: Ճշմարիտ հավատով քրիստոնյան անկեղծ ու մաքուր սիրտ ունի և հետևում է մեր Տիրոջ չհնացող պատվիրանին՝ *«Միրեցեք միմյանց»,* որով նա որևէ մեկին չի կարող վիրավորել, արհամարհել կամ նվաստացնել;

Աղոթենք Աստծուն, որ Նա լինի մեր պահապանը անեռեույթ թշնամիների դեմ: Եվ ինչպես մեր նախահայրերը պահեցին ու պաշտպանեցին իրենց Հայրենիքն ու Սուրբ Եկեղեցին օտար թշնամիներից, աղանդներից ու մոլորեցնող հոսանքներից, մենք էլ իբրև Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հավատարիմ զավակներ, պահենք ու պաշտպանենք մեր հավատը սուտ վկաներից, մեր Տիրոջ անունը չարաշահողներից, այն վայրերից, ուր Աստծու ճշմարտությունները քարոզվում են միմիայն նյութական շահի համար և այլ օտար շարժումներից, որոնք մեզ արժեզրկում են մաքուր հայ քրիստոնյա լինելուց ու Ամենաբարձրյալին փառաբանելուց: Ամեն:

ԳԱՂՏՆԻՔ ՄԻ՛ ՈՒՆԵՑԵՔ

«Ծածուկ ոչինչ չկա, որ չհայտնվի, ո՛չ էլ գաղտնի բան, որ չիմացվի և ի հայտ չգա»
(Ղուկ. 8:17-18)

Հիսուս Իր առաքելության երեք տարիների ընթացքում հաճախ էր խոսում մարդկանց հետ, որպեսզի բացի նրանց սրտերն ու հոգիները և սերմանի Աստծու խոսքը: Այս խոսքերը մեզ առիթ են տալիս մտածելու, թե Նա ի՞նչ էր ուզում հասկացնել մեզ: Իր կյանքը նկատի ունենալով մենք տեսնում ենք, որ Նա ո՛չ մի գաղտնի բան չուներ ո՛չ Իր աշակերտներից և ո՛չ էլ ժողովրդից: Սրանով Նա ուզում էր հասկացնել, որ մարդկային կյանքում ինչ էլ ծածուկ լինի, գաղտնի չի մնալու, այլ ուշ թե շուտ ամեն ինչ ջրի երես է դուրս գալու:

Հիրավի այս կյանքում մարդկանցից երեք բաներ կարող ենք պահել.

ա. *Երբեմն մենք նույնիսկ մեզանից, մեր անձից որոշ բաներ կարող ենք պահել*. օրինակ. շատ անգամ է պատահում, որ մենք մեր որոշ սխալներին ու սովորություններին աչք ենք փակում, փոխանակ դրանք ուղղելու ու վերացնելու: Զարմանալին այն է, որ մենք իմանալով հանդերձ, թե հետագայում դրանց հետևանքները տխուր ու ծանր են լինելու, ձեռքներս թափ տալով ասում ենք. *«Ի՞նչ ուզում է թող լինի, հոգներս էլ չէ»:*

բ. *Երբեմն մարդկանցից որոշ բաներ ենք պահում.* ստուգված է, որ գաղտնիք ունեցողը անպայման տխուր կլինի, իսկ չունեցողը՝ միշտ էլ ուրախ է: Պատմվում է. թե մի ճարտարապետ Պլատոն փիլիսոփային առաջարկում է տուն կառուցել, որի սենյակները գաղտնի մնան մարդկանցից, սակայն իմաստունը նրան ասում է. *«Ուզածդ գումարի կրկնապատիկը քեզ կտամ, եթե կառուցելիք տանդ սենյակները բոլոր կարողանան տեսնել»:*

գ. *Երբեմն բաներ ենք պահում Աստծուց.* պետք է գիտակցենք, որ Նրա ներկայությունը միշտ մեր մեջն է, ու Նրա աչքը մշտապես մեր վրա է:

Այս երեք կետերը նկատի ունենալով, պիտի աշխատենք, որ գաղտնիքներ չունենանք, ընդհակառակը՝ լույսի մեջ աշխատենք, որպեսզի կարողանանք մեր կյանքը երջանիկ դարձնել: Լույսն ու կյանքը անբաժանելիորեն քայլում են կողք-կողքի: Հիսուս լույս է:

Ըստ Պողոս առաքյալի ամեն ինչ կատարվում է Աստծու կամքի համաձայն:

Նրա կամքը գաղտնի էր մնացել մինչև Հիսուսի գալուստը: Արդար ու մաքուր կյանքով ապրող քրիստոնյա մարդը միշտ պատրաստ է ու ծածուկ ո՛չ մի բան չունի և վախենալու էլ ոչինչ չունի: Հիսուս ասում է՝ *«Ո՛չ ոք ճրագ չի վառի և կաթսայի տակ չի թաքցնի և կամ մահճի տակ չի դնի, այլ կդնի աշտանակի վրա, որպեսզի, ովքեր մտնեն, լույսը տեսնեն: Ծածուկ ոչինչ չկա, որ չհայտնվի, ո՛չ էլ գաղտնի բան, որ չիմացվի և ի հայտ չգա» (Ղուկ. 8:16-18): «Մարմնի ճրագը աչքն է, եթե քո աչքը պարզ է, քո ամբողջ մարմինը լուսավոր կլինի: Իսկ եթե քո աչքը պղտոր է. քո ամբողջ մարմինը խավար կլինի: Եվ արդ, եթե քո մեջ եղած լույսը խավար է, ապա խավարը որչա՜փ ևս ավելի» (Մատթ. 6:22-23):*

Եվ շարունակելով ասում է. *«Ով որ ունի, նրան կտրվի, իսկ ով որ չունի և այն, ինչ որ նա կարծում է, թե ունի, կվերցվի նրանից» (Ղուկ. 8:17-18):* Այս ասելով Հիսուս ի՞նչը նկատի ուներ և ինչի՞ մասին էր խոսում. Հարստությա՞ն, դրամի՞, կալվածներ ունենալո՞ւ, թե՝ փառք և անուն վաստակելու մասին: Անշուշտ, ո՛չ մեկի: *«Իմ թագավորությունը այս աշխարհից չէ»… (Հովհ.18:36)*,- ասում էր նա: Ո՛չ ոք չի կարող Աստծու հետ լինել և Նրան ամբողջությամբ հասկանալ, եթե ինքն իրեն չի ճանաչում ու չի հասկանում» *«Ով որ ունի»* խոսքը չի նշանակում նյութական բարիքներ, այլ՝ գիտակցություն ունենալ և կարողանալ իր

անձը ճանաչել: Ով որ գիտի կյանքը իրապես ապրելու գիտակցությունը, նրան է, որ պիտի տրվի, իսկ ով չի իմանում ու կարծում է, թե ունի, նրանից պիտի վերցվի եղածն էլ: Ուրեմն՝ *«Ի՞նչ պիտի ունենանք»:* Գիտակցություն ունենալ, ըստ Պողոս առաքյալի, նշանակում է կյանքը ապրել երեք հիմնական հատկանիշներով՝ *բարությամբ, արդարությամբ և ճշմարտությամբ:*

Բարի լինելու համար մարդու միտքը, սիրտը, հոգին և զգացումները պետք է մաքուր լինեն: Եթե մարդը ներքնապես չար է և արտաքնապես փորձում է բարի երևալ, դա պարզապես կեղծավորություն է: Չինական ժողովրդական մի ասացվածքի համաձայն, աշխարհում երկու տեսակ բարի մարդիկ գոյություն ունեն: *Մեկը մեռած մարդն է, որը չարիք չի կարող գործել, քանի որ անշունչ դիակ է դարձել, իսկ մյուսը՝ չծնվածը, որը չի կարող չարիք գործել, քանի որ ծնված չէ:*

Բարի հոգին իր ներշնչումը ստանում է Աստծուց, իսկ չարը՝ սատանայից:

Այս պատմությունը կարծում եմ հետաքրքիր է.

«Իմաստասերների միջև բուռն վեճի առարկա է դառնում այս հարցը, թե ո՞ր գիտությունն է ճշմարտապես հատկանշում մարդու արժանիքը:

Ոմանք ասում են, թե գեղարվեստն է, ուրիշներ՝ ռազմագիտությունը, իսկ ոմանք էլ՝ քաղաքական փորձառությունը:

Ներկաները իրենց մտածումները հայտնելուց հետո, ուզում են իմանալ Հույն Անտիսթենես փիլիսոփայի կարծիքը, որը մի անկյունում նստած լուռ հետևում էր այս վիճաբանության:

Ինձ համար,- ասում է փիլիսոփան,- լավագույն և բարձրագույն ուսումը և արժեքավոր մարդը նա է, որ կարողանա սովորել մոռանալ գոնե մի չարիք»:

Հիսուս հորդորում է մեզ. «*Ծառը բարի արեք, և նրա պտուղն էլ բարի կլինի, կամ ծառը չար արեք և նրա*

պտուղն էլ չար կլինի. քանի որ իր պտղից է ծառը ճանաչվում» (Մատթ.12:33):

Աշխարհում ամենամեծ պայքարը չարի կողմից մղվում է բարության դեմ, բայց վերջ ի վերջո վերջնական ու ամբողջական հաղթանակը բարուն է պատկանում: Պողոս առաքյալը խրատում է. *«Ո՛վ հավատացյալ, թույլ մի՛ տուր, որ չարը հաղթի քեզ, այլ բարիո՛վ հաղթիր չարին» (Հռոմ. 12:21):*

Ուրեմն, *«Ի՞նչ է աստվածային կյանքը և ի՞նչ է Աստծու տված ճշմարտությունը»,* եթե ոչ սիրո մաքրությունը մեր սրտում և հոգում;

«Ավա՛ղ, կան մարդիկ, որոնք միայն բարձր կենդանիներ են, իրենց իմացականությունն ու բարձր հասկացողությունները գործադրում են առավելապես կենդանական, անձնական, եսական, կամ շահադիտական նպատակների համար«- ասում է Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանցը և շարունակում. «*Դրանից դուրս ուրիշ աշխարհ չեն ուզում ճանաչել, ուտել, խմել, վայելուչ հագնվել և նյութական վայելք ունենալ, կազմում է նրանց կյանքի բովանդակությունը: Նրանց ընտրած ճանապարհը իսկական կյանքի ճանապարհը չէ« («Դեպի Լույս և Կյանք» Գանձասար մատենաշար, Երևան 1994):*

Որոշ տեղ հասնելու համար պետք է ընտրես ճանապարհդ, արդյոք գտե՞լ ես այն, եթե այո՛, ուրեմն առանց վախենալու առաջ պիտի գնաս մինչև ծրագրած տեղդ հասնես: Այդ վայրը ներքին և հոգով ապրած ճշմարտություն է կոչվում, որին գտնելու համար պետք է շարժվես նրա համար սահմանված փշոտ ու արյունոտ ճանապարհով, ինչպես մեր Տերը. անձանձրույթ կերպով աշխատի՛ր, ձգտի՛ր, փնտրի՛ր, բախի՛ր, որպեսզի ի վերջո դռները բացվեն, դռնե՛ր, որոնք քեզ պիտի տանեն դեպի իսկական և հոգևոր կյանք: Պիղատոսները իրենց շրթներին պատրաստ ունեն այս ծաղրական հարցը. *«Ի՞նչ է ճշմարտությունը»:* Գարեգին Հովսեփյանց Կաթողիկոսը պատկերա-

վոր կերպով տալիս է սրա պատասխանը. *«Նա մարգարիտ է, որ միայն ծովի հատակում կարող ես որոնել ու գտնել, ուրեմն ծովի հատակը սուզվելու ունակության մեջ պիտի վարժվես. նա թանկագին քար է, ադամանդ, որը հանքերի խորքում կարող ես գտնել, այն էլ հազվագյուտ, երկար որոնումներից հետո»:*

Մեր Տերը երկու հազար տարիներ առաջ պատվիրեց Իր առաքյալներին և այսօր էլ մեզ է ուղղում Իր խոսքը. *«Այս է իմ պատվերը. որ սիրեք միմյանց, ինչպես որ ես սիրեցի ձեզ: Ավելի մեծ սեր ո՛չ ոք չունի…» (Հովհ. 15:12-13):*

Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին դարեր շարունակ եղել է և է՝ բարության, արդարության ու ճշմարտության ջատագովը և այն սերմանել մեր ժողովրդի սրտում ու հոգում: Սբ, Գրիգոր Լուսավորչի անմար կանթեղի լույսը այսօր էլ բոցկլտում է ամենուր ցրված մեր զավակների սրտերում, հավատ, հույս և զորություն պարգևելով նրանց: Ամեն:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու աղոթքներում գեղեցիկ գոհաբանական մի խոսք կա, որը բազմաթիվ անգամներ կրկնվում է. *«Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն»:* Գիտության և իմաստասիրության աշխարհում նման խոսք գոյություն չունի: Դպրոցական աշակերտներին այսպիսի երգեր չեն սովորում: Աշխատանքի ու առևտրի աշխարհում նույնպես նման բան չեք կարող լսել: *«Փառք Հօր»-ը և «Այժմ եւ միշտ»-ը* զուտ կրոնական, եկեղեցական, քրիստոնեական և աստվածային օրհներգության տողեր են:

Իբրև հայ քրիստոնյաներ լավ գիտենք, որ Աստված հավիտենական է, սակայն աշխարհը, բնությունը, տիեզերքն ու Նրա բոլոր ստեղծագործությունները ժամանակավոր են: Մարդն էլ հավիտենական չէ: Մենք բոլորս ծնվում ենք մանուկ, պատանի և չափահաս ենք դառնում, ծերանում ու մի օր էլ մահանում ենք: Այս է Աստծու օրենքը մարդու համար: Առաջին մարդը՝ Ադամը, չկատարելով Աստծու կամքն ու անհնազանդ գտնվելով Նրա հրամանին, անմահության փոխարեն մահը ժառանգեց. *«Քո երեսի քրտինքով ուտես հացդ մինչև հող դառնալդ, որից ստեղծվեցիր, որովհետև հող էիր և հող կդառնաս» (Ծննդոց 3:19):*

Ամեն մարդ ժամանակի մասին նույն հասկացողությունը չունի և նույն ձևով չի հասկանում ժամանակի գինը, նույնիսկ կառչում են բոպեներից. *«Ժամանակը թանկ է», «Ժամանակը ոսկի է», «Ժամանակ չունեմ»,*- ասում են նրանք: Մյուս կողմից ուրիշ մարդիկ էլ կան, որոնք ճիշտ հակառակ ձևով են մտածում: Ժամերը գալիս ու գնում են, նրանց պետքն էլ չի. *«Ժամանակ շատ ունեմ»,*- ասում ենք նրանք և ժամադրությունն էլ չեն հարգում, միշտ ուշանում են ու խլում մարդկանց թան-

կագին ժամանակը, ո՛չ միայն այդ, ուրիշներին էլ խորհուրդ են տալիս, որ նրանք էլ չշտապեն։

«Ժամանակ չունեմ» հաճախ կրկնվող այս խոսքը մի տեսակ սովորություն դարձած ձև է, որը շատ անգամներ գործածվում է ոչ իր իրական իմաստով, այլ դժբախտաբար, այն օգտագործվում է իբրև առիթ պատասխանատվությունից խուսափելու կամ թերացման պարագային՝ ինքնարդարացման համար։

Մեր Եկեղեցու նշանավոր Հայրերից Սուրբ Գրիգոր Վարդապետ Տաթևացին ասում է. *«Ավելի պատվական բան, քան ժամանակը, չկա… դրա համար կյանքի ժամանակը պետք է լցնել բարի գործերով, որովհետև անցնող ժամանակը ո՛չ մեկն այլևս ետ չի կարող վերադարձնել»։*

Ամենայն Հայոց Վշտի Կաթողիկոս Խրիմյան Հայրիկը իր *«Կտակ և բարի հիշատակ»* անվան տակ աշխատության մեջ գեղեցիկ խրատներ է տալիս մեզ՝ կյանքի ու մահվան մասին.

«Մարդ՝ թե՛ այր և թե՛ կին, երբ հիշե յուր օրհաս վախճանը և մտաբերե, թե՝ ինքն մահկանացու է և պիտի մեռնի ու թողու այս աշխարհը, ընտանիք, սիրելիք, գանձ, հարստություն և շատ կալվածները, իմաստուն և արդար տնտես է այն մարդը, եթե ցանկա յուր մահվան և գերեզմանին մեջ ևս ապրիլ։ Եվ ի՞նչպես, կտակավ և բարի հիշատակով, այսինքն յուր սեպհական հարստութենեն մի բաժին հանե ազգին, բաժին հանե աղքատ ընտանյաց առանց երբեք զրկելու յուր ընտանիքը։ Երջանիկ կլիներ ազգը, երջանիկ կլիներ մեր հայրենիքը, եթե ազգին մեջ գտնված յուրաքանչյուր գանձատեր անձինքը առանց կտակի և հիշատակի չմեռնեին»։

Աշխատենք, որ ժամանակի երեք սահմանումները՝ անցյալը, ներկան ու ապագան, լինեն մեր տրամադրության տակ, այսինքն՝ ներկան օգտագործենք լավագույն ձևով՝ դասեր քաղելով մեր անցյալից, և լավատեսությամբ դիմավորենք ապագան։ Անցյալը այլևս ետ չի

վերադառնալու, իսկ ապագան կարող է մերը չլինել: Որևէ ընկերություն և կազմակերպություն, որը զուրկ է նորոգվելու ընդունակությունից, չի կարող առաջադիմել, շատ-շատ իր տեղում կմնա, բայց անպայման մի օր կքայքայվի:

«Անցյալը մի հզոր ուժ է այն ժամանակ միայն, երբ դու ես տիրապետում նրան, բայց կդառնա ծանր մի բեռ, երբ նա կտիրապետի քեզ»,- ասում է 20–րդ դարի հույն մտածող, գրող և հասարակական գործիչ՝ Կոստանդին Բեցիսը:

Աստված անփոփոխ է: Նույնն էր երեկ, նույնն է այսօր և նույնը պիտի լինի մշտապես: Հավիտենական և անսահման են Աստծու բոլոր երկնային շնորհները:

Ժամանակի մեջ ապրելը մեր մարդկային բնության մի տեսակ *«պարտադրանքն»* է: Մեր Հայրապետներից երջանկահիշատակ Գարեգին Ա-ն ասել է. *«Ժամանակը սահում է ջրի պես: Եթե կարողանաս մի կաթիլ բռնել, փրկած կլինես և՛ քեզ, և՛ կաթիլը հողի ու ծովի մեջ անհայտանալու ճակատագրից»:* Այս տողերը կարդալիս մեզանից ամեն մեկը կարող է ինքն իրեն հարց տալ. *«Քանի՞ կաթիլ բռնեցի իմ ամբողջ կյանքի ընթացքում, որոնք կարող էին ուրիշների հոգու ծարավը հագեցնել»:* Դժվար է հաշվել:

Մեր Տերն Իր կյանքով ու Իր հաղթական Հարությամբ մարդուն դարձրեց հավիտենականության ժառանգորդը: Նա եկավ ու հաստատեց մի Թագավորություն, որտեղ վերջ են գտնում արցունքը, ցավն ու տրտմությունը: Եկե՛ք այս կարճ կյանքի ընթացքում մեր բարի գործերով արժանի՛ լինենք այդ Երկնային թագավորությանը: Ամեն:

ԲՂՋԱԽՈՀՈՒԹՅՈՒՆ

«ՄԻ ՇՆԱՑԻՐ» (ԵԼՔ 20:14)

«Իսկ եթե մեկը շնանում է խելքի պակասության պատճառով, նա կորստի է մատնում ինքն իրեն… և երբեք չի ջնջվելու նրա նախատինքը»
(Առակ. 6:33)

Յոթը մահացու մեղքերից վերջինը բղջախոհությունն է, որը պարզ բառերով ասած նշանակում է չար ցանկություն կամ ցանկասիրություն: Սրա հակառակ առաքինությունը ողջախոհությունն է, այսինքն՝ ողջամիտ մտածումը:

Մարդու ցանկասիրության պատճառով է, որ Աստված Իր տասը պատվիրաններից մեկը դարձրեց *«Շնություն մի՛ արա» կամ «Մի՛ շնացիր»-ը:*

Հին կտակարանում ցանկասիրությունը նկարագրվել է իբրև *«ցանկությամբ անկարգ սեր ունենալ»:* Իսկ Նոր Կտակարանում այն կոչվում է *«սեռային ցանկությամբ այրվել»:*

Հիսուս Լերան քարոզում այս պատվիրանին այլ մոտեցում ցույց տվեց. *«Լսել եք, թե ինչ ասվեց. «Մի՛ շնանար». իսկ ես ձեզ ասում եմ. ամեն մարդ, որ կնոջ նայում է նրան ցանկանալու համար, արդեն շնացավ նրա հետ իր սրտում» (Մատթ. 5:27-29):*

Իսկ Պողոս առաքյալը ավելացնում է. *«Սպանեցե՛ք ուրեմն ձեր երկրավոր ցանկությունները. դե՛ն գցեցեք պոռնկություն, պղծություն, հոռի կրքեր, չար ցանկություն…(Կող. 3:5):*

Մարդը իր մտքի մաքրությամբ, հոգու անարատությամբ և մարմնի կանոնավորությամբ միայն կարող է մոտենալ Աստծուն, խոսել Նրա հետ, ներշնչվել Նրա պատգամներով, կատարել Նրա պատվիրանները, ապրել

երանության մեջ, երկնքի արքայությունը վայելել երկրի վրա և Աստծուն ընդունելի լինել:

Չար ցանկությունը ընդհանրապես մարդիկ գործադրում են իրենց երիտասարդ տարիքում, երբ մտածում են, թե այդ երիտասարդական ուժն ու գեղեցկությունը պիտի թառամեն, հետևաբար առիթից օգտվելով պետք է այսպես ասած *«կյանքը ապրել ու վայելել»* առանց անդրադառնալու, թէ կյանքից տուժողը *«կյանքը ապորինի ապրողն է»:* Այսպիսները համոզված են, թե արգիլված ամեն պտուղ համով կլինի, ապորինի ամեն գործ ձեռք գցելիք մեծություն է և կյանքում անկարգությունը ցանկությունների վերջակետին է հասցնում:

Մարմինը ամենալավ սպասավորն է, եթե մարդը ինքն է կառավարում այն և վատ տեր է, եթե մարդը կառավարվում է նրանից: Այս տեսակետից, եթե նայենք, կտեսնենք, որ չար ցանկությունը՝ բոլոչախոհությունը, անբնական մեղք է մարդու համար:

«Վանականն ու անառակ կինը.

Մի վանական իր ծառայությանն էր գնում, երբ ճանապարհին նրան մի անառակ կին հանդիպեց ու ասաց.

Փրկի՛ր ինձ, Հա՛յր, ինչպես Քրիստոս փրկեց անառակ կնոջը:

Վանականը, հաշվի չառնելով, որ իրեն կարող են դատապարտել, բռնեց նրա ձեռքն ու ողջ քաղաքով անցավ: Մարդիկ տեսնում էին դա ու ասում.

Վանականն անառակին կնության է առել:

Երբ կուսանոցին էին մոտենում, այդ կինը եկեղեցու մոտ լքված մի նորածնի է տեսնում ու վերցնում նրան: Մի տարի անց, երբ մարդիկ տեսնում էին նախկին անառակին՝ երեխան գրկին, ասում էին.

Համա թե միանձնուհի է, ահա՛ ապագա վանականի էլ ծնել է:

Եվ քաղաքում սկսեցին խոսել, որ անառակ Պորֆիրիան ծեր վանականից երեխա է ունեցել ու երեխան էլ

հորը շատ է նման: Իսկ երբ վանականն Աստծուց հայտնություն ստացավ իր մահվան օրվա մասին, իր մոտ կանչեց նախկին անառակին, իսկ այժմ միանձնուհի Պորֆիրիային ու ասաց.

Պետք է քաղաք գնանք, ուզում եմ դու էլ ինձ հետ գաս:

Պորֆիրիան, իր յոթնամյա որդեգրյալի հետ միասին, գնաց նրա հետ: Երբ քաղաք հասան՝ ծեր վանականն արդեն ծանր հիվանդ էր և մոտ հարյուր մարդ էր եկել նրան տեսակցելու: Ծերունին ասաց.

Կրակ բերեք: Թեժ ածուխով լի մի թավա բերեցին: Վանականը դրանք իր փեշի մեջ լցրեց ու ասաց ներկաներին.

Արդ գիտցեք, եղբայրնե՛ր, որ ինչպես Մովսեսի անկեզ մորենին էր այրվում ու չէր մոխրանում, և ինչպես իմ հագուստն անվնաս մնաց այս կրակից, այդպես էլ ես իմ ծննդյան օրվանից մինչ օրս կանացի մեղքը չեմ ճանաչել ու պահպանել եմ կուսությունս:

Բոլորը զարմացան՝ ծերունու հագուստն ամբողջովին անվնաս տեսնելով ու փառաբանեցին այդպիսի գաղտնի սուրբ ծառաներ ունեցող Աստծուն:

Արդ դադարե՛ք ուրիշների մեղքերը քննարկելուց ու դատապարտելուց»:

Պողոս առաքյալն ասում է. *«Մարմինը ո՛չ թե պոռնկության, այլ Տիրոջ համար է, և Տերը՝ մարմնի համար…: «Չգիտե՞ք, թե ձեր մարմինները Քրիստոսի անդամներն են: Արդ, Քրիստոսի անդամներն առնելով՝ պոռնիկի՞ անդամներ ենք դարձնելու: Քա՛վ լիցի: Չգիտե՞ք, թե, ով մերձենում է պոռնիկին, նրա հետ մե՛կ մարմին է դառնում… Եվ ով մերձենում է նրա Տիրոջը, մե՛կ հոգի է դառնում նրա հետ: Փախե՛ք պոռնկությունից: Ինչ մեղք էլ որ գործի մարդ, այդ իր մարմնից դուրս է. իսկ ով պոռնկանում է, իր մարմնի դեմ է մեղք գործում: Չգիտե՞ք, թե ձեր մարմինները տաճար են Սուրբ Հոգու, որ ձեր մեջ է, և որն ստացել եք*

Աստծուց, և դուք ձեր տերը չեք, քանզի մե՛ծ գնով գնվեցիք: Փառավորեցե՛ք Աստծուն ձեր մարմինների մեջ» (Ա. Կորնթ. 6:13-20):

Առաքյալի այս խոսքերը մեզ ցույց են տալիս մեղքից հեռու մաքուր ու առողջ ապրելու ճանապարհը:

Պողոս Պատրիարք Ադրիանուպոլսեցին ասում է. *«Մարմնական ցանկությունը միշտ մարտնչում է իմաստության հետ. մեկը մյուսից ավելի ջանք է թափում նվաճելու մարդկանց սիրտը, և մարդիկ անդադար տարուբերվում են երկու հակառակ ուժերի կողմից: Երանելի է նա, ով իմաստությամբ հաղթում է մարմնի ցանկությանը և ոչ թե հաղթվում...: Ո՛չ մի ուրիշ ցավաբեր ախտ այնքան անողորմաբար չի տանջում երիտասարդներին, որքան մոլեկան սիրո ախտը: Ավելի շատ մեռնում են ցանկական սիրուց, քան երկաթե սրով: Մոլեկան ցանկությունը ո՛չ միայն միտքն է խանգարում, այլև մաշում ու նիհարեցնում է մարմինը: Վերցրու փայտը կրակի միջից, և կրակ այլևս չի մնա, մտքից վերցրու ցանկության առարկան, և ցանկություն այլևս չի մնա: Բղջախոհը գուցե չի զգում դևերի պատճառած տանջանքները, որովհետև առավել իր ախտավոր կրքերից է չարչարվում, քան դևերից: Կրակը կամ ջրով է մարում, կամ հողով, կամ նյութի պակասությամբ. բղջախոհությունը կամ պահեցողությամբ է խափանվում, կամ ծերությամբ, կամ մահվամբ: Ուր բղջախոհ կա, թող այնտեղ կույր կամ դիվահար չփնտրվի, որովհետև բղջախոհը և՛ կույր է և՛ դիվահար» («Խրատի Թանգարան»):*

Հայրերից մեկն ասում է. *«Չար ցանկությունը խփում է գրպանին, թշնամի է մարդուն, վտանգ է մտքի համար, ջնջում է խիղճը, թուլություն է ուշիմությանը, հարբեցնում է զգացմունքները և վերջապես մահացու թույն է ամբողջ մարմնի համար»:*

Փորձենք հեռու մնալ վերջին մահացու մեղքից՝ բղջախոհությունից կամ չար ցանկություններից ու մեր կյանքում կատարենք այս մահացու մեղքին հակառակ առաքինությունը՝ ողջախոհությունը, այսինքն՝ ողջամիտ մտածումը, որը ավելի ընդունելի է Աստծու կողմից: Ամեն:

ԱՆԱՌԱԿ ՈՐԴՈՒ ԿԻՐԱԿԻ

«Հա՛յր, մեղանչեցի երկնքի դեմ ու քո առաջ»
(Ղուկ. 15:18)

Ղուկասի Ավետարանում կարդում ենք Հիսուսի հետևյալ առակը.

«Մի մեծահարուստ երկու որդի ուներ: Կրտսեր որդին հորն է ներկայանում ու պահանջում իր հարստության բաժինը: Հայրը իրրև փորձառու մարդ, խրատում է նրան, որ ետ կանգնի իր այդ անմաստ քայլից, բայց անօգուտ: Որդին վերցնում է իր բաժինը և գնում ուրիշ երկիր ու վատնում է ամբողջ ունեցածը: Երկրում սով է ընկնում և նա ստիպված է լինում խոզարած դառնալ, նույնիսկ նրան արգելվում է խոզերի առջև դրված ուտելիքից օգտվել: Մի պահ անդրադառնում է, թե իր հոր ծառաները ինչպիսի լավ խնամք են ստանում ու որոշում է վերադառնալ. ««Հա՛յր, մեղանչեցի երկնքի դեմ ու քո առաջ, և այլևս արժանի չեմ քո որդին կոչվելու, ինձ վերցրո՛ւ իրրև քո աշխատավորներից մեկը» (Ղուկ. 15:18-19):

Ահա այստեղ մեր առջև բացվում է հրաշալի մի տեսարան: Հայրը երբ հեռվից տեսնում է իր որդուն, վազում է դիմավորելու և մեծ սիրով գրկում է նրան ու պատվիրում իր ծառաներին, որպեսզի բերեն լավագույն հագուստները, իշխանության մատանին դնեն մատին և նրա պատվին մորթեն ամենագեր եզը: Բնականորեն այս վիճակը շփոթի է մատնում ավագ որդուն: Երբ նա գործից տուն է վերադառնում ու տեսնում կատարվածը, բողոքում է հորը ասելով, թե տարիներ շարունակ ինքը նվիրումով ծառայել է, բայց հայրը նույնիսկ իրեն մի ուլ իսկ չի տվել, որպեսզի ընկերների հետ ուրախանա: Հայրը հուզումով պատասխանում է. *«Որդյա՛կ, դու միշտ ինձ հետ ես, և ամեն ինչ, որ իմն է, քոնն է, բայց պետք էր ուրախ լինել և ցնծալ, որովհետև քո այս եղբայրը մեռած էր և կենդանացավ, կորած էր և գտնվեց»: (Ղուկ. 15:31-32):*

Անառակ որդին, երբ վերադարձավ, հայրը նրան

չկոպտեց, չհանդիմանեց, չբարկացավ, չքննեց, թե ինչպե՞ս ծախսեց իր հարստությունը, ինչպիսի՞ անառակ կյանք վարեց, այլ գրկաբաց ընդունեց նրան, համբուրեց, ուրախացավ և խնջույք պատրաստեց, բավական էր, որ իր մոլորված որդին վերադարձել էր և հասկացել իր սխալն ու դարձի եկել. *«Կորած էր և գտնվեց»:* Շատ հաճախ դժբախտաբար մենք ուրիշների մեջ միայն թերություններն ու պակասավոր կողմերն ենք նկատում, այն էլ խոշորացույցով: Դժբախտաբար նույնիսկ մեր տան անդամների լավ և դրական կողմերը չենք նկատում, միշտ գերադասելով ուրիշինը: Մեր Տերը չհանդուրժեց այդ ոգին, որն հատուկ էր փարիսեցիներին ու սադուկեցիներին, որոնք արտաքինով դատելով մարդուն նրա աչքի շյուղն էին տեսնում, առանց անդրադառնալու, որ իրենց աչքի մեջ գերան կա: Այսպիսիների համար էր, որ Հիսուս ասաց. *«Ամեն բարի ծառ բարի պտուղ է տալիս, և չար ծառ չար պտուղ է տալիս: Լավ ծառը չի կարող վատ պտուղ տալ, ո՛չ էլ վատ ծառը՝ լավ պտուղ տալ» (Մատթ. 7:17-19):*

Եղբայրները ներկայացնում են ամբողջ մարդկությունը իր երկու հիմնական բարոյական գծերով: Կրտսերը թաթախված է մեղքի մեջ, բայց բոլորովին դատարկված չի սիրով լցվելու կարողությունից, իսկ ավագ եղբայրը՝ հավատարիմ է, օրինապահ, բայց կորցրել է ներելու ոգին: Կրտսերը հակառակ մասամբ իր քայքայված վիճակին, զղջում է ու մոխիրներից վերստին կյանք է ստանում և բարձրանում իր որդիական պատվին: Սակայն ավագ եղբայրը այլ ձևով է նայում այս հարցին: Եզրակացությունն այն է, թե ավագ որդին եսասեր է: Ավետարանիչը չի շարունակում, թե նա ազդվե՞ց իր հոր խոսքերից, հաշտվե՞ց, տուն մտա՞վ և ուրախացա՞վ եղբոր վերադարձի համար, բայց դա այնքան էլ կարևոր չէ:

Կյանքում բոլորս էլ քիչ թե շատ նմանվում ենք Անառակ որդուն, որովհետև մարդը թույլ է իր բնությամբ, քանի որ սխալ գործելը մարդկային է: Մեղքերը ինչ ձևի

տակ էլ գործվեն, ծանր քարի պես ճնշում են գործադրում մեր խղճի վրա և հեռացնում մեզ Աստծուց: Անառակ որդին չուներ պետք եղած հասունությունը և կյանքի փորձառությունը, բայց կարողացավ իր մեջ ուժ գտնել ու վերադառնալ: Առակի ամենակարևոր դեմքը Անառակի հայրն է, որը գրկաբաց ընդունում է իր մոլորյալ զավակին:

Այստեղ մի պահ թողնենք Անառակ որդուն ու մոտենանք մեծ եղբորը: Կարծես թե ամեն ինչ լավ է այս երիտասարդի մոտ, հավատարմությամբ աշխատում է իր հոր հետ, կատարում նրա բոլոր հրահանգները ու երբեք նրա խոսքից դուրս չի գալիս, բայց երբ կրտսեր եղբայրը վերադառնում է, փոխանակ ուրախանալու, եսասիրությամբ ու նախանձով է լցվում նրա նկատմամբ: Այս պարագան հասկանալի է, երբ որ մանուկ ու պատանի ենք, ուզում ենք, որ մեր ծնողները մեզ ավելի շատ գնահատեն և սիրեն, քան մեր եղբայրներին ու քույրերին: Սակայն, երբ ծնող ենք դառնում ու զավակներ ունենում, երբեք կողմնապահություն չենք անում, բոլորին էլ բաժանում ենք մեր ծնողական սերը, սակայն Աստված չանի, եթե մի հիվանդ և թույլ մեկը լինի նրանց մեջ, բնական է, որ նրան ավելիով ենք ուշադրություն դարձնում, քանի որ նա շատ ավելի խնամքի կարիք ունի: Այսօր էլ մեր այս կյանքում դժբախտաբար կան այնպիսի անառակ որդիներ, որոնք չեն լսում իրենց ծնողներին, անտեղի վիրավորում, ցավեցնում են, չեն ուզում ենթարկվել օրենքներին, փորձում են ամենավատ բաները և մտածում են առանց աշխատանքի արագ հարստանալու մասին ու այդ ճանապարհին ժամանակից շուտ ընկնում և հայտնվում են կամ բանտերում կամ մի այլ տեղ, որտեղից վերադարձ չկա, ծնողներին թողնելով մեծագույն դժբախտության մեջ: Այսօր ամենուրեք ականատես ենք լինում, թե ինչպես մարդիկ հաճախ հեռանում են մեր երկնավոր Հորից ու ընկնում անառակ որդու վիճակում: Երանի այս մարդիկ էլ անառակ որդու նման խոր զղջում ապրեն, գիտակցեն, որ մեղավոր են ու վերադառ-

նան իրենց Հոր մոտ, որը բարի է և անպայման կների իրենց մեղքերը: Մնում է քայլը կատարել: Զղջման, ապաշխարության և անդրադարձի համար երբեք ուշ չէ:

«Անառակ որդու» առակի պատմությունը կարդալով, զգում ենք, որ սերը չի թագավորել այս ընտանիքում, հակառակ դեպքում մեծ եղբայրը սիրով, խորը կարոտի ու ներողամտության զգացումներով պիտի դիմավորեր իր կորած եղբորը և իրենց ընտանեկան ուրախությանը մասնակից պիտի դառնար: Իսկ *«Անառակ որդին»,* երբ ապրեց և իր մարմնի վրայ զգաց մարդկային բոլոր ստորացումներն ու զրկանքները, այն ժամանակ միայն հասկացավ իր թշվառության պատճառը:

Հետաքրքիր է Կ. Պոլսի Պատրիարք երջանկահիշատակ Շնորհք Արքեպս. Գալուստյանի մեկնաբանությունը Անառակ որդու Կիրակի օրվա խորհրդի մասին.

«Վատնելը վատ բան է, վատնելն անառակ և անկարգ մարդկանց գործն է: Դա մեծագույն չարիքն է անհատի և ընկերության համար: Եվ եթե Ավետարանի Անառակը, սեփական դառը փորձառությունից ելնելով, մեզ ուղղելիք բարեկամական թելադրանք ունենար, ենթադրում ենք, որ դա հետևյալ բառերով պիտի լիներ. «Հնարավոր է, որ դուք իմ չափ չեք ապականված, երանի՜ ձեզ: Հնարավոր է, որ մեղքերի մեջ իմ չափ չեք միրճված. վա՜յ նրանց, ովքեր ընկղմված են այդ տիղմի մեջ: Շատ դժվար կլինի նրանց վերականգնումը, մանավանդ ձեր դարում, նրանց մեծագույն մասը անդառնալիորեն կկորչի: Խոստովանում եմ, որ մեծագույն ցավս, որ մինչև կյանքիս վերջ ինձ նեղեց, հորս հարստության վատնումն էր, որը թափված կաթի նման այլևս անկարելի էր ձեռք բերել, և ժամանակս, որն այլևս անվերադարձ կորած էր ..» («Մեծ Պահոց Կիրակիների շղթան», Սուրբ Էջմիածին, 2001, էջ 66-67):

Համաձայն Ընդհանրական Քրիստոնեական Հայրերից Սուրբ Հովհան Ոսկերերանի Մատթէոսի մեկնության, Անառակ որդու հայրը՝ Հայր Աստվածն է, Անառակ որդին՝ մարդը, որ հեռանում է Աստծուց և իր շնորհները վատնում անառակու-

թյան մեջ: Ժամանակ է անցնում և մարդը ավելի մեծ մեղքի մեջ է ընկնում, դառնում խոզարած, (հրեական կյանքում խոզը անմաքուր կենդանի է և նաև պիղծ ոգին է խորհրդանշում), այսինքն նա այնքան անկում է ապրում, որ պիղծ միջավայրում է ապրում (խոզերի մեջ) ու ցանկանում է սնվել նրանց կերակուրից, սակայն այդ էլ չի թույլատրվում նրան: Այս, հուսախաբ և չափազանց ծանր վիճակում գտնվող անձը հանկարծ անդրադառնում է, սթափվում, դարձի է գալիս, կարողանում է իր մեջ ուժ գտնել ու վերադառնալ հոր մոտ, որը իբրև գթառատ և սիրող հայր, ո՛չ միայն գրկախառնվելով ընդունում է նրան, այլ վերադարձնում առաջվա փառքը՝ հագցնելով նրա աջ մատին՝ մատանին, կոշիկները և պատմուճանը (մատանին նշան է հին իշխանության վերադարձի, կոշիկները՝ չարին, պիղծ ոգիներին հաղթելու, իսկ պատմուճանը՝ հին մարդու նորոգության): Նրա համար զոհաբերում է նաեւ պարարտ եզը, որը խորհրդանշում է Քրիստոսին, Ով Իր կյանքը զոհաբերեց մարդկության մեղքերի փրկության համար:

Բարին այն է, որ մարդն զգում է, երբ վերադառնում է դեպի Աստված և հեռանում մեղավոր կյանքից, ապաշխարում ու արժանանում է Աստծու Արքայությանը: Մարդիկ, որոնք առավոտյան արթնանում են, տեսնում գեղեցիկ բնությունը ու փառք են տալիս Աստծուն, որ իրենց տվել է ևս մեկ օրվա կյանք, նրանք իրապես հասկանում են, թե ինչքա՛ն մեծ պարգև են ստացել Արարչից:

Երուսաղեմի Պատրիարք Թորգոմ Արքեպս. Գուշակյանը այսպես է բացատրում Անառակի Կիրակի օրվա խորհրդի մեջ փրկության գաղափարը.

«Մարդը մի ընկած հրեշտակ է, որը միշտ երկինքն է երազում. նրա հոգում միշտ նշույլներ կան, որոնք գերաշխարհիկ պայծառությունների ցոլքերն են. զգացմունքներ, որոնք նրա դեմքը չփոխող ժառանգության մնացորդներն են իր մեջ: Այդ պայծառ զգացումներից մեկը, որը մարդու բարոյական մեծությունն է կազմում, ինքնին փրկության ցանկությունն է»: (*«Քարոզներ» «Անառակի Կիրակին», Երուսաղեմ, էջ 159):* Ըստ

Թորգոմ Սրբազանի, մարդն ապրում է այնքան, որքան ժամանակ իր մեջ կենդանի է փրկության այս իղձը, որի մեռնելուց հետո էլ բարոյապես մեռնում է և մարդը:

Եկե՛ք ամեն մեկս քննենք մենք մեզ, տեսնելու համար թե կյանքի ո՞ր ուղղությամբ ենք ընթանում՝ հոր տանից հեռացողի՞, թե՞՝ վերադարձի ճանապարհով ընթացողի:

Վերադարձի ճանապարհը մեր քայլերը պիտի ուղղի դեպի Հայաստանյայց Առաքելական մեր Մայր Եկեղեցին, որն իր սիրտը լայն բացած սպասում է իր մեղավոր ու զղջացող զավակներին: Այս առակի միջոցով մեր Եկեղեցին կոչ է անում բոլոր մեղավորներին ու մոլորյալներին. *«Բռնեք վերադարձի ճանապարհը, եկե՛ք և այս փակյալ խորանի առաջ ծեծեք ձեր կուրծքը և խնդրեցե՛ք Աստծու ներողամտությունը, Նրա ողորմածությունն ու գութը և վստահ եղե՛ք, որ Նա պիտի ընդունի ձեր աղոթքը ու, երբ բացվի խորանը, Նա Իր Հարության ավետիսով պիտի ասի ձեզ, թե իրապես ազատվեցիք ձեր մեղքի կյանքից, եկե՛ք, օրհնվածներ, մտեք Աստծու արքայությունը»:*

Այս հետաքրքիր, բայց պարզ պատմությունը ուզում եմ կապել Եկեղեցու կյանքի հետ:

«Երկու եղբայրներ են լինում, որոնցից մեկը ամուսնացած էր, ուներ ընտանիք, իսկ մյուսն՝ ամուրի էր: Երկուսն էլ ապրում էին սիրով ու համերաշխ: Իրենց մեջ հավասարապես բաժանել էին հայրական ժառանգությամբ ստացած հողը, որի վրա գիշեր ցերեկ աշխատում էին: Մի օր ամուրի եղբայրը ինքն իրեն մտածում է ու ասում. «Արդար չի, որ այս ժառանգությունը և նրա արդյունքը մեր մեջ բաժանվի հավասարապես, քանի որ ես առանձին մարդ եմ և իմ հոգսերս ավելի քիչ են»: Այս մտածումով էլ նա ամեն գիշեր, աշխատանքից հետո, տուն վերադարձի ճանապարհին, իր պարկում վերցրած բավական քանակությամբ ցորեն, տանում ու լցնում է եղբոր շտեմարանը: Մինչ այդ նույնպիսի մտածում է ունենում նաև ամուսնացած եղբայրը, որն իր մտքում ասում է. «Արդար չի, որ այս ժառան-

գությունը և նրա արդյունքը մեր մեջ հավասարապես բաժանվի, քանի որ ես ամուսնացած լինելով, վերջ ի վերջո պիտի ունենամ իմ մասին մտածողներ, մինչ եղբայրս, իր նեղ օրերին կարիքը պիտի ունենա առավել հոգատարության»: Նա նույնպես ամեն գիշեր աշխատանքից հետո, տուն գալու ճանապարհին, իր պարկում վերցրած բավական քանակությամբ ցորեն, տանում ու լցնում է եղբոր շտեմարանը:

Մի օր գաղտնիքը բացահայտվում է ու եղբայրները ողջագուրվում են»:

Այս պատմությանը կարելի է հետևյալ բացատրությունը տալ. *«Երկու եղբայրները ներկայացնում են մարդկությունը, դաշտը, ուր նրանք աշխատում են՝ Եկեղեցին է, իսկ ժառանգությունը՝ հասնում է Աստծուց:*

Մայր Աթոռի միաբան Սիոն Արք. Մանուկյանն ասում է.

«Աստված անառակ որդիների Հայրն է, որոնց դարձին և գրկման է սպասում, նրանց գրկելու ու համբուրելու համար: Ո՛վ հավատացյալ Տերը քեզ է սպասում, գնա՛, նետվի՛ր Նրա գիրկը և խոստովանիր. «Հա՛յր, մեղա յերկինս և առաջի քո» (Հայր մեղանչեցի երկնքի ու Քո առաջ): Այն ժամանակ Նա սիրո ժպիտով քեզ պիտի դիմավորի, գրկի ու հայրական սիրո և ներման համբույրներ դրոշմի ճակատիդ ու ասի Իր հրեշտակներին. «Ուրախացե՛ք Ինձ հետ, որովհետև այս անառակ զավակս մեռած էր՝ հարություն առավ և կորած էր՝ գտնվեց» («Ավետարանի Պատգամներ», Բ. Տպագրություն, Երուսաղեմ, 1965, էջ 39):

ՕՐՎԱ ՇԱՐԱԿԱՆԸ ԳԿ.
«ՕՐՀՆԵՄՔ ԶՔԵԶ

Օրհնեմք զքեզ անսկիզբն հայր որդւոյդ միածնի, զոր առաքեցեր ի դարձումն մոլորեալ ոչխարին. դարձո եւ զմեզ ի մեղաց որդւոյ քո չարչարանօք:

Գովեմք զքեզ բան եւ լոյս որ զտիրական քո պատկեր լուսով ճրագի քո գտեալ վերականգնեցեր. կանգնեա զանկեալքս մեղօք քոյին սուրբ չարչարանօք:

Բարեբանեմք զփառակիցդ հօր զհոգիդ ճշմարիտ, որ նորոգեցեր զհնացեալքս մեղօք հնոյն ադամայ. Նորոգեա եւ զմեզ ի մեղաց նորոգութեամբ քո շնորհաց:

…

Օրհնում ենք քեզ Միածին Որդուդ անսկիզբ Հայր, Որին ուղարկեցիր մոլորված ոչխարին դարձի բերելու համար. Քո Որդու չարչարանքներով մեզ էլ մեր մեղքերից դարձի բեր:

Գովաբանում ենք Քեզ Բան և Լույս, որ Քո տիրական պատկերի ճրագի լույսով գտար ու վերականգնեցիր. Քո սուրբ չարչարանքներով մեղքով ընկածներիս էլ վերականգնիր:

Օրհնում ենք քեզ Հոր փառակից ճշմարիտ Հոգի, որ հին Ադամի մեղքերով հնացածներիս նորոգեցիր. Քո սուրբ չարչարանքներով մեղքով ընկածներիս էլ վերականգնիր:

Կանգո՛ւն պահենք մեր Եկեղեցին: Լսե՛նք Աստծու կանչը և զանգերի ղողանջները, որոնք հրավիրում են մեզ աղոթքի, ապաշխարության ու բարի կյանքի: Իրական ապաշխարությունը այն է, որ հավասարակշռենք մեր գործերը, առաջին հերթին հաշվետու լինելու մեր անցած կյանքի համար, որպեսզի կարողանանք Աստծու առաջ պատասխան տալ: Իրական քրիստոնյան նա է, ով բարի գործերով է փրկվում, հավատով, աղոթքով ու սիրով: Այսօր, երբ բոլորս էլ կանգնած ենք Աստծու խորանի առաջ վստահ լինենք, թե մեր Հայրը, որ երկնքում է, մեր անկեղծ սրտից բխած աղոթքներն ու խնդրանքները կլսի և կկատարի: Ամեն:

ԱՆԻՐԱՎ ԴԱՏԱՎՈՐԻ ԿԻՐԱԿԻ

«Պետք է միշտ աղոթել և չձանձանալ»
(Ղուկ. 18:1)

Հիսուս պատմում է մի առակ անձանձրույթ աղոթքի մասին:

«Մի քաղաքում ապրում էր խեղճ որբևայրի մի կին, որն անպիտան մի մարդու հակառակության առարկա էր եղել և շարունակ նեղ դրության մեջ էր ընկնում նրա երեսից: Խեղճ այրին չկարողանալով թշնամուն հակառակվել, դիմում է այդ քաղաքի դատավորին, խնդրելով, որ նրա անիրավություններն արգելի, իր իրավունքն ու արդարությունը պաշտպանի և ազատի իրեն նրա ձեռքից: Այրին գնում-գալիս է, աղաչում, պաղատում, բայց դատավորը նույնիսկ չի լսում նրան: Այրին Աստծու անունով երդվել է տալիս, բայց նա Աստծու վախն էլ չի զգում և անխիղճ կերպով ասում է. «Աստծուց վախենալու չափ փոքրոգի չեմ»: Այդ անհոգության դիմաց, սակայն, խեղճ այրին չի հոգնում, չի ձանձրանում և շարունակում է գնալ նույն դատավորի մոտ: Դատավորը վերջապես այրու հարատևությունից ձանձրանալով, մտքում ասում է. «Թեև Աստծուց չեմ վախենում և մարդկանցից չեմ ամաչում, բայց այն բանի համար, որ այրի կինը ինձ հոգնեցնում է, նրա դատը տեսնեմ, որպեսզի անընդհատ չգա ու ինձ չանհանգստացնի» (Ղուկ. 18:1-6):

Մեր Տերը ո՛չ միայն շեշտում է աղոթքի կարևորությունը, այլև մեր ուշադրությունը հրավիրում *«առանց ձանձրանալու»* խոսքի իմաստի վրա: Աղոթքը կյանք է և հոգիները խաղաղեցնող աստվածային ուժ ունի իր մեջ, որը փոխում է մարդու ներքին աշխարհը դեպի բարին:

Հիսուս մեր աղոթքի ուսուցիչն է: Ի՞նչ էր նրա ամբողջ կյանքը, Նրա գործը, եթե ո՛չ Աստծուն նվիրված մի աղոթք: Աղոթքով սկսեց Իր քարոզչությունը, աղոթքով շարունակեց և աղոթքով էլ ավարտեց Գեթսեմանիի պարտեզում: Նա, որ քարոզչությունից հաց ուտելու ժամանակ իսկ չուներ, շատ հաճախ առանձնանում էր աղոթելու, որ-

պեսզի նոր ուժ ստացած շարունակեր Իր առաքելությունը: *««Հա՛յր իմ, եթե կարելի է, այս բաժակը թող ինձնից հեռու անցնի, բայց ո՛չ՝ ինչպես ես եմ կամենում, այլ՝ ինչպես դու» (Մատթ. 26:39*),- այսպես աղոթեց Հիսուս Գեթսեմանիի պարտեզում:

«Աղոթքը կրոնական կյանքի գլխավոր մասն է: Չկա կրոն, աստվածպաշտություն առանց աղոթքի»,- ասում է երջանկահիշատակ Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանցը և շարունակում. *«Ինչպես արտասուքը թեթևացնում է մեզ, երբ մեր սրտի վրա ծանրացած վշտի խոստովանությունն ենք կատարում մեր սրտակից բարեկամին, նույնը և ավելիով զգում ենք Աստծու առջև, որը մեր Հայրն է և մեր իսկական բարեկամը: Ջերմեռանդ աղոթքի ազդեցության տակ մարդկային հոգին ինչպես ամպ լցվում է սիրո ցողով, բանավոր, ծարավ տունկերի վրա անձրևելու համար: Աղոթքը սեր է...» («Դեպի Լույս և Կյանք», «Աղոթքի սրբարար զորությունը», Գանձասար, 1994, էջ 113-116):*

Երկու տեսակ աղոթք կա: *Հավաքական – համայնքային աղոթք և առանձին աղոթք:*

Ինձ լսող մի մանուկի հարցրեցի՝ *«Այս առավոտ դու աղոթեցի՞ր»* - Այո՛. - այո՞: Չեմ ուզում հարցնել, թե ի՞նչ աղոթեցիր, բայց ո՞ւմ աղոթեցիր... - Աստվածին...: Աստվածին է աղոթել: Եվ ճիշտ է այդ: Ով որ Աստծուն է աղոթում, ճիշտ Անձին դիմած կլինի:

Իսկ եթե ասենք' *«Աղոթում եմ, աղոթում և ինձ լսող չկա»,* հարց է ծագում. *«Ո՞ւմ աղոթեցիր»:* Մի անձի՞, քեզ համար ուժեղ թվացող մեկին խնդրեցիր, որ քեզ ուրախացնի, բայց ո՞վ է նա, չնչին մի արարած: Լավ հիշեք մեր աղոթքի շնորհիվ է, որ Աստված մեզ պիտի օգնի:

Կ. Պոլսի երջանկահիշատակ Պատրիարք Շնորհք Արքեպս. Գալուստյանի մեկնաբանությունը.

«Առաքյալներից մեկն իրեն հատուկ կտրուկ և պարզ կերպով փորձում է այս հարցին պատասխանել «Խնդրում եք և չեք ստանում, որովհետև չարամտորեն եք խնդրում» (Հակ. 4:3):

«Շարամտորեն խնդրել» նշանակում է Աստծուն դիմել չար, եսասիրական ու աշխարհիկ նպատակներով: Բնականաբար, չի կարելի դրանց պատասխան սպասել բարի, մարդասեր և հոգի Աստծուց: Բայց ի՞նչ ասել այն աղոթքների մասին, որոնք իսկապես արդար ու բարի են և ուղղված են հիվանդների առողջության, բանտարկյալների արձակման, աշխարհի խաղաղության, մեր ազգի ու Հայրենիքի ապահովության համար: Ինչպե՞ս կարելի է շարունակել աղոթել, երբ Հոբի վիճակին ես մատնված՝ հարստությունդ կորցրել ես, զավակներդ՝ կորած են, բարեկամներդ՝ թշնամի են դարձել, առողջությունդ՝ քայքայվել է, իսկ ընտանիքդ՝ քանդվել: Այսպիսի վիճակում հոգեկան մեծ պատրաստվածություն ու հավատ է պետք Աստծուն չուրանալու, չմերժելու ու չանիծելու համար» («Մեծ Պահոց Կիրակիների շղթան», Սուրբ էջմիածին, 2001, էջ 99):

Երբ մտածում ենք, թե բարի ենք, հաջորդ հարցը այս է, թե՝ *«Ինչո՞ւ Աստված մեզ նեղությունների ու փորձանքների մեջ է դնում»:* Ինչո՞ւ ենք զարմանում: Պետք է լավ հասկանանք, թե Աստված չէ որ նեղություններ է պատճառում մեզ, այլ՝ չարերը, որոնք ուզում են մեզ միշտ վախի ու տագնապների մեջ պահել, մեր կյանքը անտանելի դարձնել, մեր միջի եղած լավն էլ մոռացնել տալ: Նպատակը մեկ է՝ մեզ իրենց ծուղակի մեջ գցել և հեռացնել Արարչից:

Աղոթել նշանակում է խոսել Աստծու հետ, որը Ամենակարող է և Ամենավստահելին: Աստծու հետ խոսելուց հետո ո՛չ մեկի օգնության կարիքը չենք ունենա: Աղոթքի միջոցով անտեսանելի մի կամուրջ է կապվում մեր և Աստծու միջև, որը մեզ մի նոր ուժ է տալիս, հույս և վստահություն ներշնչում. *«Փառք քեզ Աստված, այսօր էլ ուրախ ենք մեր ունեցածի համար»:* Սբ. Գրիգոր Նարեկացու խոսքերով. *«Ո՛չ թե տրվածի, այլ տվողի կարոտն ունեմ»:*

Աղոթքը պետք է կատարվի սրտի և հոգու մաքրությամբ: Աստված չի լսում այն աղոթքը, որի նպատակը մի ուրիշին վնասելու համար է:

Գրիգոր Աստվածաբանն այսպես է արտահայտվում.

«Աղոթքը սրտի գործ է և ո՛չ թե շրթունքների, ու Աստված չի նայում աղաչողի խոսքերին, այլ՝ սրտին, թե ինչպես պատրաստվի ընդունելու:

Եկեղեցում կան մարդիկ, որոնք երկար են աղոթում, բայց աղոթողի վարք չունեն և ի՞նչ զարմանալու բան կա, եթե այդպիսի մարդու աղոթքը լսելի չլինի: Կիրակի օրը պետք է հեռու մնալ ամեն մարմնական աշխատանքից և միայն աղոթքով ու գոհություն տալով զբաղվել» «(Ասույթներ քարոզների համար», Ս. էջմիածին, 1998, էջ 130):

Հետաքրքիր է իմանալ այս պատմությունը.

«Համաշխարհային հանճարներից մեկը՝ Դանթեն, մի Կիրակի առավոտ, Սուրբ Պատարագի ամենասրբազան պահին, երբ հավատացյալները ծնկի եկած աղոթում էին, մնում է կանգնած, իր հակառակորդների ուշադրությունը դարձնելով իր վրա: Արարողությունից հետո նրանք մոտենում են կարդինալին և ամբաստանում Դանթեին իբրև սրբապիղծ ու անհավատ:

Ո՛վ Դանթե, այս ինչ մեղք ես գործել, որ լսում եմ քո մասին,- ասում է Կարդինալը հուզված շեշտով:

Ինձ ամբաստանողները իրավունք ունեն, Կարդինալ Հայր,- ասում է Դանթեն,- *հոգիս այնքան վերացած էր աղոթքով, որ ուշադրություն չդարձրեցի մարմնիս շարժմանը, երևում է նրանք սրտանց չէին աղոթում, որ կարողացան ինձ նայել ու հետևել»:*

Ապրում ենք ու հաճախ դժգոհում, տեսնելով, որ չարը, անիրավն ու ավազակը չեն պատժվում իրենց ժամանակին: Չմոռանաք, որ Աստված արդար է և դրա համար անարդար որևէ՝ գործ հաճելի չի Նրան: Աստծու արդարությունը գործադրվում է սիրո սկզբունքով: Որևէ անիրավություն և անարդար գործ անպատիժ չի մնում: Սակայն Աստված մեր ուզած ձևով չի պատժում, բայց մեղավորը անպատիժ չի մնում: Սա մեզ չի գոհացնում, որով-

հետև մենք ուզում ենք, որ մեզ վիրավորողը ճիշտ մեր աչքի առաջ պատժվի: Աստծու պատժելու ձևը տարբեր է: Նա անիրավին մեր ուզածով չի պատժում, նախ հնարավորություն և առիթ է տալիս, որ մեղավորը դարձի գա ու չի ուզում, որ նա կորչի, այլ՝ փորձում է մինչև վերջին րոպեն փրկել նրան: Սա աստվածային սիրո արտահայտությունն է մարդկանց նկատմամբ: Սրանից բացի, Աստված մեզ ազատություն է տվել, որպեսզի գիտակցենք ու չմեղանչենք: Անձրևն ու արևը բոլորի վրա հավասարապես են թափվում ու այրում, դատաստանը հետո է լինելու:

Ամեն տեսակի աղոթք ընդունելի է, ուր էլ որ կատարվի: Սակայն աղոթքի հիմնական վայրը Եկեղեցին է, Աստծու Տունը, ուր հավատացյալները ներշնչումով ու հոգևոր մթնոլորտի մեջ հավաքական աղոթքով, շարականների երգեցողությամբ, Սուրբ Պատարագի հոգեպարար կատարումով, հաղորդակից են դառնում անիմանալի խորհրդին: Երբ Հիսուս ասում է, թե առանձնացեք տան մեջ, փակեք դուռն ու լուսամուտը և այդպես աղոթեցեք, մի ընդունեք բառացի կերպով: *Տունը մարդու հոգին է: «Փակել դուռն ու Լուսամուտը», նշանակում է կտրվել աշխարհային մտածումներից և կենտրոնանալ աղոթքի վրա: Աղոթել Աստծու հետ նշանակում է խոսել Նրա հետ:* Աղոթքի պահին հավատացյալը պիտի կտրվի ամեն ինչից և կապվի միայն Աստծու հետ: Երբ աղոթում ենք, ավելորդ բաներ չխնդրենք Նրանից, չմտահոգվենք մեր անցավոր, առօրյա կարիքներով, այլ խնդրենք Աստծու արքայությունը:

18-րդ դարի Հայ Եկեղեցու Հայրերից Պողոս Պատրիարք Ադրիանուպոլսեցին իր *«Խրատի Թանգարան»* գրքում աղոթքի մասին այսպես է արտահայտվում.

«Ո՛չ ոք չի կարող իրեն անբասիր ներկայացնել եթե աղոթքն անտեսում է: Որովհետև ամեն ժամ ու ամենուր, ինչ վիճակում էլ, որ մեկը լինի՝ թե՛ առողջ և թե՛ հիվանդ, կարող է Աստծուն մտքում ունենալ Նրան փառավորել գովել ու օրհնել,

այս իսկ է աղոթելը»:... («Խրատի Թանգարան», էջմիածին, 1999, էջ 393):

Մեր Եկեղեցու Հայրերից՝ Սուրբ Հովհան Մանդակունի Հայրապետը իր ճառերից մեկում ասում է. *«Եթե մեկը սիրով լցված աղոթի, Աստված նրան կասի. «Ահա այստեղ եմ»: Երբ աղոթողը անկեղծ ու մաքուր արտասուքով աղոթի, երկնքի դռները կբացվեն ու նրա ձայնը կհասնի Աստծու ականջներին»:*

Իսկ Ընդհանրական Քրիստոնեական Հայրերից Սուրբ Հովհան Ոսկեբերան Հայրապետն այսպես է արտահայտվում. *«Ինչպես ծառը չի կարող ապրել առանց ջրի, այնպես էլ մարդու հոգին՝ առանց աղոթքի միջոցով հաղորդակցվելու Աստծու հետ: Եթե դու ինքդ քեզ զրկես աղոթքից, քո վիճակը պիտի նմանվի ջրից դուրս հանված մի ձկան, որովհետև ինչպես որ ջուրը ձկան կյանքն է, այնպես էլ աղոթքը քեզ համար»:*

Սուրբ Ներսես Շնորհալի Հայրապետի խոսքերն են. *«Ձեր զավակներին աղոթք սովորեցրե՛ք, որ կեղտոտ խոսքերին ու հայհոյանքներին չվարժվեն, որովհետև մանկության ժամանակ ծնողների խրատը ավելի է դրոշմվում մանուկների մտքում անջնջելի կերպով, որի փոխարեն պիտի վարձատրվեք»:*

ՕՐՎԱ ՇԱՐԱԿԱՆԸ ԲԿ.
«ՈՐ ՊԱՏՈՒԻՐԱՆ»

Որ պատուիրան ճշմարտութեան աւանդեցեր եկեղեցւոյ քո քրիստոս. անսահման ժամանակաւ աղօթել միշտ առ աստուած հոգւով եւ մտօք:

Որ զբան քո օրինաց հաստատեցեր գործով մեզ օրինակ. հանելով զգիշերն ի գլուխ յաղօթսն աստուծոյ բնութեամբ մերով տնօրինաբար, որում կրկնի ծունր ամենայն:

Աղաչանօք աստուածածնին անապական քում ծնողին. զիմանալի աչս սրտից մերոց բացցես ողորմութեամբ հայիլ ի լոյս քո քրիստոս:

…

Ճշմարիտ պատվիրանն ավանդեցիր Եկեղեցուդ, Քրիստոս, թե միշտ պետք է անսահման ժամանակով հոգով և մտքով աղոթել Աստծուն:

Օրենքիդ խոսքը գործովդ հաստատեցիր, երբ ամբողջ գիշերն Աստծուն աղոթելով անցկացրիր՝ իբրև մեզ օրինակ, երբ հատուկ տնորինությամբ մեր բնությունն էիր առել, Որիդ առաջ իջնում են բոլոր ծնկները:

Քրիստոս, Քո անապական ծնողի, Աստվածածնի աղաչանքով բաց մեր սրտերի իմանալի աչքերը, որպեսզի ողորմությամբ նայենք Քո Լույսին:

Եկե՛ք մեր անձանձրույթ աղոթքով փառք և գոհունակություն հայտնենք Ամենակալ Աստծուն Իր պարգևած կյանքի և շնորհների համար: Ամեն:

ԾԱՂԿԱԶԱՐԴ

«Օրհնյալ է այդ թագավորը, որ գալիս է Տիրոջ անունով»

(Ղուկ. 19:38)

Ավելի քան քսանմեկ դարեր առաջ Հիսուս որպես Փրկիչ ու Խաղաղության Իշխան հանդիսավոր մուտք գործեց Երուսաղեմ: Նրան դիմավորելու եկած ժողովրդի սրտից բխած ուրախության ձայների մեջ անընդհատ լսվում էին այս բառերը. *«Ովսաննա, Ովսաննա, օրհնեալ եկեալ անուամբ Տեառն»:* Պատմության մեջ իր նմանը չունեցող ուրախության տեսարանն էր, որ պարզվում էր Նրա ճանապարհին: Արմավենիների ոստերով, ձիթենյաց անուշաբույր տերևների զարդարված ճյուղերով գորգապատվել էր Հիսուսի ճանապարհը դեպի Երուսաղեմ: *«Ովսաննա»* նշանակում է՝ *«Օրհնեսցի կամ օրհնյալ թող լինի»:* Շատերը շփոթված՝ կատարվածից հարցնում էին՝ *«Ո՞վ է որ գալիս է»* և ստանում պատասխանը, թե Աստծու Որդին է, որ հաղթական մուտք է գործում Երուսաղեմ:

Մեր Տերը մտնում էր Երուսաղեմ իբրև հասարակ, պարզ ու աղքատ մարդ, նստած խոնարհագույն ավանակի վրա: Նա ո՛չ սպառազինված բանակ ուներ, ո՛չ շքեղ հագուստներ և, ո՛չ էլ զինվորական պաշտպանություն: Հակառակ Իր այս պարզության, ժողովուրդը ողջունում է Նրան թագավորներին հատուկ փառաշուք ընդունելությամբ:

Ծաղկազարդը հայելին է այսօրվա մարդկության: Կյանքում մենք ևս հաճախ ողջունում ենք Հիսուսի ներկայությունը *«Ովսաննա»-ներով,* սակայն շատ անգամներ մեր մեջ ստեղծվում են նաև տկարության ու թուլության պահեր, երբ Ավետարանի ոսկի օրենքները կորցնում են իրենց գործնական արտահայտությունը մեր ամենօրյա կյանքում: Ապացույց՝ այսօրվա մեր կյանքը, ներկա աշխարհը իր բոլոր երեսներով, ուր մարդը մի կողմից դեպի Աստված է բարձրանում, իսկ մյուս կողմից՝ դժբախտաբար, գնում դեպի կործանում և իր մեջ խեղդում հոգևորն ու բարոյականը:

Մեր Տերը շատ լավ գիտեր, թե ձիթենու և արմավենու ճյուղեր բռնողները *մի քանի օր հետո պիտի ծեծեն Իրեն,* տոնական զգեստները ճանապարհի վրա փռողները՝ *պիտի պատռեն Իր հագուստները, «Ոսանա՛ ի բարձունս»* երգողները, վրեժի զգացումներով պիտի փոխեին իրենց ձայները զայրացած աղաղակների՝ *«Խաչ հանեցե՛ք Դրան»* և Իրեն մատուցված ծաղկեփնջերը՝ *պիտի դառնային փշերից հյուսված պսակի:*

Ամեն մարդ Աստծու կողմից իրեն շնորհված կյանքը պարտավոր է թանկագին նվեր նկատել, որը պետք է խնամի ու անխնա չգործածի և ճակատի քրտինքով վաստակելով իր հացը՝ փառք տա Աստծուն ու այդ բարիքներին մասնակից դարձնի նրանց, որոնք օգնության կարիք են զգում: Այդպես վարվեցին հոգով հարուստ մարդիկ, քանի մեծացան, այնքան խոնարհվեցին, ինչքան նյութական հարստություն հավաքեցին, այնքան առատաձեռն դարձան, որովհետև հրաշալի կերպով կարողացան տեսնել ճիշտ համեմատությունները իրենց անձի ու Աստծու հզոր ուժի միջև: Իսկ նրանք, որոնք իրենց ֆիզիկական ուժով զոռոզացան և իրենց կամքը պարտադրեցին ու կարծեցին, թէ *«մեծություններ»* դարձան, չարաչար սխալվեցին, որովհետև ժամանակից շուտ քայքայեցին իրենց կյանքը և նույնիսկ ոմանք իրենց կենդանության օրոք, իբրև արյունաքամ բռնակալներ իրենց իսկ ժողովրդի կողմից դատապարտվեցին ու խաչվեցին:

Խորանի փակ վարագույրը խորհրդանշում է դրախտի, Երուսաղեմի ու մեր հոգու դուռը: Հիսուս որպես խաղաղասեր Իշխան, Ծաղկազարդի օրը Երուսաղեմի դռնից մուտք է գործում, իսկ այսօր՝ մեր հոգիներից ներս:

Ավելի քան պարզ է, թե Ծաղկազարդի տոնն է պատճառը, որ մեր Եկեղեցին այսպես գեղեցիկ կերպով զարդարված է: Բնական ուրախությունից բացի, այս զարդարանքը երբեմն վախ է առաջացնում մեր մեջ: Ինչո՞ւ: Բոլորդ էլ լավ եք հիշում Ավետարանի թզենին, նա էլ

կանաչ էր ու գեղեցիկ տեսք ուներ, սակայն Հիսուս պտուղ չգտնելով նրա վրա՝ չորացրեց: Աղոթենք, որ մեր Եկեղեցին նման ճակատագիր չունենա: Այս նյութական տեսարանով պարզապես հիացողներ չլինենք, այլ հասկանանք կատարված խորհրդի կարևորությունն ու մեծությունը: Հակառակ չենք, որ մեր Եկեղեցին միշտ զարդարված լինի, սակայն ո՛չ թե միայն ծաղիկներով, գեղեցիկ նկարներով կամ աչքի ընկնող ուրիշ առարկաներով, այլ՝ մանավանդ մեր ներկայությամբ և իրար նկատմամբ ունեցած մեր սիրով ու բարի գործերով: Ի՞նչ էր արել Հիսուս, որ օրհնում ու փառաբանում էին Նրան, պարզ մի բան, բուժել էր, հրաշքներ գործել և մխիթարել նրանց:

Քսանմեկ դարեր են անցել այն օրից, երբ Աստծու Որդին մտավ Սուրբ Քաղաքը և Իր ձայնը բարձրացրեց հաստատելու համար այն, թե Տաճարը Աստծու Տունն է և պետք է մնա իր վեհության մեջ:

Ուզում եմ այս պատմությունը ձեր ուշադրության հանձնել:

«Մի ժողովուրդ չար մարդկանց երեսից ըմբոստանում է իր արդար թագավորի դեմ. ձերբակալում ու բանտարկում է նրան: Թագավորը իր ընկերների օգնությամբ կարողանում է բանտից փախչել և ամբողջ գիշեր հոգնած թափառելուց հետո, հասնում է ամայի մի տեղ ու քնում քարի վրա:

Ապստամբները լսելով թագավորի փախուստի մասին, կատաղությունից այլայլված, խուզարկում են ամեն տեղ նրան գտնելու և սպանելու համար:

Վերջապես նրանց հաջողվում է գտնել հուզումից և վշտից այլակերպված թագավորին, սրտաշարժ ու անճանաչելի դրության մեջ:

Բարկացած մարդիկ նրան տեսնելով առանց արքայական պատմուճանի, մերկ ոտքերով արյունլվա վիճակում, խրոճահարվում ու ներքնապես ուժեղ ցավ են ապրում և հասկանալով իրենց սխալը, ծնկի գալով ներողություն են խնդրում ու

արտասվալից աչքերով երդվում մշտապես հավատարիմ մնալ իրենց թագավորին»:

Սակայն, դժբախտաբար մի ժողովուրդ, որն սպասում էր Հռոմեական հզոր Կայսրության լծից իրեն փրկելու համար աշխարհիկ զինվորական հրամանատարի, Հիսուսի Երուսաղեմ փառաւոր մուտքից հետո ուրացավ ճշմարիտ Թագավորին, ոտքերի տակ ճզմեց ձիթենու ու արմավենու ճյուղերը և չարչարանքներով ու տանջանքներով խաչի վրա մահվան արժանացրեց Նրան:

Սուրբ Պատարագի ավարտին կատարվում է նաև Դռնբացեքի արարողությունը: Ներկայացվում է Վերջին Դատաստանը: Տեղի են ունենում հարցեր ու պատասխաններ: Փակված վարագույրի առջևից երեք անգամ հաջորդաբար երգվում է *«Բաց մեզ Տեր»* երգը, իսկ Հիսուս կոչ է անում ժողովրդին՝ ապաշխարելու և իրենց մեղքերի համար թողություն խնդրելու:

Յուրաքանչյուր հայ քրիստոնյա ո՛չ թե խոսքով, այլ գործով պիտի հաստատի իր խաղաղասեր ու մարդասեր լինելը: Մեր ընտանիքներից ներս՝ քենը, ատելությունը, նախանձն ու ոխը պետք է վերանան: Մեր մեջ քրիստոնեական սերն ու ներողամտության ոգին ձիթենու հունտերի պես պետք է ուժեղ արմատներ ունենան: Եթե մեզ չուզողների, հակառակորդների ու թշնամիների հետ այսօր չմիանանք, ե՞րբ և ո՞ւր պիտի հաշտվենք: Ինչպե՞ս կարող ենք Հիսուսին ողջունել, Ծաղկազարդ և Զատիկ տոնել, երբ մեր հարազատների հետ գժտված ենք ու մերժում ենք նրանց հետ կիսել մեր Տիրոջ ուրախությունը:

ՇԱՐԱԿԱՆ ՕՐՀ. ԱՋ.
«ՈՐ ՎԵՐՕՐՀՆԻՍ»

Որ վերօրհնիս յաթոռս քերովբէից, ի վերայ նստիլ յաւանակի հաճեցար, բարեբանեալ որ երկիրդ ի կեցուցանել:

Ուստի եւ մեք զյաղթական օրհնութեանցն զձայն

մատուցանեմք քեզ թագաւոր փառաց ընդ տղայսն օրհնաբանելով, բարեբանեալ որ երկիրդ ի կեցուցանել:

Ովսաննա ի բարձունս ալէլուիա, բարեբանեալ եկեալ անուամբ տեառն ալէլուիա. եւ օրհնութիւն որ գալոցդ ես անուամբ տեառն ալէլուիա:

…

Դու որ քերովբեների աթոռների վրա վերստին օրհնըվում ես, հաճեցար ավանակի վրա նստել մեզ փրկելու եկար, ո՛վ բարեբանող:

Ուստի մենք էլ, հաղթական օրհնություն ենք մատուցում Քեզ, տղաների հետ Քեզ օրհնաբանելով, Թագավոր Փառաց, որ մեզ փրկելու եկար, ո՛վ բարեբանող:

Ովսաննա բարձունքներում, ալելուիա՝ բարեբանյալ է Տիրոջ անունով եկողը, ալելուիա և օրհնություն, որ Տիրոջ անունով պիտի գաս. ալելուիա:

Եկե՛ք մեր բարի գործերով արդարացած, սրբված ու մաքրված Դոնբացեքի շարականին ձայնակցելով ասենք՝ *«Տե՛ր, Քո ողորմության դռները բաց մեր ժողովրդի առջև, որպեսզի մեր զավակներն էլ Քո սրբերի հետ միասին լուսեղեն հարկերին արժանանան»:* Ամեն:

ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ

«Եվ բոլորը լցվեցին Սուրբ Հոգով ու սկսեցին խոսել ուրիշ լեզուներով, ինչպես որ Սուրբ Հոգին նրանց խոսել էր տալիս»
(Գործք 2:4)

Պատկերացրեք մի մարդու, որը ամբողջությամբ ապրում է միայն իբրև ֆիզիկական մարմին. հոգին մեռած է նրա մեջ: Մարմինը տիրոջից պիտի պահանջի հլու հնազանդ ձևով կատարել իր պահանջները՝ ուտել, խմել, հանգստանալ և այլ հաճույքներ: Միայն այսքանը: Ուրիշ ո՛չ մի բան նա չի կարող ցանկանալ: Այսպիսի մեկը ինչո՞վ է տարբերվում կենդանուց. իր դաժանությա՞մբ, թե՞՝ իր տրամաբանությամբ ու խելքով: Եթե նրա մեջ հոգի չկա, բնական է, որ այս երկուսը նա պիտի օգտագործի գազանային բնազդով իր մարմնական բոլոր ցանկությունները իրագործելու համար: Սակայն հարց է ծագում, թե՝ *«Ով որ հոգի ունի, արդյոք չի՞ մտածում իր մարմնի, ուտելիքի, հագուստի և այլ նյութական կարիքների մասին»:* Անշուշտ մտածում է և նույնիսկ պարտավոր է, բայց հոգին է, որ կարգավորում է, իմաստավորում և գեղեցկացնում մարդկային կյանքը:

Այս առթիվ ուզում եմ ձեզ մի հետաքրքիր դեպք պատմել.

«Մի օր Նյու Յորքի Սուրբ Վարդան Մայր Տաճարում Առաջնորդ Սրբազան Հայրը իր քարոզում մի քանի անգամ ոգևորված ասում է. «Ո՞ւր է Հոգին, ո՞ւր է Հոգին»: Այդ պահին, մի տասը տարեկան երեխա վազում է Սուրբ Սեղանի մոտ և ուղղակի դիմելով քարոզիչ Սրբազանին, ասում. «Այստեղ եմ, այստեղ եմ»: Անշուշտ այդ պահին բոլորը զարմանում և շփոթվում են: Փոքրիկը, որն իր մոր կողմից միշտ կանչվելիս է եղել «Հոգիս, Հոգիս» փաղաքշական խոսքով, մի պահ մտածում է, թե Սրբազան Հայրը իրեն է կանչում ու վազում է Սուրբ Սեղանի մոտ»» (այդ շրջանին Միացեալ Նահանգաց Արևելյան Թեմի Առաջնորդն էր՝ Գերաշնորհ Տ. Թորգոմ Արք. Մանուկյանը,

այժմ վախճանյալ): Մաքուր սրտով մանուկը այդ պահին ղառնում էր Սուրբ Հոգու շնորհների տեսանելի ներկայությունը Սուրբ Մեղանի առջև:

Բոլորս էլ գիտենք, որ կան նաև չար սիրտ ունեցողներ: Երբ մենք խոսում ենք բարության, սիրո, մեծահոգության, խղճմտանքի, գթասրտության և ընդհանրապես գեղեցիկի մասին, մարտահրավեր ենք ուղղում չարի, ատելության, թշնամության, անհոգության, բարկության և ընդհանրապես վատ երևույթների դեմ: Բոլոր բացասական երևույթները մարդուն ղեպի մահ են տանում, խոսքս ֆիզիկական մահվան մասին չի, այլ՝ հոգու մահվան:

Հիսուսի ամբողջ քարոզչությունը, կատարած հրաշքներն ու բժշկությունները, Իր կրած տանջանքներն ու մահը և ապա հրաշալի ու հաղթական Հարությունը, միայն մի բանի համար էր, որպեսզի մարդկանց հոգիներում թագավորի բարին ու գեղեցիկը:

«Եվ ահա ես ուղարկում եմ Ձեզ իմ Հոր խոստումը, իսկ դուք նստեցե՛ք Երուսաղեմ քաղաքում, մինչև որ երկնքից զորությամբ զգեստավորվեք» (Ղուկ. 24:49):

Առաքյալներին պատրաստելու համար Հիսուս փչեց նրանց վրա ու ասաց. *«Առե՛ք Սուրբ Հոգին: Եթե մեկի մեղքերը ներեք, նրանց ներված կլինի. եթե մեկի մեղքերը չներեք, ներված չի լինի» (Հովհ. 20:22-23):*

Եթե այսօր մեր Եկեղեցին ցանկություն ունի ավելի կենսունակ, միասնական և միասիրտ դառնալ, ինչպես մեր նախնիներն էին, առանց խախտելու հիմքը պիտի կարողանա նոր, ժամանակակից ձևերով, մոտեցում ցուցաբերել հավատացյալների հավատը և սերը զորացնելու համար:

Հարավային Հնդկաստանի Եկեղեցու եպիսկոպոսներից Լեզլի Նիուպիկին գրում է. *«Եթե մի պատասխան գտնենք այս հարցմանը, թէ ո՞ւր է Եկեղեցին, նախ պետք է հարցնենք, թէ «Ո՞ւր է, որ Սուրբ Հոգին ներկա է իր զորությամբ»:*

Այսօր պարզ Եկեղեցի եկողների մեծ մասը բա-

ցարձակ ծանոթություն չունեն ո՛չ մեր Եկեղեցու պատմության, ո՛չ նրա հոգևոր առաքելության և ո՛չ էլ մանավանդ՝ Սուրբ Հոգու մասին:

Հարց է առաջանում, եթե մեր ժողովրդի զավակները տեղեկություններ չունեն վերոհիշյալների մասին, ինչպե՞ս կարող են լցվել Սուրբ Հոգով:

Պատասխանը կարող ենք գտնել Կ. Պոլսի երջանկահիշատակ Շնորհք Պատրիարք Գալուստյանի այս հրաշալի բացատրական խոսքերի մեջ.

«Պետք է համաձայնվենք, որ եթե մեկը ուզում է մի նոր բանով լցվել, նախ պետք է դատարկվի: Հիսուս ասաց. «Երանի հոգով աղքատներին»: Մինչև որ մեկը չդատարկի ինքնիրեն հպարտությունից, անձնասիրությունից, իշխելու ցանկությունից և մարդկային մյուս սովորական ցանկություններից, Սուրբ Հոգին չպիտի լցնի նրա կյանքը: Մենք պիտի խաչվենք Քրիստոսի հետ, որպեսզի Նա կազմավորվի մեր մեջ...:

...Հետո մենք պետք է համաձայնության գանք Սուրբ Հոգու գլխավոր պարգևի մասին, որը սերն է:... Ինչքա՛ն Հոգին ամբողջությամբ բնակվի մեր մեջ, այնքա՛ն շատ սեր պիտի արտահայտվի դեպի դուրս» («Գունագեղ Կիրակիներ և Հոգեզայուստ», Ստամբուլ, 1972, էջ 74-75):

Այսպես հիմնվեց Աստծու Եկեղեցին: Եկեղեցի, որը կառուցված է մարդկային հոգիների աղյուսից, շաղախված սիրով ու եղբայրսիրությամբ: Այն ո՛չ քարից է, ո՛չ փայտից և ո՛չ էլ ոսկուց: Քրիստոսի Եկեղեցին հոգեկան տաճարն է: Նյութական տաճարները հնանում են, կործանվում կամ թշնամին է ավերում, սակայն ոգեղեն տաճարները անմահ են, մշտանորոգ և փյունիկի պես վերածնվող:

Հոգու կրակը չհանգցնելու լավագույն միջոցը նրա տարածումն է, երբ համախմբվենք ու կողք-կողքի բերենք մեր ջահերը, հրդեհ ու բոց կլինի, որը ո՛չ մի հակառակորդ ուժ չի կարող հանգցնել: Հակառակորդ, որը երբեմն սողոսկում է մեր մեջ, հուսալքելու, մատնելու անհոգության, բաժանելու և քայքայելու, դարձնելու մեր ազգի զավակնե-

րին անտարբեր իրենց հոգևոր ժառանգությանց ու սրբությունների նկատմամբ: Չարիքներ, որոնք կարող են հանգցնել հոգու նվիրական հուրը, սփռելով ցուրտ ու խավար:

Հիշյալ մտքի ճշմարիտ վկան է Հայ ժողովրդի ու նրանից անբաժան մեր Եկեղեցու պատմությունը: Թեև թշնամիները շատ անգամներ կործանեցին Հայոց երկիրը, հողմացրիվ արեցին մեր ազգի զավակներին, փլատակների ու պահեստների վերածեցին մեր Եկեղեցիները, սակայն չկարողացան հանգցնել Հայ հոգու կանթեղը, հավատի ու հույսի կրակը: Այո՛, չկարողացան, որովհետև ինքնագիտակցության փոքրիկ մի կայծ բավական է եղել վերստին բորբոքելու Հայ հոգու հուրը:

ՇԱՐԱԿԱՆ ՀԱՐՅ ԱՋ.
«ԶՀՈԳԻՈՅՆ ԶԳԱԼՈՒՍՏՆ»

Զհոգւոյն գալուստն տօնեմք, որ մխիթարեաց զառաքեալսն հանգչելով ի նոսա հրեղէն լեզուօք. օրհնեալ յաւիտեան:

Զերեւումն հոգւոյն տօնեմք, վերաբերեալ աստուած խոստովանիմք նորոգող եւ կենդանարար. օրհնեալ յաւիտեան:

Այսօր ուրախացեալք հոգւովն, խոստովանիմք աստուած զհոգին սուրբ բղխումն եւ լցուցիչ զամենայն. օրհնեալ յաւիտեան:

…

Հոգու գալուստն ենք տոնում, որը առաքյալներին մխիթարեց հրեղեն լեզուներով նրանց վրա հանգչելով. թող օրհնյալ լինի հավիտյան:

Հոգու երևումն ենք տոնում, նրան խոստովանվում ենք իբրև վերևից եկող նորոգիչ և կենդանարար Աստված. թող օրհնյալ լինի հավիտյան:

Այսօր ուրախ սրտով Սուրբ Հոգուն իբրև Աստված ենք խոստովանվում. բխումն ու բոլորին լիցքավորողը, թող օրհնյալ լինի հավիտյան:

Հոգեգալստյան տոնը ամեն տարի մի առիթ է ստեղծում մեզ հավատացյալներիս առաքյալների օրինակով ի մի գալու, վերստին խառնելու *սրտերի մռխիրը և վառելու, բորբոքելու Սուրբ Հոգու կիսահանգած ու դալկացած կրակը՝ անհամաձայնության, այլասիրության, կեղծիքի խավարը և եսասիրության ցուրտը:* Եվ կարևոր չի, որ մենք խոսենք զանազան լեզուներով, սակայն *Սուրբ Հոգու շնորհիվ* խոսենք մեզ պակասող մի շատ կարևոր լեզվով՝ *Միրո լեզվով, Միրո բարբառով,* որով խոսում են սրտերը, որոնք փառաբանում են Հորը, Որդուն և Մխիթարիչ Սուրբ Հոգուն: Ամեն:

ՀԵՂԻՆԱԿԻ ՏԱՐԲԵՐ ՏԱՐԻՆԵՐԻՆ
ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԳՐՔԵՐԸ

1.	Տիրոջ Խորանը	Լոս Անջելոս	2006
2.	Հավատքի ուժը	Լոս Անջելոս	2006
3.	Տիրոջ Խորանը Բ. հրա.	Լոս Անջելոս	2007
4.	Սիրո Աղավնին	Լոս Անջելոս	2008
5.	Անառակ Որդու վերադարձը	Լոս Անջելոս	2009
6.	Իրական Մարգարիտը	Սբ. էջմիածին	2008
7.	Ճշմարտախոս Քրիստոնյան	Սբ. էջմիածին	2008
8.	Ո՞վ է իմ ընկերը	Սբ. էջմիածին	2010
9.	Սիրո առաքելությունը	Սբ. էջմիածին	2010
10.	Ճշմարտության բանալին	Սբ. էջմիածին	2014
11.	Լույսի շողեր	Սբ. էջմիածին	2014
12.	Լուսեղեն ճանապարհ	Սբ. էջմիածին	2014
13.	Աստվածասեր մարդը	Սբ. էջմիածին	2018
14.	Հավատի Դարբնոցը	Սբ. էջմիածին	2019
15.	Երկրային Հրեշտակը	Սբ. էջմիածին	2020
16.	Հավատի ու հույսի պսակը	Սբ. էջմիածին	2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
Սրտի խոսք	4
Նախաբան	5
Շնորհակալության խոսք	6
Երկու խոսք	7
Հավատ և հոգի	9
Հույսով ապրիր	14
Մարդու կոչումը	19
Աստծու մեծությունը	23
Ապրելու նպատակը	28
Արթուն կացե՛ք	34
Պատրաստ լինելու հոգին	38
Ովքե՞ր են սրբերը	43
Հոգու աչքերը	48
Աստծո շնորհը	51
Ճշմարտությունը և արդարությունը	55
Տիրոջ ողորմությունը	60
Աստծու արքայությունը	64
Դու ես Քրիստոսը	68
Ծնողին սիրելը	71
Լսենք Տիրոջ ձայնը	76
Մեզնից ո՞վ է մեծը	79
Բարի գործի առաքելությունը	82
Ինչպե՞ս հաղթել չարին	88
Մարմինն ու աշխարհը	95
Նեղությունները անհրաժե՞շտ են	100
Առաջին հրաշքը	104
Կենդանի հացը	108
Հեռացրու չարիքը	111
Մեծ խնջույքը	114
Ապաշխարություն	117
Աշխարհը դատելու մասին	121
Ի՞նչ է օրենքը	125

Մարգարեի պատիվը 131
Գերգեսացի դիվահարը 137
Բարկությունը թշնամանք է 144
Ի՞նչ է սերը 148
Նախանձախնդրության ոգի 153
Թարգմանիչ վարդապետներ 158
Ո՞ւր էիր Աստված 163
Տիրոջ խորանը 168
Շնացող կինը 172
Անպտուղ թզենին 175
Համբերություն 178
Կատարելություն 183
Հավատքո՛վ բուժվիր 186
Հոգու խաղաղությունը 188
Մեղքի հետևանքները 191
Մի՛ հայհոյիր 195
Սուրբ Պետրոսի վերադարձը 201
Որոմների առակը 204
Անհնազանդություն 208
Ես եմ աշխարհի լույսը 214
Հպարտություն 217
Հոգևոր աղը 222
Մատաղ, սրբապատկերներ և խաչ 227
Բարեկամ 232
Երջանկություն 239
Նկարագիր 242
Առողջության հարստությունը 248
Ագահություն 254
Հիսուսի «եղբայրները» 257
Երանի՛ սգավորներին 262
Երանի՛ հեզերին 270
Արդարություն – երանի՛ նրանց, որ 277
Նախատինք և հալածանք, երանի՛ է ձեզ 282
Նեղության օգտակարությո՞ւնը 291

Գոհաբանության օր 299
Առատաձեռնություն 304
Անձնուրացություն 309
Կեղծավորություն 314
Ինքնախաբեություն 319
Քանքարների առակը 324
Փողասիրության մասին 329
Ցուցամոլություն 334
Անձնասիրություն 338
Հինգ հազարի կերակրումը 341
Պահպանի՛ր թշնամուց 344
Գաղտնիք մի՛ ունեցեք 348
Հավիտյանս հավիտենից 353
Բղջախոհություն 356
Անառակ Որդու Կիրակի 360
Անիրավ Դատավորի Կիրակի 368
Ծաղկազարդ 375
Հոգեգալուստ 380
Հեղինակի գրքերը 385
Բովանդակություն 386
Կենսագրություն 389

ԱՐԺԱՆԱՇՆՈՐՀ ՏԵՐ ՀՈՎՍԵՓ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

Արժ· Տ· Հովսեփ Ավագ Քահանա Հակոբյանը ծնվել է 1950 թվի Հոկտեմբերի 7-ին, Էջմիածին քաղաքում, Հայաստան:

1960-62 թվականներին հաճախել է Էջմիածին քաղաքի Սբ. Աստվածածին Եկեղեցին:

1962-ի Սեպտեմբերին ընդունվել է Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:

1967-ին ձեռամբ Մայր Տաճարի Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Հայկազուն Արքեպս. Աբրահամյանի ձեռնադրվել է Սարկավագ:

1968-ին ավարտել է Հոգևոր Ճեմարանը և նույն տարվա Հունիս ամսին նշանակվել Կաթողիկոսարանի Քարտուղար:

1974-ի Փետրվարի 16-ին ամուսնացել է Մերի Մանվելյանի հետ:

1974-ի Դեկտեմբերի 22-ին Մայր Աթոռում ձեռնադրվում է ամուսնացյալ Քահանա և 1975-ի Մարտին նշանակվում Էջմիածին քաղաքի Սբ. Հռիփսիմե վանքում իբրև ծիսակատար, միաժամանակ շարունակելով Կաթողիկոսարանի Քարտուղարի պաշտոնը:

1977-ին Տեր Հոր ընտանիքը բախտավորվում է արու զավակով, որին ի հիշատակ իր վաղամեռիկ եղբոր անվանակոչում են Խաչատուր:

1978-ի Մայիսին իբրև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչ, Տեր Հայրը մի Վարդապետի հետ մասնակցում է Հյուսիսային Ամերիկայի Արևելյան Թեմի Հոգևորականաց Համագումարին:

Ամերիկայից վերադարձին շարունակում է իր ծառայությունը Մայր Տաճարում և նույն թվականի Սեպտեմբեր ամսից նշանակվում Էջմիածին քաղաքի Սուրբ Աստվածածին Եկեղեցու պատասխանատու, ապա՝ Վանահայր:

1979-1993 թվականներին ծավալել է թե՛ շինարարական և թե՛ հոգևոր լայն գործունեություն, պատշաճ մակարդակի հասցնելով Եկեղեցու առաքելությունը: Այդ թվականներին Երջանկահիշատակ Վազգեն Վեհափառի հանձնարարությամբ

ստեղծում է նախապատրաստական դպրոց բաղկացած 9-14 տարեկան փոքրիկներից ու պատանիներից: Դպրոցի նպատակն էր պատրաստել եկեղեցական արարողություններին որոշ չափով գիտակ պատանիներ Հոգևոր Ճեմարանների համար:

Այդ փոքրիկներից և պատանիներից շատերը այսօր արդեն իսկ ձեռնադրյալ հոգևորականներ են կուսակրոն կամ ամուսնացյալ և ծառայում են Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն՝ ի Հայաստան և ի Սփյուռս աշխարհի:

1994-ի Դեկտեմբերին Տեր Հայրը ընտանյոք տեղափոխվել է Ամերիկայի Միացյալ Նահանգներ և 1995-ի Հուլիս ամսից մինչև այսօր շարունակում է իր հոգևոր ծառայությունը Հյուսիսային Ամերիկայի Արևմտյան Թեմում՝ զբաղեցնելով զանազան պաշտոններ:

2015 թվականից Թեմի ընդունված կարգի համաձայն անցել է թոշակի և շարունակում է իր հոգևոր ծառայությունը Թեմից ներս ու իր նպաստն է բերում Հայաստանայյց Առաքելական Սուրբ Եկեղեցուն և մեր հավատացյալ ժողովրդին: